Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

5552
5553

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԴՈՒՂԱՅՈՒ

Ի — ԺԱ

9(47.925)
S - 44

46744-ահ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՂԱԶԱՐԱՑՈՒ ՈՐ ՑԱՐՍՊԱՀԱՆ

ԱՀԽԱՏԱՍՏԻՐԵԱԼ

Ի Պ· ՅԱՐՈՒԹԻՒՆԷ Թ· ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԵԱՆՑ

Նոր Ջուղայեցւոյ Աւետարանչէ Ամենաքրիստէական ՝ի վանից հանգուցեալ այժմ ·

Ի ժամանակս Աստղնորդութեան նոր Ջուղայու Բարեյիշատակ Սրբազան Տ· ԹԱԴԷՈՍ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԲԷՆՆԱԶԱՐԵԱՆ ՝ի 1858 ի ՀԱՅԷ ՝ի Ջուղա ։

1004
14484

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՐԴԵԱՄԲՔ

ՊԵՐԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Բղէդ Նոր Ջուղայեցւոյ Էնուէլեայ այժմ ՝ի Բլուրիա

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՆՈՐ ՂՈՒԿԱՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս· ՎԱՆԱՑ

1881։

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ· Տ՛ ԳԷՈՐԳԵՑ ՚ի·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։

ԼԻ

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ՄՐԲՈՑ ՎԱՆԱՑ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ

Բ· ՄՐԲԱԶԱՆ

Տ· ԳՐԻԳՈՐԻՄԻ

ԲԱՐԵԽՆԱՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պապմաչան դէ-Ըսոյ երկրորդ հատորոյս

Գլ՚ ա· Ամենափրկչեան վանք։

Ցօդ ա· Հինուքն Ամենափրկչեան վանք։ Յառաջագրութիւն շինուելոյն եւ նորոգուելոյն նորին։

Ցօդ բ· Մատենադարան եւ Տպարան վանին Ամենափրկչի։

Ցօդ գ· Առաջնորդք վանին Ամենափրկչի։

Ա· Մեսրովբ։
Բ· Խաչատուր· Ա։
Գ· Դաւիթ· Ա։
Դ· Յոհաննես։
Ե· Աղէքսանդր։
Զ· Մովսէս։
Է· Դաւիթ· Բ։
Ը· Աստուածատուր։
Թ· Պօղոս։
Ժ· Գէորգ։
ԺԱ· Մկրտիչ։
ԺԲ· Յակոբ։
ԺԳ· Յարութիւն։
ԺԴ· Յովհաննէս· Ա։
ԺԵ· Կարապետ։
ԺԶ· Յովհաննէս· Բ։
ԺԷ· Խաչատուր· Բ։
ԺԸ· Յովհաննէս· Գ։
ԺԹ· Թադէոս։

Ցօդ դ· Կարգումն եւ արտօնութիւնք Առաջնորդաց Ամենափրկչեան վանի եւ հասոյթք նոցա։

Ցօդ ե· Վիճակ կամ Թեմ Ամենափրկչի վանաց, եւ վէճք ծագեալք յաղագս այնորիկ։

Յօդ. Ի. Խալուածք Սմենափրկչեան վանքի և պարգևագիրք սակս ապահարկութեանց նոցին։

Յօդ. Լ. Քաղուածոյ տեսութիւն վանքական վիճակին ի ժամանակէ շինութեան նորա մինչև ցարդ։

Յօդ. Խ. Վանքական հաս կամ արդիւնք։

Յօդ. Հ. Հնութիւնք ի վանին։

Գլ" Բ. Եկեղեցիք։

Ա. Նազարէթ։

Բ. Մուրադենց սուրբ Յակոբ։

Գ. Սուրբ Թովմայ։

Դ. Ըահվէլէնց սուրբ Յովհաննէս։

Ե. Սուրբ Յակոբ Բաղաթայ։

Զ. Սուրբ Սարգիս կամ Օհանայ վանք։

Է. Մէյդանի Բեթղայէմ։

Ը. Սուրբ Գէորգ։

Թ. Սուրբ Աստուածածին։

Ժ. Սուրբ Լուսաւորիչ։

ԺԱ. Սուրբ Ստեփաննոս։

ԺԲ. Սուրբ Յովհաննէս Մկրտիչ։

ԺԳ. Սուրբ Նիկողայոս Հայրապետ։

ԺԴ. Սուրբ Աբետեաց կամ սուրբ Ներսէս։

ԺԵ. Սուրբ Դպրասաւորիչ կամ Սուրբ Մինաս։

ԺԶ. Սուրբ Սմենափրկիչ։

ԺԷ. Սուրբ կատարինէ Անապատ Եռաբանաց։

Գլ" Գ. Մտանելն եկեղեցեաց ընդ լծով հարկատուութե։

Գլ" Դ. Դպրոցք։

Գլ" Ե. Պապականութիւն ի Ջուղա։

Գլ" Զ. Նկարագրութիւն Ջուղայու և գլխաւոր պարագայից նորա։

Գլ" Է. Տնտեսական վիճակ Ջուղայեցւոց և մանաւանդ խորհրդածութիւն յաղագս այնր։

Գլ" Ը. Ընդարձոյս քնաւորութիւն Ջուղայեցւոց։

Գլ" Թ. Գաւառք և գիւղօրայք Հայոց ի Պարսկաստան։

ԸՄԲՌՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ։

ԳԼՈՒԽ Ա։

ՅՕԴ. Ա

Ընդհանուր Ակնարկութիւն վանիս։ Սպարապետութիւն շինութեանցն և նորոգութեանց նորին։

Ա. Մինչ Հայք ժամանեցան Լեհապահան և սկիզբն արարին ի Ջուղայ հաստատել զբնակութիւնս, ըստ անձուկ հանգամանաց վիճակի իւրեանց՝ առաջին անգամ շինեցին զվանքն անփառաւոր և առանց արձակ շինութեան, տալով նմա զանուն Ամենափրկիչ վանից զոր ունէին ի հին Ջուղայ։

Իսկ զվնի անցանելոյ չիւռն ամաց յառաջնոյ շինութենէ վանից՝ յորդորեալ Ջուղայեցւոց յառաջնոյ Դաւիթ Աղաջ նորոգէ յօժարեցան շքեղ վառաւորութեամբ զվանս իւրեանց կառուցանել, վասնորոյ քակեալ զառաջին շինութիւնն՝ ընդարձակեցին զյատակագիծն և ի 1104 թուականի Հայոց (1654) բազում ծախուք սկիզբն արարին նորոգ ընդարձակ շինութեանն եկեղեցւոյ և բնակութեան միաբանից՝ հանգամանակութեամբ Հաստարակութեանն Ջուղայու և վերատեսչութիւն Դաւիթ Աղաջնորդի, յընթացս ինն ամաց կատարելով զգործ բովանդակ շինութեանն։ Յիշատակարան ձեռագիր Աստուածաշունչ (1) մատենի տայ մեզ տեղեկութիւն զայնմանէ, որոյ զբանս յիշատակել ի ներքոյ հարկաւոր համարիմ։

„ Պատճառ վերստին նորոգման Ամենափրկիչ վանացս,
„ զի մշտ վարանեալ կայաք միաբանք սուրբ ուխտիս
„ սակս ոչ քաւականութեան վանացս, և անյարմար և անզարդ

„ շինուածոյ սորին, զոր ի վաղուց հետէ վարդապետիս իմոյ
„ (Դաւթի) հզեալ էր ի մտի զնորհուրդս զայս; այլ ոչ
„ պտմնիւր զիպող և անքոյթ ժամանակ: Զի միշտ ի վերուվ-
„ ման և նեղութեան ներքոյ կայաք, երբեմն ի ֆռանկաց
„ պատրյաց, երբեմն ի չկամողաց ոմանց վարդապետաց և
„ ժողովրդոց, երբեմն ի տարակուսութենէ և յուսահատու-
„ թենէ եթէ կար գոլ աւարտման՝ կամ կատարումն նոր մը-
„ տածութեան ձևոյս՝ զի մի լիցուք ծաղր ըստ Տէրունականին,
„ թէ այրս այս սկսաւ շինել և ոչ կարաց: Այլ ըստ հոգւոյ
„ հօրս իմոյ (Դաւիթ եպիսկոպոսի) զաւենայն գներհական
„ լինքենէ ի բաց հզեալ՝ յուսով ապաւինութեամբ գիմեաց
„ ինքն առ յոյն բնաւից ունելով նեցուկ խնացականին զայն
„ բան որ ասաց խնամօղն քոլորից ի ձեռն Մարգարէին „եթէ
„ ձեզ միայն իցէ քնակիլ ի տունս գմբեթաւորս՝ և տունն իմ
„ աւերեալ կայ „: Զայս բան ապաւինելով սկսեալ փլուցա-
„նել զշինուածս հին՝ և նորոյս ձեռնարկել ընդ, թուին,
„ի թագաւորութեանն փոքր Հայաբասին և ի Հայրապե-
„ տութեան Տեառն Յակոբայ, և իշխանաշուք պարոնաց պա-
„ րոնին Խոջայ Սաֆրազին (2) և օգնականութեամբ Ջու-
„ղայու ժողովրդոց, և շնորհօք սուրբ հոգւոյն աւարտ և
„ կատարումն հասուցաք գեղեցիկ յօրինուածովք, որպէս և
„ տեսանէք, հազիւ թէ կար եղև ինչև ընդ թուին „:

Ը. Զիշխատակութիւնս ուրոյն գրել՝ և ապա զշինու-
թեանցն ստորագրմանութիւն յարել՝ պատշաճ դատեցի, զի մի
խառնուշփոթ եղեալ Հայաղեացի պատմութեանն պարզու-
թիւն: Զայս կարդ պահելոց եմ և ի նկարագրութեան ե-
կեղեցեաց:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. Ի ձեռս աթոռակալ տէրն Եփրեմ-ոյն յորժամ նո-
ցա ծանաւթացաւ գերդ:

„ Ի մեծարկեցաւ Ամենափրկչի վանքս ի թուին ՌՃԳ (3)
„ ի թագաւորութեանն երկրորդ Հայոց Հաթոմին, և կաթո-
„ ղիկոսութեան Տեառն փիլիպպոսի (4) ի ձեռն սուրբ
„ ուխտի Առաջնորդի Դաւթի վարդապետի, կամակ-
„ ցութեամբ և տրօք Ջուղայու ժողովրդոց, և աւար-
„ տեցաւ ՌՃԺԴ ամի: Որքան պատուական և պաշտօնք
„ որք ի սմայ կատարի՝ լոյս մանն և բաժին հարկ կին-
„ դանեաց և ննջեցելոց „:

Բ. Յերկո-ա կողմանս սեմոյն հե-ութոյին գրան յորժամ-պէ
գերդ:

„ Յիշատակ է խալդարէնց Մուրատին, և ծնողացն Խո-
„ ջայ Ոհանին, Մերտատիկին և կողակից Մարեամտատի-
„ կին, և որդւոցն Մարտիրոսին և Ոհանին, եւ գստե-
„ րացն փարասին՝ Մուրասէ՝ Գուլնաբաթին՝ Թամինէ՝
„ Իբիրսիմէ: Դրձել յիշատակ է Պարոն Մուրատին և եղ-
„ բօրն Պարոն Յակոբջանին, և Մարգարէ որդի Ոհանէ-
„ սին, և հանդուցեալ եղբարցն Աբգարին՝ Ծատուրին՝
„ Աւագին. Թուին ՌՃԾ „: (5):

Գ. Ի դերեզ պատ-հանէ արե-մտեան գրան ի ներսէն
կո-ա ոսկեգիր:

„ Յիշեցէք ի քո զԱւետիքն և զորդիքն իւր Սահակն և
„ զՄարտիրոսն՝ և Թոռունս՝ Ամիրաղէն՝ և զԱնանայն
„ Մարգարիտն՝ տալն Ջիւխիթէն. եւ զՏ. Խ. Ն „: (6)

Ջ . Ի ներբոյ հարաւային ըստամոյ ծաղկավրպաբեղջոյն
ի ներբոյն կոսէ , ասկեգիր :

« Յիշեցէք ի քրիստոս զխօջայ Աւետիքն և կողակիցն
« Մալխան Սլիմն . և զստերն զուլպանամն՝ Բագրին՝
« Մարիամ տատիկն , Թիվն ՌՃՁԶ :

(Է) Ի ներբոյ պաբաւհանի հիւսիսային պատու ի ներբոյն
կոսէ , ասկեգիր :

« Ի Թվին ՌՃՁԸ փետրվարի Ե . վոխեցաւ խօջայ Ա-
« ւետիքն ի քն , և ետ ծաղկել զսուրբ եկեղեցիս յի-
« շատակ իւրն և իւր ննջեցելոցն :

(Ը) Ի ներբոյ պաբաւհանի հարաւային պատու ի ներբոյն
կոսէ , ասկեգիր :

« Որձել յիշեցք ի քն զՊարոն Աւետիքն՝ և զորդին իւր
« զՄարտիրոսն , և զմիւս որդին վախճանեալ զՍահակն
« և զայլ ամենայն մերձաւորս ,, :

(Թ) Ի վերոյ ներբոհամաբէ սեղանոյն ի հիւսիսային
կոսէ ըստքնակէ ցհարաւ , ասկեգիր :

« Օձեզ աղաչեմ ընթերցող տառիս ,
« յիշել նկարող զսուրբ խորանիս ,
« որ միշտ տարւոյնամբ՝ ցանկայր բանիս
« Սա զԱւետիք զհեղհեղոգիս ,
« Զհօրն հանգուցեալ Ստեփաննոսիս ,
« զՄարգարիտն՝ ծնողիս :
« Նազարն ընդ ՈՀանիս ,
« զհամազգ եղբարսն գուլշուք
« որդի ամբարշտիս ,
« որ և ահեակն Մարտիրոսիս

« Մօլթան Սլիմ կենակցիս
« ի Թիվն ՌՃ՝ տասնիս
« Ապրիլ ամիս ի և Է իս ,, : (7) :

(Ը) Ի հիւսիսային յորմն սեղանոյն յարեւմտից կողմն :

« Այս սեղանոյս զրջապատ ապակիզենս շինեցաւ Առաջ-
« նորդութեան Մովսէս վարդապետի Ջուղայեցւոյ : Ի
« Թվին ՌՃԿԵ ,, :

Դ . Օրհնի երիսուն և ութ ամաց շինութեան վանին՝ կա-
ռուցաւ Ջանգակատունն առաջի արևմտեան դրան սրբոյ տա-
ճարին 3 քայլ հեռի ի նմանէ , արդեամբ Աղայ Յովհաննէսի
Ջամալեանց , որոյ յիշատակ բարեգործութեան ի ձակատու
հիւսիսային կամարի նորա գրեալ կայ յախճապակի գրով :
« Յամի մարդանալոյ կենարարին մերոյ Քրիստոսի Աստու-
« ծոյ ՌԷՃԲ , և ըստ Հայոց Թուականի ՌՃԾ . շինեցաւ սուրբ
« մատուռս յանուն սուրբ Հրեշտակապետացն Միքայէլի և
« Գաբրիէլի , ի Թագաւորութեանն մեծի խաղաղասէր Շահ
« Սուլթան Հօսէյնի , և յառաջնորդութեանն բոլորից քրիս-
« տոնէից՝ Տէր Աղէքսանդր Աստուածատրեան վարդապետի և
« արհիական եպիսկոպոսի Հոգիաբարձր , և վերակացիւք
« Մովսէս վարդապետի , գոյիւք և ընչիւք իշխանաշուք աղ-
« նուատոհմ և ակնբաւպատիւ Պարոնաց Պարոն Յովհաննէսի
« Ջամալեանց , ի տիս տղայութեան հասակի , յիշատակ հոգ-
« ւոյ իւրոյ և ծնողացն հօրն բաղմաշխատ Յովհաննիսին , և
« գստերն Բէրզադէ , և որդւոյն գեղաբոյս և նորաբողբոջ Քրի-
« քիտոսիկ զօրացեալ վարքագիտութիւն Յովհաննիսին , և աւագ
« եղբօրն Պարոն Գրիգորին , և որդւոյն Պարոն Յովհաննիսին ,
« և իւրեանցն ամենայն կենդանեացն և ննջեցելոցն ամենեցուն
« ամէն ,, :

Սրբագրութեան շինութեանց վասն :

Ը. Կառուցեալ կայ այն ի Թաղն մեծ Մէյդանի: Արեւմըտեան և հարաւային կողմն են փողոցք, իսկ յարեւելեան և ի հիւսիսային կողմանս նորա են տունք ժողովրդականաց Հայոց : Երկայնութիւնն պարսպի հարաւային կողման ի փողոցին չափելով՝ է 122 ոտնաչափ, և լայնութիւնն արեւմտեան կողմանն՝ է 63 ոտնաչափ :

Վասն զերկու դրանս՝ մինն յարեւմտեան և միւսն ի հարաւային փողոցին : Դուռն արեւմտեան փողոցի երկաթապատ՝ է ասագ դուռն ընդ որ մտանեն ամենայն երթեւեկք, իսկ դուռն հարաւակողմն՝ է վասն մուծանելոյ զբեռինս պարենից և տնական սիմոյիցն վանքական : Գաւիթ արեւմտեան դրանն ունի զերկու ճանապարհս, մինն դէպ ի հիւսիս՝ և միւս դէպ ի հարաւ : Ճանապարհն որ ընդ հիւսիս, զնայ ի փոքրիկ այգի մի խաղողոյ՝ ջաղացի երես կոչեցեալ, սակս լինելոյ ինանմա աղօրիք մի ուղտու ի սէյտս հարկաւորութեան վանին : Ճանապարհն որ ընդ հարաւ մտանէ ի ներ առաջին սրահի կամ պարսպի վանին, երկայնութիւնն որոյ է 124 ոտնաչափ, և լայնութիւն 65 : Ի փողոցէն մինչ ի սոյն առաջին պարիսպ՝ կան եւթը դրունք, ի ձախատ երրորդ դրանն ի ներքին կուսէ պարսպին կան երկու խաչքարինք, յորոց վերայ գրեալ կան յիշատակարանքս այսոքիկ :

ա. « Սուրբ խաչս յիշատակ է Տէր Յովսէփին՝ Մկրտչին՝
« Թումային՝ Կարապետին՝ Աւետին՝ Ծաղիկին :
« Թիվն ՌՃԱ :

բ. « Սուրբ խաչս յիշատակ է գլխոց Աւետիկին, Թիվն
« ՌՃԻ : Յշտկէ սուրբ Հակոբ (ի՞ Եկեղեցւոյս) գլխոց
« (Գիլանէնց) Աւետիկին՝ եւ կողակ ցաց Մարաթին՝
« Աղիջանին՝ եւ որդի Յակոբջանին ,

« Յարութիւնին , եւ գստերացն Մաղանին վառվառին ,, : Ի ներ նոյն դրան ի հիւսիսային կողմն կայ սենեակ մի՝ որ ունի զվերնայարկ , յորում յառաջին ժամանակս բնակէր Աջորդն , զի ի գալ բողոքարկու ժողովրդոց՝ մերձ առ դրանն լինելով՝ լսիցէ զդատ նոցա և ճանապարհորդեսցէ անդէն , զի մի սակս ամենայն իրաց նեղութիւն լինի Առաջնորդին : Այն սենեակ ունի յիշատակարան շինութեանն իւրոյ գրեալ շուրջանակի ի մէջ կառարացն :

« Պատճառ շինման այսմիկ խըղիս՝ վայելչագեղ տաղա-
« ւարիս ,
« սկսեալ լինէն զվարձ ծախսիս՝ իմ Պետրոսի վարդա-
« պետիս ,
« ի վայելուչն իմոյ անձինս՝ որքան եղիցի . † կիս :
« Եւ կետ փոխման իմ վախճանիս՝ ինձ յիշատակ լինի
« խորհիցս :
« Ով հարք եղբարք մանկունք վանիս՝ որոց հաճեալ
« նստիք խըղիս ,
« յիշման արժան առնէք իսկ զիս՝ մի հայրմերիս ողոր-
« ժելիս ,
« ողորմութիւն առնել առիս՝ զձեր աղօթիցն նշխար
« տուք կիս :
« Եւ Առաջնորդ սրբոյ Աթոռիս՝ Աստուածատուր վար-
« դապետիս :
« Եւ ես աջորդ սրմին ուխտիս՝ հոգաբարձու մենաստա-
« նիս ,
« մեղ լե սրտիւ տուք ողորմի՝ ողորմեսցի Տէր մեզ և
« ձեզ ,
« Թիվն ՌՃՁԴ (1737) Դեկտեմբերի 4 » :

Յարեւմտեան կողմն սոյն պարսպի կան գոմ և յարդանոց, ի հարաւային արեւմտեան կողմն կայ սենեակ մի Եպիսկոպոսանիստ, և ունի կից ինքեան սրահակ մի փոքրիկ՝ յորում կան հարկաւոր տեղիք նոյն սենեկին : Հանդէպ այնր կայ այլ

ինն սենեակ յորում այժմ պահին վայտեղէնքն վանին։

Ի մէջ այսմիկ պարսպի առաջի արեւմտեան դրան սրբոյ Տաճարին կառուցեալ կայ զանգատունն։ Սալայատակ նորա մի կանգնաչափ բարձրացեալ է քարամբք ի բուն գետնոյ սրահին, շինեալ է այն ի վերայ չորից միապաղաղ բոլորակ քարեայ սեանց, որոյ բարձրութիւն է 5 կանգնոն, և ստուարութիւն բոլորակութեանն մի գրկաչափ։ Զանգատունն չէ շատ բարձրակառոյց, կան ինն հրկու գոյգ զանգ (8) զորս ի հանդիսաւոր աւուրս հնչեցուցանեն. իսկ ի հասարակ աւուրս միայն մի զոյգն է գործածական։ Ցաւուր տօնի հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի մատուցեալ են ի մէջ նորա զպատարագ՝ յաղագս յանուն նոցին կառուցեալ գոլոյ այնր։ Խաչ իկլուխ նորա եղեալ կայ։ Ցառաջնոյ սրահէ ասի գնան ի գաւիթ՝ որոյ ի հարաւային կողմն բացեալ լինի միւս դուռն եկեղեցւոյն. ուստի այն գաւիթ եկեղեցւոյ կոչի. ի հիւսիսային կողմն հանդիպ դրան եկեղեցւոյ կայ առաջնորդարան հին, ի հակատու որոյ խորհրդով կայ նկարեալ պատկեր սրբոյն Լուսաւորչի հանդիպակեալ սրբոյն Սեղբեստրոսի։ Ի նոյն գաւիթ կից որմոյ եկեղեցւոյն կան երեք շերիմք Առաջնորդաց վանից, Աստուածատրոյ, Ցարութիւնի և Սուրենեան Յովհաննու։

Ի նոյն գաւիթ մտանեն յերկրորդ սրահ, յորում կան խուցք վանն միաբանից ի հիւսիսային կողմն, իսկ ի հարաւակողմն է սեղանատունն. և տապարատունն վերջինս այս կից է եկեղեցւոյն։ Երկայնութիւնն երկրորդ պարսպի է 107 ոտնաչափ, և լայնութիւն 101։ Ի գաւթէն ունի սալայատակ ուղղայիծ ցածրևելակողմեան շինութիւնն։ Կան երկու փոքրիկ պարտէզ վանն ծաղկանց, յորս կան վեց ծառք նոճեաց։ Կայ աստ ջրհորն «տամպուն» կոչեցեալ (9)։ Ցարևելեան կողմն դէպ ի հարաւ կայ սենեակ Առաջնորդարանին։ Ի այն սենեակ մի երկ յարկեան շինեալ ի Մովսէս Առաջնորդէ։ Ըստ յարմա-

րութեան դրից նորա ցկէս օր յարևելեան կուսէ՝ և ի միջոցէն ցերեկոյ յարևմտեան կուսէ արևն անպակաս գտանի ի նմա, որ որչափ միխիթարութիւնն է ի ձմեռան, այնչափ և նեղութիւնն է յամառան։ Ի հարաւային կողմն Առաջնորդարանին կայ գրքատունն վանին։

Ի սալայատակէ երկրորդ պարսպին գնայ յերրորդ սրահ, որ է փոքր դրութեամբ. ուրանօր կան խոհանոց՝ ալիւրատուն և վայտատունն որք մուծեալ լինին ընդ դուռն որ բացեալ լինի յայս սրահ։ Ատեն դէպ ի հիւսիս գնայ ի միւս երեսն, յորում կան գոմ՝ ուխտատունն՝ վայտատունն՝ ամբարք ցորենոյ՝ հաւատունն՝ և արտաքնոց։

Ե. Տաճարն Ամենափրկչի կառուցեալ է ընդ մէջ առաջնի և երկրորդ սրահին։ Ունի զբարձրաշէնն գմբեթի և զխաչ ի գագաթան։ Կից է շինութիւնն սրբոյ Տաճարիս ընդ արտաքին շինութեանցն հարաւակողմն։ Երկու զրունք են նորա, մի յարևմտից կուսէ և միւսն ի հիւսիսոյ։ Ի մէջ սեմոյ հիւսիսային դրան կան շերիմք Դաւթի երկրորդի և Մովսիսի առաջնորդաց վանին, որոց տապանաքարունք են միաչափ և բստ չափու տարածութեան սեմոյ դրանն այնմիկ։ Կից այնմ դրան կայ սենեակ մի, զոր խորհրդով շինեալ են վանն քննակութեան լուսարարի յաղագս մերձ լինելոյ աւուրք եկեղեցւոյն, այլ այժմ փակ գտանի այն սենեակ։

Ընդ առաջեաւ արևմտեան դրանն գտանին շերիմք Մկրտիչ և եպարապետ Առաջնորդաց վանից, Անդրէասի վարդապետի, և քանի մի աշխարհականաց։ Ի մտից արևմտեան գրան ցստորոտ առաջնի գաւթոյ, երկայնութիւն եկեղեցւոյն է 30 ոտնաչափ, և լայնութիւն 41։ Ի սմա չիք որոշեալ երկաւ դաս, միայն վանն արանց և միւս վանն կանանց, յաղագս ոչ գոլոյ այնր ժողովրդական եկեղեցի։ Երկայնութիւնն առաջնոյ դաւթոյն (սկսեալ ի ժողովրդականոցէն) է 23 ոտնաչափ և լայնութիւնն 41։ Շինութիւնն առաստաղաց բարձրացեալ է ի վերայ հաստահիմն կամարակապ սեանց կից եղելոյ ընդ որմոցն՝ առանց սեան ինչ ի միջակիտին։ Ի հարաւակողմն առաջնոյ գաւթոյն բաց ի սովորական խորանէն յորում պահին անօթք և

գրեստք վանին, կայ և խորան մի ՚ի պահել անդ զգեստս քահանայից և զամենայն զարդ եկեղեցւոյ՝ զխունկ և զածուխս:

Լայնագոյն խորանն է անձուկ՝ բաղդատութեամբ շինուածոյն եկեղեցւոյ, զի յատակագիծ այնր չէ ունեցեալ զտեղի արձակ վասն այնր: Լայնութիւնն սրբոյ սեղանոյն է 15 ոտնաչափ և երկայնութիւնն 25: Իսկ բարձրութիւնն ՚ի գետնէն 2 և կէս կանգուն: Խաչկալ նորա է պատկեր յարութեանն Քրիստոսի, և ունի թուական ՌՃԵ (1660): Սեղանն է կամարաշէն և ունի ներքնայարկ, ուրանօր կան շիրիմք երկու բազմերախտ առաջնորդացն վանին Խաչատրոյ Կեսարացւոյ և Դաւթի առաջնոյ, շուրջն սեղանոյն է յախճապակի, և ոչ ՚ի քարանց:

Ջ. Կողմնակ եկեղեցին ՚ի ներքին կուսէ՝ է պատկերազարդ տնօրինական նկարուք՝ և ոսկեպատոյճ ծաղկենկար: Յատակէ եկեղեցւոյն երեք և կէս կանգնաչափ բարձրութեամբ՝ ընտիր յախճապակի կայ զետեղեալ յորմն շուրջանակի (10):

Ինչպէտ զատորոշութիւն պատկերացն մի ըստ միոջէ գրել երկարութիւն լինի կարգի պատմութեան, այլ գիտելով քաջ թէ հայրենասիրաց առաւել ախորժելի լինելոյ է ըստանալ զնոքին և զմանրամասնեայ տեղեկութիւնս զհռչակաւոր վանացս հայրենեացն իւրեանց, վասն որոյ զիղձս նոցա կնդրել՝ քան թէ սղագրութիւն անցանել առաւել պատշաճ դատեցի:

Ի շուրջանակի կամարս գմբեթին են ութն լուսամուտ պատուհանք և ութն պատկերատունք: Թուի ինձ թէ աստէն արժան է սկզբնաւորել զնկարագրութիւնս պատկերացն: Առաջին պատկերատուն՝ է ստեղծանելն Աստուծոյ զԱդամ. երկրորդ՝ ստեղծանելն զԵւայ ՚ի կողէն Ադամայ. երրորդ՝ շաշակելն նոցա զպտուղն. չորրորդ՝ ծածկելն տերևով զամօթս իւրեանց. հինգերորդ՝ արտաքսելն զնոսա ՚ի դրախտէն. վեցերորդ՝ մնչմն Աբելի. եօթներորդ՝ կոծ նախահարցն ՚ի վերայ սպանման Աբելի. և ութերորդ՝ պատարագն Նոյեանի և Աբելի:

Ի գան առաջին և ՚ի ժողովրդատեղին չորս կարգ պատ-

կերատանց բաժանին: Առաջին կարգն (սկիզբն ՚ի դասէն առաստաղն կոյս առնելով) են փոքրիկ պատկերատունք ծաղկենկար և զանազան խորհրդական նկարք, ընդ որս են և պատկերք չարչարանացն Լուսաւորչի և եօթն խորհուրդք եկեղեցւոյ: Երկրորդ կարգն են տնօրինութիւնքն Քրիստոսի, սկիզբն առնելով ՚ի դրանէ հարաւային խորանին՝ շուրջանակի ցդուռն հիւսիսային խորանին՝ են այսոքիկ, 1 Աւետումն Գաբրիէլի. 2՝ հրեշտակի աւետիս Հովսեփայ զծնունդ փրկչին. 3՝ ծնունդն Յիսուսի. 4՝ երկրպագանելն մոգուց. 5՝ կոտորելն զանմեղս Բեթղեհէմի. 6՝ Սիմէոնի ՚ի գիրկս առնուլ զՅիսուս: 7՝ նստեալն Յիսուսի ՚ի տաճարին. 8՝ մկրտութիւնն ՚ի Յովհաննէ. 9՝ փորձելն սատանայի զՅիսուս. 10 պաշտելն հրեշտակաց զՅիսուս յետ փորձութեանն. 11՝ այլակերպութիւնն. 12՝ մուտն Յիսուսի Երուսաղէմ ՚ի ծաղկազարդին. 13՝ վանելն ՚ի տաճարէն զսեղանաւորս. 14՝ ուսնալոյն. 15՝ ընթրիքն. 16՝ կանչուելն զՅիսուս. 17՝ տանելն զՅիսուս առ քահանայապետն. 18՝ ձաղկելն զՅիսուս կապեալ ՚ի սիան. 19՝ ատեան Պիղատոսի. 20՝ խաչելութիւնն. 21՝ իջուցանելն ՚ի խաչէն. 22՝ դիապատելն զՅիսուս. 23՝ Յարութիւնն. 24՝ Համբարձումն. 25՝ Գալստեան Հոգւոյն սրբոյ. 26՝ վերափոխումն Աստուածածնին:

Երրորդ կարգ պատկերատան ըստ նոսին պատասխանութեան են այսոքիկ. 1՝ հիւրասիրելն Աբրահամու զերիս հրեշտականց. 2՝ վարձատրումն Յովսէփայ. 3՝ Աբրահամու զԱգար ՚ի բաց արձակելն ՚ի տանէն. 4՝ պատարագ Մելքիսեդեկի. 5՝ չարչարանք Իսրայէլացւոցն յԵգիպտոս. 6՝ ելանելն Իսրայէլացւոց յԵգիպտոսէ. 7՝ օծանելն զՍողոմոնի արքայ. 8՝ անցուցանելն զտապանակն ընդ Յորդանան գետ. 9՝ հրեշտակի հարկանելն զԵրոբաամ. 10՝ հանելն զոսկի ՚ի սոդոմայ. 11՝ Մելքիսեդեկի զերկիր Բաղասամու. 12՝ կործանումն Երիքովի. 13՝ որթն ձուլածոյ. 14՝ եղնսէի զՀնարն բժշկել. 15՝ Ջատիկն Եգիպտոսի. 16՝ փախչելն Դաւթի. 17՝ դատաստան Սողովմոնի վասն երկուց մանկանցն. 18՝ առիւծուն ծերոց վասն Շուշանայ: 19՝ կնոջն Պետափրեայ հրապուրելն

զՅովսէփ . 20՝ օձն պղնձի . 21՝ ընկենուլը զԴանիէլ ՚ի գուբն առիւծոց . 22՝ ընկենուլն զՅովնան ՚ի ծով . 23՝ անցանելն փարաւօնի ընդ ծով կարմիր . 24՝ կամիլն Աբրահամու ողջակիզել զԻսահակ . 25՝ Մովսիսի զջուրն բղխեցուցանել ՚ի վէմէն . 26՝ Մորենին վառեալ :

Չորրորդ պատկերատունքն են յանկիւնս կամարաց , և են այսոքիկ , 1՝ շինումն աշտարակին . 2՝ քակումն աշտարակին . 3՝ երկոտասան նահապետք ՚ի վերայ ծառոյ շառաւիղելոյ ՚ի Յակոբայ . 4՝ Դանիէլի տեսիլն . 5՝ քարկոծելն զՍտեփաննոս . 6՝ նաև ՚ի նշանակ եկեղեցւոյ՝ որոյ թիւաքարշօղք են առաքեալքն . 7՝ ջրհեղեղն . 8՝ ելանելն Նոյի ՚ի տապանէն :

Ի վերայ հիւսիսակողման որմոյ ժողովրդատեղւոյն կայ պատկեր վերջին դատաստանին , ՚ի վերին կողմն է արքայութեն նկար , ուրանօր մտանեն դասք արդարոց . (11) և ՚ի ներքին կողմն՝ գժոխքն ահագնատեսիլ , հուր բորբոքեալ , վիշապք բազմագլխեան , գևք կատաղեալք և գազանք դըժնեայք , հրեշտակք ՚ի բարձանց ընկենուն յայն գուբ զմեղաւորս :

Ի վերայ առաստաղի ժողովրդատեղւոյն կան պատկերք նեռին՝ և կնոջն Նատելոյ ՚ի վերայ եօթնագլխեան վիշապի ըստ տեսլեանն Յովհաննու : Առաստաղ առաջին դասու է գըմբեթին՝ համակ ծաղկանկար ոսկեպատոյտ և կապուտերանգ . (12) : Սեղանն նոյնպէս է ծաղկանկար և պատկերազարդ : Ի վերայ կամարի հիւսիսային դրան յարտաքին կուսէ կայ պատկեր ինքնացանելոյ զՔիսուս ՚ի խաչէն ՚ի գիշերի , որ ըստ վկայելոյ Ներսհուն եղելոցն արհեստի պատկերահանութեան է գործ նկարչի և գերազանցեալ յիւրում արհեստին . (13) :

Է . Յետ շինութեանն Ամենափրկչեան վանի՝ չիք յիշատակութիւն թէ եղեալ իցէ ընդհանուր նորոգութիւն վանացն ամենայն շինուածոց նորին , այլ ՚ի ժամանակս առաջնորդութեան Սրբազան Թադէոս եպիսկոպոսի (որ այժմ վարէ զառաջնորդութիւնն իւր) եղեն մեծամեծ նորոգութիւնք . զի յամի 1854 առաջին պարիսպ վանիցն նորոգեցաւ , մանաւանդ հարաւակողմն քարեղով՝ և զմիւս մասին փոխելով զՀնացեալ

կղմինարան : Ապաճեմեցաւ և պարիսպն շուրջանակի : Յամի 1856 , երկրորդ պարիսպն նորոգեցաւ փոխելով զՀնացեալ կղմինարս սալայատակին , և միջին սալայատակն շինելով ՚ի քարէ : Դարձեալ կրաճեմիւք բովանդակ պարիսպն շուրջանակի , ըստ նմին օրինակի նորոգեցաւ և երրորդ պարիսպն , թէ սալայատակն և թէ որմունքն շուրջանակի : Յամի 1857 , որքեցան պատկերք եկեղեցւոյն , և խաչկալն . և ըստ մարթելոյ նոր թիթեռք մածուցան ՚ի վերայ սեացեալ ոսկեթիթեռանց . նորոգեցան ծաղկենկարք գաւթի եկեղեցւոյն , և փոխեցաւ դուռն նորա , զայլ գեղեցիկ դուռն փոխանակ Հնոյն դետեղելով կամարակապ և սիւնազարդ դրանդեօք՝ որք են ՚ի քարէ կուիաճոյ :

---

(1) Ան Աստուածաշունչ մատեան գրանէ ՚ի գրոտան վանէն , որ է ընդէր տպագիրք գրեալ յոմէ հայոց 1100 ՚ենոյն վանս Ամենափրկչէ :

(2) Իմմ ՚է ծամանակս եղեռնագործեան ծօջոյ Սուքրպէյ , զի նա էր յայնմ ծամանակի եղեռան կամ տեսլանութ Ջղ-ղայա :

(3) Թե ՚է յեղաստակարան եկեղեցեաց Ջղ-ղայա՝ և ըե ՚է հին հեաստիերս չէ գործածութեան երկչեակն ռուսկանէ , այլ հոյն ռուսկանէ Հայոց :

(4) Փերէզդոս կռոնդիկոս վախճանեցաւ ՚է 25 մարտի 1655 ոմէ , և Յակոբ Ջղ-ղայեցի նոցա կռոնդիկոս յ8 Ապրելի նոյն ոմէ . զոր որոյ ոչինչ շեղութիւն է՝ ասելն ոայ յեղաստակարանի ըե շինութեան Ամենափրկչեան վանէ եղեալ ՚է կռոնդիկոսութեան Փերէզդոսի , և ասելն յեղաստակարան Աստուածաշունչ մատենին ըե եղեալ ՚էկռոնդիկոսութեան Յակոբայ , զի նոցա էին կռոնդիկոս ՚է1655 ոմէ , վասն որոյ դինն պղծեալ յեղէ , և ոչ ընդունի կռոնդիկոսացեալն :

(5) Եոայ յեղաստակարան յախճապակի պեսպեղղին յորմն եկեղեցւոյ , որով յայտնի լինի ըե յոմէ 1701 եղեալ շինութեան նոյն յախճապակէացն :

(6) Տաճն Տ . Խ . Ն . անյայտ ինան ՚է պետրոպոլիսէ էմիր :

(7) Յէշփաչարքան ալեալ է ինչ ոչ՝ են յէշփաչարքան խօնջ Աւետ էչէղէցոյ նկարել և ծաղկել փոսըլին, որոյ ձեռ է շէնորհն յոյնփա ձեռագործ կ՚ընէլոյ նոյն ծախուց ալ համար ոս- կեպատ յայտ նկարն են ի գլուխ ոսկւոյ: Այլ գիտել արժան է զի ոսկին յայնմ ժամանակի մոխրալ (որ է 24 ուէսանակէս) արծէր 32 շահէ, որպէս ձկայէ հրովարտակ փոսեալ է շահ Սուլեման Հօռէյնէ:

Ի լսել ասի և զնշանագիրս մի՝ որ լուռ էին ի ձեռն կախեղանակէլ:

(8) Զոյգ մի ՚ի նոյն գանգուց էր էչէլ, զոր կրկին ֆուլէլ էս թուղրէս Աստանոր յամի 1857, այլ ըստ որոմ ֆոլըշն էին Սպահանոյ արհեստաւորք՝ վասն որոյ չէղև այնպան գործ՝ որչափ անուանէլին էր:

(9) Պատճառ փոքուռ կուէլոյ Ըմհորդն այնմիկ՝ էր յաղագս շինեալ լինելոյ նոր վասն Ըրհան գործուօք հանելոյ գլուխ ՚ի Ըզըհրոյ անտի: Այլ այժմ խափանեալ է այն. ասիկայն փակուքն կայ երկրորդ խողովակն Ըրհանին:

(10) Տէր Յովհաննէս Խուչէնց Աստ փոհանայն որ ՚ի կալիսիոյ, ՚ի համաօտ պատմագրութեան էրոմ յաղագս Աստղնորդոյ վանին Ամենափրկչի (պատերելոյ ՚ի կալիսիոյ ՚ի 1845 ամի) շինուհն այն յանճարեղ պայ Պուռնի երկրորդի, որ յամի 1725 նստաւ Աստղնորդ, և յամի 1728 վախճանեցաւ. այլ ըստ յայտնելոյ ի յէշփաչարքին շինուածին նոցա եղև յամի 1701 (տե՛ս ՚ի (5) ծանօթութեան):

(11) Ի դէպ պատերն արտայայտութեան (եղելոյ ՚ի հին օրինակին օրմի) հայ նկարել պատկեր խօնջ Աւետ գրչել չէնչափայն:

(12) Յաղագս նկարողի պատկերոյ վանին, այսպէս լինի յէշպատ հուրիւն յԱզգատեր Օրգերն Աբգարեան ընկերութեան կալկա- ցոյ նէ «գեղեր (Յովհաննէս վարդապետն Ջուղայեցի պատեղ- «բալոյ հուէնցոյ) ընկերութեան համ պատկերահանութեան, ո- «րում զարդարեաց զնկեղեցի վանացն Ամենափրկչի հրաշալա- «պատկերօք, ի րում եւս յետայնմ նկարելոյ զնոսին: Որոց «խորհրդով գեղեցիկ ճարտարութեանն՝ և վսեմ պե- «տութեանց մինչև ցայսօր ՚ի հետոյին և յապիդատութեան «հրնեն պիտա պեռանդացն,,: (Ազգ". օրա. հատ. Ա. նե-

12, յամի 1845, էջ 96): Ըստ որոմ վերագրեալ նոյն էրա- գրոյ գեղուհին Մեսրովբէ թուղթագրեցոյ առնելով ինչեան առա- նորդ ըստ այմ մասին պիտոյից վարդապետ այնմ Ջուղայեցի պատմելեան գրեցոյ զայն գեղեցկութեան, վասն որոյ համարձ ըստա- գործատ:

Հաստատեն զայն էսն՝ նախ առանցնութեանն որ կայ ՚ի Ջուղայ նէ գեղերքայ Յովհաննէս վարդապետն նկարեցոյ զպատկերս վանին, և երկրորդ՝ պատկերն վարդապետին հոյ կայ նկարեալ ՚ի հետոյին յորմն առաքելանոյ սեղանոյն, ուրուն նոյնպես առանցնութեամբ պատկեր է պատկերն Յովհաննէս վարդապետին, որ յետ գրչելոյ զնոսին վախ- նէն նկարելոյ, նկարեցոյ և զնոսա ՚ի հետոյին պատկերահանութ գրեալ:

Այլ էնչ հաստանելոն է թուել զանուն օգնականն նմա գործակցեալ պճնութեն էր նմա յանգանութել զգործ պատկերացն և ծաղկանց, ոստ եթէ եղեալ էն նմա օգնական համ գործակցեալ, եղեալ էն ներհուն պատկերահանութ:

(13) Զոյանանէ նոյնպես առանցնութեամբ պատկեր է նկարեալ ՚ի վերոյիշեալ Յովհաննէս գեղեցկութեան հոյչեցեալ վարդապետէն:

ՅՕԴ. Ի

Աստղնորդոյ և գրչեան վանին Ամենափրկչի:

Ա. Ցոյժ ըստ ծերոցն աւանդութեան՝ թէ ըստ վկայելոյ տա- ճանց ձեռագիր Թղթոց, և թէ ըստ արդի նշխարեալ մաս- նից յայտնի լինի թէ ՚ի Ջուղայ՝ մանաւանդ ՚ի վանքն Ամե- նափրկչի եղեալ են բազում ձեռագիր մատեանք: Ջուղայե- ցիք կամ այլ գաղթականք Հայաստանի՝ ուսնելով սէր առ

գրականութիւն, և գիտելով զմատենիցն յարգ՝ խնամով լրացուցանել ընդ ինքեանս զմատեանսն զորս ի Հայաստան ունէին, ուստի ոչ սխալիմ ասել թէ Ջուղայ եղև մատենադարան Հայաստանի՝ յետ գաղթականութեան Հայկազնեայ ժողովրդոցն ի պարսկաստան : Մատեանք որք գտանին այժմ ի դպրոցատան վանին՝ ունին զվանքական կնիք, որ ապացոյց է թէ նախկին Առաջնորդք խնամով և զգուշաւորութեամբ ունեցեալ են զպահպանութիւն մատենիցն :

Ք. Ի բռնանալ հարստահարութեանց ի Ջուղայ ի ժամանակի վերոգրեալ վիճակի թագաւորութեանն Պարսից (ի 1770 է ց1790) մինչ Հայք Ջուղայու և մանաւանդ Առաջնորդք վանին Ամենափրկչի իբրև խոհ վարեցան ի բռնակալութեանցն հոսանաց նոյն ժամանակին, մոռացան զխնամարկութիւն անձանց, ընդ նմին և՝ գրոց մատենիցն պահպանութիւն, իբրաքանչիւր ոք հոգ տանելով գաղտնաճարտուկ վախստեամբ զանձն իւր ազատել ի Ջուղայէ . ուստի ի նմին տարաբաղդ ժամանակի՝ բազում հին ձեռագիր մատեանք անհետացան և կորեան, է դի մատնեալք ի ձեռս տգիտաց ընդ յոչ պիտանացուս գասեցան, և է դի վաճառեցան ընդ ոչ ընչի :

Ակրտիչ բազմավիշտն Առաջնորդ վանին Ամենափրկչի, ի 21 Սեպտեմբեր յամի 1785 գրէ առ Պարոն Մկրտում ոմն (1) (յետ յայտնելոյ զնեղութեանցն յորոց ի Ջուղայ) թէ « տեղիդ Առաջնորդ Յովսէփ վարուցեալ ի Ջուղայ

« պետն երկու անգամ գիր էր ղրկէլ (ա), գրուածոյ
« քանի հատոր գիրք այ ուզեցէլ (բ), Սրբազանն կար-
« ծումայ Ջուղայ կամ վանքն էլ էն այ՝ որ ինչ գիրք
« ուզենանք ձարվի (2). պիտի (դ) լսած լինիք որ Ա-
« զատխանի ժամանակին (յամի 1755) գրքերն ղէտրն
« 300 ֆ վհան քաղաքի աթարնէրն (ե) և բարութ
« (զ) չինողն են առոտէլ (է) :

Ա՛վ ցաւելի կարօտեանն այնմիկ, ընդ որում հազարաւոր աղգաւօգուտ առարկայք անհետացան, և կորեան վաստակք ազգասէր հարցն եկեղեցւոյ Հայաստանեայց :

Յառանգք Մէլիք աղայէ ի 1116 (1667) ի 28 Յունիսի տան զգիր ապահովութեան առ վանս Ամենափրկչի յայտնելով ինձա թէ « պատճառ գրոյս այս է, որ մեք Մէլիք աղէ որդի՝ Թոռունք և Հարսունք մեր Հայր և « սպաս և ըսկեսրօրք Մէլիք աղէ յիշատակն հո- « գևոր որ Թողեր էր, ՚ի՝ Աստուածաշունչն . և այլ « չորս հատ գրեանքն, որ է մէկ Հարցմունք՝ մէկ Դա- « տաստանագիրք՝ մէկ Պատմագիրք և բառգիրք ՚ի միա- « սին՝ մէկ Մխայէլ· այս հինգ գրեանցս չորսն Թուղ- « թէ՝ մէկ Աստուածաշունչն մագաղաթէ և ոսկետուփ, « մեք ևս Թոռըմք և ընծայեմք վանքին ,, : Այժմ ՚ի գրքատան վանին՝ ոչ գոն այնոքիկ մատեանք, որով յայտնի կինի թէ բազում գրեանք պակասեցան ՚ի մատենադարանէ վանին :

Դ. Վասն քան զԱռաջնորդսն Յովհաննու Սուրենեան չկայր որոշ տեղի կամ մատենադարան սակս վանքական մատենից, այլ ցիր և ցան կայս կամ կայն խորշ պահէին այնոքիկ, իսկ ինքն Յովհաննէս Սուրենեան լինելով այր գիտնական և գյարգ մատենից ճանաչող, յամի 1844 ՚ի սեղանատունն և գյարգ մատենից ճանաչող, յամի 1844 ՚ի սեղանատունն զմանն մի բաժանելով շինեաց զայն գրքատունն կոչելով ընդ Առաջնորդարանին, և ՚ի նմա շինելով զփայտեայ պահարանս՝ դասաւորեաց զմատեանսն, որպէս և արդէն կան ՚ի նմին կարգաւորեալ դասաւորութեամբ :

Ե. Յամի 1853 ՚ի գալ աստ աղայ Գալուստի վարդանեան Շիրմազանեանց Տփխիսեցւոյ (3) ՚ի ցուցակ անցուցան կրկին անգամ ամենայն մատեանք նոյն գրքատան, որոյ զմի օրինակն ատացաւ նոյն ինքն աղայ Գալուստն : Ձեռագիր մատեանք հինգ և նոր՝ ընդ ամենայնիւ երկերիւր և չիսուն հատոր, որոց ցհետագայսն ոչ անդէպ համարիմ ՚ի կարգի պատմութեանս յիշատակել :

Ընդ ետարան երկաթագիր ՚ի վերոյ մագաղաթի, գրեալ ՚ի Թուականի Հայոց . . . . . 485 :
Եւս եւս եւս եւս . . . 667 :

և բոլորագիր ի վերայ Թղթոյ, և 797։
և երկաթագիր ի վերայ մագաղաթի և 733։
և բոլորագիր և և 644։
և և և և 759։
Արևին Թղթոյ Պօղոսի, եփրեմի բոլորագիր ի վեց Թղթոյ . . . . . 750։
Արևին" ունայ" ունայն," Գրիգորի Նիւսացւոյ և 851։
Արևին" կողոսացւոց Յով" Ոսկեբերանի . և 774։
Ձառք զանազան վարդապետաց . . և 811։
Հինունք անուն մատեան մի . . . և 738։
Կանոնագիրք, երկաթագիր ի վերայ Թղթոյ 547։
Ստեփանա" լամբ" և մեկն" պատարագի բոլորագիր և 754։
Լուսանք զանազան վարդապետաց . . և 741։
Արևին" Ցայտ" Յովհ" յԱնդրեայ Եպիսկոպոսէ կեսարու . . . . . և 733։
Նեսիբի Եպիսկոպոսի եւնասու խօսք երկաթագիր, անյայտ Թուականն
Նախադրութիւն Դատաստանի հին ձեռագիր և։

Ե. Տէր Խաչատուր Կեսարացի առաջնորդ սրբոյ վանից շինէ զտպարան ինքնին զտառսն ձուլելով և զմամուլն յարմարելով (4) և յամի 1641 տպեաց զպատմութիւնն Հարանց վարուց (5)։ Ի գրքատան վանիս տակաւին կան քանի հատոր ի նոցանէ՝ որք թէպէտ ըստ Թղթոյն և ըստ տպագրութեանն չեն վայելուչ, այլ պարծանք են ազգասէր տպագրողին որ ինքնին զամենայն ինչ յօրինեաց, զորովհետև նոյն ինքն ի յիշատակարանի նոյն մատենին խոստովան լինի "Թէ բազում "աշխատութեամբ հանդերձ միաբան ուխտիս, հազիւ "կարողացաք այսչափս ի յայտ բերել, զի ոչ ուստա "յումեքէ,, : Նոյն ինքն Խաչատուր Առաջնորդ զմին յաշակերտաց իւրոց Յովհաննէս վարդապետ անուն առաքեաց Լիտալիայ վասն ուսանելոյ անդ զարհեստ տպագրութեան, և նորա գնացեալ Ամստրդամ և ուսեալ զարհեստն տպագրութեան երեր զտպարան մի ի Ջուղայ ի վանքն Ամենափրկչի, և յամի 1647 տպագրեցին զպարզատումարն (6)։

Իսկ ի 1688 ամի ի ժամանակս առաջնորդութեանն Ստեփաննոս Եպիսկոպոսի եղեալ է ի վանին ընտիր տպարան, որով տպեաց նա զդիւրքն հակաճառական ընդդէմ պապականաց դէպարագրեալն լինքենէ։ Այն տպագիրը կատարեալ է ըստ արհեստին համեմատութեամբ նոյն ժամանակի, թէ ըստ տառից պարզութեան և թէ ըստ տպոյ վայելչութեանն, և թուղթն է ողորկ։ Ըստ յայտնելոյ յիշատակարանի նոյն մատենին, այն տպարան հաստատեցաւ ըստ հրամանի Ստեփաննոս Եպիսկոպոսի, զի գրի ի ինձ թէ "շնորհօք Տէառն մեր
"Յսի Քրիստոսի, կամօք և կարողութեամբ Հօր
"և սրբոյ Հոգւոյն աւարտեցաւ գիրքս հակաճառական
"որ ընդդէմ . . . Ժողովոյն քաղկեդոնի և . . . վեր
"նի և փլաբիանոսի . . . յամի Թուականութեան
"տումիս հայկական 1137, ի Հայրապետութեան
"Տէառն Եղիազարու կաթուղիկոսի ամենայն Հայոց և
"յառաջնորդութեան այսմ նահանգի քաջ ախոյեանիս
"ուղղափառութեան Տէառն Ստեփաննոս Արք եպիսկո
"պոսի և Աստուածաբան վարդապետի, որոյ հրամանաւ
"և օժանդակութեամբ հաստատեցաւ տպագրատունս
"ի վանս վսեմական և փառաբանակ Ամենափրկչի նոր
"Ջուղայու, յամենայնի Մայիս" 21,, :

Այլ ինձ հաւանական Թուի ասել Թէ նոյն տպարան լինելոց է՝ զոր Յովհաննէս վարդապետն երեր յԱմստրդամայ, որ անգործ մնացեալ էր ի վանին, զոր վերստին հաստատեաց Ստեփաննոս Առաջնորդ։

Յամի 1844 Պարոն Մանուկ Յորդանանեան Ջուղայեցի այր բարեպաշտօն և ազգասէր (որ բնակի ի Սուրբայեա, ի սահմանին Ջավայու) առաքեաց զմի սար ընտիր տպարան որ բազմաճախ շինեալն էր յԵւրոպիա։ Այն տպարան արդէն կայ ի վանս Ամենափրկչի, այլ յաղագս անյարմար պարագայից ժամանակին է անգործածական։ Աղօթեացէք Տէր զի յաւուր մի եղիցի արդիւնաւոր վասն Ազգին, որով և պակասութիւն բարեպատակ հայրենասիրութիւնն բարերար նուիրողին նորին։

ՅՕԳ· Գ·

Աստղերդ վանի Ակնափերչէ։

Ա·

ՄԵՍՐՈՎԲ

Ինչ յամի 1605 ժողովուրդք Հայաստանի տարագրուեցան գաղթեցան ի Պարսկաստան, առաջնորդ Ջուղայուէր Մեսրովբ (1)։ Ըստ ոմանց ձեռագիր յիշատակարանաց, յամ Տեառն 1613 լինի զնոմանէ յիշատակութիւն ի պաշտօնի առաջնորդութեան այլ թէ յորում ամի վախճան եղեւ կենաց նորա կամ առաջնորդութեանն՝ չիք տեղեկութիւն ինչ քան զորոշ (2)։

---

(1)· Ձեռագիր յեշպահարան։

(2)· Տէր Յովհաննէս Խաչէան Աստ· Քահանայն որ ի Կալկաթա, գրեալ է զպատմութիւն առաջնորդաց Ակնափերչէան վանի, որ ե տպեալ էօրնիէնէան, այլ կարի հոմանօտութեամբ անցանէ զկարգաւորսն։ Տպեալ այն ի Կալկաթայ յամի 1845։

(1)· Էր նա էշխան երեւելի յԱտրպատական գաղութէ, գաղթեալ ի Ջուղայ և անուն Հօր նորա է Գալստան։

(2)· Առելով «ըստ Սբէաղանն կարծեմայ զջուղայ կամ վանդն էր ինքն՝ ինչ գերբ ուղեձոյ ձարվի», պայ հասկանալ ըստ որբեմի յառաջին ժամանակս՝ ակնայն գերբ գտնէը ի Ջուղայ, որ է վ հայրենի և հաստատութեան առելոյ եմ ըստ Ջուղայ եղեալ մասնաւորաբար Հայաստան։

(3)· Էր նա նշանաւոր ազգատոհմ և բանագէտ։ Սերեալ էր նմա էոյղ և խնդէր առնել հնութեանց, և ըստ նորին եսկ խնդրոյ հրկինք պատմագրեցան մատեանդն վանին։ Գնեաց նա գիրս և տոմս հարստ յեռագէր մատեանս ի Ջուղայ, որոց ոչ ծանեն էր Ասիա. այլ այնոցիկ յեռագէրս ոչ ունէին ըստ հնութեան։

(4)· Աղգատոհմ օրագէր Արարատեան ընկերութեան կալկաթոյ, հատ՝, ա, քէ- է՝. էջ 14։

(5)· «Թուին ՌՀ (1641) ի տղայն ղոշ որ է Սպահան, յանապան նոր Ջուղայ՝, ի լուսաւորութեանն Պարսից շահ Սէֆի- յն յեշ խանութեան գերեզմանաց Ջուղայ եշ խանաղատ- պարն խոջայ Սարգիսին ի բարեպաշտ, յեռամեայ խալատուր վարդապետէ նեոբայ, որ եպար՝ ի խափան- ընտրեցէք ոչ ոք ոտտ չոչափէ», ։

(Յերուսաղեմ Հարանց վերտ Մատենին)։

(6)· Աղգ՝· օրա՝· Արարատ՝· ընկեր՝· կալ՝· հատ՝ ա· քէ- է· էջ 30։

(ա)· առաջեալ։ (բ)· հաւեցեալ։ (գ)· անդ-ադ, ի հարկէ՝։ (դ)· դէղավճառ։ (ե)· վաճառագործ։ (զ)· գնեցեալ։

† Երկու ինչ յայտնի լինի նովա, ի՝ անչափ առատութիւն բանաւորութեան և ապրուստի հարկի, ինչ անճարացեալ գերեսան վաճառեալ են ազնիւք՝ և ոչ՝ հարստատ եպար՝ ի, զի երբ ոսկու էոյր հնձան նոցին՝ ոչինչ ոանէին ապառնալ, ոսկի եպար՝ ի եղեալ հղեան՝ որոց գնով հարց ոստիկան Պարսից։ 300 տեան է ստորոտ հան հոյ ոստիկայ Պարսից։

Ա.

ԽԱՉԱՏՈՒՐ Ա.

Ի սուրբ էջմիածնէ եկն նա ի Ջուղայ նուիրակական պատ-
ուոնիւ, և ըստ խնդրոյ Ժողովրդեանն Ջուղայու յամի 1620
կալաւ զաթոռ Առաջնորդութեան: Գովելութեամբ պատմին
ամենայն գործք նորա, զի վաւուն էր ի նմա եռանդն ազգա-
սիրութեան, ուխտ և զգիտութիւն և զմարդութիւն վա-
րուց: Ստացաւ զքանի աշակերտ, և լուսաւորեաց զնոսա
գիտութեամբ հին և նոր կտակարանաց (1): Շինեաց ըզ-
տապարանն՝ որ համարի առաջին տպարան ի մէջ Ազգի Հայոց
(2): Աշակերտ էր նա Գրիգոր վարդապետի Եփեսացւոյ և
Մովսէս սկաթուղիկոսի: Ի գովեստ նոյն Գրիգոր վարդապետի
վարժապետին իւրոյ շինեալ է զոտանաւոր ներբողեան, յա-
մի 1627, որոյ տողից սկզբնատառքն յօդեն "Գրիգոր վար-
պապետի", և վերջնատառքն "Խաչատուր ծառայէս":
Նոյն պրուատ վկայէ բանագիտութեանն նորա, զոր հարկաւոր
համարիմ յիշատակել ի պատմութեանս:

Վերադրական բարեաց գլուխ՝ գերագոյն ըմպեալ քաղց-
րութիւն,
քաղմարեղուն ծառ երկնուղէշ՝ բարգաւաճեալ առա-
տաքուխ:
Պաքունապետ տանս Աբրամայ՝ բամեալ ազգիս մեր անհմա՝
արդիւնաբար և ուսուցիչ՝ ըստ Սահակայ և Մեսրոպեա:
Ի բարեմոյն աղանց սերեալ՝ խաւարեալոյս լուսաւորիչ,
պատմողնորից և արտաքնոց՝ լեզու քո սուրբ իբր ըզ-
գրիչ:

Պերաշխարհիկ տէր իմ տինա, գեղաղէշիդ սիրտ իմ քաղ-
ձա՝
որպէս ցանկայր արքայն Դաւիթ՝ ըմպել ջրոյն Բեթղե-
հէմա:
Ալվ սխրալէ հայր պատուական՝ որ Սրովբէից ես համե-
մատ,
ես Թարմատարս և ապաքանս՝ հիմ եղբեցից տեառնդ
իմ պրուատ:
Պաւեալ աղանց հայկազանից՝ խընամածու ըստ հօր գթոյ,
հանդիսապէր դու և մարգիչ՝ հաստակառոյց վէմ հա-
ւատոյ:
Պարուքդ սուրբ գործով մաքուր՝ ըստ՝ եղիայի և Յով-
հաննու,
տեսականաս պայծառացեալ՝ ասպետափառ ակնդ ա-
րևու:
Պալէնիազ վհհիդ անձին՝ ո դրուատէ քան քեզ յարմար,
սակայն ոգէ պահարեղէնս՝ հրեռտորիդ իբր զտխմար:
Պոտից քննող մասանց բանի՝ բաբունապետ ես կատարած,
այնքան դու Հայրդ իմ սրբասնած՝ որ քեզ չհասին չա-
րին արկած:
Պաստիարակ մտաց մարդկան, վարժեալ յիմաստս գերա-
կա,
Արիստոտէլդ և Պղատոնդ, համեմատեալ Հիպոկրատա:
Պթենականըն հանճարով՝ հասեալ նոցին կէտ և հաչառ,
և ես գերազանց գոլ քան զբնաւս՝ կըրթեալ ի յիրս բան
և պատճառ:
Պկտ պատուական պալհաւունեա՝ պարէտ կարգեալ ա-
րամենիա,
իբր զՄովսէս և զՀարոն՝ տալեալ ազգիս Իսրայէլա:
Ի բանելոյ Հօրդ մերոյ՝ ցանկան Մանկունք եկեղեցւոյ,
և փափագին սրբութեան քո՝ իբր եղջերու յաղբեր-
ջոյ:
Տհաս մտօք զսա տուայտէ՝ տարակացեալս երեխայրէ,

ոչ որպէս պարտն է վճարել՝ այլ զսէրը ծորին ըղձակեր-
տէ :
Նոկ դու սուրբ Հայրդ ինձ ըստ Հոգւոյս՝ և առաւելիչ իմ
ըստ մարմնոյս ,
խանդաղատեա՛ քոյս հիքոյս՝ միշտ յիշելով՛ ի սուրբ յա-
ղօթս (2) :

Օ՛ամս քսան և վեց եկաց նա յառաջնորդութեանն Ի-
րուսաղէմ, և ազգասէր գործովք բարեբար Հանդիսացեալ Ջու-
ղայու, եթող զյիշատակ բարի և փոխեցաւ յաշխարհէ ի-
1646 ամի : Մարմին նորա (3) յամփոփեցաւ ի նոր քնայարկի
սեղանոյ սրբոյ վանիցն, ըստ յետագայ արձանագրութեան :

Ի հանգստի յաստ ամփոփի՝ մաքուր մարմին վարդապետի,
խաչատրոյ Սրբազանի՝ հետևողի Տեառն Յիսուսի :
Որ էր տեղեաւ եկեսարացի՝ գործով սուրբ հեզ և արի ,
բարձեալ յուս իւր զլուծ քրիստոսի՝ առաջնորդէ նորին
հօտի :
Երեսնամեայ յայս գործ յանձնի՝ սմա նստիլ յայսմ աթո-
ռի ,
կրէ յանձին զվարս անմարմնի՝ մինչև յիսուն վեցի
(4) :
Յաղցաւորացըն նա զատի՝ հազար չ և ե թուի :

---

(1) . Աչէ ". օր ". Արբր ". ք'նէ ". հոփ ". ա . ե- 2 . է 13 — 14 :

(2) . Ս՛ այն գրկեցոր եկեսրոյե լինելոյն՝ զրկե ե Ա-ոտել վերադարձ և ե հայր Մեսրոպ Ջամչեան (ա-ոջնորդ ո-նելով վա-ա-ոտել պոպոմբեան) յեղեն ի պոպոմբեանն Հայոց Իլով ղալաթե : Հայր Մեսրոպ ի պոպ . Հայ . հոփ չ . է 633 յեղե ե յամի 1630 Մովսէս կոնդակաւ վերադարձ եկեսրոյե ա-ոտեոյ նոր- քաղ ի Յոհաննուպան, և նորա հաւեալ ի ղալաթե յիշով՝ ի ա-ոջնորդութեան Երուսաղէմ՝ ընդ նմին եպիսկոպոս :

վերադարձ եկեսրոյե՝ եղե ա- ինձ յաջորդ եկեսրոյն ա-ոջնորդն Ջ-ղայու , ապա յայտ է ե նա ի 1630 ամին էր ի Ջ-ղայ յառաջնորդական եղբայրութեան ե-րոմ ա-ոտե անդամագրեալ է պոպոմբեան Մեսրոպ զնա , եկ եթե պոպոմբեան նորա եղե այլ յաջորդ վերադարձ եկեսրոյե , մարմն է պոպոմբեան նորա լինել պոյտ :

(3) . Մինչ յայսօր ժամանակի՝ ոչ ժառել մարմին նորա էերև նշխար ոչ էոյ , և ամանոր պարզութեամբ ի ծաղկեղէզոյ յաղթո փորագրէլոյ ի հեռանդրութենէ ածեն զնա ի վերոյ գերեզմանի նորա՝ և յաղորդին նորա դարձեալ առաջնոյ , և ըմպեն :

(4) . կամ առել ե երեսնամեայ էր նա ի լինելն առաջնորդ Ջ-ղայու , յորմէ եկաց ոչ լինել է- յետոյն և վեց ամաց , և ապա- յայտնէ լինել ե նա ի 1630 ամին էր ի Ջ-ղայ , և ոչ նա-երրակ ի Յոհաննուպան :

Գ.

ԳԱՒԹ Ա.

Օ՛կնի վախճանելոյ Տեառն խաչատրոյ՝ հրաւիրեցաւ Դաւիթ վարդապետ աշակերտ նորա նստիլ յաթոռ առաջնորդութեան , այլ նա զինքն անարժան համարելով հրաժարեցաւ , ուստի զամս հինգ վանքն մնալով առանց առաջնորդի՝ կառավարեցաւ նոյն Դաւիթ յաջորդական հոգաբարձութեամբ : Ջուղայեցիք թախանձանօք հրաւիրեցին զնա յանձն առնուլ կատարել զնդիրս իւրեանց, այլ նորա յաւէտ ի հրամանէ Տեառն փիլիպպոս կաթուղիկոսի Ջարահատ լեալ՝ ըստ հրաւիրանաց նորա գնաց յԵրուսաղէմ՝ օծաւ ի նմանէ եպիսկոպոս , և յամի 1652 (1101) ի 23 Ապրիլի կոնդակաւ նորին (1) վերադարձեալ ի Ջուղայ կալաւ զաոաջնորդութեան աթոռ :

Սա սկիզբն արար երկրորդ շինուածոյն վանի, աւարտե-
ալ զայն յընթացս ինն ամաց ի 1113 թուականին Հայոց:
Հանգոյն նախորդին իւրոյ գովելի ազգասիրութեամբք կառա-
վարեաց և սա զկնի իւր, ուստի մեծարեցաւ ի Ջուղայեցւոց,
և յաղագս բազում երախտեացն՝ սովորութիւն եղև յհետե-
ոյս Ջուղայու և Հնդկաստանի ի գատարագին ի գոհութեանն
յիշատակել զանուանս սորա և նախորդին իւրոյ՝ իբրև զբազ-
մաշնորհ Յաքուենապետս իւրեանց: Այն սովորութիւն պահ-
պանեցաւ մինչև ցքանի ամօք յառաջ:

Յիշատակարան գրչագիր Աստուածաշունչ մատենի (2)·
պատմէ զնորա արժանաւորութիւն և զվարուցն սրբութիւն՝
զոր հարկաւոր համարեցի ի կարգի պատմութեանս նշանա-
կել:

«Յիշեցէք ի քրիստոս զարժանին յիշատակի զհոգևոր
«ծնօղն իմ և զարփիաւորիչն հոգւոյ իմոյ զբազմերջանիկ
«և երիցս երանեալ ընդ երանելիսն հանգուցեալ զՏէր
«դաւիթ վարդապետն զարհի եպիսկոպոսն, որ ծնաւ
«զմեզ վերստին բանիւն ճշմարտութեան, քանզի էր սա
«քնիկ գաւառաւ և ազգաւ Ջուղայեցի, բարեպաշտ ծնո-
«ղաց զաւակ, նախանձաւք և սիրիւք յոյժ ազնուատոհմ,
«երկիւղած Աստուծոյ և ամօթախած ի մարդկանէ, բա-
«րեբարոյ և հեզասիրտ, վարուքն առաքինի և սիրող
«սրբութեան, կրօնիւքն պարկեշտ յամենայն իրս, ի յու-
«տել ի յընդունել՝ և ի զգենուլ, ատենօղ ծուլութեան և
«վատամտութեան, արտասուօղ և աղօթարար յարատեւ,
«անձանձիր ուսուցիչ և աննախանձ բաշխիչ խնդրողաց,
«լցեալ ամենևին շնորհօք հոգւոյն սրբոյ, զարդարեալ
«տեսականաւն և գործնականաւն, յաւէտ ևս կարի փը-
«րիստոսասէր, մինչ զի յիշեն զտեղեալն անուն փրկչին
«լն լինէր աչքն արտասուօք: Ասպիսի վարուք կեցեալ
«յերկար ժամանակս հանդերձ խաղաղութեամբ ի փը-
«րիստոս. որոյ յիշատակ օրհնութեամբ եղիցի ամէն:
«Ճշմարիտ ասեմ ի քրիստոս և ոչ ստեմ, զի ոչինչ ի-
«նէք ունէր պակասութիւն քան զնահանի եղեալ սուրբ

«վարդապետն՝ որ ի գերս պատմի, և ոչ ի մերում ժա-
«մանակի տեսաք զոք նման նմա, որպէս և Տէր իսկ գի-
«տէ. քանզի շրջեալ մեր ի բազում աշխարհս, և գնա-
«ցեալ մինչ և ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, գրեթէ
«տեսաք աչօք մերովք զամենայն վարդապետս՝ եպիսկո-
«պոսս՝ և կաթուղիկոսս՝ և ոչ գտաք համեմատ նմա:
«Ի դասս արեղայից և՝ ի գումարս կարգաւորաց, ի ժո-
«ղովս միանձանց և ի հոյլս միայնացելոց (ոչ գտաք նման
«նմա) վկայ է Տէր: Սա ի տիս տղայութեան իւրոյ մինչ
«լեալ էր երկոտասանամեայ, ցանկայ վարուց կրօնաւորա-
«կանաց, և գնայ մտանէ յաշակերտութիւն մեծի և տիե-
«զերալոյս վարդապետին Խաչատրոյ Եխսարացւոյ, որ և
«նա աշակերտ Տեառն Մովսիսի Սիւնեցւոյ կաթուղիկոսի
«ամենայն Հայոց, որ եղև երկրորդ լուսաւորիչ տանս Ա-
«րամեան, և մնաց յաշակերտութեան մինչ ի ժամանա-
«կակից վարդապետին Խաչատրոյ, ի նմանէ ընկալեալ
«զօծումն քահանայութեան և իշխանութիւն վարդապե-
«տական, զկնի և մեծ գաւազան որդի հպազանդ լեալ,
«և ճառայ հաճոյական, նմին գերագոյն լեալ ի մէջ յու-
«դեանց աշակերտակցաց խոհեմութեամբ՝ հպազանդու-
«թեամբ՝ ճգնութեամբ՝ և առաքինութեամբ, ամենևին
«: Հանդուցանէ զսիրտ վարդապետին՝ մինչ զի ի ժամ
«վախճանին նմա յանձն առնէ զաթոռն և զհօտն, և նո-
«րա յոչ կամաց յանձն առնու ի սէր վարդապետին վասն
«ժառանգելոյ զօրհնութիւնն նորա, իսկ յետ վախճանին
«դարձեալ հրաժարի ամն հինգ, մինչ զի ժողովուրդն
«ամենայն բողոք բառնան առ գերահոչակ և ճգնազգեաց
«կաթուղիկոսն Տէր Փիլիպպոս, որ և նա ևս էր ձանձրա-
«ցեալ սակս չլսելոյ գերազանց հրամանի իւրոյ՝ զոր բա-
«զում անգամ պրեալ էր յանձն առնուլ զայն գործ:
«Վասն որոյ յղէ նամակ սաստկութեան՝ թէ ահա ես ձա-
«նապարհ արարեալ երթամ յերուսաղէմ, պիտոյ է և
«քեզ անդ լինել ինձ ի սպասու, որ և սա լեալ անձար
«յամենայն կողմանց եկեալ երթայ ի սուրբ քաղաքն, և

« լինի յանդիման Սրբազան Հայրապետին 'ի բարեկենդան
« հինգշաբաթին յաւուրն տօնի վարդանանցն սրբոց, և մնայ
« մինչ 'ի սուրբ զատիկն, և յառաջին չորեքշաբաթին 'ի-
« տօնի աւետեաց սուրբ Աստուածածնի յիօթն Ապրելի
« 1100 Թուոյ Հայոց ձեռնադրէ զնա սուրբ Հայրապետն
« եպիսկոպոս անդէն 'ի սուրբ քաղաքին, և ուրախու-
« թեամբ երթևեկ որդւոյ սիրելւոյ և հաւատոյական ծառայի
« քրիստոսի Թագ կապէ նմա, և վերայացուցանէ մասին
« Հայոց՝ որք 'ի կողմանս Պարսկաստանի, և արհիական ե-
« պիսկոպոս արքայանիստ քաղաքին երթևեկ զնա սուրբ
« 'ի դրան արքունի, և արկանէ զպատշաճազեղ լանջօքն
« զեմփորանն պատուական, և դնէ 'ի ձեռն զդաւազանն
« գեղուղէշ, և արկեալ 'ի մատն զմատանին ճանրագին՝
« նշան փեսայութեան, առ 'ի տիրել հարսին եկեղեցւոյ, և
« այնպիսի ճոխ փառօք եկեալ և թագաւորեալ յեկեղե-
« ցիս մեր, ջահաւորեալ որպէս զարեգակն, և արար բա-
« զում արդիւնս նախ՝ արար սկիզբն շինուածոց եկեղեց-
« ւոյ վանացն Ամենափրկչի նոր ջուղայու, և կերտեալ զնա
« գմբեթայարկ և երկնաքաշակ յօրինուածով, յոյժ մե-
« ծագին ծախիւք եռայարկեան ըստ նմանութեան Նո-
« յեան տապանին և Սողոմոնեան Տաճարին, և ետ նկարել
« զանազան գեղօք՝ հրանգ հրանգ գունով՝ ոսկեհնկար յօ-
« րինուածով և երփն երփն ծաղկօք յար և նման դրախ-
« տին եդեմայ և վերնոյն Սիովնի, սպանդարան անմահին
« ուր միշտ զենանի գառն Աստուծոյ 'ի հաշտութիւն Հօր
« բարձրելոյ և 'ի քաւութիւն ամենայն հաւատացելոց,
« յաւէտ պատճառ փրկութեան հոգւոյ բազմերջանիկ հօրս
« մերոյ, ուր և հանգուցեալ կայ պատուական և սրբաս-
« նեալ նշխարք նորա 'ինքերքոյ սրբոյ սեղանոյն, ընդ ե-
« րանելի հօր և վարդապետի իւրոյ վերոյ գրելոյ: Երկ-
« րորդ՝ մեծացոյց և ընդարձակեաց զինիստ վանացս բնակու-
« թեան, գեղեցիկ գեղեցիկ և պատշաճաւոր շինուածովք
« զարդարեաց զնա, երրորդ՝ ստացաւ և ժողովեաց բա-
« զում աշակերտս, և ձեռնասուն իւր արարեալ զնոսա և

« լուսաւորեաց հոգւով և զարդարեաց գիտութեամբ և
« զանազան ուսմամբ՝ ըստ հոգևնուագ սաղմոսիւք, քաղցր ե-
« ղանակ շարականիւք, երաժշտական ձայնաւորօք, տա-
« ղիւք, վեղկիւք, զանձիւք և այլ մանրատաս կացուր-
« դօք, հաւատոյական թուականիւք, քերթողական քե-
« րականիւք, փիլիսոփայական հանճարիւք, և արտաքին
« ուսմամբք, քնաշանցական Աստուածաբանութեամբ, և
« ճշմարտութեամբ Աստուածաշունչ գրոց »:

Որս եղեն քսան և լինն աշակերտք, յորոց լինն եպիսկո-
պոսացան առ ժամանակաւ նորին, լինն եղեն վարդապետք, և
մեռանեալքն քահանայացան: Եպիսկոպոսունքն, Ստեփաննոս՝
որ գնին նորա կալաւ զառաջնորդութիւնն ջուղայու, Խաչա-
տուր, Մինաս, Անդրէաս, Միքայէլ, Մարկոս, Յովսէփ, Սի-
մէոն՝ և Յովհան: վարդապետքն էին՝ մեծ Բարսեղ, Յակոբ՝
որ յետոյ եպիսկոպոսացաւ եղև կաթուղիկոս, փոքր Բար-
սեղ, Ստեփաննոս, Յովհաննէս, Գրիգոր, Երեմիայ, Եսայի,
և Ահարոն (3): Սոյն Դաւիթ առաջնորդ 'ի մէջ եպիսկոպո-
սական հինգին իւրոյ քանդակեալ էր գնինեալն իւր աշակերտ
Խաչատրոյ Կեսարացւոյ, որ ապագոյց համարի խնարհու-
թեանն իւրոյ և երախտագիտութեանն: վախճանեցաւ 'ի 1683
(1132) և ամփոփեցաւ կից ընդ Խաչատրոյ նախորդին իւ-
րում, 'ինքերքոյ յարկի սեղանոյն սրբոյ վանացն: Ըստ յիտա-
գայ տապանագրութեան:

Կոչեալ զանձ ըղձալի՝ ուրուն Սրբազանի,
քաջ բարձունոյ Տէառն Դաւիթ՝ Շօշ քաղաքի գլխաւորի,
որ էր մնալ 'ի սուստկայն (4) գեղջի՝ բնիկ ազգաւ Ջուղայեցի,
առաջնորդեց այսմ նահանգի՝ երեսուն ամաք ութնաւելի (5),
ՌՃ Հայոց թվի շը և ա աւելի,
յորում սուրբս առ Տէր փոխի: Նոյեմբեր ՃՀ:

(1). «Յետոյ քրէստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ա-
«նայ Հայոց . . . Աստուածպահ տաղտկալի Սպիտակաց ծովընբր-
«պետաց ի Ջուղայ . . . ե՛ ընդ օրհնութեանս ծանե-
«ռեալ էր ի փոքր, զի ըստ Աստուածայ բանին՝ հոգի ամենայն ե-
«կեղեցւոյ ի ձեռն . . . վայ և էր պետութիւն զկնի
«կենդանի եղեալ զհոգի խաչե-
«ալին Քրիստոսի յերրորդ աւուր յարութեանն, որ ըստ-
«ստոյգ հոգեւոր ծնունդ է, պատուական մարգարիտ
«նորին, և ստուգիւ ի ձեռն նորա ծնանի
«եկեղեցի Քրիստոսի ամենայն տիեզերաց . . . :

(2). Նոյ այն է գրաւոր Աբեղայական ձեռն, գրեալ է Ջուղայ ի 1135 (1686) ի Տէր Յակոբ հոգեւոր, յետ երեց ամաց վախճանելոյ Տէր Դաւթի Աստղնորդի :

(3). Ի յեղաւոխութեան վերոյ գրեալ Աստխնութեանց մատենի :

(4). Անձանօթ է արդ Սուրխայ գեղն :

(5). Թուեալ լինի և հինգ տին՝ նախ քան պնդեկոստեանն նորա-
գի էր յայնժամ Դաւթի Աղորդ և աստղին հոգեբարձու ձեռն :

ԳՈՏԵՓԱՆՈՍ

Տէր Ստեփաննոս Եպիսկոպոս Ջուղայեցի ձեռնասուն աշա-
կերտ Տէր Դաւթի՝ յետ վախճանելոյ վարժապետին իւրոյ
ըստ խնդրոյ և ըստ համակամ ընտրութեան Ջուղայեցւոց
կարգեցաւ առաջնորդ յամի 1684 : Սա յառաջնում ամի ա-
ռաջնորդութեանն իւրոյ կարգեաց զաթոռահաս կամ վեր-
գոյ ի վերայ վիճակաւոր քահանայից Հնդկաստանի՝ գրելով
զկոնդակ սակս այնր (1) ուրանօր յետ խստիւ յանդիմանելոյ

գկանոնապաշտութիւն քահանայից ոմանց որք առանց կոնդակի
կամ հրամանի առաջնորդի գնան ի Հնդկաստան, յաւելու
ասել «զայս հարկ (աթոռահան) ի վերայ երիցագլխոյ ե-
«զաք, որպէս աստ կայ ի վերայ երիցանց, որքան կամիք
«կենալ և յամենալ (ի վիճակաւորութեան) տարին մէկ ե-
«րկոյն՝ երկու թուման տայ աղքատ և հարկաշատ եկեղե-
«ցեացս . . . :

Փութացան եղիւ վն բառնալոյ զհարկս եկեղեցեացն (2). Ջուղայու որ հաստատեալն էր ի շահ Սէֆիյման արքային, և վասն այնր ծախեաց զէրս հարիւր թուման մինչև ընկալաւ զհրաման ազատութեան, այլ տակաւին վճարեցաւ այն հարկ մինչև ցժամանակս Մովսէս Առաջնորդի :

Յաւուրս սորա ի 1688 ամի յուզեցաւ խռովութիւն մեծ ընդ մէջ Լուսաւորչական և Հայ պապականաց Ջուղայու, Շահրիմանեանք զօրավիգ և պաշտպան էին պապականութեան, և կամէին տարածել զայն ի Լուսաւորչական Հայս Ջուղայու առաջնորդութեամբ Յիսուսեան կրօնաւորաց. և սա այսպիսի իշխանօք Ջուղայու հոգւով չափ հակառակեաց ընդդէմ նոցա, և բողոքեալ առ շահ Սէֆիյման արքայն՝ ընկալաւ զհրաման արտաքսելոյ զվանեորայս նոցա և քակելոյ զեկեղեցիս նոցա (3). զորոց յիւրում տեղւոջ ունիմ լիագոյն պատմութիւն :

Ընդդէմ պապականաց տպագրեցաւ ի վանին Ամենափրկչի զմատեանն կոչեցեալ «Հակաճառութեան» (4). որոյ վասն պապականք չարախօս եղեն առ մեծամեծս այլազգեաց թէ ընդդէմ վարչապետութեան դուրանին՝ են բանք նոյն մատենի, վասն որոյ ստացան ըստ այնմ մասին զերկերիւր Թուման տուգանս, և այլ ևս երկերիւր Թուման ծախս եղև վասն մեծամեծաց այլազգեաց կաշառացն, մինչև շինեալ այն հրովհ չարախօսութեան : Ստացաւ զերկերիւր Թուման յիշխանաց և ի մեծատանց Ջուղայու, և բաշխեաց զայն աղքատ ժողովրդոց (5): Յամի 1697 Եպիսկոպոսաց սրբոյ էջմիածնի բազմակնիք մանաւանդ Թախանձանօք հրաւիրեցաւ կալնուլ զգահ կաթուղիկոսութեան՝ յընկերակ առնել

զՆահապետ կաթուղիկոս(6) : Վասն որոյ եւ ինքն նորա մանաւանդ Ջուղայեցւոց եւ հրովարտակաւ (7) շահ Սէֆեան արքային գնաց յԷջմիածնին, այլ անդ ոչ ազդեցաւ երբէք գործոյն զի՝ ի կուսակցաց Նահապետ կաթուղիկոսի չարախօսութեամբ մատնեցաւ այլազգի իշխանին երեւանայ, որոյ կաշառակուր լեալ գրեաց զչարախօսութիւնն կուսակցաց Նահապետ կաթուղիկոսի առ շահ Սէֆեան, և արքայն հզ զհազար թուման՝ի վերայ նորա, (զոր վճարեաց վանքն Ամենափրկչի) և արկեալ եղև՝ի բանտ, ուրանօր զկնի քազում խոշտանգանաց վախճանեցաւ յամի 1698 ՝ի 4 Յունվարի (8) : Յետ եւանելոյ սորա յառաջնորդութիւնէ և գնալոյ յաթոռն Էջմիածին, վանքն Ամենափրկչի ձեռաց՝ինչերքոյ հազար թուման պարտուց, որք յաւուրս առաջնորդութեան նորա ծախեցան վանն ակնապէս ազգօգուտ և անազգօգուտ գործոց, և հազար թուման տուգանքն ևս յաւելաւ ասպա՝իվերայնոյն ծանրութեան :

---

(1)· Գրեալ է այն :

(2)· Տէ՛ս՝ի գլո՛խ :

(3)· Պարկ նորա գրեալ : Ձէ՛ս՝գէր յէջմիածին՝ :

(4)· Հայր Մեխայէլ Զահլեան՝ի պատմութեան Հայոց հատոր Ճ, երես 749, գրէ ևս ‘‘ սա էր՝ն Աղէքսանդր ... գրեալ էր գիր մի ‘‘ խորհրդի հակառակ բանից՝, որոյ ընդդէմ արար գալ գիր՝ Սուեթանա ‘‘նոյ պաշտօնեայ՝ն Ջուղայեցի՝ն թէ սա՝ն պատմականեալ էանէր ‘‘նորա խմաստութեամբ ,, : Աղէքսանդր կաթուղիկոս ընդդէմ հակառակութեան հոգւով չափ ընդ խնդրոյս պատճառի, այլ նորա ոչ գոյ մտեան ինչ շնորհալ հակառակ նոցա. ապա՝ի յէջմիածին՝ հայր Մեխայէլ կամ լինելոյ է նմա հակառակութեան մտեանն յօրհնեալ՝ի Սուեթանոյ եպիսկոպոսէ, կամ լինելոյ է ‘‘ կրօնութեան մանկանց ,, գործակից գիր՝ն զոր յօրինեալ է Ջուղայեցի Յովհաննէս վարդապետն հոչակեալն պրեզբուլոյս, որ պատգրեալ է՝ի Պօլիս՝ի պատրանէ գրչագրէն մարգարէ՝ի Մարգանցոյ, յամի 1713 : Այլ ինչ վերջինս այս յորմէ՞ր ինքե՞, զի յէջմիածին հայր Մեխայէլն, Սուեթանա պատրիարքութեան ժամանակ՝ի 1715 ամի, զոր յորմէ՞ր ինքե՞ գրեալ էր՝ի 1713 ամի :

Գիրս՝ն այն գրեալ է Սուեթանոյ Բոսէլեցոյ՝ի նոր Ջուղայ՝ կոչի ‘‘ Մաղթի եղբանոց ,, գրեալ յամենայն Ազգէ 1715 ամի՝է Սուրբ Հոգւոյ Հնդկաստանի: Արդարև ինքն ևս վկայէլոյ Հ. Մեխայէլէ էմատուցեալ է ինձ նորա զի ընտրեալ հանդիսացայ ուղղափառութեան Հայոստանեայց եկեղեցւոյ, հետևաբար քաղաքացի եմ՝ի հարց որոց հաստատեալ ընդդիմացայ նենգաւոր ուղղափառութեան նորա, եւ ընդդիմացեալ ընդարձակեցի յուշիս ինձ, որ անկնճռեալ տարածեսցի պարզմտաց ի հերձուածողական եկեղեցին Հայոստանեայց : Ինչպէս վերագրեալ ասէ ‘‘ Ընդդէմ այսոցիկ ասի՝է անդին հարց ‘‘ պատասխանեաց ընդդէմ անդնոյն հերձուածողաց եւ մոլորութեանց, եւ ‘‘ ընդդէմ այն որ էրտ չէմացեալ զգեստաւորութեան եկեղեցւոյ՝ ‘‘ ըմբռնել, (զինքերայս ևս ասէ) : Ո՞րպէս ասացուք կամիմ վերստին ցուցանել զհաստատել զուղղափառութեան եկեղեցւոյ հերձուածոց, և հետեւողք՝ի ճեան վկայութեանց վերստացեալ մերոյ՝ որ ‘‘ յիւրաքանչիւր ծամանակի ծաղկեցան յեկեղեցիս մեր : Եւ զի նոյն ‘‘ բառնալ զտարակուսութիւնս ոմանց երկբայելոցն անդանց, զի՝է զի ‘‘ կարկէ զգեստս չտրաշխոց եամբողոջ եւ կնոջ զերեքանս հակառակ ‘‘ առակութեան ոմանց, որ վասն հագուստ լինելոյ՝ յամենայն տեղիս նըստ‘‘ պետ՝է երբան ունեն զկնէկեցիս մեր :

(5)· Պարկ նորա:

(6)· Ջուղայեցիք ոչ յօժարեցան եւ հաւան եղեն հաստատութեան Նահապետի, վասնորոյ գոն գործեն ընկեցիկ առնել զնա՝ որպէս եւ արարին երկիցս հրովարտակաւ շահ Սէֆեանայ,՝է պատճառս լինելոյ նորա հակառիր՝ի հնգին պատրիարքութեան :

(7)· Գաղափար նոյն հրովարտակի նոյ՝է վանին Ամենափրկչի, զորոյ պատճառութեան ոչ հարկաւոր ինչ համարեցի յէջմիածին :

(8)· Ողջառնգեր : Ձէ՛ս՝գէր յէջմիածին՝ ՝է հանգիստ :

Ե.

ԱՂԷՔՍԱՆԴՐ

Տէր Աղէքսանդր եպիսկոպոս Ջուղայեցի ըստ խնդրոյ ժո-
ղովրդոց Ջուղայու յամի 1693 կանգնու զաթոռ Առաջնորդու-
թեանն, և բարւոք տնտեսութեամբ կառավարէ զբանաւոր
հօտն իւր մինչև ցամ Տեառն 1706, յորում ժամանակի ըստ
խնդրոյ և ըստ ընտրութեան աղգի Հայոց կարգի կաթուղիկոս
սրբոյ Էջմիածնի, և արքունի հրովարտակաւ ելանէ ՚ի Ջու-
ղայէ և գնայ Էջմիածին կանգնել զաթոռ Հայրապետութեան
(1)։ Յետ ելանելոյ սորա յԱռաջնորդութենէ վանին Ամենա-
փրկչի՝ վանքն կայր ՚ի ներքոյ 1180 Թուականն պարտուց (2)
որ մնացեալն էր ՚ի ժամանակէ առաջնորդութեանն Ստե-
նոս եպիսկոպոսի։ Սա յընթացս կենաց իւրոց ցորչափ եկաց
՚ի կաթուղիկոսութեան, կարի մտերմական և ընտանեկան սի-
րով պահեաց զհաղորդակցութիւն սիրահաղորդ նամակաց ընդ
իշխանս Ջուղայու, յորմէ երեսուն կոնդակք բարեկամական և
հայրենակցութեան սիրով գրեալք անցին ՚ի ձեռս իմ, զորս
գրեալ էր առ ներքոյ գրեալ իշխանսն Ջուղայու, էր զի ու-
րոյն ուրոյն յանուն նոցա, և էր զի ՚ի միասին, որք են Ակթ-
աղայ, Սաֆրազ Թարխան, Աւետիք, Յակոբ, Ելիազ, Էմինազ,
(սմա յամենայն կոնդակն իւր իրրև առանձին սիրոյ նշան գր-
էր «աչացս լոյս») Սահրադ և Զաքար ՚ի միում ՚ի կոնդակացն
իւր, յետ յիշելոյ զկացութենէ իւրմէ՝ ընդ որ բաւարար
ցուցանէ զինքն և զոհ ըստ ամենայնի, յաւելու ասել՝ «բայց
«միայն աչեր ձեր տեսցեն և խորովէ զսիրտ իմ, և գուժ ձեր
«պալարեցուցանէ զաղիս իմ, և ՚ի մտածելն զձեզ՝ տեսցին
«երիկամունք իմ, և ոչինչ ունիմ մխիթարութիւն այսքան
«աղետից և տարակուսանաց իմոց»։ Եւ յայլում կոնդակի

իւրում գրէ այս օրինակ, «Եւ արդ սիրելիք իմ և հարա-
«զատ որդիք Մօրս լուսոյ սրբոյ Էջմիածնի, զոր գոհութիւն
«գոհացայց զձէնջ, և կամ օրպիսի ընդհակառակ եղէց զբարե-
«բարութենէ ձերմէ, ՚ի տրոցն յառատութենէ՝ թէ ՚ի պատ-
«ուոյն յոլովութենէ զոր պարտական եմ յամենայնի, քայց
«միայն օրհնութեամբն այն օրհնեցից զձեզ որ ոչ անցանէ, և
«զփոխարէն տրիտուրն հատուսցէ ձեզ հատուցիչն ամենայն
«բարեաց՝ հոգևորացն և մարմնաւորացն, աստեացս և հան-
«դերձելոյն, ձեզ և ձեր որդւոցն, սիրելեաց և բարեկամաց,
«յաւէտ և աննձնջելոց ձերոց յամենայնի»։

Սա անշէնջ ունելով ՚ի սրտի իւրում զսէր Հայրենեաց,
՚ի 25 Թիրայ 1160 ամի, (՚ի 12 Հոկտեմբերի 1711) գայ ՚ի
Ջուղայ, և անդ մնալով ամիսս ութ, և մխիթարելով զՀայ-
րենիս և զբարեկամս իւր, ՚ի 27 շրաթ 1161 (17 Յունիս
1712) վերադառնայ միւսանգամ ՚ի սուրբ Աթոռն Էջմիա-
ծին (3)։ Կաթուղիկոսութիւն սորա եղև կարի օգտակար ոչ
միայն սակս Աղգին, այլ և վասն սրբոյ Էջմիածնի, զորոց նոյն
ինքն Աղէքսանդր գրէ առ Մովսէս Առաջնորդն Ջուղայու վա-
նից, յունիս 4՝ ՌՃԿԱ թուական կոնդակաւն իւրով, զոր հար-
կաւոր համարեմ յիշատակել աստ։

«Յաղուհացի մինչնոցէն մինչև ցարդ թէ տան, և թէ
«գուբան, տասն տեղ քարխանայք ունիմ, երեք հարիւր ա-
«հեղի ուստայ միշակ կուբանի, տեղւոյս կարդն գիտես որ ա-
«մէն միշակ օրն երեք անգամ հաց կուտէ, որ լինի օրն ինն
«հաց, օրն երեք հազար հաց տանէս գուբս կուլինի, զատ ՚ի
«մաբանից և երթևեկողաց. քարխանայքն այս ինչ են՝
«յառաջիկ գրեալ եմ, սեղանատուն ձմեռան համար, քան և
«հինգ գազ ուկէս երկայնութիւնն, հինգ գազ լայնութիւնն,
«չորս գազ բարձրութիւնն, առիւն սրբատաշ և նարին
«թրաշ քարով, սորա վերևն այլ նոյն չափովն ցորենի ամ-
«բար, սեղանատունն աստուծով մինչի վարդավառն կատար
«կառնու, ուրջն այլ նոյնպէս տաշեալ քարով, երկաթ քա-
«խերի երեք զոնացի, որ այլ սեղանատանէն ներս կումանէ։
«երկրորդ որ եկեղեցւոյ մօտի խորն տանքաւ եմ շինած

« նորա վերայ այլ զանգակատան նման երկու տակ և երկու
« գմբեթով նոյնպէս քարով շինած եմ: Երրորդ՝ Սիմոն վար-
« պապետ այսուցն կտրած եմ մեծամեծ թաւլէք շինուած:
« Չորրորդ՝ Ղըռի այսօր հիւսիսային պատէրն ի վեր ա-
« ռեալ շատ բարձրացուցինք, և յարևմտեան կողմն այգիք
« առնինք ներս ձգեցինք մինչև սուրբ Հռիփսիմի մօտն որ կրկին
« Ղըռի այգի եղև: Հինգերորդ՝ այս մեր նոր առած այգին
« յեզրն հիւսիսային և արևմտեան կողմն պատերն բաց էր,
« որչափ կամեցաք ներս ձգեցաք որ եղև կրկին նոյնչափ:
Վեցերորդ՝ Երևանայ այգուց պատերն բարձրացուցինք,
որ այլ այսօր միջովն ճանապարհ չլինի, կողոպտիլ ի գնաց:
« Եօթներորդ՝ յուշկանայ այլ նոր մուտք եմք առած, որ
« պատերն քաշուած են: Ութերորդ՝ առուն որ միայն եօթա-
« նասուն մշակ տեղն է բանի: Իններորդ՝ խառատ և դարբին
« որ սոցա ուղեցած պարագայքն են շինուած: Տասներորդ՝
« մենաստուրսի թուրքի մէջէրն որ յիսուն վաթսուն տարի է
« իւրեանց ձեռքն է եղեալ, դիւանի արզ արարաք զայն և ա-
« յետ դարձուցին մեզ, որ այժմ վարեցինք և ցանեցինք շը-
« նորհօքն Քրիստոսի ,, :

Այս յամի 1163 գրէ զկտակ իւր, որոյ այս է պատճէն :

« Ընդ ես Ջալալեցի Տէր Աղէքսանդր կաթուղիկոս ամե-
« նայն Հայոց, ի սուրբ Աթոռոյս Էջմիածնի 1155 թիվն,
« կոչեցայ յաթոռակալութիւն սորին, եկն ետես ժամանակաց
« մինչև 1163 թիվն, յորում զկտակս գրեցի, թէ ուր ոմն ա-
« զինչ արդիւնք եղև սրբոյ Աթոռոյս Աստուած միայն գիտէ,
« այլ և տեսողքն և լսողքն և մանաւանդ թէ Նահապետ կա-
« թուղիկոսն որ Թադեւորական պարտք կայր երկու հազար
« Թումանի զայն ևս վճարեցի, որ մէկ դեկան պարտք չկայ
« սուրբ Աթոռոյս այլ և դրամ ևս կայ . . . երկրորդ՝ ով
« սիրելիք իմ յետ մահուանն իմոյ՝ կամք ձեր է զի ոք կամիք
« կաթուղիկոս ընտրեք, այլ եթէ ինձ լսէք Ջուղայեցի Մով-
« սէս վարդապետին կարգեցէք, զի ստոյգ և հաւաստեաւ
« գիտեմ, որ կրկին՝ երեքկին՝ և բազմակրկին ճոխացուցանէ
« զԱթոռս և զԱզգս, և որինչ ի նմանէ պակասութիւն լինի

« Ազգին և սուրբ Աթոռոյս ես լինիմ պարտական, և որինչ
« շահ և օգուտ ծնանի, դուք վայելեսջիք բարութեամբ:
« Ողջոյն և խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեսեան ընդ
« ամէն, կացէք բարեաւ և մնացէք խաղաղութեամբ,
« և վասն մեր աղօթս արարէք և յիշեցէք ի քրիստոս, և
« դուք յիշողքդ յիշեալ լինիք առ Տէր Յիսուս Քրիստոս և
« ի յոյսն բնաւից, ամէն ,, :

Ծողով նորա զբազում աղգաօգուտ գործոց յիշատակս, փոխեցաւ յաշխարհէ աստի ի 22 Նոյեմբերի 1714 ամի (1163) :

Ի պատմութեանն սոյն Աղէքսանդր կաթուղիկոսի, Հ. Միքայէլ Չամչեան գրէ թէ « Սա ինքն Աղէքսանդր յառաջ քան
« զնստիլ իւր յաթոռ Հայրապետութեան՝ ունէր ընդդիմնե-
« թիւն առ քաղկեդոնականսն առ Աթոռն Հռոմայ . . . Այլ
« յորժամ նստաւ Աղէքսանդր յաթոռ կաթուղիկոսութեան
« ի բաց եթող զառաջին ընդդիմութիւն իւր, և կալաւ սէր
« մեծ ընդ Առաքելական գահին Հռոմայ, և եղոյց պատիւ
« լատին կրօնաւորաց, որք հանդիպէցան Էջմիածին, և
« զկնի սակաւուց՝ յամի 1709 ուխտ ի փետրվարի 25 յղե-
« ղեաց գիր սիրոյ և յարգութեան առ Սրբազան պապն Ղէ-
« մս մեծաւանունս որդի ի պիմաց իւրոց և ի պիմաց համօրէն
« վարդապետաց և բովանդակ հօտին իւրոյ, յորում ընդու-
« նելով զՀռոմայ Հայրապետն լինել փոխանորդ Քրիստոսի
« և յաջորդ Պետրոսի վիմի անուանէ զնա երիցս երջանիկ ա-
« ռաքելական Հայրապետ, և Պետական գլուխ, գերիշխանա-
« կան մեծութիւն, և գերագոյն նախապահութիւն Հայր հա-
« մարակաց քրիստոնէից և անչիջանալի ջահ կաթուղիկէ և
« առաքելական եկեղեցւոյ : Եւ առաջի եղեալ զսէր իւր և
« զհնազանդութեան առ Սրբազան պապն Հռոմայ, խնդրէ՝ զի ըստ
« հայրականաւ գթոյն արժանի արասցէ առաքել զփոխադարձ
« պատասխանի յԱթոռն սրբոյ Էջմիածնի, և մեք ասէ՝ ըն-
« կալցուք զթուղթս ձեր իբրև զԱստուածատուր պատգամս
« Մովսիսի ,, : (Չամչեան պատմ. Հայ . հատ գ . էջ 749) :

Նարեքաղաքաւոր գտի զօրինակ յիշեալ կոնդակին Յակէք-

առնդր կաթուղիկոսէ գրեալ առ Եղեմէս պապ, զոր ընդ այսմ կցել հարկաւոր համարեցի, զի գիտասցէ Աղգն Թէ պատմութիւնն չինեալ ի՛ Հ, Միքայէլէ՝ ի բազում դէպս է յարմարեալ ըստ իւրոյ հաճոյից, որ միշտ գուն գործէ զեկեղեցին Հայոց արկանել ընդ լծով հրամանի աթոռոյն Հռովմայ, քանզի կոնդակն գրեալ յԱղէքսանդրէ առ Եղեմէս պապ, է բողոք զչարախառնութեանց փաթերայից, և ի յիշեալ կոնդակին չիք յիշատակութիւն ծանր ծանր պատուանուանութեան, զոր ըստ քմոց շարակարգէ Հ, Միքայէլ ի պատմութեանն իւրում: Ահաւասիկ այս է պատճէն կոնդակին : ,, Ի գերապատիւ և ի գերասկզբնական պատճառէ Աստուծոյ հօրէ ի գերակատար և ի գերաճնուցիչ նորին բնութեանէ խակակից՝ և անժամանակ միածին բանէ, ի գերազանց և ի գերալուսական բնութեանէ նորուն էութենէն՝ ինքնազօր և ամենազօր Հոգւոյն Ճշմարտէ, ընտրեալ և պատկեալ՝ բարգաւաճեալ և փառաւորեալ, և նոյն ամենասուրբ երրորդութեամբն պարսպեալ և նորին հնարհօքն ուղղացեալ՝ և պերճացեալ հոգևոր և մարմնաւոր իշխանութեամբ՝ զարգացեալ և շքեղացեալ յԱստուածպետական փառաց հաղորդեալ: Տիրելով ծովու և ցամաքի, քաղաքաց և աւանաց՝ հեռաւորաց կղզեաց, և մերձաւորաց դաւառաց: Յոյնապատիւ և գերահռչակ պատուով մեծարեալ՝ պետականին ժամանեցելոյ զահին Հռովմայ Տեառնէ Գլէմէնտոսի երիցս երջանիկ պապի :

Աղջոյն սիրոյ և սրբութեան մատուցանեմք վսեմախոհ մեծութեանդ, և որոց ընդ հովանեաւ քոյոց Թեւոց պատուեկեղեցականաց միանգամայն և աշխարհականաց : Մեք նուաստ ծառայք Քրիստոսի Տէր Աղէքսանդր ամենայն Հայոց կաթուղիկոս ի գահս լուսապարգև Աստուածաէջ Աթոռոյս Էջմիածնի, և որք ընդ մեզ ժառանգաւորք սրբութեան ոտից՝ եպիսկոպոսք՝ քահանայք՝ վարդապետք և ամենայն կղերք եկեղեցեաց : Եւ ընդ Աստուածազարգև և Քրիստոսանուէր ժողովոյս, ծանուցանեմք յայտարարութեան առնեմք վսեմաւոր Տէրութեան քոյ : Զի Թէպէտ և մեք վերջացեալ գտանեմք,

ներ այսմ ամենակի ի մարմնաւոր իշխանութենէ՝ սակայն ըստ ձերն տեսանելով և լսելով քաջատոհմութեան գերապատուութեան, զսաստիկ բերկրիմք ի սիրտ և ի հոգի, և զհնութեան անքաւ բիւրօք, և օրհնութեան մատուցանեմք ամենաթագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որովք թագաւորք թագաւորին և հզօրք գրեն զարդարութեան՝ ըստ իմաստնոյն բանի : Եւ խնդրեմք զինոյն յամերամ ամենակօք, և պարագայից ամօք խաղաղութեամբ, և անդրդուելի հաստատուն պահեսցէ մինչ ի կատար, և ի սպառումն յաւիտենից այսորիկ ի վառս և ի գովեստ Աստուածութեան իւրոյ, յօրինութիւն և ի պարծանս ամենայն քրիստոնէից ամէն : Եւ արդ՝ արտաքրեմք և զայս առաջի գերիշխանական մեծութեան ձերոյ, զի ի քնուստ, անդուստ ի սկզբանէ՝ այս է սովորութիւն նախապահութեան գերագունութեանդ, վարպապետս, և քարոզս առաքել ի չորեքծագեան տիեզերս, որպէս և յոլովս տեսաք, և տեսանեմք աչօք մերովք, իբր զի քարոզեսցեն զՔրիստոս Աստուած հաւատալ, և խոստովանել, և նուաստ գտանել զփրկութիւն հոգւոց, և հասանիլ Թողութեան մեղաց ըստ Սրբազան Առաքելոյն Պօղոսի որ ասէ ,, սրտիւ հաւատալ յարդարութիւն, և բերանով խոստովանել զփրկութիւն ,, : Քանզի ոչ ուստեք հաստատեալ աւանդութիւնս այս, եթէ ոչ ինոյն ամենասեռանէ Քրիստոսի Աստուծոյ : Որ և յետ փրկագործ տնօրէնութեանն, և փառաւոր յարութեանն, պատուիրեաց աշակերտաց իւրոց ասելով ,, երթայք յաշխարհս ամենայն, և քարոզեցէք, որ հաւատայ և մկրտի կեցցէ, և որ ոչ հաւատայ դատապարտեսցի ,, : Զոր և այսու եղեալ պայմանաւս՝ կրկին նշանս կընքեալ տեսանեմք ի բարերար փրկչէն մերմէ, հաւատ և մկրտութիւն, ընդ որս և կայ պարտնակեալ ամենայն աւանդութիւնք եկեղեցւոյ, որովք յայտնի ծանուցանի բոլոր խորհրդածութիւնք քրիստոնէից : Քանզի զինչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին ըստ առաքելոյ : Ըստ որում կանոնի պարտիմք հաւատալ ի միում ամենազօր և ամենակարող բը-

նուիրելն Աստուածուհեան երիս անձինս կատարեալ, և յատկացեալ՝ Հայր և Որդի և սուրբ Հոգի, Հայր անծին և ոչ յումեքէ, և Որդին ծնունդ Հայրական, որպէս բան ի մտաց, և սուրբ Հոգին բղխումն ի Հօրէ անքննելի և անխմանալի, որում ոչ մեծուհիւն և ոչ նուաստուհիւն ոչ բարձրուհիւն և ոչ խորուհիւն, ոչ ունելով ստուերք աստիճանի եւ էջս առաւելուհեան և նուազուհեան, այլ զոյգ և համապատիւ, համակամ, համիշխան, համակար, համագործ, և համազօր, անհատ, և անորոշ անբաժանելի, վերացեալ բարձրացեալ ժամանակաց, և յաւիտենից, յանվախճան և յանսահման թագաւորուհեան օրհնեալ յաւիտեանս ամէն:

Հաւատամք և ընդ նմին զմինն երից անձնաւորուհեանց, զբանն և զՈրդին ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս անախտաբար, և անժամանակապէս, ոչ յետոյ և ոչ կրտսեր, այլ յաւիտենական Հօրէ՝ յաւիտենական Որդի, անժամանակ ծնողէ՝ անժամանակ ծնունդ, հանդուներատիպ և հաւասար ամենայնիւ, քանզի ոչ էր Հայր երբեմն որ ոչ էր Որդի, այլ որպէս միշտ Հայրն Հայր և Որդին Որդի, և նոյն ի վախճան յաւիտեանց ծնեալ մարմնով ի սուրբ կուսէն Մարիամայ, Աստուածն կատարեալ՝ նոյն ինքն և մարդ կատարեալ Հոգւով, և մտօք, և մարմնով, անորոշելի մարդկութեամբ, և անթերի Աստուածուհեամբ, եկն մարդ յառաջ ի կնոջէ և եմուտ ընդ օրինաց՝ ըստ Առաքելոյ. յանձն էառ և զամենայն կիրս մարդկային որ ինչ բնութեանն էր բաց ի մեղաց, ոչ ծառայելով իբրև զմեզ կրիցն բնականաց, այլ կիրքն բնութեանն ծառայէին նմա իբրև Աստուծոյ, յաղագս որոյ՝ և հաղորդիւր կամաւորացն, և ակամայքն խոյս տուեալ փախչէին ի նմանէ զարհուրելով իբրև յԱստուծոյ: Եւ յետ ամաց երեսնից գայ ի յորդանան առ Յովհաննէ, և վկայէ յԱստուծոյ Հօրէ, որդի սիրելի կուսածին մարմնովն, և սուրբ Հոգին աղաւնակերպ իջանէ յայնեալ զփառս Էակիցն: Որով և վարի յանապատ փորձիլ ի սատանայէ, և յաղթէ նմա մարմնովն աղամայնին: Եւ նոյն հետայն ժողովէ զաշա-

կերտան առնէ նշանս և զօրութիւնս բազումս հրաշս և զարմանալիս յոլովս: Ուստի և ի վախճանի կամաւորութեամբ գայ ի չարչարանս և յանձն առնու զմահ խաչի, և մարդկապէս մեռանի ի վերայնորա, յառնէ փառօք յաւուր երրորդի, և երևի աշակերտաց պէսպէս արուեստիւք յաւուրս քառասնեն, հաղորդելով ընդ հացիւ: Եւ յետ այնորիկ յանդիման աշակերտացն ինքնիշխան զօրութեամբ համբառնի յերկինս, նովին մարմնովն որով ծնաւն՝ խաչեցաւ, մեռաւ և յարեաւ և նստաւ ընդ աջմէ Հօր՝ ըստ կանխասացութեան Դաւթայ, որով և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս, որում Հաւատացեալ սպասեմք և ակնուրկիմք յարութեան և դատաստանի և հատուցման գործոց: Ընդ նմին և խոստովանիմք զՄարիամ մայրն Յիսուսի՝ Աստուածածնին, որպէս և ծնեալն՝ Աստուած, և զնոյն ի հաւէ ելեալ, ըստ Դրիգորի Աստուածաբանին որ առէ յԱր որս գիրսն. եթէ ով զՄարիամ Աստուածածին ոչ իմանայցէ՝ հեռի է յԱստուածութենէն, և եթէ ոք խաչեցելոյն երկիր ոչ պագանէ՝ նզովեալ եղիցի և կարգեցի ընդ Աստուածասպանս: Եւ վասն այսր այսքան ի կարճոյ: Հաւատամք և ի Հոգին սուրբ Աստուած կատարեալ առանց առնելոյ, բղխումն միջնորհաւոր առ ի Հօրէ, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս, և յԱռաքեալսն, և էջ յորդանան գետ և ի սուրբ վերնատունն: Հոգի պետութեան Հոգի աղատութեան Հոգի բերանոյ Աստուծոյ նորին կենութեան Հօր և Որդւոյ, ոչ արարած ոչ ծառայ, ոչ հրամանառու, այլ հրամանատու, քանզի մի գործ է Հօր և Որդւոյն և Հոգւոյն սրբոյ, որպէս ասաց վրկիչն աշխարհաց Թէ ես և Հայր, և Հոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, ուսանէ՝ և ոչ բաժանի, բղխէ և ոչ սպառի, և ինքն է Աստուած ընկերակից երրապէս, ամենայն յամենայնի: Հաւատամք և զհամաշխարհական կաթուղիկէ եկեղեցի սուրբ, զԹողութիւն մեղաց հաստատեալ ի վերայ հիման Առաքելոց և Մարգարէից և վարդապետաց, ըստ Պօղոսի Թէ՝ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ այս են, նախ՝ զԱռաքեալս, երկրորդ զՄարգարէս երրորդ զվարդապետս, և զի լուսաւոր բանիւք սոցա՝ հաստատեալ

ՀՀայ սուրբ եկեղեցի, անդրդուելի և աննսասանելի յաւիտեանս յաւիտենից: Եւ զի կառուցեալ է սա ՚ի վէմն կենդանո-
Թեան, որ է ինքն Քրիստոս Աստուած ըստ Սողոմոնի թէ, խմաստութիւն շինեաց իւր տուն և կանգնեաց սիւնս եօթն՝ ի
սուրբ եկեղեցի՝ և խորհուրդք եօթն աւանդեալ ՚ի նմա, նախ Մկրտութիւնն, երկրորդ Դրոշմն, երրորդ ապաշխարութիւնն,
չորրորդ հաղորդութիւնն, հինգերորդ կարգ քահանայութեանն, վեցերորդ Պսակն, եօթներորդ օծումն վերջինն,
զոր ունիմք առանց յաւելուածոյ և պակասութեան:

Վճանդի Մկրտութիւնն է սկիզբն և ներածութիւն առ Աստուածոյ ընտանութիւն և երկնային ժառանգութիւն, թարց
որոյ ոչ ոք մտանէ յարքայութիւնն երկնից՝ ըստ Տ՚րոնական վճռի: Եւ դրոշմն որ է կնիք լուսաւոր Մկրտութեան: Եւ դրոշմն Քրիստոսական հաւատոյ, և տարանջատ յանհաւատից, որ առնէ զմեզ քրիստոնեայս, և Քրիստոսունդս, խաչանիշ կնքովն որով երեւիմք ահաւոր սատանայի և հրեշտակաց նորա: Ապաշխարութիւնն հանդերձ խոստովանութեամբ, տայ մեզ յոյս թողութեան, որով զտանեմք փրկութիւն Հոգւոց, և արձակումն ՚ի կապանաց մեղաց ըստ Տեառն բանի թէ ,, զոր արձակիցէք երկրի՝ եղիցի արձակեալ երկինս ,, և դարձեալ թէ ,, ուժեք թողուցուք զմեզս՝ թողեալ լինի նոցա ,, , և դարձեալ ,, ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւնն երկնից ,, , նաև հաղորդութիւն Մարմնոյ և Արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, առնէ զմեզ հաղորդս Աստուածութեանն իւրոյ, ըստ ասելոյն թէ ,, որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զԱրիւն իմ, նա յիս բնակեսցի և ես ՚ի նմա ,, , և դարձեալ ,, որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վասն Հօր ,, : Եւ ,, որ ուտէն զիս և նա կեցցէ վասն իմ ,, . և մեք այսու յուսով Ճշմարիտ զմարմին և զԱրիւն Որդւոյն Աստուածոյ:

Այլ և զկարգ քահանայութեան ընկալեալ ՚ի Քրիստոսէ և Առաքելոց՝ ունիմք ամենայն Ճշմարտութիւն, զի ձեռն եդ ՚ի վերայ զլխոց նոցա, և օրհնեաց զնոսա, որով եղեն կատարեալք և կատարելագործք, ըստ սրբոյն Դիոնիսեայ պարտիմք նախ

մաքրիլ, լուսաւորիլ և լուսաւորել, կատարելագործիլ՝ և կատարելագործել որպէս և աւանդեցաւ Առաքելոցն սրբոց, զոր ունիմք անշեղապէս, և անսայթաք ընթանամք զշաւիղս նոցա, նախ՝ առնուլ զձեռնադրութիւն և ապա տալ այլոց, յառաջ կատարելագործիլ, և ապա կատարելագործել, որպէս և է իսկ Ճշմարիտ և հաստատուն: Եւ Պսակն խորհուրդ մեծ և պանծալի ըստ Պօղոսի ,, խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ՚ի Քրիստոս և ՚ի եկեղեցի ,, , և թէ ,, պատուական է ամուսնութիւն ,, , և Տէրն ,, զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ ,, : Քանզի սա է սրբութիւն զուգաւորութեան, առանց որոյ՝ շուն կոչի որ զուգաւորի: Եւ Օծումն վերջին է որ զօրացուցանէ զմեզ մնանել ՚ի հանդէս ընդդէմ աշխարհակալին խաւարի, ըմբշամարտել ընդդէմ գառոզին, և առնուլ զպսակն յաղթանակի, աւանդեալ մեզ ՚ի սրբոց Առաքելոցն, ըստ Աւետարանական պատմութեան, թէ օծանէին զբազումս հիւանդս: Ըստ նոյն իւղ օրհնութեան կատարի յեկեղեցիս Հայաստանեայց յամենայն ամի, և օծանին ամենայն հիւանդապատալք հոգւով և մարմնով, որով և ունիմք յոյս առողջութեան հոգւոյ և մարմնոյ, և փարատումն ամենայն ախտից: Են և այլ յոգունք աւանդութիւնք մնանաւորք կարգեալք եկեղեցիս մեր, եթէ ՚ի տօնս տէրունականս, և ՚ի սուրբսն Աստուածոյ, և եթէ ՚ի պահս և յաղօթս, և ՚ի տրքնութիւնս գիշերային հսկման, և եթէ յարարողութիւնս ժամատեղաց և յամենայն կարգաւորութիւնս, թողաք զի մի լիցի ձանձրութիւն ընթերցողաց, և մանաւանդ գրեալքս ոչ ըստ բոլորին և ըստ պատշաճին գրեցաք, այլ ըստ մասին սակաւագիծ քանիք, թողլով ապաստան ձեր գերակատար իմաստութեանն, չափել մասամբ զբոլորն:

Օգնր և ՚ի յայս հաւատացեալ մկրտիմք, և ակնունիմք Հոգւոյն կենդանութեան և մերոյին փրկութեան՝ ըստ անսուտ խոստման Տեառն, թէ ,, որ հաւատայ և մկրտի՝ կեցցէ ,, : Դարձեալ ՚ի կարդ անդր ՚ի վեր երանելով ասեմք թէ, որով ունիմք մեք հաւատ և մկրտութիւն, քարոզքն այնքիկ նախասացեալք ոչ պարտին աշխատ լինիլ առ մեզ այլ առա-

ել առ այնոսիկ որք ոչ կարդան զանուն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, և ոչ խոստովանին զնա Աստուած, և ոչ
զանօրէնութիւն նորա ամենայն, և ոչ ուրանին զքրիստոսական
կնիքն յանձինս լուրանց, և ոչ ձանաչէն զխորհուրդս եկե-
ղեցւոյ, և ոչ ընդունին զԱստուածաշունչ գիրս, հին և նոր
կտակարանս, և ոչ գիտեն զանուն Առաքելոց, և Մարգարէից,
և վարդապետաց, և ծիծաղին ի վերայ անհաս խորհրդոց
քրիստոնէիցս, և զառանցանս վարկանեն զպաշտել զաստա-
ծութիւնս քրիստոնէից որ յամենասուրբ երորրորդութիւնն, և
ի տնօրէնութիւնն միածնի որդւոյն, ի սուրբ կոյս Մարիամ
Աստուածածնէն և ի պարծանս քրիստոնէից, ի կենսակիր և
ամենազօր սուրբ խաչն, և զպատկերս տէրունականս և ամե-
նայն սրբոց՝ կուռս համարին, աւաղելով զքրիստոնեայս իբրև
զմոլորեալս: Նոքա զայս ամենայն տեսանելով և լսելով ոչ-
ինչ համարին, և ոչ ցաւ էնոցա, այլ անփոյթ առնելով ըզ-
նոցանէ՝ զմեօք շրջապատեալ պաշարեն արկանելով ի մէջ
քրիստոնէիցս աղմուկ խռովութեան, և փոխանակ շինութեան
և հաստատութեան արկանեն յոլով գայթակղութիւնս, ա-
նելով միշտ յականջս անկատարից և անխորհրդածից՝ թէ
ոչ է պատարագ ձեր պատարագ, և ոչ Մկրտութիւնն մկըր-
տութիւն. նոյնպէս խոստովանութիւնն և ապաշխարութիւնն,
և այլ խորհուրդք, յորոց բանից նեցուկ առեալ թուլա-
մորթքն, և յողդողդքն, և անհաստատքն, ելանեն ի հաւատոց.
և այլք բազումք առնեն անկարգութիւնք ընդդէմ կանոնաց
եկաղան չարիս, զոր ոչ կարեմք արկանել ընդ գրով, ասելով
թէ որովհետև սուտ է կրօնք քրիստոնէից որպէս և նոքայն
ասեն, արասցուք զինչ հաճեացին սիրտք մեր որով հայոյի
անուանն Աստուծոյ և վարդապետութիւնն ի մէջ հեթանոսաց.
զայս պատուլ նոցա արդեանցն: Եւ զի յատակապէս ասացուք,
մեք որ բնակեալ եմք ի մէջ այսպիսի ազգաց, որ ոչ հաւա-
տան զքրիստոս Աստուած և ոչ են պաշտօնեայք քրիստոսի,
ոչինչ իւիք զզուշացուցանեն զմեզ կամ տատապէտ գտանեն,
այլ մանաւանդ կան ընդ մեզ խաղաղութեամբ և սիրով, յա-
ճախ ևս զի յոլով անգամ ընդդիմաբանեմք ընդ նոսա, և վի-

ճակ յաղագս Աստուածութեան քրիստոսի և օրինաց նորա,
և լինիմք չատագով քրիստոնէութեան կրօնից, ոչինչ ըմ-
բռստանան ստնանել զմեզ, այլ միամտութեամբ ակն ածեն
զմեօք:

Այլ և Թագաւորին մեր որոյ իշխանութեամբն մակաղիմք
մեք, տայէ ամենաթագաւորն Աստուած հաստատութիւն թա-
գաւորութեանն իւրոյ. և մեք աղօթս ձեօք մատուցանեմք
ըստ խրատու մեծին Պօղոսի զի այսպէս հանդարտութեամբ
վարիմք զկեանս մեր որպէս և ոչ յաւուրս թագաւորաց մե-
րոց մինչ իշխանութիւնն մեր էր, և սա այլազգ է և ոչ պաշտօ-
նեայ քրիստոնէութեան խորհրդոյս, այսպիսի գթով գթայ և
նախախնամեալ պահպանէ զմեզ թարց զզուանաց: Իսկ ա-
մեզ եկեալ պատրիքն ոչ այսպէս, այլ ներհակաբար վարին
ընդ մեզ, խոչընդոտին առնելով, և յորժամ ներհակմամբ ան-
կարգ արարմանց նոցին՝ զուր և ունայն բանիւք ամբաստան լի-
նին առ մեծութիւն ձեր, և անփորձ գոլով նոցին բանից՝
հաւատայք, քանզի ի մէջ այլասեռիցն, զհայք հերձուած-
ող և հերիտիկոս անուանեն: Այլ ըստ վերոյ գրեալ դատա-
նութեանցն՝ եթէ մեծ ապատութիւն քոյ զհայս հերիտիկոս
դատապարտես՝ եղիցի կամք վեհափառութեանդ օրհնեալ
խակ թէ ոչ, խնդրեմք ի հասարակաց հօրէդ որ այնպիսեացն
առաստ սպառնալեաց գրես որ դատարկն յայնպիսի սխալութի-
նէ, զի և Սրբազան անուան Տեառնդ ոչ է վայելուչ այնպիսի
իրակութիւն: Եթէ վասն յուսոյն և սիրոյն քրիստոսի այդ
չնորհ մեզ առնիցես ըստ հայրականաւմ զթոյդ, նոցա թուղթն
առաքես ի ձեռս մեր, և ընկալեալ մեր իբր զԱստուածա-
տուր պատգամն Մովսիսի, ցուցցուք պատրոցն Թերևս սա-
կաւ մի կասեսցին յատելութենէ քրիստոնէից: Եւ Տէրդ մեր
ընկալցիս վարձս ի վարձատուէն բոլորեցուցց: Դա և չնոր-
հել մաղթեմք եկեղեցին Հայոց որ ի վէնէտիկ, քանզի ողոր-
մելի ազգն հայոց որք անգլ՝ են առանց հաղորդութեան և
ամենայն խորհրդոց:

Եւ ի վախճանի բանից, և զայս ևս գիտասցէք մեծապա-
տիւ պիտութիւնդ, յերկրէն Հնդկաց և յերկրէն Օսմանցւոց

և յՕղբէդաց Դիոսպանք յոլովք դոն յաշխարհս մեր, ոչ միու՛մ յուժեքէ կրեմք ինաս և նեղուԹիւն, բայց յամենայն եկելոց ֆռանկաց դեսպանաց նեղուԹիւնս և ինաս յոլովս կրեմք, յողոք անկեալ խնդրեմք և զայս, ոչ Թողացուցանել լինել այնպէս։ Պետական գլուխդ և հասարակաց քրիստոնէից հայրդ կեցցես և մնասցիս ողջ և առողջ ՚ի փառս մեծագոյն Աստուծոյ և ՚ի պարծանս եկեղեցւոյ ամէն։

Վերջացաւ ԸՀՃԸ Թուին փետրվարի ամսոյ ԺԵ, ՚ի սուրբ Ներսէսիանի՛ — ,, ։

Ետ գրելոյ Հ. Միքայէլը ,, այս նամակ յորժամ եհաս ՚ի ,, Հռոմ, անդ գտաւ Յակոբ վիլոյէ Լատին կրօնաւոր ՚ի կարգէ ,, Ցեհանց, և զի սա ըստ վկայելոյ իւրոյ զամս քան և հինգ ,, շրջեալ էր յաշխարհին Հայոց և Պարսից և ունէր փոքր մի ,, տեղեկութիւն հայկական լեզուի, Թարգմանեաց ՚ի Լատին ,, զԹուղթ կաթուղիկոսին՝ Թէպէտ և ոչ հարազատ իմաց- ,, ուածով ,, (4)։

Գիտել արժան է զի նոյն Յակոբ Լատին կրօնաւոր ՚ի կարգէ Ցեհանց էր ՚ի Ջուղայ մինչ յամի 1688 ծագեցաւ խռովութիւն մեծ ընդ ամէն Լուսաւորչական Հայոց և պապական նոյ, և Ստեփաննոս առաջնորդ Ջուղայու բողոքեալ Շահ-սէֆեանայ արքայի (5) ընկալաւ զհրաման, և արտաքսեաց ՚ի Ջուղայոյ զԼատին կրօնաւորան, ընդ որս էր և նոյն ինքն Յակոբ, որ անչափ մախացեալ ընդ Ստեփաննոս և ընդ Աղէքսանդր եպիսկոպոսունս Ջուղայու, որոց ոչ կարէին երևեցուցանել առնել զնաս ՚ի պառնութիւնէ սրտին չնեաց ընդ փոքրիկ տէտրակ (6) յորում առնէ յիշատակութիւն յաջորդութեան կաթուղիկոսաց Հայոց, մինչև ցԱղէքսանդր, և ՚ի նմա օրինակելով զկոնդակն նորա՝ առնէ զդիտողութիւն իւր առ խնամատից այնր, այլ Թէ որչափ ատելութեան կրնաք և չարայոյզ բանիւք՝ ձանձրութիւն լինի ընԹերցողին յիշատակութիւն առնել ՚ի կարգի բանից, վասնորոյ հանառօտեաւ յիշեմ զբանս նորա յաղագս հետամտութեան Աղէքսանդր Կաթուղիկոսի ՚ի ցրել զաղգեցութիւնս նոյն Լատին կրօնաւորաց ՚ի ժողովրդենէ Հայոց, որոյ աղագաւ և ինքն լեալ էր

հալածական ։ ,, Եթուր փակել վանքն Քափու չինաց որ ՚ի- ,, Թարվէզ քաղաքի, զի մի բարձրասցի սուրբ խաչն Քրիս- ,, տոսի ՚ի մէջ անհաւատից, և զի մի կրԹիցին մանկունք տա- ,, ռապետ և աղքատ ժողովրդեանն այնմիկ ։ Որպէս ՚ի սկզբ- ,, բան ամի կաթուղիկոսութեանդ յորժամ հասեր ՚ի Սպահա- ,, նայ Թարվէզ և երկրորդութեամ աւուր երեկոյեան ժամուն ՚ի- ,, մէջ եկեղեցւոյ սկսար հայհոյաբեր քարոզել ընդդէմ կաթու- ,, ղիկէ եկեղեցւոյն Քրիստոսի, և դարձուցանելոյ բանդ առ- ,, ժողովուրդս վասն նոյն պատրի քափու չինացի, Թէ լուեալ ,, եմ զի անմեղ գտանիս ձեր տանիք և տայք ՚ի ձերձել զքա- ,, տինս շանց (՚ի մանկունս ձեր տայք ՚ի կրԹութիւն պատ- ,, րեացն) սպառնալով քո մահ սրօք պարսկաց Եթէ այլ ևս ,, առնիցեն ։ ։ ։ որպէս և արարեր նոյն ամի զի գրեցեր ,, ՚ի նոյն Թիվն հայոց ԸՀՃՂ, կամ ԸՀՃԵ ՚ի պատանդնու- ,, պօլիս առ մեծ վազիրն Օսմանցւոց Թէ ես հայոց ազգին ,, ֆեթվայ առուղն եմ և զոքա իմ ժողովրդք ՀպատակեԼել ,, ոչ կամին ինձ, և հլեալ են ՚ի կրօնից մերոց, ահա եհաս ,, ֆեթվայ զի պատժիցէք այս անուն և այս անուն Թուով իբ- ,, րև 175 կամ 200 անձինս որք ֆռանգ են հլեալ հայքէ, որ ,, և եղև կատարումն ֆեթվային, քանզի սուրն հերովբէէի ,, կոտորեաց բազում մանկունս եկեղեցւոյ, և ոմանս եհատն ,, չաքդրայ, զի ՚ի տանջանաց մեծագին նեղուԹեամբ ։ ,, Թող զայլ բազում և հազարաց անձինս որք փախստա- ,, կանք եղեն հալածանաց և մնացին զուրկ ՚ի տանէ և ՚ի հայ- ,, րինեաց ։ Այլ և կրկին սկսար աղմկել և ՚ի հիմանց շրջել ,, տունս հայոց եԹէ Թարվէզ և ՚ի Շամախի, եԹէ ՚ի գանձայ ,, և ՚ի Թիֆլիզ, և այլ գաւառս և քաղաքս որոյ ականատես ,, ես ինքնին իսկ եղէ բազմաց ։ ։ ։ որ պեռևս եմ ՚ի պատ- ,, ճառս նոյն հալածանաց, շրջելոյ պանդուխտ և օտար երկ- ,, րի ։ ։ ։ ,, ։ Հայր Միքայէլ ՚ի պատմութեանն Հայոց ոչ ,, առնէ յիշատակութիւն այնպիսի յաղագս Աղէքսանդրի, ,, ուստի յայտ է Թէ գրեալն սորա ընդհանէ՝ և Թշնամանաք, իբ- ,, րև պատճառ այնչափ վնասուց ցուցանել ինձ ։ Արդ ու- ,, շադրութեան արժանի է Թէ ամենայն որ զգայեալ իցէ այնչափ

« խոր ատելութեամբ ընդդէմ Աղէքսանդրի դիմել ուն-
« Թարքմանել զգրեալ կոնդակն նորա յաղագս ատելի առն-
« լոյ զնա առաջի Պապին, որոյ անհարազատ Թարքմանու-
« Թեան վկայէ և նոյն ինքն Հ. Միքայէլ, ասելով « Թարք-
« մանեաց ՚ի Լատին զԹուղթ կաթուղիկոսին Թէպէտ և ոչ
« հարազատ իմացուածով » :

---

(1). « Պատճառ գրոյս այսէ որ ՚է ի-ն 1148 և յունե-
« յունվրի 20, ես կոստանդէ որդէ Աղէքսանդր վրդապետս՝ ջո-
« ղոյս առաբէ Ալինէքինէ վանոյս և ես հնազանդեալ ծաղվըդեան,
« այնէպէն ի Հաղպատ եղեալ հրեշտակեցին և ի լինելոս և առբերի
« եղեալ հրեշտակեցի առաջնորդ եղոյ Գնձո ցայսօր որ է ի-ն ՌԾ
« (այսինքն հայոց) 1155, սեպտեմբերի 18, որ ըստ խնդրոյ Հայաս-
« պանեայց, և մանաւանդ հրամանաւն արհամն գնալս եղոյ ՚է առբե
« Ալեռս էկեծին ՚է կոստանդնուպոլիս » :

(2). « Այսօր որ ես (Աղէքսանդր) գնալս եղոյ ՚է առբե էկ-
« ծին, ձէկ հազար ձէկ հարիւր և սուրճան ըսման Աղէքսանդր ՚ես
« Մովսէս վրդապետէս անառամբ առնագներով (մօրհակօտ)
« յեայ (պրամագլոխ) պաքտ հայ վանոյս » :

(3). Ձեռագիրը յեղափոխական :

(4). Ձմէ. պտպ. հայ. հպտ. ՃՀ. էջ 750 :

(5). Տէս ՚է պատմութիւն Սուեդանոս առաջնորդի. ՃՀ. էջ 30 :

(6). Ձեռագիրը պեորակն այն գրանէ առիս, որոյ ՚է յեղափոխ-
քանէն գրէ այսպէս « յեղեալէ ՚է Համբակեալ ազգս հեր ՚է էլոյս ածօղ
« առբեն Տէր Յակոբ վրդապետն ՚է կարգեն Ցեռուսեանց, և ընդ նմին
« Սիմաւօղեայ Տէր Յարութիւն եպիսկոպոս պատճառ գպտգրութեան
« առբեն, և գպտգրութեամբ հոգեբարձս զառաջելգործ Տեր Խա-
« չատուր . . . »

Որով յայտնէ լինի թէ այն ձեռագիրս նորա մեծալ է ՚ի համալ :

Ը.

ՄՈՎՍԷՍ

Տէր Մովսէս բազմարդիւն եպիսկոպոս գլխի գնալոյ Տէր Աղէքսանդր Արք եպիսկոպոսի նախորդի իւրոյ՝ ընտրուԹեամբ ամենեցուն յամի 1706 նստաւ յաԹոռ առաջնորդուԹեան : ԱրժանաւորուԹեանց որոց զատագով վկայ լինի կըտաւին գրեալ ՚ի հոգելոյս Աղէքսանդր կաթուղիկոսէ, և գործքն իւր իսկ ապացոյց են այնմիկ : Սա գնէ և ընդարձակէ զայգի վանին խաղողոյ կոչեցեալ : Շինէ ՚ի յիշատակ ինքեան զոսկեայ ականակուռ խաչ լանջակիր, որոյ ՚ի չորս անկիւնս կան չորս խոշոր մարգարիտք, ՚ի վերայ շրջանց այնր շուրջանակի գրեալ կայ յիշատակ նորա այսպէս « սուրբ կենաց « փայտ և խաչիս ծառայ Մովսէս վարպապետ Ջուղայեցի, « ՚ի ԹուրքիսՏանՀ » (1713) : Ի յիշատակարանէ անտի յայտնի լինի Թէ ՚ի մէջ նոյն խաչի զոյ մասն ՚ի սուրբ խաչափայտէն կենաց, կան այլ և մասունք սրբոց : Գին նորա՝ արժէ յաւել քան զերկերիւր Թուման : Այլ պատուական խաչ անհետացեալ էր նախ քան զժամանելն սատ ներկայ առաջնորդ Սրբազան Թադէոս եպիսկոպոսի, այլ Աստուած հաճեցաւ զայն ՚ի ձեռն իմոյ նուաստուԹեան ՚ի յայտ ածել, զի մինչ յամենայն մայիսի 1857 ամի՝ կարդացեր էի և զետեղէի զզղեստան վանիս յիւրաքանչիւր պահարանի, խաչն այն ՚ի խորշ պահարանի ուրեք զգեստուցն կայր Թաքուցեալ, զոր ուրախուԹեամբ առեալ յայտնեցի Սրբազան Առաջնորդ Տեառն իմում, և նորա խնդացեալ յոյժ ընդ այն բազմաւորուԹիւն հանարեցաւ վանին Ամենափրկչի, զի յայտնեաց Աստուած զայն որ Թանգագին էր ըստ նիւԹական արժէիցն իւրոյ, և և առաւել Թանգագին էր ըստ սրբուԹեանցն զո-

տեղւոյց ՚ի նմին : Ը ինեաց նա և զԱռաջնորդարանն որ կայ այժմ ՚ի վանից : Եւ զախճապակիս շուրջանակի որմոյն սրբոյ սեղանոյն տաճարի վանին : Ի ժամանակի սորա եղև արձակումն Աղուանից յԱսպահան քաղաք . ուստի բազմապատիկ էին վիշտք և նեղութիւնք ՚ի նմին ժամանակի , այլ սորա քաջ հովուութեամբ կառավարելով զհօտն՝ վեհական համբերութեամբ տարաւ վշտաճոխ կոհակաց պատնութեանն այնմիկ ժամանակի : Յետ մահուանն Աղէքսանդր կաթուղիկոսի միաբանք սրբոյ Էջմիածնի հրաւիրեցին զնա հայկ" . 19 յամի 1715 խնդրագրութեամբ զի երթիցէ ՚ի սուրբ Էջմիածին կալնուլ զգահ կաթուղիկոսութեանն , այլ սա գրեաց նոցա զպատասխան « Թէ գրեալ էիք որ մեր կաթուղիկոսն դու ես , ոչ « միանգամ , այլ երկիցս և երիցս գրեալ էք , սակայն թէ « սիրելեաց նախամեծարել ՚ի պատիւ զսիրելին . ըստ այնմ « Թէ ՚ի պատիւ զմիմեանս ք ելանել՝ շնորհակալեմք ՚ի սիրե- « լեացդ մերոց , այսուհետև յիմն կողմանէ միամիտ լերուք , « և ոն անդր ՚ի քաց տալէք ՚ի մտաց ձերոց , զի այդ ոչ է մեր « գործ " : Եւ քարեյիշատակ գործովք կեցեալ յառաջնորդութեան զամս տասն և ինն ՚ի 1 մարտի 1725 (1174) կընքեաց զկեանս իւր խաղաղութեամբ , և պատուական մարմինն նորա ամփոփեցաւ ՚ի ՚ԱՀ սեմոյ հիւսիսային պրան հակ ղեցւոյ վանին , սուրբն արձանագրութեամբ՝

« Ողաչեմ զի մի վհատեսցես դիմելոյ առ քեզ զառաջնորդ « սրահի կենացդ յարկի՝ այլ յիշեա զիս յաղերսութեան քումմ « և մի ՚ի հատուցումն , զի առ չարս ես քարի , առ մեղաւորս « ես քահիչ , և առ մահացեալս ես կեանք : Տապանս է մովսէս « սէս անարժան կրօնաւորի , պատապարտեալ ծառայի և սոսկ « անուամբ Առաջնորդի , որ զանուն իմ դատէ զիս յաւուրն « վերջին , վայ ինձ , զի որ երբեմն էի վերնային՝ այժմ անդ- « նդային , վախճանեալ ՚ի կենցաղոյս հոգւոյ յայսմ տեղի , զոր « և խնդրեմ՝ եկեղեցւոյ յայսմ տեղի՝ անխիղճ կոխել ձերոյս՝ « զոր և իսկ եւմ արժանի , և դուք ընկալջիք զխնդիրս ձեր « քարի : Ի Թուին հազար հարիւր եօթանասուն և չորս , և

« յամենեսեան մարտի 1 " :

Ի ժամանակս առաջնորդութեան նորին միաբանք վանին էին Դաւիթ և Ստուածատուր Եպիսկոպոսունք , Բարսեղ՝ Ստեփաննոս Պետրոս՝ Զաքարիայ՝ Սիմէօն՝ Դաւիթ՝ Ղուկաս՝ Բարաղամ՝ Յարութիւն՝ Յովհաննէս՝ Ստեփաննոս՝ Ղուկաս՝ Գէորգ՝ Նիկողայոս՝ Ահարոն՝ Սիմէօն և Պարսամ վարդապետք :

Ամանք ՚ի յիշեալ վարդապետաց էին յայրի քահանայից՝ մեռեալ ՚ի կարգ վարդապետութեանն : Եւ ՚ի չորեքտասան ամսից ընդհաս ջուղայու եղեալ են վաթսուն և երկու քահանայք (1) :

Ի կոստանդնուպօլսոյ Յովհաննէս պատրիարգ իւրով հոգևորականօք և ականաւոր ժողովրդովք գրէ առ սոյն Մովսէս Առաջնորդ Թուղթ խնդրանաց (2) , յաղագս գիարևոր օգնականութեանն առնելոյ ՚ի նպաստ սրբոյ երուսաղէմի յայտնելով թէ գումար պարտուց նորա հասեալ է ցչորս հարիւր քսակս : Այսպէս սկզբնաւորի այն նամակ « Բարձրապատիւ պե- « րազանցութեան և քարեհամբաւ Հոխութեամբ մեծին իսկ « տեսողացն պարու հաւատարիմ տնտեսի Աստուածայինն « յարկի՝ որ առ նախնին ժողովրդոյ անուամբ և արքեամբ « համաքաւակէս անձին և ըստ արփիականն Հառապայթի պե- « րանշոյլն փայլման անհաւքչապէս զտէրունեանն բանի զեր- « երևական տեսութեամբ եղելոյդ կարկեհանի ՚ի լանջս վա- « կասին եկեղեցւոյ ստորինս երկրի : Խակ և բարեջանիկ և « փրիստոսասիրեալ հիղինակի և արքենական կարգաւորչի այժմ « մեծափարթամ և պարոնահաւաք Հայոցաքա- « ղաքիւ Ասպահանու Տիառնէ Մովսէսի արհիապերճ քա- « րոզչի և քաջ հռետորի երից երանելոյ հոգևկիր և Սըր- « բազան վարդապետի Աստուածաւերձէ Աջոյ՚ի հեռուստ « աստի իբր ՚ի մօտոյ ՚ի ծոցոյ կայսերանիստ և ՚ի մեծանուն « մայրաքաղաքէս Կոստանդինուպօլսոյ բոլոր արամեանց « գումարք մեծաւ խոնարհութեամբ և անձկութեամբ քաղ- « ձանաց օրտի ծառայական համբոյր նուիրեմք » (3) :

Յետ յայտնելոյ դպատճառս դիմման սպարտուցն սրբոյ Աթոռոյն երուսաղէմի յաղագս միաւորելոյ պատրիարգու-

թեան Նորին ընդ պատրիարգութեանն և · Պօլսոյ , և յաղագս տեղակալաց պատրիարգին յերուսաղէմ եղելոց՝ վասն քանի կնքուելն ստանալոյ ըստ հաճոյից դպարտս , և յետ ծանուցանելոյ զորոշեալն պատրիարգութիւնն երուսաղէմի ՚ի պատրիարգութենէն և · Պօլսոյ և զնորոգ ընարեալն Գրիգոր վարդապետի Առաջնորդի սուրբ կարապետ վանից պատրիարգ երուսաղէմի յաւելուն ասել ,, Յետ Սրբազան կաթուղիկոսին
,, մերոյ Հօրն հասարակաց զջոյդ վերհանձնութիւն ունիմք
,, մեզ հայր և խնամածու և հեղինակ առ բարեացն շաւիղ :
,, եւ եթէ քոյդ իսկ մեծութիւն անտես առնիցէ զայս ձայն
,, հառաչմանց , առ ոմն այնուհետև ունիմք առնիլ· վասն
,, որոյ ըստ այնմ կողմանց պարտ և հարկ իսկ վարկանիմք
,, թէ է այդպիսւոյդ կարողի լինել նպաստ և օժանդակակից
,, մերումն տկարութեան առ ՚ի կանգնել զյառաջագոյն աւերակն . . . . ,, :

---

(1) · Ձեռագիրը յետպատկերն :

(2) · Այն ընդհանուր ուներ ընդհանրութիւնս , այլ չունէր ընդհանուր , ոչինչ ՚ի պատմութենէն Հ · Մեսրոպեան , հատ · Ջ · գլխոյ ԺԶ · յայտնէ ընդհանուրն նոյն գործոյ , որ է 1716 : Եւ այն նոսին ՚ի վանսն Աղթամարայ :

(3) · Եթէ սա առաջնորդ ոչ այլոք կոչեալ ածկանօք վերպատուութեան գրեին զնմանէ , ոչ թէ ՚ի գրելոյ ոմանց Հայ կաթուղիկոսաց զյղյզով պատուանուանական ածկանս առ քահանայապետս Հռովմայ , մանրք հետևեցուցանել թէ կաթուղիկոսանդն այնուհետև ընդունելոյն զվերպատուութեան պատիւն :

Լ ·

ԴԱՒԻԹ ԵՐԿՐՈՐԴ

Էր Դաւիթ երկրորդ ձգնազգեաց Եպիսկոպոս , ըստ քաջամ թախանձանաց ժողովրդոց յամի 1725 (1174) կալնու զաթոռ առաջնորդութեանն զինի վախճանելոյ նախորդին իւրոյ : Ճիշտ պահպանող և նախանձաւորիր եր բարեկարգութեան եկեղեցւոյ և բարի վարուց հոգևորականաց : Զայնու ժամանակաւ ոմանք ՚ի քահանայից Ջուղայու սկիզբն արարեալ էին գործ ածել զքթախոտն (բռնօթի) , որ վասն գըբէ առ նոսա զծանր յանդիմանական կոնդակ , արգելու զգործածութիւն այնր , և պատիժ սահմանէ զրկել ՚ի կիսոյ հասից եկեղեցական արդեանց՝ որք գործածեն զքթախոտն : Ընդ այնմ հրամանի զայլ և այս հինգ յօդուածս բարեկարգութեան զոր ոչ աւելորդ համարիմ շարակարգել ՚ի կարգի պատմութեանս :

,, Ցախ՝ որ լուեալ եմ թէ միով ձաշու ողորմեայիւ զը-
,, սուրբ պատարագն մատուցանէք , և զերկուսն թողուք , որ
,, և այսու խափանէք զսահման և զկանոն սրբոց Հարցն ա-
,, նպէտ լոց , պատճառէք թէ ժողովուրդքն խնդրեն փուճ
,, թող արձակել զսուրբ պատարագն վասն մարմնաւոր գոր-
,, ծոց իւրեանց , դուք զձեր հրամանն որ Աստուածայինն է
,, թողուք , և զմարդկայինն կատարէք , քանզի պարտ է
,, զԱստուածայինն կատարել՝ և ոչ մարդկայինս : Արդ ճշ
,, գիտէք եթէ երից ողորմեայիցն խորհուրդ վերաբերեալ
,, առ սուրբ երրորդութիւնն : Վասնորոյ պարտիք այսուհե-
,, տև զերիս ողորմեայն լրացեալ ասել և ապա պատարագ
,, մատուցանել : Եթէ յանդգնիք և ծուլանայք ասելն՝ պա-
,, տիժս կրելոցիք լինիցին : Երկրորդ՝ լուեալ եմ թէ քահա-

„ Նայեք դիշերային առաջին ժամուն ոչ գտանիցի յիւրեանց
„ դասուն, կամ դիշերն բնաւ իսկ ժամ ոչ երթան, որ կարի
„ յոյժ գայթակղութիւն է ժողովրդեան: Ո՛վ սիրելիք դուք
„ ոչ ամաչէք յորժամ երթայք տեսանէք ժողովուրդքն
„ սուրբ եկեղեցւոյն առաջին ժամուն պատրաստք ի և դուք
„ անդ ոչ գոլով՝ որչափ անկարգութիւն է և գայթակղու-
„ թիւն նոցին, զի եթէ արհեստաւորքն ոչ գործելով՝ ոչ
„ վայելին, դուք զիմարդ զհոգևորն ոչ գործելով կամիք
„ վայելել: Ահա ասացի ձեզ որ այսուհետև պարտիք արիա-
„ նալ և զգուշանալ, և առաջին ժամուն նախքան զժողո-
„ վուրդ երթալն, և մի՛ սմանթ կրել առաջի Աստուծոյ և ժո-
„ ղովրդեան: Եւթէ որ ոք՝ի քահանայից լսայց որ ծուլա-
„ նայ՝ի խրատական բանէս, զնորա հասկն կատարելոց եմ և
„ պատժելոց, ահա ասացի ձեզ: Երրորդ յորժամ քահանայ
„ ոք կամի երթալ՝ի տուն ժողովրդական վասն պիր գրելոյ,
„ կամ կարգալոյ, կամ այլինչ պատճառաւոր իրաց, մի՛ մի-
„ այնակ երթիցէ, այլ երկուս ըստ տեառն բանի, թէ „ առա-
„ քեաց երկուս երկուս յաշակերտաց իւրոց, զի՛ի միոյն դան-
„ կարգութիւն գայթակղութիւն ծնանի, և՛ի յերկուցն
„ Ճշմարտութիւն: Ա՛յս պատուիրեցի ձեզ որ միայնակ՝ի
„ տուն ժողովրդեան ոչ երթիջիք, այլ երկու երկու. եթէ
„ լսայց, զի ոչ անսասջիք հրամանի իմոյ, դատիպատիժ վիճ-
„ նան առնելոց եմ և պատժելոց, ահա սիրով ասացի. Զոր-
„ ծորդ՝ լսեմք եթէ քահանայքդ միշտ վայրապար շրջիք՝ի-
„ շուկայս և՛ի հրապարակս, մանաւանդ այնքան յանդգնիք
„ որ՝ի մէջ շուկային և խանութաց մտանեսջիք և դատ ա-
„ տուութիւն առնիք, փոխանակ կարգալոյն և պատառնելոյն
„ և մանաւանդ զԱստուածային սուրբ պիրն ընթեռնլոյն,
„ անշահ՝ անկարգ՝ ձրի զրոյց տայք, ահա պարտիք միշտ
„ դուք յԱստուածային պարապել միշտ զսուրբ պիրս ըն-
„ թեռնլով, զժողովուրդն ուսուցանելով, և զանձն ձեր օ-
„ րինակ տալով ամենից, ահա այսուհետև մի՛ լեցի ձեզ որ
„ այլ՝ի մէջ մէկդանի և դուքանուն նստիջիք զրոյց տայք,
„ քայց միայն վասն առի և տրոյն վաճառելոյն ժամուն պարա-

„ պիսջիք, քանզի մեծ պատիժ կրելոց էք լինիջն „: Հինգ-
„ երորդ պատուիրեմ վասն չախչուր (1) զգեցու-
„ ղացն, քանզի պարտիք հարկաւորին հետևել, և մի՛ աւելոր-
„ դացն: Հարկաւոր ծածկոյթ անձին մեր՝ կտաւեղէն է, և
„ այլն ամենայն աւելորդ է, պարտիք զաւելորդն բառնալ, և
„ զհարկաւորն պահել: Ահա մեր և ձեր ոտից ծածկոյթն
„ կամ սեւն է՝ կամ գուլպայն ոչ թէ չախչուր, եթէ վասն
„ ծածկութեան՝ այդ բաւական է, ապա թէ վասն զարդուց
„ է, այդ ոչ վայել է կարգի մերում. ահա այսպէս եղի, զի
„ ով ոք որ չախչուր զգենու, ՚ի դասէն իւրմէ արգելեցիմ,
„ զի կանկնեսցի առ ժողովուրդս. որք և զդենուն զչախ-
„ չուր՝ նոցա պատիժն այս է. ահա սիրելիք, քանի մի բանս
„ ասացի և աղէկցի, զի զգուշանայք, և լիով կատարէք զը-
„ պատուէրս իմ, վասնորոյ այսուհետև ես անպատճառ գոլով
„ որոց ոչ ՀԱՄԱՁԱՆԵՂԱՑԱՆ և ոչ կատարողացն տրտմեցուցա-
„ նելոցիմ: Զօգուտն ձեր դուք գիտացիք „:

Ապա իւրով իսկական ձեռամբ յաւելու գրել,

„ Վարձեալ հաստարակ աւետիրիցունք, լուեալ եմք թէ
„ ըստ ձեր ծուլութեան և հեշտասէր գոլոյն մեկ անկար-
„ գութիւն այլ նոր մուծանէք եկեղեցին և գայթակղե-
„ ցուցանէք զժողովուրդն Աստուծոյ, դուք զրկիք և զժո-
„ ղովուրդն այլ զրկէք, ՚ի զհրաժարիմքն՝ զխոստովանիմն,
„ և զմեղայն ոչ ասէք լեալս, այլ պակաս և թերի թո-
„ ղուք, որով պարտական գտանիք սրբոց հարցն՝ որք կա-
„ նոնեալք են զայդ և ժողովրդեանն. ահա գրեցի որ այսու-
„ հետև պարտիք առանց թուլութեան և ծուլութեան՝ ըզ-
„ հրաժարիմն՝ զխոստովանիմն՝ հանդերձ մեղայն անպա-
„ կաս լսապէս ասել, զարև ազալիան և յամենայն աւուր թէ
„ պաս թէ ուտիս, թէ լուր օր, անպակաս ասել պարտիք:
„ Ահա գրեցի և զգուշացուցի, որ մի լեցի զայդ անկարգու-
„ թիւնդ այլ լսեմ՝ի ձէնջ, զի պատիժս մեծս կրելոցէք յի-
„ նէն, ահա գրեցի ձեզ „:

Վասն հրիս կեցեալ յառաջնորդութեան իւրում, ՚ի թո-
ւին հայոց 1177 (1728) ՚ի 18 դեկտեմբերի վախճանի, և

ջնի առքնթեր բարեյիշատակ նախորդին իւրոյ ՚ի հիւսիսային դրան սրբոյ տաճարին վանաց :

Այս է արձանագիր Տապանի նորին :

Պաղատիմ առ քեզ զԹաճ , մի Թողուր զիս ՚ի ձեռաց, որ միշտ ես ողորմած , խնայեա ՚ի քո սուրբ ճառայս, և զոր աստ եդեալ կամ մեղսամած , և մի մատներ աւազակաց , որք ՚ի գիշատելն են պատրաստ , և աղաչեմ զի մի փա- կեսցես դիմելոյս առ քեզ՝ զառագաստ սրահի կենացդ յար- կի՝ այլ յիշեա զիս յողորմութեան քում և մի յիրաւունս քո . յիշեա զիս ՚ի ներողութեան քում, և մի ՚ի հատու- ցումն , զի առ չարս ես բարի , առ մեղաւորս ես քաւիչ , և առ մահացեալս ես կեանք : Տապանս է Դաւիթ անարժան կրօնաւորի , դատապարտեալ ճառայի , և սուրբ անուամբ առաջնորդի , որ զանուն իմ պատէ զիս յաւուրն վերջի . վայ ինձ զի որ երբեմն էի վերնային և այժմ անդնդային , վախճանեալ ՚ի կենցաղոյս երեայ յայսմ տեղի , որը և խընդ- րեմ եկեղցոյդ յայսմ տեղի անխիղճ կոխել զերեսս , որ և իսկ եմ արժանի , և դուք ընկալիք զխնդիրս ձեր բարի , ամէն. Թուին 1177 և յամսեանն սեպտեմբերի 18 :

Տէր Յովհաննէս Խաչկեան ՚ի համառօտ պատմութեանն Առաջնորդաց Ջուղայու յաղագս սորա գրէ Թէ « սա հանդոյն « անուանակցին իւրոյ առաջնոյ առնէ զշինուածիւնս բազումս « և յախճապակեօք շքեղացուցանէ զորմն սուրբ տանն , ՚ի- « ստորոտէ յատակացն մինչև ցերիս կանգուններն որմոցն՝ և ՚ի- « վերայ յախճապակեացն յօրինէ զպատկերս չարչարանաց « սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ զկերկիսկս և զոտս « կեզօծս և զծաղիկս երփնափայլս , որովք յոյժ պայծառա- « ցեալ զարդարի եկեղեցին Աստուծոյ » : Յիշատակարանն գրեալ ՚ի մէջ սեմոյ հիւսիսային դրան սրբոյ տաճարին է յիշատակ յախճապակի շինուղին որ ունի զԹուականս Հայոց 1150, որ է քսան և չորս ամօք նախքան զառաջնորդութիւնն Գաւիթի երկրորդի : Իսկ Թէ Տէր Յովհաննէս Խաչկեան ուստի

առեալ , զայն տեղեկութիւն չիշատակէ ՚ի համառօտ պատ- մագրութեանն իւրում՝ չգիտեմ : Վասնորոյ զայն յօդուածս արտաքոյ կարգի պատմութեան չիշատակեմ իբրև ծանօթու- թիւն ինչ .

---

† Ապացոյց է այն եկեղեցոյսէր լինելոյն Ջուղայու ծաղկեփաթոց : (1) . Անգրագրութիւ , կամ ըստ ոմանց ՀՀ :

Ը.

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Տէր Աստուածատուր Եպիսկոպոս Փահրապատցի (1), կրօնասէր՝ հեզաբարոյ՝ և խաղաղասէր , ըստ խնդրոյ Ջու- ղայեցւոց նստի յաԹոռ առաջնորդութեան յամի 1729 (1181) և խոհեմութեամբ կառավարէ զՀօտն իւր : Սմա մակ անուն կարդային աղաւնի , սակս հեզամիտ և խաղաղասէր բնաւորու- թեանն իւրոյ :

Զիք սորա գործ ինչ երևելի , կամ Թէ եղեալ իցէ՝ ոչ է ժամանեալ առ մեզ , այլ քաղցրութիւն բարուց նորա հռչա- կաւոր է : Վախճանեցաւ յամի 1745 (1194) որոյ մասնինն ամ- փոփեալ կայ ՚ի հիւսիսային գաւիթ սրբոյ վանին :

Այս է արձանագիր նորին գերեզմանի ,

Ով ներ զայս տապանի՝ եղեալ ամփոփի ,
մարմին մեղսակրի՝ հէգս Աստուածատրի ,
տրուպս վարդապետի՝ որ Փահրաբաղցի ,

որքան ’ի մարմնի՝ կացի յաշխարհի,
միշտ չարութք ’ի լի՝ երկ հինգ քանքարի,
այլ և մնասի՝ նա և տաղանդի,
ես ոչ յարգեցի՝ ’ի վարշամակի՝
’ի հող թաղեցի ։ Ո՛վ դուք պանծալիք,
որդիք Սիոնի՝ մաղթեցէք յաղօթի,
զի ինձ ողորմի՝ յաւուրն ահեղի,
հանդերձ յիշողի՝ պարգև ինձ տացի,
յօրն այն խաւարի՝ և համառօտի,
’ի թուականի՝ հազար հարիւրի,
ինսունն յաւելի՝ և քառեակ թուի,
’ի յունվարի 17՝ զբաւ կենացս լինի,
ալատկեր աւուրն ’ի շաբաթի՝ ’ի տօնի սրբոյն Ներսէսի։

(1)։ Ֆահրաբադ է քաղաք սահմանակից Մազանդրանայ, ուրանօր առաքեաց Շահաբաս մեծ՝ զգաղթականն գերեաւ յաղգէ Վրաց, ընդ որս կային և յազգէ Հայոց և Երթայեցւոց ։ (առաքել, գէ։ ժա։ էջ 130—131)։

Յամի 1178 (1729) ’ի 28 փետրվարի Ֆահրաբադեցի Մելիք Մարկոսի որդի Գրիգոր ոմն գրէ առ յիշեալ Ալտուաճատուր Եպիսկոպոսն զողջունագիրը, յորում համառօտապէս յիշատակէ յաղագս գաղթականացն Ֆահրաբադայ, ասելով

« Արզ ա։ լինի սուրբ Հօրս մերոյ, թէ Մազանդրանայ ահ-
« վասն է։ իմանաս, ամէն գեղարէնքն խարապ այ ։ դառ-
« ցել, ձ։ Հաքըցի աչի է։ Տէր կակոն այ մնացել, էլ էն
« գեղումն մարդ ազգ չկայ, Դըվլէրի է։ շէնի գալայկէն եր-
« կէն է։ Պետրոսի տղայ Ալվէրդին այ և իւր ախբէր է։ նա-
« րապետն այ կենաւմ, վանքի ։ շէնումն Ուտիլարիումն՝ ա-
« ինչ գեղում, ամէնն մի քառասուն տուն անջաղ է։ մնա-
« ցել, էլ բաղին չ։ ամէնն զուլմը ժո։ Սթամի ժէ։ ձե-
« ռաց՝ որն ուրացել, որն մեռել, հրամանոց ոտաց հող՝
« տասն ուրն տարի այ որ բանտայ ժդ։ տեղէն խիղանըս
« վեր էմ առել դուս եկել, բանտայ էլ տեղըս խեղճ տառա-
« պական մնացելամ ձեռնուամն իքմին չկայ, հէնց ժդ։ որ ֆա-

« րաբադու չկուտանիքն ժե։ գուլմի ձեռաց Թուրքացան,
« հայերն էլ ամէնն վախեցան որն փախաւ, որն ուրացաւ,
« որն եսիր ժէ։ տարան, որն մեռան ,, ։ ††։

ա։ պղպեղ, այլ ասա յայտնէ լինել կամ ասել։ բ։ որպէսզի։ գ։ ասէր։ դ։ եղեալ։ ե։ հոգի է կոչեն այլազգիք որ ’ի Մէհմէտ ուխտ գնան, և հոգի է կոչեն յայլազգիացն հայ՝ որ ’ի ուխտ երթ ուխտ գնան, ասասէ զոգի Տէր կոչեա՝ է համարեա Տէր կոչես։ զ։ վերին։ է։ երկայն։ ը։ եղբայր։ ը։ հոգի է։ թ։ ինայեալն։ ժ։ նեղութիւն։ ժբ։ հարատահարութիւն։ ժգ։ նուաստ։ ժդ։ ,, հէնց ,, երբ՝ յորժամ, եկ ասա նայնպէս կամ նշանակել։ ժե։ եբրայեցիսն։ ժզ։ գերի։

†։ Սովո յայտնի լինելոյ հայոց կամ վրացիս գաղթելոյ յայն ազգհան՝ շէնելոյ են և գլխոյ վասն երեսից։

††։ Զայսոսիկ տես Ասողիկ։ գլ։ ժ։ էջ 131։

Թ։

ՊՕՂՈՍ

Պօղոս Եպիսկոպոս լինի առաջնորդ, զամս երիս առանց խռովութեան վարէ զպաշտօն իւր, յամին չորրորդի ’ի 12 նախայ 137 Թուականին ազարիայի (1752) պարտաւորի հրաժարիլ յառաջնորդութենէ յաղագս անձնական դատապարտելի գործոյ իմիք։ Պետրոս՝ խաչատուր՝ Մովսէս և Զաքարիայ Եպիսկոպոսունք կարգեն ’ի վերայ նորա զապաշխարանս։ Ի մարմնաւոր ատենէ քաղաքիս հազար թուման տուգանք դնեն ’ի վերայ նորա։ Զայնու ժամանակաւ եկեալ ’ի վանաց բնակի ’ի տան իւրում։ Մերձ ’ի վախճան կենաց իւրոց կատարեալ զղջմամբ և խոստովանութեամբ ապաշխարէ։ Ընորհի նմա դարձեալ պատիւ Եպիսկոպոսական աստիճանին (1)։

Ընդ այսմ ի տեղի գերեզմանին նորա և ժամանակ վախճանին : Առաջնորդութիւն նորա եղև ընտրակար յոյժ վանն վանին, վատնեցան բազում անօթք, և վանքն անկաւ ընդ ծանրութեամբ յոլով պարտուց (2) :

Միաբանք վանին առ ժամանակաւ նորա, լեալ են գէորգ՝ պետրոս՝ տփխիսեցի Զաքարիայ, Խաչատուր և Մովսէս եպիսկոպոսունք : Ստեփաննոս՝ Բարաղամ՝ կարապետ՝ Աւետիս և Յովհաննէս վարդապետք : Այրի քահանայք, Տէր Դաւիթ գինէպան և անօթապահ, մեծ Տէր Ղուկաս՝ վերակացու կալուածոյ և մշակաց, Տէր Մատթէոս և փոքր Տէր Ղուկաս՝ ժամասացք, Տէր Յովհաննէս դասապահ ժամասաց, Տէր Ստեփաննոս՝ լուսարար, Տէր Սիմէոն՝ Տէր Յակոբ՝ Տէր Հայրապետ և Տէր եզեկիէլ միաբանք (3) :

Յետ ընկեցիկ լինելոյ Պօղոս եպիսկոպոսի ի 1752 ամի՝ Տէր Զաքարիայ (4) եպիսկոպոս տփխիսեցի կարգի Յաջորդ և վերատեսուչ վանին : Գրէ զկոնդակ ի հնդկաստան, ուր ծանուցանելով զանցս ելանելոյն Պօղոսի յառաջնորդութենէ, յարէ՝ ‘‘ ըստ այսմ պատճառի հարկ եղև վասն շինութեան
‘‘ սրբոյ տանս յաջորդ հաստատել, թէպէտ ես ոչ կամիմ
‘‘ առ այս լինել լուծիւն, սակայն (քեալանթար) Պարոն Սար-
‘‘ գիսն հանդերձ միաբանիւք, քահանայիւք, և ժողովր-
‘‘ դովք զիս բռնադատեալ հաստատեցին յաջորդ և վերակա-
‘‘ ցու սրբոյ վանին, նոյնպէս Պարոն Սարգիսն և երեսփոխ
‘‘ սրբոյ տանս ’’ :

---

(1) · Զե՜ռեր յեշպո՜կոպոս։
(2) · Նո՜ · Նո՜։
(3) · Յեշպո՜կոպոս գրչեր ծա՜գրո՜յ եղելոյ ի վե՜րն։
(4) · Տէր Յովհաննէս Խաչիեան ի համառօտ պատմագրութեան իւրում (էջ 3) զոյն Զաքարիայ կոչէ ի Նո՜ Աղջնորդաց, այլ գիտել արժան է, զի նա կոչեցա՜ Յաջորդ, և վերջոյ զղջալոյն ա՜Ջորդութեան առանց պատճառի եղելոյ ի Նո՜ Աղջնորդաց։

Գ.

ԳՒՈՐԳ

Տէր Գէորգ եպիսկոպոս միաբան սրբոյ վանիս, հաճութեամբ ամենեցուն կարգի առաջնորդ յամի 1754 (1) : Սա ի պատճառս բազմապատիկ նեղութեանց և հարստահարութեանց բռնաւորաց անհարացեալ առնու զանօթս սրբոյ վանին, յորս նշանաւորք են Ջուղայեցւոյն սկիհք վեց արծաթի, և մի ականակուռ ոսկեայ գաւաղան (2) և հանդերձ երեսի միաբանիւքն գնայ ի Բասրայ քաղաք և անդ վարէ զպաշտօն առաջնորդութեանն իւր ցամ Տեառն 1763 :

Յամի 1760 ի 20 սեպտեմբերի, Պետրոս և Բարաղամ վարդապետք գրեն առ նա ի Ջուղայ զթուղթ խնդրանաց զի վերադարձցի ի Ջուղայ կառավարել զվանքն՝ ասելով ‘‘
‘‘ Հայր սուրբ խնդրեմք հրամանոցէն ‘‘ որ մեզանէ նեղանաս
‘‘ ոչ, վասն սուրբ Աթոռիս համար թաստի անք (ա) տալ
‘‘ ման հրամանոց, որ հաստատ մնայ և դուռն բաց լինի, մեք
‘‘ խոյ (բ) յուսչատաճ մնացէլանք՝ չենք (դ) խրար մեր չարն
‘‘ դոր (ղ) գնի (ե) տանս տէր չկայ, վանք և եկեղեցիք՝
‘‘ քահանայք և ժողովուրդք ամենեքեան յուսահատէլան
‘‘ . . . ժողովուրդ խոյ Աստուած տայ . . . վանք և եկե-
‘‘ ղեցիք քաքտվուժայ յանտէրութենէ . . . վանքիս չոք (ը)
‘‘ կողմն մէդանալ և քօլն (է) Ջուղայ քուրթայ (ը) նըս-
‘‘ տած, Սարգսի քօլն (ը) էլ (ժ) Շահրիմանէնց տը-
‘‘ ներումն են նստած, մալուժ (ժա) թէ էստունց (ժբ)
‘‘ ձեռնուժն դոր պիտի ապրինք ’’ :

Յամի 1763 մինչ խաղաղացաւ փոքր մի Ասպահան քաղաք ի բռնաւորութենէն Նադիրշահի, վերադարձաւ սա ի Բասրայ ի 27 Նոյեմբ (14 Սեպտեմբեր) և հանդերձ միա-

բանիւք ժամանէ ՚ի Ջուղայ յԱթոռ Առաջնորդութեան իւրոյ, և ըստ կարևորին միխիթարէ զժողովուրդսն որք անտեղուանէ և անխնամ մնացեալ էին, բարեկարգէ և զկառավարութիւնն վանին ըստ ներելոյ պարագայիցն :

Յետ վերադառնալոյ սորա ՚ի Բասրէ, գահանայք Ջուղայու տան զԹուղթ ուխտի և խոստման զի յետ վախճանելոյ անժառանգ քահանայի, ամենայն ստացուածք նորա վանացն եղիցի ժառանգութիւն : Այս է պատճէն խոստման Թղթոյն այնմիկ, ,, Մեք Ջուղայու աւագերիցունք և հասարակ ,, քահանայք և բոլոր ժողովուրդք, ունեմք ուխտ և դաշինս ,, ՚ի նախնեաց մերոց ընդ սրբոյ Ամենափրկիչ վանիս, և ընդ ,, նմա ներկայ Առաջնորդ և յաջորդին, առաջի ամենասուրբ ,, երրորդութեանն և ընդ սրբոյն Աստուածաշնչաւոր Աղոյն ,, Յովսեփայ, որ ինչ քահանայ սուրբ Աթոռիս կարգ առնէ, ,, և յետ իւր մահուանէն որ յիշատակ չունենայ իւրն ամե- ,, նայնիւ անյիշատակ քահանայի վարիս (ժդ) և տէր, մեր ,, սուրբ Աթոռն է, և ներկայ առաջնորդ և յաջորդն է, ոչ ,, ոք իշխանութիւն ոչ ունի, և թէ ոք յայսմ ուխտի և դա- ,, շինիս վերայ այլ և այլ առնէ, Ամենասուրբ երրորդու- ,, թեանն և երեք հարիւր տասն և ութ Հայրապետաց՝ և ,, սրբոյն Յովսեփայ Աստուածաշնչաւոր աղոյնդ ներքոյ է, ,, և կատարօղն օրհնեալ, որ Առաջնորդն նորա հոգին ամե- ,, նայնիւ հոգայ (ժդ). և անցեալն տիրէ, ըստիարն (ժե) ,, իւրն է : Այսքան է մեր ուխտ և դաշն առանց յիշատակի ,, քահանայի կողմանէ :

,, Յղև աւարտումն ՚ի սարսափելի դրան սրբոյ Ամենափրկչի ,, գերահրաշ վանի, յամի Տեառն 1764, շաբաթ 13 (յունիսի ,, 1.), աւարտ ,, (3) :

Պահանջեն ՚ի 28 հոկտեմբերի 1768 ամի և յարևմտեան դրան՝ առաջարին սրբոյ վանի ամփոփի, սովին տապանագրութեամբ :

Տէր ողորմեա Գէորգ վարդապետին, որ ՚ի տապա-
նիս է՝ կեցեալ յաշխարհի զամս 75, և հանգեաւ ՚ի-
Տէր յամի Տեառն 1768, յոկտեմբերի 28 :

Ի սորին առաջնորդութեան ժամանակի սիրաքանք վանին ղեալեն, Մովսէս եպիսկոպոս յաջորդ առաջնորդի, Պետրոս՝ Ահարոն և Խաչատուր եպիսկոպոսք. Բարաղամ Մատթէոս՝ Ղուկաս՝ Յովհաննէս՝ Հայրապետ՝ Խաչատուր՝ Մանուէլ՝ Յակոբ՝ Մինքայէլ՝ Ղուկաս՝ և Մարտիրոս վարդապետք (4) :

---

(1). Կանգակ նորա: Ձե-ափէր յէշպոկոպանէ :
(2). Յ-ոյակ պոլեալ պոտո-ոյն որ ՚է վանին կոյ :
(3). Այն խոտոտ-մնափէր պակո-էն ՚է վանէն կոյ, ձկէե- պահ-ը ոյն կորգ մինչև ոյանէ ամօ ոյտ-ոյ :
(4). Ձե-ափէր յէշպոկոպոս :

ՃՈՒ.

ՄԵՐՏԻՁ

Տէր Մկրտիչ եպիսկոպոս ՚ի կարգէ գահանայից, յետ վախճանելոյ կնոջն իւրոյ մտանէ ՚ի վանս Ամենափրկչի, գնայ յուխտ յերուսաղէմ և անդ վանն իւրոյ արժանաւորութեանն պրեզի լեալ պատրիարգին, առաքի նուիրակ ՚ի հնդկաստան, և անդէն յետ կատարելոյ զգործ նուիրակութեանն վերադառնայ յերուսաղէմ, յորմէ գնայ յԵջմիածին և ընկալնու-

զաստիճան եպիսկոպոսութեան, և եղեալ անտի հասանէ ի Բասրայ ուրանօր ի ժողովրդոց հրաւիրի յետ մահուանն Գէորգ Առաջնորդի յաջորդել նմա: Եղեալ ի Բասրոյ ի 1768 ամի հասանէ ի Ջուղայ ի ժամանակի ծանր հիւանդութեանն Գէորգ Առաջնորդի: Յետ վախճանի Գէորգ Առաջնորդի, ըստ բազում Թախանձանաց ժողովրդեանն ի 15 յունվարի 1769 նստի յաթոռ Առաջնորդութեանն Ջուղայու վանաց (1):

Յաւուրս առաջնորդութեան սորա բազմապատիկ խռովութեամբ աղքի Պարսկաստան, քանզի յափշտակին զգահ թագաւորութեանն, ոչ ևս կարգաւորութեամբ վարի իշխանութիւնն (թագաւորութեան, զի ի չորեք կուսէ խան և իշխանք մարտ ընդ միմեանս տան, որ յաղթէն՝ նա թագաւորէր, և յայնմ ջան զինքն հզօրագունէ պարտեալ յաղթականին մնայր իշխանութեանն վանորոյ անդադար շարունակէին մարտ՝ արիւնահեղութիւնք՝ քուռն հարկապահանջութիւնք և բազում նեղութիւնք՝ զորոց յիւրում տեղւոջ խօսեցաք: Ալինպիսի ուժգին բռնակալութիւնք սաստկապէս վըտանգեցին զ Ջուղայ, կողոպտեցան եկեղեցիք, և վանքն ի զարդուց, վասն վճարելոյ հարկաց: Ալիմուրատխան բռնաւոր կողոպտէ զվանս, զորմէ պատմէ Տէր Ստեփաննոս պատմիչ, որոյ զբանս սրբագրութեամբ նշանակեմք աստանօր:

“ Ալիմուրատխանն ունէր զճառայս յաղթէ վըաց որք ու-
“ րացեալ էին ի հաւատոց քրիստոնէութեան և բնակեալք
“ էին ի միջ Ջուղայեցւոց, և տեսանէին զպայծառութիւն
“ սրբոյ Աթոռոյն մերոյ Ամենափրկչի, և ոմանք ի նոցանէ
“ տեղեակ էին որպիսութեան Նորա: Երիտասարդ մի ազգա-
“ կան ուրացելոցն աշակերտ էր ի վանին, զոր վասն սխալու-
“ թեան իմիք ի բաց վարեցին ի վանաց: Գնացեալ Նորա առ
“ ուրացեալ ընտանիս իւր՝ չարախօս եղև թէ այսքան ա-
“ նօթ ոսկւոյ և արծաթոյ կան մթերեալ ի վանին ի պա-
“ հեստի: Ցայտնեցին զայն Ալիմուրատխանին որ առաքեաց
“ զքսան ճառայս զի կալցեն զառաջնորդ վանացն և զմիա-
“ նանն և չարչարեսցին զնոսա մինչև յայտնեսցեն զտեղի
“ թաքստեանն, յորմէ առեալ զնա որինչ ինչ դարձ արաս-

“ ցեն առ ինքն:

“ Եւ իբրև այս բօթալի հրամանս եղև ի նմանէ ի նսեմա-
“ նալ երեկոյին ճառայքն եկին դէպ ի Ջուղայ, և ի լսել
“ միաբանիցն զայն լուր եղեալ ի վանաց Թաքեան ի տունս
“ զրացեայ ի խորշս և յանկիւնս տանց: Եւ եկեալ զինուո-
“ րացն կալան զառաջնորդ Մկրտիչ վարդապետն և զյաջորդ
“ Յակոբ վարդապետն՝ զերկուս ի միաբանից՝ և զերկուս ի-
“ միրացուաց, և եդին զՓալաղայն յոտս առաջնորդին և յա-
“ ջորդին, և այնքան գանեցին ի չորից կողմանց, մինչև ոտք
“ նոցա ցծունկսն ներկեցաւ արեամբ: Ասէ յաջորդ Յակոբ
“ վարդապետն մեղսուք ի վերայ հաւատոյս և Աթոռոյս մե-
“ րոյ և ժառանգեացուք զհոգի և զանուն և մի տացուք ի-
“ ձեռս այլազգեաց զսրբեալ անօթս մեր: Բայց միաբանքն և
“ երկու աշակերտքն ոչ լուան նմա, իսկ առաջնորդ Մկրտիչ
“ վարդապետն ոչ ունէր կարողութիւն խօսելոյ վասն ան-
“ չափ գանիցն, վասն այն միաբանքն և աշակերտքն ոչ լու-
“ ան աղերսանաց յաջորդին. ասէ ոմն յաշակերտաց արձակե-
“ ցէք զիս ի կապանաց և եկայք զկնի իմ. . . և արձակեցին
“ զնա ի կապանաց, որ գնաց ի տանէս սրբոյ տաճարին և
“ զինուորքն զկնի նորա, և ասաց քակեցէք զայս նիշ տեղի,
“ և նոքա քակեցին և բացաւ գաղտնատն, և զցուցանող ա-
“ շակերտն Մարտիրոս անուն առաքեցին ի ներս և առին զա-
“ մենայն որ ինչ կայր ի նմա զնաչ զսկիհ՝ զբուրվառ՝ զզ-
“ գեստ՝ զաշտանակ՝ զմոմակալս՝ զտապանակս՝ և զայլ եկե-
“ ղեցական զարդս, և ապա մտեալ ի խուց և ի սենեակս միա-
“ նանիցն կողոպտեցին զամենայն որ ինչ կայր ի նոսա, և էր
“ կշիռ արծաթոյն քսան և հինգ լիտր քան ի զգեստուցն,
“ և կշիռ ոսկւոյն երեք չարեք (ա): Իսկ առաջնորդն և
“ յաջորդն անկեալ կային ի զանգակատանն և զկոկիճ գա-
“ նիցն թողեալ՝ զկորուստն սրբութեան անօթոցն ողբային
“ (2):

Յաւօք և հեծութեամբ տառապի սա յիշխանութեանն
խրոմ, զօրհանապազ յահ և յերկիւղ սասանեալ՝ տուգա-
նեալ և հարուածեալ, յորոց ոչ գտանէր զինքս փրկու-

(3). Ոչ[illegible]ը նոր գրեալ ի Հերալ։
(4). Էր նա ի Ռշէն Թարվիզ- որ ի Ջուղայ, ոսոր զ լուծ
կոչել կու ի Թարվիզ ժողովուրդ։
(5). Ձեռագիրը յեղափոխած։
(*). Ի-րա-ման-էր-ը լուծն է ըստ ըստէ, և ըստէ՝ նշանակէ ասել
կ՝ ի Հերալ։

ԺԱ.

ՅԱԿՈԲ

Յակոբ եպիսկոպոս հաճարեթամբ Ժողովրդոց յամի 1788 նստի առաջնորդ (1)։ Սա յառաջնորդ ամի իշխանութեանն իւրոյ վարի միջասահման բարեկարգութեամբ, և յակզբան երկրորդ ամին լինի սոքա Մահմադխանի, ուստի կարեկցութեամբն ցուցանելով սորա առ Ժողովրդեան օգնականութեամբ մեծատանց կերակրէ և խնամէ զբազում աղքատս և զտնանկս և ընդհիւ այնպիսի խնամոց ոչ ոք ի Ջուղայեցոց լինի սովամահ (2)։ Ցերրորդում ամի առաջնորդութեանն իւրոյ ընթացք բարեկարգ կառավարութեանն ի հակառակն կոյս հոլվին, բռնանայ ի վերայ Ժողովրդոց, մանաւանդ ի վերայ հոգևորականաց, և յեկեղեցեաց զնացեալ սպասս և զպարտս ինքն կողոպտէ, վաճառէ և իւրացուցանէ (3)։ "Սրբոյ "տանս (ըստ վանաց) ամենայն ինչ՝ զգեստք կամ պղնձեղէն "ոչինչ գնով ծախէց յայտնի և ծածուկ. այնուհետև յետ "երկիցս անգամ փող դձելոյ եկեղեցեաց (իմն յետ երկու "անգամ մեռանտրելոյ ի վերայ եկեղեցեաց զպահանջելի "գումարս) սկսաւ ոտիւք իւրով ընթանալով ի տուրբ ե-

(1). Ձեռագիրը յեղափոխած գրեալ ի[illegible]։
(2). Տէր Սթեփաննոս պատմէ էջ։

թեան անհաւատացեալ գնայ ի Հերալ (3), անդ մնալով առ ժամանակ մի, ի թագաւորեն Քէրիմ խանի՝ պատուեալ ի նմանէ և սիրելի լեալ յաչս նորա վերադառնայ ի Ջուղայ, և անձնադիր հովուութեամբ հինգ ըստնեցաս տաժանագին կրնացն իւրոց ի 1787 ամի, և ամփոփի յարևմտեան դրան պարսկեցւոյ վանին։

Այս պամբանագիրը է նորին։

Վայր զայս տապանի՝ եղեալ ամփոփի
մարմինս մեղսակրի՝ Հէգս Մկրտչի
տուսպ վարդապետի՝ որ եմ Թարվիզցի (4)
որքան ի մարմնի՝ կեցեալ յաշխարհի
միշտ չարեօք ի լի՝ երկ հինգ քանքարի
այլ և մինանի՝ նաև տաղանդի,
հս ոչ յարգեցի՝ ի վարշամակի,
ի հող թաղեցի։ Ով դուք պանծալիք
որդիք Սիոնի՝ մաղթեք յաղօթի
զի ինձ ողորմի։

Այժմ եղծեալ է գրուխիւն սոյն տապանին, և հս ի հատուկոտոր թղթոց գրեմ զսորուն տապանագրին։

Ի սորա ժամանակս՝ քեալանթար Սարգիս լինի երէսփոխան վանին, յաւէտ յօգուտ իւր քան թէ յօգուտ վանին։ Մխաքանք ի վանին եղեալ են Յակոբ Մատթէոս եղեկիէլ Մանուէլ՝ Աստուածատուր՝ Խաղխատար և Ցարութիւն վարպապետք, և ս և Հայրապետ վարդապետ նուիրակ ի Հնդիկս՝ և Մինաս վարդապետ գործակից նուիրակի (5)։

(1). Ձեռագիրը յեղափոխած գրեալ ի[illegible]։
(2). Տէր Սթեփաննոս պատմէ էջ։

,, կեղեցիան իբր մուհասիլ (ա) . քահանայից և երիցփոխաց
,, սաստիկ ահաբեկելով զամենայն զարդ և անօթ ոսկեղէն և
,, արծաթեղէն կողոպտեաց մինչև բաղմաց աջերն՝ մասունքն
:, ծախեաց, աջերն կոտրատեաց, որ եկեղեցեաց ամենասուրբ
,, զենուճն ի մէջ խեցեղինաց մատչի . . . յետ ամենայն ինչ
,, կողոպտելոյն և այդիքն գրաւելով . . . եղ ,, : Զսմանէ
պատմաղէտ սրտիւ գանգատէ աղայ Մարգար Աւետ Խալդա-
բեանց, ի նամակին իւրոյ գրեցելոյ ի Բաղէշադայ ի Թուականի
Հայոց 1240 (1791) առ միաբանան սրբոյ Ամենափրկչի վանին,
ասելով , ,, Սմին նման առաջնորդն (որոյ արաքածն կարծեմ
,, հեթանոսք և ես լսեն կըսարսեն) ոչ աշխաքհումն այդպիսի
,, անձն եկաճ լինի կամ արարքն արարած լինի , անհատատն
,, կըդողայ այդպես քան չի անուամ որպես դա արար՝ որ սկին՝
,, խաչ՝ աւետարան՝ մասունք կոտրատէց . . . . Ո՛հ ներո-
,, ղութեան Աստուծոյ , օրպէս ներեցեր , օրպէս լռեցեր , որ
,, երկինք և երկիր սարսեն այդպիսի բանից : Մեր եկեղեցին
,, և ս (4) . Թամամ (ը) . աւերակ այ արարել, մին նոր
,, վարագոյրն որ մագրասուքն շինելի տվել, տասն ուլթ
,, Թուման այ գինն, ծախելայ քաւրթի . . . սուրբ Թումայի
,, շօշափումն այ , նա վըճժանդիր լինի նմանապէս սկին՝ խաչն՝
,, եղ իրաւի յիշելն արժան չէ ,, :

Յետ զայն ամենայն առնելոյ՝ զմնացեալ սպասս և զա-
նօթս վանին առեալ գաղտ ելանէ աստի և գնայ ի Բասրայ ,
ուրանօր տեղեկանալով իշխանաց քաղաքին մանաւանդ դոր-
ծակատարաց վանին անցիցն զորս նա անցուցեալ էր ի Զու-
ղայ , և թէ քերեալ է ըմբիր զանօթս վանին , յորս էր և Ա՛Ջ
սրբոյն Յովսէփայ Արեմաթացւոյ , առնուն զայնոսիկ ի նմանէ
և առաքեն դարձեալ ի վանքն Ամենափրկչի (5) : Իսկ Յակոբ
առաջնորդ եղեալ անտի գնայ ի Մարդրաս և. անդ կատարեալ
զղջմամբ և խոստովանութեամբ գրէ զկտակ իւր ասելով ի
նմա ,, մի ոք յայլ վիճակէ ընդունիցի ձեզ Առաջնորդ կա-
,, ցուցանել, եթէ ոչ ի միաբանից սրբոյ վանին մերոյ և ընտ-
,, րութեամբ հասարակութեն ,, : Զամենայն զտատաուածա
իւր կտակէ հատանել սրբոյ Ամենափրկչեան վանին , որպէս

ցետ մահուան նորա զոյք նորա հասանին ի վանքն , և ինքն
ի 22 Սեպտեմբերի 1793 ամի վախճանի անդ և ամփոփի ի
մէջ եկեղեցւոյ հայոց (6) :

Թէպէտ բազմապատիկ բողոք և գանգատանք եղեն զՅա-
կոբ Առաջնորդէ , և ի հասարակութենէն Ջուղայու գրեցաւ
զնմանէ զառն գանգատագիր առ Սրբազան Պետրոս կաթուղի-
կոսն ի սուրբ Էջմիածին (զորովք զանց առնեմք բարեօք հաս
մարեցի) այլ ինձ հաճոյութիւն գոյ կարծելոյ՝ թէ գիտասցին
Յակոբ Առաջնորդի ոչ է եղեալ կողոպտել զեկեղեցիան կամ
զվանն՝ սակս իւրոյ անձնաշահութեան , այլ ըստ օրում բըն-
նաւորութիւն և կեղեքումն անպակաս էր յայնոսիկ ժամա-
նակս ի շահախնդիր բռնաւորաց ոմանց , վասն որոյ սրտաբե-
կեալ նորա առաւել ի դէպ համարեալ է ինքն ժողովել զըս-
տացուածս և զգոյս եկեղեցեացն և վանին , քան թէ թողուլ
աւար լինել անյագաւորդ բռնակալացն իւրոյ ժամանակի : Զայս
կարծիս կալնուամ՝ կշռադատելով զվարս նորա , զի մինչ Ալի-
մուրատխան առաքեալ էր զծառայս իւր կողոպտել զվանքն ,
սա ինքն էր որ ընդ Մկրտիչ Առաջնորդին գանակոծ լեալ
լաւ համարէր մեռանիլ քան թէ մատնտուս լինել սրբութեան
ապասուցն սրբոյ վանին , և յառաջնում ամի առաջնորդու-
թեանն իւրոյ իբրև հայր խնամաշատ հոգ տարաւ կերակրել
և խնամել զաղքատս՝ զտնանկս և զչքաւորս ժողովրդեան .
որք նորին խնամոց ընդհիւ ազատեցան ի սովամահ լինելոյ :
Նոյնպէս և վախճանն նորա կատարեալ զղջմամբ և խոստովա-
նութեամբ , և կտակէն վանին զամենայն գոյս իւր , նա և
հոգ տանէին սակս ապադայ ընտրութեանն առաջնորդի , ա-
պացոյցք են բարեմիտ լինելոյ նորա , ուստի և ես յապացու-
ցութեանց անտի ոչ աւելորդ համարեցի յիշատակել զվերոյ
գրեալն իմ կարծիս : Եթէ յոմանց ի բարեմտաց սոգտանիցիմ
սակս զանվայելուչ պործս ոմանց հանգուցելոց արձանագրե-
լոյ ի գիր , առ այն ասեմ թէ և իմ խիղճ խորշէր յայնմա-
նէ վասն անսովոր լինելոյ խօսելոյ կամ գրելոյ զվատաբա-
նութիւնս զուժեքէ , այլ զանցս պատմութեանն խեղաթիւրել
և զնմաստն գարձուցանել ըստ քմայ (որպէս առնեն ոմանք

որք կամին զամենայն դէպս յօգուտ խըրեանց շնջել) առաջ. նել ատգտանելի գործ համարելով, թարեաք վարկայ զպարտս պատմագրի կատարել, քան թէ զընթացս պատմութեանն լատ քանց աղաւաղել։

Օ՚կնի գնալոյ Յակոբ առաջնորդի յամի 1791 կարգեցան վերադիտողք վանին Միքայէլ՝ ղազար և Գէորգ վարդապետք՝ ի միաբանից աթոռոյն, որովք կառավարեցաւ վանքն մինչև ցընտրութիւն Առաջնորդի։ Եւ ըստ որում գործք Յակոբ առաջնորդի վշտացուցեալ էր յոյժ զսիրտս ժողովրդեանն՝ վասն որոյ աղերս մատուցեալ՝ ի պօլիս էջմիածին, խնդրեցին ոչ ևս առաքել զոք առաջնորդ՝ մինչև խաղաղասցին ժողովուրդք, և Դուկաս կաթուղիկոս՝ ի փետրվարի ինն (1242) ամի դրէ առ Ջուղայեցին զկոնդակ մխիթարութեամբ, և՝ ի նմա յաւելու ասել ‹‹ այլ քանզի Յակոբ պետն այնպէս նշկա- ‹‹ հելի եղև և զայլ առաջնորդս ևս ոչ կամիք այլ խնդրէք ‹‹ առանց առաջնորդի կալ առ ժամանակ մի . . . մինչև հան- ‹‹ գարտիցի երկիրդ՝ ի վրդովմանց, գիտասջիք առ այդ դի ‹‹ Յակոբ պետն ոչ կարէ պատնալ այդր և զայլ ոք ևս ոչ ‹‹ եմք առաջնորդ կարգելոց որպէս խորհեալ էք և օգտաւոր ›› համարեալ,, (7)։

Յաղագս այնր զամն ինն վանքն կառավարեցաւ առանց առաջնորդի՝ հոգաբարձուօք միայն։

---

(1)։ Ձե՜ռագիր յէջմիածին։

(2)։ Տէր Սուքիասեան պարծէ էջ ։

(3)։ Բողոքարկուղք գրեալ կ՚ընծայէ ։

(4)։ Եկեղեցին նոցա է սրբոյն Թովմայէ, որ հատորիցըն կոչի Թովմ ծամ կոչէ ։

(5)։ Ձե՜ռագիր յէջմիածին։

(6)։ Նամակ յայտարարութեան գրեալ՝ ի Մարգար տղոյէ ։

(7)։ Օրինակ գանգատագրոյ Ջուղայեցւոց կ՚ընծայեմ, և նորին պատասխանի գրեալ՝ ի Ղուկաս կաթուղիկոսէ՝ պահին՝ ի վանին Ամենափրկչեան ։

(8)։ Մահմուտ է եաա պարծէ, և կոչի ծառայ ըր՝ էդիւա- նէն առաքեալ լինի ոգանալ կղզիքն տէրութեան, կամ չէ և էրէ պա- հանջելի գառնար ։

(9)։ Թամամ՝ է պարծէ կոչէ ‹‹ ընէմամ ,, որ նշանակի՝ էուկնուդ- էլար և անպակաս ։

Ի. Գ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ

Յամի 1798 մանաւանդ Ջուղայեցւոց և Բասրայեցւոց գնացին յէջմիածին Յարութիւն և Գէորգ վարդապետք զի ընկալցեն զաստիճան եպիսկոպոսութեան, յայնմ ժամանակի վախճանեցաւ Դուկաս կաթուղիկոս, որոյ աղաչաւ մնացին նոքա անդր ցընտրութիւն Դաւթի, յորմէ՝ ի 5 մայիսի 1801 ամի ընկալան զօծումն եպիսկոպոսութեան, և՝ ի 12 Յունիսի նոյն ամի վերադարձան՝ ի Ջուղայ (1)։ Սոքա՝ ի լինելն էջմիածին ըստ պահանջելոյ Դաւթի կաթուղիկոսի տան զԹուղք խոստման առ նոյն Դաւիթ կաթուղիկոս զի յետ ընդունելոյ իւրեանց զառաջնորդութիւնն Ջուղայու, զվիճակն Ամենափրկչեան վանի արասցին Տէրունէ և Թեմ սրբոյ Աթոռոյն էջմիածնի։ Ի լսելի լինել այնմիկ լրոյ՝ ի Ջուղայ և՝ ի Հնդկաստան, ծագեցաւ տարաձայնութիւն՝ ի ժողովրդեանն, և անհաւանական եղև խոստումն այն, ուստի բողոք բարձին էջմիածին և պահանջեցին պարձուցանել զայն խոստումնագիր, այլ էջմիածին չեղև մտադրութիւն տալոյ զայն՝ ի տարաձայնութիւնն և բողոք ժողովրդեանն տեւեաց մինչև ցժամանակ Սրբազան Սիրեմ կաթուղիկոսի, յորմէ դարձեալ պահանջեցին Ջուղայեցիք զայն խոստումնագիր և նո-

բին Սրբազնակատար ծ ո ւ ր թ իւն ՚ի բաւարարու թ իւն սրտի
ջուղայեցւոց գրեաց առ նոսա յամի 1813 ՚ի 25 յունվարի
օրհնու թ եան կոնդակաւ, ,, այլ սակայն հանդուցեալ Յարու-
,, թ իւն և Գէորգ եպիսկոպոսքն ձեր որք ՚ի կենդանու թ եանն
,, իւրեանց թ ուղ թ են տուեալ աստ վանս տէրունի առնելոյ
,, զվիճակէ սրբոյ Աթոռոյս, զայն թ ուղ թ խնդրեալ էիք և
,, այժմ յետս առ ձեզ առաքել, բայց որպէսզնախ քան զգալն
,, մեր ՚ի սուրբ Աթոռս չեն գտեալ զնոյնն՝ թէ հոգելոյս
,, Դանիէլ Սրբազանն և թէ սուրբ Ժողովն, նոյնպէս և մեք
,, ՚ինեքկայս ոչ կարացաք գտանել զի առաքեաք, բայց ա-
,, հա այսու գրով յիշմի լերուք միամիտ առ այն, զի եթէ
,, գտանիցի յապայն՝ անյապդուն ակ լիցի այն յաւետեանից ժա-
,, մանակաց ,, :

Տէր Յարու թ իւն եպիսկոպոս կարգէ առաջնորդ յամի 1801, և Տէր Գէորգ եպիսկոպոս լինի յաջորդ նորա : Բարու ք հոգաւորու թ եամբ կառավարեն զհօտն իւրեանց, ընդ միմեանս սիրով և միաբանու թ եամբ կալով : Ի սոցին ժամանակս վիշտք և նեղու թ իւնք պակասին, ուստի քան զնախորդս իւրեանց՝ սոքա անդորրու թ եամբ անցուցանեն զկեանս իւրեանց : Բայ ձեռնհասու թ եան իւրեանց նորոգեն զանշքու թ իւն վանացն : Ի սոցին ժամանակս պարտք վանին հասեալ էր ցչորս հազար թուման (2) : Ուստի յամի 1803 զնիրակոս վարդապետ առաքեն նուիրակ ՚ի Հնդկաստան, և գԼմկրտիչ վարդապետ առաքեն նուիրակ ՚ի Ռուսաստան և նոցինն նուիրակական արվեստիւք ազատեն զվանքն ՚ի ծանրու թ եննէ պարտուց : Եւ անք Գէորգ եպիսկոպոսի կարճի ՚ի 141 Հոկտեմբերի 1808 ամի, և ամփոփի ՚ի զանդատան վանին : Իսկ Յարու թ իւն Առաջնորդ վախճանի ՚ի 26 դեկտեմբերի 1810, և ամփոփի ՚ի հիւսիսային պատի, ՚ի շարս հանդուցեալ Առաջնորդաց :

Տողանոթէը նորէն է այս :

Ընդունէ ամենակալի՝ ամենայն մարմին հող լինի,
՚ի տապանի աստ ամփոփի՝ զի առաջնորդ Յարու թ իւնի

արք եպիսկոպոս րաբունի՝ որ էր վարուքն յոյժ գովելի, յիսուն և ՚ինն ամաց վախճանի՝ որք հանդիպիք տուք ո-
ղորմի : Թիւն 1810, դեկտեմբեր 26 ին :

---

(1) . կոնդակ բեմաորոթեան նոցա, և յետոփէը յիշատակ :

(2) . Նուէրնիկեան կնդակ նոցա :

Ժ Գ .

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տէր Յովհաննէս եպիսկոպոս էջմիածնեցի, յամի 1812 նուիրակու թ եան պաշտօնի գայ ՚ի Ջուղայ, և քաղցրու թ եամբ վարեալ ընդ ժողովրդեանն սիրելի լինի նոցա, ուստի հասարակու թ իւնն Ջուղայու յ 2 Սեպտեմբերի 1812 խնդրագիր մատուցանեն նմա յանձն առնուլ ՏՃալ Առաջնորդ Ամենափրկչի վանաց, և գրեն միաբանու թ եամբ առ Տէր եփրեմ Հոգելոյս կաթուղիկոսն զնդիր սակս հաստատելոյ զառաջնորդու թ իւնն սորա յաղագս Ամենափրկիչ վանին (1) . յայտնեն և պատուելի համազգեացն որք ՚ի Հնդկաստան զայնմանէ առաջադրու թ իւնէ իւրեանց, և նոքա միաբան լինին այնմիկ խորհրդոյ, վասն որոյ Սրբազնակատար Տէր եփրեմ կաթուղիկոս յ 8 Մարտի 1813 ամի առաքէ զկոնդակ առաջնորդու թ եանն սորա : Ի սորա աւուրս ծագեցաւ խռովու թ իւնն ապակէզործից, և եղև սոքին կոչեցեալ Սաէրի (2) . ուստի

վարեաց նա զառաջնորդութիւնն իւր վշտօք և նեղութեամբ, և վախճանեցաւ ՚ի 28 Յուլիսի 1817 ամի, և մարմին նորա ամփոփեցաւ ՚ի Զանգակատան վանին :

Ի յայսմ շիրմիս ներ պարապի
մարմին ուրումն վերհագուսի
որ Յովհաննէս վերաձայնի
եպիսկոպոս դեր պանծալի :
Իսկ միաբան էջմիածնի ,
և բուն զաւակ այնր գահի ,
գտեալ ղգործ՝ նուիրակի
յէջմիածնէ՝ այսր դիմի ,
յետոյ տեսուչ՝ վանացս ընտրի ,
և առաջնորդ՝ ՚ի սմա կարգի :
Վեց ամ կացեալ՝ յայսմ հարկի
փայլեաց գործով՝ իբր ղարփի ,
սոյն ծաղկեցեալ՝ աշխարհն ՚ի լի ,
՚ի ծերութեան իւր հասակի
բարի մահուամբ առ Տէր կանխէ ,
առնուլ զձիրն յաղթանակի ,
՚ի յամի Տեառն՝ կենարարի
հազար և ութն հարիւրեակի ,
այլ հօթն և տասն ընդ այնր ղուգի ,
՚ի 28 Յուլիսի :

Ի սորա առաջնորդութեան ժամանակի, միաբանք սրբոյ վանին եղեալ են կարապետ՝ Յակոբ՝ Աբրահամ մեծ Օհան՝ Աստուածատուր՝ ղազար և Գէորգ վարդապետք Ջուղայեցիք , փոքր Օհան՝ և Ղուկաս վարդապետք Բուրվարցիք , Թէոդոսոս և Յարութիւն աբեղայք , Պարոնայք Գալստան Բարսեղեան և Մկրտիչեան կառավարիչք վանին :

---

(1) . Խորագրութիւն Ջուղայեցոյ գրել սա , որ պոկէ

՚ի վանէն :

(2) . Խորագրութիւն նոր սա Հնդկոյս յորոց այնոցիկ եղեալ են :

Ժ. Ի.

ԿԱՐԱՊԵՏ

Տէր կարապետ եպիսկոպոս Ջուղայեցի , այր հեզահոգի և բարեսիրտ , յամի 1817 յամենայն Սեպտեմբերի մահսարական խնդրանօք Ջուղայեցւոց գնայ ՚ի սուրբ Էջմիածին և անտ յ7 Յունվարի 1818 ամի ձեռնադրի եպիսկոպոս ՚ի Տէր Եփրեմ Սրբազան կաթուղիկոսէ , և ՚ինոյն ամի յ9 մարտի ելեալ յէջմիածնէ առաջնորդական կոնդակաւ վերադառնայ ՚ի Ջուղայ և ժամանէ ՚ի վանքն Ամենափրկչի ՚ի 14 մայիսի (1) : Ըստ բարեսիրտ քաղցրութեանն իւրոյ կառավարէ զԺողովուրդն ՚ի քանի ամս : Յաւուրս նորա հաջի Հաչէմխան բախտիարլօռ՝ վաղուց ցոփ և արբշիռ բռնաւոր հանդիսանայ Իսպահան քաղաքի , յորմէ քաղաքն ողջոյն և քաղաքապետն ահաբեկին , նա սովորութիւն առնէ գալ ՚ի Ջուղայ ատեպ ատեպ և գնալ ՚ի վանքն Ամենափրկչի , ուրանօր զգինարբուքեան խնջոյս բռնաւորաբար կազմէ , և առաջնորդն վանահի և երկիւղի պարտաւորի գտանիլ առ նմա վասն շահելոյ զնա , յայնմանէ ընթացք բարեկորգ կառավարութեանն նուազիլ սկսանի , ուստի պարտաւորի հրաժարիլ յառաջնորդութենէ , և յամենայն ապրիլի յամի 1831 գնայ էջմիածին, ուրանօր պատուով պահեալ լինի ՚ի միաբանից . առյա ՚ի սէր Հայրենեաց վերադառնայ կրկին ՚ի Ջուղայ ՚ի 1842 , և քնակի

'ի վանին իբրև միաբան, պատուհաս յամենեցուն, կինդա-
զավարի ընաշխարհիկ վարուք. և վախճանի յ2 յունվարի
1853 ամի, և հանդիսապես ամփոփի յարևմտեան դրան սրբոյ
տաճարի վանին:

Տողանցէրն այսե.

Այստ հանգչի Սրբազան Եպարտետ
արք Եպիսկոպոսն, որ է լեալ առաջնորդ
վանիս: Հանգեաւ յ2 յունվարի 1853:

Յետ գնալոյ Եպարտետ առաջնորդի 'ի սուրբ Էջմիածին,
կարգի վերակացու վանին Յակոբոս գիտնական վարդապետ
յաջորդ նորա: Զեռնադրի սա 'ի փիլիպպոս եպիսկոպոս նը-
ուիրակէ սրբոյ Էջմիածնի 'ի Բուդմբայի յ3 յուլիսի 1813,
ըստ խնդրոյ ժողովրդոցն Բուդմբայու առանց գիտութեան
Ջուղայու վանից առաջնորդին, յայն սակս Յովհաննէս Առաջ-
նորդ զրկէ զիթուղթ մեղադրանաց առ փիլիպպոս եպիսկոպոսն
ասելով "գուցէ նոքա (հայոց հասարակութիւնն Բուդմբա-
"յու) չգիտէին զօրինաւոր պատկանն և զտեղի լինելու-
"թեանն, ապա մի թէ և դու չգիտէիր և գիտեմք որ տե-
"ղեակ եւս և հասու ամենից պայմանադրութեանց թէ ա-
"ռաջնոցն և թէ նորոց որ վասն այլոց վիճակին, այլ զի
"անփոյթ արարեր՝ արդարև զարմացաք, և յոյժ հեռի է
"'ի խոհեմութենէ քումէ": Կարգի նա նուիրակ հնդկաս-
տանի և արուեստաւորութեամբ կատարէ զայն գործ, առաքէ
սակս վանին զբազում յիշատակիս, և 'ի նուիրականն մուտ
եկեալ գումարաց զտասն հազար կումպանու ռուփիս զնէ յա-
ւանդի 'ի կառավարութեան ընկալաթու նազարէթայ սուրբ ե-
կեղեցւոյ, որոյ տարեկան տոկոսն է հիմնաւոր մուտք վանին
Ամենափրկչի: Ի 13 յուլիսի 1824 հասանէ 'ի Ջուղայ գարձ
արարեալ 'ի հնդկաստանէ, և մեծարի սակս իւրոյ գիտակա-
նութեան և արժանաւորութեանն: Սիրէր նա բնակիլ 'ի տան
իւրում, ուստի զժառանգութիւն անպակաս լինէր յաշտագս այնր
ընդ մէջ նորա և Առաջնորդին: Ի ժամանակս առաջնորդու-
թեանն խաչատրոյ երկրորդի, սակս 'ի տան իւրում անարդել

բնակելոյ լսանէ զվանքն Ամենափրկչի, և գիմէ 'ի Դուռնիկեան
վանս Լատինահայոց, խնդարկեցուցանելով զպարանոց իւր
ընդ լծով պապականութեան, յորում կեցեալ զամս հօգին
մեռաւ և թաղեցաւ 'ի հանգստարանին Ջուղայու:

Ի. Օ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Բ

Տէր Յովհաննէս եպիսկոպոս միաբան սրբոյ Էջմիածնի այր
կորովաբերտ և ժողովրդասէր. 'ի 12 նոյեմբերի 1832 ժամա-
նէ 'ի Ջուղայ: Նախ քան զհաստանելն նորա յաթոռ իւր յԱս-
պահան և 'ի Ջուղայ անկանի սղութիւն հացի և սով, սա
մարդասիրելով կարօտաւորաց Աղգի իւրում յետ ժամանելոյն
'ի Ջուղայ զնէ զգօրեան և զալիւր և առնելով հաց բաշխէ
առ ժամանակ ինչ կարօտաւորաց ազգին, որով բաղումք
յազգային աղքատաց պատսպարեալ ապրեցան 'ի սովամահ
լինելոյ: Յաւուրս սորա 'ի 1834 ամի Ֆաթհալիշահ արքայ
պարսից մեռանի յԱսպահան, սա իւրով քաջասրտութեամբ
ապահովութեամբ պահէ զՋուղայ յաւարառութենէ ան-
տերունչ ժամանակին: Կարգադրէ զհարկատուութիւնն Ջու-
ղայու, ոչ ևս թոյլ տալով կղերքոզ յափշտակողաց ծան-
րանալ 'ի վերայ ժողովրդեանն, ուստի թեթևանայ յոյժ
հարկն Ջուղայու: Կեցեալ սորա ժողովրդասէր կառավա-
րութեամբ՝ կարճէ 'ի կենաց 'ի 1836 ամի, և մարմինն նորա ըստ
կտակելոյ նորին առնուի 'ի հանգստարանին վարդապետաց
որ կայ 'ի հասարակաց հանգստարանին, զկտտագայ գամբա-
նագիրն ընդունելով:

Ի տօրա աւուրս միաբանք սրբոյ վանին էին Յակոբ վարդապետ և յաջորդ (որ էմուտ ընդ լծով պապականութեան ի 1841 ամին) Ստեփաննոս՝ գէորգ և Օհան վարդապետք: Յամի 1840, Անդրէաս վարդապետ Սարգսեան ի ամանէ Ձեռնադրի աբեղայ:

Ժ Ա.

ՅՈՎՀԱՆՆԷՍ · Գ

Տէր Յովհաննէս եպիսկոպոս Սուրենեան ղրիմեցի Ռուսաց ընչանակիր և սպարհ, գիտնական և քանագէտ, 14 օգոստոսի 1841 ամի կոնդակաւ Յովհաննէս կաթուղիկոսի Հաստատի Ա-ռաջնորդ, և ի 1842 ամի հասանէ ի Ջուղայ: Մեծամեծ յուսատուութեամբ խոստանայ զաղգօգուտ բարեկարգութիւնս հաստատել, այլ կամ ժամանակին անկարող կամ պատճառին կենաց նորա թողին զայն ամենայն խոստմունս նորա անկատար: Յամի 1843 հիմնեաց զդպրոց հոգևորական, որ սակս պակասութեան դրամոյ ոչ կարեցաւ պահել զշարունակութիւնն իւր՝ խոնարհեցաւ: Սա ունէր զբարեկամական հաղորդակցութիւն սիրոյ ընդ գերազանցեալ կոմս Մէդեմ պետապանին Ռուսաց որ ի Թէհրան, և միջնորդութեամբ նորին արժանացաւ կայսերական պարգևի ի 1846 ամի, որ էր ապնակէ փրկչական շուրջանակի ականակուռ: Սա գնեաց վասն վանին զտունն կոչեցեալ Բիւրէօնեանց կամ քահանայից Ղուկասենց՝ և անդ եբաց զդպրոցն հոգևորական, գնեաց և զայլ պին կոչեցեալ վախմի: Ի 1844 ամի ի Թէհրան գնացեալ՝ ստացաւ ի Թագաւորէն Մահմադշահէ զպարգևագիր ստացուածս Նալոյ զցորեան հարկի գեղջն Սանգիբարանայ՝ ցամս երից:

Ի տօրա աւուրս միաբանք սրբոյ վանին էին Յակոբ վարդապետ և յաջորդ (որ էմուտ ընդ լծով պապականութեան ի 1841 ամին) Ստեփաննոս՝ գէորգ և Օհան վարդապետք: Յամի 1840, Անդրէաս վարդապետ Սարգսեան ի ամանէ Ձեռնադրի աբեղայ:

Ժ Բ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ · Գ

Տէր Յովհաննէս եպիսկոպոս Սուրենեան ղրիմեցի Ռուսաց ընչանակիր և սպարհ, գիտնական և քանագէտ, 14 օգոստոսի 1841 ամի կոնդակաւ Յովհաննէս կաթուղիկոսի Հաստատի Ա-ռաջնորդ, և ի 1842 ամի հասանէ ի Ջուղայ: Մեծամեծ յուսատուութեամբ խոստանայ զաղգօգուտ բարեկարգութիւնս հաստատել, այլ կամ ժամանակին անկարող կամ պատճառին կենաց նորա թողին զայն ամենայն խոստմունս նորա անկատար: Յամի 1843 հիմնեաց զդպրոց հոգևորական, որ սակս պակասութեան դրամոյ ոչ կարեցաւ պահել զշարունակութիւնն իւր՝ խոնարհեցաւ: Սա ունէր զբարեկամական հաղորդակցութիւն սիրոյ ընդ գերազանցեալ կոմս Մէդեմ պետապանին Ռուսաց որ ի Թէհրան, և միջնորդութեամբ նորին արժանացաւ կայսերական պարգևի ի 1846 ամի, որ էր ապնակէ փրկչական շուրջանակի ականակուռ: Սա գնեաց վասն վանին զտունն կոչեցեալ Բիւրէօնեանց կամ քահանայից Ղուկասենց՝ և անդ եբաց զդպրոցն հոգևորական, գնեաց և զայլ պին կոչեցեալ վախմի: Ի 1844 ամի ի Թէհրան գնացեալ՝ ստացաւ ի Թագաւորէն Մահմադշահէ զպարգևագիր ստացուածս Նալոյ զցորեան հարկի գեղջն Սանգիբարանայ՝ ցամս երից:

Ի տօրա աւուրս միաբանք սրբոյ վանին էին Յակոբ վարդապետ և յաջորդ (որ էմուտ ընդ լծով պապականութեան ի 1841 ամին) Ստեփաննոս՝ գէորգ և Օհան վարդապետք: Յամի 1840, Անդրէաս վարդապետ Սարգսեան ի ամանէ Ձեռնադրի աբեղայ:

Ժ Ա.

ԽԱՉԱՏՈՒՐ · Ե

Տէր Խաչատուր եպիսկոպոս վաղարշապատցի յամի 1838 առաջնորդական կոնդակաւ հասանէ ի Ջուղայ: Ցաւուրս տո-րա ի 1841 ամի Մօնսիօ Բօռի գաղղիացի պապական հաւա-տով, գայ ի Ջուղայ և հիմնէ զդպրոց, ուրանօր ժողովեցան մանկունք հայոց: Յարեաւ խռովութիւն ընդ մէջ լուսաւո-չեան հայոց և պապականաց, և սա ոչ կարենալով խոհեմու-թեամբ վարել, զի գալով գիւրաւարձ ի բարկանալ՝ առանց առաջաւոր կշռադատութեան առնէր զոր առնէրն, ուստի հրամանաւ Սինովդին սրբոյ էջմիածնի, յամի 1842 վերադար-ձաւ ի սուրբ էջմիածինն, ոչինչ օգուտ ընծայելով վանին:

Ի վերջին ժամանակս կենաց իւրոց սակս Թուլուբեան ընդ երկար ժամանակ մնաց յանկողնի, և վախճանեցաւ ի 13 դեկտեմբերի 1848 ամի, և ամփոփեցաւ ի հիւսիսային գաւթի սրբոյ վանին ի շարս վախճանեալ Առաջնորդացն։ Ի սմանէ ձեռնադրեցաւ Գրիգոր տիրացուն Մկրտչեան երևանցի, և լինկալաւ ի վարդապետութեանն զԴէորգ անուն։

Այս է պապանգէր նորին։

Տապան նորուն քարձր Սրբազնութե Տէառն Յովհաննու աստիճանաւոր արք եպիսկոպոսի Սուրբ Նահատակացոյ և գերապատիւ և բարեջան Առաջնորդ սրբոյ վանացն Ամենափրկչի, որ և զկնի վեցամեայ առաջնորդութեանն իւրում հանգեաւ ի Տէր։

ի 13 դեկտեմբեր թիւն 1848 ամի։

Յետ վախճանելոյ նորին՝ կառավարութիւն վանին մնաց ընդ հոգաբարձութեամբ Ատուածատուր վարդապետի, և նորա ի 1849 ամի գնացեալ ի Թէհրան սակս պարտից վանացս, վախճանեցաւ անդ և թաղեցաւ ի մէջ եկեղեցւոյ Թադին Շահաբդօլազիմայ։ Զկնի վախճանելոյ նորին՝ կառավարութիւն վանին մնաց ի վերայ Անդրէաս վարդապետի, որ ըստ չափու կարողութեան իւրոյ անձնապէր լեալ կառավարեաց զվանքն և զժողովուրդն Ջուղայու մինչև ցհաստատութիւն Սրբազան թաղդէոս Առաջնորդի։ Նշանաւոր հաստատմունթիւն նորա առ ժողովուրդն եղև ի 1851 ամի ի ժամանակի զօրաւոր պահանջութեան, զի որչափ կարևոր էր վաստակեցաւ յօգուտ ժողովրդեանն։ Այլ կարճակեաց եղև զի յետ անցանելոյ վեցից՝ մինչ ընորհիւ Սրբազան թաղդէոս Առաջնորդի սկիզբն արարեալ էր վաթել ղկեանս խաղաղականս, վախճանեցաւ ի 16 հոկտեմբերի 1855 ամի, և թաղեցաւ յարևմտեան կողմն սրբոյ տաճարին։

ԺԹ.

ԹԱԴԴԷՈՍ

Յետ վախճանի Յովհաննու Սուրբնեան վանքն մնաց ի ներքոյ ճանրութեան հազար թումանաչափ պարտուց։ Թէ ներքին և թէ արտաքին վիճակ վանացն չէր ի բարւոք դրութեան, յայն սակս հաստարակութիւնն Ջուղայու յետ վախճանի Սուրբնեան Յովհաննու յամի 1849 խնդրամատոյց եղեն ի սուրբ Էջմիածին առ ժամանակ մի ոչ առաքել զոք առաջնորդ։ Այլ ըստ որում դժուարին լինէր առանց Առաջնորդի պահել զկառավարութիւն վանին և ժողովրդեան, վասն որոյ ժողովուրդք Ջուղայու յամի 1850 խնդրեցին միաբանգամ Առաջնորդ։ Ի Տէր հանգուցեալ վեհափառ Ներսէս տօնելի կաթուղիկոսն զբազմափորձ հաւատարիմն իւր զՏէր Թադդէոս վարդապետն Բէկնազարեան կոչելով յաստիճան եպիսկոպոսութեան, ի 1851 ամի նշանակեաց վիճակաւոր Ջուղայու, որոյ օրհնանութեր կանդակաւն յ 3 յունիսի 1851 ամի ժամանեցաւ նա ի վանքն Ամենափրկչի։ Բազում եղեն օգտակար արդիւնք խոհական կառավարութեան տորա թէ վասն ժողովրդեան թէ վասն վանին՝ և թէ սակս եկեղեցեաց։ Ուսումի հաստարակութիւն Ջուղայու ի ցոյց երախտագիտութեան գրեցին զնամակ բաւարարութեան իւրեանց զինանէ յ 30 Սեպտեմբերի 1857 ամի առ Սրբազան Սիւնհոդոսն սրբոյ Էջմիածնի, ուրանօր հաւանեցաւ արարին յիշատակութիւն զործոց խոհական կառավարութեան նորին զոր ի կարգի պատմութեանս ի դէպ համարիմ նշանակել։

Ղուսաւորչական Հայոց Սրբազան Սիւնհոդոսին արդյ եմքեանի :

Ի հոգևորականաց և ի ժողովրդականաց Հայոց ընտրելոց ի Ջուղայ :

Երախտագիտական յայտարարութիւն :

Իթէ երախտագիտութիւնն է ճանաչել զերախտիս բարերարաց և զվաստակս բարեջան վաստակաւորաց՝ հանդերձ գոհացողութեամբ, ուրեմն հասարակութեան մեր պարտաւորութիւն է ընորհակալս բերանով և խորին երախտագիտական զգացմամբ խոստովանիլ զբազմապիսի բարեշնորհութիւնս բարձր Սրբազան Տէր Թադէոս Արք եպիսկոպոս ամենապատիւ Առաջնորդի մերոյ, որոյ հօթնամեայ հոգևական առաջնորդութեամբ և հոգևական վերակացութեամբ ոչ սակաւ բարեշաւոր հանդիսացաւ Ջուղայ, ընդ որում և ժողովրդիք Ամենափրկչի վանաց հասարակաբար :

Իրկնցս (1) յայտնեալ եմք ջերմ երախտագիտութեամբ զմեր ամենայնեան սրտից բաւականութիւն զկառավարութենէ Նորին Բարձր Սրբազնութեան առ հոգևորս և Սրբազնակատար Հայրապետն մեր Տէր Ներսէս, մատուցանելով զանբաւ շնորհակալութիւնս մեր յաղագս արժանի կացուցանելոյ զմեզ նուաստս հասարակութիւն՝ այսպիսւոյ ժողովրդապետի Առաջնորդի. և արդ՝ հարկաւոր համարեցաք Սրբազան Սիւնհոդոսիդ յայտնի առնել զայն երախտագէտ ըզգացմունս մեր՝ հանդերձ հաստատուն նկարագրութեամբ բարեպատուղ արգասեաց խոհական առաջնորդութեանն Նորին, յընթացս հօթնամեայ ժամանակի լինելութեանն Նորա ի Ջուղայ :

Յամի 1851 ի 3 յունիսի ի ժամանելն Նորին Սրբազնութեան ի Ջուղայ, եղիտ զհասարակութիւն տիրապայ և գա

ւառական Հայոց ի պատճառս զօրապահանջութեան ի վերջին աղմկեալ վիճակի և յուսահատութեան, զվանքն Ամենափրկչի ի ներքոյ ծանրութեան հազար թուման պարտուց և աղքատ անշքութեան, զգերապատիւ Հնդկահայոյն հուպ ընդ հուպ օտարանալոյ ի վանաց (2) և զգաւառական ժողովուրդն խորթացեալ ի ժողովրդական պարտաւորութենէ իւրեանց :

Կայաւ Նորին Սրբազնութիւնն զընթացս Առաջնորդական կառավարութեանն իւրոյ ամենայն շրջահայեաց խոհեմամտութեամբ, որով վերոյիշեալ Հապաղեալ պարագայք պարզեցան և բարեկարգեցան ըստ կետագայ յայտարարութեանցն :

Ա- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՌԷ ԷՐԵԼ ԵՒՐԷ :

1 . Թէ ըստ յաճախակի բարեջանութեանց՝ խնդրարկութեանց և միջնորդութեանն Նորին Սրբազնութեան, և թէ ըստ յատուկ խնամոյն Աստուծոյ և ըստ քաղցր ողորմածութեան վերհսկաւոր Շահի, Հայ ժողովուրդք Պարսկաստանի ազատութիւն գտին ի զօրապահանջութենէ, որով և աղատութիւն ստացան ի կորստենէ և յեղծմանէ իւրեանց :

2 . Ըստ տնօրէնութեան Նորին Սրբազնութեան, յամի 1852 . և հրամանաւ Տէրութեան Նոր ի նորոյ չափեցան կալուածք Ջուղայու, որով եղև բարձումն ջրկանաց, և հանդիսանալն արդարութեան ի մասին հաւասարաբաշխ հարկատուութեան ամենեցուն :

3 . Ի նմին 1852 ամի , եբարձ զճախսարարութիւն տօնակատարութեան խնջոյից , որով և օգուտ ընձեռեաց հասարակութեանն Ջուղայու : Ըստ փոքրն հաշուելոյ տարին ց500 թուման :

4 . Ջափաւորեաց զճախսարարութիւն վանն հարանեաց և յուղարկաւորութեան :

5 . Ի գահանայս արճարճուց զսէր կանոնապատութեան ըստ վաղնջուց եկեղեցական բարեկարգութեանց : Եկեղեցեաց՝

կարգելով զհաւատարիմ երեսփոխանս, կառավարութեան նոցին ետ զնոր ինն կերպարան, որով օր ըստ օրէ բաց ի վայելչութեանցն, յառաջադիմութեան կողմն քայլին ըստ դրամական կարողութեան մասին: Եւս և վայելչացոյց զժամերգութեանն երգոց եւ ժամատեանութիւնս ըստ համբերաբար պատատուութեանն իւրոյ:

6. Յերից զհեղինակութիւն ոմանց այլազգի բռնաւորաց և սիկարեան հարստահարողաց, որք ներհակ բարեհաճութեան բարձրագոյն Տէրութեանն պարսից, սակս անտերունչ լինելոյ Հայոց՝ նեղէին զնոսա նախ քան զնորին Սրբազնութեանն գալուստ յառաջնորդութիւն տեղոյս:

7. Զնչից զազգերութիւնս պապական հոգևորականաց, որք ունէին զայն բաւական ներգործութեամբ ի վերայ ժողովրդեանն Հայոց՝ նախ քան զնորին մուտ գործելն ի Ջուղայ:

8. Յամի 1854 յունուարի ի 9 գրտագին եղանակի ձմերան գնաց ի Թէհրան ի բարձր Դուռն վեհափառ Շահի, և յորժամանակ՝ յօգուտ ազգի անձնընծայութեամբ աշխատելով ի գլուխս նախարարաց Տէրութեանն, ընկալաւ հրովարտակօք, նախ ի հարկատուութենէն ի բաց բառնալի պարգև վասն Ջուղայեցւոց՝ տարեկան 150 Թուման յաղագս երից ամաց. երկրորդ՝ թեթևութիւն սակս հարկի պատառականացն Հայոց Փէրնու նահանգի տարեկան ց 300 Թուման: Երրորդ՝ հաստատել հետ զնշանաւորն ի նախարարաց Տէրութեան զբարձրապատիւ Միրզայ Զէյնէլաբդին Մէլիք Փըլթաքն՝ վերակացու կամ Ռատիկան վասն Հայոց, որով ամենայն հանդիսիք Հայ ժողովրդեանն Պարսկաստանի դիւրաւ վերջանային: Չորրորդ՝ ընկալաւ զբարձր հրամանն վեհափառ Շահին յաղագս ըստ քաղաքական արտօնութեանց կամ հարկատուութեան մասին հաւասար լինելոյ ժողովրդեանն Հայոց Պարսկաստանի ընդ տեղական ժողովրդեանն Պարսից. և հինգերորդ՝ աղատութիւն քրիստոնեայ ճանապարհորդից ի տրոց առ բաժառուս ճանապարհաց, որպէս էր սովորութիւն վասն հայ ուղևորաց նախ քան զայն:

9. Ի ձեռն յաջողակի ներքարկութեանց իւրոց, և բարե-

բար օժանդակութեամբ Պարոն Մարգարայ Սուքիասեան, և բարեպաշտութեամբ պերճացեալ Տիկին Մարիամու Յակոբ Ցարուքիւնեան (3) Ջուղայեցւոց եղելոց ի սահմանս Ջաւային՝ հաստատեաց զերկու Դպրոցս ի Ջուղայ, յորս ուսանին արդ մանկունք իբրև հարիւր և չիսուն, և ունեցուլ զնշանաւոր վերատեսչութիւն ի վերայ նոցա՝ ի բարեկարգութեան քայլին ընթացք կառավարութեան նոցին:

10. Ինամաճու եղև իրաւանց և պատից բաղումք որբոց և այրեաց, պաշտպանողական իրաւասիրութեամբ ոչ թոյլ տալով բռանց յափշտակել զիրաւունս նոցա:

11. Յամի 1856 սեպտեմբ զհրովարտակս ի վեհափառ Շահէն (4), զի ամենայն Հայ վաճառականք ընդհանրապէս և Պարոնայք եղիազար Գ. Գասպարեան, և Պազար Յօհաննեան մանաւանդ պէս տացեն զհարկս սակս վաճառաց իւրեանց՝ հաւասար հարկատուութեանն Պարսից վաճառականաց:

12. Ի Նոյեմբ 1857 ամի ի ժամանակս պատերազմի Անգղիացւոց ընդ Պարսից՝ երաշխաւոր լինելով սակս ժողովրդեան Հայոց Ջուղայու և Շիրազ քաղաքի ապահովացոյց զկառավարութիւնն այնոցիկ քաղաքաց, թէ Հայք չեն անհարազատ Տէրութեանն որում հպատակեալ ժողովուրդք են, որով և զերծ պահեաց զնոսա ի մեծամեծ և ի մօտալուտ փորձանաց:

Վանական Բարեկարգութիւն:

1. Պատեցաւ վանքն ի ծանրութենէ պարտուց (5):

2. Տնտեսական բարեկարգութիւն հանդերձ պատշաճաւորն վայելչութեամբ սկզբնաւորեցաւ և շարունակեցաւ ի վանքին:

3. Կանեաց զերկու այգիս վասն վանացն, որոց տարածութիւնն է 10 ջրիք (իւրաքանչիւր ջրիքն է հազար գազ քա-

ռակուսի) և մի կտոր կալուածք՝ երկու ջրիք. և յամի 1856 շինեաց զառատատուն մի :

4 . Նորոգեաց զշինութիւնս վանացն ըստ ներքին և ըստ արտաքին պարագայից շքեղացուցանելով զվանքն զլեռվին (6) :

5 . Փոքր՛ի շատէ նորոգեաց և ձոխացոյց զեկեղեցական գարդս և զգեստս վանին ստէպ ստէպ խնդրատրութեամբ, և նորացոյց զՀացեաւ սփռոցն սրբոյ տաճարին :

6 , Նորոգեաց զվանքական տունն Սիմէոնեանց կոչեցեալ, և մեծ ծախիւք հաստատիմն շինեաց զգետատար որմն նորաշէն վանքական այգւոյ , և արդէն իսկ՛ի մէյլանն կոչեցեալ հրապարակին շինէ զնանութիս և զկրպակս :

7 . Յետս ստացաւ զտուն մի վանացն՝ զոր՛ի վաղուց հետէ տիրեալ էին այլք , և զկալուածս եկեղեցւոյն Շահվէլեանց որ՛ի բազում ամաց հետէ էր յանիրաւի տիրապետութեան այլազգւոյ միւսի :

8 . Հիմնաւորեաց զառաջարկութիւն վանքական կալուածոց :

9 . Ովանքն տրամ աղբիւր մինչ արութեան կարօտելոց և չքաւորաց Աշխի :

10 . Յամի 1856 առաքեաց զնուիրակ՛ի Հնդկաստան և՛ի Ջաւայ , որուվ բազում օգտակարութիւնք եղեն վանն վանին՝ Ջուղայու՝ աղքատաց և Դպրոցաց (7) :

11 . Ընդար քաջ վերատեսչութիւն յաղագս խնամատարութեան վանքական այգեաց ըստ մշակութեան մասին , ըստուվ օր ըստ օրէ այգիք ճաշկեալ յառաջանան :

12 . Վերոյ նշանակեալ բարեկարգութեամբք յաւելաւ զշուք և զփառս վանին :

Գառատական ծաղկեպսակ :

1 . Կարգեաց՛ի 1852 ամի վանն իբրաքանչիւր գառատաց զգործակատար փահանայս՝ որք եղեն բարեկարգիչք եկեղեցւոց , փահանայից և ժողովրդոց ըստ քրիստոնէական պարտաւորութեանց հանապազման :

2 . Յորդորեաց զնոսա քանալ զԴպրոցս , որպէս բացեալ եղէ Դպրոց մի յամի 1852 ՛ի Բաղմավէպ ՛ի գառատուն փեսպազայ , և Դպրոց մի ՛ի Նամակերդ գեղջ ՛ի գառատուն՝ փերիսու :

3 . Ի 1851 ամի արար զնահատութիւն և զհաշտութիւն ՛ի միջ գիւղականաց Նամակերդայ՝ որք յերկուս ձեղքեալ գեղջական ոխակալութեամբ թշնամի էին ընդ միմեանս, որոց մարտ արիւնահեղ էր անպակաս , և 10 մարդիկ յերկուստեք զոհ էին եղեալ միմեանց քինախնդրութեան , որոց դատ և բողոք ոչ պակասէր յաւուրնէ յաւուր , և որպէս յերկուց քարանց աղբրեայ հոսէին կաշառք և տուգանք , և ինքեանք զմիմեանս կեղեքելով՝ մատուրեալ էին զնաջինջ բառնալ զյիշատակս իրերաց : Յօրէ զհաշտութիւնն արկանելոյ մինչև ցարդ ոչ է եղեալ չշուունջ լինչ տարաձայնութեան ՛ի նոսա , այլ որպէս ՛ի լեզէօնէն ազատեալ և զգաստացեալ մարդիկ կան և վարին ընդ միմեանս սիրովք Ըստուծոյ հանդերձ ընկերական խաղաղասիրութեամբ :

4 . Ջնջեաց զհերձնակութիւն մանաւոր իշխանաց և խաներից գառատաց՝ որք նախ քան զժամանակ առաջնորդութեան Նորին Սրբազնութեան կեղեքէին զնոսա և նեղէին անպատճառ, ուստի անդորրացաւ գառատական ժողովուրդն ՛ի տարապարտուց հատուցմանէ տուժից՝ տուգանաց և ՛ի բռնադատեալ պարգևատուութենէ կամ ՛ի հիւրընկալութենէ :

5 . Կարճեաց զշահախնդրութիւն գառատապետաց , որք քան զկանոնաւորեալն տուրս՝ ակնածութիւն ունեցան ՛ի պաշտպանողական խնամոց՝ պահանջել կամ ստանալ զանկանոնաւոր պահանջ ինչս :

6 . Ի գառատին Ջարմահալայ , յամի 1856, առաջնորդողք ոմանք բախտաւոր կոչեցեալք սպանին զհերետանութեամբ Յարութիւն և զհետանութեամբ Աբէլ զիշխանան Ի֊ետասիան գեղջ , ուրոց տարապարտուց արեանն վրէժ խնդրութեամբ ստացաւ զհրաման ՛ի ժողովրդականաց ցերութենէն՝ յաղագս կալանաւորելոյ զնոսա , որոյ աղագաւ զօրք առաքեցան և քակե֊

ցան տունք նոցա, իսկ նոքա տակաւին հալածական աստ և անդ վարանին, ի զարմանս ամենայն այլազգի լսողաց, թէ ի վչէջ արեան երկուց հայոց և լինին այսքան հետապնդութիւն վրէժխնդրութեան։

7. Յօտակարագոյն կառավարութենից աստի, զաւառական ժողովուրդք աղաւաւթիւն ստացան ի նեղչաց և ի հալածչաց իւրեանց, ծանեան զվանքն Ամենափրկչի իբրև իւրեանց հոգևոր վիճակ գիտացին զժողովրդական պարտաւորութիւնս իւրեանց առ վանքն, որով և աղբիւրք վանքական տրոց նոցա աճիլ սկսաւ։

Հնդկահայ,

Գերապատիւ Հնդկահայք ի լրոյ ամենեցուն ծանուցեալ թարեկարգութենից աստի զարթուցին զհայրենասիրական ըղձս իւրեանց, զարձուցին առ Ջուղայ և առ վանքն Ամենափրկչի զմարդասիրական մտադրութիւնս իւրեանց, բազմաւք շարժեալ ի յորդորական գրութենից նորին Սրբազնութեան արարին և առնեն զբարեգործութիւնս ազգասիրութեան, և հանին ի մտաց զօտարանալն ի վանից Ամենափրկչի։ Իսկ ամենաբարեպաշտ մարգարեալք քնակեալք ի Ջուղայ սերտ լինին շաղկապօք գրաւեցան ի սէր նորին Սրբազնութեան, առաւել և առաւել երախտագիտութեամբ ծանեան զնորա ազգասիրութիւն երկոցն զյարգ, և ինքեանք առաւել և առաւել ջերմացեալ յեռանդն ժողովրդական բարեպաշտութեան և ջերմեռանդութեան իւրեանց, բաղդատեր համարելով զինքեանս զի վիճակեցան այսպիսի բարեխնամ Առաջնորդի։

Արդ արժանի է կշռադատութեան թէ որչափ ծանրակչիռ բարիք ծագեցան ի խոհեմ կառավարութենէ Ամենապատիւ Արհեպն Թադէոսի, և որչափ բարեւոքեցաւ վիճակ ժողովրդականաց Թեմի նորա, ուստի մտադրութեան Սրբազան Սինհոդոսիդ արժանի է առնել զխորհրդածութիւնս հարկաւոր՝ ի պահել զվաստակս նորա Ատուածահաճոյ,

ի պարծանս մեր, և Թերևս յօգուտ ամենայն Հայազգի ժողովրդականաց։

Ի Ջուղայ, յամի փրկչական 1857
յ30 Սեպտեմբերի։

Սովին բազմարդիւն կառավարութեամբ շարունակէ զառաջնորդական պաշտօն, ակնածելի հանդիսացեալ յամենայն այլազգի իշխանաւորաց, պատուեալ յամենայն ազգասիրաց և նախանձելի լեալ յամենայն յաչաղկոտաց։

Յամի 1857, յամենայն փետրվարի արժանացաւ ստանալ յօգուտափառ կայսերէն Ռուսաց զվլադիմերի երրորդ աստիճանի խաչ լանջակիր որով առաւել և ընդարձակեցաւ վարկ նորա և յարգ ի ժողովրդեան այլազգեաց։ Տէր Աստուած պահեացէ զնա ընդ երկայն աւուրս ի մխիթարութիւն հօտի իւրոյ և ժողովրդեանն։ Ի սորա աւուրս Օհան Ռուբվարցի և Աղաբէկաս վարդապետ Ջուղայեցի էին միաբանք սրբոյ վանիս, և երկոքին և՛ս ընկալան զվախճան կենաց, առաջինն յՁ փետրվարի և երկրորդն ի 16 հոկտեմբերի 1855 ամի։ Յամի 1856 ըստ խնդրոյ առաջնորդին եկն յԷջմիածնէ Յովհաննէս վարդապետն Տէր Յարութիւնեան Տաթևացի, այլ անընտել գոլով նորա վարդապետական խցակեցութեան՝ անհանդուրժելի եղև նմա մնալ ի վանին Ամենափրկչի, վասնորոյ յետ միոյ ամի ի 1857 վերադարձաւ ի սուրբ Էջմիածին։ Աւետիք և Աբրահամ Ջուղայեցիք գրաւոր խնդրագրութեամբ և խոստմամբ յօժարեցան մտանել ի վանքն Ամենափրկչի և լինել վանական, վասնորոյ յետ իբրև երկու ամաց փորձառութեան հաստատուն գտանելով զնոսա յուխտին իւրեանց, յամի 1857 ընդունեցաւ նոցա աստիճան Սարկաւագութեան և հանդերձ կրօնաւորութեան, որոց Տէր արժանի արասցէ լինել հաւատարիմ պաշտօնեայ Ատուածոյ ի տառապին իւրում։

(1)· Աւօլքի անգամ երեցա- յամի 1852, ե երկրորդ անգամ յա- մի 1854 :

(2)· Եկեղեցական կալ կամա- նաւորութեայ Հայոց եկեղեցո- յի 1 մարչ 1851 գրե սա- կաւարութեան վանաց Ամենափրկչի ‘‘ մատուռն (կաւարութեան վանաց) կհանդերձեան իւրհրդոյ օրուց ‘‘ յաւիտեան ծողովրդոց , սա ’ի կաւիմայ ‘‘ զԱմա- Աւօլնորդութեան ե պարտաւորել էնդեան զեպիսկոպոս ոմն ‘‘ աշար ե անկախ . . . . ’’ :

(3)· Պարտ Մարգար Սուրէաեան ծնեալ ’ի Ջուղայ , ’ի պղայու- թեան հաւակին պիմ ’ի Ջուղայ , ուրանօր ըստ Ջուղայեցի ազգրդ- թեան էրոյ ե ազնուականութեան էրոյ էազգէ հանդեպելով օր ըստ օրէ յառաջադիմութեան հոգին հայրեաց , ե ամուսնացաւ զեպիսկոպոսած գէորգին որ հոչէ գառատ Սուրբկիպոս , որոյ հալածած ե ծողովրդ- դ են ընդ էզգանութեամբ նորին , ե նոքա գառատապետական էզգանութեամբ ոչ միայն զհալածանսն ամրէնա ծառանգէ էին էրատուն է- բ , այլ ե գործակցութեամբ զծողովրդդ այր գառատին հաւատարէ : Ունի նա եաննդն ուսումնասիրութեան, ե սիրելի է նմա պարապեցուցանել զծա- մանակ է- բ ’ի գրատարական աշխատասիրութեանս : Նոյնպէս եանդրադ է ’ի նմա սէր Աղգին ե Հայրենեաց , վանորոյ ամրին գործէան օգնականու- թեամբ հաւատացաւ յամի 1853 ե շարունակէ գործոյն որ ’ի գաւառն ուրբ Մինասայ էկեղեցոյ :

Տիկին Մարիամ Յակոբ Յարութեանեան ծնեալ ’ի Ջուղայ յերկան- քաղաք ’ի 1781 ամի՝ ընդ էսարէպղատութեամբ հնձահոմբաւեալ օրէորդ Թամար Մանուկեան չեան էրոյ (որ ծնեալ է ’ի Ջուղայ ’ի 1785 ամի) ’ի հաւակի մանկութեան գնաց ’ի Հնդկաստան : Ուղէսյր նոցա Աղայ գէորգ Մանուկեան ծնեալ ’ի Ջուղայ ե գաղթեալ ’ի Հնդկաստան հան- գեպանայ էրատուն վճաւական ե հաստատուն հնձահոմբաւեալ էրկու էրկու հարս վերայ չէզաւ՝ ծառանգեցին զերկու հան ապագաածոց նորա ե հաս հան ի մանկապարեցա- յեզէօք որդիս նորա :

Ցեպ ծառանգելոյ նոցա զհնձահոմբ հարստութիւնս եղէօք էր- քեանց , եղեն հիմնարկութեան աղէէր աղէտյին հարօրելոյ ե չտարոյ , ինչպեան ապրելով ըստ աղքատին , ե ոչ սիրելով զերկրեան հնձահոմբ կամ զկեանս հանգստեան, էրկու հիանալի հետևողութեան, թամա-

հեն հետևվ ցմահ ’ի հաստատեցութեան նշանաւոր առաքինութեամբ . ե Մարիամ օրիորդ ամուսնանալով ընդ ազգ Յակոբայ Յարութեան առանց ունելոյ զգաստանգ : Բայց ապրեցաւ եղեն առաջ ազգային էրկրագործ , զի եկեղեցւոյ ջանալոյ ’ի բաղմ ժամ վայելեցին զնորա շնորհ առատացեան , ե բաղմ չափ ե ազգապ հիմնարկեան նո- րօք ինչ ’ի հետապ ’ի ձեռն քանդրագրութեանց ե ինչ անձամբ ապրատ- նելով ’ի գիրութեան նոցա :

Նշանաւորն ’ի հնձագործութեան նոցա , եղեն հաստատել զվարժա- պան ազգային ’ի Բնաւոյ ջրան հաստոյ առաջ հնձելով առաջ պան վարժարանին , ե զհարկ ջաղաց առաջ հնձելով յանուն նորա էրկ- պրամատելոյ վան մշտահաստատ շարունակութեան . էրկրորդ հնձագոր- ծութեան նոցա եղեն յամի 1853 հաստատել զդպրոց մի ’ի Ջուղայ, յա- նուն որոյ որոշեցին զկարմար ’ի ձորակին էրեանց՝ զի Դպրոցն շարունա- կեցէ հաստատութեամբ ե մշտնջենաւորապէս : Թաղհին վերջացաւ- ցա- ’ի 1857 ամի . եսկ Մարիամ հնայ կենդանի գեղեցիկ օրինակ լինելով էրեսպաշտութեան , որ որշափ ’ի էրեսրերել է առաջ , այնշափ էսոր- շէ ’ի գառաց էրեանց ձգհմարիտ հաստատել առեսարանական վարդապե- տութեանն , որոյ զկեանս Տէր Աստուած ընդ երկայն առնէ որացէ :

(4)· Օրինակ սոյն հրովարտակաց կայ ’ի պրակ վճռաւորհանութեան :

(5)· Ի գառնարէ պարտականութեանց վանին ազգայ Կաթողիկէ Գր- ըիգորեան Կաստաքեանց պղտեցաւ ’ի 1851 ամի յամսեանն յունիսի վճռ- ուեաց զ540 ռուբլոյ , ե ապարեաց զվճռեալն կալուածան ’ի գրաստը- րութենեն յորում կայր , այլ ըստ որում ըստ կամարդ Ազգային Թաղ- ուեաց Աստղնորդին՝ նորին պայծառացութեան հնձել դիւրեր Իսանել Դօլղորմովի Դեսպան Ռուսաց հեղնորդեալ առ Օսմանեան Ռուսաց՝ ընկալաւ ’ի նմանէ պարգեւ յանուն վանին Ամենափրկչի զ800 ռու- բլի հաստատուն . ազգայ Կարապետ Սաստաքեանց պատրաստ ’ի գառնարդ անգամ զվճռեալ 540 ռուբլոյն , ե ձեռնարկեալ ռուբլի 540 ռուբլոյ , ե ձեռնարկեալ ռուբլի զվճռեալ ռուբլոյն վանական պարտուց վճռութեան նորին Սրբազան գառնարդ : Ուսկ ղեկավարդն վանական պարտուց վճռութեան նորին Սրբազան նորութեան յանձնական գառնարդ էրոյ , հնձել վանական արդիւնք վճռ- ուեցեն նմա ղպարտան :

(6)· (Տես ’ի գլուխ Ա, յօդուած Ա): Ցաղագս այնպէս նորա- գառնութեանդն եղելոյ ’ի ժամանակս առաջնորդութեան նորին, ’ի ձեռնարկ- հետևողին պրան արբոյ պատճառին գրեցա- ալ արձանագրութեան « Ցան

«Երկրորդ 1857 ի ժամանակս առաջնորդութեան Թադէոս եպիս-
կոպոսի Հոգոյ Նորոգչեցւոյ գիտելի» եւ օրհնեալ պապիկ էնէղեցոյն։

(7)· Երկու նշանաւոր օգնական եղեն ի նորոգութենէն Սբ. Խչոյն Տէր Մարտիրոս Խալխէր Աւագ Քահանայ Տէր Յովհէնէան, նախ՝ պէտ առաքել ևս Երմոյոյ ղեր Ճշմարիտ հայրենասիրացն Հայոց Ջուղայեցւոց որ ի Ջուղայ՝ առ Ալքն և առ Հայրենիս, և երկրորդ՝ պնդուբակեան արդեամբ Ջուղայի գնեցուս մրերանոց մի ի Բիւրեայ, որ յաղագս վանին էերթ արդիւնս հերկ հարիւր առուիս Ջուղա առ ամն։

ՅՕԳ· Գ·

Եպիսկոպոսի և արքունական Առաջնորդաց Ամենափրկչեան վանք և հռչակ նոցա։

Ա· Առաջնորդք Ջուղայու ի սկզբանէ անտի մինչև ցարդ կարգեալ եղեն և առաքեցան ի սուրբ Էջմիածնէ կոնդակաւ վեհափառ կաթուղիկոսին (1)· վանորոյ վանքն Ամենափրկչի ուղղակի կախումն ունի ըստ հոգևոր մասին ի սուրբ Էջմիածնէ։ Առաջնորդն Ջուղայու ոչ միայն ըստ հոգևոր մասին հանաչի պետ և իշխան ժողովրդեան Թեմի իւրոյ, այլ և ըստ երկրաւոր գործոց և քաղաքական իրողութեանց մասին յաւելեալ այլազգի իշխանաւորաց Թէ ի հոգևորականաց և Թէ ի նախարարաց հանաչի և յարգի իբրև ազգապետ և Հայրապետն դատաւոր ժողովրդեան Հայոց Պարսկաստանի (2)։ Յետ հասանելոյ վեհափառ Առաջնորդին Ջուղայու ի Թէհրան ի Թագաւորանիստ քաղաք Պարսից՝ տուեալ լինի յայտարարութիւն Տէրութեան զգալոտնէ նորա, և վեհափառ Տէրութիւնն տայ նմա զհրովարտակ հաստատելով զվիճակ-

կաւորութիւն նորա ի վերայ ժողովրդեանն Հայոց Պարսկաստանի, և շնորհէ նմա զայն ամենայն արտօնութիւնս և իշխանութիւնս զորս ունեցեալ են նախորդք նորա (3)։ Ի հաստանիլ նորա նովին հրովարտակաւ ի վանքն Ամենափրկչի, քաղաքապետն Սպահանայ տայ զնոր հրամանագիր համաձայն իմաստից Թագաւորական հրովարտակին, որով հաստատի և հրատարակի իշխանութիւն Առաջնորդին ի վերայ ժողովրդեանն Հայոց Պարսկաստանի իբրև Ծայրագոյն ազգապետ և դատաւորի Թէ ըստ հոգևոր և Թէ ըստ քաղաքական մասին։

Բ· Յհօգին և տասներորդ և յոթի և տասներորդ դարուս կային երևելի քահանայարք ի Ջուղայ, որք ըստ իշխանութեան իւրեանց կառավարէին զքաղաքական և դերկրաւոր գործս ժողովրդեան. իսկ ի դէպս երևելիս կարօտէին օգնականութեան Առաջնորդի։

Իսկ յետին և տասներորդ դարուն նուազեցաւ և դոգջիր անհետացաւ իշխանութիւնն քահանայարաց, վասնորոյ աճ գործք ժողովրդեան Հայոց Թէ հոգևոր և Թէ քաղաքական ձանրացան ի վերայ Առաջնորդաց։ Ժողովուրդք ի գալ նեղութեանց ինչ և հարստահարութեանց դիմեն ի վանս և ողբք բարձեալ առ Առաջնորդն խնդրեն զօգնութիւն նորա։ Վասնորոյ զօր հանապազ ոչ պակասին ի վանից բողոքարկութք, և ի պատճառէ անտի անպակաս է գլխացաւութիւն Առաջնորդին։ Երջանկութիւն և ապերջանկութիւն ժողովրդեանն Հայոց Պարսկաստանի կախ զառաջնորդէն, զի եթէ լցեալ Առաջնորդն ժողովրդասէր և արիասյան պաշտպանող իրաւանց ժողովրդեանն, առանց Թոյլ տալոյ զրկանաց և անիրաւութեանն տիրելոյ նոցա՝ անդորրանայ ժողովուրդն, որպէս անդորրացեալ կայ յայսմ ժամանակի ընդհանուր հզօր պաշտպանութեանցն ներկայ Սրբազան Առաջնորդի։ Իսկ եթէ Առաջնորդն անհնամ լինի բողոքանաց և խնդրոց ժողովրդեան բռունք յափշտակեն զերաւունս նոցա և զկանք ձանրանան ի վերայ նոցա որով կորուսանեն զանդորրութիւն և զերջանկութիւն քաղաքական վիճակի իւրեանց։ Նոյնպէս ամենայն պատ և զանգատանք ժողովրդոց զնրութեց մատուցեալ լինին

յատեան Առաջնորդին, և նորին իրաւազատութեամբ վերջաւորի առարկայն: Եթէ ոմանք ի ժողովրդոց անլուր հրամանի և վճռոյ առաջնորդին լինելով՝ դիմեն յատեանս քաղաքական դենպետաց, դարձեալ լինի ի նոցանէ հարցումն առ Առաջնորդն յաղագս իրաւանց դատին, և գրեթէ ըստ կամաց Առաջնորդին վերջաւորի առարկայն: Ցերկու բողոքաւորաց անշուշտ մինն լինելոց է իրաւացի և միւսն անիրաւօղ, ուստի Առաջնորդքյորոշելն զիրաւունս՝ ստանան զանբաւականութիւն մէկ կողման:

Այսմօրոյ ի ժողովրդեանն խօսելոյ զԱռաջնորդէն զաջուձախ համբաւս գլխաւորապէս ի պատճառէ աստի ունի գծագրումն:

Ի նախկին ժամանակս եղեալ է ի վանին փայտ և գեւրան, զի որք ոչ լուծիցեն ունկամբ՝ լուծիցեն թիկամբ, և կայր սօսկ «մի Յուդայի աւել», կոչեցեալ, առ որ կապելով զյանցաւորսն գանէին, այլ ի սոյն ժամանակի ոչ նոյն սօսկ կայ և ոչ նոյն գատողութիւն, զի բռնութիւն կամ մարմնաւոր գատողութիւն գանից հեռացեալ է այժմ ի միջոյ վանից:

Ք. Ծամենայն ճախս նախկին Առաջնորդաց հոգայր վանքն (4). և ո՛և իցէ հասոյթք մատանէին ի հաշիւ վանին. որոշեալ արդիւնք առաջնորդացն կոչի գաւազանապտուղ:

Իսկ ներկայ Առաջնորդ Սրբազան Թադէոս արք եպիսկոպոսն կարգադրեաց զի անձնական ծախք իւր (բաց յուտեստեացն) եղիցին ի քսակէ իւրմէ, և արդիւնքն որոշեալք ըստ կանոնաց վանն Առաջնորդաց՝ վճարեսցեն զայն ծախս: Հասոյք որոշեալք յանուն Առաջնորդի են՝ պսակահաս կամ մօհրանայ՝ դիւզարդք ննջեցելոց՝ հոգեբաժին և առանձին տուրք կամ պարգևք բարեպաշտից: Ի վախճանիլ Առաջնորդին ըստ նախկին սովորութեանն՝ ամենայն դոյք նորա և ստացուածք լինէին վանաց (5) և Առաջնորդն չունէր իշխանութիւն կտակելոյ ընտանեաց իւրոց զստացուածս իւր: Իսկ արդ համաձայն կայսերական կարգադրութեանն լինի Թեյլոտութիւն (եթէ ի կենդանութեան իւրում հաստատեացէ Առաջնորդն զկտակ կանոնաւոր) նշանակել ի նմա զոր

ամենաւոր պարգեւս յանուն իւրոց ընտանեաց կամ հաւատարմաց. իսկ մեծ մասն դարձեալ ունի հատանել վանին: Որպէս վանքն տէր լինի ստացուածոց առաջնորդաց՝ նոյնպէս և տէր լինի պարտականութեանց, նոցա և պարտք Առաջնորդին՝ լինի պարտք վանաց, ուրոյ օրինակ բազում կան ի գործս Առաջնորդաց:

---

(1). Ի կոնդակս հին ևնոր Առաջնորդոյ:

(2). Ի հրովարտակս հին և նոր Թեոփորոսի Պարսից:

(3). Կարծել սա պեղեսա զնորարտանութեան հրովարտակէ Փիլիպպեցւոց արտայ պատեալ յանուն Յովհաննու երիցուրէ՝ ոչ միշեալ հոմարեմ,

«Տէրերս Աստուծոյ ամենակարողք են: Հրամանն եղև արտայական չէ
«մարգարէն՝ աստուածէ ընտրութեան և ակնանկատ ընդ կոպեկն
«՝ի ձակատս ընտրութեան սերելէ և ոչ որպէս իմ Սէքսպովն
«չէ ի Սալեան Մահմետ հերձուց հրամանատար ազատէն Սպահանայ հպճ-
«ղանէն ի Բաղդատայ և այլոց, զնորահաս անատաս արտայական էարէ-
«, հաճախեան ոչ պատուել և պատուել, ըստ յայմ ժամանակէ որպէս յայտ-
«նի եղև նախնարտայ Տէրութեան հերոյ, էարչըգճան ընդրեալն և
«լատգոյն՝ ի ոչ պատուէից՝ Յովհաննէս վարդապետն Հայ-
«ազգէն՝ որ է ոչ վարդապետն վարդապետաց հայոց նորեալն յԱրճիշ,
«ատաչել է պէարչըատէան ընդրեալն՝ ի կարգաւորաց Հայոց և
«ընդրեալն՝ ի պատուէից Յովհաննէս վեհապետն հայազգէ (որ է
«՝ի հարալատէց և՝ է գերանականաց Հայոց) յաղագս վերջաւորելոյ ընդ-
«գործս վերաբերելոց հայոց և վանաց որ՝ի Ջուղայ, զի եկեալ հովի-
«ռասէն պնորհ պնօրինելովն ընդդէմ նոցին ատատաս ատաչնորդաց. յայր սակս հրովար-
«նոյ և ըստ արտօնութեանն նախկին ատաչնորդաց. յայր սակս հրովար-
«տակս այս ոչ պատուել եղև զի ընդհանուր ոգիով ընդ ատաչնորդն
«ասյն ընդհանուր օգնականութեան և պաշտպանութեան ատյելեալ վարդապետն
«առնչէր, և հրամայեցին զի հայ Ջուղայու յաղագս գործոց ե-
«եան, ոչ ընդ ոք այլ, վարեցին ըստ ատաչնոյ հար-
«գին՝ հոմանցն արտօնութեանցն զոր ունէ ատաչնորդն Ջու-
«ղայու . . . ,,:

† · Սէքիօտ՚ւէն է տէտղա , և նղանաչի առաւել Տէրութեան ։

†† · Բանտարկեալ է անուն ազգի հոյ կամ ծաղկըզբեան որ չունին ընտանութեան և զտղատչական էնախօսութեան , այլ նոցա լինանդ են լերինք և ձոր , և նոցա ապրուստ կենաց են էշխոզխօսութեան և հոպղկահարութեան ։ Հաքլանկ՝ կոչի տեղ ի՚ի ծաղկըզբենէ անտի ։

(4) · (—) ։

(5) · (—) ։

ՅՕԳ· Ի·

վէճակ կամ բեմ Ամենափրկչի վանաց , և վէճ ծագեալ յաղագս այնորիկ ։

Ա · Ջուղայ՝ որպէս ցուցաք յիւրաքանչիւր տեղւոջ (1) բաժաներ՚ի հին և՚ի նոր , հին Ջուղայ կոչիւր ժողովուրդն եկեալ՚ի Ջուղայէ որ՚ի Հայաստան ։ Իսկ նոր Ջուղայ կոչիւր այն մանր ժողովրդեան՝ որք յայլ քաղաքաց Հայաստանի գաղթեալք շինեցին զբնակութիւն իւրեանց կից Ջուղայու՚ի ժամանակս երկրորդ Շահաբասայ ։ Վանքն Ամենափրկչի շինեցաւ՚ի հին Ջուղայեցւոց , և հին Ջուղայն Սպահանայ եղև սեփական թեմ և վիճակ նորա · և ըստ որում գաղթեալքն՚ի հնդկաստան էին՚ի վաճառականաց , և վաճառականքն և այ էին Ջուղայեցիք , վանորոյն հնդկաստան և վիճակեցաւ Ամենափրկչի վանացն ։

Բ · Իսկ միւս մանր Ջուղայու ժողովրդեան որք նոր Ջուղայ կոչէին , որք են երևանցիք՝ թարվիզեցիք՝ դաշտեցիք՝ քօչերցիք և ղարադէղցիք՝ ի սկզբան անդ համարեալ լինէին տէրունք ժողովուրդք և հպատանդէին որբոյ էջմիածնի ։ Յամի Տեառն 1658 ՚ի դալն Յակոբ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ ՚ի Ջուղայ՝ զՅոհան եպիսկոպոս ումն կարգէ առաջնորդ որբոյն

Սարգսի եպիսկոպոսէ , տալով նմա թեմ և վիճակ զթաղսն երևանայ՝ գասկի՝ թաւրիզեցւոց՝ դաշտեցւոց՝ և գաւրապատցւոց , նաև զգիւղօրայսն Լինջանու՝ Սլինջանու՝ Գանձակնու՝ և Ջղախոռու (2) ։ Յայնմանէ անուն սուրբ Սարգսի իւկեղեցւոյ յօրէ անտի կոչեցաւ Օհանայ վանք ։ Թէպէտ յիշեալ ժողովուրդքն որք յանձնեցան Օհան եպիսկոպոսի՝ համարեալ լինէին տէրունի վիճակ , այլ կառավարեալ լինէին յԱռաջնորդաց Ամենափրկչի վանաց նախ քան զգալն Յակոբ կաթուղիկոսի · ուստի յետ բաժանելոյ զնոսա Յակոբ կաթուղիկոսի յիշխանութենէ Ամենափրկչի վանաց՝ ծագեցաւ տարաձայնութիւն մեծ ընդ մէջ ժողովրդեանն և կարգաւորաց , զի ժողովուրդք ոմանք ոչ յօժարեցան բաժանիլ յիշխանութենէ Ամենափրկչի վանաց , և ոմանք յարեցան առ Յոհան եպիսկոպոս , ուստի երկպառակեցան ՚ի միմեանց ։

Առաջնորդք Ամենափրկչի վանաց բողոքեցին առ թագաւորն Պարսից և ընկալան զհրաման՝ զի որպէս եղեալ էին հպատակք Ամենափրկչի վանացն ամենայն հայ ժողովուրդք Սպահանայ և գաւառաց նորին , նոյնպէս կացցեն ընդ հպատակութեամբ նորին առանց ինչ փոփոխութեան (3) ։ Յաճախեցաւ երկպառակութիւնն՚ի մէջ ժողովրդեան որոց համբաւք օր ըստ օրէ հասին՚ի լսելիս Յակոբ կաթուղիկոսի , և նա՚ի գարման այնր՝ յամի 1109 (1660)՚ի 4 Սեպտեմբերի գրեաց ընդդէմ առ ժողովուրդն որք էին իւրով հրամանաւ եպիսկոպոսին Օհանայ վանքի , թէ

« Ընդ օրհնութեանս ճաներուք
« հոգևոր և սիրելի որդիք մեր , զի ասէ Սրբազան Առաքեալն
« Թէ խորհիմք զբարիս առաջի Աստուծոյ և մարդկան ։ Արդ
« մեր կամք և խորհուրդն ըստ այսմ բանի այն էր՝ Թէ օգուտ
« և շահ հասարակաց հոգևոր փրկութեան լինէր , ՚ի տեղիս
« տեղիս վանք և միաբանք բազմանայր , և խրատն և միթ-
« թարութիւնն հոգևոր ՚ի հեռաւոր ժողովրդենէն անպա-
« կաս լինէր ։ Սակս որոյ և որոշեցաք զձեզ ՚ի վանիցն Ջու-
՚ղայու ։ Այլ այժմ զի տեսաք Թէ օգուտն այնչափ ոչ երևե-
« ցաւ ՚ի բաժանմանէն , որպէս և կարծէաք , մանաւանդ
« Թէ երկպառակութիւն և թշնամութիւն սերմանեցաւ ՚ի մէջ

„ սիրոյ և միաբանութեան, յաղագս այսորիկ և մեք ըստ ա-
„ ռաջին կարդի սահմանեցաք զձեզ սեփհական թեմ և վի-
„ ճակ տուրք Ամենափրկչի վանից, և առաջնորդ ձեր՝ եղ-
„ բայր մեր Դաւիթ վարպապետն հաստատեցաք զի լինիջիք
„ մի հօտ և մի հովիւ ,, :

Յոհան եպիսկոպոս կոչեցեալն տնտեսի տղայ՝ դժկամակել ընդ տնօրէնութիւնն այն՝ ղխռովութիւնս արկանէ ՚ի միջ ժողովրդեանն, և որոցեհաւ ինքեան զկողմնակեսս հաստատէ ըղմանսար վկայութեան ժողովրդոց և գնացեալ ՚ի տուրբ էջ միածին, միաբանգամ հաստատի՝ կոնդակաւ եղիազար կաթուղիկոսի յառաջնորդութիւն Օհանայ վանքի և ժողովրդոցն նորա :

Յետ հասանելոյ նորա ՚ի Ջուղայ, դարձեալ յուզի երկպառակութիւնն ՚ի մէջ ժողովրդեանն, վասնորոյ երկրորդաբար ընկեցիկ լինի նա յառաջնորդութենէ իւրմէ հրամանաւ եղիազար կաթուղիկոսի, և ժողովուրդքն յանձնին ՚ի հնազանդութիւն Ամենափրկչի տուրբ վանացն : Յամի 1689 յ՚ապրիլի, եղիազար կաթուղիկոս առ ամենայն ժողովուրդսն հնազանդեալն թեմին սրբոյ Ամենափրկչի վանաց գրէ այսպէս ,
„ Հրաշալէ Սրբազան Առաքեալն Քրիստոսի Պօղոս, եթէ գըլուխ պատուիրանին սէր է ՚ի տուրբ որտէ և յանկեղծասոր
„ հաւատոյ, և թէ՝ ուր հիւ և նախանձ գոյ, անդէ անկար-
„ գութիւն և ամենայն իրք չարք : Եւ Տէրն ասէ, բաժա-
„ նեալ տուն յանձն իւր՝ աւերի . և քաղաք յիւրաքանչիւր
„ անձն բաժանեալ՝ կործանի . որպէս տեսաք այժմոյս աչօք
„ մերովք թէ դանձասար և թէ այլ վանորայք, մանաւանդ
„ Աստուածաշէն և Աղթիս լոյս և Մխիթարուբերդն տուրբ Յա-
„ կոբն որ յերուսաղէմ, ոչ եթէ այլազգիք աւերեցին՝ այլ
„ մերայինք աղինք, միմեանց ներհակ և հակառակ լինելով,
„ և դրամ տալով՝ անտանելի պարտուց և անզերծանալի նե-
„ ղութեանց մէջ արկին որ ոչ իմք ճարք քաշժամն լինիք
„ ցաւոյն այնորիկ : Ըստ այնց սարասի եղէ ՚ի ձերում կաղմանց
„ և օրհնեալ երկրիդ, յորժամ բաժանումն երկուց եղէ, թէ
„ քանիս ՚ի հաւատոց էլան՝ որք անօրինաց և սահմանաց քակ-

„ տումն եղև, և որպիսի չարիք կայացաւ, և զինչ խըռո-
„ վութիւն արմատացաւ որպէս տեսիք բարի աչօք ձերով :
„ Եւ եթէ Թողութիւնք այս բորբոքումն՝ և զնախնեաց կար-
„ գեալ շաւիղն՝ ոչ գոյ ճար բժշկութեան մինչև առ յա-
„ պայն : Այլ արդ քննեցաք և յոլովից ճարից բուռն հա-
„ րաք և խստագոյն խուզումն արարաք հանդերձ միաբան
„ և միախորհ որդւովք սրբոյ Աթոռոյս , եպիսկոպոսօք՝
„ վարդապետօք և իշխանօք և երիցեւերոյ Աստուածասէր
„ վաճառականօք ՚ի խորհուրդս բազումս մտաք իրրև տասն
„ ամօք սակս այսմ բանի՝ և ոչինչ եղև իրաց գտաք : Բայց
„ միայն ՚ի միածնել և միապետութիւն առնել : Ահա ես նը-
„ ուաստ ծառայ Տեառն եղիազար կաթուղիկոս ըստ ՚ի վե-
„ րուստ տուեալ իշխանութենէն և բարձր հրամանաւ սրբոյ
„ Աթոռոյս Էջմիածնի՝ վերստին կարգեցաք և հաստատեցաք
„ այդ օրհնեալ քաղաքդ և գաւառքդ թեմ և վիճակ Ջու-
„ ղայու տուրբ Ամենափրկչի վանից, և ոչ եթէ մնացածին
„ քանիւ կամ այլ ինչ պատճառի արարաք , այլ այսքան Աստ-
„ ուածաբան վարդապետօք և դպրվանաւորօք կարգեցաք և
„ սահմանեցաք որ այլ ոչ ոք հրամանս չտնի յերկիրն մտա-
„ նել առանց հրամանի Ամենափրկչի վանից Առաջնորդին՝ և
„ ձեռնամուխ լինել ոչ սեաղլուխ՝ և ոչ այլ ոք , և որինչ
„ սեաղլուխք կան յայդմ կողմանքդ՝ գան միաբանք լինին
„ տուրբ Ամենափրկչին և նորին Առաջնորդին հլու և հնա-
„ զանդ ” :

Ի դարձարերեցաւ Յոհան եպիսկոպոս յետ հասանելոյ այնմիկ հրամանի, այլ գուն գործէր որպէս լինքեան զկողմնակեսս հանս և սպասէր ժամանակի : Յետ վախճանելոյ եղիազար կաթուղիկոսի, մինչ Նահապետ կաթուղիկոս նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան, և Ջուղայեցիք ոչ յօժարէին ընդ կաթուղիկոսանալն նորա (1), յայն սակս ժամ ապատեհ համարեալ Յոհան եպիսկոպոս դնայ ՚ի տուրբ Էջմիածին, և թերեւս եղև առաջի Նահապետ կաթուղիկոսի, և հաւանեցուցեալ գնա ընկալաւ զկոնդակ և կարգեցաւ միաբանգամ Առաջնորդ Օհանայ վանքի : Վերադարձաւ ՚ի Ջուղայ կոնդակաւ

Նահապետի, որոյ այս է պատճէն։

«Ալ Թողաք զՀոգևոր որդիսդ մեր առանց Հովուացդ անխնամ մնալ՝ ըստ կտակի Հոգևոր Հօրն մերոյ Տեառն Եղիազարու կաթուղիկոսի։ Քանզի յորժամ երկն նա ի սուրբ Աթոռս, ամենայնիւ զարդարեաց զսա և զաղգս ամենայն, զվանորայս և զեկեղեցիս, կարգելով ամենայն ուրեք ըստ արժանւոյն Առաջնորդս և Հոգաբարձուս, որպէս և ի վերայ վանից և եկեղեցւոյն սրբոյն Սարգսի և ի վերայ օրհնեալ տէրունի Ժողովրդականացդ մերոց կարգեաց Առաջնորդ և Հոգաբարձու զՀոգևոր որդին մեր զՅոհան վարդապետն, քայց յետոյ տուչորեր սիրտ նորա սակս զրկանացն վանից Սրբոյն Սարգսի և Յոհան վարդապետին։ Իսկ ի ժամ վախճանին իւրոյ յորժամ ամենայն ինչ վերջին կտակ ի մեզ յանձնէր՝ զայս ևս պատուիրէր ասելով, թէ պսակեցաք զՅոհան վարդապետն Եպիսկոպոսական իշխանութեամբ ի վերայ վանից սրբոյն Սարգսի և ի վերայ օրհնեալ տէրունի Ժողովրդականաց մեծի Աթոռոյս, բայց յետոյ զրկեցաք, այդ խիղճ է ինձ ոչ սակաւ պարտիս վերբնալ տին հաստատել զնա յաթոռ իւր՝ և զտէրունի Ժողովուրդսդ զոր ի վերոյ գրեցաք, ի նա յանձնել և զայլ մնացեալն Թողուլ ի Հոգաբարձութիւն Աղէքսանդր վարդապետին։ Յաղագս որոյ ըստ կտակի Հոգևոր Հօրն մերոյ, զնորհօք սուրբ Հոգւոյն՝ բարձր իշխանութեամբ մեծի Աթոռոյս և հայրապետական հրամանաւ մերով, և հաճութեամբ ամենեցունց՝ իրաւունս վարկաք, կրկնակի և վերըստին կարգեալ հաստատեցաք Առաջնորդ վանից սրբոյն Սարգսի զՀոգևոր և զսիրելի որդիդ մեր զՅոհան վարդապետ, և զվերոյգրեալ տէրունի Ժողովուրդսդ ի Հոգաբարձութիւն դորին յանձնեցաք, որ Հովուեսցէ զտէրունի Ժողովուրդսդ մեր Եպիսկոպոսական իշխանութեամբ . . . . և զմնացեալ տէրունի Ժողովուրդսն այդպէս կիսաբաժին առնելով Թողաք ի Հոգաբարձութիւն Աղէքսանդր վարդապետին ըստ կտակի Հօրն մերոյ Հոգևորի։

Ընդունել ևս զայրանայ խռովութիւնն երկպառակութեան յաղագս միաբանգամ ստանալոյ Յոհան վարդապետի զառաջնորդական իշխանութիւնն, ուստի բողոք ժողովրդեանն եաստկացաւ յոյժ, մինչև Նահապետ կաթուղիկոս պարտաւորեցաւ ընկենուլ զՅոհան յառաջնորդութենէ, վասն որոյ ի 1144 (1695) գրեաց առ նա զկոնդակ հրամանի «Թէ որովհետև դարձեալ զօրացաւ երկպառակութիւնն խռովութեան՝ յաղագս որոյ գրեմ առ Սիրելիդ մեր, և հարկ ի վերայ քո եղեալ պարտաւորեմ սիրելոյդ մերում զի որքան Թուղթ և կոնդակ որ առ քեզ գոն՝ ընդ սուրբ մեռնին յանձնեսցես իՍտեփաննոս վարդապետն, և աղատ լինիս ի վշտակիր հոգւոյ կրից, և ինքն Ստեփաննոս վարդապետն որպէս և կամի՝ այնպէս արասցէ»։ Ապա յորդորէ զնա հպազանդել Ստեփաննոս Առաջնորդին և վարել ընդնմա սիրով իբրև միաբան վանին Ամենափրկչի։

Որպէս երևի՝ յիշեալ Յոհան եպիսկոպոսն լեալ է այր խռովասէր և կամապաշտ, զի յետ այնչափ երկպառակութեանց և հակառակութեանց և յետ չորիցս ընկենելոյ յառաջնորդութենէ՝ դարձեալ գումն գործէ ստանալ զառաջնորդութիւնն։

Վճռութիւնն որ եղև ընդ մէջ Նահապետ կաթուղիկոսի և Ստեփաննոս Առաջնորդի Ամենափրկիչ վանաց և Ջուղայու իշխանացն ընդհանրապէս, աջողեաց միաբանգամ կոնդակաւ Նահապետ կաթուղիկոսի ելանել Յոհան եպիսկոպոսի յաթոռ Առաջնորդութեանն սուրբ Սարգսի վանաց, ուստի ի 1 մարտի 1697, Նահապետ կաթուղիկոս ոչ միայն ընդհատեաց նմա զառաջնորդութիւնն սուրբ Սարգսի վանից՝ այլև ընդարձակեաց զիշխանութիւն Առաջնորդութեանն նորա ի վերայ գաւառացն Փերիու և Բուրվարու, ի ուստի վիճակն Ամենափրկչի վանացն ամփոփեցաւ միայն Մէյդանի Թաղն Ջուղայու՝ Թաղն Յակոբջանեանց՝ և Ջարսու և վիճակն Հնդկաստանի։ Արդարև տաղտկալից կառավարութիւն. զի փոխանակ ի խաղաղութեան պահելոյ զժողովուրդն՝ սակս անձնական կրից իւրեանց հակառակեան հրամանօք զերկպառակութիւնս յուզէին ի ժո-

զոլըղեանն : Յորժամ վերստին ստացաւ Յոհան վարդապետ զիշխանութիւնն Առաջնորդութեան , կրկին ընդ ի՛ մէջ ժողովրդեան . զաւառական ժողովուրդք չինեցին զվկայական կերս՝ թէ որպէս լեալ են յառաջմէ անտի Հաւատարմեալք Աժենափրկչի վանացն Առաջնորդին , այժմ եւս կամին մնալ ընդ հպատակութեամբ այնր՝ առանց Հանաչելոյ զայլ ոք առաջնորդ իւրեանց : Ընդ այն ժամանակս Ստեփաննոս Առաջնորդ Աժենափրկչի վանացն գնայ յԷջմիածին , և նստի Աղէքսանդր Առաջնորդ վանին : Տեսեալ նորա թէ երկպառակութիւնն Ճարակի հետ զհետէ հանդերձ բազմապիսի վնասուք , խոհեմութիւն արարեալ կոչէ զՅոհան վարդապետն և համոզէ զնա խաղաղութեամբ վերջաւորել զայն բազմամեայ վէճ , վասնորոյ հատանեցուցանէ զնա լինել Առաջնորդ Բուրվարու պատառին միայն , և զհասարակ ժողովրդեանն այնմիկ պատարի առնել լինքեան ապրուստ : Թերևս խոնջեալ նորա ի խռովասիրութենէ հաւանի գտանել ընդ այն , և զայն գաշինն վաւերն գրով ընդ Աղէքսանդր Առաջնորդի . ուստի նա լինի Աղէքսանդր յ՚ի յունվարի 1679 ճանուցագրով ազդ առնէ ժողովրդեանն Բուրվարու թէ

« ճաներթուք սիրելիք մեր ի Տէր , հրամայէ փրկիչն ամենե-
« ցուն Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի փրկական աւետարանին
« առելով արդ կալարուք զքաջ յանձինս ձեր զայն և խաղա-
« ղութիւն արարէք ընդ միմեանս . և Մարդարէն Դաւիթ
« ասէ երկու խաղաղութիւն տեղի նորա : Սիրելիք ինչ տեղ
« խաղաղութիւն կայ՝ Քրիստոս անդ բնակի , և ինչ տեղ խռո-
« վութիւն կայ՝ սատանայ հաւրննակի . ահա ձեզ ամենեցուն
« յայտնի է որ այսչափ ժամանակ մեր և Յոհան վարդապետի
« մէջն խռովութիւնն կայր՝ յաղէտս ետուն չարին սատանայի ,
« որոյ պատճառն մի ըստ միոջէ գրելն աւելորդ է և անօգուտ ;
« ջինչ և էր հինն էանց , և արդ նոր եղև , քանզի ընդհօքն
« Աստուծոյ հաշտեցաք ընդ միմեանս , բարձաւ խռովութիւնն
« և հաստատեցաւ խաղաղութիւնն , վերացաւ միջնորմն
« ցանգոյն և եղև մի , այսուհետև ոչ ի Պօղոս և յԱպողոս
« բաժանիք , այլ ի Քրիստոս միանայ ; եւ ի վախճան ամենայն

« նի , մեր սիրոյ և միաբանութեան նշան անխզելոյ և ան-
« քակ միաւորութեան՝ զայս հաստատեցաք , որ ձեր օրհնեալ
« երկրիդ Բուրվարու ժողովուրդդ , անդրանկամեծար և յար-
« գապատիւ եղբայրն մեր Յոհան Առաջնորդ վարդա-
« պետն և արհիական Եպիսկոպոսն տիրէ՝ հովուէ և առաջ-
« նորդէ , և դուք ամենեքեան հլու հպատակութեամբ հընա-
« զանդ լինիք նմա՝ որպէս վայել է մեծութեան նորա իբրև
« հովուի և առաջնորդի : Մի ոք ընդդիմացի և հակառա-
« կեսցի , այլ ամենայնիւ լսող և ունկնդիր լինիք ամենայն
« հպատակութեամբ : Զամենայն հաս և զիրաւունս ձեր տա-
« ջիք ի ձեռս նորա՝ և իւր միաբանից՝ որ նորին թղթով և
« հրամանաւ գան ի մէջ ձեր : Դարձեալ չլինի այլ և այլ
« մտածմունք անէք , վասն այսորիկ և խռովիք իբր թէ օ-
« տարացուցանեմք զձեզ ի սուրբ Աթոռոյս Ամենափրկչի
« վանաց՝ որ ձեր ընիկ և հայրենի տունն է , քաւ լիցի . մինչև
« ցայս վայր որ բաժանումն կայր մեր ի մէջն՝ այդպէս էր ,
« արդ՝ որպէս բաժանումն վերացաւ ընդհօքն Քրիստոսի՝
« նոյնպէս լիմն և քոյն վերացաւ , զի ի Քրիստոս Յիսուս , իմ և
« քո ոչ է , որպէս գրեալ է ի գործ Առաքելոցն : Այժմ
« Յոհան վարդապետն և մեք և դուք միաբան , և ոչ այլ և
« այլ : Բայց միայն նշան սիրոյ զայս հաստատեցաք և երկու
« գրեցաք զայս գիր ,, ից :

Յետ այնմիկ դարձաւ խաղաղութիւն եղև ընդ մէջ Յոհան վարդապետին և Առաջնորդին Ջուղայու վանաց :

Դ . Ի՛նչ ի 1666 ամի շինեցաւ ի Հազարջրիք գեղջ վանքն կոչեցեալ սուրբ Աստուածածնին , և նստաւ անդ Առաջնորդ Ստեփաննոս Եպիսկոպոս՝ հրամանաւ Յակոբ կաթուղիկոսի , եղև դարձեալ մանաւանդ փոփոխութիւն յաղագս Թեմից Ամենափրկչի վանաց , զի ի գիւղօրէից գաւառացն նըշանակեցան քանի գիւղօրայք լինել ընդ իշխանութեամբ Առաջնորդին Հազար ջրիրայ վանից : Ջհամաձայն քաղաքն և նշանակեաց Յակոբ կաթուղիկոս լինել Թեմ նոյն վանի , և գրեաց պիտանակ առ ժողովուրդն Համաձայնայ ասելով ,, Թէ

« ճանուցումն լիցի ձեզ սիրելի որդիք զի դուք փարիսեու վա-

« նիցն Ժողովուրդ էք, և ոչ ոք ի վանքն այն առաջնորդ
« անուն նստի, դուք պարտ էք Հաստատել նմա միամտա-
« բար, և զամենայն հաս և իրաւունս ձեր ըստ միոջէ սի-
« րով տալ ի ձեռս նորա, զի նա է ձեր առաջնորդ և վե-
« րատեսուչ, և այլք եպիսկոպոսք և վարդապետք մի թո-
« ղուք ի ձեր մէջն որ առաջնորդական հասի և իրաւանց վե-
« րայ խօսի ,, : Ապա այն վանք, որպէս յիւրում տեղւոյ
ծանուցաք ( ) միայն ամն Հոգեւտասան դարուց ի հաս-
տատութեան, և բարձաւ Առաջնորդութիւնն ի նմանէ փու-
թանակի, վասն որոյ չեղեւ խռովութեան առարկայ ըստ այնմ
մասին, և յետ ամայանալոյ վանին այնմիկ՝ պարձեալ ամե-
նայն գաւառք և քաղաքք միացին վիճակք Ամենափրկչի վա-
նացն :

Երկ վիճակաւոր քաղաքք Ամենափրկչեան վանի ի պարս-
կաստան են Ջուղայ, Շիրազ, Բուշեռ, Թէհրան, Համատան,
Ուաշտ և Ընզալի : Յառաջին ժամանակս մինչ ի քաշան՝ ի-
պազբին և ի Դարբանդ ևս կային բնակիչք հայոց՝ էին ընդ
իշխանութեամբ Ամենափրկչեան վանի : Բայ ի քաղաքաց ան-
տի ունի և զ8 գաւառս յորս բնակին բազմաթիւ ժողովուրդք,
որոց անուանքն են Ղարաղան, Մալայիր, Քեազազ, Գեա-
փըլայ, Քեամարայ, Բուրվարի, Փէրիայ և Ջարմահալ, որք
ընդ ամենայնի ունեն զեօթանասուն և չորս գիւղօրայս Հայոց :

Օսմանեան սահմանաբասրայ է միայն, իսկ Բաղդադ քա-
ղաք և նէրբեմն կառավարեցաւ ըստ հոգևոր մասին իշխանու-
թեամբ Ջուղայու Առաջնորդաց, այլ այն ի բնուստ անտի է
Տէրունի վիճակ սրբոյ Էջմիածնի : Ի հնդիկս Բումբայի, Սու-
րաթ, Մադրաս, Կալկաթայ, Զիչրայի, Դաքայ, Սէյդաբադ,
Գուալիէր, Քաբօլ, Սինկափուր, և Պինանգ : Ի Ջավայ՝ Բը-
թաւիա, Սուրբայիա՝ և Սմարանգ : Խօսիլ համառօտեաւ ընդ-
նոցանէ, յուսամ՝ զի ներելի լիցի մեզ, իբրև կողմնակի
պարտք վերաբերելի մերում պատմութեան :

ՇԻՐԱԶ : Է քաղաք ի սահմանս Ֆարսայ՝ 60 փարսաղ հեռի
Ասպահանայ : Պատմէ Առաքել թէ ,, յայսմ ժողովրդենէ
,, Հայոց զոր տարան ի Սպահան՝ հինգ հարիւր տուն բաժա-

,, նեցին և տարան յերկիրն Շիրազու և անդ բնակեցուցին ,,
,, քանզի Ալահվէրդիխանն որ էր տէր Շիրազու՝ խնդրեաց
,, ի Շահ Աբասէն շնորհել նմա մասն ինչ յազգէն Հայոց վասն
,, բարեմտութեան և հաւատարմութեան ազգին Հայոց, զի
,, լիցին նմա ի ժողովուրդ և թաղաւորն շնորհեաց նմա զը-
,, նդիրն, և նա տարեալ բնակեցոյց ի գաւառն Շիրազու ,, :
,, (Առաք ,, գՀ . ՚ի . էՀ 45) : Ի բանից աստի յայտ է թէ ըս-
կիզբն գաղթականութեան Հայոց ի Շիրազ եղեւ ի 1605 կամ
1606 ամի : Ոչ աճեցաւ անդ ժողովուրդն Հայոց, այլ հետ
զհետէ նուազեցաւ : Ըստ թուագրութեան որ եղեւ յամի
1856՝ հօթն տուն միայն Հայք գտանին անդ, որք ունին զտան
և չորս արուս և զքսան իգական բնակիչս : Երկու տունն են
վաճառական, որոյ առաջինն է Պարոն Գէորգոս Մայիլեան այր
գործունեայ, ժրաջան և հիւրասէր, և միւսն է Պարոն Ստե-
փանոս Յարութիւն Խաչկեան, խնկ մնացեալ հինգ տունն
ապրին մանաւանդ վերջզակութեամբ կամ գինեվաճառու-
թեամբ :

Անդիեն զկնդեցի մի շինեալ ի 1111 թուին Հայոց, որոյ
այս է արձանագրութիւն :

,, Այս տուն Տէառն է և արդարք մտանեն ընդ սա :

,, Ի թուին Հայոց մին հազարի, նաև հարիւր մեհասանի,
,, արդեամբք տեղւոյս մերոց Աղդի, տունս Աշ շինեալ լինի:
,, Վարձեալ ի թուիս մի հազարի, և երկերիւր վաթսուն Հոգի,
,, ժողովրդեան կամք յօժարի, գմբեթայարկ կերտեալ լինի,
,, արդեամբք Պարոն ՃաՀնազարի, որ է որդի Սարգսեանի :

Այն եկեղեցի հիմնեայատակ՝ տապալեցաւ յամի 1853 ի-
բուռն երկրաշարժութենէ և վերստին առաւել վայրկենս և ապա-
շաւոն մնայ Պարոն Յովհաննես Ալեքսանեան . առաքն Աստ-
ուածածին անուն կոչելով որպէս և էրն յառաջ :

ԻՍՖԵՀԱՆ : Է ծովահանգիստ քաղաք ի ծոցն պարսկաստա-
նի . փարսախ հեռի ի Շիրազայ : Չիք հաւատի տեղեկութի

Թէ երբ սկիզբն արարին հայք հաստատել անդ զբնակութիւնս իւրեանց, այլ այս ինչ յայտնի է զի ի սկզբան ուղեւորութեանն իւրոյ ի բազմանալ հարստահարութեանցն ի Ջուղայ, և ի խուսիլ ականատեսաց ժողովրդեանն ի Ջուղայէ՝ սկիզբն եղեւ հաստատելոյ Հայոց ի նմին քաղաքի զբնակութիւն իւրեանց, այլ հաւանական է կարծել թէ նախ քան զայն ժամանակ եղեալ են ի նմին քաղաքի Հայ վաճառականք սակաւք և տրոյ կանխով անդ իջևան: Այժմ ինն տուն Հայ բնակիչք կան ի նմա, քառկապետ Յովհէփայ Յ. Մելքումեանց, և երկրորդն Պարոն Եղիազարու Գ. Գասպարեան, կամ Պարոն Մկրտիչի Յ. Պետրոսեան գործակատարի նորա: Ունին զմի եկեղեցի:

ԹԷՀՐԱՆ: Թագաւորանիստ քաղաք Պարսկաստանի: կան ի նմա ութհանասուն և հինգ տուն բնակիչք, որք ունեն ըստ 162 արական. և 148 իգական բնակիչս: կան անդ օտարական վաճառականք և՝ որք ոչ մտանեն ընդ այն թուահաշիւ: Ունեն զերկու եկեղեցիս, սուրբ Թադէոս ի Թաղն Շահաբդօլազիմ և սուրբ Գէորգ ի Թաղն Ղազբինի: Ականատեսքն ի վաճառականաց հայոց այժմ են Աղայ կարապետ Գրիգորեան Սահակեանց Պօլսեցի վաճառականապետ Ռուսաց, որ և ունի զաստիճան պաշտօնի կրաժտանիութեան, Աղայ Պետրոս Ներսիսեան արցախեցի երջանիկ և գործակից աղայ կարապետի, այր աղպատիր յոյժ ի նեղութիւն ոչ գոյ, Աղայ Իւանէ Մամիկոնով Տփխիսեցի, և այլք ոմանք:

ՀԱՄԱՏԱՆ· կոչի և եկբատան: Թուի Թէ ի ժամանակի մեծ տարաշրջութեանն Հայաստանի ժողովրդոց՝ ի ցիր և ցան լինելն նոցա՝ ի քաղաքս պարսից հաստատեցաւ անդ բնակութիւն Հայոց: Ունի և նա զեօղ մի Շաւարլին կոչեցեալ իբրև երիք վարսաղ հեռի ի նմանէ: Ի Համադան և ի Շաւարլին կան 116 տուն հայք, որք են 279 արականք և 269 իգականք, գործ նոցա ըստ մեծի մասին է գինեվաճառութիւն, և որովհետև խառն ընդ այլազգիս բնակին՝ տարաղ զգեստուց կա-

նանց նոցա է ըստ տարաշրջու այլազգեաց: Ունեն ի Համադան զեկեղեցի մի յանուն սուրբ Աստուածածնի: ի Համադան քաղաքի կայ դիւթարան քէշիշխանէ կոչեցեալ ի ձեռս ոմանց ի ժողովրդենէ Հայոց՝ որ ամ ըստ ամէ վճարէ Տէրութեանն Պարսից զերկերիւր Թուման իբրև հարկ կամ լաւ և ասել իբրև տոյժ և տուգանք: Է այն սահման մի անշուք և ամայի, յորում նստի արարօղն դիւթականութեան և տայ զգիր հմայութեան խուռն խնդրարկուաց, որք զօրհնաւոյզ անպակաս են ի տանէ անտի, և ըստ որում համրաւեալ է անուն նոյն դիւթարանի՝ վասն որոյ ի հեռաւոր տեղեաց գան այլազգիք ընդունել անդէն զգիր հմայութեան: Հաստատեցաւ այն նախ քան զՄահմատ Հօսէյնխան Զարաքսի զլին ի Հէրնի անուն կնոջէ միոյ, որոյ որդիքն ի գործ ածեցին զայն զկնի մահուան մօրն իւրեանց, և վճարեցին ըստ տարեկան հարկ նորա տասն Թուման: Իսկ ի ժամանակս Թագաւորութեանն Ֆաթհալիշահի, Մահմատալի միրզայ որդի նորին, որ էր ի Քրմանշահ՝ առաքեաց ի Համադան զմինն յորդւոց իւրոց և զհարկն քէշիշխանէ դիւթարանին հաստատեաց զերկերիւր Թումնս առ տարին, զոր քշմ տառապանօք վճարէին (2): Յաղագս այնր եղեալ է բազում անգամ խնդարկութիւն, դի հրամանաւ Տէրութեան դիւթարանն այն և հարկն նորա միանգամայն վերջացի, այլ ըստ որում Տէրութիւնն ստանայ զտարեկան զերկու հարիւր Թուման շահս ի տանէ անտի՝ վասն որոյ անմտադիր խնդրարկութեանցն նոցին լինելով՝ պահանջի հարկն ամ ըստ ամէ, և ի պարտաւորութենէ բայ մնայ դուռն նոյն դիւթարանի և շարունակի:

ՈՒԱՀՏ և ՈՒՆՋԱԼԻ: են երկու քշմ ի սմիմնս Գիլանայ-ականաց և ունին զժամատուն մի փայտաշէն: Ի Ռաշտ

կան օտարականն վաճառականք ըստ մեծի մասին ի հայոց-
տանէ, որք յաղագս գնելոյ զմետաքս առնեն անդ երթևեկ:
Եղեալ է անդ եկեղեցի մի հայոց, այլ այժմ խափան ա-
ցեալ գտանի: Այս մուտրութիւնս շինելոյ անդ զնոր եկեղեցի
՚ի տեղւոջն աւերակ եկեղեցւոյ, և սակս այնր եղեալ է բա-
ղում անգամ խնդրարկութիւնն առ Տէրութիւնն Պարսից զի
շնորհեսցի հրամանն Տէրութեան, այլ տակաւին չերև ի նշան
լինութեանն:

Օգտաւետ հայոց Պարսկաստանի ունիմ ուրոյն զլսոյլ
խօսել փոքր մի առաւել պարզաբանութեամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Ծաղկեցաւ աստ բնակութիւնն և վաճառակա-
ութիւնն հայոց ՚ի սկզբան ութ և տասներորդ դարու, մինչ ՚ի
հարստահարութեանց Ջուղայու՝ փախստական դիմեցին անդր
բազմութիւն Ջուղայեցւոց: Ոչ տեւեաց ընդ երկար առաջա-
դիմութիւնն հայոց ՚ի նմին քաղաքի, զի կամ ՚ի պատճառս օդոյ
վատութեանն կամ յաղագս անյարմարութեանն վաճառակա-
նութեան լքին զայն քաղաք բնակիչք տեղւոյն և դալթեցին
՚ի Սուրաթ, ըստ մեծի մասին ՚ի Հնդկաստան և ՚ի Բաղդատ:
Այժմ միայն քանի տուն հայ բնակիչք կան ՚ի նմա, որք աղքա-
տութեամբ և օրական աշխատանօք անցուցանեն զաւուրս իւ-
րեանց: Ունին զմի եկեղեցի:

ՆՈՒՄՐԱՅԻ: Առաջին քաղաք Հնդկաստանի, յորում կան
այժմ 17 տուն հայ բնակիչք, բաղկացեալ ՚ի 24 արուաց և ՚ի
25 իգականաց: Ընդեն զմի եկեղեցի սուրբ Գէտրոս անուն:
Սկիզբն բնակութեան հայոց ՚ի նմա եղեալ է ՚ի վախճան հօթ-
և տասներորդ դարու: Եային ՚ի նմա յառաջ քան զայս ա-
վանատուր վաճառականք յաղգէ հայոց, այլ այժմ տեղի տը-
ուեալ է երևելի վաճառականութիւնն վասն հայոց ՚ի քաղաքէ
անտի: Երևելիքն ՚ի նմա են այժմ Պարոն Յարութիւն Յով-
հաննեան, Յովսէփ Աղազարեան և եղբարք Նորա: Երկու
եղբարք Պարոնայք Մարկոս և Ղուկաս Մահի Յովսէփեան իւ-
րեւ քանի ամօք յառաջ էին անդ առաջադէմ, այլ անանկու-
թիւնն խոնարհեցուցիչ այց եղեւնոցա:

ՍՈՒՐԱԹ: Քաղաքն լիագոյն խօսեցաք յառաջնում հատոր-

ՄԱՐԱՍ: Նշանաւոր քաղաք ՚ի Հնդկաստան յաղագս ն-
շանաւոր Հայ բնակչացն իւրոց, որք թէ ըստ մեծութեան և
թէ ըստ ազգասիրութեան մասին գերազանցեալ էին յոյժ
իւրոց ւխատն ամօք յառաջ: Գաղթեցին անդ վաճառականք
Ջուղայու յԱկս հօթնևտասներորդ դարու և զօրացան
յոյժ յոյժ: Իսկզբան ինն և տասներորդ դարու վաճառակա-
նութիւնն նուազիլ սկսաւ ՚ի քաղաքի անդ յազգէ Հայոց, և
ընդ մէջ նոյն դարու միայն տունն Յամեանց էր երեւելի վա-
ճառատուն, այլ անանկացաւ և այն ՚ի 1853 ամի: Այժմ միայն
երկու եղբարք որդիք Եփրակոսի Յարութիւնեան պարապին
մանաւանդ գործով վաճառականութեան. և բաց ՚ի նոցանէ
չիք այլ ոք վաճառական ականաւոր հայազգի ՚ի նմին քաղա-
քի: Որպէս վերջացաւ հռչակութիւն և հարստութիւն ՚ի քա-
ղաքէ անտի՝ նոյնպէս և առկայծեցաւ ազգասիրութիւնն,
զի մնաւորութիւն ներկայ ժողովրդոց Հայոց Մադրասի (թէ-
պէտ ոչ ամենեցուն) յաւէտ խորշիլ ցանկայ յանուանէ հայ-
ութեան, քան թէ ինքեանց վաստ համարին սակս լինելոյ
ներունդքն քաջացն Հայկայ և Արամայ, ըստ հաւատոյ մասին
նոյնպէս չունին զջերմ զգացումն և բազում խմորեալք են
յաղանդն Ֆրիմէսոնութեան. ունին զմի եկեղեցի, և զմի Դպրո-
ց: Տունք ՚ի նմա են 20. արականք 51. և իգականք 45,
յազգէ Հայոց:

ԿԱԼԿԱԹԱՅ: Մայրաքաղաք Հնդկաստանի, ՚ի սմա քան
զայլ քաղաքս Հնդկաստանի ընդհանուր Ատուածոյ առաւել
ծաղկեալ են յայսմ դարու հայազգի ժողովուրդք: Բնակիչք
՚ի նմա են 113 տուն, 345 արուք, 297 իգականք, և չիսուս
նաչափ օտարականք: Ունին զմի եկեղեցի Նազարէթ անուն
շինեալ յաղայ Նազարայ, որ ունի հօթն հարիւր հա-
զար ռուփաչափ կարողութիւն, որոյ մեծի մասն են ՚ի վերայ
անշարժ կալուածոց: Սովորաբար երեք վիճակաւոր քահա-
նայք լինին ՚ի նմա: Գառավարի եկեղեցին ՚ի չորս աւանդա-
պահաց, ՚ի միոյ եկեղեցականէ՝ և յերից խորհրդակցաց կու-
միաարի կոչեցելոց, որք հաւատարակաց ժողովով ընտրեալ հաս-

տատին և փոփոխին : Եկեղեցին ամնական բաշխէ ղՀաստատեալ տուրս աղքատաց 1500, ց 2000 ռուբլի կումպանեայ : Ընծեն զմի Դպրոց Մարգասիրական Ճեմարան կոչեցեալ, որ հաստատեցաւն ՚ի 1821 ամի : Թէպէտ յընթացս այսչափ ամաց բազումք եղեն որք լուսաւորեցան յայնմ Դպրոցի, այլ որչափ անուանն է՝ չէ ըստ անուանն արդիւնք լուսաւորութեանն : Վարժապետ ՚ինամ վանն հայկական պարոնութեան է պետական Պարոն Յովհաննէսն Ավգէրեան, ճանուցեալ ոք ըստ բարեկարութեան մասին, որ մինչև ցարդ երեսուն և հինգ ամք են զի վաստակի յայնմ պաշտօնի յաղագս լուսաւորութեան ազգային մանկանաց . հայ բնակիչք սոյն քաղաքի իբրև քսան տուն են վաճառականք , յորոց վեց կամ ութն տունն են ականաւոր յոյժ , որոց առաջինն է տունն Աբգարեանց : (Եին և ամք յառաջ վաճառական երևելի տունն Աղ-ա-բեկ, կամ Աղաբէկեանց , այլ անհետացան յամի 1850 , և ըստ Աղ-ա-բեկ անուանն բեկին և զտունս բազմաց) : Ընծեն և օրէնսգէտ վաստակաւոն, դրագիրս և զմի բժիշկ Պարոն Սարգիս Շիրխաւոեան անուն :

ՁԻՁՐԱՅ : Էր սա յուխտատեղիս որոշ դարուն առաւել և առաջանէմ և կային ՚ինամ բազում տունք յազգէ հայոց, այլ ՚ի ծագելիլ առաջադիմութեանն կալկաթայի՝ մնաց սա յետադաս : Վեց տունք են ՚ինամ յազգէ հայոց (ըստ թուահաշուոյն որ եղև ՚ի 1855 ամի) և կան ՚ինամ արու և էգ հոգիք իբրև քսան : Ընծեն զմի եկեղեցի սուրբ Յովհաննէս անուն, ուրոյ կառավարութիւնն կախումն ունի ՚ի պաշտօնատարաց Նազարէթայ եկեղեցւոյն կալկաթայ :

ՓԱՓԱՅ : Քսան և չորս տուն հայք կան ՚ինամ , յորս են 55 արու և 39 իգական բնակիչք : Ընծեն զմի եկեղեցի յանուն սուրբ Յարութեան : Մեծ մասն ՚ի բնակչաց անտի են կալուածատէրք : Կարի առաջադէմ հանդիսացաւ յայնմ քաղաքի իբրև քառասուն ամօք յառաջ աղայ Յարութիւն Միքայէլեան , որոյ միլիոնաւոր հարստութիւնք սպառեցան , և հասիւ թէ մնաց ութ կամ տասն լաք ռուբլի բաժին երկուց քսաներից նորա :

ՅՈՒՅԱՐԱՊ : Ունի զՀինգ տուն հայ բնակիչս , զ14 արու և զինն իգականս : Ականաւորքն ՚ի ժողովրդոց են վահան և Ստեփաննոս Մնացական վարգանեան , որք ունեն զգործարան լեղակի և մետաքսի :

ՊՈՒՆԼԻԵՐ : Ինակէր անդ իբրև քսան ամօք յառաջ ականաւոր զօրապետն կոռնէլ Յակոբ Պետրոսեան , որ նշանաւոր ոք էր թէ ըստ ազգասիրութեան և թէ ըստ հարստութեան մասին, շինեալ էր վանն ինքեան զժամատուն և պահէր զՔահանայ , այլ կամ վախճանելոյ նորա՝ որդին ոչ գնաց ընդ շահիլ բարեպաշտութեան և ազգասիրութեան հօրն իւրոյ , այլ գնաց ընդ ձանապարհ Բահաղու : Ուստի սպառեցան ստացուածք նորա ոչինչ օգուտ սակս ազգին ընծայելով : Կին նորա ժրագլուխ Հեղինէ անուն՝ համանման բարեպաշտութեան առն իւրոյ վառուն հաւատով , կամեցաւ զմեծ օգուտ ընծայել ազգին իւրում, այլ հարստութեանն որս եղեալ աչքատհասիրին՝ ուննայնացաւ բարի նպատակն նորա , այլ ինձ այսպէս Թուի Թէ Աստուած ոչ կորուսանելոց է զվարձս նորա :

ՔԱՐՕԼ : Անուանի միայն նշանակի վիճակ կամ Թեմ Ամենափրկչեան վանի , այլ ոչ ժողովրդոց այնր և ոչ զՀանգամանաց նորա կայ տեղեկութիւն ինչ :

ՍԻՆԿԱՓՈՒՌ : Քաղաք վաճառաշահ , յորս կան 8 տուն հայք , 29 արականք և 26 իգականք. գործ նոցա է վաճառականութիւն ընդ Չինաստանի և ընդ Հնդկաստանի : Ունեն զմի եկեղեցի շինեալ իբրև քսան և հինգ ամօք յառաջ : Աստ եթէ ամ ժամանակ շարունակեցաւ Ասուծմնասէր անուն լուսդիրն :

ՊԻՆԱՆԳ : Քաղաք Թերակղզի , յորս կան երկու երևելի գերեզմանատան Յարութիւն Անուն անուամբ , որք պարապին գործով վաճառականութեան :

ԲԹԱԻԱՅ : Մայրաքաղաք Ջաւայ կղզւոյ ընդ Տէրունէ Հոլանդացւոց , կան անդ եօթն տուն հայք բազկացեալ ՚ի 20 արուաց և ՚ինոյնչափ իգականաց: Վաճառականք են ըստ մեծի մասին : Եռանդն ազգասիրութեան և հայրենասիրութեան

վառուն՝ ներդործող և մշտարծած է՝ ի բնակիչս նորա, յո-
բում և ամ ըստ ամէ առնեն առաջադիմութիւն։ Ատ բնակի
Տիկինն Մարիամ Յակոբ Յարութիւնեան, խնամածուն որբոց
և այրեաց՝ բարերարն չքաւորաց և կարօտելոց, և աղբիւրն
ամենաշատ ըստ տրոցն առատուէ մասին՝ ամենայն յանուն
Աշ խնէրարկուաց։ Ա յս վոքրախառմբ ժողովուրդ՝ զանճա-
ժանս գործեցին յօգուտ ազգին, զի 1853 ամի հիմնարկեցին
և կառուցին մի զեկեղեցի յանուն սրբոյն Յովհաննու, հաս-
տատեցին և պահեն զգանձանակ յանուն աղքատաց Ջուղա-
յու, ՚ի 1854 ամի սկզբնաւորեցին և ՚ի 1855 ամի հիմնաւո-
րեցին զվարժատուն մի ազգային «Մանուկ և Յարութիւն»
անուն։ Ա՛ր հայրենիս ունեն և շարունակեն զսէր և զկարեկ-
ցութիւն բարերգաց, և վերջապէս որպէս խորհեն սակս
անձնական օգտից իւրեանց և առաջադիմութեան, նոյնպէս
և խորհեն յաղագս ազգային առաջադիմութեան և օգտից
Ջուղայու։ Սկզբնառիթ վառուն ազգասիրութեան նոցա է
այն՝ զի ամենայն բնակիչք նորա հայք են գաղթեալք ՚ի Ջու-
ղայէ, յորում անեալ գոլով ՚ի ժամանակս պատանեկութեան
իւրեանց և առեալ գոլով զփորձ տառապանաց և նեղու-
թեան՝ ՚ի մեծ ութեան իւրեանց յաւելուն զկարեկցութիւն
իւրեանց և զդութ առ ազգայինս և առ հայրենիս։ Ըստ նո-
ցին օրինակի հն և ամենայն հայք որք գտանին ՚ի զանազան
քաղաքս Ջավայի, զի և նոքա ըստ ասոյն սակի գաղթեալք են
՚ի Ջուղայէ և անդ չնորհիւն Աստուծոյ և իւրեանց բարե-
ջան աշխատասիրութեամբ հանդիսացեալ հն, և ՚ի յաջողուածս
օր ըստ օրէ յառաջադիմեն նկրտին։ Ի հնդկաստան ևս իւրև
կիսատար մի յառաջ ըստ ասոյն օրինակի վառուն էր ազգասի-
րութիւն և հայրենասիրութիւնն յամենայն մեծագնեայս։ Ի-
նոցա ասեմ՝ որք անեալ ՚ի Ջուղայ ՚ի պատանեկութեան իւ-
րեանց, վաճառաշահութեամբ զօրացեալ էին ի հնդկաստան.
զի ոմն յաղագս ազգային թաղաւորութեան վերականգնելոյ
տալով զիւր խոհմնս՝ շարաչրէր զկանոնագիրք յաղագս
թաղաւորական կառավարութեանն, ոմն աւանդէր զգուռմար
վան հաստատութեան Դպրոցաց, միւս ոմն զնոյ կամէր գնել

գնման մի երկրին Հայաստանի, և միւսք ամենեքին ՚ի նման ո-
րինակ խոհմնս պարապէին և ՚ի ժամանակս իւրեանց զմե-
ծամեծս գործեցին, զորոց երկարաբանել արտաքոյ պատ-
մութեան կարգի գործ լինելով՝ համառօտեաւ անցանեմ,
այլ աւարտ և հազար անգամ ափսոս, զի մինչ ճնան որպիք
նոցա ՚ի հպէիկս և մնան սև ամորթ հնդիկ կանանց կաթամբ,
օտարանալ սիրեցին յազգէ իւրեանց, շինեալ գտան ազգա-
սիրական եռանդն ՚ի նոսա, և վերջապէս եղեն մարդիկ խոր-
հեալք ՚ի շահուց հարց իւրեանց։ Թէպէտ ոչ վասն ամե-
նեցուն են խօսք իմ, զի տակաւին բազումք կան որք վառ
պահեն զսէր ազգի, եկեղեցւոյ և հայրենեաց ՚ի սրտի իւրեանց՝
այլ ընդհանրապէս խօսելով տարբերութիւն մեծ կայ ընդ
միջ նախորդ և արդի հնդկահայոց ըստ ազգասիրութեան մա-
սին, այլ այսու ամենայնիւ, եթէ ազգասիրութիւն կայ՝ տա-
կաւին ՚ի հնդկահայս կայ՝ բազմատուութեամբ զհշմարտութիւն
քանիս գտանելով։

Սկիզբն բնակութեան ազգի Հայոց ՚ի բարելի կղզին Ջաւայ
եղև ՚ի սկզբան ութ և տասներրորդ դարու։

ՍՈՒՐԱՅԻԱ։ Ունի զհինգ տուն հայ բնակիչս բազկացեալ
՚ի 22 անձանց, որոյ կէսն են արք և կէսն իգականք, անուա-
նին ՚ի նոսա է Պարոն Պազար Յոհաննան, որ ունի զգործարան
շաքարի և առնէ զվաճառականութիւն։

Ճշմանաւոր է և Պարոն Մանուկ Յորդանանեան, որ է այր
մեկնեալ ՚ի սիրոյ աշխարհի, սիրող և պարապող ընթերցմանց,
և ըստ առաքինութեան մասին զոյգ ընդ ազգասիրութեանն
վկայեալ ՚ի բազմաց։

ՉԻՒՕՆ· ԹՈՒԱԼ· և ԲԱՆԻՈՒՄԱՍ։ Գիւղաքաղաքք
՚ի Ջաւայ, յորս կան չորս տուն հայք բազկացեալ ՚ի 16 բը-
նակչաց։

ՊՉԱՐԱՅ։ Ունի զտուն երկու և զբնակիչս 19։ Յայսմ
ահմանի ՚ի գաւառն Սումբրինգայ բնակի Պարոն Մարգարն
Սուքիասեան, որ է գաւառապետ և իշխան նոյն Սումբրինգայ,
որոյ կալուածք են իւր իսկ արծաթագին։

ՄԱՐԱՆԳ։ Ունի զհինգ տուն բնակիչս որք են կալուածա-

տեարք ունեն զգործարան շաքարի և լիղակի, և ամանք առ-
նեն զվաճառականութիւն: Անուանի է ի նոսա Գարոն Գազու
Անգրէասեան, որ ունի զկալուածս և յամին ի գործարանէ
իւրմէ ստանայ դքսան հազար փիքուլ շաքար: 5:

---

(1). Հայոց Ա. գլ-ին:

(2). Այն կոնդակ պոհե է Ճոպենաջագանե սրբոյ Ամենափրկչեան վանք:

(3). Գաղափար նոյն հրովարտակէ տուեալ է Շահումեան-ց՝ պահ է գրչութեան սրբոյ Ամենափրկչեան վանք:

(4). Ջու-ղայեցիք յաղագս հրկիզն պատճառաց ոչ յօժարէցան ընդ
հաստատելիսոանալն Նահապետին, նախ վասն ոչ ապատեղոյ ընդունել զնա-
ռայ Ջու-ղայեցւոյ, և երկրորդ յաղագս գոլոյ վասն նորա հարցիկ լի-
նելոյ հայկական հոռովմիականութեան: Յայն ատեն Ջու-ղայեցիք հրեան
գրեն զնուագրն առ հրեանութիւնն սրբոյ էջմիածնի յամի 1693, ըստ
երկերիցն օրինակի պապգրեն ի տարբ Ամենափրկչի վանին և պարծեն
զգան ընդ ամենայն տարբ: Արգելոյ առ զօրինակ այնր նամակի ոչ տեսողի
համարեմ յաղագս լինելոյ ազգային հնութիւն, ինչպէս արդարոյ հրգիր
պատմութեանս է գործ:

(5). 1. փետ-ին է 135. Անգղիական պոնդ.

Լ.

Սուրբ և սիրելի պաշտօնակցայ մերոց, և հարազատայ հաւատարմոյ երջանկացելոյ եղբարոյ ձշմարտախոհից և ուղղասիրաց, վերադիտողացդ սրբազանից զետեղելոց ի գերագահ և ի գերահռչակ, ի տուրբ և ի սրբարար Աթոռդ Էջմիածին ի մայրդ հասարակաց, նա և որոց ընդ հովանեաւ գործին որդիացելոց յաշխարհին արարատայ և յատրպատականէ, քահանայապետից, և քահանայից, և հաւատացելոց ուխտի ժառանգաւորաց և վիճակաւորաց տուրբ եկեղեցւոյ:

Ողջոյն ի քրիստոս մատուցանեմք սիրալիրական սիրով սրբութեան երկնաւոր խաղաղութեամբն հանգերձ մեք ի Ծօշ եղեալ քրիստոնէախառնմք զաստ եկեղեցականաց և աշխարհականաց: Ընդ որոյ և որով ճանուցանեմք պատուականութեան ձերոյ զեղելոց իրաց դիպելոց, որ ի մեր բուն եղեալ թշուառութեան ամանակի յանդգնութեան և յանպատրաստութեան մերոյ պատճառէ, որով կամք ամենեքեան երբրեալ և տատանեալ իբրև զնաւ խառնեալ յալեաց ծովու: Քանզի սկիզբն և աւարտ խաղաղութեան զբարեկարգութիւնն շինել իմանամք, դի ուրանօր բարձեալ է բարեկարգութիւն՝ արմատացեալ լինի աղմուկ խառնութեան, որպէս և տեսանեմք մերով աչսանելեօք: Քանզի օրքան վախճան առեալ է ի կենցաղոյս ընդ երանելին հանգուցեալ երջանիկ Հայրապետն մեր Տէր եղիազար՝ վրդովումն խառնութեան ոչ պակասի ի մէնջ, պատճառն անխոհեմ և անհանճար մարդոց գործ և արարմունք, որք յիւրեանց վատամեղութեանց ախտին ձգեալք և պարապեալք, որոց գլուխ և զօրավիղ զաստապատի Մինասն, որ ոչ գրոց աշակերտեալ ի մանկութենէ, և ոչ ձշմարտութեան վարուց հետեւեալ, ոչ գտեսականն ճանուցեալ, և ոչ գործնականին մասին հաղորդեալ, այլ զօրէն գռեհկաց զերկրաւորս և եթողջունեալ և ի նոյնն ցանկ զեգերեալ, ժամագիր եղեալ ընդ նահապետին ձեռագրով և կնքով միմեանց թէ միշտ ի քո կաթուղիկոսութեանդ ես եղէց աթոռակալ, այսու պայմանաւ յառաջեցուցեալ զայդ գործ, որ մեզ ամենեցուն ստոյգ և իրաւապէս յայտնի եղև որ այդ այդպէս է, և առաւել քան զայլ գիտակ եղաք ամենայնի՝ զոր չէ պարտ մի ըստ միոջէ արձանագրեցանել ի գիրս:

Ընդ որ իւր լեալ աստուածատուի Մինասն որ զայդ առնիցէ, միթէ աղգս արծաթագին է հօր գործս, որ՛ւմ և կամիցէ վաճառիցէ յաղագս պորտոյ և յօրովայնի իւրոյ, եթէ այդպիսի է կարգ և կանոն կաթուղիկոս ձեռնադրութեան՝ դի պակասք քան զնա որ ոչ կարիցէ զոմն կատարօղ ախտի իւրոյ ձեռնադրել կաթուղիկոս, քանզի ի ձերում աչխարհի յորում

գոն վանորայք և Եպիսկոպոսունք նաև ի մերս աշխարհի ։ Եթէ այլեւս ինչ որ առանց ընտրութեան և վկայականի թղթոյ ձեռնադրեալն է կաթուղիկոս , որում պարտ է հպազանդել՝ ոիվ է որ ոչ կարիցէ իբրև զաստապատին օծանել զոք ի պատիւ կաթուղիկոսութեան , ոիվ է որ պակաս է քան զնա որ օծեալ նորա լիցի կաթուղիկոս , և այլոցն ոչ , եթէ նորայն ընդունելի՝ ուրեմն այլոցն պարտ է լինիլ և ընդունելի, իսկ եթէ այլոցն ոչ՝ ուրեմն և նորայն ոչ, տկնաւ որ աստապատին ոչ է ի կարգի հասարակաց , այլ յոռի և անարգ քան զամենեսեան յաղագս անուսման և անվարժութեան իւրոյ , զոր տգիտութիւնն մայր գոլ սահմանեցին ամենայն մոլորութեանց , որով դա կայ պարտաւանդեալ որ այսպիսի ոճրագործութիւն գործեաց ի մէջ ազգիս , որ և յետ կատարման գործոյն գրեալ են առ մեզ կրկին պատճառս ։

Ասա թէ ըստ կաւակի հոգևոր տիրին արարաք զայս , երկրորդ թէ ի ձէնջ առաքեալ թղթոյն բանիւն գործեցաք ։ Առաջնոյն զայս պատասխանեմք , թէ եղիազար հոգևոր տէրն ոչ է արարեալ զայդ կտակ , որպէս և կանխագոյն յայտ խոկ է ձեզ , և յետոյ մեզ և ևս եղև զըստոյգն յայտնի . զոր եթէ կամիք մեք ծանուսցուք ձեզ զշշմարիտ կտակ հոգևոր տիրին , արդ որովհետև արար՝ վասն ի՞ր ոչ դրոշմեաց ձեռամբ իւրով ի քարտիսի՝ զոր կանխագոյն իսկ ունէր սովորութիւն յաւարտ բանին դնէր ձեռս ասելով՝ թէ առ ի հաստատութիւն բանիս եդի զձեռագիր ի վերայ . որ քանի թուղթ առ մեզ զոյ այսպիսի գրեալ և դրոշմեալ , հարկաւորապէս և առաւելապէս պմին իրի յաւէտ պարտէր զայդ սովորութիւն ի գործ ածել , զի համաշխարհականէ բանդ և իրագործութիւն , որով երևի ոչ գոլ շշմարիտ զաստացեալն ։ Ասեմք թէ և աստացեալ ևս լիցի , հայեցարուք ի կարգս և ի կանոնս հարցն սրբոց և երանելի նախնեաց , եթէ այդպէս է սովորութիւն և կարգ՝ կաթուղիկոսն , թարց ժողովոյ եպիսկոպոսաց և վարդապետաց , նաև հարց վանականաց լեռնակեաց կրօնաւորաց , և աշխարհաժողով հանդիսի , ինքնահաճ կամօք ըստ ախորժակաց սրտի իւրոյ , կոչեսցէ զոք ի պատիճ

կաթուղիկոսութեան , եթէ այնպիսին ընդունելի եղեալ է՝ և այժմ լինիցի , ապա թէ թիւր և զարտուղի է յընթացից նախնեաց՝ ուրեմն ոչ է ընդունելի , եթէ հարցն առաջնոց և նոցին կանոնաց ոչ անսան՝ գոնէ ի մերոսն եղեալ ժամանակի հարցն անսասցեն , որ ի թուահաշուութեան տոհմիս հայկական հազար երրորդի հարիւրորդի և տասն և հինգ ամի մեծանուն վարդապետք , երևելիք և նշանաւորք ժողովեալ են ի սուրբ Աթոռդ Էջմիածին հետևելով հարցն սրբազանից , և քանի գլխով քան կարգեալ յաղագս կաթուղիկոս ձեռնադրութեան , թէ որ ոչ լինին այնպէս՝ խոտելի է , որոց գրեալ բանքն լուսաւոր հոգի Մովսէս վարդապետին ձեռնադրով և այլ սրբազան վարդապետաց կնքով և գրով առ մեզ է , որոյ սաւսան և առ ձեզ առաքեցաք , եթէ այնց քանից միոյն համաձայնի արարեալն ներկայիս՝ ապա է մեզ ընդունելի , իսկ թէ ոչ՝ մեք ուժեք ոչ եմք պարտական և թէ զպարտսն պահանջեսցէ , այսքան առ առաջինն ։ Երկրորդին զայս տամք պատասխանի , թէ գրեալէմք մեք առ Տէր Եղիազար կաթուղիկոսն և ոչ կարեմք յուրաստ լինել , թէ ոչ գայցէ մանաւանդ խոպահանուս և յորժամ առաքեցաք՝ իսկոյն տանէնուսալիս , ասելով թէ ոչ եկից ի սուրբ Աթոռն մինչև և խորապետու թեամբն ի գալ յերուսաղէմայ նստաւ ի նոյն տպետ երևելոյ յաջս ոմանց , քանզի իւր խոհեմութեամբն ոչ զգացեալ մանաւանդ խոպահանուս և յորժամ առաքեցաք՝ իսկոյն ոչ գայցէ մանաւանդ խոպահանուս և յորժամ առաքեցաք՝ իսկոյն ձեռնադրով և այլ սրբազան վարդապետաց կնքով և գրով առ մեզ է , որոյ սաւսան և առ ձեզ առաքեցաք , եթէ այնց քանից միոյն համաձայնի արարեալն ներկայիս՝ ապա է մեզ ընդունելի , իսկ թէ ոչ՝ մեք ուժեք ոչ եմք պարտական և թէ զպարտսն պահանջեսցէ , այսքան առ առաջինն ։ Երկրորդին զայս տամք պատասխանի , թէ գրեալէմք մեք առ Տէր Եղիազար կաթուղիկոսն և ոչ կարեմք յուրաստ լինել , թէ ոչ գայցէ մանաւանդ խոպահանուս և յորժամ առաքեցաք՝ իսկոյն տանէնուսալիս , ասելով թէ ոչ եկից ի սուրբ Աթոռն մինչև և խորապետու թեամբն ի գալ յերուսաղէմայ նստաւ ի նոյն տպետ երևելոյ յաջս ոմանց , քանզի իւր խոհեմութեամբն

Թարց վկայականի Թղթոյ, ապա խնդրեալ էին ՚ի մէնջ մանաւանդ զոր մեք արդեանս գրեալն յայնժամն էաք գրելոց, բայց երկրորդ Հողեփեռնէոս և գադղոսս անկեալ և կործանեալ զաւետս կաշառակուր եղեալ և արծաթով կուրացեալ, կըրկին և երեքկին անդամ ընկալեալ զկաշառ լիապատի Հուքմ հանեալ և առաքեալ առանց մեր ժանսարի, սալահի և գիտուԹեան, որոյ վասն և ինքն կործանեցաւ, և նոր քալանԹար հաստատեցաւ Մահտեսի Խօջա Պետրոսի որդի Գրիգոր տոսիս օրհՆեալ Խօջա Ղուկասն ամենևին յար և նման բարեպաշտուԹեան հօրն իւրոյ: Ա.Յսուհետև կաշառն անգործ եղեալ ՃշմարտուԹիւնն է Թագաւորելոց և ուղղուԹիւնն հաստատելոց: Ծամէ այսուհետև մեզ սիրելիք ՚ի քնոյ զարԹնուել, քանզի գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ: Զայս ԹուղԹ վասն այնր առաքեցաք առ մեծուԹիւն ձեր զի ցուցանիցէք կաԹուղիկոս եղնողիզ եԹէ կամի դա քոնուԹեամբ, և ուժգնուԹեամբ բազկի իւրոյ տիրել մեզ՝ ոչ կարէ, քանզի մեք ոչ ումեք եմք արծաԹագին, զի բարձրեալն որոյ տէրուԹիւնն սուրբական է և իշխանուԹիւնն քնուԹեամբ՝ քոնաքար ոչ ումեք տիրէ, Թող ԹէՆ մարդ: Իսկ ապա ԹէՆ արդարուԹեամբ և իրաւամբք տիրէ՝ Ճգազանդիմք և մեք առաւել քան զառաւել: Եւ ԹէՆ զինչ է արդարուԹիւն և իրաւունք, ՚ի ԹէՆ գնալ անխոտոր ըշուԹիւս յառաջնոցն սրբոց, եԹէ նախնեացն և դերագունիցն ոչ՝ սակայն յետնոցն որ ՚ի մերումն ամանակի զառաջնոցն ստացան վարս և առաքինուԹիւնս, ՃշմարտուԹեան կարգաց և կրօնից հետևելով, զլուսաւոր հոգիք Մովսէս և փիլիպպոս կաԹուղիկոսացն ասեմք, որ ՚ի վերջին ժամանակս վայելեցան իբրև զարեգակն ջահաւորեալք ՚ի մէջ սուրբ եկեղեցւոյ և յաղագս Հայաստանեայց: Եւ զինչ է խնդիր մեր և զոր՝ համառօտաբար կարգեսցուք, երկոտասան գլխօք: Նախ զի կաԹուղիկոն միշտ և անպատրաստ ընԹերցցի զԱստուածային գիրս և ինքն նովիմբ վարեսցի և վարեսցէ զեկեղեցի: Երկրորդ զի գպրատունս և ըզդասատունս հաստատեսցէ յամենայն տեղիս, որպէս սովորուԹիւն է այլազգեաց քրիստոնէից, և մանաւանդ ԹէՆ մեզ իսկ

գլխովին նա և պարսից և՛ս, զոր գիտողացն է քաջայայտ ԹէՆ ոչ քան ունին ջանք և փոյԹ յայդմ իրի, քանզի շինուԹիւն և հաստատուԹիւն ազգի գովաւ լինի: Որպէս և տեսանեմք խռպանացեալ և անպիտանացեալ ազգն վրաց յաղագս ոչ ունելոյ փոյԹ զայնմանէ: Երրորդ զի և ինքն ասուեղէն ըզդեցցի և ոչ բամբակեղէն կամ վշեղէն և ոչ այլոց Թոյլ տայցէ: Զորրորդ զատ և առանձին ՚ի միաբանից ոչ յաղօԹս կացցէ, և ոչ հաց կերիցէ, այլ ընդ միաբանսն հաղորդեսցի, ՚ի յամենայն աղօԹսն և ՚ի հացկերոյԹ սեղանատեղն: Հինգերորդ մի լիցի առանձին տնտեսատուն և մառան, և մի իմ և քո ՚ի մէջ բերիցէ ՚ի հասարակ տան, ինքն իւրայովքն աւելորդօք քան զհարկաւորն շատացեալ, և հասարակն անխընամ և անայցելուս մնացեալ կարօտ հարկաւորին, այլ զամենայն մի լիցի, եԹէ գան ցարան եԹէ շահմարան, եԹէ տընտեսատուն և եԹէ սեղանատուն: Վեցերորդ մի գործեալ սիգաքայլ երիվարօք յոխորտացեալ յօրանայցէ, այլ կիսիշխօք շրջեսցի, արպէս և տեսեալ իսկ եմք զնախնիսն առ չօք մերովք: ԵօԹներորդ ոչ ունիցի երկու կամ երեք և չորք վայրակ որպէս այժմ լսեմք, այլ միով սուրհանդակաւ բաւականանալ որպէս նախնի կաԹուղիկոսունքն: ԸնԹերցորդ նոր զարմանս և ծիծաղելիս ոչ առնել, ՚ի, ԹէՆ քարշել առաջի ըստ օրինի իշխանաց հեզակս մկ, երկու, և կամ աւելի և պակաս, և կապել ԹիւրԹ և ղազարայ, որ կարի հեռի է ՚ի հոգևոր իշխանուԹենէ, զի զէն զինուորուԹեան մերոյ ոչ է մարմնաւոր՝ այլ հոգևոր ըստ առաքելոյ: Ինն երորդ ոչ պահել մատաղ մանկունս զսպասաւորս առաջի զարդարեալ զգեստիւք ՚ի գայԹակղուԹիւն տկարացելոց, այլ կատարեալ հասակաւ և մուրուօք սև աղգեստ և խոշորահանդերձ ՚ի յամօԹ հակառակորդաց բամբասողաց: Տասներորդ արանց տգիտաց և անվարժից մի տայցէ պատիւ Եպիսկոպոսական, և իշխանուԹիւն վարդապետական, քանզի նոքա որ ունին ջան, և աշխատասիրուԹիւն ուսման՝ տեսանելով զայլ Թարց ջանից և աշխատանաց ընկալեալ զպատիւ ԵպիսկոպոսուԹեան և զաստիճան վարդապետուԹեան, և

նոքա յուսահատեալ խափան լինին ի բարի յառաջադիմու-
թենէ և մնայ աղգս ի ստէպ անգիտութեան խաւարի յաղագս
անընտրութեան ըստ Արիստոտէլի որ ասէ, եթէ կամիս բա-
րեկարգութիւն տան, ընտրեա զլաւն ի վատթարէն և զլաս-
տակատուրն յանջանէն, և ըստ իմաստնոյն թէ՝ զփառս իմաս-
տունք ժառանգեացեն: Մեռասաներրորդ՝ ոչ ածել պա-
տիժս անպատշաճս ի վերայ ուրուք անյարմար կարգի և աս-
պիճանի, որպէս լսեմք թէ այս ինչ մարդոյ մուրուս կըտ-
րել է, և այս ինչ մարդ ի սիրն կապեալ, ոչ միանգամ լսեմք՝
այլ յօրինակի, ուստի ոչնի օրինակ զայդպիսի անոպայ արար-
մանց, զայր եպիսկոպոս առանց ժողովոյ և պատաստանի, ի
ժամ հաց կերուրթեան և զինի ըմպութեան կապեալ ի սիրն
և բրածեծ տալ առնել արանց սրիկայից և եղբզակաց և
կետոյ զմուրուն հատանել: Բարեպաշտն Թոստանդիանոս երբ
արար զայդ Արիոսի թէպէտ և սպանման էր արժանի, և կամ
փոքրն Թէոդոս առ նեստոր երբ գործեաց զայդ, և կամ
Հայրապետքն սուրբք երբ օրէնս վարկան և իրաւունք հա-
մարեցան այդպիսի դատաստանաւ դատել զհերձողական և
մանաւանդ եպիսկոպոս, որպէս գրէ սուրբն Կիւրեղ Աղեք-
սանդրացի յաղագս պղծոյն Նեստորի թէ՝ լուծումն արա-
րեաք զնա յեպիսկոպոսութենէ իրաւամբք ժողովոյն: Զի
Մովսէս հոգևոր տէրն երբ արար զայդ և կամ լուսաւոր
հոգի փիլիպպոս կաթուղիկոսն, ինչամ վարեալ զկաթու-
ղիկոսութիւնն երբ և կամ ոմն մուրուս կտրեաց կամ սիրն
կապեաց, նոյնպէս և Յակոբ հոգևոր Տէրն քան և հինգ
ամ կացեալ յաթոռն միայն Եռափրիոսին էած զայդ պատիժ,
նմին աշխարհ վիլայէր մահու գոլ արժանի, և ոչ լոկ պատ-
ժոյ, զոր այժմ տարի և կէս է քանիցն լսեմք զայդպիսի
խայտառակեալ գոլ և ոչնայն պատշաճաւ, այդպիսի պա-
տիժ քաղաքական օրինի և դատաստանի է անկ և ոչ եկեղե-
ցական: Վասն որոյ ոչ կամիմք զայր եպիսկոպոս կամ վարդա-
պետ Թարց ժողովոյ և կանոնաց դատել կամ պատժել,
յորմէ պատշաճէ վնասս յոլով ծնանի, զի ժամանակս չարէ:

երկոտասաներրորդ՝ մի փոփոխեսցէ զԹեմ և զվիճակ եպիս-
կոպոսաց ըստ նմանութեան բրքիշոյի և շմուէլի, որ միմն
զվեռեալ եպիսկոպոսաց վիճակն յափշտակէր, իսկ միւսն և
զկենդանի եպիսկոպոսաց. որպէս գրէ քերթողահայրն Մով-
սէս ի վիպագրութեան իւրում: Այլ ըստ ուղղիղ կանոնաց ա-
ռաքելական և հայրապետական իւրաքանչիւր եպիսկոպոս
տիրէ յիւրում վիճակին, և իւրաքանչիւր Թեմ յիւրում ա-
Թոռոյ կացցէ և մնասցէ՝ զոր ի բնէ ունի կարգեալ և հաստա-
տեալ: Բայց Թէ առաջնորդ եպիսկոպոսն անուղղագործս ու-
նիցի՝ դատեսցի ըստ իրաւանց կանոնաց եկեղեցւոյ, և որպէս
արժանն է պատժեսցի, քանզի ի փոփոխմանէ և ի բաժան-
մանէ բաղում չարիս ծնեալ է, ծնանի և ծնանելոց է, ըստ
Տէրունականն քանի՝ տուն, քաղաք, և Թագաւորութիւն բա-
ժանեալ կործանի. և զի ամենեցունցդ է քաջայայտ որ իւրա-
քանչիւր աԹոռ պահեալ է ընդ իւրոյ վիճակին, որոց ոչ է
պարտ բաժանիլ ի միմեանց. Թէպէտ յետ արքասէր կաԹուղի-
կոսին Տիառն Փիլիպպոսի, ոմանց բաժանումն եղեալ է, և
այն ոչ կանոնական իրաւամբք՝ այլ յանիրաւ յարձակմանէ՝
որոց յայսմ հետէ ոչ կամիմք, և ոչ Թողացուցանեմք լինիլ
զայն անկարգութիւն: Եւ ի վերայ այսր ամենայնի, առտա-
պատոյ Մինասն արտաքսեսցէ և հալածեսցէ ի սուրբ ԱԹո-
ռոյդ և յայրարատ դաւառէ, և կորուսցէ ի քնիկ տեղի իւր,
և զոր ինչ ստացեալ է և ունի՝ խլեսցէ ի ձեռացն, մորուս
կտրելոյ, սիրն կապելոյ, և բրածեծ առնելոյ դաս է արժա-
նի, և ոչ այս և այն. հալածեալ կորուսանիցէք ձեռագրով
որ այլ յերևան չկոխէ բարք է, ապա Թէ ոչ՝ ձգմարտին
յայտնի է, մեք առնեմք արքունիք հրամանաւ, և գիտեմք
Թէ որպէս անպատմելի, և անասելի խայտառակութեամբ կո-
րուսանելոց եմք հանդերձ դատապարտական պատժիւք, քան-
զի զդա և զսա բազմապիսի կաշառօք կուրացուցանէր զայս գա-
հընկալ այրաբերպ դաղանս յաղագս ի գլուխս հանելոյ զիւր
չարութեան գործն, վասն որոյ ոչ կամիմք այդպիսի բան-
սարկու և շռայլող առն մնալ ի սուրբ և ի հռչակաւոր տե-
ղիդ, այլ յանկման օրէնք ծանաւոտ կացցէ, որպէս և աս-

ժան խսկ է : Ահա զայս երկոտասան բանք կարգեալք պատհանէմք ի կաթուղիկոսէն, ով ոք և իցէ և զայս բանս խըլնըբանաց եղբայրական սիրով առ ձեզ առաքեցաք իբրև անդամք միմեանց լինելով ցաւակից, և պոռք տարեալ ցուցէք իւրն, եթէ հաւանի և ընդունի գրով և կնքով իւրով և վկայութեամբ երջանիկ եպիսկոպոսաց՝ առ մեզ առաքեցէք իբրև զայետիկար անջինջ մնալ առ մեզ · յայնժամ և մեք սիրով հոլս հպատակութեամբ ճառագանել լինցուք նմա իբրև գլխոյ, և ինքն թաղաւորեսցէ յեկեղեցիս մեր որպէս զարեզպանն, ապա թէ ոչ ընդունիցի զասացեալս մեր և կամ գըրեալքս խառան համարեսցի՝ յայնժամ զդրեանս մեր պարձուսջիք յետս, յայնմ հետէ գետեմք և մեք թէ որպէս պարտն էցէ առնել յամենայն կողմանէ անվհատ : Տպեցաւ տիպս երկու հարիւր, ի տրան սուրբ Ամենափրկչի վանս նոր ջուղայու, յիսպահան քաղաքի, ի թուսւմ կհնարթրին մերոյ հազար վեց հարիւր նսուն և երիք : Եւ ի հայոց հազար հարիւր քառասուն և երկու : Յամենեցուն Մայիսի ա :

---

(5) · Տպագրեալ պահին այնոսիկ մանաւանդ ի գրոցդան վանին Ամենափրկչի :

(6) · Ընդակ և նուագը գոյանց ի կարգի պարտաւորեալս նշանակել պահին ի մատենագրանի որբոյ վանին Ամենափրկչի :

(7) ·

(8) ·

(9) · Սրբազանս Աստուած ի 21 մայիսի յամի 1126 (1676) գրէ զնուագը օրհնութեան ի Համպան առ Տէր Մանուէլ և առ Տէր Սիմէոն վրդանայս, յորում առնէ յիշատակութիւն, ,, եկեղեցոյ զնուագ ,, նէն և հաստատութիւնն լուծ, յայժ ուրախութիւնս և առատեցուս ընդ ,, ծայ սուրբ եկեղեցոյն ոչ պատուհաս գոգնոց և այլ նուագ և ,, ֆանէլէ ,, :

(10) · Խնդրագիրս հայ հաստատութեան Համպանայ յամի 1852 գրեալ առ ներկայ Աստուածընդ Սրբոցն թադէոս արք եպիսկոպոսն :

(11) · Գաղափար նշանակելոյ ի սահմանին Հնդկաստանի՝ են ընդ իշխանութեամբ Բրիտանիոյ հաստատելոցն :

(12) · Գիր յորինեալ և տպագրեալ ի Մադրաս :

(13) · Արուն Աղայ Պետրոսի Ոսկանեան, և կոչի Աղայ Գրիգորի Սահեան · Տէր :

(14) · Աղայ Յովնէի Աբրեան, որ ի Սմբատիզ, առնէր մատագործութիւն այնպէս, այլոց ալղեցաս :

ՅՕԳ · ՂՕ՝

Կալուածք Ամենափրկչեան վանք և պարագաները ասին ստացուածքն :

ա . Կալուածք զոր ունի այժմ վանքն՝ սեփհականեցան ըստ կրկին տեսակի, նախ զի մեծ մասն գնեցան հետ զհետէ ի նախկին Առաջնորդաց, և երկրորդ՝ զի ի ժողովրդոց բարեպաշտից ամանց տուեալ եղին նուէր առ վանքն ի յիշատակ հոգւոց իւրեանց (1) : Ի զօրանալ բռնութեանցն ի Ջուղայ լեռնէն և տանուերրորդել դարու, մինչ բազումք լքեալք զտունս իւրեանց ելին և փախեան ի Ջուղայ, տունք նոցա անտէրունչ և սկսան աւերանալ, վանն որոյ տնօրինացին անտերունչ և սկսան աւերանալ, վանն որոյ տնօրինացին նեցաւ զի որ կարողն է զամայի տունսն հարթեսցէ և արասցէ այգի (2), ուստի յայնմ ժամանակի յոյժ ւիւրաքանչիւր լինէր գնելն զայգիս և զկալուածս :

ե . Կալուածք վանին ըստ հին ֆեռագրի ցուցակի :

Ջանգիրէնց Պողոսի այգի	4 :
Փիլէնց այգի	1 . 2 :

Հավքէնց վախմին	6։
Ղազարէնց տուն	1։
Ընկուզի այգի	6։
Աբեթաղէնց այգի	6.5։
Խերբվանի Յաննայի այգի	7։
Մերիտատի այգի	3.7։
Պետռոսի ղալանդարէնց մուլք	3։
Յոհան վարդապետին	6։
Ղալանդարէնց տուն	1.5։
Գոլ սանուէնց տանի այգի	1։
Հահրիմանէնց բաքանին	2։
Ժիր Սահրադէնց տուն	6։
Ալաթէնց այգի	13.5։
Խորայէլէնց այգի	7.5։
Արկևելի այգի	16։
Ղաղի Մէյդան	6։
Համբիզ Ծատուրի այգի	6։
Պօղոս վարդապետի այգի	2։
Ղամալի այգի	5.2։
Յովսէնց և Հախնաբաթի այգի	7։
Խաղողի այգի	18։
Գոզլաբէկէնց	12.2։
Տէր Պետրոսի	2.7։
Գրիգոր աղայի	8.5։
Յակավզինէնց	1.2։
Գումար	149։

Է. Արտէ կալատաք վանէն։

Նորաշէն այգի	26։
Ալաթէնց մուլք (կալատաք)	8.5։
Ալաթէնց միւս երես	3։
Ղադումտատան մուլք	7։
Ղազէէ մաչէպ մուլք	4։
Ղազէնց մուլք	14։
Յակիմ Ստեփաննոսէնց տուն և այգի	3.4։
Գանգրէնց մուլք	8։
Ղալանդարէնց	1.4։
Գրիգորէնց այգի	5.5։
Մի կտոր սաղայ մուլք	2։
Մուրատէնց եկեղեցի	4։
Օհանայ վանք	6։
Խաղողի մեծ այգին	24։
Ղհաբուդատան	6։
Գովջաբէկէնց այգի	9։
Յուլիխանէնց	8։
Տէր Յակոբէնց	1.3։
Ջարհազարէնց երկու այգին	10.7։
Ալախի այգին	4։
Յոսէյնի այգի	3.5։
Հավլէնց եկեղեցի	1.3։
Գումար	151.6։

Ըստ նոր չափման որ եղև ՚ի 1852 ամի, հրամանաւն Ներ-
կայ Թադեոս Սրբազան Առաջնորդի՝ բովանդակ վանքական
կալատաքն բովանդակին 146 Ջրիք։ Այգին կոչեցեալ Նորա-
շէն կամ սերկևելի՝ է ծառատունկ։ Այս այգի ըստ որում է
լեզու գետոյն զանդարուքայ՝ զբազում վնասս ընծայէ վա-
նին, զի ՚ի գարնան ժամանակի ՚ի յորդել հեղեղաց բարձրա-
ցեալ ջրոյ գետոյն փլուցանէ զորմունս սոյն այգւոյ։ Ի 1855

ամի կարի սաստիկ եղև յորդութիւնն ջրոյ նոյն գետոյ, որոյ
զնմանն ոչ ոք տեսեալ էր նախ քան զայս, վասն որոյ հիւսի-
սային որմն նոյն այգւոյ խափան տապալեցաւ : Ի 1856 ամի մե-
ծապատիւ ճախուք շինեցաւ կործանեալ որմն այնր հաս-
տատիւն կիրուքարով : Եւ սակս զարձուցանելոյ զջուր գե-
տոյն շինեցաւ թումբ մի լայն զի ջուրն անցանիցէ ի միւս
կողմն, այլ հեղեղն 1857 տարւոյ կործանեաց զմասն մի նոյն
նորաշէն թմբոյ և զարձեալ շինեցաւ այն ի 1857 ամի : Վա-
ռելիք վանացն տայ այս այգի ի ծառոց՝ զորս կամ քշտեն կամ
զչորացեալսն հատանեն : Մասն մի ի սոյն այգւոյ վաճառեալ
ի 1750 ամի, և մասն մի գնեցաւ ի դրացի կալուածատիրոջ,
և ի Մովսէս Առաջնորդէ միաւորեալ ընդարձակեցաւ այգին :
Այլ ի սմա չարխով, որ է փայտեայ անիւ ջրահան, որոյ մի
ուխտ շրջապտոյտ գնալով հանէ զջուր կրկին չափով քան
զջուրն զոր երդն մի հանէ ի ջրհորոյ (3) :

Կալուածք կոչեցեալ սադայ մուլք, ուրանօր ցանեն զցո-
րեան՝ զբամբակ՝ զթամբաքու և զայլ արմտիս, է 45 և կէս
ջրիք, որոյ մասն գնեալ եղև ըստ մեծի մասին ի Մովսէս Ա-
ռաջնորդէ, և մասն մի ընծայեցաւ վանին ի 1730 է՝ ց1758
(4) :

Այգի խաղողոյ, կոտոր կոտոր տունք աւերեալք, գնե-
ցաւ մեծ երեան ըստ մեծի մասին ի Մովսէս Առաջնորդէ, որ
միաւորեաց զայնուհետև ընդ միմեանս յամի 1720 է՝ ց1750 :
Զարհաղարէնց կոչեցեալ մեծ և փոքր երիսքն գնեալ եղեն
ի Յարութիւն Առաջնորդէ յամի 1802 (5) :

Օ պօղ չարէկէնց երեան յամի 1746 գնեաց Յակոբ վար-
դապետ ի Մարեամիոնանուց Մկրտումէն (6) :

Օ Տէր Պետրոսէնց սադայ կալուածն գնեաց եպարապետ Ա-
ռաջնորդ յամի 1823 ի Տէր Դաւիթ Մկրտումէ և ի Ժառան-
գաց Գիլիպոսեան : Այսոքիկ այգիք են 40 ջրիք (7) :

Կալուածք կոչեցեալ Օհանայ վանք՝ զկնի ամայանալոյ
նոյն հակեղեցւոյ մեծաց ընդ կառավարութեամբ Ամենափրկչի
վանացն :

Այգին կոչեցեալ Հաքիմ Սահմանէնց՝ վաճառեալ եղև

վանին :

Կալուածն կոչեցեալ Շահվէլէնց եկեղեցի՝ էր յառաջ
քան զայս ի ձեռս Սէհիդ միր Ալէօվալոյ, որ բռնաբար
տէրապետեալ էր զայն իբրև կալուած անտերունչ. այլ Սբր-
բազան Թադէոս հայիսկոպոս Առաջնորդ վանին ի 1855 ամի
քազում ճգամբ կորզեաց զայն ի ձեռաց նորա :

Այգին կոչեցեալ վանքի՝ գնեցաւ ի Սրբազան Յովհաննէս
Սաբեենեան Առաջնորդէ ի 1845 ամի :

Այգին կոչեցեալ Գրիգորէնց 6 ջրիք՝ գնեալ եղև ի նոր-
կայ Սրբազան Թադէոս Առաջնորդէ ի 1854 ամի : Այգին 3
ջրիք՝ կոչեցեալ Հօսէֆնի՝ գնեալ եղև ի նորկայ Սրբազն Թա-
դէոս Առաջնորդէ ի 1856 ամի : կալուած մի 2 ջրիք ի
մէջ կալուածոյն վանին գնեցաւ ի նորկայ Առաջնորդէ :
Սառցատուն շինեալ ի 1856 ամի : Տունն քիւրանթար Ղու-
կասէնց կամ Սիմէօնեանց գնեցաւ ի Սաբեենեանց Յովհաննէս
Առաջնորդէ ի 1843 ամի :

Տունն կոչեցեալ Լիլինէնց՝ գնեաց Մովսէս Առաջնորդ :

Տունն կոչեցեալ Փռանկ Նազարէնց կամ Գազալէնց՝ գը-
նեալ ի Սաբեենեան Յովհաննէս Առաջնորդէ :

Տունն կոչեցեալ Բէկուամ Շիրազենց գնեալ ի 1830 ի Յա-
կոբոս վարդապետէ :

Վերոյ գրեալ տունք մինան առանց վարձու և առանց ար-
դիւնաւորութեան, զի տունք ի ջուղայ ոչ բերին զարդիւնս
այլ միայն պահանջին զծախս նորոգութեան : Հրապարակ կո-
չեցեալ ջուղայու Մէյդան՝ ուրանօր յամենայն կիւրակէ
լինի տուրնաւորութիւն : Բերէ նա յամին ց15 – ց20 Թուման
արդիւնս : գնեաց զայն Սաբեենեան Յովհաննէս Առաջնորդ :
Արդի Առաջնորդ Սրբազան Թադէոս արք եպիսկոպոս յա-
րեւելեան կողմն նորա շինեաց զխանութս և զկրպակս, յոյս ա-
լով զի առաւել ևս բերցէ զարդիւնս յայսմ հետէ :

ՀԱՐԿԱՏՈՒԵԼ ԿԱԼՈՒԱԾՔԻՆ ՅԱՌԱՋԻՆ ։

Ջահանգիրէնց տուն	1.3։
Ղամալէնց այգի	8.1։
Կամալէնց տուն	1.3։
Աղբաշէնց այգի	9.5։
Տէր Մարտիրոսէնց այգի	6։
Գաբրիէլէնց այգի	4։
Վէրիմալայոնց այգի	5։
Շահվէլէնց վախմի այգի	11.8։
Ա՛էլքաղէնց և Թօփչէնց չարխով	16։
Յիսուն 8 և կէս ջրիք	58.5։

Ա՛շաղրուր գեօղ հայոց մի վարսախ հեռի ՚ի ջուղայէ՝ էր ընդ կառավարութեամբ վանին, այլ ՚ի 1828 ամի սպանաւնի Շիրազեցի այլազգի ոմն, զորմէ կարծիք լինի թէ հայք են սպանօղ նորա, վասն որոյ ծագի խռովութիւն և նեղութիւն մեծ յաղագս ջուղայեցւոց, ՚ի պատճառս այնր սոյն գեօղ տուեալ լինի դենպատին վասն պաշտպանելոյ զհայս ՚ի վտարձումէ անտի ։

Ջաղաց կամ աղօրիք՝ որ կայ ՚ի տեղին կոչեցեալ Միւնջուղ կամ առվագլուխ, նոյնպէս տուեալ լինի այլազգեաց առանց ինչ վաճառման կամ վանքական օգտի (8)։

Ե. Կալուածք վանքական ՚ի սկզբանէ անտի մինչև. ցարդ բարերնորհութեամբ տէրութեան պարսից ազատ եղեն ՚ի հարկատուութենէ։ Թագաւորն Շահսուլթան Հօսէյն թէպէտ այլազգ իւրեք չունէր քաղցր ակնարկութիւն առ Հայս, այլ քանզի այսմ մասին եղոյց զիւր արքայական բարերնորհութիւն, զի առաջին պատգեւապիրն ապահարկութեան վանքական կալուածոց շնորհեցաւ ՚ի նմանէ յամենայնն Շավալ ՚ի հէճրիէի 1116 (1710), որ իբրև սուրբ հրամանն (յաղագս Սաֆիաֆեան անուանն) ընդունելի եղև տէրութեանն պարսից

մինչև ցարդ (9)։

Ա՛կրտիչ Առաջնորդ յամի 1784 տայ աղերսագիր առ Քէրիմ խանն, յայտնելով ՚՚ Թէ կալուածք վանքական, որ ՚ի Ջուղա ՚՚ ղայ, էր ապահարկ յամենայն արքունի պահանջմանց, և ՚՚ յառաջնոյ ժամանակէ մինչև ցարդ, որ է ժամանակ Թագաւորութեան ձերոյ, չին ստացեալ ինչ և ոչ ոք արարեալ է ՚՚ զպահանջ. զի ամենայն օգուստափառ Թագաւորք Սաֆիաֆեան, և Թագաւորն Նադիր շահ շնորհեալ են զհրովարտակ Աստուածանման մշտնջենաւոր հրամանի՝ յաղագս ըստ ՚՚ ն և իցէ մասին ոչ պահանջելոյ քաղաքապետաց և հարկահանից զգենար մի յայգեաց մեծ վաճին, և շնորհիւ մեծ ՚՚ ծի տէրութեան ՚ի վաղնջուց մինչև ցարդ ոչինչ են պահանջեալ։ Արդ աղաչանք և խնդիր ՚ի գոհարասարաս յուսս ՚՚ սուրբ Թագաւորութեանդ այս է՝ զի վասն սիրոյն Աստուած ՚՚ ծոյ և ՚ի շնորհս բարձրագոյն գլխոյ (որ ժամանէ մինչև ՚՚ յամպս և աստղք են նմա հովանի) ձերոյ շնորհեսցի հրամանի, վարտակ Աստուածանման անդառնալի հրամանի, զի այդիք ՚՚, վախմ եղեալ վանաց ըստ հին սովորութեանն, որ մինչև ՚՚ ցարդ յամենայն պահանջմանց դիւանի ազատեր և ապահարկ, յայսմ հետէ և լիցի այնպէս, և ոչ ոք արասցէ ՚՚ զպահանջ ինչ, զի եղիցի մեզ տեղի յուսոյ վասն սրտի ՚՚ մտօք աղօթելոյ յաղագս բարերջանկութեան մեծի տէ՛ ՚՚ րութեան ՚՚։

Վ՚էրիմեան, որ բարեխնամ էր առ հայս և ունէր զյատուկ քաղցր ակնարկութիւն առ յիշեալ Մկրտիչ Առաջնորդն, գրեալ է ՚ի ձակատ նոյն աղերսագրոյ զհրաման իւր, ո՛ ՚՚ րոյ այս է Թարգմանութիւն. ՚՚ Հրովարտակ մեծ (տուեալ ՚՚ եղև) զի բարձրաստիճան և գերազանցապատիւ . . . հա՛ ՚՚ ջի Ամենգիխան քաղաքապետին Սպահանայ գիտելի լիցի, ՚՚ Թէ յայսմ ժամանակի ընտրեալն ՚ի հոգևորականաց քրիս՛ ՚՚ տոնէից Մկրտիչ վարդապետն եկեալ ՚ի սպաս մեր յայտ՛ ՚՚ նեաց, Թէ վանքական կալուածք ՚ի հին ժամանակէ մինչև ՚՚ ցարդ ազատ և ապահարկ են յամենայն արքունի պահանջ՛ ՚՚ մանց, վասն որոյ ձեր բարձրաստիճանութիւն վերահաստա՛

« լեցի հին պարգևագրաց քննելով ըստ արժանւոյն, զի ևթէ
« ի վաղնջուց մինչև ցայժմ եղեալ է այնպէս՝ ձեր գերա-
« դանցութիւն ևս վարեսցի ըստ այնմ կարգի, ոչ պահան-
« ջելով զդիւանական հարկս ի կալուածոց անտի, առանց
« ինչ փոփոխութեան վարելով ըստ առաջնոյ կարգին, և
« արժանի հատուցանդութեան ճանաչելով հրամանիս այսմիկ :
« Գրեցաւ յամենայն բանագան 1190 (1784) :

Ցաթաղիշահ հաստատեաց զայն ապահարկութիւն իւրով հրովարտակաւ յանուն վեհափառ Սօլթան Մահմուդ միրզայ Սէֆօվլէ որդւոյ իւրոյ քաղաքապետի Սպահանայ, գրելով ի Թուականի 1248 (1832) : Նախ յանձնարարութիւն յաղագս Ցովհաննէս Առաջնորդի, և ապա սակս վանքական կալուածոցն հրամայէ այսպէս . « Եւ հրամայեցինք գործակա-
« տարաց Դիւանի զի հարկն արքունական որպէս էր ի ժա-
« մանակէ Թագաւորութեանն Ցաֆիաֆեանց (որոց ի գերդ-
« մանս լոյս վայլատակեսցի) մինչև ցայժմ զի ապահարկ էին
« վարդապետքն : Դուք և ս ապահարկ կացուսջիք զնոսա ա-
« ռանց իմիք ներողութեան, զի անդորրութեամբ սրտի և ապա-
« հովութեամբ պարապեսցի ի գործս պարտաւորութեան
« պաշտօնին իւրոյ, առանց երբէք վարելոյ հակառակ հրա-
« մանիս, որում արժանի հատուցանդութեան ճանիցիք : Գրե-
« ցաւ յամենայն բէբիօլանի, 1848 (1832) :

Ապրատին և ս Մահմուդ շահ արքայ հաստատեաց ապա-հարկութիւն ընդհանրով զհրովարտակ յամի 1835, առ խոս-տովանանն գրելով զհրամանն, նախ յանձնարարութիւն յաղագս Ցովհաննէս Առաջնորդի և ապա սակս հարկին և կալուածոց վանին հրամայէ . « Եւ զարձեալ վասն հարկապահանջու-
« թեան Դիւանին՝ որպէս ի ժամանակէ Թագաւորացն Սա-
« ֆիանեան (լուսաւորեալ եղիցի տեղի հանգստեան նոցին)
« և այլ Թագաւորացն առաջնոց տնօրինեալ և հաստատեալ
« էր, և հրամանաւ նոյն վեհափառից 262 Թուման որոշ նը-
« շանակեալ կարգադրեսցի և այժմ, և վարդապետք տեղ-
« ւոյն (այ Ջուղայու վանաց) որպէս ըստ կարգին այնմիկ ա-
« զատ էին ի հարկաց՝ եղիցի և յայսմհետէ նոյնպէս զերծ

« ի պարտաւորութեանց Դիւանի, վասն զի նոքա են ի հա-
« զանդաւ և ի սրբամատեան ժողովրդոց, և են հպատակք
« շնորհաճաւալ վճռի և բարձրագոյն տէրութեան, վասն
« որոյ այս հրովարտակ կատարեալ բարեհաճութեամբ ըստ
« Աստուածանման հաստատուն հրամանի տուեալ եղև, և
« այնմ հաւատարիմ պաշտօնէի հրամայեալ լինի՝ զի վերա-
« բերեալ առ յիշեալ վարդապետն ըստ ամենայն մասին ա-
« րասցէ օգնականութիւն, զի անդորրութեամբ մնասց պա-
« րապեսցէ նա ի գործս պարտաւորութեանն իւրոյ, ազօթե-
« լով բարեյօժար սրտի մնօք յաղագս հաստատ տէ-
« րութեան : Եւ սակս արքունական հարկին և ապահար-
« կութեան վարդապետացն վանաց Ջուղայու, ըստ օրինակին
« որ ի վաղնջուց կարգադրեալ է՝ հրամայեցէ մնալ յայնմիկ
« տնօրինութեան, և առանց իրաւացի պահանջման ներող-
« թիւն լինի մի հասուցանել : Տնօրինեալ եղիցի ըստ այսմիկ
« հրամանի, որում հատուցանել պարտաւոր ճանիցին : Գրե-
« ցաւ յամենայն բէբիօլ առաջնոյ 1251 ամի, (1835) :

Ի՝սա այնմ կարգի հաստատուն մնաց հրաման վերոգրեալ հրովարտակացն մինչև յամի 1848 . այլ ի նմին ամի պահան-ջեցաւ հարկ կալուածոց վանին, զոր և ոտացան երկու տա-րի, վասն որոյ Աստուածատուր վարդապետ գնաց ի Թէհ-րան յամի 1849 լինել խնդրատուցոյ ի ուղուն արքունի, յա-ղագս վերստին հաստատելոյ զբարեշնորհուն Տէրութեան, այլ ի քաղաքի անդ առանց վախճանելոյ գկատարումն խնդ-րոյ իւրոյ՝ վախճանեաց զկեանս իւր : Ցետ բազում ջանից փո-խանակ 262 Թուման՝ 150 Թուման պարգև շնորհեցաւ վան-քական կալուածոցն, և ի գալ Սրբազան Թադէոս արք-եպիսկոպոս առաջնորդի, յաղագս նոյն առարկայի խնդրատա-րոյց լինելով՝ միջնորդութեամբ ազգասէր իշխանաց եղեալ ի Թէհրան՝ յամի 1853 ընկալաւ զհրովարտակ ի վեհափառ Նասրադինշահ Թագաւորէ, զի 150 Թուման ի ղուն հարկէ Ջուղայու պարգև շնորհեսցի վանացն, և հարիւր Թուման և ս յԱմիր Եղարքոսէ հաստատեալ յամի 1851 բարդուին հարկին Ջուղայու մի երբէք պահանջեսցի, ուստի ըստ այնմ

հրամանի վանքն ստանայ տարեկան 150 թուման, և ժողովուրդք Ջուղայու ազատ մնան ամի ամի ՚ի հարկիւր թուման քարգուճենէ հարկին հաստատելոյ յԱմիր եպարքոսէ։

---

(1). ‘‘ կամա- Ալենչալին եւ Աւուտէլ պոռ ինամա- էմռվ ղէմ
‘‘ այգին Ջուղոյ Ալենչալին Ալենթրիկէ վանացն յետպակ հոգւոյ էմոյ,
‘‘ որ Լեհաստան՚ի պղշոյ վայելէն և ղհոգէ էմ ասրբ պատարագաւո
‘‘ յետպակէն ասալէ Աւուտոյ . . . . ՟ՋՀ, մարտ ամսոյ 7։

(2). Զեռագիրը պայմանարուղի վան այնը նէրնոյ, և հրամանագիրը չաղչախան կառավարութեան ՚ի հատուցուրեան նոյն պուղին կան ՚ի վանէն։

(3). Յամառան վան սակառուրեան Ջրոյ պայգին և ղտարբերը ասագանէն ՚ի Ջրհարոյ հանելով ղՋուղայ ագռաստրեմբ էղին, վան այնը կարե պաճանագին է ՚ի Ջուղայ գործ այգեպանութեան կամ երկրագործութեան։

(4). ի վաճառողական ըստղին նոյն կարճացոյց։

(5). Եւ ևս նոյն ագեցոյ։

(6). Եւ ևս ևս։

(7). Եւ ևս ևս։

(8). ‘‘ և Ալեայմազի որբե պոդոս և գալուցե որբե Մնացա
‘‘ կան ևԶարայ (՟) արքին (‘‘Ազիզեան Գէորգ Ա-ՔՈՐԸԵ)
‘‘ ասրբե Աենոփրկէ վանէն Ջուղայն (՟), որ է Սիւնեաց ՚ի ասվին
‘‘ վերեն, երբ պարզ, որ է Ջարբին մաղազէն (՟) վեց ըստ կան ֆղ,
‘‘ վեց հազար ղերք Ջին ազանց . . . . ըստ 149 (1764), պա
‘‘ մայ 15 ասրն։

(9). Աբզարուրեանն Աղուանից հանգիստանայ յայսմ գոր
եալ հրովարտակէ, զոր օգուտ համարեմ պարզաբանել։

(՟). կազմ։ (՟). Ջրազայ։ (՟). գոմարն, (՟). արմտիք։
†. Ի ետ ալազէտից երկոյն Ջուղայու։

ՅՕԳ. Ի։

Քաղաքացոյ պետութեան վերակաց վիճակին ՚ի ժամանակ է ՀինգԹեան նորա հինգ ցարք։

ա. Ի՞նչ հիմնարկեցաւ վանքն առաջին անգամ՝ և պայծառ շինուածեամբ կատուցաւ երկրորդ անգամ, քովանդակ ծախք նորա թէ շինուածեանն և թէ տնական կառավարութեանն եղեն հանգանակուածեամբ Ջուղայու հասարակութեան։ Ընակացեալ բարեպաշտութիւնն ՚ի սիրտս քնակչաց Ջուղայու՝ էր հիմնաւոր մուտք կամ արգիլնք վանին։ Յայնմ ժամանակի, (սկսեալ ՚ի 1610՝ ց 1700) հոգեբաժին՝ քառասնէից՝ լուսագին և կտակաւանդ նուէրք իշխանաց (1) էին որոշեալ հասք վանքական։

բ. Ընազուամ էին միաբանք ՚ի վանին (2) և կրօնաւորական խստակեցութեանն կարգ և կանոն պահպանեալ լինէր չշղիւ։

գ. Ուսումնականութեան և գրականութեան ճաշակ բարձր առաջադիմութեամբ զօրանայր ՚ի վանին։ Առաջին վարժապետ կամ դասատու ուսման և գիտութեան եղև Խաչատուր առաջին նախ քան զամն 1640. որոյ եղեն աշակերտք Դաւիթ, որ եղև Առաջնորդ Ջուղայու, Սիմէոն, Ոսկան վարդապետ, և այլք ոմանք։

Յերկրորդ վարժապետ յետ նորա եղև Դաւիթ առաջին, որ ստացաւ զքսան և ինն աշակերտս (3)։ Յակոբ եպիսկոպոս Մինն յաշակերտաց նորա ժառանգեաց զգահ կաթուղիկոսութեան սրբոյ էջմիածնի։ Յովհաննէս վարդապետ տիեզերալոյս կոչեցեալն առաւել զօրաւոր հանգիստացաւ ՚ի մէջ աշա-

կերտակցաց իւրոց, ոչ միայն ուսաւ զՀայերէն մակացութիւնս՝ այլ և հմտացաւ ի լեզու Պարսից և Արաբացւոց: Ընդ Սէֆիյան արքայ պարսից մեծաւ հանդիսիւ եկեալ ի վանս այցելութիւն, հետաքրքրութեամբ արար զհարցումն վանս պատկերացն տնօրինականաց և սրբոց՝ որք նկարեալ կային ի մէջ սրբոյ վանին, վանս Աստուածծնութեանն քրիստոսի՝ և վանս սրբոյ երրորդութեանն. այն Յովհաննէս պիտանական վարդապետ ոչ միայն բանիւ բերանոյ պատասխանի արար նմա իմաստութեամբ ըստ հոգւոյն խօսելոյ՝ այլ և շինեաց զմատեան յաղագս նոյն առարկային (4), էջ ի Հայերէն գրով և էջ ի ըստ պարսից բարբառոյ, և մատոյց զայն նոյն Շահ Սէֆիյան արքայի, որով յաւել զզարմանս նորա առաւել իմաստութեանն իւրոյ: Յետ մեռանելոյ Շահ Սէֆիյանայ՝ յաջորդ նորա Շահ Սուլթան Հոսէյն ունէր ներքին մեծախոհութիւն զբնակիչս ժողովրդոց ի գին պարսից, որպէս և արար զայն շրջելով զկրակապաշտ պարսիկս զբերացին Ջուղայու յօրէնս մահմեդականութեան: Այլ մինչ կամեցաւ առնել զայն հրամանն և վասն Աղգի Հայոց՝ այն Յովհաննէս վարդապետ ախոյեան հանդիսացեալ՝ լուսաւոր բանիւ վարդապետութեան իւրոյ զՔրիստոնէական կրօնիցն յայտնի առնելով Շահ Սուլթան Հոսէյնին՝ նանրացոյց զնորհուրդս նորա ի սրտի իւրում: Ասւանդութեամբ պատմի թէ մինչ գլխաւորն ի Մօլլայից արքային ի հակաճառութեան բանս որ վասն հաւատոյ տարաձայնայր առնել զպատասխանի բանիցն Յովհաննէս վարդապետի՝ ակսաւ հայհոյութեամբ խօսել, որում Յովհաննէս վարդապետ պատկանձելոյ կարգաց զՀրաման, և առժամայն պատկանձեցաւ լեզու նորա, յորմէ ահ անկեալ ի սիրտս Թագաւորին և նախարարաց նորա՝ յետս կասեցան ի խորհրդոյն հաւատափոխելոյ զՀայս: Թարգմանեաց նա զաւետարանն Մատթէոս՝ Մարկոս՝ Ղուկաս և Յովհաննու ի բառգառս Պարսից (5): Յօրինեաց 1՝ զՀարցուպատասխանին Շահ Սէֆիյանի, 2՝ վասն հաղորդութեան մարմնոյ և արեան Տեառն՝ 3՝ վասն Աստուածծնութեանն Քրիստոսի, 4՝ վասն սրբոյ երրորդու-

թեանն, 5՝ վասն աստիճանաց հաւատոյ, 6՝ ի վերայ քննութեան սրբոյ երրորդութեանն 7՝ վիճաբանութիւն ընդ Մօլլային Պարսից, 8՝ քերականութիւն համառօտ, 9՝ տրամաբանութիւն (6), 10՝ կրթութիւն մանկանց, որ է հակաճառութիւն ընդդէմ պապականաց. (7): Յօրինեաց դարձեալ 11՝ մակացութիւն շմարտութեան, 12՝ համառօտ Աստուածաբանութիւն, 13՝ ճաշակեցէք (8), 14՝ մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի, 15՝ մեկնութիւն Սաղմոսի, 16՝ թուղթ առ Լուդովիկոս Լատին եպիսկոպոս, 17՝ գիրք աղօթից (9):

Այս գիտնական վարդապետ վախճանեցաւ և ընկալաւ ըստ գերեզման ի գիւղս վարդապետաց կոչեցեալ հանգստարանին Ջուղայու:

Այլ է նորա պատուէրք:

«Այս է տապան Ջուղայեցի տիեզերալոյս Ոհաննէս գիտնական վարդապետին, 1164» (1715):

Զկնի նորա եղեն անուանի Ստեփաննոս և Աղէքսանդր եպիսկոպոսք, որք առաջնորդք եղեն վանին և ազգ կաթոլիկոսացան: Սոցա ևս եղեն բազում աշակերտք, այլ զպործոց նոցա չիք առ մեզ յիշատակութիւն ինչ:

Ձ. Սրբութիւն վարուց փայլէր ի միաբանսն յայնոսիկ ժամանակի. Նարապետ վարդապետ ոմն աղօթիւք յարոյց զորթն մատաղ, զոր զհնեալ ի վանին մայր նորա ցաւագին բառաչէր, (որպէս աւանդութեամբ պատմի) վասն որոյ զոսկերս նորա պարուրեալ ի կաշին՝ աղօթեալ էր առ Աստուած շնորհել նմա զկենդանութիւն, և Աստուած լսելով ձայնի աղօթից նորա՝ որթն կենդանացեալ վազեալ էր առ մայր իւր: Գիրքն յորժամ հանգստարանաց Ջուղայու, և մինչև ցայսօր հասարակաբար կոչի Ձոփ-բուղ:

Տապանէրն է

«Այս է տապան Նարապետ վարդապետին, որ մահ ան-

«ուամբ ձագ յարոյց կոչի 1055 » (10)։ Ի վերայ տա-
պանաքարին կայ քանդակեալ պատկեր կիսակենդան որթոյն։

Ե. Մինչև ցամ Տեառն 1688 վանքն պայծառանայր թէ
ըստ միաբանից լուսաւորութեան, թէ ըստ նոցին բարեբարո-
ւթեան, և թէ ըստ տնական բարւոք տնտեսութեան, այլ
ինչին ամի յուզեալ խռովութեան և հակառակութեան լու-
սաւորչական հայոց ընդդէմ պապական Յիսուսեան կրօնաւո-
րացն յարձակմանց, յաղագս անօգտակար առաւելութեան ծա-
խուց վանքն անկաւ ի ներքոյ հազար թուման պարտուց, որ
յընթացս իբրև երեսուն ամաց մնաց բեռն ի վերայ վանին։
Առաջնորդութիւնն Մովսէս եպիսկոպոսի (յետ խաչատրոյ և
Դաւթի) եղև նշանաւոր յոյժ ըստ օգտակարութեան մասին,
զի ինորա աւուրս ազատեցաւ վանքն ի պարտականութէ-
նէն, եղեն մանաւոր շինութիւնք, ընդարձակեցան այգիք և
կալուածք վանին, և ծոխացաւ եկեղեցին զարդուք և սպա-
սուք։ Զայն ամենայն աջողակութիւնս ստացաւ նա առատ
նուիրատուութեամբ բարեպաշտ համազգեացն հնդկաստանի,
որք ի նորա ժամանակս առաւել զօրացեալ էին ի վաճառա-
կանութեան իւրեանց։ Այլ երեք ամաւք նախ քան զվախճան
կենաց նորա ցամի 1722 հեղեղ արձակման Աղուանից, որ զգ-
պարսկաստան վերս ի վայր շրջեաց՝ ոչ սակաւ խոչ եղև առա-
ջադիմութեան վանին։ Ի բռնաւորութեանց Աղուանից դար-
ձեալ ստուերք անշքութեան տարածեցան ի վերայ վանին՝
այլ ոչ բռնութեամբ, զի յայնոսիկ ժամանակս
կառավարութիւն վանին ընթացաւ միջամտման կարգաւ ըստ
պարագայիցն ներելոյ ցամ Տեառն 1752։ Ի նմին ժամանակի
յառաջնորդութեանն Պօղոս եպիսկոպոսի, ըստ անբարեխառն
քննաւորութեանց նորա ծախելով զբազում գրամս և վատնե-
լով զբազում անօթս յընթացս երից ամաց մինչև յընկեցիկ
առնելն զնա, վանքն ենթարկեցաւ հազար թուման պար-
տուց։ Բռնաւորութիւնք նպատիրշահի առաւել և սա հարուա-
ծեցին ոչ միայն զվանքն՝ այլ և զբովանդակ Ջուղայ։ Ի
բռուն հալածանաց այնմ ժամանակի կառավարութիւն վա-
նին տանեալ ժամանակ լքեալ մնաց առանց Առաջնորդի,

զի սկսեալ ի 1754 տարւոյ՝ ցվախճան 1763 ամի Գէորգ Ա-
ռաջնորդ խոյս տուեալ յանյագ պահանջմանց բռնաւորաց
վարեաց զառաջնորդութիւնն իւր ի Բասրայ, յորում ինքն
ծննեալ էր (11)։ Ցայնմիկ անխնամ ժամանակի կործան և
վատնեցան բազում ձեռագիր մատեանք, (որոց կործանութ ազ-
գային ցաւակցութեան է արժանի) նահանգաւ միաբանական
բարեկարգութիւնն և միաբանք ցիր և ցան եղեալ սկսան նուա-
զիլ։ Եկաց ինմին անշքութեան մերթ սակաւ և մերթ բա-
զում տառապանօք, մինչև յամի 1771, յԱլիմուրատխան ե-
լուզակաւորեալ թագաւորէ կողոպտեցաւ յամենայն եկեղեցա-
կան զարդուց և ի սպասուց, և յայնմ հետէ իբրև այգի
ցանգաւեր կոխան եղև առ ժամանակ ինչ ի ինման օրինակ ե-
լուզակաց, որք փոփոխակի յազգանականութեամբ կործէին
զգահ թագաւորութեանն սակաւատև իշխանութեամբ։

Զ. Թագաւորութիւնն Քէրիմխանի անդորրացոյց զվիճակ
վանացն, և ինորա աւուրս Մկրտիչ Առաջնորդ կարկատեաց
զխրամատս վնասուց անցեալ ժամանակաց։ Սոյն Մկրտիչ
Առաջնորդ թէպէտ քան զամենայն Առաջնորդս Ջուղայու ա-
ռաւել վայելեաց զՀաշակ դառն տանջանաց և բազմապատիկ
նեղութեանց՝ այլ բաղդաւոր էր զի ի նորա ժամանակս ա-
ռատութեամբ յորդէին նպաստք և օգնականութիւնք տրոց
հայրենաւէր Ջուղայեցւոյն հնդկաստանի, զի համբաւ վըշ-
տաց և նեղութեանցն Ջուղայու ձուլէին զսիրտ նոցա և յաճա-
խէին զզուշութ և զկարեկցութիւն նոցա առ վանն և առ հայ-
րենիս։

Ցամի 1790 Առաջնորդութիւնն Յակոբ եպիսկոպոսի ետ
զերբորդ հարուածս վանին, զի ժողովեալ կամ կողոպտե-
ալ նորա զսակաւ մնացորդս եկեղեցական գոյիցն և զարդուց
վանին՝ գնաց նոքօք ի Բասրայ և անդէն ի Մադրաս։

Ըստմր պարտուցն սկսեալ ի 1752, ի ժամանակէ առաջ-
նորդութեանն Պօղոսի հետ զհետէ աճումն ստանայր, որոյ
զուտմար ցամ Տեառն 1803 ի ժամանակս Առաջնորդութեանն
Յարութիւն եպիսկոպոսի ժամանեալ էր ցչորս հազար թու-
ման (12)։ Ի կալնուլն Յարութիւն եպիսկոպոսի զգահ Ա-

ռաջնորդութեան վանին՝ խաղաղացեալ էր Պարսկաստան յե-
րեսաց արձակմանցն Թագաւորակերպ հրոշակաց, ուստի Յա-
կոբ Եպիսկոպոս Առաջնորդ հոգ տարեալ յաղագս բարեաքոյ գվի-
ճակ վանին՝ գնիրակոս վարդապետ առաքեաց նուիրակ ՚ի Հընդ-
կիս, և զՄկրտիչ վարդապետ ՚ի Ռուսաստան: Ի ձեռն աշ-
խատութեան նոյն նուիրակաց և. ազգային նպաստիւք հղև վե-
հարուածն պարտուց յընթացս չորից ամաց:

Ի 1810 է՝ ց 1817 ՚ի ժամանակս Առաջնորդութեանն Յով-
հաննու առաջնոյ օժանդակութեամբ նուիրակութեանն Յա-
կոբոս վարդապետի հղև կրկին նորոգութեամն վանացդ, զի եկեղե-
ցական անօթիք և զգեստք յիշատակատուութեամբ ազգասի-
րացն Հնդկաստանի առաքեցան ՚ի վանս. վանքն իսպառ զեր-
ծաւ ՚ի պարտուց, և մարթացաւ ունել զտան հազար սքայ
ռուբլի դրամագլուխ ՚ի նուիրականաց գումարոյ անտի, որ
մինչև ցարդ կայ և պահի ՚ի անդիկ նազարէթեայ եկեղեցւոյն
Հայոց Նալկաթու:

Յետ այնր կառավարութիւն վանին ընթացաւ միջասահ-
մանաբար, մերթ մանուաւոր պարտուք և մերթ առանց այնր:
Ի 1827 ամի ստացաւ զտան հազար սքայ ռուբլի կրկին դրա-
մագլուխ ՚ի կատարանդ գումարոյ Ջուղայեցի Աղայ Գէորգայ
Մանուկեան: Յամի 1842 յառաջնորդութեանն Խաչատրոյ
երկրորդի յարեաւ միաբանգամ խռովութիւն ՚ի մէջ լուսա-
ւորչական Հայոց և պապականաց, դարձեալ վանքն ՚իներ-
քոյ անկաւ պարտուց: Թէպէտ յետ այնր մտին ՚ի հնդկաս-
տանէ մեծագանակ գումարք ՚ի վանքն՝ այլ ոչ վերջացաւ խըզ-
մար պարտուցն, որ ցամ Տեառն 1848 և 1851 ժամանեալ էր
ցհազար երկու հարիւր թուման: Նշանաւոր եղև առաջնոր-
դութիւնն Սրբազան Թադէոս Եպիսկոպոսի, զի ՚ի ժամա-
նակս նորա վանքն ազատեցաւ իսպառ ՚ի պարտուց, եղև նո-
րոգութեամն շինուածոց նորա թէ արտաքին և թէ ներքին ա-
ռատապաց, ճոխացաւ աւանդատունն եկեղեցական ապասուք և
զգեստուք, բարեկարգութիւնն սկիզբն կալաւ բարգաւա-
ճել, և պատուեցաւ ստուերարկու քաղ անշքութեանն նորին:

Տէր պահեսցէ զընթացս ներկայ դիրութեանն վանիս ՚ի հա-
տատութեան, և առաւել ՚ի բարիս առաջադիմութեամբ
հանդերձ:

---

(1). Ակնարկէ եմ քաղաքի հին կոչեցոյ, յորս առաջորդն նա-
ստել էնէ հոգեբոծին և ըստ ազգին ամ վանդն:

(2). Ի հին ձեռագիրս յիշատակարանս ՚ի քաղաքս պեղծ լինէ յիշ-
պակութիւն, թէ հոյն վկայ առաքեալ ուրէն, և վկանդերձն առա-
ջէնութեան, լոկ վասն առաջնութեան և ոչ ասկս կարօտութեան:

(3). Տես ՚ի պատմութեան նոյն Դուրեի Ա-ջնորդին:

(4). Աղբատեր էրատեր պղեալ ՚ի նալկաթոյ, հատոր Ա. յամի
1845, էջ 94 և 95:

(5). Տակաւին կան ՚ի գերատան վանիս քարերի նոյն քարգման-
քեանն, որոյ գերն է հայերէն և երեսն ըստ պարսից երբեմտոյ:

(6). Տես յԱղբատեր էրատեր վերոյ նշանակեալ:

(7). Այժ տերդի տպագրեալ է Պօլիս:

(8). Ճաշակեցէք մատեան հոգւոյ և Սրբազնագործութեան,
պղպգրեալ ՚ի Մոսկուա:

(9). Տես ՚ինոյն Աղբատեր էրատեր:

(10). Մինչև յայսօր ՚ի Ջուղայեցոց ռիծալ ազն գերեզման երե-
ւան օրհնէցեր, վասն որոյ ՚ի ժէպ՝ յորմէ ռիծ վասն ասվոյ և ռիծ յա-
զագս երշկութեան ծաղկաբուրն պիտի յանապատն յաղթիել, կաղկի ՚ի
վերոյ նոյն գերեզմանէ պսեղան և մատուցանէն ղերկնաբար պատարագն:

(11). Ձեռագիրս անյ վասն նորին ճանապարհորդութեան:

(12). Ի կանգնոյս նուիրակութեան գտաեալ ՚ի Յարութիւն Աստ-
ծոջէ:

ՅՕԳ· Բ։

Վանական հոգևոր դրութիւն։

Ա. Ի վեց աղբերաց ստանայ վանքն զհասոյթս իւր, որք են տուրս դրամագլխոյ, վճարումն վիճակաւորաց՝ որ կոչի վերգու կամ Աթոռահաս, մուտք կալուածոց, թագաւորական պարգև, ժողովրդոց առանձին տուրք, և նուիրակութիւն։

Բ. Առաջինն՝ դրամագլուխ նորա է տասն հազար սքայ ռուբլի ճնայեալ՝ ի նուիրակական արդեանց Յակոբոս պետական վարդապետի, որ յամի 1815 հաճութեամբ վանքականաց կառավարութեան (1) և ժողովրդոցն Հնդկաստանի եդեալ էր զայն՝ ի պահեստ յաւանդատան եալկաթու Նազարէթայ հայոց տուրքս հոկեղեցւոյ, զի պահեսցի անդ ապահովութեամբ և մշտնջենաւորապէս, և միայն տարեկան տոկոս նորա ամ ըստ ամէ առաքեսցի՝ ի վանքն։ Բերէ նա զտոկոս տարեկան չորս առ հարիւր, որ բովանդակի 420 կումպանեայ կամ 860 պարսից ռուբլի։ Երկրորդ՝ դրամագլուխ նորա է տասն հազար սքայ ռուբլի, յամի 1827 կտակեալ յանուն վանքս՝ ի հանգուցեալ Աղայ Գէորգայ Մանուկեան Ջուղայեցւոյ, որ պահի՝ ի կառավարութեան Անգղիացւոց դիւանատանն Կալկաթոյ, և ամ ըստ ամէ վաշխ նորա՝ ի ձեռն հոկեղեցւոյն Նալկաթոյ Նազարէթայ տուրքս հոկեղեցւոյ հասանէ վանքին։ Բերէ նա զտոկոս չորս առ հարիւրն, որ բովանդակի 420 կումպանեայ կամ 860 պարսից ռուբլի։

Երրորդ՝ դրամագլուխն է տարեկան արդիւնքն հիմնաւորապէս կտակաւ նշանակեալ՝ ի հանգուցեալ պարոն Փիլիպպոս Խաչկեանէ 111 և կէս կումպանեայ ռուբլի, կամ պարսից

234 ռուբլի, զոր ստանայ վանքն՝ ի կառավարութենէ Կալկաթու Նազարէթայ հայոց հոկեղեցւոյ։

Դ. Վկիզն հաստատելոյ զհատուցումն վիճակաւորաց է յամի 1684 հրամանաւ Ստեփաննոս Առաջնորդի։ Իրաւունք ստանալոյ վանին զայն հաս յառաջ գայ անտի՝ զի վիճակ կամ քաղաք հնդկաստանի են թեմ սրբոյ Ամենափրկչեան վանի, և փահանայք ջուղայու չունեն իրաւունս ինչ՝ ի վերայ այնոցիկ վիճակաց, զի իւրաքանչիւր փահանայ՝ ի ձեռնադրելն՝ ի ջուղայ՝ ձեռնադրի յանուն այս կամ այն եկեղեցւոյ և թաղի ջուղայու, վասն որոյ առաքել վանին զվիճակաւորս՝ ի հնդիկս՝ է չնորհ զոր առնէ նոցա, ուստի կարգեցաւ այն տուրք իբրև նշան երախտագիտութեան, որ և կոչի պարտք ընկալեալ բարերարութեան։ Այն տուրք՝ ի սկզբան անդ նըշանակեցաւ 20 ռուբլի յիւրաքանչիւր ամի, և կրկնապատկեցաւ յանցանել ժամանակաց ինչ։ Իսկ՝ ի ժամանակս Ներսէս կայ առաջնորդ Սրբազան Թադէոս աբգ եպիսկոպոսի փառաւոր հանդէսք ջուղայու՝ ի 16 նոյեմբերի 1853 ըստ առաջարկելոյ Սրբազան Առաջնորդին գումարեցան՝ ի ժողով, և իրաւացի համարեցին առաւելուլ զգումարս Աթոռահասին, վասն որոյ զվերջնաւորութիւն ժողովոյ իւրեանց յայտնեցին Սրբազան Առաջնորդին՝ ըստ յետագայ օրինակին։

„ Վորին բարձր Սրբազնութեան Տէառն Թադէոսի Արք
„ եպիսկոպոսի և բարեկարգ Առաջնորդի սրբոյ վանացն Ա-
„ մենափրկչի։

„ Տեսանելով մեր զանհրաժեշտ հարկ ճախուց Աթոռոյս,
„ նաև զանխնայ աշխատակրութիւն ձերդ բարձր Սրբազնութ-
„ թեան յամենայն ղէպս թէ վասն բարեկարգութեան եկեղե-
„ ցեաց և թէ վասն պայծառութեան Ազգի, նաև զմերս պար-
„ տաւորութիւն առ Աթոռս՝ առ չնորհատուր մեր մայրս,
„ նոյնպէս և տեսանելով թէ աղբիւր ամենայն մտից և ար-
„ գեանց ըստ տարաբաղդութեան ժամանակիս խցեալ՝ ար-
„ ժան համարիմք ըստ խղճի մտաց մերոց հաստատել և
„ կարգադրել եկամուտ Աթոռոյս. Թէպէտ մինչ ցայսօր ե-
„ ղեալ է սովորութիւն զի ամենայն քահանայ վիճակաւորեալ

« Խոստանալով ամենայն հնազանդութեամբ զվէր նը-
« ծանիլ տալոյ՝ տայր զվէրդու կամ բաժին Աթոռոյս, սակայն
« ի հնդիկս՝ տայր զվէրդու կամ բաժին Աթոռոյս, սակայն
« ոչ կանոնաւոր և անտրտունջ, ուստի մեք ստորագրողքս՝
« որք մինչ ցայսօր վայելեալ եմք զարդիւնս հնդկարնակ ժո-
« ղովրդոց շնորհիւ Մօր մերոյ Աթոռոյս՝ խոստանամք և
« դաշնաւորեմք այսպէս՝ զի իւրաքանչիւր փահանայ ձանա-
« չելոյ զտարեկան պարտիս իւր առ Մայր Աթոռս, որպէս
« ի ներքոյ սորա որոշելով հաստատեմք հանդէպ իւրաքան-
« չիւր քաղաքաց, որով գէթ դիւրութիւն ինչ լինիցի վասն
« ձեր ի մասին կառավարութեան Աթոռոյս, և մեք ևս կա-
« տարեալ գոհացուք Առաքելասանդ խրատուն « Հատու-
« ցէք ամենեցուն զպարտս » ըստ » :

« Թուեհրան	քղ.	հատուցնի	Մինդէլիի	ռուխք 100
« Շիրազ	»	»	»	» 20
« Բուշիռ	»	»	»	» 30
« Բասրայ	»	»	»	» 20
			Մահմադ շահի	170 կո. ռուխք 85
« Բումբայի	»	»	»	» 70
« Պատրաս	»	»	»	» 60
« Պատրաս	»	»	»	» 70
« Պատրաս	»	»	»	» 300
« Կալկաթա	»	»	»	» 55
« Մինչրա	»	»	»	» 70
« Պատքա	»	»	»	» 50
« Պէյգաթաղ	»	»	»	» 50
« Պանգուն	»	»	»	» 50
« Պինանգ	»	»	»	» 50
« Պինկափուր	»	»	»	» 90
« Բթաւիա	»	»	»	»

« Եղեալ գումարս ամենայն հնդկական վճարեցաւ ընդ
« ձեռամբ Տ. Գրիգորի Արքեպիսկոպոսի Ջուղայեցւոյ, և
« ստացաւ զգրաւականս ի ձեռն Տ. Գրիգորի Եպիսկոպոսի
« Ջուղայեցւոյ, որ ի ներքոյ սորա ստորագրեցաւ :

Ի Ջուղա 1853 :
Ի 16. Նոյեմբերի :

Սրբազան Հայր՝
Ձերդ բարձր Սրբազնութեան
ամենախոնարհ ծառայք :

Տէր Յովհաննէս Տէր Մկրտչեան :
Տէր Դաւիթ Մկրտումեան :
Տէր Եղիազար Անդրէասեան :
Տէր Ստեփաննոս Բարսղեմեան :
Տէր Սարգիս Խ. Տէր Մատթէոսեան :
Տէր Եարապետ Տէր Աբրահամեան :
Տէր Գէորգ Գասպարեան :
Տէր Բաբգէն Գալստանեան :
Տէր Եարապետ Տէր Ասետուր :
Տէր Նիկողայոս Տէր Յ. Եզնայրանց :
Տէր Մարտիրոս Տէր Յովակիմեան :
Տէր Յովհաննէս Մկրտումեան :
Տէր Յարութիւն Յ. Տէր Եարապետեան :
Տէր Մարգար Ստեփաննոսեան :
Տէր Դաւիթ Ա. Բարսղեմեանց :
Տէր Մինաս Բարսեղեան :
Տէր Յարութ Տէր Ս. Տէր Յարութեան :

Ի Պէյգաթաղ գումար աշխատասիրն բովանդակի առ ամեն հազար կումպանուց կամ 2200 պարսից ռուխի՝ այլ ի պատճառս աղքատութեան ոմանց վճարակի կամ վճարատարած մնացին մի՝ ի գումարոյ անտի մնայ անվճար, և իւրաքանչիւր ամի հազիւ 750 կո՞ ռուխին հասանէ ի վանքն :

Ը. Կալուածք չեն՝ի թիւս հիմնաւոր արգելանց, զի մերթ նուազին և մերթ առաւելուն արդիւնք նոցա ըստ հանդամանաց տարւոյն կամ պտղոյն, և մերթ՝ ի լինել ցրտահար՝ բերքն զվնաս։ Հաստատուն օգուտն զոր ստանայ վանքն՝ի կալուածոց՝ են վառելիքն, և խոտն վասն անասնոց՝ որոց գին հասանէ առ ամն ց80 կամ 100 Թուման։ Զուտ արդիւնք քաղեալ յիւրաքանչիւր ամի՝ի կալուածոց անտի՝ ոչ լինի յաւել քան զՀարիւր Թուման դրամ, որ մերթ առաւելու մերթ նուազի, և երբեմն նոյնչափ վնաս ստանայ ըստ հանգամանաց իւրաքանչիւր տարւոյ։ Օգուտն զոր ունի վանքն՝ի կալուածոց՝ գլխաւորապէս է այն, զի ոչ վատնին կամ կորընչին, այլ կան և մնան հաստատուն ստացուածք վանն վանին։

Ե. Վերափառ Տէրութիւնն Պարսից հաստատուն հրովարտակօք նախ քան զամն 1848 ընդհէր վանին ամի ամի ղ262 Թուման։ Իսկ՝ի 1853 հրովարտակաւ վերափառ Նասրադին շահ Թագաւորի հաստատեցաւ 150 Թուման վասն ամենայն տարւոյ։

Զ. Ժողովրդականնուէրք կամ լուսաղին չունի հաստատութիւն, զի Թողեալ է այն յազատ կամս բարեպաշտից, որք մինչ կամին՝ կարկտին, մինչ ոչ կամին՝ չառաքեն, ուստի ոչ՝ի համար մտանէ այն վանքական արգելանց։ Առատութիւն այսմիկ հասի կամ արգելանց կախի՝ի կառավարութենէ վանին կամ Առաջնորդի, զի եթէ ամենայն ինչ իցեն՝ի բարեկարգութեան՝ առատանայ նուէրն, իսկ եթէ հրատարակեսցի թէ այնոքիկ նուէրք ծախին յումպէտս՝ իսպառ խզեալ մնայ այս աղբիւր արգելանց։ Ի ժամանակս արդի Սրբազան Առաջնորդի այս աղբիւր արգելանց եղև առաւել արդիւնաւոր, քան որչափ էրն նախ քան զնորա առաջնորդութիւն։

Է. Վարիքակութեան հաս կամ իրաւունք են ըստ կրկին տեսակի, զի՝ի գաւառականաց ստացեալ լինի յիւրաքանչիւր ամի, և՝ի Հնդկահայոց յետ լցանալոյ միջոցի ութն ամաց։

Գաւառն Ջարմահալայ երբեմն յաւել՝ երբեմն պակասել առ ամն տասն և հինգ թուման ալիւր (2), երիք լիտր իւղ, 40 լիտր պանիր, 50 լիտր չորաթան, և 4 ոչխար։

Գաւառն Փէրիոյ տայ ամի ամի, 50՝ ց70 թուման ալիւր, 10 լիտր իւղ, 25 լիտր պանիր, 50 լիտր չորաթան, և 15՝ ց20 հատ ոչխար։

Գաւառքն Քեազազայ՝ Քեամարայ՝ Գեավլայի՝ Քեալաւոյ Մալայիրայ և Ղարաղիյ տան ամի ամի 50՝ ց70 Թ՚ն դրամ (3)։

Ի Համադանայ ստանայ ղ40 կամ ղ60 ռուփիս։

Ի Թէհրանայ մուտք գանձանակի կամ նուէրք վանակ պէղջ բովանդակի 100 ց150 ռուփի։

Վարիքակութիւնն Հնդկաստանայ յառաջին ժամանակս լինէր առատութեամբ յոյժ, իսկ՝ի նուազել աջողակութեան պատճառ, նուազի և այն ժողովրդական տուրք։

Ոստ հին ձեռագիր ողջունագրոյ յայտնի լինի, թէ սովաբար գումար նուիրակութեանն Հնդկաստանի բովանդակեր ցտասն հազար ռուփի, այլ՝ի ժամանակս նուիրակութեանն Եփրակոս վարդապետի յամի 1805, կամ՝ի ժամանակս նուիրակութեանն Յակոբոս վարդապետի յամի 1812 առաւելան քան զնշանակեալ գումարն։

Վերկայ Առաջնորդ Սրբազան Թադէոս եպիսկոպոսն յամի 1856 առաքեաց նուիրակ՝ի Հնդիկս զՍրբակրն Տէր Մարտիրոս Խաչակիր Աւագ Քահանայն Տէր Յովհակիմեան, որում վիճակեցաւ միայն ժողովել զնուէրս Հայրենասիրացն Ջալայի, որոց նուիրատուութեան գումար բովանդակեցաւ փոքր մի պակաս քան զտասն հազար Ջալու ռուփիս։ Եամեալով ի՚ուտ վանին հիմնաւորել զայն գումար՝ յամի 1857 գնեցին՝ի Բաղաւիայ զմիաբերանոց մի, որ տայ զՀարիւր ռուփի արդիւնս առ ամին։ Այն ամբար կամ ժամերանոց համարի յայսմ հետէ՝ի թիւս արդիւնաբեր հիմնաւոր աղբերաց, որ ազատ՝ի ծախուց ունի տալ վանին ղ1500 պարսից ռուփիս։

Ը. Վասն զառաջնորդութիւնն Սրբազան Թադէոս եպիսկոպոսի ունէր վանքն՝ի ժողովրդոց ջուղայու զեկամուտ մամոյ կամ պատարագէի (ժամուցի), զոր ստանայր յաւուր տոնախմբութեց, առաքելով՝ի վանացն զմիմ ընդհաւորութեան, այլ արդի Սրբազան Առաջնորդն խափանեաց զայն և

համուտ, որ յիւրաքանչիւր ամի բավանդակէր ոչ աւելի քան զ25 կամ 30 թուման: Պատճառն խափանելոյ զայն հաս՝ էր օգուտն ժողովրդականաց, զի սակս ծանակատարութեան լինէր շռայլ ծախսատարութիւն, վասն որոյ հրամայեաց ներկայ Առաջնորդն զի ժողովուրդն մի՛ ևս կատարեսցէ զծախս տոնակատարութեան խընջոյից, և յաղագս այնր նախ ինքն խափանեաց զայն վանքական եկամուտն:

---

(1)· Ողջունական նամականի:

(2)· Բեան առանձին է 15 լեռը: Նոյեմբ գառատաց ըստ որոմ առաքեն էարչել ի վերայ առանձից, վասն որոյ էրատանչէրը էեան նոյեմբանց է 15 լեռը:

(3)· Նախ ևան ղառաջնորդութիւնն Սրբոցն Թադէոս եպիսկոպոսի ի այն գառատաց ոչինչ հաս կամ նոյեմբ հատանեը ի վանդն, զի ծաղկեդրական խորհրդեալ ի վանաց՝ ոչ նա ճանաչէին զերեանց քրիստոնէական պարտաւորութիւն, և զառաջ ինայորդն նոյեմբն ապիհանչեը էին, և վանդն ինայը զրկեալ յարդեանց անտի: Ի 1849 ամի նոյեմբ ոմն առաքեալ ի վանաց ի նայն գառատաց, զինչ վերադարձեալ ի վանաց ի նայն գառատաց, զինչ վերադարձեալ ի վանդն՝ զձախս ճանհապարհորդութեանն էրոյ պահանջեը ի վանաց, հաշիւ տալով ընդ ծաղկեդրաց նայն գառատաց էին ոչ է ընդունել կամ տալ զէրն զձախսն էր: Իսկ արդի Սրբոցն Առաջնորդն կարեւոր համարեալ ի վերայ գառատաց ղերդճախտար քահանայ՝ նոյոյ եպ նոյա հատանել զերեանց պարտաւորութիւնս էրեանց, ոտոտի մարդիանաց վանդն առանձ այժմ պնդնդի արդիանց:

ՅՕԴ· Թ·

Հնութիւն ի վանդն:

ա· Վաւերացեալ օրինակ պայմանագրոյ Մարգարէին Աբրահացւոց, տուեալ առ Աղգն Քրիստոնէից կամ Հայոց ի Հորդորդուամ աւի հիճրէթի, որոյ այս է թարգմանութիւնն:

Եամօքն Աստուծոյ,

Յանուն Աստուծոյ ողորմածի:

Սոյն գրութիւն է հանրաճանօթ ըստ ձեռագրոյն և ըստ շարադրութեան և պայման է հաստատուն, և դաշն է որ պատի կատարիլ վասն ամենայն ազգաց Քրիստոնէից և այլոց, որք պտանին ընդ տիրապես, յարևելից ի կողմանս Արաբիոյ և Պարսկոյ և որք բնակեալք են ի սահմանս նոցին, թէ մերձ իցեն առ հաւատացեալս (առ իսլամն) և թէ հեռի, և հաւատացեալքն թէ ճանօթ իցեն կամ թէ ոչ: Ե այս ուխտադրութիւն և պայմանագիր արժանի ճշտազանդութեան, և պարտ է ամենայն իսլամաց պահել զհրամանս սորա: Ո՛ոք պարտ և հարկ համարեսցի անձին իւրում կատարել զբանս սոյն ուխտադրութեան՝ հաւատ առն այնմիկ ըստ արանց բարեգործաց լինելոց է կատարեալ և այնպիսին արժանի լինելոց է վարձուց. իսկ որք կամիցին աղաւաղել զբանս սորա՝ լուծանել զայս՝ ներհակ այսմ առնել և ոչ կատարել, զպատուէրս սոյն պայմանագրոյ. յամառելով ի ներհակ կամս իւրեանց՝ այնպիսիքն ուխտադրութեան և պայմանացն Աստուծոյ հանարին լուծանօղք, և որ անպատկառաբար արհամարհեսցէ զայս՝ լինել

լոց է արժանի պատժոյ, թէ իցեն ի թագաւորացն՝ թէ ի ժողովրդոց՝ թէ ի բարեպաշտ հաւատացելոց՝ և թէ ի հաւատացելոց :

Այլ սկիզբն առնեմ բանից պայմանագրութեանս այսմիկ, ըստ աղաչեցութեանն Աստուծոյ որ եղև առիս վասն հաստատելոյ զայս : Կապեմ զայս պայմանագիր հաստատուն կապով, որոյ ընդմանն ի նախագուշակ Մարգարէից ոչ ոք կապեաց, և վասն ոչ ուժեք ի հրեշտակաց, որք կան առաջի Աստուծոյ դիւրին էր առնել զայս հրաման : Ըստի զքանս ուխտադրութեանս այսմիկ զոր հանդերձեալ եմ առնել՝ նոքա որք իցեն ժողովուրդք իմ պարտին կատարել : Բարեպաշտ հաւատացեալքն պարտ համարեսցեն պահպանել զնոսա և օրնական լինել նոցա ուրեքնօր և իցեն՝ թէ հեռի և թէ մերձակայ, և ընդ ժողովրդոցն քրիստոնէից պահպանեսցեն զտեղինն՝ ուրանօր նոր նոքա կատարեն զպաղեստինա իւրեանց՝ և ուրանօր ճգնաւորք նոցա և փահանայք օթագային, և յամենայն ուրեք թէ յամենայն լեռնավայրս, թէ ի դաշտավայրս, թէ ի հանդրուանս, թէ ի քարքարուտս, թէ յընդարձակավայրս, և թէ ուրանօր և իցէ՝ օգնող և պահպանող լիցին Աղգին այնմիկ, հաւատոյ նոցին և կալուածոց, թէ յարևմուտս, թէ յարևելս, թէ ի ծովէս՝ և թէ ի ցամաքի :

Այս որպէս մեծարեն և յարգեն զիս՝ պարտին զայն աղգն ևս յանձանձել որպէս առ ի մէնջ ապահովեալք, և որ ինչ նեղութիւն և անհանգստութիւն դիպեսցի նոցա՝ պարտ համարեսցեն խնամք օգնել նոցա և խնամել, վասն զի նոքա են ժողովուրդք և հպատակք և ճնաղանդք են բանից Աղգի իմոյ, որոց և օգնական :

Յաղագս այսր արժան է վասն իմ, հանդստութեան՝ պահպանութեան՝ և օգնութեան նոցա յամենայն դժկամակութեանց և ի նեղութեանց խնամ տանել, և բացամերժել զայն ամենայն՝ որք լինին առիթք հարստահարութեանց սոցին : Պարտ է ի պահանջմունս հարկաց նոցին մի առաւելուլ քան զկարն նոցա և պահանջել, այլ ըստ յօժարութեան նոցա տնօրինել առանց բռնադատելոյ և նեղելոյ : Մի խափանել

արկուլ լիցին գործոց չինութեան նոցա, զքահանայս ի գործոց իւրեանց մի կասեցուսցեն, զքրիստոնեայս վասն հաւատոյ իւրեանց և օրինաց մի խռովեսցեն, այլ նոքա յաղթութիւնս իւրեանց ըստ ծխի իւրեանց որպէս և կամին աղթեսցեն, քակել և աւերել զեկեղեցիսնոցա մի մտադրեսցեն, և ի տանց և յապարանից նոցին՝ բռնութեամբ մի յարեսցեն ազգն Իսլամաց ընդ մզկիթս իւրեանց, կամ առ տունս, այլ թէ լիցի յօժարութեամբ նոցին : Որ ի հրամանաց աստի ոչ արասցէ և հակառակ առաջարկութեանցն իմոց կատարեսցէ՝ լինի անգոնող պայմանապրոյս և նեղհակող բանիցն Աստուծոյ և Մարգարէի նորա :

Ամէ պահանջեսցեն ի նոցանէ զհարկ դիմոգական առաւել քան զչորս դահեկան, կամ զմի հատ « հէքրեամանի » (1) և որ ինչ հարկ ի նոցանէ ստացեալ լինի՝ պիտոյացի այն ի նպաստ Իսլամաց, և պահեսցի այն ի կոչնական, զի ծախեսցեն զայն վասն հրապարակական գործոց :

Առաւել քան զսահմանեալն մի պահանջեսցեն ի նոցանէ : թէ իցեն ի վաճառականաց և ի փարթամաց, թէ ի դաշտի իցեն՝ թէ ի ծովէ հանցեն զմարգարիտս՝ թէ ուննիցին զհանքս գոհարեղինաց ոսկւոյ կամ արծաթոյ, կամ զբազում ստացուածս ունիցեն՝ յաւել քան զերկոտասան դրամն մի ստասցեն :

Իսկ նոքա որք չիցեն ի հաւատոյ քրիստոնէութեան՝ և ոչ աղօթս մատուսցեն ըստ նոցին ծխի՝ ի նոցանէ ևս զչորս դրամս պահանջեսցեն : Իսկ որք ճնաղանդք իցեն Աղգին այնմիկ (քրիստոնէից) և հնազանդ բանից նոցա՝ յայնպիսեաց և մի յաւելի պահանջեսցեն քան զերկոտասան դրամն, այնուամենայնիւ՝ զի ունիցեն նոքա զտեղի քանակութեանն ուրեք, և իցեն ի հպատակաց անտի : Իսկ նոքա որք ճնանապարհորդք իցեն, և առանց ուրեք զկայան ունելոյ՝ անցաւորք իցեն՝ մի պահանջեսցեն ի նոցանէ զչիմոսահարկ, այլ եթէ իցէ ի ձեռս ուրուք ի նոցանէ ժառանգութիւն ինչ կամ ստացուած՝ ընդ որ եղիցի իրաւունք կամ հաս իմամի (2) պահանջեսցեն ի նմանէ զհանն իրաւանց, և բռնութիւն կամ հարստահա-

թուլթիւն մի արասցեն նմա առաւել քան զկարն նորին ։ Ա-
պահուլթիւն մի արասցեն յապարանս՝ յարմախ՝ և ի պը-
տուղս նորին ։

Օ քրիստոնեայս մի հրաւիրեսցեն ընդ ինքեանս լինել մար-
տակից վասն վանելոյ զթշնամիս հաւատոյ իւրեանց, և ի-
մարտս կամ ի սրածուլթիւնս դէպ եղեալս Իսլամաց ընդ այ-
լազգիս՝ զքրիստոնեայս մի նեղեսցեն վասն յարձակելոյ ընդ
ինքեանս ի վերայ թշնամեացն ։ Իսկ եթէ թշնամին յարձակէ
ի վերայ Ազգին այնմիկ (քրիստոնէից) Իսլամքն զերիվարս՝
զսուրս՝ և զսուսերս պատերազմի մի հնայեսցեն ի նոցանէ ։
Որք զայս ամենայն կատարին՝ առնեն զգործ հաճոյական ։

Եւ զոք ի քրիստոնէից բռնութեամբ բերցեն ի դէն Իսլա-
մի, և մի զխռովութիւնս յուզեսցեն ընդ նոսա. միայն թէ
վասն բարեգոյն առարկայից ։ Զթեւս ընդարձաց և մարդասիրու-
թեան իւրեանց (Իսլամքն) տարածեսցեն ի վերայ նոցա
(քրիստոնէից՝) պահպանելով զնոսա ի վնասուց արանց հա-
կառակաց, յորում տեղւոջ կամ ուրանօր և իցեն ։

Իսկ եթէ ոք ի քրիստոնէից յակամայից յանցաւոր գտցի՝
օգնէն զնա և զնաւն ընդ նմա յատեանս գատաստանաց պարտ
համարեսցեն, զի ի նմանէ մի պահանջեսցեն առաւել ինչ՝ քան
զոր հարկաւորապէս սահմանեալ է Աստուած, և զխաղաղու-
թիւն արասցեն ընդ մէջ նոցա ըստ պրեցելումն (ի պօրանին) ։

Յետ պայմանագրեալ բանիցս հաստատութեան և յետ
առանձինս զվնասահարս ի նոցանէ՝ ոչ ոք ի ժողովրդոց ի-
մոց իշխեսցէ նոցա կամ հարստահարեսցէ զնոսա ։ Նոքա և ս
մի իշխեսցեն ի վերայ Իսլամաց, և մի հարստահարեսցեն զգ-
նոսա, և մի յայսմհետէ և՝ մինչև ցժամանակն զոր Աստուած
կամիցի ։ Այնպէս Իսլամքն բռնութեամբ մի առցեն զկանայս
և զկուսանս նոցա (քրիստոնէից) առանց հաճութեան տէրց
նոցին, միայն թէ յօժարութեամբ և կամաք իւրեանց կամիցին
զուգակից ընդ Իսլամս և ամուսնանալ ընդ նոսա թէ տուր-
զաբար և թէ առ ժամանակեայ՝ լինի այն յօժարութեամբ
կանանցն, զի զոյս սիրեն և հաւանին՝ լինի ի կամս իւրեանց ։
Եւ եթէ կին ոք ամուսնացի ընդ Իսլամի՝ թողուցուն զնին

ձեալ ի քրիստոնէութեան իւրում՝ մի արգելցեն զնա յա-
ղօթատեղեաց քրիստոնէից, և ի հաւատս իւր և յօրէնս
վարեսցի ուրպէս և կամի ։ Մի արգելցեն զնա ի հաղորդակ-
ցութենէ հոգևորականաց իւրեանց, և մի բռնութեամբ և
յակամայից պարտաւորեսցեն զնա լքանել զհաւատ և զօրէնս
իւր ։ Եթէ ոք հակառակ բանից սոյն պայմանագրոյ արասցէ՝
հակառակ Աստուծոյ եղիցի արարեալ, և յանցաւոր լիցի ա-
ռաջի Մարգարէին ի պատճառս լուծանելոյ զբանս ուխտա-
գրութեան Մարգարէին Աստուծոյ ։ Առաջի Աստուծոյ այլն
այն ի թիւս մեղապարտից ունի համարիլ ։

Զարկէ քրիստոնէից հոգ տանել վասն նորոգութեան
եկեղեցեաց՝ աղօթատեղեաց՝ և վանօրէից իւրեանց ։
Եթէ վասն օգտի հաւատոյ իւրեանց, և եթէ վասն օգտի բարե-
գործ ազգին Իսլամաց պահանջեսցեն Իսլամք զօգնութիւն
ինչ ի նոցանէ՝ մի խնայեսցեն զայն, և զօգնութիւնն զայն
համարեսցեն կարեւկցութիւն և շնորհ ։ Ըստ որում ազգն Քր-
իստոնէից չհաւասարեալ են (առինքն,) խնդրեալ են զապա-
հովութիւն և ապաստան լեալ են՝ օգնութիւն և ձեռնտու-
թիւն առ նոսա ըստ ամենայն մասին հարկաւոր եղիցի ։
Եթէ ոք ի նոցանէ իբրև պատգամաւոր առաքեսցի վասն
միջնորդութեան և խաղաղութեան ընդ մէջ Իսլամաց և ան-
հաւատից՝ մի ոք արգելցէ զնա յառաքմանէ անտի, և եթէ
նա օգնական լիցի հաւատոյ մերում՝ ընդունելի համարեսցի
օգնութիւնն նորին, և որք արհամարհեսցեն զնա՝ լիցին ի թիւս
անղգամաց, յանցաւոր առաջի Մարգարէին Աստուծոյ և ներ-
հակող աւանդեալ բանից նորա ։

Այս է դաշին բանիցն Մահմատի մեծ Մարգարէին Աստու-
ծոյ (օրհնութիւնն Աստուծոյ ի վերայ նորա և ի վերայ ա-
ընդոց նորին) ընդ Ազգին Քրիստոնէից ։ Դաշնագիր զոր ըզ-
կնի վերաւանդեալ բանիցն հրամայեաց և հաստատեաց նորին
մեծութիւնն ընդ ազգին Քրիստոնէից վասն հաւատոյ և օ-
րինաց նոցին, զքանի մի հրամանս՝ որոց վասն քրիստոնեայքն
պարտաւոր համարեսցին զինքեանս, և մի արասցեն ներհակ
ինչ, և կատարեսցեն ըստ բանից այսոցիկ ։

Մինն ի նոցանէ այս է՝ զի օգնութիւնս մի արասցին անհաւատից, թէ յայտնի և թէ ի ծածուկ, և զընկալեալսն ի տունս իւրեանց, զի ըստ ժամանակին պատուհասեալ մի ձեռներէց լինիցին նոքա առ Աջդն Իսլամից։ Մի տեղի տացեն թշնամեաց նոցա իջևանելոյ ի տունս կամ յաղօթատունս իւրեանց, և զպատերազմողս մի պահպանեսցին կամ օգնեսցեն, ոչ սուսերօք՝ ոչ նետիւք՝ ոչ սրով՝ ոչ երիվարաւ՝ և ոչ այլով իւիք։

Մի առաջնորդեսցեն նոցա զճանապարհ կամ ուսուսցին զբարան գործել։ Զստացուածս իւրեանց մի տացեն նոցա յաւանդ պահեստի, մի արասցեն ընդ նոսա զհաղորդակցութիւն, մի օգնեսցեն նոցա ոչ բանիւք և ոչ գործով, մի հիւրընկալեսցեն զնոսա, միայն թէ հարկն պահանջեսցէ։

Արդ թէ Իսլամ ոք պատահեսցի նոցա (քրիստոնէից) ղերիս տիւս և զերիս զիշերս խնամարկեսցեն զնա, աւելին քան զայն անհարկաւոր է։ Չնեղութիւնս և զհարստահարութիւնս առանց բռնակալաց հեռի կացուսցեն Իսլամից։

Արդ թէ հարկաւոր լինի թաքուցանել զոք Իսլամից յապրանս կամ ի տունս իւրեանց, զտեղի բնակութեան տացեն նմա, զոր և խնամարկեսցեն առանց լքանելոյ և առանց ոչ դարմանելոյ զպէտս նորին մինչեան որչափ նա թաքուցեալ իցէ։ Չկանայս կամ զորդիս Իսլամից մի մատնեսցեն կամ ցուցանիցեն թշնամեաց նոցին և ի հրամանաց աստի մի շեղեսցին։

Իսկ եթէ ոք ի քրիստոնէից ներհակ բանից դաշնագրոյս այսմիկ արասէ, կամ զանց արասցէ կատարել զայնս՝ համաձեսցի լուծանողց հրամանաց դաշնագրոյս, նա առնելի համարի Աստուծոյ, և Մարգարէն ունի պատուհասել զնա։

Ընդունմն զկատարումն բանից դաշնիս այսմիկ պարտ և արժան համարեսցին քննեանց, մինչև ցօրն՝ զոր Աստուած կամիցի։

Վկայ է դաշնագրոյս սոյն գրութիւնն՝ որ կայ ի սմին (3) զոր ի ներկայութեան հոգևորականաց և գլխաւորաց Ազգին՝ օրհնեալն մեծ Մարգարէն Մահմադ գրեաց, և դաշնագիրն

հաստատեցաւ ի միջի։ Աստուած ամենակարող և ամենիշխան։

Ի ստ հրամանի մեծ Մարգարէին Աստուծոյ Մահամատին ընտրելոյն ի Տեառնէ (օրհնութիւնն Աստուծոյ ի վերայնոցա և ի վերայ սերնդոց նորին) գրեցաւ այս դաշնագիր յաւուր երկուշաբաթու, յետ անցանելոյ չորից ամսոց ի չորրորդ հիճրէթի։

Հաստատէ զվաւերականութիւն օրինակին այնմիկ ընդ իւրում նախագտալափարի Մահամադ Ջաֆէր, որ է մինն ի նշանաւոր լիմամից։

---

(1)։ «Հէյբ» է անուն կոփոյ ըր գործէն «յեհան» փոխոտ։ Հոտորևօրէն ի գործ ածէ վան պոպանոյ պէսպիսէլոյ։

(2)։ Խնամ կամ զգած անուանել փորձն որ սահմանել հոգևոր հօրէն ի ծոզովրդեան Պօրսէց։

(3)։ Սովին բանից էլնէ ըէ քնագիրն դոյ պոյմանագրոյ եղէալ է էնկան ֆեոգիր Մոհմոդ, որդիս և ի սկզբան բանիցն ասէ «ըէ ասյն գրութիւն է հնդրածանօք ըոր ֆեոգրյն։

ԿԱԹՈՂԻԿՈՍ Ը.

ԵԿԵՂԵՑԻՔ։

ա. Խաղերոզլի երգիչ (1) ի ցուցն ասացեալ ի գովեստ Ջուղայու, յերկրորդում տանն յիշատակէ թէ քան և չորս եկեղեցիք են ի Ջուղայ, զվանքն Ամենափրկչի և զանապատն կուսանաց ևս ի նոյն հաշիւ թուելով։

"Արհեստով միջի մարդ՝ խոնարհով (ա) ան շատ,
քան չորս եկեղեցի, վանքն և անապատ,,։

բ. Ի քան և չորս եկեղեցեացդ անտի այժմ վերոյն են աւերեալք՝ որոց շինուելիւնն տակաւին ոչ է անհետ լեալ, երկուքն են յաւերն կոյս խոնարհեալ, վեցերկուն են անհետացեալ շինուածոց նշան, և տասն՝ են ի հաստատուե, որս լինին ժամերգուելիւնք։

Ընդ ասէրեալ եկեղեցեացդ անուանքն են։

1. Պատարիճ կոչեցեալ փառաշէնն, մերձ նորաշէն այգւոյ վանին, կոչի և նորաշէն եկեղեցի։
2. Սուրբ Յակոբ կամ մուրատէնց՝ կից վանքական կալուածոց, կոչի և խէթոյ գմբէթ եկեղեցի։
3. Սուրբ Թովմայ, մերձ գետոյն զանէարուելոյ, կոչի և պանգով ժամ։
4. Սուրբ Յովհաննէս, մերձ առ կամուրջն Հաֆըազի, կոչի Հոփվէլէնց ժամ։
5. Սուրբ Յակոբ, մերձ երևան Թաղին, կոչի Բաղիշոյ ժամ։
6. Սուրբ Սարգիս, ի Թաղն Ղէնուն կոչի Օհանոյ վանք։

Երկու-ն յաւերը կոյս խոնարհեալ են այսոքիկ։

1. Խեթագործի, մերձ հրապարակին Ջուղայու, կոչի Մէյրաքի ժամ։
2. Սուրբ Գէորգ ի փողոցն կոչեցեալ Զարիբէնց, կոչի Խօջէնց ժամ։

Վեց անհետացեալ շինուածոցն են այսոքիկ անուանք։

1. Սուրբ Հռոգի (2)։
2. Սուրբ Մինաս։
3. Սուրբ Աստուածածին } ի գաւակ (3)։
4. Սուրբ Հրեշտակապետաց։
5. Սուրբ Ննանիայ Առաքեալ։
6. Խօջայ Շաֆրազէնց տան եկեղեցի (4)։

Ի հաստատուելոն եղեալ տասն եկեղեցեացդ են այսոքիկ։

1. Սուրբ Ամենափրկիչ վանք։
2. Սուրբ Աստուածածին ի Թաղն մեծ Մէյրանի։
3. Սուրբ Լուսաւորիչ, ի Թաղն փոքր Մէյրանի։
4. Սուրբ Ստեփաննոս, ի Թաղն Յակոբջան կամ պրոտեւանց։
5. Սուրբ Յովհաննէս } ի Թաղն Ջարաուս։
6. Սուրբ Կատարինէ կուսանաց Ընտիր
7. Սուրբ Նիկողայոս, ի Թաղն Ղարագէլ։
8. Սուրբ Ներսէս, ի Թաղն Քօշէր։
9. Սուրբ Մինաս, ի Թաղն Թաւլուխիցւոց։
10. Սուրբ Ամենափրկիչ, ի Թաղն Երևան։

Յաղագս սրբոյ Ամենափրկչեան վանիս առնելով զհարկաւոր նկարագրութիւնս, ի դէպ համարեմ իւրաքանչիւր եկեղեցեացն համառօտ ստորագրութիւն ի ներքոյ շարադրել, սկիզբն յաւերակացն առնելով։

---

(1)· Ըստ երջանիկ եղբարցն մերոց Ղազարեցւոց, որ ընդ ամենայնի ուսումնասիրեալ են երկրիս պատմութեան, այլ նշանաւորք են երկու պատճառք մեր ազգիս նոցա, զոր ի գովեստ Ջուղայեցւոց առաջի առնեմ, և ապա ի տեղեկութիւն ընթերցողացն վերծանեմ նոքա։ Ցեղերբերգութեանն նորին կայ ի Մատենի Ագուանց 131· յորում ասի երգէ էնդն ցայն ցուցեալ, որով յայտնի լինի ընդ 1730՝ ց 45, երբեմն էր երկու երգան էր, (տես հատոր Ա· գլուխ)։

(2)· Իբրև երբեմնացան ամօք յառաջ պահպանին յորին կայր մանն ինչ աւերակ արմատք ուրոց, այլ հարկաւոր հանդուրժեցաւ եղև անպատշաճ արմատքեր։ Սակայն որ կիսաւերացն գոյն պատմեալ էր ի վերջս և վերջն գրեալ էնեղեցոյն՝ հանդիպեցաւ պատճառ, զի եղև կորուսեալ ի վերայ նորա արձանագրեալ պատմեալ էր ինչ։ Ուրագայր ևս չէշտակէ պատմել յանուն սոյն էնեղեցոյ կայ ի ամբողջ գեղարդ էնեղեցոյ։

(3)· Իբրև վեցտասան ամօք յառաջ պահպանին մանն ևս արմատ սոյն աւերակ էնեղեցոյ յորին կայրն ի գաւիթ, այլ ինչ խաչատուր երիցուրդ առաջնորդ Ամենափրկչի վանիս յամի 1840 խնդրելով վանն գաւիթ կալցաց, աւերակօք նոյն էնեղեցւոյ պատրաստ զլուր գաւիթ, ըստ գաւթայ հայոց և պերսից կիսաւերացն գոյանալ ամենայն աւերակօք, այլգկիր հարթայատակ աւերեցին գոյն կիսաւերս արմատս, զի մի ինդոցէ նշան և հետք նոցին։

(4)· Ամենափրկչեան անհետացեալ էնեղեցոյ նշանակեցի աւերս ի հին հետագիծ չէշտակարանաց։

(5)· Հանճարոհետ։

Ժ.

ՆԱՋԱՐԵԹ։

ա· Այս եկեղեցի կոչի Փառանչէտ, ե առաջին եկեղեցին շինեալ ի Ջուղայ, վասն որոյ և նորաշէն կոչի։ Ըստ ըզհամարաւ զմբեթի նորա կայ յիշատակ շինուածոյն նորա, յորում և պատմի թէ այն եկեղեցի շինեցաւ վասն հազար ժողովրդեան. անձին՝ թէ տան՝ անորոշ է։

Այս է չէշտակարանն վերոյ գրեալ։

« Օծարմանալի և հիացման, Ստորագրես տուղի շինման,
« Ըստեալ ի սիրտ ժողովրդեան՝ հիմնարկութիւն քանեց
« լման։
« Զեկեղեցիս երկնանման՝ Զարդ երանեալ վայելչական,
« Զարմանալի տեսս մարդկան՝ Որայս Տաճար Սողոմոնեան։
« Զձեզ աղաչեմ զամենեսեան, լինիք եղբարք դուք միա-
« բան.
« Քահանայից խորհրդարան, պարծանք հազար ժողովր-
« դեան։
« Սուրբ անարատ զարմանազան, Ներքոյդ էլ զազգիս
« մարդկան։
« Ի թուականիս ՌՂ ամիս աւարտ եղև (1611)։

Ի միւս չիշատակարանս սոյն եկեղեցւոյ (զոր ի ստորև շարակարգեմ), անուն շինողն եկեղեցւոյն կամելին եղծեալէ. և չիշատակ այնր իմ կարծիք է՝ թէ քանի ամաք յառաջ պատկան վարդապետք մինչ գրիցին զչիշատակարանս եկեղեցւոյ Ջուղայու, նոքա եղծեալ իցեն զանուն շինողին. զի ա-

պատմայ բանասէրք զուրկ մնասցին՝ ի ճանօթութենէ անտի :

Ի վերայ սէանն ծողովրդոց եղեալ կոյս գրեալ կոյ :

" Ով գեղեցիկ մանուկ եղբայր , յորժամ նայիս սրտով յո-
" ժար , յիշել բարի քաջն (եղծեալ) ի Թողուքեան
" մեղաց համար :
" Եւ արդ յիշայք ողորմելի՝ (եղծեալ) անուն մահդեսի ,
" ընտիր խոնարհ յոյժ պատուելի , վերակացու տանն
" բանի :
" Եկնղեցւոյ մուքաւէլի (!) . և տհարկու ջինել տեղի :

Ի վերայ տիեզ կոյս սէանն ծողովրդոց գրեալ կոյ նօրըպէր :

Ո՞ՀԱեալ անմահ Թագաւորին , զմեզ ազատեաց ազգ-մարդ
չարին :
անփորձ պահեաց ամենեքեան , և ընակեցոյց Ը՞ՀՀ քաղա-
քին ,
հետ աւրինաւք քա . . , ուննել ընդ նշան խաչին .
ականն շինել զեկեղեցին , որ նորաշէնք անուանեցին ,
. . . մէ . , . ող բանին , այլ և խնամեաք Աստուածայինն .
զարձեալ մեկնեմք քան զովեսանին , կարողութիւն ժողո-
վրդին ,
ի մէջ նոցա երևելին խոջա անուն . . . . . ,
յառաջ մատեալ քաջ անուանին , նշանագրեալ տեղի ձը-
ևին ,
գումբէթայարկ երկնագընտին , յարմարական բանաստեղ-
ծին :
երեք խորան երրորդ օդին՝ ի Յարութեանն մերոյ փրկչին ,
նշանակէ հայոց Աղգին՝ սիրն հաւատոյ կաթողիկին :
որ զտեսիլն յառաջ տեսին , գինջումն իւրոյ շողակաթին ,
նոյն աւրինակ այսոր տեղին , յարմարեցաւ շնորհօքն էլին
զարդարեցաւ Չարունակին՝ զարմանալի տեսարանին
և ցանկալի յօրինուածին , նկարուածօվ զարդ հրաշալին

պայծառ ծաղկով գունդգունդին : Աւրէ աղաչեմ զամենեսին ,
յիշել զանուն Տէր Յակոբին՝ որ նախադրաց յառաջ բա-
նին .
իմաստութեամբ Հովապետին , աւազակարծ զասապետին ,
և յետ նորա խաչքարին՝ պատճառ եղև բանիս կրկին .
և զհատուցումն սոցա բարին՝ պարգևեցոյց անանց տեղին .
արժան ասոնք տեսոյն փրկչին , որ հնազանից վառաց վերին ,
և գասակից փառանցին , պսակակից գասս վերին , ամէն :
Կրկին յիշել ևս պատճառ , և հայր նորա . . . ամ . . .
մաւրն իւրոյ խաչքուն զատին , խէխէր անուն եղբայր նորին .
Արդ աղաչեմ զամենեսին , լի բերանով տայք ողորմին ,
այլ և կցորդ առնել սորին՝ զստեր նորա Կարապետին ,
Թուխին անուն յոյժ սիրելին :

Ի վերայ նոյնոյ սէան ծողովրդոց յորհնութիւն կոյս գրեալ նօր-
ըպէր :

Ով ընթերցող զուարթ բարի , հայեա ներք և քառակերպի .
նոսա . . . . փառահղի , որ Կարապետ անուն կոչի ,
հայեաց սրտով աղերսալի , ի Թողուքիւն մեղաց խնդրի .
Դուք այլ կցորդ նորա ձայնի , լի բերանով տայք ողորմի ,
ի Թվականիս հայոց տոհմի ՌՂ Թիւ Համարի , ամէն :

Ի վերայ որմոյն սեղանոյն գրեալ կոյ երկնագոյն :

Յիշատակ է Ովսափին կողակից վառվառին՝
և որդին Մինասին միւս կողակից Մարեամին ,
որդին Ասկանդարին , կողակից Քզմիրնային , ամէն :

Ովքինք կիսուն և չորս ամաց շինուքեան եկեղեցւոյն եղև
մանաւանդ նորոգութիւն , զոր կայտնէ ի ներքոյ գրեալ կի-
շատակարանն :

" պատճառ եղև ի սոյս բանիս , նոր նորոգեաց եկեղեցիս

«Ի ԱԹԱՆԱՍ ՔԱՀԱՆԱՅԻՍ ԵՒ ԺԱՄԱՐԱՐ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻՍ։
ԹԻՒՆ ՌՃԺԴ ամին գրեցաւ։

Այս եկեղեցի, որպէս յառաջ քան զամենայն եկեղեցիս Ջուղայու շինեցաւ՝ նոյնպէս և առաջինն եղև յաւերման. այլ որովհետև կայ այն ի մէջ վանքական կալուածոցն, վասն որոյ ոչ ոք աւերելով զայն՝ տակաւին ամբողջ թեամբ մնայ շինուածքն այնր, այլ ինքնին օր ըստ օրէ յաւերն կոյս խոնարհի։

---

(1). Քան զորութեր որ նշանակէ եբեդիան։

ԺԲ.

ՄԻՐԱԴԵՆՑ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ։

Ջունի սա որոշ յիշատակարան, թէ երբ կամ յոմէ շինեցաւ։ Այլ ինձ հաւանական թուի ասել թէ յիշատակն որ շուրջ զնաչիւն կայ (զոր ի ներքոյ յիշատակեմ) է թուական շինուածոյն նորա, և ուստայ Ծատուրն՝ է հարտարապետ շինողնոյն եկեղեցւոյ։ Թէպէտ ի մէջ եկեղեցւոյն չկայ յատուկ յիշատակութիւն շինողին, կամ թէ եղեալ իցէ՝ և առժամեղ ոչ ժամանեալ, այլ ըստ անուանն որ կոչի Մուրատեանց տոհմանոյ։

Ի հակառակ դիմելիին նկարեալ կայ խաչ մի, և շուրջ զնոյնի սա որոշ յիշատակարան, թէ երբ կամ յոմէ շինեցաւ։ Այլ ինձ հաւանական թուի ասել թէ յիշատակն որ շուրջ զնաչիւն կայ (զոր ի ներքոյ յիշատակեմ) է թուական շինուածոյն նորա, և ուստայ Ծատուրն՝ է հարտարապետ շինողնոյն եկեղեցւոյ։ Թէպէտ ի մէջ եկեղեցւոյն չկայ յատուկ յիշատակութիւն շինողին, կամ թէ եղեալ իցէ՝ և առժամեղ ոչ ժամանեալ, այլ ըստ անուանն որ կոչի Մուրատեանց տոհմանոյ։

Այս եկեղեցի է միանգ ի փառաւորեալ եկեղեցեաց Ջուղայու, և վերջին գրեալ յիշատակարանն։

Նոյնաբէկ յիշատակարանք՝ են յիշատակք նկարել տուողացն զպատկերս իւրաքանչիւր պատկերատանց, որպէս յայտնէ

«ՅԻՇԱՏԱԿԷ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԻՆ, և ԿՈՂԱԿԻՑՆ ՍԱՐԱՏԽԱՆ-
«ՆԻՆ, և ԻՒՐ ՈՐԴԻՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՌ ՔՐ-
«ԻՍՏՈՍ, ԹԻՒՆ 125 (1740)։

«ՅԻՇԱՏԱԿԷ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԻՆ և ԿՈՂԱԿԻՑՆ ՍԱՐԱՏԽԱՆԻՆ,
և ՈՐԴՈՅՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ։

Ի վերայ յաջ կոյս սեանն ծաղկըփոփեղոյ գրեալ։

«ՅԻՇԱՏԱԿԷ ՔԱՐԲԱՆԴ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ, և ԿՈՂԱԿԻՑ ՆԱՆԱ-
ՋԱՆԻՆ, և ՈՐԴՈՅՆ ԽԱՉԿԻՆ՝ ՂՈՒԿԱՍԻՆ և ԴՍՏԵՐԱՑՆ ՍԱՐԱ-
ՋԼԵԼԷ և ՍԱՐԱՏԽԱՆԻՆ և ՈՐԴՈՒՆ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ
ԹԻՒՆ ՌՃՂ (1741)։

Ի վերայ ահեակ կոյս սեանն ծաղկըփոփեղոյ գրեալ։

«ՅԻՇԱՏԱԿԷ ՏԷՐ ՅԱԿՈԲԻՆ և ԿՈՂԱԿՑՈՒՆ ԵՊԻՐՍԻՄԷ, և
ՈՐԴՈՅՆ ԴԱՒՈՒԹԻՆ՝ ԾԱՏՈՒՐԻՆ՝ ԱՐԻՍՏԱԿԷՍԻՆ՝ և ԹԸՍ-
ՏԻՆ, ԳԱԲՐԻԷԼԻՆ՝ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՈՐԴՈՅՆ ՅԵՐԱՊԵՏԻՆ։ ԵՍ
ՏԷՐ ՄԱՐԳԱՐԷ ԱՆՈՒԱՄԲ ԻՄ ՔԱՀԱՆԱՅ, ԳՈՐԾՈՎԸ ՈՉ։

«ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱՏԿԵՐՍ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԻՆ, և ԿՈՂԱԿԻՑ ՍԱ-
ՐԱՏԽԱՆԻՆ, ՈՐԴՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ։ ԺՂ ՊԱՏԿԵՐՍ ՅԻԺԱՄԱ-
ՆԱԿՍ ՏԷՐ ՅԱԿՈԲԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ։

Ընդ ոքիկ յիշատակարանք՝ են յիշատակք նկարել տուողացն զպատկերս իւրաքանչիւր պատկերատանց, որպէս յայտնէ և վերջին գրեալ յիշատակարանն։

թէ ըստ շինուածոյ մեծութեան բարձրութեան և վայելչութեանն՝ և թէ ըստ ներքին պատկերազարդ և ծաղկափթիթ նկարուցն : Կառուցեալ է ի վերայ չորից սեանց : Յատակն էր սալարկեալ, որոյ զբարինն ի 1854 ամի հանեալ տարան ի վանքն Ամենափրկչի պիտոյացուցանելով ի գործ ժալայատակի : Ընդ կից մատուռն կամ եկեղեցի ամառան, որպէս ունին երևելի եկեղեցիք Ջուղայու, և անդ կատարեն յամառան ժամերգութիւն :

Ոչ է յաւելք զերիտասն ամ՝ զի այս եկեղեցի գասեցաւ ի թիւս աւերակ եկեղեցեաց, տակաւին բազումք գտանին ի Ջուղայ, որք տեսեալ են ինձ զժամերգութիւն և զհոգևոր պաշտօնակատարութիւն : Շինութիւնն եկեղեցւոյ կայ ամրողջութեամբ, և ինքերքինկուսէ տակաւին ոչ է կորուսեալ զփառազարդուն բազմերանգ նկարուց, ծաղկանց և պատկերաց :

Գ.

ՍՈՒՐԲ ԹՕՄԱՅ :

Այս եկեղեցի՝ ոչ միայն ի յիշատակարանէ զոր ունի, այլ և ի գրութենէ Աղայ Մարգարայ Աւետ Խալդարեան, (1) յայտնի լինի՝ թէ շինեալ է ծախիւք Խալդարեանց տոհմի :

Ի վերայ արևմտեան սեղանոյն գրեալ կայ յիշատակարանս այս :

« Ո՛վ ան զի լաւ է ինձ մի օր ի դաւիթս քո՝ քան զհազարս
« ընտիշատակ բարի թողեալ և յիշատակ անջրեալ,
« և յիշատակ է խալդարեանց դաւութեն՝ և հօրն Խոջայ

« Ոսկանն և մօրն Բագրիկն, և պապն Խալդար
« Մարգարն, թիւին ՌՃՀԹ (1695) :

Ի շրջան վէմ խորհրդանոցին գրեալ կայ :

« Ալֆլաթունին՝ պետրոսին՝ թադուհի և Տատիկին՝ թիւին
« ՌՃԽ (1690) :

Կառուցեալ է այն ի վերայ վից սեանց, երկայնութիւնն 82 ոտնաչափ սկսեալ ի ստորոտէ սեղանոյն, և լայնութիւնն՝ 60 ոտնաչափ : Ընդ գմբեթ բաւական բարձրութեամբ ի միջ առաստաղի երկրորդ դասուն : Զուսնի նկարչն պատկերս կամ ծաղիկս ինչ, այլ սպիտակացեալ է բոլոր : Շինութիւնն եկեղեցւոյ յարտաքին կուսէ է շատ վայրէջաչէն վասն պոյն յախճապակեացն զետեղելոց յորմունսն : Եկեղեցին տաւ կաւին կանգուն կայ, այլ օր ըստ օրէ յաւելութեան կողմն վտանարհի : Արտաքին խուցք և քնակարանք յաւեր դարձեալ՝ պահին միայն զորմունս :

Ոչ էի սա և զանգուվ ժամ, սակս լինելոյ ինձ մտօրոյ միոյ բաղադրեալ ձոյլ հրահանգեցաց, որ ճշդէ զձայն իբրև զանպակի, այժմ այն ձոյլն զանգ կոչեցեալ՝ գտանի յԱմենափրկչեան դպրոցին Ջուղայու, որոյ հնչմանէն աշակերտք ժողովին կամ արձակին : Սոյն եկեղեցի ըստ որում մեզ է պետոյն պանդարութեայ և հեռի անկեալ իսպառ յապատոյ՝ վասն որոյ միշտ երկիւղալի է այն և վտանգաւոր, քանզի ի խառն ժամանակի (որ յառաջ անպակաս էր ի Ջուղայ) փլկարեան մարդիկ անդ որջացեալ մնային, գործելով զհաճոյս չար կամսց իւրեանց : Ի սկսարեանց աստանօր տարեալ սպանեցաւ Յարութիւն Թիւնն Մարգարեան ի 1850 ամի : Այլ և այ արհանգեղծեալ թիւնք բազում են եղեալ ինձ ի վտանգաւոր ժամանակս : Ամայութիւնն սոյն եկեղեցւոյ ոչ է յաւել քան զքառասունն ամ :

---

(1) . Տէ՛

ՃԱՀՎԵԼԵՆՑ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Յաղագս սոյն եկեղեցւոյ ունեմք գլխաւոր տեղեկութիւնս ի կտակէ շինողի նորա Աղայ Յովսեփայ Մարգարեան (1)։ Ի նոյն կտակի յաղագս շինուածոյ սոյն եկեղեցւոյ գրի, թէ «ի 1146 (1677) իմ հղբօր անուանդ եկեղեցի եմ շինել և «զինքն տեղն թաղել, խարջի ջամն է քսան հազար ռու- «փի»։

Ի վերայ շրջանաձև մարմնոյ գրեալ կայ յետոփակրան այս։

«Յիշատակ է Ողորմելոյ Յուղիդէ Յուրիկին Թիւն ռձխը շամ ամին ի ումն»։

Ոչն քարինս ի 1855 ամի քակեալ տարան յեկեղեցին սրբոյն Մինասայ որ ի Թաղն Դաւրիժոյ, և անդ զետեղեցին. ի շրջան սեղանոյն, տարան և զվիմագրեն՝ որ արդէն կայ առ պրան սուրբ Մինասայ եկեղեցւոյ։

Ի վերայ առաջին սեղանոյն գրեալ կայ։

«Յիշատակ զշորք կարապետն և Թոռն Աւետն, եւ «զաւրին և իւր ծնողացն, և կողակցին և իւր ընթա- «նեացն, ամէն, Թիւին 1156։

Յաջ կոյս սեղանոյն գրեալ կայ։

«Յիշատակ փանոսին՝ ծնողացն Սահրադին՝ Դիշխունին, «զարձեալ յիշատակ նորին, կողակցացն Սաթլթիկին «զատերն Նուռնիկին եղսաբերին։

Ի ձախ կոյս սեղանոյն գրեալ կայ։

«Զարձեալ յիշեցէք ի քրիստոս զԽաչիկն և ծնողն եւ «զեարն, Մարամփաշէն՝ Որդին Սաֆարն»։

Այսոքիկ յիշատակք չեն եկեղեցի շինողին, այլ որոց զոս- կեպատճոյճ ծաղկունսնկարել ետուն ի վերայ առաստաղի սե- ղանոյն։

Ոստ քանից կտակի Աղայ Յովսէփայ Մարգարեան, կայ տա- կաւին ի մէջ պարսպի նոյն եկեղեցւոյ տապանաքար խոջայ Յովհաննէսի, յանուն որոյ շինեցաւ եկեղեցին, զորմէ ի ստո- րև։

Յորժամ էր Թիւն ռ ամի,
Շ և Թ Թիւ աւելի՝
Խոջայ Յովհաննէսն ցանկալի
եկեղեցւոյս շինող վեհի,
ի սոյն աւուրս վախճանի
Ջ ամեայ ժամանակի,
յաղցաւորացս այս նա զատի,
կարգեալ ի դասս հրեշտակի՝
եդեալ կա աստ ի տապանի,
մինչ որ փողն Հնչուսմ լինի՝
Թողուլ զանձինս որ ի մարմնի
այժմ և յաւուրն ապագայի։

Նկարեցաւ (տապանաքարն) ձեռամբն Տ՛ր Նաւու- միս որդի Գրիգորի, որ էր վերակացու սուրբ եկեղե-

ցուս շինուԹեանն :

Ընդ այս տապանագիր այնպէս ցուցանէ, որպէս Թէ շինօղն եկեղեցւոյն է Յօհաննէս, և քառասնամեայ տիօք վախճանեալ է նա ՚ի 1099 ամի, որով շինուԹիւնն եկեղեցւոյ պարտի լինել նախ քան զամն 1099. այլ կտակն Աղայ Յովսէփայ՝ յասելն Թէ շինեալ է զեկեղեցին ՚ի 1146 ամի, և պիւր եղբայր Յովհաննէս անդ Թաղեալ է, չփոԹէ զբանն : Եարծել Թէ այս ոչ է եկեղեցին յիշատակեալն ՚ի կտակի Աղայ Մարգարայ՝ ոչ է հաւանական, քանզի յիշատակ քարանց շրԹանցն սեղանոյն ունի զնոյն 1146 Թուականն, և միւս յիշատակ նկարման պատկերացն է 1156, որովք յայտնի լինի Թէ եկեղեցին այն շինեալ է յայնոսիկ ժամանակի, և ոչ նախ քան զամն 1099 : Ըստ ինձ այսպէս հաւանական Թուի պարզաբանել, Թէ ՚ի տապանաքարին յիշատակեալ 1099 Թուականն՝ է Թուական ծննդեանն Նորա, և քառասնամեայ կեցեալ յաշխարհի՝ յաղցաւորացս նա զատի, որով Թուական մահուանն Նորա լինի 1139, և Աղայ Մարգար եղբայր Նորա շինելով զեկեղեցին զլինի ՚ի օրն ամաց վեռանելոյն Նորա՝ Թաղեալ է զնա անդր : ՄարԹ էր երկար խօսել ՚ի բանից կըտակի Աղայ Յովսէփայ առպացուցանել զհաւաստիս սոյն այս իմ կարծեաց, այլ ըստ որում առարկայն չէ հարկաւոր ինչ՝ ոչ օգուտ համարեցի և զիմ ժամանակ յայն զբաղեցուցանել, և զպատմուԹեանս կարգ երկարաբանել : Իսկ եԹէ ումանց և բնական վեհՆուԹիւն համարիցի վերոյ պարզաբանուԹիւնն իմ՝ Թող ներացեալ ինձ ըստ իւրոյ հաճոյից :

Շինեալ է այն կամարակապ առանց սեան : ԵրկայնուԹիւնն ՚ի ստորոտէ սեղանոյն՝ է 68, և լայնուԹիւնն՝ 41 ոտնաչափ : Ունի գմբէԹ բաւական բարձրուԹեամբ յատաստաղի միջին գաւտ : Սեղանն և առաջին գաւն է ոակերանգն նկարուն, իսկ ժողովրդատեղին՝ սպիտակացեալ առանց ինչ պատկերաց : ՇինուԹիւնն եկեղեցւոյ ամբողջուԹեամբ յատին կայ, իսկ արտաքին շինուածք և բնակարանք զարմանիս քուսանեն : Շրջակայ կալուածք աւերակացն սորա է մի ջրիք : Ի վաղուց

հետէ բռնաբար տիրեալ էր զայս կալուածս Սէհիդ միր Ալդօլվաղի իբրև կալուածս անտերունչ, այլ Սրբազան Թադէոս առաջնորդ ՚ի 1855 ամի բազում աշխատուԹեամբ յետս ստացաւ զայն ՚ի նմանէ, որ կայ այժմ ընդ իշխանուԹեամբ Ամենափրկչեան վանի :

Այս եկեղեցի չէ յաւել քան զքառասուն ամ՝ որ շէ աւերակս գասեցաւ :

---

(1) . Տէ՛ :

Ը .

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԲԱՂԱԹԱՑ :

Այս եկեղեցի ըստ յիշատակացն հղելոյ ՚ինձմէ՝ երևի շինեալ ՚ի 1115 (1666) ամի յԱշաքալէմանց տոհմէ :

Ի վերոյ ճակատս հիւսուածոյն պրոն գրեալ կայ յետսագոյս այս :

„ Յիշատակ է մահդեսի Աննայուն և ծնողացն Թաւաքաւ-
„ լին և Իրիսիմին . Թին՝ն 1170 (1721) :

Ի վերոյ տարածից ընդունց սեղանոյն գրեալ կայ :

„ Յիշատակ է դասս Աղաղարին և ծնողացն փանոսին և գուէ-
„ նաթային, և հանգեալ կղզին Մարիամբասին, Թանկ-
„ խաԹունին, և կենդանի կղզին Թադուէ, որդին Օվա-

Նէսին և գատերն թանգուտին, Թիւին 1165։

Ի ճակատ գմբէթին ժողովրդատեղւոյ գրեալ կայ։

„ Յիշեցէք ի քրիստոս զպարոն Բաղդասարն, և եղբայրն
„ իւր Յովհաննէսն, որ ետուն ծեփել և գաճճել և նաշ-
„ խել յիշատակ իւրեանց ծնողացն՝ Թիւին ՌՃՀԵ „ (1666)։

Ի յախ կոյս յորմն ժողովրդատեղւոյ գրեալ կայ։

„ Յիշեցէք ի քրիստոս զկարապետն, որ բեմի Թաղն նաշ-
„ խէց յիշատակ յաւիտենից, Թիւին 1117 „ (1668)։

Շ ինեալ է այն կամարակապ և առանց սեան։ Ունի չափա-
ւոր մեծութիւն, սեղանն և դասն է բովանդակ պատկերա-
զարդ, իսկ ի ժողովրդատեղին միայն մի շար պատկերատանց
կայ, իսկ մնացեալն է սպիտակացեալ. շինութիւնն եկեղեցւոյ
կիսաւեր կայ, և շը ջակայ արտաքին շինուածք հողոյ հաւա-
սարեալ են։ Գալուածք աւերակացն սորա կայ ընդ կառա-
վարութեամբ Տէր Սիմէոն գահանայի Թաղին Երևանայ։ Ի-
րև քառասուն ամք հազիւ լինին՝ զի այս եկեղեցի ընդ ամայ-
նի պատեցաւ։

Այժ ՝ էնմ պապանոտար մ վայել չտեսն, որ ըստ լինել ՝ի փոխանակ նոյն
եկեղեցի շինողին, որոյ այս է պապանապէր։

Դան ՝ի թորոց գերեզմանին յունկն բարձրեալ հօր հրն-
ջեացին.
վատնեալ անդամն ներքոյ գրին բժշկեսցի բանիւ քոյին,
՝ի յարութեան յաւուր մեծին զիս զարթուսցէ քո սուրբ
Հոգին.
Նիկողայոս գրող բանին, առ Տէրդ գոչեմ ներքոյ շիրմին,
ամա է որդի Յարութիւնին Ալաքալեանց մեծի տոհմին,
զի գիտութեամբ Աստուածային, այսչափ վարուք միտն

՝ի յիրկին։
Ճ ամի եհաս նմին - Թիւին հայոց 1179, ՝ի 6 յունվարին,
Զդէմն ՝ի յերկիր եդեալ պաղատիմ Տէառնդ Յիսուսէ՝
վտակ արարչիդ կողից որ ՝ի խաչին առիթ հոսեցեր։

ՕՀԱՆԱՅ ՎԱՆՔ

ՄՈՒՐՄ ՍԱՐԳԻՍ կամ

Այս եկեղեցի չունի որոշ յիշատակարան թէ երբ կամ
յո՞մմէ շինեցաւ։ Այլ ՝ի յիշատակարանէ ձեռագիր Աստուա-
ծանի միոյ, եղելոյ յեկեղեցւոջն Երևանայ, երևի շինուածքն
նորա է մինն ՝ի վերադրեալ եկեղեցեաց Ջուղայու. „ Գրեցաւ
„ սուրբ Աստուածնայս ՝ի քաղաքս Շ ՕՀ որ է Սպահան ՝ի դուռն
„ սուրբ Յովհաննէս Մկրտչի, և սուրբ Հրեշտակապետին և
„ սուրբ Յակոբայ և սուրբ Սարգսի զօրավարին ձեռամբ
„ Յովհաննէս վրացւոյն աբեղայի ՝ի գառն և ՝ինձեղ ժամանա-
„ կիս, ՝ի Թվականիս հայոց 1058, (1609)„։ Արդ ՝ի բանից
առաքի յայտ է Թէ եղեալ է ՝ի 1058 ամի (1609) եկեղեցին
սրբոյն Սարգսի զօրավարին։

Յատակն գոմ յորմանան ըստ ջանակէ գրեալ կայ։

„ Քրիստոսասէր ջաքարչն երկու գաւին քաշուածն ընդ
„ կարել տվեց իւրն յիշատակ և իւր ծնողացն Մխրին և
„ վառվառին, և ամուսնացն Մարիամին և Մամարին, և
„ որդուցն Յովհաննէսին, և Հանդուցեալ որդուցն և դուս-
„ տերն Յակոբջանին և Սօլթանփաշին և եղբարցն Մաթոսին

« Յովհաննիսին և Մարգարին և քերցն Հիսուի՝ Աննէ՝ և
« նայէ՝ և այլ ամենայն արեան մերձաւորացն՝ Թիւին 1161
« (1712) յունիս 25 » :

Այդ յիշատակարան որպէս յայտնէ՝ ինքնին է յիշատակ
նկարողին պատկերին :

Ի ծղնէրպոլիս ի հարթ-ային կողմն գրեալ էր :

« Յիշատակ է պատկերքս Օհանջանի որդի Աբեղայ Տէր
« Մարտիրոս քահանայ, Թիւին 158 » (1772) :

Ի Հալէպ արհամարհեան գրեալ էր :

« Այր վասն քո անչափ սիրին՝ բանդ ի կուսէն առեր մարմին,
« Թող գյանցանս մահդեսի ծատուրին, Թիւին 1166 (17-
« 17) ին : Ձեռամբ Տէր Մկրտչի որդի Փանոսին :

Այդ յիշատակարան է սակս նկարեալ պատկերին սրբոյն
Սարգսի զօրավարի, որ հեծեալ յերկինս յաղթանդամ կայ
ի Հալէպատուր դրանն : Եւ Թերևս մահտեսի Ծատուրն տուեալ
է զծախսն, և Տէր Մկրտչի որդի Փանոսն նկարեալ է զպատկերն :

Այդ այս եկեղեցի կառուցեալ (ի Թաղն մեծ Ղարագէլ, որ
հասարակօրէն Ղէյնուն կոչի այժմ) յանուն սուրբ Սարգսի
զօրավարի կոչեցաւ և Օհանայ վանք, զորմէ լինագոյն խօսե-
ցայ ի Ձառ վիճակացն Ամենափրկչեան վանից :

Այս եկեղեցի երբեմն հզօրատասան ամօք յառաջ գտեալ
ի Թիւս ամայի եկեղեցեաց, զի Թէպէտ երբեմն յիւրում ան-
յառաջ վերջացան ժողովուրդքն նորա՝ այլ տակաւին եկե-
ցին պահպանեալ լինէր ի ձեռն միաբան վարդապետի մի-
և ժողովուրդք հեռաւոր Թաղից ոչ խնայէին գկարևորն ը-
պատուս իւրեանց : Մի քայէլ վարդապետ անուն ոմն միայնու-
Թեամբ բնակէր ի վանին անդ, և որպէս պատմի գինանէ՝ ե-

գեալ է առաքինի՝ մինչև անգամ դրացի այլազգիք ակնածեալ
գինանէ պատուեալ են զնա երկիւղածաբար վասն որբու-
Թեանն նորա :

Ի կա յամի 1797 գրէ առ պարոն Գէորգ Տէր ԴաւԹեանն
գԹուղԹ շնորհակալուԹեանն ըստ այսմ օրինակի « Յիսուսի
« Քրիստոսի Ճառայ և սրբոյ Ամենափրկչի վանի վշտաԹախիծ
« և մեղապարտ միաբան, այլ և սրբոյն Սարգսի որ և կոչե-
« ցեալ Յովհաննու վանի նեղսակրեալ բնակող և եԹ վար-
« դապետ . . . այլ և զոր ինչ որ խղճալի սուրբ տանս
« կողմանէ ձեր Օհանայ վանիս կողմանէ կաշխատեաս՝ Տէրն փը-
« րկատու փոխարէնն քեզ հազարապատիկ կրկվարձատրէ,
« զքայ Աստուծոյ էլայ յայտնի՝ մարդոյ էլ, որ եԹէ մեղաւորս
« և եԹէ այս սուրբ տունս յոյժ չքաւորուԹեան և ողորմե-
« լուԹեան միջի եմք, ոչինչ և ոչ յայլ ուստեքէ ունիմ
« մուտ և օգնուԹիւն չունեմք, այժմ չորս ամ յաւելի է՝ որ
« իմ խառնուածիս սուրբ տանս բնակածեմ չքաւոր և ամենայն
« կերպ ողորմելուԹ միջի, տունն ձիԹից՝ մոմից զուրկ, և աւ-
« անօԹեղ լինից՝ եկղեցինց գոյուԹինաց պակասուր, և միշտ մա-
« լամաԹն էն ինչ կարևորայ՝ միշտ ուզուսայ, զքայ էն ինչ
« ինձնէ կարելի էր՝ կամ էստեղէն էնդեղէն պարտք առնե-
« լով վարայի սուրբ տանս կարևոր մալամաԹն արարել ամ,
« որ Տէր մի արասցէ փոքր բանն մեծ բանատեղ չգառնայ
« . . . մինչ այժմ տարէն մին ծաղիկ իմ պատուելի բարե-
« կամ Պարոն Նիկողոս ՅարուԹիւնին կուղարկէր և ինձ կը-
« միսիԹարէր » :

Յետ վախճանելոյ Միքայէլ վարդապետի՝ ոչ ոք ևս բնա-
կեցաւ ի նմա, և յայնմ հետէ փակ մնաց դուռն նորա :

Այլ ամի ամի ի տոնի սրբոյն Սարգսի զօրավարին մատուցեալ
լինէր անդ պատարագ ի գհայանայից Երևանայ Թաղի, և ժո-
ղովուրդք ջուղայու հաւաքէին անդ հանդիսացուցանել զօր
յիշատակի սրբոյն : Երկիցս և ես ներկայ եմ լեալ անդր : Ա-
ի 1843 է մինչ և ցայժմ բարձաւ այն սովորուԹիւն, և եկե-
ղեցին այն խափան գտեալ ի Թիւս ամայացելոցն : Եկեղեցա-
կան Ճառագաղ սպասք այնր փոխադրեցան յեկեղեցին Երևա-

նայ, և յայսմ ժամանակի հանդէս տանի սրբոյն Սարգսի կատարի ՚ինձին եկեղեցւոյ յաղագս անդր լինելոյ Աջոյ և մասին նորին: Շինեալ է այն կամարակապ 43 ոտնաչափ երկայնութեամբ ցստորոտն գասու: Իսկանդակ շինուածին եկեղեցւոյ կայ յոտին կանգուն առանց բազում խախտուածոց: Առաջին պան ունի երկոտասան պատկերատունս: Ժողովրդանոցն ունի միայն չորս պատկերատունս, և մնացեալն է ըստ պիտակացեալ: Ունի փոքրիկ գմբէթ, սեղանն է փոքր. շուրթըն սեղանոյն քարաշէն, այժմ չունի խաչկալ, այլ տասն ամօք յառաջ տակաւին կայր պատկեր խաչկալին պատառեալ: Ակց եկեղեցւոյն ունի փոքրիկ Զանգատուն կառուցեալ ՚ի վերայ չորից քարեայ սեանց, այլ յիշատակարան ինչ չունի վասն շինուածին այնր: Ի ՚ԱՀ Զանգատան կայ գերեզմանն Օհան վարպապետի, Աբթանէս Աբեղայի, Ստեփաննոս վարպապետի և եօթն աշխարհականաց:

Այս է պատճառք Յոհան վարպետին:

«Այս է տապան մեղապարտիս՝ Յոհան անուն վարդապետիս,
բիւր քանքարոյ պարտականիս՝ պատուիրանին ստունգանողիս:
Յանցաւոր գտայ Թագաւորին՝ և անպատրաստ ժամ վախճանին,
հրեշտակք եկեալ զհոգիս առին՝ Թափուր ունայն առեալ գնացին.
Մուծին քաղաք սխրագործին՝ վայ և եղուկ իմումն անձին:
Ո՞է, զինչ տաց պատասխանին՝ և անսչառ դատաւորին,
Այս ասացէն Աստուածածնին՝ դու ես իմ Հարն յայնմ ատենին:
Զստինսդ բանաս ընդ սրբ կաթին՝ բարեխօսես քո միածնին,
Թէ գինն է դա արեամբդ քոյին՝ հայեաց ՚ի վերքդ Աստուածային,

գովաբ գԹագ քո ստեղծուածին՝ ողորմեաց հոգւոյ դորին:
Ըստ Սամսոի Աստղակին՝ խառնեա ՚ի Թիւս լինեակ գասին,
և անկելոց տեղի նոցին՝ ուրախանալ դուարԹնոց վերին,
վասն գարձի անմահակին՝ խնդրուածովք մեր քո կուսին.
Տէրն ընդունիցէ զչանցանս նորին, գասասուրէ սրբոց խմբին,
և պսակէ լուսոյն երկնային, երկրպագի երրակացդ անձին,
Աստուածութեանն միակին: Շինեցի վանս սուրբ Սարգսին,
ինքն Թաղեցայ գրան նորին: Ի Թիվն ռՁ ամին Հը վերջացաւ, հոկտեմբերի 13 վախճան սուրբ օրն կիրակի:

Լ:

ՄԷՅԴԱՆԻ ԲԵԹՂԱՀԵՄ:

Այս եկեղեցի վայելչաշէն, բարձրակառոյց և փառազարդ քան զամենայն եկեղեցիս Ջուղայոյ՝ շինեցաւ ՚ի խօջայ Գեորոսէ խօջայ Վէլիջանեան յամի 1077 (1627):

Ի ֆեխ կոյս և յաղ կոյս առաջն պատ- գրեալ կոյ:

Հազար ՀԵ և Է Թուին,
որ էր անցեալ, հայոց Աղին
աւարտեցաւ եկեղեցին,
գերահռչակ և պանծալին,
Համանման ադին դրախտին
և կամ Նոյեան սուրբ Տապանին.
՚ի ժամանակս Շահբասին,
և մեր Սրբոյ Հայրապետին

Տէր Մովսէսի քաջ հռետորին,
Դիտապետի այսմ նահանգին
Հեզահոգի Տէր Խաչատրին
որ շինեցաւ ձեռամբ մեծին
Խօջայ Պետրոսն ցանկալին,
Խօջայ Գօդոս որդի նորին,
սա փափագմամբ . . . յին՝
սակս յիշման հոգի նոցին,
Ճնողաց սորին Վէլիջանին՝
Շուշան անուն Մօրն նորին,
Տէր ողորմեացի ամենեսին։
որք հանդիսիք տեսլեամն սորին,
զԽօջայ Պետրոսն բաղձալին,
Յիշեալ լինէք միշտ արժանին,
որք յիշին յիշեալ լինիլն յաւիտենին։

Ի վերայ սեղանոյն գրեալ կայ։

,, Յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Պետրոսն, որ շինեցաւ ձեռամբ մեծին Պետրոս այր ցանկալին, Հօրն իւրոյ Վէլիջանին և մօրն Շուշանին, Տէր Աստուած ողորմեացի սոցին, Թիւին ՌՀԵ ,, ։

Ի վերայ մուրոյ շրջանց սեղանոյն գրեալ կայ։

,, Յիշատակ է քարաշէն դասըս Խօջայ Ոհանջանին և Ճնողացն Խօջայ Ոհանիսին և Մառանէ, և ուր կողակցուն և որդուն Ոհանիսին, և գաւառն Բէրդադէ հանդուցեալ գաւառն Շուշան բէկումին։ Թիւին 1160, Ագամ 20 ումն։ ,,
Այն Խօջայ Ոհանջան Թոռն է Խօջայ Պետրոսի։

Յոկ կոյս արմոյ երկրորդ պատուհան գրեալ կայ։

,, Յիշեցէք ի Քրիստոս հեզահոգի զԽօջայ Պետրոսն և զ-

կողակիցն Աննային, և զորդին Խօջայ Գօդոսն՝ Մինասն՝ Ոհաննէսն՝ Դուկասն, և զդստերքն զԽօջումնիմին՝ Մարիամն՝ Շուշանն։ Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Պետրոսն և զկողակիցն Թանգիմէրն և զդուստրն Վարթենին Սուֆիէն, և զհայրենի պապն Աղիջանն և զԽանիկն յիշեցէք և . . . Թիւին ՌՃՁ ,, ։

Այլ բառից ևս վերոյգրեալն յետպակ՝ ինչ բառ գրեալ նկարեալ կայ նորա սեղեղեան։

,, Յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Պետրոսն, և զՃնօղսն Վէլիջանն, Շուշան, և զեղբարքն նորա՝ Մինաս՝ Ջվանին՝ Սուքիասն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։ Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Պետրոսն և կողակցին Աննային՝ և վերջին կոչեցն Թանգիմէրն . . . . . Թիւին ՌՀԵ ,, ։

Ի յոխ կոյս երկրորդ պատուհան գրեալ։

,, Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Պետրոսն և զՃնօղսն Վէլիջանն, Շուշանն, և խօրեղբարքն Նուրիջանն՝ Գրիգորն՝ Քամալն՝ եղբօրորդին Գաւսպարն։ Գարձեալ յիշեցէք զԽօջայ Պետրոսն և Հարսնէրն, Պուրսն՝ Յանդուխտն՝ Ուղիգէն՝ և զԹոռնէրն Ակոբջանն՝ Ոհանջանն՝ Մաթեոսն՝ Մասպուռն յիշեցէք։ Եւ Աստուած ողորմի· Տէր Աստուած ողորմեացի ։

Շորքանակ ի ձեղ գմբեթին գրեալ ի չորս սրբոյն սրբոյն պեղէս ։

,, Յիսուսի Քրիստոսէ ծառայ զԽօջայ Պետրոսն՝ և Ճնօղսն իւր զՎէլիջան և զՇուշան և զեղբայրն Սուքիասէ՝ և զեղբարսն Քրիստոս յիշեցէք ի Քրիստոս։ Գարձեալ յիշեցէք զԽօջայ Պետրոսն՝ և զկողակից իւր զԱննային և զմիւս կողակիցն իւր զԹանգիմէրն· Տէր Աստուած ողորմեացի ։

կայ և յիշատակարան մի ՚ի Սրբակերտն Տէր Յովհաննէ գալստանեան փորագրեալ ՚ի վերայ քարի, որ զետեղեալ կայ ՚ի ճակատ հիւսիսային դրան եկեղեցւոյն, որոյ այս են բանք ։

« Յիշել ՚ի Տէր զՄահդեսին
Խօջայ Պետրոս այր ցանկալին,
զվէլէնան Հայրն Նորին
ընդ տիկին Մօր Իւր Շուշանին ։
Եկեղեցիս Բեթղահէմին,
որ շինեցաւ արդեամբ Նորին,
՚ի յիշատակ Իւրոյ տոհմին
և զաւակաց Իւր տանելին ։
Ի Թուին Հայոց 1077 ։

Լրանայաւ ՚ի Տէր Յովհաննիսէ գալստանեան 1293 ամի ։ Սոյն այս մեծակառոյց եկեղեցի և վայելչաշէնն քան զամենայն եկեղեցիս Ջուղայու՝ է կամարտակապ յօրինեալ, որոյ երկայնութիւնն ՚ի ստորոտէ սեղանոյն 80՝ և լայնութիւնն է 43 ոտնաչափ ։ Գմբեթ նորա բարձր քան զգմբեթս ամենայն եկեղեցեաց Ջուղայու կրկին առաստաղօք է շինեալ, յորում ոչ թէն լուսամուտ պատուհանք կան, և ոչ ևս պատկերատուն շուրջանակի ։ 1՝ սրբոց երկոտասանից հայրապետաց պատկեր ։ 2՝ գնալն Պետրոսի ՚ի վերայ ծովուն առ Յիսուս ։ 3՝ սեղանն յետ յարութեանն ։ 4՝ շօշափելն Թովմայի զկողն Յիսուսի ։ 5՝ ոտնալուայն ։ 6՝ ստեղծումն Ադամայ և Եւայի ։ 7՝ հարանիքն ՚ի կանայ Գալիլիացւոց ։ 8՝ անառակ որդին ։ Առաստաղ գմբեթին համակ է ոսկեզօծ ծաղկօք զարդարեալ ։ Սեղանն համեմատութեամբ եկեղեցւոյ մեծութեանն՝ է փոքրագոյն, ունի երկոտասան պատկերատունս ։ 1՝ պատկեր անցից սրբոյն Գէորգայ չարչարանաց ։ 2՝ պատկեր անցից սրբոյն Մինասայ նահատակութեան ։ 3՝ արկանելն զՅովնան ՚ի ծովն ։ 4՝ պատկեր արքայութեանն, և ոչ ևս պատկերատունքն են նկարք Մարգարէից ։ Առաստաղն է կապուտերանգ, ոսկեզօծ ծաղկազարդեալ ։ Ի դէմ առաջին կայ պատկերատուն չորս ։ 1՝ Ծնունդ փրկչին ։ 2՝ Մկրտութիւնն ՚ի Յովհաննէ ։ Նկարք Մարգարէից ։ Յերկրորդ և յերրորդ պատկառ ՚ի ժողովրդատեղին կան յիսուն պատկերատուն, բաժանեալ յերկու կարգ ։ 1՝ զսուրբն Մարիամ տալն առ Քահանայապետն ։ 2՝ Աւետումն սրբոյ կուսին ։ 3՝ Ծնունդն Քրիստոսի ։ 4՝ քառասնօրեայ տարարն ։ 5՝ այլակերպութիւնն ։ 6՝ Ծաղկազարդն ։ 7՝ ընթրիսն ։ 8՝ խաչելութիւնն ։ 9՝ իջուցանելն ՚ի խաչէն ։ 10՝ պատանումն Յիսուսի ։ 11՝ Յարութիւնն Քրիստոսի ։ 12՝ Համբարձումն ։ 13՝ գալուստն Հոգւոյն սրբոյ ։ 14՝ վերափոխումն Մարիամու ։ Սոքա են առաջնին կարգ պատկերատանցն, և սոյն այսոքիկ նկարք պատուականագոյն են յոյժ ըստ արհեստին Ճարտարութեան, վասն զի կենդանի գծագրութիւնք պատկերացն գովաբանութեան են արժանի ։ Այսոքիկ պատկերք ըստ արհեստին նրբութեան վերապասէլի ինձ Թուեցան քան զպատկերսն սրբոյ Ամենափրկչի վանին ։ Երկրորդ կարգ պատկերատան ։ 1՝ կինն Սամարացի ։ 2՝ պատկեր առն արդարոյ ։ 3՝ կին պոռնիկ ։ 4՝ մեծատունն ՚ի քաղաքէ ։ 5՝ մահ աղքատ Ղազարու ։ 6՝ մահ մեծատանն ։ 7՝ բժշկիլ կուրին ։ 8՝ Յարութիւնն Ղազարու ։ 9՝ Ցարուցումն միամօր որդւոյ ։ 10՝ դրախտն ։ 11՝ պժոխքն ։ 12՝ արտաքսիլն Ադամայ ՚ի դրախտէն ։ 13՝ ծոցն տիքրատան ։ 14 քարկոծիլն սրբոյն Ստեփաննոսի ։ 15՝ տալն զվարձս մշակաց մեռասան ժամու աշխատողաց ։ 16՝ կոյր կուրի առաջնորդ և 17՝ նկարագիր առն մեղաւորի ։ Զորեքտասան պատկերք չարչարանաց Լուսաւորչի, երեք պատկերք զօրավարացն, և երկոտասան պատկերք Առաքելոց ։ Միայն երկու պատկեր առաջին դասու գործ է անհմտի նկարչի, իսկ մնացեալքն բովանդակն քաջարուեստ նկարեալ ։ Ի մէջ դրախտի պատկերին նկարագիր Աղայ Պետրոսի շինողի եկեղեցւոյն կայ նկարեալ, յաղօթս զբաղեալ ՚ի մէջ թաւախիտ ծառոց ։ Ի ներքոյ իւրաքանչիւր պատկերաց գրեալ կան անուանք նկարուցն ։

Ի սա աւանդութեանն ծերոց այս եկեղեցի շինեցաւ նախանձաւորութեամբ, ղի շինօղն Աստուածածնի եկեղեցւոյ՝

տուն չորս ։ 1՝ Ծնունդ փրկչին ։ 2՝ Մկրտութիւնն ՚ի Յովհաննէ ։ Նկարք Մարգարէից ։ Յերկրորդ և յերրորդ պատկառ ՚ի ժողովրդատեղին կան յիսուն պատկերատուն, բաժանեալ յերկու կարգ ։ 1՝ զսուրբն Մարիամ տալն առ Քահանայապետն ։ 2՝ Աւետումն սրբոյ կուսին ։ 3՝ Ծնունդն Քրիստոսի ։ 4՝ քառասնօրեայ տարարն ։ 5՝ այլակերպութիւնն ։ 6՝ Ծաղկազարդն ։ 7՝ ընթրիսն ։ 8՝ խաչելութիւնն ։ 9՝ իջուցանելն ՚ի խաչէն ։ 10՝ պատանումն Յիսուսի ։ 11՝ Յարութիւնն Քրիստոսի ։ 12՝ Համբարձումն ։ 13՝ գալուստն Հոգւոյն սրբոյ ։ 14՝ վերափոխումն Մարիամու ։ Սոքա են առաջնին կարգ պատկերատանցն, և սոյն այսոքիկ նկարք պատուականագոյն են յոյժ ըստ արհեստին Ճարտարութեան, վասն զի կենդանի գծագրութիւնք պատկերացն գովաբանութեան են արժանի ։ Այսոքիկ պատկերք ըստ արհեստին նրբութեան վերապասէլի ինձ Թուեցան քան զպատկերսն սրբոյ Ամենափրկչի վանին ։ Երկրորդ կարգ պատկերատան ։ 1՝ կինն Սամարացի ։ 2՝ պատկեր առն արդարոյ ։ 3՝ կին պոռնիկ ։ 4՝ մեծատունն ՚ի քաղաքէ ։ 5՝ մահ աղքատ Ղազարու ։ 6՝ մահ մեծատանն ։ 7՝ բժշկիլ կուրին ։ 8՝ Յարութիւնն Ղազարու ։ 9՝ Ցարուցումն միամօր որդւոյ ։ 10՝ դրախտն ։ 11՝ պժոխքն ։ 12՝ արտաքսիլն Ադամայ ՚ի դրախտէն ։ 13՝ ծոցն տիքրատան ։ 14 քարկոծիլն սրբոյն Ստեփաննոսի ։ 15՝ տալն զվարձս մշակաց մեռասան ժամու աշխատողաց ։ 16՝ կոյր կուրի առաջնորդ և 17՝ նկարագիր առն մեղաւորի ։ Զորեքտասան պատկերք չարչարանաց Լուսաւորչի, երեք պատկերք զօրավարացն, և երկոտասան պատկերք Առաքելոց ։ Միայն երկու պատկեր առաջին դասու գործ է անհմտի նկարչի, իսկ մնացեալքն բովանդակն քաջարուեստ նկարեալ ։ Ի մէջ դրախտի պատկերին նկարագիր Աղայ Պետրոսի շինողի եկեղեցւոյն կայ նկարեալ, յաղօթս զբաղեալ ՚ի մէջ թաւախիտ ծառոց ։ Ի ներքոյ իւրաքանչիւր պատկերաց գրեալ կան անուանք նկարուցն ։

Ի սա աւանդութեանն ծերոց այս եկեղեցի շինեցաւ նախանձաւորութեամբ, ղի շինօղն Աստուածածնի եկեղեցւոյ՝

ըստ ոմանց՝ պատուէր տուեալ էր ծառային իւրում զխօջայ Պետրոսն ոչ թողուլ մտանել յեկեղեցին յաւազ շաբաթս՝ զի գրգիռ լիցի նմա չինելոյ զեկեղեցի, իսկ ըստ ոմանց՝ յաւազ շաբաթս բազմութիւնն ժողովրդեան լինելոյն՝ ի մէջ եկեղեցւոյն Աստուածածնի՝ ի գալն խօջայ Պետրոսի ոչ է եղեալ տեղի կամ անցք մտանելոյ նորա յեկեղեցին, ուստի չինեալ է նա զայնչեալ եկեղեցին շքեղ վայելչութեամբ կից եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի: Արդէ վիճակ սոյն պայծառաշէն եկեղեցւոյ յանշքուղիութեանն կողմն իջանի, վասն զի չունի նա սեփհական ժողովուրդ և խոնարհեալ կայ դուռն նորա, իսկ ի տարին երեք ամիս յամառան ժամանակի սակաւառաւել հով լինելոյ սոյն եկեղեցւոյ՝ փահանայք սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ անդ կատարեն զժամերգութիւնն:

Ցամարն հարաւային յարևմտեան կուսէ բնակեալ կայ, և երթ անհոգութիւն եղիցի ամրացուցանելոյ զայն՝ ունի զկնի քանի ամաց անկանիլ, յայնմ հետէ սոյն այս փառաւոր եկեղեցի՝ որ կարեմ ասել թէ պարծանք համարի Ջուղայոյ՝ ի թիւս աստուածայեցոցն ունի դասիլ: Բաց ի սոյն միոյ խախտեալ կամարէն՝ մնացեալ չինուածքն եկեղեցւոյ է անվնաս: Սոյն եկեղեցի ունի երկու հին ձեռագիր Աւետարան՝ գրեալ ի վերայ մագաղաթի, մինն մեծագիր ի թվին (625) Թուին Հայոց, և միւսն փոքրագիր ի թվին (636) Թուին Հայոց գրեալ:

Յարևմտեան կողմն սոյն եկեղեցւոյ ի սենեկի միում, ար հանդիպ եկեղեցւոյն է, կան պերճզմանք խօջայ Պետրոսի շինողի եկեղեցւոյն՝ խօջայ Ղուկաս որդւոյ նորա՝ և որդւոյ խօջայ Ղուկասի:

Կշեայ տապանաքար խօջայ Պետրոսի ունի զայս դամբանագիր:

Ի տապանի աստ զետեղի
զի մահկան մեծ խօջայի,
որոյ անուն Պետրոս կոչի,
այր մեծաշուք և անուանի:
Ըստ անուանակոչին իւրոյ վիմի՝

կարճր հաւատով՝ գործօք բարի
քան զկար մարդոյ ողորմածի,
և սրբութեան հետևողի:
Եւ այլ գործօք անթերի լի՝
որ Հայաստանն վկայ լինի,
որոյ գործոցն արդիւնք յայտնի
եկեղեցեաւս հրաշալի:
կացեալ մաքուր ի յաշխարհի,
սուրբ Յարութեան մէջ գիշերի,
ըստ հաճոյից մերոյն փրկչի,
որպէս գործօք՝ ալեօք ծաղկի:
Մինչ սա հասեալ կէտ կոչողի՝
ի նոյն Տեառնէ մեր հրաւիրի,
քնդ անմահիկն դասակցի:
Խնդրեմք զԱստուած կենդանի,
սորա գործեալ մեղքն թողցի,
և յիշողացն ամենի:
Թիւնն ՌՂԲի:
Ի յաւուր մեծի պասեքի:

Ը:

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ:

Այս եկեղեցի թէպէտ չունի յիշատակ շինողին իւրոյ՝ այլ ի հին ձեռագիրս կոչի այն եկեղեցի խօջայ Նազարի և այժմ իսկ հասարակօրէն կոչի խօջէնց ժամ, զի մեծ և անուանի էր խօջայ Նազար, որում հասարակօրէն մեծ խօջայ անուն կարդային:

Թուականս շինողքն յայտնի լինի՝ ի ներքոյդրեալ յիշատակարանէ։

Ի ներսոյ վէմոտրի բեմին կան երեք սեանք մարմարեայ, ու՝ ի վերայ նոցա գրեալ կան։

„ Խաչս յիշատակ է Աբետին. և դղկեցին փաշէ։
„ Խաչս յիշատակ է խաչէջ Նորվալէ կիշկց Գուլի-
„ խասին Գեւորոյին։
„ Խաչս յիշատակ է Խոջայ Նազարին։
„ Խաչս յիշատակ է Սահէլ Թափաշէ։
„ Սուրբ Խաչս բարեխօսս է առ Քրիստոս Խանբէկին։
„ Թիվն 1060։
„ Սուրբ Խաչս բարեխօսական առ Քրիստոսին, Թիվն
„ 1060։

Թուականք վերոյգրեալ յիշատակարանաց յայտնի առնեն, Թէ եկեղեցին այն շինեալ է՝ ի 1060 (1611) Թուականի, որ է մինն՝ ի հնագոյն եկեղեցեաց Ջուղայու։

Ի վերայ ճակատոյ հարաւային դրան գրեալ կայ։

„ Այս դուռն Տեառն է և արդարք մտանեն ընդ սայ։
„ Ո՛վ ոք մտանէ՝ սորա նկարել տուողն յիշէ։ Թիվն
„ 1168 շաման 1։

Այդ յիշատակարան որպէս ինքնին յայտնէ՝ է յիշատակ շինողի յատկապակեայ պատկերին, որ է գալն մտուց յերկրը-պագուի նորածինն Մեսիային, և կայ՝ ի ձախատուս նոյն դրան։

Ի վերայ փոխոտկեայ ապրէճանի սեղանոյն գրեալ կայ։

„ Յիշատակ է Ըռամազի Դուստր Տատկումին, Թիվն
„ 1100 ամի։

Այդ և աս է յիշատակ շինողի նոյն տախտակեայ բեմին։

Ձողկոյս և յսեակ կոյս խորհրդանոցաց սեղանոյն գրեալ կան։

„ Յիշեցէք՝ ի Քրիստոս Եսայեայ, որ եւս ծաղկիլ
„ սուրբ սեղանս յիշատակ իւրոյ և ծնողացն, և կա-
„ ղնցն իւր Մարիամին և որդւոյ Յովհաննիսին՝ մկըր-
„ տումին՝ և Դստերացն Զարիֆխանին՝ Խաթունին՝
„ թաջլուխանին, Թիվն 1117։

Այդ և աս է յիշատակ նկարողի երից պատկերացն՝ որք կան՝ ի վերայ սեղանոյն։

Ի վերայ խաչքարէ պեղեղելոյ յորմն խորանին գրեալ կայ։

„ Ի Թվին 1096 շինեցաւ վկայարանս խաչատուր
„ վարդապետին Հոգեբարձրութիւն Պարոն Նազա-
„ րէթին „։

Շինեալ է կամարակապ երկայնութիւնն՝ ի ստորոտէ սեղանոյն՝ 70, և լայնութիւնն՝ 33 ոտնաչափ։ Բաց՝ ի սեղանոյն չունի նկարչն պատկերս, այլ կից ընդ միմեանս շուրջանակի յորմն՝ ի մի շար միայն մածուցեալ կան պատկերք սրբոց՝ Թերթս Թղթոյ նկարեալ։

Շինութիւնն եկեղեցւոյ խախտեալ մերձ է յաւերն, խոնարհեալ է դուռն նորա և՝ ի տարին ոտից իւր՝ ի վերայ միմեանց հաշուելով՝ հազիւ լինի՝ ի նմա ժամերգութիւն։ Ըստ որում պատանի, այս՝ ի փողոցն կոչեցեալ Ղարիբչնց, որ է մերձ գետոյն և հեռի՝ ի Ջուղայոյ՝ վասն որոյ չիք կոյս միաբանդամ վերանորոգութեան կամ հաստատութեան նոյն եկեղեցւոյ։ Այժմ թէպէտ կան կոյսք փողոցի չորս կամ հինգ տուն աղքատ գերդաստանք՝ այլ սակս թշուակայութեանն իւրեանց յատկատոյ չիք կոյս Թէ ունին մնալ անդ ընդ երկար, ուստի պատիլ սոյն եկեղեցւոյ՝ ի շարս ամայացելոցն՝ չիք տարակոյս ինչ։ Ի վաղուց հետէ լինելոց երևնայ ամայի, որպէս և պէտք միւս եկեղեցիք, որք շինեալ էին կայն կողմն պողոտայիս

խոջայ Նազարին, այլ ըստ որում հրաշագործութիւնք սքբ-
ոյն Գէորգայ՝ի համբաւի է՝ի ջուղայ, և բազում ուխտա-
ւորք կանոյն եկեղեցւոյ, վասն որոյ պիծուարութեամբ պահ-
պանեցաւ այն մինչև ցարդ:

Ի մէջ պարսպի սոյն եկեղեցւոյ կան քարինքն սրբոյ Էջմի-
ածնի առաքեալքն՝ի Հաղբասայ առաջնոյ:

Կանի սա մատուռն կամ եկեղեցի ամառան:

Կանի ձեռագիր Աւետարան գրեալ՝ի վերայ մագաղաթի
՝ի թուականի հայոց 685:

Այս եկեղեցի ունի գեաչ մի վայտեայ քանդակափորեալ
զանազան պատկերօք տնօրինականօք, որ է գործ նրբարո-
ւեստ ձարտարապետի: Ոչ աւելորդ ինչ համարեմ զմանրա-
մասն նկարագրութիւնն յիշեալ խաչին նշանակել՝ի կարգի
պատմութեանս, որ վկայ լինի թէ ջուղայեցիք ոչ միայն բա-
րեպաշտ էին՝ի շինել զեկեղեցիս, այլ և գիտէին գյարգ ձար-
տարահիւս ձեռագործացդ, զորս և պահեալ են՝ի մէջ եկե-
ղեցւոյ իբրև յատկահոյլ տեղւոջ: Ո՛վ գիտէ թէ որչափ թան-
գագին և հազուագիւտ ճշմարիտքն անհետացան ընդ աւե-
րակացն ջուղայու:

Փայտ նորա թուի լինել անտառայ, կարմրերանգ է և
կարծր: Երկայնութիւն խաչին է երեսուն գարեհատ, լայն-
ութիւն թևոցն՝ տասն և ինն (ոչ մտանելով՝ի թիւ սոյն չա-
փուց խոյակաձև պսակքն): Լայնութիւն երկայնութեանն է
հինգ և կէս, լայնութիւն լայնութեան թևոցն՝ վեց, և թաձն-
րութիւնն՝ չորս և կէս գարեհատ:

Ի վերայ պազպաման խաչին և յերկուս ծայրս թևոցն կան
խոյակաձև սլաքք, չին այնոքիկ՝ի բուն խաչէն, այլ՝ի-
նոյն տեսակ վայտէ յօրինեալ զատաբար և մածուցեալ յայ-
նոսիկ տեղիսն: Յերկու անկիւնս թևոց լայնութեանն ցլեր
կոյս՝ կան երկու փոքրիկ խոյակաձև զարդք՝ի բուն խաչա-
վայտէն հանեալ: Սոյնպէս (այ՝ի բուն խաչափայտէն) ցատո-
րոտ խաչին յերկուց կողմանց իջանեն երկայն կօրաձև զար-
դարանք: Պատկերք փորագրեալք՝ի մէջ նոցին՝ է Յակոբ
Նահապետ, յորմէ շառաւիղեալ ելանեն երկոտասան Նահա-

պետքն՝ի վերայ ուրոյն ուրոյն շառաւիղեալ ոստից:

Սոյն պատկեր է յերկու երեսս խաչին՝և յերկու կողմն թև-
ոցն: Ի մէջ երկու փոքրիկ խոյակաձև զարդուցն՝ի վեր յի-
շելոց՝ի միում եզն՝ և՝ի միւսում գառն մի: Յերկու
երես խաչին գտանին բովանդակ քսան՝և չորս պատկերա-
տունք, կէսն՝ի մի՝ և կէսն՝ի միւս կողմն: Ամենայն պատկե-
րատունք չեն հաւասարաչափ բաժանեալ, այլ ըստ յարմա-
րութեան պատկերացն՝ չորս պարունակեն յինքեանս: Խաչա-
ձև ծաղիկք կցորդեալք յիրեարս՝ զարգարեն զեզերս խաչին
ըստ երկայնութեանն և ըստ լայնութեանն, որոց չափ լայ-
նութեան է երրորդ մասն մի՞ոյ գարեհատի:

Ա՛ոջն պոկերոցոո՛, (է ոո խոյոկոյն պոկն գոգոնան խաչին):

Ի ծայր խոյակաձև պսակին՝ պատկեր միոյ Աւետա-
րանչացն: Գնացն Յիսուսի յաւուր ծաղկազարդին
յերուսաղէմ, հանդէպ ձա-
գատարհին ընդ որ ուղղեալ են գնացք Յիսուսի՝ երևի
կիսամանեայ շէնքն քաղաքին Երուսաղէմի, յորմէ
իբրև ընդ առաջ ելանեն Յիսուսի արք վեց՝ի թի-
կանց կուսէ երևի կիսամանեայ շինութիւն գեղջն՝
ուստի ելեալ Յիսուսի գնաց յերուսաղէմ: Սրբ ե-
րեքտասան ընդ կողմն Յիսուսի ուղեկցին՝ի նմա:
Թուի ինձ թէ երկոտասանքն խցին աշակերտքն, և
մինն յարուցեալն վազարոս:

Եջնըդդ պոկերոցոո՛, (է ոո՝ե վերոյ գոգոնան էոո խաչափոյտին):

Ոչ ետիք է գաբրիէլի առ Մարիամ կոյս, ապարան
մի մեծ երկկողմեան, իջանէ հրեշտակ յերկնից՝ և
ընդ ուղի նորա լոյս փայլատակեալ իջանի՝ի վերայ
սուրբ կուսին, սուրբ կոյսն կացեալ յոտին՝ հրեշտակն
ընդ աջմէ, որոց միջի եղեալ սեղան մի:

Երրորդ պոռնկապետն, (է սա՝ ի սորին կողմն լայնութեան ընթացեալն):

Փոքր մի բեկեալ են պատկերք սորա, ուստի ոչ երևին բացորոշապէս, այլ ինձ հաւանական թուի սակաւ մկրտութիւն ցեառն: Երևի ծառ մի արմատեղոյ, ընդ նովաւ այր մի, և՛ի միս կողմն վերց մարդիկ, պատկերն որ ընդ մէջ սոցա՝ բեկեալ է, ՚ի վերայ նոյն բեկեալ տեղւոջ նշմարի հետք իջանելոյ հոգւոյն սրբոյ յերկինից:

Չորրորդ պոռնկապետն, (է սա՝ ի ներքոյ երրորդ պոռնկապետին):

Կինն Սամարացի ջուր հանէ ՚ի ջրհորոյ, Յիսուս կայ ընդ աջմէ ջրհորոյն բազմեալ, արմատենի մի բարձրացեալ ընդ կողով ջրհորոյն, ՚ի թիկանց Յիսուսի կանգնեալ մետասան աշակերտք: Երևի քաղաքն Սամարիայ իբրև վոքր մի հեռի վասն դոգաւորութեան պատկերատանն:

Հինգերորդ պոռնկապետն, (՚ի ներքոյ չորրորդին):

Կայարան մի արձակ, Յիսուս ՚ի մէջն նորա կալեալ զձեռանէ Առն միոյ, երկոտասան աշակերտքն յայսկոյս և յայնկոյս Յիսուսի ՚ի մէջ սրահի ապարանին:

Վեցերորդ պոռնկապետն, (է վերջին ծայր պոռնկապետական խաչին):

Ցնծարուքիւնն է ղազարու: Փոքր մի դոգաւոր երևին շինուածք ապարանից, Յիսուս արտաքոյ քան զշինուածն կայ ՚ի միջի, զառաջեաւ նորա երկու կանայք անկեալ երկրպագանեն, գերեզմանն ղազարու՝ երկոտասան առաքեալքն կանգնեալք են զհետ Յիսուսի:

Եօթներորդ պոռնկապետն, (՚ի վերայ խոյակ-ին պոռնկին, որ կայ ՚ի ծայր լայնութեան ընթացին):

Կայարան մի մեծակառոյց և բազմաշէն, յորում երևին երկու մարդիկ:

Ութերորդ պոռնկապետն, (է ՚ի վերայ ծայրի ընթացի լայնութեան բուն խաչափայտին):

Մարիամ կոյս գրկեալ զՅիսուս, Հայր Յովսէփ զկնի նորա. երևի շինուածք մի դոգաւոր՝ առ որ ուղղեալ են դնացք նոցա, երևի անտառ արմատենեաց, և հշմի՝ զոր իբրև թէ շրջեցուցանեն անդր:
Վերևս իցէ սա պատկեր վախճանի Յիսուսի յերկինսն:

Իններորդ պոռնկապետն, (հետ սոցին):

Գնալն կուսին քառանօրեայ ՚ի Տաճարն՝ երևի Տաճարն Սողոմոնի, Աննա Մարգարէ ՚ի տաճարին, Սիմէոն առեալ ՚ի գիրկս իւր զՅիսուս մատուցանէ Մարիամ՝ որ պատրաստի ընկալնուլ զնա: Այր մի զհետ կուսին տանէ զղոյգս աղաւնեաց:

Տասներորդ պոռնկապետն, (՚ի ներքոյ իններորդին, զոր հարկ է նկարել՝ զի երկայնութիւն պատկերին երկայնութեան ընթացին չափ ունիցի):

Ի վերջին պատկերատանն առանձին պատկերատուն մի վոքրիկ և դոգաւոր, յորում ծնանիլն է Յիսուսի հանգուցեալ ՚ի մսուր, առ որով գտանի Մարիամ, և առ մսրովն երևին գլուխ երկու եզանց: Ի վերայ գաղթեան սոյն պատկերատան աստղ ՚ի քառակամար երկնից իջեալ և հանգչեալ ՚ի վերայ գլխոյ նորա՝ զպատկերատանն միջակիտի: Արտաքոյ քան զայդ

փոքրիկ պատկերատուն՝ հինճալք երիք (մոգքն) գան՝ ի միոյ կողմանէ, հրեշտակ՝ ի բարձանց առաջնորդէ նոցա: Ընդ միւս կողմն հրեշտակ մի ինքեան՝ ի բարձանց, ծառ մի արմաւենւոյ ընդ որով և այր մի. (կարծեմ՝ ի հովուացն) ապա չորս արք (հովիւքն) եկեալ են՝ ի տեսանել զմանուկն: Այս պատկերատուն առաւել զարմանարհեստ երևի քան զայլսն ըստնըրբուքեանն արհեստին:

Մէ փասանէրրուդ, (կէց ընդ փասին):

Պարան մի մեծակառոյց երկայրկեան, ՝ի վերնատանն երևի այր մի, և՝ ի միւս դատիկոնին՝ միւս այր մի, առ ատորոտով նոցա արք տասն: Ի միւս կողմն՝ Տաճարն Հ Յողովմնի, Յիսուս նստեալ՝ ի վերայ աթոռոյ ուսուցանէ: Վեց մարդիկ առ ատորոտով Աթոռոյն կան:

Երիֆասանէրրուդ, (՝է դ-ա ծայր լայնութեան խօչէն):

Պարան մի մեծ գոգաւոր շինուածոյ մի գՀնտ միասոյ, յորս երեքն արք վեց:

Ի միւս կողմն խաչափայտին:

Ա-ջէն պուհէրպուռն, (՝է վերայ խոյսիչեա պուռէ գագռեան):

Ի ծայր պսակին նկար միոյ յԱՀատարանչացն: Ի մէջն՝ լերան մի՝ յորմէ Յիսուս կամի համբառնալ, ՝ի վերայ լերանն երեք արք՝ յորոց երկուքն են գլխիվայր, յայսկոյս և յայնկոյս լերանցն երկոտասան մարդիկ կացեալ զարմացմամբ, ծառք երկու յայսկոյս և յայնկոյս:

Երիրդէ՝ ի վերայ գագռեան էոռ խաչափայտին:

Համարձումն Յիսուսի, երևի բազմեալ՝ ի յերկինս, չորս հրեշտակք՝ երկուքն՝ ի միոյ՝ և երկուքն՝ ի միւսէ կողմանէ ծառային, առ ատորոտով սոցին բազմութիւն հրեշտակաց և մարդկան իբրև՝ ի հիացման կան: Բազմութիւն ասէմ, զի պատկերք հինգ երևին կատարեալք, չորս թևք հրեշտակաց, տասն երեք գլուխք մարդոյ և վեց ձեռք մարդկան ճափահարութեամբ բարձրացեալ:

Երրդէ ա- ատորոտով ինոյ լայնութեան խօչէն:

Ի՝ջուգեալ զՅիսուս՝ ի խաչէն, արք երկու կալեալ զնա կամին հանգուցանել՝ ի վերայ գետնի, կին մի և այր մի համբուրեն զձեռն: Փոքր մի դոգաւոր երեսին խաչն՝ սանդուղն՝ ապարանք յերկուս կողմն խաչին, և մարդիկ երեք՝ որք տեսանեն զպատրաստութիւն խնամարհութեան, բազմութիւն խուռն պատեալ գնովաւ: Բազմութիւն ասէմ, զի վեց մարդիկք երևին կանգնեալ, և երեսուն գլուխք մարդկան յայսկոյս և յայն կոյս սեանցն ապարանից: Առ ատորոտով Յիսուսի ձգեալ համարձակ խարան յերկու կողմն, յորս կան մարդիկ երկու:

Հինգերորդ՝ ունէր նորոգուն։

Արհնաւոն մի երեք յարկեան՝ յորում է ընթրիս Տեառն, փոքր մի գոգաւոր երեսի բաղմեալ Յիսուս, աշակերտքն՝ վեց յայսկոյս և վեց յայնկոյս նորա բազմեալ. սուրբն Յովհաննէս անկեալ կայ գլանջօքն Յիսուսի, սեղան պատրաստեալ զառաջեաւ, յորում եւրևին գառն մի խորովեալ, բաժակք, և պան։

Վեցերորդ՝ է տորոտ խաչէն ըստ երկայնութեանն։

Հաւատքիւնն է Յիսուսի, ապարան մի երկուսի և երկ յարկեան, սիւնազարդ և գմբեթաւոր, հրեշտակ մի նստեալ ի մէջ միջին սրահի ապարանիցն, առաջեաւ հրեշտակին՝ կերեզմանն պատարկ, յորում երևին կտաւք ծալեալ, ի թիկունս հրեշտակին կան երկու կանայք, որոց՝ որպէս թէ պարծեալ հրեշտակին ցուցանէ զկերեզմանն պատարկ։

Եօթներորդ՝ է վերայ խոյակին՝ որ է ծայր երկնքեանն։

Հարանիքն ի կանայ գալիլիացւոց, սեղան ևանջայից, ի վերայ նորա եդեալ շորս սրուակս, և այլ պատրաստուածք սեղանոյ, վեց բազմականք շուրջ զնովաւ։ Առ ստորոտով սեղանոյն շարեալք թակոյկ վեց, և այր մի զթակոյկ բարձեալ ի յուս հնդու ըզջուր ի թակոյկն։

Ութներորդ՝ ունէր ընդ եօթներորդին։

Յիսուս թժշկէ մատաւոյ զաչս կուրին, արմատեանի մի, շինուածք իրրև թէ ի հեռաստանէ երևեալ, մարդիկ վեց շուրջ զՅիսուսիւ։

Ինն երորդ։

Վերափոխումն սուրբ Աստուածածնի, ապարան մի երկյարկեան սիւնազարդ։ Մարիամ հանգուցեալ ի վերայ բազմոցի, կերոն վառեալ զկողմն նորա, Քսպետասան մարդիկ շուրջ զնովաւ։ Ի վերոյ քան զայն իրր ի բարձունս՝ այր մի գրկեալ զմանուկ՝ յայսկոյս և յայնկոյս նորա մի մի հրեշտակք։

Տասներորդ՝ ի հերձն լայնութեան ևանջն։

Խաչելութիւնն Քրիստոսի, աւազակք երկու ի խաչին յաջ և յահեակ կողմն խաչին Քրիստոսի, հրեշտակ մի բաժակ ի ձեռին ի կողէն Յիսուսի զջուր և զարիւնն ընդունի։ Հրեշտակ մի կայ ի վերայ թևոց խաչի աջակողմեան աւազակին, երեք Մարիամանք և հրեշտակ մի կան առ ստորոտով խաչին։

Մետասաներորդ։

Ապարան մի՝ սրահ սիւնակազմ արտաքոյ քան զապարանն, այր մի ի մէջ նոյն սրահի բաղմեալ բազկատարած ունի ի վերայ բազկացն զերբ ինչ (որպէս կնքահարք զանս իւրեանց), յայսկոյս և յայնկոյս ի մէջ դահլիճի կան բազմեալ մարդիկ երկոտասան։ Ի նից այնմ յայլում սրահի՝ ապարանն Պիղատոսի երեք յարկեան և շորեք պահլիճ, Պիղատոս յառաջ նուագ յարկին բազմեալ ի վերայ Աթոռոյ զձեռանն լուանայ, Յիսուս կանգնեալ զառաջեաւ նորուն, առջահին մի ի Թիկանց կուսէ Պիղատոսի՝ որպէս թէ խօսի ընդ նմա՝ ինն մարդիկ կանգնեալ կան շուրջ զՅիսուսիւ։

Երկոփառաներորդ վերջին ծայր նշոյ խաչին։

Պարան մի մեծ երկայարկեան և բաղմասենեակ. ի մէջ նորա ջրհոր մի՝ առ որով կանգնեալ երիք մարդիկ, առաջի ջրհորոյն միւս պահլիճ մի՝ յորում կայր մի զաւազան բարձեալ ի յուս, ի միւս կողմանէ Յիսուս՝ որպէս թէ խօսի ընդ մարդոյն այնմիկ, ուրմն մարդիկ ի թիւանց Յիսուսի կանգնեալ կան։

Ի ներքոյ իւրաքանչիւր պատկերատան գտանի գրեալ Յունարէն, անշուշտ զինչ լինէին պատկերացին։ Ի վերայ գլխոյ Յիսուսի տարածեալ կայ պատկերացոյն, որով որոշի նա ի հասարակ մարդկանց։

Ի նոցա խաչէն գրեալ կան տաղ պատ ինչ օրաց Աղեղոյ։

Յաղագս փորագրութեան այսոցիկ բազմարհեստ պատկերաց՝ ոմանց կարծիք են թէ ուրոյն ուրոյն քանդակեալ զիտեղեալք են իւրաքանչիւր պատկերատունս, որ թէպէտ հաւանական իցէ՝ այլ չիք նշան ինչ սակս այնր՝ զի ըստնուրբ հետազօտութեան՝ ի բուն ի խաչափայտէն ձեռն ներհուն քանդակործն փորագծեալ է զայնոսիկ պատկերս։

Այժ խաչ բերեալ եղև ի սուրբ վանս Ամենափրկչի, ուրանօր և պահպանի խնամով։

Մինչև ցայս վայր խօսեցաք զեկեղեցեաց՝ որք ամայացեալ են և առ ամենայնայն խոնարհին, իսկ արդ եկեղեցիքն զորոց ստորագրութիւն ի ներքոյ գրեմ՝ են շէն և ի հասատատութեան եղեալ եկեղեցիք Ջուղայու։

ԹՈ.

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ։

Վասն յիշատակարան գրեալ շուրջանակի ի մէջ դմբեթի Ներքնականմարին։

« Ընորհօքն Յիսուսի Քրիստոսի գերանկար շինեցաւ
« բարձրադոյն նմանեալ սուրբ եկեղեցի, և ձեռամբ
« մանկտեսի Աւետքին կարողութեամբ Աստուծոյ ա-
« ւարտ եղև յիշատակ իւր Հոգւոյն և ծնողաց իւրոց,
« նա և զկայրն խոջայ Բարաքին, և մայրն Ուլուխա-
« թունն, կողակից նմին փաշէն, և որդիքն Յակոբ-
« ջանն՝ Ալէքսանդրին, և դստերքն Եալաքին՝ Վաղամ
« դուխտ՝ և Սոփիէն, և եղբայրն Մարգարն՝ Յա-
« կորն՝ և քոյրն Սահամն՝ Ամնայն »։
« Ընդ հինեցաւ ի Թագաւորութեան Շահաբասին, շի-
« նեցաւ սուրբ եկեղեցիս Հայրապետութեան Տէր
« Դաւթին, Թիվն ՌՀԲ։

Ի վերայ աբեան Վեմաւորին գրեալ կայ ի շրջեալն կողմանս։

« Խաչս յիշատակ է խոջայ Նուրվէթ՝ և կողակիցն
« Գուլխանն, և որդւոցն Պետրոսն՝ Վազարն։
« Յիշեցէք ի Քրիստոս խոջայ Սուլթանվէլն կղկիցն
« Սանդուխտն, և որդին Յովհաննէսն »։
« Սուրբ խաչս յիշատակ է խոջայ Աւետքին, և կո-
« ղակիցն Լխինփաշէն և որդւոցն Յակոբջանն Ալէքսան-
« դրին։

" Խաչս յիշատակ է խօջա Բարաքին, և կղկղն Ու-
" լուխաճունին, և որդւոցն Աւետն՝ Մարգարն ,, :

Ի ձախոյս նմարէ առաջնոյ պատս գրեալ կայ :

" Յիշեցէք ի Քրիստոս զվերջինն նկարողս խորանիս,
" զԳաւրիէլն՝ և զհայրն իւր զՊարոն Մարգարն, և
" զմայրն իւր զՄարիամն, և զՊապն Միքրտիչն, և ըղ-
" հանիկն Գուլբակի, և զկողակիցն Զիբիլիէն, եղբարքն
" Փանոսն՝ Ներսէսն՝ Աւետիքն, քոյրն Մարիամն՝
" եղսաբէթն ,, :

Յորմէ հետեւոյն կէս նմարէն առաջնոյ պատս գրեալ կայ :

" Որք հանդիպիք այսմ տեսուածոյ նկարըս խո-
" րանիս արդուածոյ, յիշել յաղօթս ձեր մաքրական
" նկարող զԱպոնէն երիցփոխան, հարք և ծնօղքն իւր
" աւետեան, հայրն իւր Մարուքեն և զմայրն իւր Աղ-
" սէրն . . . . . և եղ-
" բարքն իւր Սիմէօն՝ Գրիգորն՝ Թաւսալէ՝ և կինն
" Ծաղիկ՝ և զքոյրն : Թվին ՌՃՇԵ :

Հարաւոյն յորմն կէս նմարէն առաջնոյ պատս գրեալ կայ (որ գրեցաւ
ի Տէր Յովհաննէս Գալուստեան ի 1841 ամի ի ձմեռնային երկրայ
նորոգութեան նոյն եկեղեցւոյ) :

" Նորաջին և երկրորդ դասուց շինուածքն էր Թվին
" 1059. որ եղծաւ, և երրորդն էր 1062 Թուին փոքր,
" որ ի կաթուղիկոսութեան Դաւթի : Երրորդ անդ-
" զամ վերանորոգումն արդեոյ տանս հասանի եղեւ 1841:

Եկեղեցին շարջանակի ի յատակէ եկեղեցւոյն երիք կանգ-
նաչափ յորմն զետեղեալ ունի ընտիր ախճապակի, ի վերայ
որոց ախճապակի գրով գրեալ կայ յիշատակ շինողացն նոյն,

ախճապակեաց : Ի 1841 ամի ի նորոգել զայն եկեղեցի ի-
տեղիս տեղիս եղծան այնոցիկ ախճապակեայ շինուածքն,
զոր ի յիշատակագրութեանս կետանշանաւ որոշեմ:

Ի ձախակողմեան պատէն սկսեալ ընթերցանէն :

" Գտարձեալ յիշեցէք ի Քրիստոս զփանոսն զհայրն
" մկրտչեան Մարտիրոսն, եղբարսն Ալավէրդին՝ քուրն
" Ովսաննէն և ընտանեացն իւր, Թվին ՌՃ : Յիշեցէք
" ի Քրիստոս զՈլաւսավն կողակիցն Մարեամն ծնօղսն
" Գալուստն՝ եղբարսն իւր եղբաք Առաքելն : Յիշե-
" ցէք ի Քրիստոս Բաթամն՝ զծնօղքն մահդեսի
" Ծատուրն՝ Գալուստն՝ Նազարէթն՝ Սաակն՝ Պետ-
" րոսն՝ զադամդուքն, եղբարսն Մուրատն՝ Թուշ-
" խատէ՝ Մուրասէ՝ Դշխոյ : Յիշեցէք ի Քրիստոս
" Լաչինն՝ կողակիցն Կատանն՝ Աւետիքն՝ Մնացականն :
" Յիշեցէք ի Քրիստոս Գուլվարի՝ Մարկոսն՝ Կոս-
" տանդն՝ Մուսէսն՝ կողակիցն Փէքանն՝ Հարսն
" Աշի . . . . . Յիշեցէք
" ի Քրիստոս Առսիէն կողակիցն Թաքուհին՝ որդին
" Նազարէթն՝ Դստեր Փարնաքիւնին՝ Զաւաքն, Յի-
" շեցէք ի Քրիստոս վաթանն՝ զծնօղքն Մահդեսի
" Ծատուրն, Գալստան . . . . . .
" Յիշեցէք ի Քրիստոս եղնազարն կողակիցն Գոզալ
" որդին Ծատուրն :
" Գտարձեալ յիշատակ Սաֆարին կողակիցն Աստղիկն
" պարծանքին : Յիշեցէք ի Քրիստոս Յովհաննէսն
" կողակիցն Չինիկն : Յիշեցէք ի Քրիստոս Գինարին,
" կողակիցն Մխիթարէկի, եղբարցն Սարուխն Պաղտսն
" քոյրն Շուշանն Յովհաննէս, Թվին ՌՃՇ : Յիշեցէք
" ի Քրիստոս մահդեսի մկրտ . . . . . .
" ի Քրիստոս գէորգին կողակիցն Խոռոմնիմի, որդ-
" ւոյն Յովհաննէս՝ Յարութիւնն՝ Մաթոսն Սբոյ . . . .
ի Քրիստոս Բաթամէն ծնօղքն մահդեսի Ծատուրն՝

" Գալուստն՝ Նաղարէթեն՝ Սարուկն՝ Պետրոսն : Յի-
" շեցէք ՚ի Քրիստոս Մուքէէն կողակիցն Եղսաբէթն :
" Յիշեցէք ՚ի Քրիստոս փանոսն՝ մահվեսի Ասատու-
" րին, մայրն իւր Եղսաբէթին եղբարսն Ալավէրդին :
" Յիշեցէք ՚ի Քրիստոս Աղաբաբէն՝ եղբայր Գաւ-
" թին և ծնօղ . . . . . ,

Ի տպագրոյ սեղանոյն գրեալ կայ :

" Օվսեղաւոր Գալուստն զծնօղն իւր մահտեսի Ծա-
" տուրն զմայրն ՂազամղուԹլուն, եղբարքն՝ փանԹա-
" ման՝ Աւետն՝ Նաղարէթեն՝ Պետրոսն՝ Սարուկն՝
" քորքն Հռիփսիմէն, կողակիցն Շուշանն որդի Վա-
" Թանն Գուլնասան, Պէրսարէն, Խանփէրէմալէն,
" Թիլդ ՀՀԸ :

Յորմէ որբեղ սեղանոյն գրեալ կայ զոր կանուխէ :

" Յիշեցէք ՚ի Քրիստոս զՏէր Յակոբն՝ զՏէր Մկըր-
" տիչն՝ Տէր Պօղոսն՝ և զՏէր Նիրակոսն և զաւագ-
" էրէց . . . . Յիշատակ է Տէր Մկրտչին՝ Տէր
" Պօղոսին՝ Տէր Սահակին՝ Տէր Կարապետին՝ Տէր
" Պետրոսին՝ Տէր Մարկոսին, Տէր Յովհաննիսին,
" Թիլդ ՌՀ ,, : Սոքա եղեալ են վիճակաւոր քահա-
նայք նոյն եկեղեցւոյ ՚ի ՌՀ ամի :

Յորմէ սեղանոյն՝ յորնեղէսն կողմն գրեալ կայ :

" Յիշեցէք ՚ի Քրիստոս զՏէր Յովհաննէսն Գալս-
" տանեան որ եղև պատճառ վերանորոգման սրբոյ
" տանս Հաւսյն, յամի Տեառն 1841, յամսեանն Հոկ-
" տեմբերի 21 ին աւարտեցաւ որ ՚ի կաթուղիկոսու-
" Թեանն Յովհաննիսի ,, :

Ի ձախակո՞ս սրճելեան պրսի գրեալ կայ :

" Յօրինեցաւ այս սուրբ եկեղեցի՝ յանուն Տիրամօր
սուրբ Աստուածածնի .
իսկ շինող այս տան էր այր մահի՝ Խոջայ Աւետիք
Բաբաքեան ասի .
շինեալ արդեամբ նոյն առատաձեռնի՝ առ ՚ի յիշա-
տակ իւրոցն տոհմի .
՚ի Թուին Հայոց միոյ հազարի, և վաթսուն եր-
կուցն ՚ի նմին ամի :
Վերանորոգումն սորին կրկնակի՝ ձեռամբ բարե-
Ջան Տէր Յովհաննիսի :
որպէս լինելոյ սա գալստեան՝ նոյն եկեղեցւոյ վի-
ճակաւորի .
՚ի Թուին Հայոց միոյ հազարի, և երկու հարիւր
հինսունն սոյն ամի .
զոր նա նորոգեաց զայս եկեղեցի, Տէր բարեսիրաց
յաւէտ պճասցի :

Յորմէնս սորա ՚ի խորանս պատկերատանց կան այլ և այ-
լիշատակիք, որք պրեալք են կապոյտ՝ կարմիր՝ և սպիտակ-
ներանգ պրոյ, և այնոքիկ պրուԹիւնք խառնեալք գոլով ընդ
միմեանս պժուարաւ ընծանելի են : Թէպէտ կարելի էր երկար
ատեան աշխատանօք որոշելով զնոսա յիրերաց՝ ընԹեռնուլ այլ փոքր
ին աշխատեալ ընԹերցայ և տեսի Թէ զարձեալ յիշատակք
են այնոքիկ շինողի եկեղեցւոյն և ազգատոհմի նորա, վասն
որոյ յաղագս յայտնի լինելոյ յիշատակի շինողին և Թուական
նի շինուԹեան այնը, ոչ առաւել հարկաւոր ընդ համարեցի
կորսուանիլ ժամանակ վասն օրինակելոյ զայնոսիկ :

Ի պատ վերոյգրեալ յիշատակարանաց, շինեցաւ այս եկեղե-
ցի յամի 1613, նկարեցաւ ՚ի 1666, յանձնապահի շինուԹեցաւ
յորմէ հետ գՀետէ ՚ի 1651է ց1666, և եկրորդ անգամ եղև նո-
րոգուԹիւն նորա ՚ի 1841 : Ըստ հաւաստի տեղեկուԹեան ա-
ռաջնի նորոգուԹեանն այնր եղև ծախիւք Գէորգ Աղայի ՚ի ժա-

մանակի կենդանութեանն Նորա :

Հինեալ է այն կամարակապ, երկայնութիւնն է 68՝ և լայնութիւնն 35 ոտնաչափ : Յառաստաղի Նորա կան պատկերք ըստ տարաղու պատկերացն հին եկեղեցեաց որ չէն վայելուչ ըստ արհեստին : Յորմն Ժողովրդատեղոյ կան քանի պատկերք որք երկրորդ անդամ նկարեցան՝ և են կատարեալ գործք ըստ արհեստին քան առաստաղացն պատկերս : Յորմն հիւսիսայնոյ և հարաւայնոյ կողմանց կան երկու պատկերք՝ գործ ներհուն պատկերահանի զոր ’ի վէնետիկ ’ի վերայ կտաւոյ ետ նկարել Գէրաք Աղայն ըստ չափաւոր և ըստ յարմարութեան նոյն որմոյ, և քերեալ աստ զհետեղեալ ’ի տեղիսն յայնոսիկ : Պատկերն հիւսիսայնոյ որմոյն է պալատն Հերովդէսի և գլխատումն սրբոյն Յովհաննու : Ի ներքոյ այնր կայ պատկեր Գէրաք Աղայի որ ձեռնամածեալ յաղթիս կայ, և ’ի մէջ ձեռնամածութեանն գրեալ կայ ,, Գէրաք ,, պատկերն հարաւայնոյ որմոյ է տաճարն քառասնօրեայ, և ’ի ներքոյ այնր՝ կայ պատկեր կնոջն Աղայ Գէրաքի և երկու որդւոցն Նորա :

Ընդ այս եկեղեցի՝ վասն լինելոյ յանուն Տիրամօր առաւել ջերմեռանդ են կանայք, և բազումք են ուխտաւորք սորա : Ի չորեքշաբաթի աւուրս խուռն բազմութիւն կանանց ’ի հռառաւոր Թաղից Ջուղայու գիմեն անդ . և ’ի չորեքշաբաթու պատկին առաւել բազմութեամբ և ոմանք բոկոտն ընթանան, որպէս թէ ճանապարհէ լեալ աւետիք տան Տիրամօրն վասն Յարութեանն Յիսուսի :

Վախճան ղգալն ներկայ Առաջնորդ Սրբազան Թադէոս արք եպիսկոպոսի, այս եկեղեցի Թէպէտ ունէր զպահանջ ինչ յոմանց, այլ չունէր առ ձեռն պատրաստ դրամ, նա մասնաւորապէս պարտական և ս էր, իսկ յետ հաստատելոյ նորին Սրբազնութեանն զկարգադրութիւնս ’ի մէջ եկեղեցեաց Ջուղայու կարգելով և զերեափոխանս, կրնթացս վեց ամաց բովանդակեցաւ ’ի մէջ նոյն եկեղեցւոյ երկերիւր և յիսուն թումանեակ գումար, ստանալով և զկին պահանջս իւր բարեջանութեամբն Սրբազան Առաջնորդին :

Բաց յայնմանէ Տէր Դաւիթ Մկրտչեան վիճակաւոր քահանայն նոյն եկեղեցւոյ կտակեալ է զի հաղար կումպանու ռուփի յանուն սոյն եկեղեցւոյ, որոյ տարեկան տոկոս չորս առ հարիւրն, ձեռամբ գերապատիւ Աբգարեանց ընկերութեանն որ ’ի Կալկաթայ՝ հասանէ սոյն եկեղեցւոյ : Նոյնպէս և Պարոն Գրիգոր Աբգարեան կտակեալ է տարեկան ղերիս թումանս հասուցանել առ սոյն եկեղեցի :

Ի հիւսիսայնի յորմն պարսպի սոյն եկեղեցւոյ կայ մատուռն մի փոքրիկ սուրբ Յակոբ կոչեցեալ, որ շինեցաւ նախ քան զեկեղեցին յաղբատ ժամանակի Ժողովրդեանն, ուրանօր կատարէին գաղթիս իւրեանց մինչև կառուցաւ եկեղեցին սուրբ Աստուածածնի :

Կայր սուլորութիւն մինչև քանի ամաք յառաջ, զի ’ի տոնի սրբոյն Յակոբայ կատարէին անդ զպատարագ և ըղժամերգութիւն :

Խօլայ Աւետիք շինող այնր եկեղեցւոյ կայ ամփսփեալ յարևմտեան կողմն նոյն եկեղեցւոյ, որոյ այս է տապանագիր :

Այս է տապան՝ մահկեսի Աւետքին
որ փոխեցաւ յաշխարհ վերին :
Թիվն ՌՃՃԸ ամին :

Այս եկեղեցի մինչև ցամն 1848 ունէր կոչնակ, իսկ ’ի 1848 ամի Տէր Բարսեղ Գալստանեան ’ի վերադառնալն իւր ’ի Հնդկաստանէ եբեր զանգ և ’ի ժամանակէ անտի կախեցաւ զանգ ’ի փոքրիկ զանգատան որ ’ի վերայ առաստաղի եկեղեցւոյն կայ շինեալ :

ԺՈ.

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ։

Ա՝յս եկեղեցի չունի որոշ յիշատակարան թէ յումմէ շինեցաւ, և որպէս տեղւոյն ամենայն յիշատակարանին՝ է այն ալ ի մոռացման մատնեալ։ Բայց ի վերայ առաստաղի սեղանոյն գրեալ կայ ՝՝ Թիւին ՌՃՀԶ (1729) որ է Թուականն Հայոց, որպէս և այլ ձեռագիր հատուկոտոր Թուղթ վկայեն զայնմանէ։

Ի վերայ արմաւ սեղանոյն ասոր խորանի կայ պատկեր աստուածընկալ Հօր և Որդւոյ նորա գրեալ կայ։

՝՝ Ջուր մաքրութիւն մեզաց, արիւն հաղորդութիւն
՝՝ արբոց ՝՝ ։

Ի միւս կողմն որմոյ սեղանոյն՝ կայ պատկեր աւետեաց, և ի ներքոյ նորա գրեալ կայ ՝՝ Յիշատակ Տէր Յարութիւնի, և իւր կողակից Յանուարն 175 ՝՝ (1790) ։

Յոկ և յահեակ կողմն դարձեալ գրեալ էին խաչքարինք ի վերոյ որոյ գրեալ կան ։

Թիւին ՌՃՀԶ Ոկտան 27 ։
՝՝ Աստուածածին և երկրպագելի խաչիդ քո ա-
՝՝ ոաջի անկեալ իմ, ես դաւիթ մեղսամակարդ մեղք

՝՝ վախճանեալ գահանայս՝ և յուսով քո սպասեմ զի
՝՝ ի նորոգութեան աւուրն սուրբ հանդիսեցայց փա-
՝՝ ռաց փեսային ՝՝ ։
՝՝ Տէր իմ Յիսուս ամէնօրհնեալ՝ երբորդութեանդ
՝՝ երկրպագեալ,
՝՝ Տէր Յարութիւն Յակոբեան լեալ՝ որպէս ձնձղուկ
՝՝ միայն հղեալ,
՝՝ յայմ կենդիս հանդիստ չգտեալ՝ ի տապանի աստ
՝՝ ամփոփեալ ։
՝՝ Թիւին ՌՃՂԴ, շաբ 5 ։

Հինեալ է այն կամարակապ, որոյ երկայնութիւնն ի ստորոտէ սեղանոյնէ 57՝ և լայնութիւնն 29 ոտնաչափ ։ Եկեղեցին չունի պատկեր, այլ սպիտակացեալ է բոլով, արտաքին պարիսպ նորա պէտս ունի նորոգութեան ։

Կից եկեղեցւոյն ի հարաւային կողմն ունի մատուռն կիս եկեղեցի աւանառան, որ շինեալ է ի 1163 (1714) ի Պարոն Թարխանէ ։

Ի վերոյ առաստաղի սեղանոյն գրեալ կայ ։

՝՝ Յիշեցէք ի Քրիստոս զշինող սքի եկեղեցւոյս զՊա-
՝՝ րոն Թարխանն, և եղբայրն իւր Աւետիքն և Յար-
՝՝ հաւն, և ծնողն Խոջայ Քանանն և Սամբարն, և քեռն
՝՝ իւր Ւէկուսին՝ Մատլենայ՝ և Մուրասէ՝ և դստերացն
՝՝ Մարիամ. . . . յիշեցէք և Աստուած ողորմի,
՝՝ Թիւին ՌՃՂԴ ։

ԺԱ.

ՍԱՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ։

Ի սա ամին ՚ի մեծաշէն և ՚ի բարձրակառոյց եկեղեցեաց Ջուղայու ։ Յիշատակարան գրչեայ ձաշոցի մի եղելոյ ՚ի նմին եկեղեցւոջ տայ մեզ յետագայ տեղեկութիւնն ։

՚՚ Ի՛ւ արդ ես ամենայնի տրուպ և նուաստ ծառայս Աս-
՚՚ տուծոյ խօջայ Մարգարէս գրել տուի զԱստուածաշունչ
՚՚ գիրքս և ետու ընծայ և նուէր ՚ի դուռն սրբոյն Ստեփան-
՚՚ նոսի նախավկայի ,, ։ . . . Գրեցաւ սուրբ տառս ՚ի ժա-
՚՚ կիրն պարսից ՚ի մայրաքաղաքն Շօշ ՚ի մէջ Նորաշէն Ջու-
՚՚ ղայու ՚ի Թուականութես հայոց ՌԿԴ ամի, ( ) . . . . ՚ի ծննդեն
՚՚ դենէն Քրիստոսի մինչև Յարութիւնն Պարոն Մարգարի սա-
՚՚ նահակի մէջն եմ գրեր , և յարութիւնէն Քրիստոսի մինչև
՚՚ աւարտն ՚ի սուրբ Ստեփաննոսի դուռն եմ գրեր , վասն զի
՚՚ շինեաց մծտ առ եկեղեցին խուց և գրատուն վասն պատ-
՚՚ ճառի գրոցս և անդ նստեալ կատարեցի . . . . աւարտե-
՚՚ ցաւ ձեռամբ նուաստ անուն Սարգիս Դպրի Մարզուանցւոյ ։
՚՚ ի հայրապետութեան Տէր Մելքիսեթ կաթուղիկոսին և
՚՚ յառաջնորդութեան Ջուղայու Տէր Մեսրոպ արք եպիսկո-
՚՚ պոսի ,, ։

Ի՛նտ վերոյգրեալ յիշատակարանին յայտնի լինի թէ յիշեալ եկեղեցին սուրբ Ստեփաննոսի շինեցաւ ՚ի ՌԿԴ Թուականի , վասն զի ասելով թէ ՚՚ ՚ի ծննդենէն Քրիստոսի մինչև ՚՚ Յարութիւնն Պարոն Մարգարի սենեակի մէջն եմ գրեր ,, յայտնի առնէ թէ տակաւին չէ էր աւարտեալ շինութիւնն եկեղեցւոյ , իսկ յաւելն թէ և ՚՚ յարութենէն Քրիստոսի

՚՚ մինչև աւարտն ՚ի սուրբ Ստեփաննոսի դուռն եմ գրեր ,,
՚՚ վասն զի շինեաց մծտ առ եկեղեցին խուց և գրատուն ,,
յայտնի առնէ թէ յետ շինութեան եկեղեցւոյն՝ շինեցաւ և
ևս այլ խուց և գրատուն ։

Ի՛կեղեցին ունի միայն յիշատակ ՚ի վերայ վիմագրին , այլ ըստ որում զետեղեալ է այն ՚ի տեղւոջ իւրում , երևի միայն Թուականն որ է ՌՀՃ ։

Ի վերայ փոխոսկէ եղելոյ աւազանի վիմագրեալ տեղւոյն նոյ ֆերուէրեան չեշտակարան այս ,

՚՚ Ի՛կեղեցի կանգնեալ խորան՝ ՚ի սմա կայացեալ է
՚՚ սուրբ սեղան ,
՚՚ յօրինուածով յոյժ զանազան . ձեռամբ մեղապարտ
՚՚ հիւսն անպիտան ։
՚՚ Աբրահամ ապիկար և սուտ անուժն ։ Յոյժ մատ-
՚՚ չիք ՚ի սուրբ զենման ,
՚՚ անդ յիշեցէք զիս անարժան՝ Թուին ՌՀՃ և մեռայ ։
՚՚ Ի՛սա Տէր Սարգիս աւագերէցն յիշեցէք ՚ի քրիս-
՚՚ տոս , Տէր Արիստակէս եղբայրական ։

Կարծել թէ ժամանակ շինութեանն սոյն եկեղեցւոյ է թուականն 1111, կամ 1115, ինձ ոչ լինի հաւանական , քանզի յիշատակ ձաշոցին պարզապէս յայտնի առնէ զժամանակն , և գրեալն ՚ի նմին թէ ՚՚ շինեաց մծտ առ եկեղեցին խուց և գրատուն ,, պարզ ապացոյց է հաստատութեան բանի նորա , քանզի եկեղեցւոյն կայ խուցն՝ յորում արդէն իսկ կայ նիստն Ամենափրկչեան Գպրոցի ։

Ի՛թէ շինութիւնն նոյն եկեղեցւոյ՝ որպէս կարծեք են ոմանց , տուեալ լիցի խօջայ Յակոբջանին՝ որ Թաղեալ կայ ՚ի հարաւային դասու մատրանն նոյն եկեղեցւոյ , հակառակ ենք նմին կարծեաց Թուականն վախճանի նորա , որ է 1186, զի եթէ շինուածն եկեղեցւոյն իսկ 1063 Թուականն՝ 123 ամօք զկնի այնր է վախճանն խօջայ Յակոբջանի . եթէ կալցի շինու-

Թիւն եկեղեցւոյն ՚ի 1115 Թուականին, 71 ամաք զկնի լինի վախճանն նորա. որովք լինի հետևեցուցանել Թէ Խօջայ Յակոբջանն ոչ է շինօղ նոյն եկեղեցւոյ: Իսկ յաղագս լինելոյ նորա աւազամեծար իշխան՝ ընկալաւ զդերեզմանն իւր ՚ի դասու ուստրանն՝ որպէս անդ կան այլ և այս դերեզմանք ննջեցելոց: Երկրորդ ապացոյց, զի ՚ի տապանաքարի նորին անալի կրկնաբանութեամբ երկարութիւն է բանին ( ) վասն լցուցանելոյ զերես տապանաքարին, յորմէ լինի հետևեցուցանել զի եթէ իցէր նա շինօղ եկեղեցւոյ, անշուշտ յիշատակեալ լինէր այն բարեգործութիւնն նորա ՚ի շարս գովեստից նորին: Թուի ինձ Թէ շինեցաւ այս եկեղեցի ծախիւք հասարակութեան ժողովրդոցն նորին, և յայն սակս չեղև յիշատակութիւն անուան շինողի այնր:

Ի հարաւային պրոն ճակատու նորին կայ պատկեր մեծութեան, և ՚ի ներքոյ նորա գրեալ:

„ Յիսուս խոնարհեալ առ ծառայն եկեալ, Թիվն ՌՃՀԱ: Եկեղեցին ունի վերնայարկ՝ վերնակ կոչեցեալ հասարակօրէն, որոյ ՚ի ճակատուն գրեալ կայ „ Յիշատակ է Յակոբջանին կողակից Նաշխուշին, և որդի Սահրադին, Թիվն ՌՃԿԲ, „ ամայ 8 „:

Կառուցեալ է այն ՚ի վերայ չորից սեանց, որոյ երկայնութիւնն ՚ի ստորոտէ սեղանոյն է 81, և լայնութիւնն 58 ոտնաչափ: Եկեղեցին սպիտակացեալ է բոլով: Ի սեղանն ՚ի դասն և ՚ի ժողովրդատեղին կան միայն չորեքտասան պատկերք, յորոց ոմանց ՚ինքերքոյ կան յիշատակարանք նկարողացն: Կան և պատկերատունք՝ յորս ոչ են նկարեալ տակաւին պատկերք: Ի սեղանն ՚ի դասն և ՚ի սիւնս ժողովրդատեղւոյ երեք կանգնաչափ կան յախճապակիք: Երեք դուռն են նորա, արևելեան՝ հիւսիսային և հարաւային:

Վանէր եկեղեցին զխախտուածս յառաստաղն և յորմունս, որ նորոգեցաւ ՚ի 1848 ամի վերակացութեամբ Տէր Յովսէփ քարեշնորհ քահանայի Տէր Գրիգորեան, հանդանակու-

Թեամբ բարեպաշտ մերազնէից Հնդկաստանի:

Վանի մատուռն ՚ի հարաւային կողմն յանուն սուրբ Աստուածածնի շինեալ, որ չունի յիշատակ ժամանակի շինուածոյ Թեանն իւրոյ:

Ի վերայ վէմ խորհրդանոյ նորին գրեալ կայ անուն շինողին:

„ Շ[illegible]նեցաւ սուրբ եկեղեցիս ՚ի սէրն սուրբ Աստուա-
„ ծածնի ընչիւք և արդեամբք Միրզաբէկին, Տէր
„ Յհաննէս յիշեա ՚ի քումմ արքայութեան բարեխո-
„ սութիւնդ առ Քրիստոս զՄիրզաբէկն և պապքն Տէր
„ Սարգիսն՝ և Մկրտիչն՝ և սոցին կողակիցքն Նուրմ-
„ հլը և Գուլնաբաթն, և զծնօղսն իւր Մկրտումն և
„ Թագուհի:

Ի յիշատակարանի վերոյգրեալ Հաշոցին գրէ զանուանս քահանայիցն նոյն եկեղեցւոյ եղելոյ ՚ինմին ժամանակի, որք են „ Տէր Պետրոս ալէօք ծերացեալ՝ և խմաստութեամբ՝ բա-
„ րի գործովք՝ և առաքինութեամբ զարդարեալ՝ դասավար
„ և աւագէրէց, Տէր Զաքարեայ՝ Տէր Մարտիրոս՝ Տէր Ա-
„ ղէքսանոս՝ Տէր Սահակ՝ Տէր Միքայէլ՝ Տէր Աբէտիս՝ Տէր
„ Խաչատուր՝ Տէր Մատթէոս՝ Տէր Հայրապետ՝ և Տէր Մա-
„ նուէլ”:

ԺՎ.

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԵՐՏՈՒՂ։

Ընդ այս եկեղեցի յիշատակ շինուԹեանն իւրոյ գրեալ ՚ի վերայ ԹղԹոյ, որ Հպացեալ և պատառեալ կայ, յորում յիշատակի ԹԷ կառուցաւ այն յանուն սուրբ Աստուածածնի։

Ա.ՅՐ ՚ի պատճառս աջոյն սրբոյն Յովհաննու որ նուիրեցաւ ՚ի խօջայ եղիազարէ, փոխանակ սուրբ Աստուածածնի՝ կոչեցաւ յանուն սուրբ Յովհաննու Մկրտչի։

« Ի ԹագաւորուԹեան պարսից Շահաբասին, ՚ի հայրապետուԹեան Հայոց Տէառն Մովսէս կաԹուղիկոսի, և առաջնորդուԹեան նորս Ջուղայու գեօղաքաղաքին Տէառն խաչատրոս Եպատրեա, ՚ի ԹվականուԹեանս Հայոց Հազար (1621) հիմնարկեցաք զՏաճար Տէրունեան ամէնօրհնեալ Տիրամայր սուրբ Աստուածածին, և զարդարեցաք Շահիւք և լապտերօք, և արարաք տեղի պատարագի և փառաբանուԹեան երկնաւոր Թագաւորին, զոր և բազկատարած մաղԹանօք Հայցեմք առ միածին որդին ՚ի Հաստատուն և անշարժ պահեսցէ Հաշտարար պատարագօք մինչ ՚ի կատարած, ՚ի վայելումն քահանայից և սարկաւագաց, Հալածումն դիւաց, Հերքումն Թշնամեաց, փարատումն ցաւոց, քաԺՀուԹիւն Հիւանդաց՝ առողջուԹիւն կենդանոց՝ ՚ի քաւուԹիւն մեղաց՝ յերգս օրՀնուԹեան երդմնակաց՝ և քաղցրաձայն նուագարանաց և պաշտօնէից, նուէրքս պատարագաց ՚ի Տոտ անոյշ խնկոց ՚ի պայծառուԹիւն կանԹեղաց և ջահից, զոր և Տէր Յիսուս իւր ամենագօր խնամօք տայ վայելել տրօք և յիշատակօք։ Եւս Աստուածամարգեցաք եղնազարնի Հոգին լուսաւորի, որ եւս մին

« սուրբ աջ որ է սուրբ Յովհաննէսի, որ լինի օրհնական ա-
« ՚ենային աշխարհի, ամէն։

« Եւ արդ ով ընԹերցող յիշեցէք զառիԹ նորոգման սո-
« րին, որ եմ տրուպ և նուաստ անուն անարժան Մինաս ժա-
« մարար . . . որ եմ որդի Տէր Յովհաննիսին, որ նորոգե-
« ցի ՚ի Թվին Հայոց ՌՃՂԶ, ՚ի փոքր Թուին ՈՒԻ Հարիւր ե-
« րեսուն երկու, ՚ի շամս ամսուն Ճ և Ը ուրն։ Ով Հարք և
« եղբարք գրուս եւԹ պակասն ներումն ընդՀեցէք և ան-
« մեղադիր ՚ի երուք ,, ։

Խաչքար յատակ պատու ունի յիշատակ այս ։

« Սուրբ Խաչս յիշատակ է Տէր Արիստակիսին և Ծո-
« նողացն Գրիգորին՝ ՄարուՀէ և քրիստ եղաբերին
« և. կողակցին Նանաջանին ԹուինՈՒԼԳ (1684) ամին։

Ի Ճակատու խաչքարին գրեալ կայ ։

« Յաւիտենական յիշատակն արդարոց օրՀնուԹեամբ
« եղիցի, ԹուինՈՒՀԹ (1740) ։

Եան քանի խաչքարինք որք ունին գԹուական 1076, 1083։
(1627) (1634) ։

Ի Ճակատու վերնատան կամ վերնակին կոնակոյն գրեալ կայ ։

« Մահդեսի վանքանի որդի Խաղուբն ՚ի Թվիվ 1142 ։

Ի Ճակատու արեւելեան պրան գրեալ կայ ։

« ՄաղԹանօք սրբոյն Յովհաննու Տէր Յիսուս քրիս-
« պահապան Պարոն Յովհաննէս գեաղանԹարին և
« կենակցին Մարիամին, և որդւոյն Զաքարին, եղև
« ԹուինՈՒՃ (1731) գամայ 29 ։

Ի վերոյ ոտն ըղն գրեալ կայ :

« Այս է գուռն կենաց և շանապարհ յուսոյ փրկու-
« թեան : Զոռն քո արարին և ստեղծին զիս ի հողոյ,
« դարձեալ ձեռամբդ քո կեցոյ ի կոլատեանս ժամոյ,
« թիվն փոքր 114, (1729) :

Վերոյգրեալ յիշատակարանք (որպէս յայտ է ի բուն յիշատակարանէ շինուլթեան եկեղեցւոյն) չին յիշատակ ժամանակի շինուլթե այնր, այլ միոյն է յիշատակ խաչկալին, միւսն յիշատակ վերնակին, և գրեալն ի ձակատու դրանն է յիշատակ կրկին շինելոյ սեմոյն և դրան : Զառուցեալ է այն ի վերայ քառեակ սեանց, երկայնուլթիւնն ի ստորոտէ սեղանոյն է 53՝ և լայնուլթիւնն 56 ոտնաչափ : Զունի զպատկերսնկատրեալ յորմունս, այլ սպիտակացեալ է բոլ :

Այս եկեղեցի պէտս ունի նորոգուլթեան, զի առաստաղն ի տեղիս տեղիս ի ժամանակս անձրևոց կաթեցուցանէ զջուր, և եկեղեցին կորուսեալ է զսպիտակուլթիւնն իւր, և ի տեղիս տեղիս սևացեալ է և մրոտեալ, յաղագս որոյ եղեն երիցս խնդրարկուլթիւն առ ժողովրդականն նոյն եկեղեցւոյ՝ որք ի Հնդկաստան, մանաւանդ ի Ջաւայ, ընդհիւն Աստուծոյ առաջադէմ վաճառականք են (և եթէ կամիցին՝ կարօղ են պայծառացուցանել զայն վերստին նորոգուլթեամբ). այլ չեղև ուժգնք մտադրուլթիւն սակս այնր խնդրոյ, թերևս ըստ չարախօսուլթեան ոմանց անհաւաստի կարծելով զհարկաւորուլթիւնն նորոգուլթեան եկեղեցւոյն, կամ թէ համարելով զի փոխանակ եկեղեցւոյ նորոգուլթեանն՝ նորոգեսցին քսակք նոցա՝ առ որս առաքեալ լինի դրամն օգնականուլթեան : Այս ես խոնարհ պաշտօնեայս սոյն եկեղեցւոյ կրկին անգամ հրապարակաւ մատուցանեմ զինդիր իմ առ գերապատիւ Համազգիան մեր՝ առ ժողովրդականն սոյն եկեղեցւոյ որք են ի Ջաւայ, զի բարեպաշտաբար արասցեն զմտադրուլթիւն յաղագս այնր խնդրոյ, սիրելով զպայծառուլթիւն Տանն Աստուծոյ կրնան ճնան ինքեանք հոգևորապէս, զի պայծառուլթիւն

այնր պատիւ է ինքեանց, իսկ եթէ խորշիցին ի վերոյգրեալ երկուց պատճառաց, վասն առաջնոյն հաւաստի առնեմ զի հարկաւոր է նորոգուլթիւն այնր, և յաղագս երկրորդին ասեմ թէ կարօղ են գտանել զհաւատարիմ ոք՝ եթէ կամիցին զի նորոգեսցի եկեղեցին հայրենեաց իւրեանց :

Ընդ նա ի հարաւային կողմն զեկեղեցի ամառան շինեալ յամի 1774 : Ի ձակատու նորա կայր յիշատակարան եկեղեցի շինողին, այլ ի 1847 ամի եղև մանաւանդ նորոգուլթիւն այսմիկ մատրան, վասն որոյ այն յիշատակագիր քակեալ անհետացաւ :

Յաղագս ուխտաւորք լինին սոյն եկեղեցւոյ, և հիւանդք ոմանք եկեալ բնակին ի խուցս նորա, յորոց ոմանք ըստ իւրեանց հաւատոյ ստանան զառողջուլթիւն : Ցամի 1841 կառուցաւ զանդակատուն ճախիւք և տրդեամբ Պարոն Պօղոսի Անդրէասեան որ է ի ժողովրդոց նոյն եկեղեցւոյ և վաճառականուլթեամբ հաստատեալ ի Ջաւայ, և ի ժամանակէ անտի փոխանակ կոչնակի զանգն հղև հրաւիրօղ ժողովրդեանն : Յիշատակարան նորա յամի 1857 ոսկեգիր քանդակեալ զետեղեցաւ յորմին նոյն զանգակատան ի յիշատակ բարեգործուլթեան շինողի նորին :

Ժ. Գ.

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ :

Զունի յիշատակագիր թէ երբ կամ յումմէ շինեցաւ, այլ անուն նորա յիշատակի ի շարս եկեղեցւոց ի հատուկոտոր թուղթս որք ունին զթուական 1670, որով յայտէ թէ շի-

Նուքիւն նորա է նախ քան զամն 1670։ Կան ՚ի նմա քանի խաչքարինք յորս կան Թուական ՌՂԹ (1630), որով մարթ է կարծել թէ շինեցաւ եկեղեցին այն կամ ՚ինչմին 1630 ամի, կամ քանի ամօք նախ քան զայն։ Իսկ թէ յումմէ կառուցաւ չիք տեղեկութիւն ինչ։ Անուն նորա կոչի ՚ի հին ձեռագիրս սուրբ Աստուածածին, իսկ այժմ կոչի սուրբ Նիկողայոս։

Ի յիշատակարանէ մաշտոցի գրեալ ՚ի Տէր Պետրոս քահանայէ նոյն եկեղեցւոյ յամի 1228 (——) յայտնի լինի թէ շինեցաւ ՚ինչմին ամի ԱՀ յորում հզեալ եղև մանն սրբոյն Նիկողայոսի, վասն որոյ ՚ի ժամանակէ անտի եկեղեցին կոչեցաւ յանուն սրբոյն Նիկողայոսի։

Ա յո է յիշատակարանն այն։

> ‘‘ Ի և անթերի ճախիւք սրբոյ Նիկողայոսի մատն և
> ‘‘ Աջն շինել տուի հանդերձ մկ պատիկ աւետարա-
> ‘‘ նաւ և երեք ձեռք զգեստուք ինն հատ ոսկիջրած ակինով և
> ‘‘ շապկով՝ մկ մեծ արծաթ, ոսկեջրած ակինով և
> ‘‘ երեք սկնի աղլուխով յօժար կամօք ետու յիշա-
> ‘‘ տակի ՚ի դուռն սրբոյ Աստուածածնի և սրբոյ Ստե-
> ‘‘ փաննոսի (է այն մատուռն կամ եկեղեցի ամառան)
> ‘‘ անուամբ շինեալ հռչակապատում եկեղեցւոյ, որ
> ‘‘ է ղարագեղի ’’։

Շինեալ է այն կամարակապ փոքր քան զամենայն եկեղեցիս ջուղայու 39 ոտնաչափ երկայնութիւն ՚ի ստորոտէ սեղանոյն, և 22 լայնութիւն է նորա. սեղանն և առաջին դասն է առանց պատկերաց. իսկ ժողովրդատեղին և կանանոցն ունի պատկերս անհմուտ նկարչի ըստ պատկերացն որք երևին ՚ի հին եկեղեցիս։

Ընդի մատուռն կամ եկեղեցի ամառան շինեալ յամի 1774 յանուն սրբոյն Ստեփաննոսի որ համեմատութեամբ եկեղեցւոյն՝ առաւել վայելչաշէն է։ Նորոգեցաւ այն մանաւանդ ՌՁԲ յամի (—) քարեպաշտ տրօք քերցն երկուց որք են ՚ի բնա-

վայ, Տիկին Մարիամու Յակոբ Յարութիւնեան, և օրիորդ Թագուհւոյ Մանուկեան, վերատեսչութեամբ նոյն եկեղեցւոյ քահանայ Տէր Կարապետի Տէր Աւետեան։

Այս եկեղեցի գտանի յաղքատ գրութեան ՚ի պատճառս սակաւութեան և աղքատութեան ժողովրդոց նոյն թաղի, և է առանց եկեղեցական պաշտօնէից, ուստի սակս միայնութեանն դժուարութիւն է քահանային նորա։ Կառուցեալ կայ այն ՚ի թաղն Ղարագէլ։

ԺԴ.

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՑ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ

Այն եկեղեցի որ կառուցեալ է ՚ի թաղն Քօչերայ չունի յինքեան որոշ յիշատակագիր թէ երբ կամ յումմէ կառուցաւ։ Այլ ՚ի կոնդակէ Աղէքսանդր կաթուղիկոսի, ՚ի Թուականի Հայոց ՌՃԿԲ (1712) ՚ի 4 մարտի գրեալ առ Ջուղայեցիս ՚ի պատճառս չհաս ամուսնութեանց, քաղի յետագայ ծանօթութիւնն։

‘‘ Ի ժամանակս մեր քառասունն և վեց ամ է, լանկ Մխա-
‘‘ սարն իւր որդի Ստեփանին կինն մեռաւ, այն ժամանակն
‘‘ Ստեփանն աչ ձախ չէր ճանաչէր, հայրն աղաչ (կոյս)
‘‘ աղջիկ տարաւ տղային, լուսաւոր հօգի վարդապետքն քա-
‘‘ նիւ արարին, յետ զղջման և դառնալոյն բազում միջնորդս
‘‘ ձգեաց, և յանձն էառ շինել զԳազգեցոց եկեղեցին, զոր
‘‘ և շինեաց իսկ, ապա սրձակեցին։ Նա և Գիլանէնց Ա-
‘‘ տիքն Արբաբէնց Աբելջանն տարաւ, մէկ հարցուցէք թէ

,, որչափ էր նորա չհաւատութիւնն, բանիւ արարչին գաւառա-
,, պատուս եկեղեցին շինեաց, ապա արձակեցաւ ,, :

Գաւառապատուս եկեղեցին է սոյն Աւետաց կամ սուրբ Ներսէս եկեղեցին, զի Թաղն Քօչէր կոչիւր և Գաւառապատ, որպէս ցուցաք յիւրում տեղւոջ : Ուրդ՝ ի բանից ասացի մարթի է ասել թէ եկեղեցին այն շինեցաւ (քառասուն և վեց ամօք նախ քան զԹուականն Հայոց (1162) յամի 1116, (1666)՝ ի Գիլանէնց Աւետքէ, ՝ի քաւել զմեղս չհաս ամուսնութեանն իւրոյ :

Ի հին ձեռագիրս ՝ի բաղում տեղիս կոչի այն եկեղեցի Աւետարանց, առեալ զայն անուն յանուանէ շինողի նորա, զի կայր ՝ի Ջուղայ սովորութիւն այնպիսի, զի ումանք շինողք եկեղեցեաց յիւրեանց անուն կոչէին զայն : Իսկ յետ տանելոյ յայն եկեղեցի զԱՀն մնասանց սրբոյն Ներսիսի մեծի, կոչեցաւ յանուն սրբոյն Ներսիսի :

Ի ձախոյս հարցասիրին պրան գրել հայ յետգայ յիշատակարանն :

,, Յիշեցէք ՝ի քրիստոս Ուստայ Շուքուրն և իւր
,, կողակից Մարգարիտն, որդիքն Միրզախանն, Սա-
,, րուխանն՝ Ալանն՝ Դաստրքն Ոսկին, Նուրիխանն :
,, Դարձեալ յիշեցէք ՝ի քրիստոս Ուստայ Ալանն,
,, կողակիցն Վարթխաթունն, որդիքն Հէրապետն՝
,, Կարապետն՝ Յակոբն՝ Ովհիէնն՝ Հարսներին : Թիւն
,, ՌՃԻ (1670) :

Ըստ խնդ դիտողութեան այդ յիշատակարան է շինողացն քարեայ սեռոց և վերնախարսխի նոյն գրան, զի ըստ որում քննակիչք նոյն Թաղն էին քարտաշք, վասն որոյ ուստայ Շուքուրն և ուստայ Ալանն շինելով ՝ի քարէ զսեռսն և զվերնախարիսխն այնր գրան և Ծաղկանց քանդակօք գեղեցկացուցանելով զայն, գրեցին զյիշատակ խնդրանց :

Ի յիշատակարանէ աստի հաստատի եզեալն մեր Թէ շինեցաւ եկեղեցին այն յամի 1116, զի մինչև լսացաւ շինութիւն

եկեղեցւոյն յընթացս չորից ամաց, ձգեցան վերնախարիսխն քարեայ և սեռազն յամի 1120 :

Երկայնութիւն նորա է 62, և լայնութիւնն 35 ոտնաչափ: Երկայնութիւնն չափի ՝ի ստորոտոյ սեղանոյն : Զոնի զնկարս պատկերաց կամ Ծաղկանց, այլ միայն սեղանն ունի զքանի խաչարհեստ պատկերս : Նորոգեցաւ այն և ՝ի հարաւային կողմն ձգեալ սենեակ և խուց յամի(—): Կան ՝ի պարապի այնր գերեզմանք վրացւոց, որք Թաղեցան անդր ՝ի ժամանակս քաղաքին Պարսից՝ որոյ Թերևս լեալ են Ծառայք :

Ի Ա.

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՒՉ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ :

Ի ներքնակամար գմբեթին շուրջանակի կայ գրեալ յիշատակարան շինութեանն նորա՝ ըստ այսմ օրինակի,

,, Արդ հղև սկիզբն շինութեան և հիմնարկութեան
,, սուրբ եկեղեցւոյս (որ ըստ) անուն սրբոյն Գրի-
,, գորի Լուսաւորչին ՝ի Թուականութեան Հայոց ե-
,, ռից 1108 ( ) ամի ՝ի Թագաւորութեան Շահ-
,, աբաս սանի (երկրորդի) և ՝ի Հայրապետութեան
,, Տէառն Յակոբոյ սուրբ Աթոռոյն Էջմիածնի, և
,, յառաջնորդութեան Ջուղայոյ և մերոյ նահանգիս
,, Դաւթի արհի հալիկապոսի, և աջողութեամբն
,, Աստուծոյ և առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն,
,, և միաբանութեամբ սուրբ Դրիգորի եկեղեցւոյ
,, ժողովրդեանս Թալփիղեցւոց և Նախիջևանցւոցն
,, կատարեցաւ շինուած սուրբ եկեղեցւոյս, Թվին

,, 1112 ամէն : Զոր և Տէրն Քրիստոս իւր ամենա-
,, շօր հրամանքն տացէ վայելել մինչ ’ի գալուստն իւր,
,, ամէն : Զոր և բազում ջանիւք և աշխատութեամբ
,, շինեցաք սուրբ զեկեղեցիս ,, :

Ի յիշատակարանէ աստի յայտնի լինի թէ շինեցաւ եկեղեցին այն հանդանակութեամբ ժողովրդեանն նոյն թաղի : Այլ որոց առաւելեալ են տուրք ’ի նպաստ շինութեանն, գրեալ կան յիշատակք նոցա ’ի վէց ուրոյն խորանս, փոքր մի ’ի վերոյ քան զվերոյգրեալ յիշատակարանն :

Խորան առաջին :

,, Յիշեցէք ’ի Քրիստոս զԽօջայ Ահտ և զաւագ եղբ-
,, բայր Դիլանչին և Միքայէլն, և զծնօղս և զորդիսն
,, և զամենայն մերձաւոր աշխատողս ’ի վերայ եկեղե-
,, ցւոյս յիշեցէք առ Աստուած ,, :

Խորան երկրորդ :

,, Յիշեցէք ’ի Քրիստոս զԽօջայ Աղաջարն, և զծնո-
,, նօղսն Մանուկին և զՄարիամն, և հանդուցեալ որ-
,, դին Վալիկէն, և նորաբողբոջ Մանուկն և զկենա-
,, կից բատունն, որ ետուն զսուրբ կաթուղիկէն
,, ճաճկել, յիշեցէք առ Աստուած ,, :

Խորան երրորդ :

,, Յիշեցէք ’ի Քրիստոս զՏէր Սարգիսն՝ զՏէր Յով-
,, ան՝ զՏէր Բարսեղն, և զՏէր Սիրակոսն Սարկա-
,, ւագունսն և զդպիրսն և զմանկունս յիշեցէք առ
,, Աստուած ողորմի ասացէք ,, :

Խորան չորրորդ :

,, Յիշեցէք ’ի Քրիստոս զշինօղք սուրբ եկեղեցւոյս
,, զվարպետ Թորոսն՝ զՄկրտիչն՝ զՍարգիսն՝ և զԴա-
,, վիթն՝ և զաշակերտունս նոցին և զաշխատաւորսն
,, զհօղիս, յիշեցէք առ Աստուած, ողորմի ասա-
,, ցէք ,, :

Խորան հինգերորդ :

,, Յիշեցէք ’ի Քրիստոս զմանկիկ Ալանն և զծնօղս ըզ-
,, Մարտիրոսն՝ զԽանբէգին՝ և զկենակիցն իւր Հռ-
,, ռոմանէն, որ զՅ խորանն ճաճկեաց, և զՉ դուռ-
,, քանն վախճ ետ սուրբ եկեղեցւոյս, յիշեցէք առ
,, Աստուած ողորմի ,, :

Խորան վեցերորդ :

,, Յիշեցէք ’ի Քրիստոս զՊարոն Զէյնին և զծնօղս
,, Շամինայ և Վալին և զեղբարքն Ապլաթն զԴաւիթ
,, և կենակից Մարիամն և զորդին Իսախանն, Զիպի-
,, տէն որ ետուն զսուրբ կաթուղիկէն գաւիթ և
,, ճաղկել յիշատակ հանդուցելոցն, յիշեցէք առ
,, Աստուած ողորմեա ,, :

Ի վերոյ ասացեալ օրէնս սեղանոյն գրեալ ևս :

,, Յիշեցէք ’ի Քրիստոս զՊարոն Զէյնին, և զծնողսն
,, զՇամանն և Վալին, և զհանդուցեալ եղբարսն Հրմէն՝
,, և Մրբչխէն և միւս եղբարսն (որ կենդանի եղեալ-
,, սըն) Աբլահաթն, և զԴաւուտն, և որդիքն Ի-
,, սախանն և դուստրսն Զիբլիէն, և կենակիցն Մա-
,, րիամն, Թիւն 1115 ( ) ,, :

Յողովուրդք սոյն եկեղեցւոյ կամ որ նոյն է բնակիչք Թաղին Դաւրիժոյ էին նոյն ժողովուրդք զորս առաջին Շահաբաս արքայ բնակեցոյց ՚ի Շամախի, իսկ յետ տեղափոխութեանն որ եղև հրամանաւ Շահաբասայ երկրորդի յամի հայոց 1105, գաղթեցան նոքա յայն Թաղ, և յամի 1108 հիմնարկեցին զայն եկեղեցի։

Ի սոյն եկեղեցւոջ կայ յիշատակարիր շինութեանն եկեղեցւոյն ՚ի Շամախի Թաղի, (որոյ անունն լեալ է սուրբ Աստուածածին) գրեալ ՚ի վերայ Թղթոյ գալարածոյ (որ կպրիանոս կոչի) յորում կան անուանք յիշատակատուաց եկեղեցւոյն կառուցիչ ՚ի Շամախի։ Զոնի Թուական։ Իսկ մինչ գաղթեցան յայն Թաղ, և կառուցին զնոր եկեղեցին, գրեցին դարձեալ ՚ի մէջս կողմն նոյն Թղթոյ զանուանս յիշատակատուաց նմին եկեղեցւոյ։

Յորկարաբանութիւն ոչ համարիմ ՚ի յիշատակագրոյ անտի յառաջ բերել զհարկաւոր ծանօթութիւնս, որով առաւել պարզութիւն ստանայ պատմութեանն շարունակութիւն։

Մեծ յիշատակատուք նմին եկեղեցւոյ լուսաւորչի՝ են առհմն Աղաջարեանց և Շմաւեանց։

Կրի ՚ի յիշատակագրին այնմիկ «Աստուած օրհնէ Շմաւոն
« որդիքն, զՊարոն Զէյնին, Աբլահաթն, Դաւուտն և զորդին Իսահանն, որ հատուն է. շուրջառ, է. ուրար, է. բաղպան, է. չապիկ, է. սաղաւարտ իւր խաչօք, ամ. զունար, ը. քօղէյ, ամ. մեծ վարագոյր, ամ. խաչկալ, ամ. ճաշուգիրք, ամ. ոսկի սուրբ նշան, ամ. Յահ, իվ. մոմդան ապատ, է. մեծ սուրբհի շամպան, ամ. պղնձէ պատկեր, ամ. մեծ խաչ, ամ. Թաւլպան փանջարայ, ժե. Թուման եւ եկեղեցւոյ շինելոյ նաղդ փող, ամ. աղլա խ, սուրբ խորանիկ ծաղկեալ եկեղեցին քովանդակ ծաղկեալ ի՛ Թուման, ամ. խալիչայ։ Երկու կարմանջ կապոց Սարֆրազի բազարդաւ հունմն, ամ. կարմանջ, Աւետեցոց բազարգահունմն»։ Աստուած ողորմի խոջայ Մանուկին՝ Աստուած օրհնէ իւր որդի Աղաջարն որ հատ է. Թուման կաթուղիկին ծաղկեալ»։ Դարձեալ, «Աստուած օրհնէ Պարոն Աղաջարն և իւր կողակից Բաւրին, և որդիքն Աղայ Մանուկն Աղայ Սաֆարն, որ հատուն յիշատակի սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյն, ամ զառ Թիրվանդայ շուրջառ, ամ. զառ սաղաւարտ իւր խաչովն, ամ. քաշած զառ ուրար, ամ. Ջուխտ զառ բաղպանդ, ամ. շապիկ, ամ. զառ աղլուխ, սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ մուհաջարն քաշէց, վերնատունն շինէց . . . Աստուած օրհնի Պարոն Աղաջարն, կողակիցն Բաւրին և զորդիքն, և զորդիքն Մանուկ և զՍաֆարն, որ հատ եկեղեցւոյն ամ. մեծ դիվանի խալի, ամ. բանաքիշ ատլաս նաշի ծածկոց. է. պղնձէ պատկեր, ամ. չիթ սուզանի . . . : Մի թեմի ծածկոց, մի արծաթէ բխաւրման . . . մի խաչի խալիչայ զառ շուրջառ, մի չինիմաչինի զառ ուրար ամ. Ջուխտ բաղպանդ, ամ. զունար, ամ. Ճերմակ զառ վակաս, ամ. շապիկ և սարկաւագի քաշած կարմիր զառ ուրար, ամ. բանմայ Աւետարան երկու երեսն արծաթէ կոստղած, է. քանի աղլուխ»։

Եկեղեցին է կառուցեալ ՚ի վերայ չորից սեանց, երկայնութիւնն ՚ի ստորոտոյ սեղանոյն է 65 և լայնութիւնն 52 ոտնաչափ։ Սեղանն՝ դասն՝ ժողովրդատեղին և առաստաղքն նոցա են պատկերազարդ և ծաղկազարդ։

Ինչ փոքրիկ զանգատուն կառուցեալ ՚ի վերայ առաստաղի եկեղեցւոյն, և ունի զմի զոյգ քաղցրահնչիւն զանգ, որ ըստ աւանդութեան ծերոց առեալ է ՚ի տունմանէ Խոջայ Աղաջարի։

Յորմ. երեսուն ամաք նախ քան զթուականն 1857, եղև նորոգութիւն նոյն եկեղեցւոյ արդեամբ Աղայ Յովսէփայ Ամիրեան որ ՚ի Սմարանգ էր երևելի մեծատուն։ Իսկ ՚ի 1853 ամի և ս եղև կրկին վերանորոգութիւն, արդեամբ Պարոն Մարգարայ Սուքիասեան և Պարոն Եղիազարու Գ. Գասպարեան, որք են ՚ի ժողովրդոց նոյն եկեղեցւոյ՝ այժմ ՚ի Ջուլա ՚ի Տէրութեան Հոլանդացւոյ։

Ըստ եկեղեցի նախ քան զամն 1850 չէր անջուկ համբաւաւոր ըստ եկեղեցական զարդուց կամ բարեկարգութեան։ Իսկ ՚ի յառաջագրեալն նկրտիլ Տէր Մարտիրոս Տէր Յովակիմեան

փահանայի նոյն եկեղեցւոյ, ըստ վայելչութեան մասին առաջնորդիմութիւն ստացաւ և սոյն եկեղեցի:

Այն այս Տէր Մարտիրոս փահանայ (որ ընկալաւ զաստիճան քահանայութեան 'ի 1843 ամի) վիճակաւորեալ յամի 1845 եալ կաթոլիկոս քաղաքին Հնդկաստանի, բարեջան յորդորանօք իւրով ընկալաւ 'ի ժողովրդոց նոյն եկեղեցւոյ եղելոց 'ի Հնդկաստան և 'ի Ջաւայ գբաղում յիշատակիս որք էին արծաթի սպասք և Թանկագին կերպասեայ զգեստք, և նոքօք 'ի 1850 ամի 'ի վերադառնալն իւր 'ի Ջուղայ Հոխացոյց զեկեղեցին: Արժանի յիշատակաց անուանք յիշատակի տուողացն են այսոքիկ, Պարոնայք Մարգար, Դաւիթ և Բեթղահէմ եղբարք Սուքիասեան, եղիազար Գ. Գասպարեան, Մանուկ Զօրաբեան, և այլք ոմանք: Յամի 1852, գարձեալ ըստ խնդրոյ նոյն բարեմիտ Տէր Մարտիրոս փահանայի, և արդեամբ քերցն բարեպաշտից եղելոց 'ի Բեթաւիայ Տիկին Մարիամու Յակոբ Յարութիւնեան, և օրիորդ Թագուհոյ Մանուկեան տարածեցան նոր սփռոցք 'ի մէջ եկեղեցւոյն:

Ասորոգութիւնն որ եղև յամի 1853, եղև նոյնպէս ըստ յորդորանաց նոյն փահանայի:

Ակսեալ 'ի 1851 տարւոյ յետ կարգ և կանոն հաստատելոյ Սրբազան Թադէոս արք եպիսկոպոս ներկայ Առաջնորդի, և կարգելոյ զերիցփոխանս վասն իւրաքանչիւր եկեղեցեաց, այս եկեղեցի ընտրեցաւ Աստուածոյ օր ըստ օրէ ստացաւ առաջադիմութիւն ըստ արդեանց մասին, և յընթացս վեցամեայ ժամանակի, ազատ յամենայն մեծամեծ ծախսարարութեանց, հասչեւ եկեղեցւոյն ունի արդ դդրամագլուխ ինչ, ոչ շատ չոխ և ոչ շատ մանաւանդ, և սա է այժմ չոխն 'ի մէջ եկեղեցեաց Ջուղայու:

Ինչ չնախանձելոյն ըստ գոյից, վայելչացաւ և ըստ հոգևորս բարեկարգութեանց, սահմանադրեալ կարգօք Սրբազան Թադէոս Արք եպիսկոպոս Առաջնորդի, և բարւոք սպասաւորութեամբ Տէր Մարտիրոս փահանայի:

Ունի եկեղեցի առառան, որում չիք յիշատակագիր ինչ. բաց 'ի խաչվալէն որում այս է յիշատակարան:

« Յիշատակ է Հէրուսի Որդի Պարոն Սարգսին, և
« Կողակցին Գուլաղին, և իւրեանց Ծնողացն, Թէքէ
« ուշկէ շամ ի »:

Ի վերայ պերճեղեան շինուղէ նոյն մատրան կայ 'ի պատուհանին, որոյ այս է պատանագիրը:

« Այս տապանս է առն բարեպաշտի,
Սարգիս անուն վաճառականի,
Որդի գոլով սա Հէրուսի,
տեղեաւն գոլով սա դաշտեցի,
շինող մատրանս և պարսպի,
որք հանդիպիք յայս սուրբ տեղի,
լի բերանով տուք ողորմի,
հանգեաւ սա 'ի Թիֆլիս ուշկէ »:

Ի գաւիթ սորա կայ Դպրոցն անուանեալ սուրբ Մինաս՝ որ ակզբնաւորեցաւ յամի 1853, այլ նախ քան զայն և այս եղեալ է անդ ընդ ժամանակս ժամանակս դպրոց և դասատուութիւն:

Ի սմին եկեղեցւոջ կայ ձեռագիր Աւետարան մի որոյ վերջին Թերթք ցն Աւետարանն որ ըստ Յովհաննու պակասի, ուստի և չունի յիշատակարան կամ գիծուական, այլ ըստ իմոյ դիտաղրաց լինելոց է մի 'ի Ջուղայն ձեռագիր Աւետարանաց:

Ի վերջն Աւետարանին որ ըստ Մարկոսի կայ ասելոյն « զի երկնչէին » որոշ 'ի գլխոյ անտի գրեալ կայ: « Եւ այս ըստ Աղէքսանդրիացւոց օրինակին թերեալ 'ի կայ ասելոյն եթէ երկնչէին »: Ի բանից աստի յայտնի լինի թէ այն վերջին յաւելուած Աւետարանին որ ըստ Մարկոսի, զոր ոմանք 'ի հին ձեռագիր Աւետարանաց ունին, առեալ են յօրինակէ Աղէքսանդրացւոց, իսկ ոմանք չունին զայն յաւելուած վասն Թերևս ըստ այլ օրինակաց գաղափարելոյ:

Ի նոյն յաւելուածս որ գտանի 'ի նմին Աւետարանի՝ ընդ տպագրոյն որ 'ի Վենետիկ՝ կայ տարբերութիւն քառից, այլ ըստ գլխաւոր նիւթոցն նոյն է իմաստն:

ԺԴ.

ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ

Շինեցաւ այս եկեղեցի ի ժողովրդենէ որք երևանցիք կոչէին, և էին դաղթականք քաղաքին Երևանայ: Ընդ այս եկեղեցի պատմութիւն շինուածոյն իւրոյ, յորում և գրեալ կան անուանք ամենայն յիշատակի տուողաց: Ծաղկաքաղ ընդշանակեմ զհարկաւորսն պատմութեանս կարդի:

« Ոչաւ (Շահաբաս առաջին) զվեզ վշտօք և նեղութեամբ « երթեր ի պանդուխտ և օտար աշխարհս, և էր նոր փոխեալ « Թուականն հայոց և մտեալ ՌՃԺ (1605). յառաջնումն « ամեանն հայոց Նաւասարդի որ քշեցին զերկիրն Աբարա- « դայ և բերեալ Թարուամ խալխալ և Ախար Մուշկի մինչև « սաստիկ ձմեռն էանց, և յետ աւուրց ի գարնան բերեալ « ի քաղաքս որ կոչի Ասպահան . . . . և աստ բնակեցոյց « ի յիզդ Նարընդալային, և շինեցաք խնամօքն Աստուծոյ « տունս և զեկեղեցիս . . . և անուանեցաք զանուն Նորա « Ամենափրկիչ . . . և ընդ հօքն Աստուծոյ վայելեցաք մին- « չև ի ժամանակս յետին Շահաբասին զամս յիսուն և մի, և « յետ այսորիկ գարձեալ գԹացաւ Աստուած ի վերայ աղգիս « հայոց և էարկ ի սիրտս Թագաւորին յետին Շահաբասին, « և հրամանն ետ հանել զաղգս հայոց ի քաղաքէն և որո- « շեաց զվեզ ի միջոյ պարսից, և ետ մեզ տեղի վայելուչ « ի վերայ գետոյն Զանդարու ի վերին կողմն ջուղայու ի « յարևմտեան կողմն ի տեղիս որ կոչի Մարունան ի Թուա- « կանիս հայոց ՌՃԵ (1605) ամի ի Հայրապետութեան ամե- « նայն հայոց Տեառն Յակոբայ Սրբազանեալ կաթուղիկոսի և

« Աստուածոյ ողորմի երևանցւոց առ հասարակ « յԱռաջնորդութեան ջուղայու և մերոյ Նահանգիս Դաւթի « արհի եպիսկոպոսի, և կարողութեամբն Աստուծոյ առա- « շինեցաք տունս գեղեցիկս, այգիս և պարտէզս և բուրաս- « տանս . . . և հիմնարկեցաք եկեղեցի: Սկիզբն եղև շինու- « Թեան նորա ի Թվականիս ՌՃԸ ամին մինչև ի Թիւն ՌՃԺ « ամին աւարտ եղև բարձրաբերձ և լայնակառոյց և անուա- « նեցաք սուրբ Ամենափրկիչ:

Ձհայոց հարցն պրն գրեալ կայ:

« Յիշատակ է խօլայ Յուսէփին և կողակցուն Բի- « բուն, որ էն եվրանէնց Մուրատ Հասիլի որդի Ալ- « ֆաթունին և կողակցուն Սարալուին, և Ավաքի « որդի Բաղդասարին, և Աստուրի որդի Վարդա- « նին, զոր ցանկացան ամէնն ջերմեռանդ սիրով սուրբ « Ամենափրկչին: Գրեցաւ Թիւին 1154 յուլիսի « տասն":

Ի կարգի պատմութեանն նոյն եկեղեցւոյ շինութեան յաղագս սոյն Ալֆաթունին գրեալ կայ, "Աստուած ողորմի « Ալֆաթունին . . . որ եկեղեցւոյ օրմի կրաքանն և ֆարշի « կէսն, եկեղեցւոյ շէմի բարիքէքն (քարինքն) և այլ միւս « կողմի բարիքսին շինէց":

Ձերոյ հարցանոյ տեառն ջուղայեցւոյ գրեալ կայ:

« Ինձիլ ՌՃԺ սուրբ եկեղեցիս Թամամեցաւ Հոռով- « մայեցւոց ամսոյ 8 ումն և Ազարիայ Շամ ամսոյ « 20 ումն, յիշատակ է մեղաւորիս, ուստայ Խէչա- « տուրս իւր ծնողացն, ամէն,, (1):

Շինեցաւ այս եկեղեցի ճախուք ժողովրդեանն և ոչ ասատաձեռնութեամբ միոյ անհատի, զոր պատուսմունքն նորա յայտնէ յասելն "Աստուած ողորմի երևանցւոց առ հասարակ

,, Ժողովրդոյն, թէ այր և թէ կին, որ ետուն եկեղեցւոյն շինե-
,, լոյ, վասն ջանին այ կին Թուման . . . . Աստուած ողորմի
,, Ուլուխանին և Հայթաթին որ ետուն եկեղեցւոյն շինելոյ
,, երկու անգամ վասն, որ ջանիայ իւր Թուման զի- դեան . . .
,, Աստուած օրհնէ սուրբ Ամենափրկչի առ հասարակ ժողո-
,, վուրդն որ եկեղեցւոյ կըտուրն (տանիան) ֆարշեցին, թէ
,, գաչի և թէ աջօռին ետուն Ճ, Թուման . . . Աստուած
,, ողորմի աղէնց Ա եաիկին որ ետ եկեղեցւոյս գաճել է, և թէ
,, խաթ քաշել է իւր Թուման ,, (2):

Ճինեալ է այն 'ի վերայ չորից լայնախարիսխ սեանց, երկայնութիւնն 'ի ստորոտոյ սեղանոյն է 65՝ և լայնութիւնն 60 ոտնաչափ: Ունի գմբեթ փառաւոր: Ի շրջապատն 'ի յատակէ գետնոյն ունի չորս կանգնաչափ յախճապակի:

Յառաջին դասու կան տպեղագիծ պատկերք, որոց իւրաքանչիւրոցն 'ի ներքոյ կան յիշատակ նկարել տուողացն նոցին: Ի ժողովրդականոցն շուրջանակի կայ շար մի տպեղ պատկերաց, 'ի մնացեալ տեղիսն կան որոշմունք պատկերատանց առանց ինչ նկարուց, որք թերևս մնացեալ են անկատար յետ 'ի վերայ հասանելոյ բռնաւորութեանցն 'ի Ջուղայ: Իսկ գըմբեթն է ճաղկազարդ նկարուք:

Խաչալենրն է պարիսպ սուրբ Աստուածածնի, որ ունի չորս դռնակ յերկոսին:

,, Յիշատակ է խաչկալս Յակոբին և կողակից Սառայ-
,, խանումին և որդին Մկրտումին և դուստր Հռոմ-
,, սիմին, և Մկրտումի կղկից Գուլսարն և որդին Մի-
,, քայէլն և կղկից Խաթունն և որդիքն Յակոբջինն՝
,, Մկրտումն՝ և Յովհաննէսն՝ և դստերքն Հռոմսիմիկն՝
,, կատանն Մադլինէն՝ և Մկրտումի դուստր մնալ-
,, քին: Գրեցաւ թիւն 1174 մայիսի 21 ,,:

Ունի 'ի կողմն հարաւայնոյ եկեղեցի ամառան շինեալ յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկայի:

Ի կարգի պատմութեան եկեղեցւոյ շինուածոյն գրեալ

կայ ,, Աստուած օրհնէ զաշտոցի Սարգսի որդի Պարոն Դիլաճ-
,, չին, Աստուած պահէ իւր որդի Ստեփանն՝ որ նախավկայի
,, սուրբ Ստեփաննոսի եկեղեցին Թամամին (բովանդակապէս)
,, շինեց իւր դասոնին ,,:

Ի ճակատ նոյն մատրան գրեալ կայ:

,, Երկնաքատակ և սքանչելի,
եկեղեցւս սրահս յօրինեի,
յանուն սրբոյն Ստեփաննոսի:
Ես յիշատակ դիլանչեցի,
Տեառն երկիւղած բարեպաշտի,
և ծնողացն Սարգսին և Մարիամի,
և կենակցոյն Թանգխաթունի,
որդւոցն իւրեանց դեռաբուսի,
Ստեփաննոս Մարեամ խանումվերաձայնի,
յորս մաղթեմք աղերսալի,
յորժամ գայ Տէրն ամենի,
պատուական աթոռ նստի,
արժան առնել յիշատակի:
Ի թուին հազար հարիւրորդի,
յիսնակ թուով, հռեակ ամի (3)
Տեառն մերոյ Աղէքսանդրի,
Աստուած ողորմի գրող Տէր Յովհաննէն ,,:

Այն եկեղեցի ունեցեալ է երեսուն ձեռագիր Աւետարանս, որոց յիշատակի տուողաց անուանք կան որոշակի գրեալ: Ի մէջ նոյն ձեռագիր Աւետարանաց մի հատ եղեալ է կարի հնագոյն (ըստ պատմելոյ ումանց մինչև հազար և հարիւր ամաց): Ջայն Թանգագին հնութիւն պարոն Ամիրեանց բառնայ յեկեղեցւոյ անտի, որոյ վասն հարցումն արար 'ի Տէր Սիմէոն քահանայէ նոյն եկեղեցւոյ՝ ներկայ առաջնորդ Սբքազան Թադէոս Արք եպիսկոպոսն, և նա 'ի 18 փետրվարի 1852 գրաւոր յայտարարութեամբ արար պատասխանի ,, Երբե-

,, քան ամօք յառաջ քան զայս (այնուհետև քան զամն 1852),
,, պարոն Ամիրխանն յաւուր միում ինկն ի տունն մեր և ասաց
,, ՏԷր Մատթէոս Հօրն իմում թէ՝ լուսաւալ եմ ես ի գտանի
,, յեկեղեցւոջ ձերում մի հատ Խաչագոյն ձեռագիր Աւետարան,
,, տուր ինձ զայն և ես զրեցից Աղայ Յովսէփ եղբօրն իմ՝ ի
,, նա առաքեսցէ վասն եկեղեցւոյ ձեր ի ներկուս Հարիւր ռուբի
,, լուսապին, Հայրն իմ՝ ի բանից յայնմանէ ետ առ պարոն Ա-
,, միրխանն զԽաչագոյն ձեռագիր Աւետարանն զայն և պարոն
,, Ամիրխանն առ ժամն այն Հատոյց Հօրն իմ ուրեմն ռուբի լու-
,, սապին և առեալ զայն Աւետարան գնաց ,, . . . :

Օգայն Աւետարան պարոն Ամիրխանն առաքէ ի սուրբ Ա-
զարու վանքն մխիթարեան միաբանութեան : Յետ առաքման
նոյն՝ կրկին տեղեկութիւն պատմի, մի՝ թէ ծուլասոյզ եղև, և
միւս՝ թէ ժամանեցաւ այն ի վանքն այն, բաղում այնօրինակ
Հաւաթիւնք կորեան ի Քրուզայոյ :

Այժմ թէպէտ կան ի նմա քանի ձեռագիր Աւետարանք,
այլ չեն շատ Խաչագոյն :

Նարեպաշտ քորքն որք ի Բթաւիայ, Տիկին Մարիամ Յա-
կոբ Յարութիւնեան և Օրիորդ Թագուհի Մանուկեան լինե-
լով ի Ժողովրդոց սոյն եկեղեցւոյ, հետ զհետէ առատաձեռն
տրօք խրատանց բարեպաշտաբար օգնական եղեն սոյն եկե-
ղեցւոյ :

Ի Յամի 1850 գնեցին զմի այգի խաղողոյ մի Ջրբազարի, յա-
մի 1853 գնեցին զմի տուն և ընծայ ետուն եկեղեցւոյն այն-
միկ : Յամի 1850 արարին զմանաւոր նորոգութիւն, և ի-
1852՝ 53՝ և 54, շինեցին զարծաթի յիշատակիս զսկիհ՝
զնաչ՝ զբուրվառ, և այժմ ևս շնորհիւ նոցա եկեղեցին ունի
զմանաւոր դրամագլուխ որով հոգացեալ լինի ծախք ե-
կեղեցւոյն :

---

(1). Ի պատմութեան եկեղեցւոյ գրէ ,, թէ ինչ՝ ի-
թէ՝ 1112 ամն ասացեալ եղև ,, եւկ այս յիշատակարան ասէ թէ ի 1117
ամին ասացեալ :

Ի նոյ ոչ է պարտ պարսկոսել, զի ասացն Հաւաքանէ ասա-
ման ասատպաշտն եկեղեցւոյ շինութեան, եւկ վերջին Հաւաքանն է ա-
սացեալն շինութեան ներքին և արտաքին ամենայն պարագայից :

(2). Գրամարքն որ նշանակեցան վասն եկեղեցաշինութեանն էուճա-
պահէն 108 Հազար և 6 հարիւր, ընդ որ ամենայն ընծերցոյ առնէ ղարմա-
նալ, թէ զկեղեցեցի այնչափ ծածուկն և լայնատեսք վճարք մարթ է այնչափ
ասկատածաք գործառ շինել, ասե որ արծաթ է փերեզ, նոքա՝ զի այն
ծախք է հայն վասն եկեղեցւոյն և ոչ վասն մարդանն կամ արտաքին ա-
նեկոց և. երկրորդ՝ զի Հազար այնր ծամանակէ էր 25 ասուգէ : երրորդ՝
զի Հծ տան ծաղվերջեան և հայ ճարտարապետ ըստ ի-րեանց չէրհե-
ետանդութեան մշակէին ասանց վճարոյ ապանալոյ, և ա և վերջ հոյ մշա-
կէ էր յայնմ ծամանակէ չորս երեսուն կամ երկու շահի այսինքն 16կամ 20
պեան, և չորրորդ զի պէս-պէսի պարագայ կամ նիւթ շինութեանն :

(3). Երրեակ ամն ոչ է Հաւանել ընդ յիշերրորդին, զի կամ ա-
սել յերրորդսմ ամ Աստուածընկալութեան Աղէքսանդր եպիսկոպոս
(որ եղև կաթուղիկոս) :

Այն Աղէքսանդր ի 20 յունվարի 1148 ամ Նոյա Աստուածընկալ Հ-
դնափրկէ է վանոյ :

ԺԱ.

ՍՈՒՐԲ ԳԱՏԱՐԻՆԷ ԱՆԱՊԱՏ ՀՈՒՄԱՆԱՑ

Ա. Ի յետ արձանագրութեանն եղելոյ ի սմին Հաստատանէ,
շինեցաւ այս Անապատ ի Թուականի Հայոց ՌՀԲ (1623),
արդեամբ և ծախիք բարեպաշտոն խոջայ եղիազարու (1),
որ էր պատճ իշխանապետին եղիազարու Նահապետին ասե-
ցի վերհազնեայ Նազարեանց (2) :

ը. Եկեղեցին կամարակապ յօրինուածով կառուցեալ կայ ի միջակիտի. յանուն սրբոյ Հոգւոյն Կատարինեայ, ունելով երկայնութիւն 35 ցաւտորոտ սեղանոյն, և լայնութիւն 22 ոտնաչափ: Զուրկի յիշատակագիր յաղագս շինութեանն իւրոյ, չունի և որոշեալ պաս վասն ժողովրդոց կամ կանանց, յաղագս ոչ գոլոյ այնր ժողովրդական եկեղեցի: Այս մասն եկեղեցոյն ունի զպատկերս տնօրինականացն Յիսուսի, իսկ առաստաղն է ծաղկազարդեալ այլ ոչ գեղարուեստիւ:

Խաչկալն է պատկեր խաչելութեանն Յիսուսի:

դ. Յարևելեան ի հիւսիսային և ի հարաւային կողմանս եկեղեցւոյն կան խուցք Թուով երեսուն և երիք շինեալ յաղագս միաբանութեանն կուսանաց: Շինութիւն նոյն խցից են կարի նեղ և անձուկ, մինչև անգամ թէ երկայնաչափակ ոք մտցէ ի խուցսն յայնոսիկ՝ չկարէ կանգնել առանց գլխոյն յառաստաղն ոչ հասանելոյ: Ըստ նմին օրինակի են և գաւիթք յորս են Ճանապարհք մտանելոյ ի խուցսն յայնոսիկ: Գաւիթք այնոքիկ հասարակաբար ի կուսանաց կոչին ,, փողրակ ,,: Թուի ինձ թէ խորհրդով են շինեալ զայիշատակեալ խուցսն նովին նեղ և անձուկ դրութեամբ, թերևս ի միտ առեալով զՏէրունականն բան թէ, նեղ և անձուկ է ճանապարհն որ տանի ի կեանս յաւիտենականս: Յամի 1842 բարերարութեամբ Աղայ Յակոբայ Պետրոսեան (3), նորոգեցան մանաւանդ եկեղեցին և շրջակայ շինուածք այնր, և շինեցաւ արձակ սենեակ մի յաղագս ընդունելոյ անդ զՀիւրս: Շինութիւն սոյն անապատի ըստ հիւսիսային կողման կցորդ է ընդ եկեղեցւոյն սուրբ Յովհաննու Մկրտչի ի թաղն Զարսուս:

Կառավարի եկեղեցին յԱւագ լուսարարէ և յերկու լուսարարից: Արդի աւագ լուսարարն է կոյս Յանդուխտ Տէր Գաբրիէլեան, և Տալիթայ և Եղիսաբեթ կուսանք են օգնական նմա կամ փոքր լուսարարք:

ե. Յանդուգնութեամբ պատմեն կուսանք թէ ի Հայաստանայ ընդ ժողովրդեանն փոխադրեցան ատ երիք կուսանք՝ Ուռուփսանայ՝ Թագուհի՝ և Հռիփսիմէ անուանիք (4): Ի միջ եկեղեցւոյ Աննապատին կան երկու կուսանաց պատկերք, նը-

կարեալ ի վերայ կտաւոյ, զորոց աւանդութեամբ լուեալ ի ծերոց՝ պատմեն արդի կուսանք, թէ մինն է պատկեր Ուռուփսանայ կուսի և Մայրապետի՝ և միւսն Թագուհի գործակից նորա կամ յաջորդի:

զ. Միաբանութիւնն կուսանաց կառավարեալ լինէր ի Մայրապետէ ի Յաջորդէ՝ և ի խորհրդական գրագրէ, իսկ յամի 1853, ըստ կարգադրութեանն Ներկայ Սրբազան Թադէոս արք եպիսկոպոս Առաջնորդի՝ յաւելան և վեց հոգաբարձուք կարգեալ ի նոյն միաբանութենէ կուսանաց:

Անհրին ղպովէլի կարգս տնտեսական կառավարութեան, և հաստատեալ ի վերայ հաւասարութեան սկզբան, որով չըլինելով որոշումն կամ խտիր ի միաբանութեանն միջի խաղաղութիւնն ի նոսա անխռով շարունակի: Անապատն տայ ղհաց և զկերակուր միաբանութեանն, և յորժամ ձեռնհաս լինի բաշխել ղերամն՝ ամի ամի տուեալ լինի միաբանութեանն հանդերձագին սակաւագումար: Իւրաքանչիւր միաբանի տան երեսուն լիտր ալիւր վասն տարեկան հացի, և զօրհանապազ Անապատն պատրաստելով զկերակուրս բաշխէ ամենեցուն հաւասարութեամբ: Յաղագս տնական կառավարութեանն երիք տնտեսք են կարգեալ ի միաբանից անտի, մինն է տնտեսապետ և երկուքն օգնական նորա: Ընդի տնտեսապետն է կոյս Սարթայ կամ Սառան, և օգնականք նորա կոյս Հռիփսիմէ և կոյս Գայիանէ: Յաշխարհական կանանց ունեն զամի պտնաբան, և զամի խոհարար, և քաց յերկուց անտի չունին զայլ ծառայ կամ զաղախին: Փոքր լուսարարն ի միջ գիշերի զարթուցեալ հարկանէ զկոչնակ (որ նշանաւոր է և համեալ հարեալ սակս երկար հարկանելոյն և ձայնին) և միաբանութենէն ընդ ձայն կոչնակին հաւաքին յեկեղեցին, և զոյգ զոյգ կանգնեալ առաջի սեղանոյ՝ առնեն զաղաւնաւորդութիւն մինչև լցանայ բոլանդակ սաղմոսն, և ապա սկիզբն առնեն ինքեանք առնել զժամերգութիւնն ըստ իւրաքանչիւր աւուրց կարգին, որ և աւարտի նախ քան զծագելն արեւուն կամ ի շառագունիլ ծայրիցն լերանց:

Իւրաքանչիւր ոք ՚ի միաբանից ունի ձեռապօրճ, որք ըստ մեծի մասին են գործել ղդուլլայս, յորում պարապին՝ մինչ աւարտին զաղօթս իւրեանց և զժամերգութիւն: Վաճառեն զձեռապօրճս իւրեանց և գնով նոցին հոգան զպէտս հանդերձից իւրեանց թէ ըմպելեաց և թէ այլ անձնական մասնաւոր ծախուց. և եթէ իցեն ձեռնահաս՝ զաւելորդն բաշխեն աղքատ կարօտաւորաց: Մեծ մխիթարութիւն է նոցա ըընդհանրն զոր ունին, զի ըստ նորա առաւել վճիտ պարզութեամբ և սառնութեամբ քան զըստս աւետեան ըսհորոց ըստղայու՝ յամառան զսովութիւն յոյժ տայ միաբանութեանն: Բազում յաղագս ըմպելոյ զըստ՚ի ըսհորոյ անտի յոլով անգամ գնան Յանապատն այն յայցելութիւն ըսհորոյն:

Իւրաքանչիւր միաբան ունի դմի կամ գերկուս և ոմանք յաւելի և աշակերտս ՚ի մատաղ օրիորդաց, որոց տան ՚ի բերան սերտել զփսալս, զեկեղեցական երգս և զսաղմոս: Իւրաքանչիւր միաբան գուն գործէ դմի ոք կամ գերկուս ՚ի ձեռնասուն աշակերտաց իւրոց առնել կուսակրօն. մխիթարութիւն համարելով Թողուլ զնոսա զկնի իւրեանց հոգևոր յիշատակ, ուստի միաբանութիւնն նոցա միշտ է հարուստ ըստ Թուոյ: Յետ վախճանելոյ միոյ միաբանի, եթէ ինքն ունիցի ՚ի պէտս յուղարկաւորութեանն իւրոյ պատրաստեալ գումար՝ առնեն նովաւ զծախսն, իսկ եթէ աղքատ իցէ վախճանեալն՝ Անապատն կատարէ զծախս Թաղման նորա: Ինչք կամ ստացուածք միաբանից յետ մահուան իւրեանց՝ Անապատին սեփհականեալ լինին, և ոչ ումեք ազգականացն: Ոչ ընդունին յուխտ միաբանութեան կամ կուսակրօնութեան զօրիորդս զաշակերտեալսն ինքեանց նախ քան զլինելն նոցա քսանամեայ, զի մի թերութեամբ հասակին ապաշաւ լիցի նոցա յետ զսբրբակեցութեան ուխտն ընդունելոյ: Յառաջ քան զժամանակ առաջնորդութեանն Ներկայ Թադէոս Սրբազան արք եպիսկոպոսի, ընդունէին նորընծայքն ՚ի կուսակրօնութիւն զջրեսին եկեղեցական ոտորին աստիճանս, և խարազնազգեստ լեալ հանդերձ լինէին ՚ի Թիւ կրօնաւոր կուսանաց. իսկ յամի 1851 ՚ի 29 Սեպտեմբերի արդի Առաջնորդ Սրբազան

Թադէոս եպիսկոպոսն ընորհեաց նոցա զաստիճան աւագ սարկաւագութեան, պատուէր տալով որպէս սարկաւագ ըսպասաւորել ՚ի ժամ պատարագի՝ զգենլով զշապիկն զպրոց, և կրելով ՚ի գլուխ զքօղ սպիտակ:

Յամի 1702, կամ ՚ի Թուականին Ազարիայի 87, եղեալ են երիսուն և երեք կուսանք միաբանք սոյն Ընտպատի, որոց անուանք են, Տալիթայ՝ Մայրապետ, մեծ Մարիամ յաջորդ, Խրաքսէ, եղինար, երեք վառվառք, ըրբս Մարիամք, Տալիթայ, Թագուհի, Գարան, երեք եղիսաբեթք, վարդենի, Կատան, Եիկլիէ, երկու Հռիփսիմէ, Սողովմէ, Կատարինէ, Աննայ, Նունիա, Մանիա, Դրիսէս, Փևփրոնիս, Սանդուխտ, փոքր վառվառ, Սովիա և փոքր եղիսաբեթ (5): Իսկ արդի միաբանութիւն նոցա բաղկանայ ՚ի վեցտասան կուսանաց, որոց անուանք են՝ եղիսաբեթ կամ ջոջ կոչեցեալ Մայրապետ, վառվառ Ցաջորդ, Լուկիայ՝ կատարինէ՝ Սանդուխտ՝ Հռիփսիմէ՝ և վարդենի Հոգաբարձուք (6), Մանիայ, Սարրայ, Մարիամ, Սանդուխտ, Թեկղի, եղիսաբեթ, Հռիփսիմէ, Տալիթայ, և եղիսաբեթ:

Ձ. Արդիւնք կամ հասք սոյն Ընտպատի են 1, ողորմութիւն արքային Պարսից. 2 տոկոս պրամազ լիոյ. 3, նուէրք ՚ի զիւղօրէից. 4, լուսապին. 5, արդիւնք կալուածոց. 6, նուէրք կամ պարգև բարեպաշտից:

1. Ակսեալ ՚ի ժամանակէ Թագաւորութեանն Փաթալիշահի յամի 1833 մինչև ցայսօր ժամանակի վէհափառ Տէրութիւնն Պարսից ընորհէ նոցա ամի ամի զերիսուն և հինգ Թուման պարգև, որով ապահարկ լինին կալուածք Ընտպատի նոցա: Ի ընորհս միաբանութեանն կուսանաց, ընորհէ նոյնպէս վէհափառ Տէրութիւնն Պարսից Սրբակրօն Տէր Սարգիս քահանային Տէր Մատթէոսեան զտարեկան տուն Թուման, յաղագս լինելոյ նորա երբեմն զբագիր նոյն Ընտպատի, և համարեալ լինելոյ քահանայ կուսանաց:

2. Ընդին ՚ի Գալկաթայ ՚ի կառավարութեան Բրիտանիկան ընկերութեանն Հնդկաստանի հինգ հազար սքայ ռուփի, որ է կատակեալ նուէրք հանգուցեալ Աղայ Գէորգայ Մանուկեան

ջուղայեցւոյ, սկսեալ ի 1827 տարւոյ, որոյ զտարեկան տուկոս ընդունէն երկու հարիւր կումպանի ռուփիս, ձեռամբն եկեղեցւոյն Կալկաթու Հայոց Նազարեթեայ սրբ եկեղեցւոյ:

Յետին դարձեալ ի Կալկաթայ ի կառավարութեան Հայոց եկեղեցւոյն գմի հազար և հինգ հարիւր կումպանի ռուփիս, որ է կտակեալ գումար Հանգուցեալ Տիկին Աննայ Յովհաննէս Ց. Տէր Կարապետի, սկսեալ ի 1851 տարւոյ, որոյ տարեկան տոկոս ստանան վաճառն ռուփիս կումպանւոյ:

Ի սնդկէ Մարբասայ եկեղեցւոյ Հայոց, ստանան տարեկան ( ) ռուփիս, որք են վաշխ կտակեալ գումարոց:

3. Հասանեն նուէրք աղէր՝ խղոյ՝ պանրի, և չորաթանկ ի գաւառացն Չարմահալայ՝ փէրիոյ՝ Բուրլարոյ՝ և փեռազայ՝ այլ ոչ կարի առաւելութեամբ:

4. Գառաջ քան զժմինկ առաջնորդուն ներկայ Սրբազան Թադէոս արք եպիսկոպոսի ունէին սովորութիւն ի տօնախմբութիւնս ժողովրդոց առաքելոյ զմոմ, և գնալոյ ի տունօրհնել ժողովրդոց, այլ ներկայ Սրբազան Առաջնորդն խափանեաց զայնոսիկ, վասնորոյ ամի ամի շրջեցուցանեն ի Ջուղայ գԹուղթ վասն լուսաւորչոյ, որոյ բովանդակեալ գումարաւ, լինի ծախք լուսաւորութեանն եկեղեցւոյ:

5. Կալուածք նոցա են ղարամխնց՝ պարապէլի (7). միջի և Տէր Պետրոսէնց այսիք, որք ընդ ամենայն բովանդակին ի 18 ջրիր: Վարձու տուեալ լինին յիշեալ կալուածք, վասնորոյ կապալառուքն՝ զկէս մասն վարձուն հազիւ հասուցանեն Անապատին, իսկ վասն կէս մասին՝ տան զմատնահաշիւ և զգուէթ ողորմութեան կուսանացն խնդրելով անհատոյց Թողուն զմնացորդն, ուստի ի կալուածոց ոչ ունին հիմնաւոր կամ հաստատուն արդիւնս:

6. Ի կարի հարկաւոր դէպս տնական հարկաւորութեան և ծախուց արձակին զխնդրագիր ի Հնդիկս կամ յայլ ուրեք առ այս կամ այն ոք բարեպաշտս և ստանան զկարևոր դատարս նպաստից:

Պատուական Նիկոլայ եպիսկոպոսն Ռուսաց յամի 1851 ընտ միջնորդելոյ Գնիազ Դիմետր Իվանիչ Դոլղորուկով Դեսպանին, ընդհատաց սոյն Անապատին զ170 Թուման Պարսից:

Ստորագրեան Տէր Սամուէլեան մինչ կենդանին էր, առնէր տոցա երբեմն երբեմն ընդհ օգնութեան, մերթ հարիւր և մերթ 50 Թուման գումարօք:

Յաց ի վերոյ նշանակեալ արդեանց, ունին իրաւունք արձակելոյ ի Հնդիկս հրամանաւ Առաջնորդին Ջուղայու ըզնպաստահաւաք ի խնդիր օգնականութեան ժողովրդոց:

Յետին և զհաս ուխտադրամոյ՝ ճնուն՝ օրհնելոյ երեխայոց՝ յուղարկաւորութեան ննջեցելոց և ժամոյց՝ որք մասնաւոր են յոյժ:

Ե. Ոչ սոյն Անապատի լինի ոչ միայն ի պէտս միաբանութեանն, այլ և չքաւոր կանայք՝ որք յայեալ աղկունք աղքատաց և թաղումն կարօտաւորք ստանան զմխիթարութիւն ողորմածութեամբ Անապատին, վասնորոյ ծանրանայ ծախքն՝ և նուազի գումար արդեանցն, ուստի միաբանութիւնն կենցաղաւարի նեղութեամբ, և երբեմն պարտաւորի անկանիլ ի հերքոյ պարտուց: Իսկ եթէ տնական խոհեմ կառավարութիւն նոցա չինէ զօրավիգ, վաղուրեմն աղքատութիւն և պարտականութիւն շուրջ պատէր զնոքօք:

Զ. Պարոն Մանուկ Յորդանանեան Ջուղայեցի այժմ բնակեալ ի Սուրբայիա, յամի 1857 արար խոստումն քանալոյ ի սոյն Անապատի զԴպրոց մի վասն Օրիորդաց, որ վասն լինի կարգադրութիւն յաղագս այսմ ամի քանալոյ զԴպրոցն գայն:

Է. Արդի Սրբազան Առաջնորդն ունի կարի բարեհաճութիւն և ընդհ առ միաբանութիւնն սոյն Անապատի, յաղագս բարեհամբաւութեամբ պահելոյ մինչև ցայսօր ժամանակի գաղնուն և գյարգ միաբանութեանն իւրեանց, վասնորոյ ի 20 Օգոստոսի 1855 ամի արար յաղագս սոյն Անապատի գբարեկարգութեան իմն հանդանգրութիւն ըստ կտակագրի կարգին:

Խարհրդոյ միաբանութեանն կուսանաց եղելոց՝ ի ջրզայ՝ ի տուրք պատարկին Անապատին։

"Նուիրի հոգեւոր սիրով ողջոյն օրհնութեան։

Մեր եպիսկոպոսական և Առաջնորդական պարտաւորութիւն՝ ըստ որում վանն ամենայն հաւատացեալ հօտին մեր տեսչութեանն յանձն եղելոց՝ պատասխանատու է առ Աստուած, վասն որոյ սարտ համարեցաք հոգեւոր խրատտանութեամբ ձեզ ազդ առնել՝ ձեր կրօնաւորութեանն վերաբերեալ նախազգուշութիւնքն՝ զի չլինի թէ աշխարհիս փորձութիւնքն զձեզ ձգեսցեն նոյն առիւծոյ բերանն որ ըստ առաքելոյն բանի՝ շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ, և ըստ սաղմոս երգողին կերակուրք նորա միշտ ընտիրքն են։

Յակոբոս Սրբազան Առաքեալն կրօնաւորութեան համար այսպէս կըզրէ "կրօնաւորութիւն սուրբ և անարատ՝ առ՝ի յԱստուծոյ և՝ի Հօրէ՝ այս է . . . . անարատ պահել զանձն յաշխարհէ" աշխարհ ըստ որում միշտ մեղաց առարկայից ծնօղ է, և մարդկային մեղաց չարութիւնքն միշտ յարաբերութիւն ունին ժամանակին ընթացից հետ, վասնորոյ Սրբազան առաքեալն կրօնաւոր եղողներուն համար պատուէր տուաւ "անարատ պահել զանձն յաշխարհէ"։ Եթէ մէկ աղտեղիչ նիւթից որ ոք մարդ անարատ մնալ կըցանկայ՝ այն նիւթից հրաժարելով կըհեռանայ · վասն զի որչափ մերձ մնայ այն նիւթին՝ նորա աղտեղութեաններէն անարատ մնալ չի կարող։ Այս պատճառի համար Սրբազան Հարք կանոնադրեցին և հաստատեցին զի նոքա որք կրօնաւորութեան վէճակ կըսորոշեն իւրեանց կենաց համար, անապատում բնակուելն՝ աշխարհիս վայելչութիւններէն հեռանալով, զի կատարեալ առաքելոյ ասածն՝ "թէ անարատ պահեսցին զանձն յաշխարհէ"։

Յիշեալ Սրբազան Յակոբոս Առաքեալն բաւական չի համարում՝ կրօնաւորայ միայն անձամբ մնալն՝ ի մէջ անապատի, եթէ նոքա միտքն աշխարհի բանէրին վերայ զբաղուած լինի, վասնորոյ պատուէր տայ ասելով "եթէ օգկամիցի կրօնաւոր լինել և ոչ սանձահարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւնն"։ որով ուսուցանուում էր թէ կրօնաւորն ոչ թէ միայն անձամբ այլև բոլորով սրտիւ և մտօք պարտի զինքն հեռացուցանել աշխարհի զբաղմունքներից։

Այն Առաքելոյ բանից հաճելատ՝ սուրբ Հարքն կանոնադրեցին և հաստատեցին զի կրօնաւոր եղողքն աշխարհայինն ձևոյ զգեստն մերկանան և սքեմ կամ սուր և մագեղէն հանդերձ զգենուցուն, որ նշան է՝ թէ նոքա աշխարհի զգեստն մերկանալով՝ հեռացան աշխարհի զբաղմունքներից, և կրօնաւորութեան զգեստովն իբրև որոշեալ համարվեն աշխարհիս ամէն եղող բնակիչներից։

Կրօնաւորութիւնն՝ է կամաւորութեամբ նուիրել զանձն՝ ի պաշտօն Աստուծոյ ընդ ամենայն ժամանակս կենաց։ վասն այսր կըպահանջի՝ ուխտադրութիւնն վասն անձնի կամաւոր նուիրման առ Աստուած։ Իսկ վասն կատարեալ պահպանելոյ զնոյն վէճակն՝ կըպահանջի ուխտ աղքատութեան, ուխտ ողջախոհութեան և ուխտ հաստատուն մնալոյ՝ ի պատուիրանս Աստուծոյ, մեղքերից և նորին պատճառներից հրաժարելով։

Արդ՝ որովհետև ձեր բարեկրօն միաբանութիւնն կամաւոր ընտրութեամբ ընտրեալ է կրօնաւորութեան վէճակն, ուխտադրեալ է առ Աստուած՝ զուխտն աղքատութեան, ողջախոհութեան և պատուիրանապահութեան, վասնորոյ և մեք սուրբ հարց կանոնադրութեանցն համեմատ՝ հոգեւոր պարտաւորութեամբ մերով և սիրոյն Աստուծոյ կարգադրեմք վասն ձեր գործադրելոյ կանոնս բարեկարգութեանց։

Ա. Յառաքելոյ նման առացէք և դուք, մեղ աշխարհ՝ ի խաչ ելեալ է և մեք աշխարհի · վասնորոյ զաշխարհս մեռեալ համարելով վասն ձեր՝ միմիայն ձեր Անապատն ընտրեցէք ձեզ տեղի օթևանելոյ ընդ ամենայն ժամանակս։

1. Մի՛ շատաչքկուԹեամբ ելանիջիք ՚ի սուրբ Անապատէն ։
2. Մի՛ ՚ի տունս ընտանեաց շատ երԹևեկուԹիւն արասջիք, զի օր սիրէ զընտանիս՝ զհարս՝ կամ զեղբարս իւր՝ առաւել քան զՔրիստոս, չէ արժանի Քրիստոսին ։
3. Մի՛ մնասջիք ՚ի գիշերին արտաքոյ քան զԱնապատն՝ ՚ի տունս ընտանեաց ձերոց՝ անդ ննջելով, այլ յառաջ քան զմտանելն արեւու սպարտիք ամենեքեան լինիլ ՚ի մէջ սուրբ Անապատի՝ իւրաքանչիւր ոք իւր աղԹիցն պարապելով ։
4. Մի՛ առանց հրաւիրելոյ կամ առանց հոգևոր հարկին պահանջելոյ երԹիջիք ՚ի տունս ժողովրդոց ։

Ք. Որպէս ՚ի մեղաց խոչընդոտ է, նոյնպէս և նոյն պատճառ՝ նէրիցն արժան է զգուշանալ յորոց մեղք կըճնանին, վասն որոյ,

1. Մի՛ պատանի կամ մարդ ոք՝ յահեկ երԹևեկուԹիւն ապրասչէ ՚ի վանս ձեր, ԹէՀ և ընտանի ինչ ձեր ։
2. Մի՛ այր ոք ՚ի գիշերի ննջիցէ ՚ի մէջ Անապատին, կամ մնասցէ ՚ի խուց ուրուք մինչև ցժամն երեկոյեան ։
3. Նայեցաւ լինի գուռն Անապատին ընդ ծագմանն արևու, փակեսցի յետ արև ուն մնանելոյ ։
4. Ո՛արդ ոք մի մտցէ առանձին ՚ի սենեակ ուրուք՝ անդ մնալով և խօսակից լինելով ընդ երկար. այլ ԹէՀ ընտանի ինչ և ԹէՀ օտարական՝ յետ կէս ժամու տեսուԹեանն ելանիցէ ՚ի սուրբ Անապատէն, և մինչ մտանէ ՚ի խուց ուրուք՝ ներկայ լինիցին անդ կուսանք երկու ։

Դ. Ո՛րտաքին պարկեշտուԹիւնն՝ է հայելի ներքինն առաքինուԹեանն, վասնորոյ,

1. Մի՛ լինիջիք ընդ միմեանս շատախօս ՚ի վերայ դատարկաբանուԹեան առարկայի, այլ փոխանակ այնմիկ, աղօԹից ձերոց պարապիցէք ։
2. Մի՛ երբէք բոկոտն լինիջ ընդ ամենայն ժամանակս՝ ԹէՀ ՚ի մէջ եկեղեցւոյ ԹէՀ ՚ի մէջ պարսպի անապատին՝ ԹէՀ ՚ի սենեակս ձեր՝ և ԹէՀ յեղանելն ՚ի տանէ, այլ ընդ ամենայն ժամանակս լինի գուլբայ յոտն ձեր ։

3. Մի՛ իւիք ինչ երևեսցի նշանն մարմնոյ ձերոյ (բաց ՚ի յերեսաց և ՚ի ձեռաց) վասնորոյ լայնեսցին ընդլապանակք ձեր վասն ոչ երևելոյ ատեանց կամ լանջից, երկարեսցին հանդերձք ձեր՝ զի մի երևեսցի միան ոտին ձերոյ կամ եզերքն հանդերձից ։
4. Գլուխն ձեր և կանգնիլն լինի այնպիսի սքողանօք՝ զի մի նշան լինէ անհամեստուԹեան երևեսցի ։

Ե. Յոր կոչումն կոչեցայք՝ ՚ի նմին կացջիք, վասնորոյ,

1. Ո՛սոտնախկին սովորականին անխափան կատարեսջիք ըստ կարգ գիշերային սաղմոսերգուԹեանն ։
2. Ո՛ՀնեակեաՀ զարԹիջիք ՚ի գիշերին ՚ի լսել զձայնն կոչնակի՝ և միագումար պատրաստ լինիք յեկեղեցւոջն վասն աղօԹելոյ, այլ ՚ի հիւանդացն մի պահանջեսցի այդ՝ որչափ չիցեն ողջացեալ ։
3. Ո՝ ցերեկս՝ սաղմոսերգուԹեան և աղօԹից նաւիրեսջիք զժամանակ ձեր ։
4. Յերեկոյեան ժամերգուԹեանն՝ նոյնպէս ներկայ լինիջիք ամենեքեան, և յետ երեկոյեան ժամերգուԹեանցն՝ գկնի կէս ժամու սասջիք զքաղաղականն գիշերոյ ։

Զ. Պան փառաւոր կացուցանելոյ զպաշտօնն Աստուծոյ,

1. Յեկեղեցւոջն զդասակարգուԹիւնն անխախտ պահեսջիք, առանց յաձախ ել և մուտ առնելոյ, զի ժամ է պաշտօն զՏէր ։
2. Մի՛ խօսակից լինիջիք անդ ընդ միմեանս, այլ մտադրուԹեամբ և երկիւղիւն Աստուծոյ կատարեսջիք զաղօԹսն ։
3. Մի՛ մոցէ ոք յեկեղեցին՝ առանց առ դուրսն ձգելոյ ըզփիլոնն ։
4. Ո՛ղանց խնայելոյ կամ ձգձգելոյ զլուսաւառուԹիւնն եկեղեցւոյ շարունակեսջիք ։

Է. Ո՛րովհետև Անապատն ձեր չինեալ է ՚ի մէջ քաղաքի և ժողովրդոց, և դուք ևս սովորուԹիւն չէք ունեցեալ իբրև միայնակաց անապատական վարել, վասնորոյ կարպադրեմք զի երԹևեկուԹիւն ձեր եղիցի ըստ յետագայ կարգին ։

1. Ասան տեսութեան արհնակից մերձաւոր ընտանեաց ձերոց՝ թոյլտուութիւն լինի ձեզ գնալ յերկու ամիս մի անգամ, այլ յորժամ երթալ կամիջիք՝ երեք միաբանք ևս ընկերակից լինին ձեզ վասն առաւել ևս պատուոյ ձերոյ, և մնալն ձեր ի տան ընտանեաց մի երկարեսցի առաւել քան զմի օր, այլ նախ քան զմտնան արեւու անխափան պարտիք վերադառնալ ի սուրբ Աստուածածին՝ առանց երբէք ի գիշերին մնալոյ արտաքոյ Անապատին:

2. Եթէ հանդէս մկրտութեան, Հարսանեաց կամ այլ ուրախութեան մինչ լիցէ ի տան ընտանեաց ձերոց, միայն ի նոյն աւուրն պարտ է ձեզ գնալ և մնալ անդ իբրև հիւր, զի պատիւ սարկաւագութեան ձերոյ ոչ նուազ ձեզ իբրև տնտես կամ իբրև տանուտէր վերակացու լինել աշխարհային գործոց, այլ գնալն ձեր լիցի յառաւօտուն՝ և վերադառնալն ի սուրբ Անապատն նախ քան զմտնան արեւու:

3. Եթէ ննջեցեալ պատահիցի ի տան ընտանեաց իւրաքանչիւր ումեք, թոյլ տամք զի երեք միաբանիւք ի գիշերին մնասցեն ի տան ննջեցելոյն ոչ վասն տնտեսութեան կամ վերակացութեան, այլ վասն միսիթարելոյ զընտանիսն ննջեցելոյն հոգևոր խրատաբանութեամբ. իսկ այս մնալն միայն մի գիշեր եղիցի, և ոչ այլ յաւելի:

4. Եթէ ընտանի ումեք հիւանդ լիցէ՝ արժան է գնալ նմա տեսութիւն՝ այլ ոչ սահպ սահպ. և յորժամ երթալ կամիցին՝ երեք միաբանիւք երթիցեն ի պատիւ իւրեանց, և առանց ի գիշերին մնալոյ անդ՝ նախ քան զմտնան արեւու դարձջիք ի սուրբ Անապատն:

5. Ընտանի ուրուք եթէ կամիցի գալ ի սուրբ Անապատն՝ և մնալ անդ իբրև հիւր, թոյլտուութիւն լիցի կանանցն մնալ միայն մի գիշեր, և ի հետևեալ աւուրն գնալ ի տուն իւրեանց՝ իսկ արք նախ քան զմտնան արեւու պարտին գնալ ի տուն իւրեանց՝ առանց յամելոյ ի սուրբ Անապատին:

6. Այս ոք եթէ հիւանդանայցէ՝ միաբան քորք նորա խնամ

տարցեն նմա, և ընտանեացն մի լիցի նեղութիւն վասն պարմանելոյ զհիւանդն, այլ մայր՝ կամ քոյր հիւանդին կարէ մնալ առ հիւանդն երկու օր և երկու գիշեր միայն՝ վասն բնական սիրով միսիթարելոյ զհիւանդն:

7. Իգալ այլազգի իշխանաց ի տեսանել զԱնապատն՝ միայն Մայրապետն և երեք ծերագոյն կուսանք ընկալցին զնա, իսկ դեռահասակ կուսանք մի երբէք երևեսցին յաչս նոցա:

8. Այս ամենայն կարգադրութիւնք սահմանեցան վասն ամենեցուն առ հասարակ, զի Մայրապետն, Յաջորդն և ծերագոյն կուսանքն ինքեանք իսկ հաստատուն պահպանելով զայս ամենայն՝ օրինակ լիցին իւրեանց փոքրագունից, և փոքրագոյնքն հպազանիլ եղիցին իւրեանց մեծաւորաց:

Յղաչեսցուք զՀոգին սուրբ անարատ պահել զհոգեւոր միաբանութիւնն ձեր, հաստատուն պահպանել զսուրբ Անապատն ձեր, սուրբ առնել զկոչումն ձեր, և Աստուծոյ հաճելի կացուցանել զուխտն կրօնաւորութեան ձերոյ, առաքինութեամբ զարդարելով զհոգի ձեր ամենեցուն:

Ընորհք Հոգւոյն սրբոյ ըստ ամենայն բարեաց մասին. և ընդ ամենայն ժամանակս եղիցի ընդ հոգւոյդ ձերում, ամէն:

Ի Զուղայ Ա՛ի 20 Օգոստոսի 1855, և 1304 :Համար 451:

Ճ. Ընորհիւն Աստուծոյ, սկսեալ ի հիմնարկութենէ սոյն Անապատի մինչև ցայսօր ժամանակի ոչ է եղեալ վատահամբաւութիւն ինչ յաղագս միաբանից սոյն կուսանոցի, այլ ընդ ամենայն ժամանակս գովելի հանդիսացեալ է ողջախոհութիւնն՝ պարկեշտութիւնն և սրբասիրութիւնն սոյն միաբանութեան, խնկ յաչս այլազգեաց զարմանալի իմն հառաչի ուխտն կուսութեան սոցա, վասնորոյ և պատկառելի է ամենեցուն սոցին միաբանութիւնն: Յամի 1780 հրամանաւ վատշուէր բռնակալին Ալիպաղխանի տարեալ եղեն ի կուսանաց Անապատէ երկու աղջկունք ի լրումն իւրոյ բղջախոհութեան կրից, յո-

թոց մինն էր դուստր Տէր Անդրէասի փահանայի, և միւսն դուստր սաւիրչի ումնմն, այլ նոքա տակաւին չէին ստացեալ պիրծնն կուսակեցութեան, այլ էին օրիորդք՝ զանձինս իւրեանց ընծայեալ վասն ուխտի կուսութեան, բայ՛ի թոնաւաքական գարշելութենէ անտի, էիղև այլ ինչ ճագուէն վատասհարաւութեան։

Յամի 1834 երկու կուսանք՛ի միաբանութենէ աստի մինն վարուառ անուն դուստր Ա֊ետակի Սաւիրչի, և միւսն Ռուստիանէ՝ դուստր Պետրոս մանչոյ, թեվլադրութեամբ և հրապուրանօք պապական ազգականաց իւրեանց՝ երթալ յանապատէ աստի գնացին՛ի վանքն պապականաց, կերլով անդ՛ի միաբնին ընդ վարդապետին և ընդ երեսեակ հիւրոց· ուրանօր մեռաւ վարուառ վառն, և յամի 1856 առաքեցաւ Ռուստիանէն՛ի Պօլիս՛ի կուսանանոցն պապականաց։

---

(1)· ‘‘Թէպէ՞ հոգէ . . . առաջ Մովսէս հոգեւոր Տէր և պարբերչ աշխարհս (իմա ամենայն Հայոց) նոր արեգին ծագեցաւ և՛ յերկիրս պարսից եկաւ, բազում կարգ և սահմանս դրեաց, զանազան ուղղաց, արանց և կանանց վանս էր հաստատեաց, որ և Աստուածատուէր մահէ խօլայ եղբաղարին հրամայեաց գնանց հինաւ ընտանի, նա է՛ր հալալ արդեամբն ձեռնտ, շնորհօք և կարողութեամբն Աստուծոյ հիմնարկեաց գաճար գերանաշէն յանուն առաքելոց հիմնարկեաց, և զարշարեալ կահից և լապտերօք արար գեղեցկապատ և ճոխաբեռնութեան անմահ ընծայից գերեզման . . . ,, : Այս արձանագիրը գրեալ՛է վերայ գալարածոյ բլրոյ կայ և պահի՛է նոյն հնաւանոցն։

(2)· Լինելն այն խօլայ եղբաղարս պապ էզխանապետին եղբաղարսատէ լինի յայտ, զի՛ն նմին արձանագրութեան յետ էդեղեցոյ ընթերանն յայտնելոյ՝ յետագայն ‘‘Աստուած օրհնէ նախ զխօլայ եղբաղարն ‘‘որ ձեռնտ զեդեղեցին խըշերով և գնգոս գեղոյն, և ետ վաղմ և ‘‘յետագայ էդեղեցոյն դէդ խուչ՝ դէդ Ա֊ետարան՝ դէդ այսմաւուրք, դէդ ‘‘սկիհ՝ դէդ շուրջառ՝ դէդ սաղաւարտ դէդ ասպանէ ծածկոց, երկու ‘‘մոմտան, դէդ սկահ ազնիւ։

‘‘Աստուածդ դէդն ետ հատուցանէ, և զի՛ր արքն Նազարէթն անքակ ‘‘պահէ’’։

(3)· Աղայ Յակոբ Պետրոսեան՛ի հայաստանէ գաղթեալ՛ի խորին Չինգլաստան՛ի գիւղն էրնէլի ղրպետ Հնդիկ ընտանեաց, և ապագայ կնիկ յորէ և ղնարկ դնչնի ահարկու լինել անուան նորա։ Հաստատակեաց գնացեալ Յակոբ անասնեալ լինէր էր, հասպատան՛ի հաստատ և սերոյ էսրեգծութեան, ասպէ ասէ այն հասանաց հիմնանութեան ղարանիկէր ղուրբ էր ինձ ապանիկ գիտաբոյ։ Այնձանեցաւ նա էրթալ վէղպատան ամօ յաստղ, այլ արդեւ նորա ոչ ընդունելով ընդ ղաւդ Հօրն էսրեգծութեան՝ վախեցեալ գնգնութեանց նորա և ինչեանց վախեցան կենօք։ Ամասին նորա հեղինէ պահանի՛ն կայ կենդանի՛ ղարդարեալ էսրեգծութեամբ։

(4)· Ի նմին գալարածոյ արձանագրութեան կայ յետագայութիւն, ‘‘Աստուած ողորմի նոյս ինձ Բագրատունոյ հոգւոյն՝ Ա֊ետափաշէ դստերդ ‘‘նոյս Ո֊ստանէ հոգւոյն փալին վաղմ կանանց վանդին մին ձեռնտէ ‘‘ար Ձ՛ մախալ ոսկերածն, մին պարիկեր գեղնոցաց ,, : (այսինքն գին ‘‘նորա արծէ հինգ հարիւր գեան) :

(5)· Ի խորգրէր գրեալ՛է հնգանանութենէ հաստանաց՛ի Բաստանէ Աղբեայ 87, ասա Աստղնորդն Ամենագիտէն վանաց։

(6)· Նոյս Հանգիստ Մարգերոսեան էր հոս նա անգամ Հոգեբարձուց, այլ նա յամենայն Յունվարի 1858 ամ՛ի կենաց պահանեցաւ։

(7)· Յարձանագրութեանն այնմիկ յետագայէ ‘‘Աստուածային սերոյն ‘‘վառեալ և՛ի գնանութեան ղարծեալ Աստուածատէր և բարեպաշտ այր ‘‘Աստուածոյ ողորմած հոգի Լանգրէ որդի Պարոն Աղբեան, որ համա‘‘նգ յօժարութեամբն էր ղաւրիւրոյ (արձանագրէն) ղարգէալ մօտ ‘‘ոչգին եւ վաղմ և յետագայ էր ծնողացն . . . . . ,, ։

ԿԼՈՒԽ ԿԸ.

Մրոնեն եկեղեցեաց ընդ լծով հարկապահութեան :

ՈՒ. Ի Թուականի Հայոց 1120 (1671) ՚ի սուրբ Աստուածածին վանքն Հազարջրիք գեղջ որ ՚ի գաւառն Փերիու, նստէր առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս, և ունէր զքանի միաբան վարդապետս :

Որոյ ՚ի վարդապետաց անտի Յոհան անուն կամեցաւ ընտանալ զաթոռիճան եպիսկոպոսութեան, այլ Ստեփաննոս Առաջնորդ ՚ի լսել զայն՝ արգել զնա յայնմանէ սակս իւրոյ անարժանութեանն : Տեսեալ Յոհան վարդապետի թէ ոչ կարէ յայտնի ձանապարհաւ հասանել իւրում՝ նպատակին՝ գաղտ յօրինեաց զմանսարն իւր՝ ժողովրդոց ոմանց վկայել տալով ՚ի նմա, և արար զկնիք ըստ կնքոյ Առաջնորդին և կնքեաց զայն, և պատրաստելով զընծայս վանն Հայրապետին՝ գաղտ եւ ՚ի վանաց անտի և եկեալ ՚ի Ջուղայ գնաց ՚ի Պօլիս, և անդ ընկալեալ զաստիճան եպիսկոպոսութեան ՚ի Յակոբ կաթուղիկոսէ՝ վերադարձաւ ՚ի Ջուղայ և գնաց ՚ի Փերիայ : Ի լսել լինել Ստեփաննոս Առաջնորդի զհասանել Նորա ՚ի Փերիայ ՚ի գեօղն Խօջիղալայ՝ առաքեաց առ նա պատգամաւորս և ասաց թէ որովհետև զաղտագողի ստացար զկարգն եպիսկոպոսութեան, վանորոյ մի եկեսջիր ՚ի վանքն, այլ Նորա անլուր գտեալ առաջարկութեանն այնմիկ՝ գնաց ՚ի վանքն, վանորոյ Առաջնորդն հրամայեաց կալնուլ զնա և պահել ՚ի փոնատան իբրև ՚ի բանտի, իսկ ՚ի գիշերին եկեալ ազգականաց Նորա քաջին զգուռն փոնատան և փախուցին անդէն զվարդապետն : Իրրև արձակեցաւ նա յարգելանաց անտի գիմեաց արշաւակի Այասպհան քաղաք՝ գնաց ՚ի գուռն Մօլլքաշի գրնպետին՝ և աւրացաւ զգրիստոս : †

Օգտս գրեմ՝ հետևելով բանիցն Ստեփաննոս երիցու որ է ՚ինոյն հազարջրիք գեղջէ : Իսկ յԱնապատն կուսանց ՚ի Ջուղայ, յիշատակարան ձեռագիր Ճառընտրի միոյ այսպէս պատմէ յաղագս այնր : « Այս երջանիկ վարդապետս (Դաւիթ եպիսկո-
« պոս Ջուղայու) ունէր աշակերտ մի Ստեփաննոս անուն, և
« սա եպիսկոպոս գոլով և սոցա ունէին աշակերտեալս բա-
« զում, և մի աշակերտ անուն գոլով Յոհան, և սա ապրե-
« տամբ գոլով գնաց ՚ի Ստամբօլ սակս իշխանութիւն (իմա
« եպիսկոպոսութիւն) առնելոյ, և առաւ իշխանութիւն ՚ի-
« ձեռացն Սրբազան կաթուղիկոսի Յակոբայ, և եկաւ ՚ի Սպա-
« հան (յամի 1120, կամ 1671) և սոքա Ստեփաննոսն և
« Դաւիթն, վասն ինչ պատճառի ետուն ՚ի ձեռս Դատաւո-
« րաց և զնա տուժեցին տանջանօք, և այս Յոհան նոր վար-
« դապետն ՚ի սիրտ եղեալ գնաց տաճկացաւ, և բազում չարիս
« հասոյց վարդապետացն Դաւթի և Ստեփաննոսի, և գնաց
« առ Թագաւորն (Շահսլէյման) և եղ զվարդապետսն ՚ի զընդ-
« գան, քանզի վեց ամիս է որ կան ՚ի զընդգան, և բազում
« տուգանս տուեալ են, դեռևս չեն ազատեալ, » :

Փոքր ինչ կայ մանաւանդ տարբերութիւն ընդ բանս Ստեփաննոս երիցու և սոյն յիշատակարանի, այլ գոգջիր նոյն են իմաստքն ըստ նիւթոյն :

Ը. Իբրև ուրացաւ Յոհան՝ չարախօսեցաւ առաջի Շահսլէյման Թագաւորին և յայտնեաց Թէ եկեղեցիք ունին զհոս զարդս ոսկւոյ և արծաթոյ՝ և պրպռեաց զնա Թէ ընդէմ Հայոց :

Ի Թելադրութենէ անտի ՚ի նմին ամի հատատեաց Թագաւորն զհարկս ՚ի վերայ ամենայն եկեղեցեաց՝ գրելով ըզհրովարտակ յայն սակս, որոյ այս է Թարգմանութիւն :

« Ֆրման հանրահռչակ, զի գահանայք և վարդապետք
« Հայոց որք կան յԱրքայականիստ քաղաքն Սպահան և յայլս,
« գումար չորս հարիւր քսան և չորս Թուման ՚ի կողմանէ
« հարկի Թանգուզիլ †† տարւոյ՝ (և յամենայն տարւոջ)
« յեկեղեցեացն Հայոց որք կան յԱսպահան և ՚ի ոտհմանա-
« կիցսնորա՝ պահանջեսցի, ըստ նշանակեալ քանակութեանն

«որք ի ներքոյ գրեցան յանուն իւրաքանչիւր եկեղեցեաց։
«և յանձնեսցի այն գիր զանձարանին Տէրունեաւ, ստանալով
«ի նմանէ զանդորրագիր։ Դիւանադպիրք Տէրութեան՝ զա-
«սացեալն գումարն քաժանեսջիք ի վերայ գահանայից և
«վարդապետաց ըստ նշանակեալ կանոնին, որ թէ ոչ կատա-
«րեսցի, պահանջեսցի ստիպով»։ Գրեցաւ յամենայն Պա-
«ճար, յամի 1085 (1671)։

Յաղագս, եկեղեցւոյ հին Ջուղայու։

Պանքն Ամենափրկչի	Թուման	50։
Մէյդանի եկեղեցի, 1	„	20։
Մուրատէնց, 2	„	25։
Խօջէմալէնց, 3 ի Մէզան Թաղի	„	6։
Խօջայ Աւետքի, 4	„	15։
Խօջայ Նազարէնց, 5	„	12։
Խօջայ Կարապետի, 6	„	14։
Խօջայ Մխրան, 7	„	8։
Խօջայ Շահվէլէնց, 8	„	20։
Խօջայ Պարիք, 9	„	20։
Խօջայ Պահրամէնց, 10	„	30։
Սուրբ Յովհաննէս, 11	„	10։
Օհանայ վանք	„	5։
Կուսանաց վանք	„	30։
		265։

Եկեղեցւոյ նոր Ջուղայու։

Յակոբջան, 12	15։
Աւետ Յամբուշ, 13	12։
Խօջանէնց, 14	6։
Մէյդանի սուրբ Յակոբ, 15	5։
Խօջայ Աւետէնց կից տան, 16	5։
Պահանայի, 17	5։
	48։

Եկեղեցւոյ Փերեայ Գումուխ։

Պարամարայ	1։
Կամակերտ	5։
Քանդհալվայի	3։
Ակռանդարի	2։
Ինկրոյ	2։
Սընկերտ	1. 5։
Ղանակ	1։
Խոյիգան	1։
Մելակերտ	2։
Սրբշկան	3։
Շահբուլաղ	1։ 5։
Անգիբարան	3։
Խուճգ	„։ 7։
Կրին Խոյգանայ	2. 5։
Ջամին	„։ 5։
Տաշքէշան	1. 5։
Ղոլրան	2։
Փընըստան	1։
Մէյտանակ	„։ 7։
Ազարջիք, վանք 30, և եկեղեցին 1	31։
Ղզօլայ	1. 2։
Մէվրըստան	„։ 5։
	67. 6։

Եկեղեցւոյ Բուրվառու Նահանգէ։

Փարչիս գեղջ	3։
Փահրայ „	2։
Ղումայ „	1։
Ռահիվ „	1։
Վալարդ „	1։

Ղամախիրա	գեղջ.	2 :	
Վիշկրիզ	,,	1 :	
Ոսկուղի զանկ	,,	1 :	
Վեհկինով	,,	1 :	4 :
Ղայլուայ	,,	1 :	
Փերալէ.	,,	1 :	
Գուբահարայ	,,	4 :	
Ինաֆշ	,,	3 :	
Բօռք	,,	2 :	
Կարմշան	,,	2 :	
Հավըալայ	,,	1 :	5 :
Խօսրովապատ	,,	1 :	5 :
Մուրատխանի	,,	1 :	
Սկվիրեցի	,,	1 :	
Ոսկանօշ	,,	2 :	
Ղէշմիտաղայ	,,	1 :	
Ոսկի	,,	1 :	
Հարիճայ	,,	1 :	
Ղարբաղ	,,	1 :	
Ջալիարուճակ	,,	1 :	
Ղարթաղ	,,	1 :	
Կըրիթ	,,	2 :	
Հահբուլաղ	,,	1 :	
Ոչ Ղանակ	,,	1 :	
		43 . 4 :	

Գումար հին Ջուղայու եկեղեցեաց հարկի.	265 :	,,
Գումար նոր Ջուղայու եկեղեցեաց հարկի	48 :	,,
Գումար փերիտու զաւառի ևս ևս	67 . 6 :	
Գումար Բուրվարու ևս ևս	43 : 4 :	
Գումար . . .	424 :	,,

դ. Այդ հարկատուութիւն եղեւ կարի դիւրասահիթ սակս Ջուղայու, նախ՝ զի ոչ միայն գումար հարկին 424 թումանն վճարեալ լինէր, այլ ընդ տասանորդին և ընդ այլ ճախուցն ի պետս արքունիք հարկահանիցն, այն գումար ժամանէր 800 թումանն, երկրորդ՝ զի բազում ճախսարարութիւնք եղեն յաղագս հանելոյ զհրովարտակս սակս խափանելոյ զայն, այլ յետ ստանալոյ հրովարտակին՝ զարձեալ լինէր պահանջումն այր՝ և ի դերև ելանէին ճախսարարութիւնքն, և երրորդ՝ զի բազում կաշառք տուեալ լինէին նախարարաց յաղագս զբարիս խօսելոյ առաջի Թագաւորին զի բարձցի այն հարկատուութիւն, այլ յայնժամ Շահսէյմանն Թագաւորի յաւէտ խրեանց օգտից քան թէ ժողովրդականաւ իրաւասերութեան ուշ ունելով՝ պահանջէին զայն հարկ իբրև իրաւունք կանոնաւոր հարկի ըստ սահմանելոյն նախորդ Թագաւորաց։

կարգեմ ի ներքոյ զԹարքմանութիւնս քանի մի հրովարտակաց ըստ այնմ մասին տուեցելոց ի Շահսուլթան Հօսէյնէ։

Ա.

,, Հրաման հանրահռչակ, այն թէ՝ որովհետև յառաջ
,, քան զայս ի ժամանակս Թագաւորութեանն Հօրն իմոյ
,, (արքայութեանն արժանացելոյ որոյ ի գերեզման լոյս
,, ճագեսցի) զհարկս եկեղեցեացն Ջուղայու (18) Թողեալ
,, էր յապահարկութեան, և երկրորդապէս եղեալ էր տնօ-
,, րինութիւն զի ըստ կարգի միւս եկեղեցեացն՝ ստասցի հարկն
,, նոցա, և յայսմիկ ժամանակի Թախանձաբար աղաչեցաւ և
,, խնդրեալ եղեւ՝ Թէ որովհետև հին Ջուղայ յամենայն տարի
,, վճարեալ է, և ոչ ոստափառուհի . . . . Հանին իմ խընդ-
,, րեաց զի զհարկս նոյն եկեղեցեաց ըստ առաջնոյ կարգին
,, բաշխեսցի, յայն սակս ի շնորհս յարգելի միջնորդութեան
,, Թագուհւոյն իսկզբանէ ինն ամաւ Ղուրէ (19) տարւոյ ըզ-
,, հարկս յիշեալ եկեղեցեացն բաշխելով՝ տնօրինեմք զի մի
,, պահանջեսջիք։ Մեծ Դիւանապետիք զայս հրովարտակ

,, 'ի հաստատուն Դիւանական մատեանս օրինակեսջիք, ըզ-
,, հարկս յիշեալ եկեղեցեացն մի և ս պահանջեսջիք, և ար-
,, ժանի Հաւաքանդուլթեան համարեսջիք զայս արգելական
,, հրաման: Գրեցաւ յամենայն զինջաթօղ հարամ, յամի 1111
,, (1695):

ԽԸ.

,, Ընդ հրաման հանրահռչակ, զի ըստ անվախճան արքայական
,, ընորհացն եղելոյ վասն վարդապետաց՝ քահանայից՝ թա-
,, ղաւորաց և ժողովրդականաց հին ջուղայու Սպահանայ,
,, հարկն եկեղեցեաց յիշեալ մասին որ պարգևեցան յառաջ
,, քան զայս, և դարձեալ հրամանաւ հրովարտակի տնօրինե-
,, ցաւ զի ստասցի, վերստին 'ի սկզբանէ 7 ամսոցն Թանդու-
,, զիլ տարւոյ 'ի ընորհս գլխոյ Թաղաւորի՝ բաշխեցաւ, և
,, հրամայեմք զի յետ այսու սակս հարկի յիշեալ եկեղեցեաց
,, 'ի վարդապետաց՝ 'ի քահանայից և 'ի Թաղաւորաց յի-
,, շեալ ջուղայու ոչինչ պահանջեսցին, և յայն սակս մի նե-
,, ղեսցին, այլ զկրիչ և զքայլ ամփոփեալ կարձեսցին:
,, Բարձրաւատիս.... Ամիրախօռքաշէ ոստիկան ջուղայու,
,, հաստատուն իմասջիք զ'ի սմա գրեալսն, և զհարկս եկե-
,, ղեցացն ըստ առաջնոյ պարգևաբաշխ տնօրէնութեանն՝
,, բաշխեալ համարեսջիք, և մի Թոյլ տայջիք 'ումեք յայն
,, սակս զնեղութիւն հասուցանել վարդապետաց՝ քահանա-
,, յից և Թաղաւորաց ջուղայու, և ծանիջիք զայս հրա-
,, ման անդիմադարձ հակառակելոյ, զի լինելոց է առ'ի պա-
,, տուհասից, վասնորոյ զգուշութեան պէտք են: Դիւանա-
,, գրիրք մեծի Տէրութեան զգրեալսն 'ի սմա 'ի վաւերական
,, Դիւանական մատեանս ձեր օրինակեսջիք, և ըստ այսմ մա-
,, սին մի և ս արասջիք զպահանջուածն:

,, Գրեցաւ երկրորդ ջամադիօլ, յամի 1119 ,, (1703):

Կ.

,, Ընդ հրաման հանրահռչակ, առ այն որովհետև քահանայք
,, նոր ջուղայու՝ փէրիու՝ Խուրվաբու՝ և գեանդեմանու և այ-
,, լոց գաւառաց քաղաքիս Սպահանայ, աղաչեցին մերում վե-
,, հափառութեան, զի 'ի ժամանակս հանդուցեալ Թազաւո-
,, րաց ոչ էր եղեալ կարգ և կանոն գնելոյ զհարկս 'ի վերայ
,, եկեղեցեաց հայոց, և յառաջ քան զայս առ նախանձու և
,, ըստ Թելադրելոյ Թշնամեաց, մանաւանդ ըստ սադրելոյ նո-
,, րահաւատ Շիխմամէնի †††(որ էր 'ի միաբանից Էջմիածնի
,, և Թշնամացեալ էր ընդ ժողովրդեան Հայոց) սահմանա-
,, դրեցաւ հարկ վասն եկեղեցեաց Հայոց: Ցետ այնորիկ մինչ
,, յայտնի եղև բարձրագոյն Դիւանին՝ Թէ յիշեալ գործն նո-
,, րահաստատ է, Թողուի ընորհեցաւ նոյն հարկն, այլ վե-
,, րըստին հաստատեցաւ հարկն այն՝ և պահանջեցաւ այն յեկե-
,, ղեցացն զի վճարեսցի, որոյ աղագաւ բազումք 'ի պատճառս
,, հարստահարութեան ծառայից ոստիկանաց՝ փախուցեալ
,, գնացին 'ի սահմանս օտար Տէրութեանց, վասն այնր'ի նե-
,, ղին վիճակ անկանելով գործոյ նոցա աղաչեցին զի հարկն
,, եկեղեցեաց ընորհիւ արքայական բարեգթութեան Թող-
,, ցի, զի ըստ աւուրցն առաջնոց հանգիստ եղիցին: Եւ զնա-
,, խարարս միջնորդս արկեալ էին զի ըստ վաղնջուց կարգին
,, ընորհեսցի հրովարտակ վասն ազատութեան հարկաց եկե-
,, ղեցաց, ուստի որովհետև յիշեալ գործն չէր յաւուրց
,, առաջնին Թագաւորաց՝ անվաստեր է, վճռ 'ի Խլանել տար-
,, ւոյ զհարկս նոր ջուղայու եկեղեցեաց և այլոց գաւառացն
,, Սպահանայ ազատութիւն ընորհեցաք, զի յայսմհետէ ըստ
,, սահմանագրեալ կարգին վեհափառ Շահաբասայ յանդոր-
,, թութեան եղիցին, և պարապետացին յաղօթս վասն հաստա-
,, տութեան յաւիտենական Աթոռոյ Տէրութեանն:
,, Պիւանագպիրք մեծագոյն Դիւանի, զհրաման հրովար-
,, տակիս հաստատուն համարեսջիք, և 'ի Տէրունէ տուժարս
,, օրինակեսջիք, և յայսմհետէ մի և ս պահանջեսցի (հրով-

« արտակ) սակս այնր : Գրեցաւ յառաջնում թերթիւ ամոյ,
« յամի 1125 . (1709) :

Պ .

« Ընդման հանրահռչակ, թէ որովհետև յառաջին սանն
« վանն հարկի եկեղեցեաց հին և նոր Ջուղայու և սահմա-
« նակից գաւառացն փէրիոս՝ Բուրվարու՝ Գեանդիմանայ և
« այլոց գաւառաց Սպահանայ ՚ի Դիւանական տումարս հարկ
« ինչ ոչ գոյ հաստատեալ, այլ միջոց մի յառաջ զբպար-
« տուեցամբ թշնամեաց՝ մնացուածովք Ընխոմիչն անուն նորա-
« հաւատի սահմանեցաւ հարկ վանն իւրաքանչիւր եկեղե-
« ցեաց, և յետ այնորիկ վարդապետք՝ քահանայք և ժողո-
« վրդականք յիշեալ կողմանց՝ աղաչեալ էին թէ յիշեալ ա-
« ռարկայն է նորայարմար, ուստի ըստ Թախանձանաց նո-
« ցա ՚ի շնորհս արքայական բարեշնորհութեան բաշխեցաք
« նոցա զգուշմար նոյն հարկի, սակայն եկրորդապէս և վե-
« րըստին տնօրէնութեամբ, ՚ի ղուխլ 11 27 ամի՝ յիշեալ գու-
« մարն հասեալ եղև զանձարանին տէրութեան, և եղև հա-
« տուցումն այր առ դանձապետն : Այլ յայսմ ժամանակի
« միւսանգամ՝ Զաքարիայ քահանայէ Թաղ՝ վարդապետ՝ Թա-
« ղապետք և քահանայք հայոց Ջուղայու աղաչեցին և
« խնդրեցին, զի յիշեալ գումար հարկին Թողցի, յայն սակս
« արքայական շնորհաճութեամբ պարգևեցաք յիշեալ ժո-
« ղովրդոյն զգուշմար հարկին նշանակեալ եկեղեցեացն, և
« ՚ի շնորհս գլխոյ Թադաւորի հրամայեցաք զի յետ այսու ըստ
« այնմ մասին մի եղիցի պահանջումն ՚ի նոցանէ : Յարձրա-
« պատիւ գանձապետք, զգուշմար յիշեալ հարկին ՚ի հաշուոյ
« ձերոյ արտահանիջիք, և ըստ այնմ մասին մի պահանջես-
« ջիք : Դիւանադպիրք մեծի և բարձրագոյն տէրութեան,
« զգրեալսն ՚ի սմա հաստատուն համարիջիք, զգուշմար յի-
« շեալ հարկին ՚ի դիւանական հաստատուն տումարաց ձերոց

« ՚ի բաց հանիջիք, զի նոր կարգ մի լինիցի, հակառակ այսմիկ
« հրամանի մի ինչ արասջիք, և զայս արգելք ծանիջիք և
« համարիսջիք արժանի Ճնազանդութեան : Գրեցաւ յամ-
« սեանն Զիլաթօլհարամ յամի 1128 (1712) :

Ալերոյ եդեալ չորեքին հրովարտակքն են տուեալ ՚ի Շահսուլթան Հօսէյնէ, այլ նոքա ցայն վայր ոչնչեցեալ են. նեղգործութիւն՝ ցորքան կաշառ և պարգև հայոց իշխանք տարկուաց երևեալ են առաջի նորին վերհափառութեան և նա-խաթարաց նորին, իսկ յետ զկաշառսն և զպարգևսն ստանալոյ, դարձեալ նորոգեալ լիներ հրամանն ստանալոյ զհարկս եկեղեցեաց :

Ը . Յողովուրդք Ջուղայու ոչ ևս կարէին հատուցա-նել միանգամայն զծանրութիւն հարկին, զտուգանսն և զկե-ղծմունսն իւրեանց՝ և զհարկն եկեղեցեաց, պարտաւորեցան եկեղեցիք հին Ջուղայու վասն ամի 1720 զարծաթի զարդս մի յեկեղեցեացն տալ ՚ի վճար անիրաւ հարկին : Յուցակ յայնմ-շանակեալն, (որ էք որոշակի գրեալ ՚ի քահանայից իւրա-քանչիւր եկեղեցեաց և կնքեալ վասն հաստատութեանն՝ ըստ առաջարկելոյն Ատուածատուր և Յակոբ վարդապետաց) :

« Սուրբ Գէորգայ եկեղեցւոյ սպասաւորք տէր Յարու-
« թիւնս և տէր Յովհաննէս երկու լիտր և մի չարէք ար-
« ծաթ տուինք (ա) . որ է 13 մեծ և փոքր խաչ :

« Սուրբ Յակոբայ եկեղեցւոյ սպասաւոր տէր Յովհաննս,
« երեք չարէք արծաթ սահաթասազ դաւառութիւն տարանք
« վանքն ողորմած հոգի Զաքարիայ վարդապետին Թաֆիլ
« (բ) . (յանձն) արարինք, որ է մի քուրվառ, 11 խաչէր,
« 20 սաղավարդի խաչէր, արծաթէ սաղավարդներ, որ ողջե
« (դ) . քաշն երեք չարէք էր :

« Սուրբ Թեթղահէմի եկեղեցւոյ սպասաւորք տէր Ատուա-
« ծատուրս և տէր Յարութիւնս ավինք, ը . կանթեղ, ա .
« տապանակ, ա . քուրվառ, բ . քսակիկ, դ . մաղզման, ա .
« քսակու աւազան, է . ձեռնախաչ, ա . պատուանգան, որոց
« քաշն է մի ղիտր երեք չարէք :

« Սուրբ Թումայի եկեղեցւոյ սպասաւոր Տէր Մարտիրոս և
« Տէր Յովհաննէս երկու ղետր արծաթ տվինք, որ էր խա-
« չէր և խաչերի խնձորանի :

« Սուրբ Յովհաննիսի եկեղեցւոյ սպասաւոր Տէր Մարգարս
« և Տէր Յովաննէս, տվինք մին թուրվառ, ա. քշոց, ա. ձա-
« ձանչ, ա. մեռնամանի, ի. խաչ, ա. արծաթով բռնած
« սաղաւարդ, ա. սկոհ պատուանդան, որ է քաշն մին ղետր
« կէս չարէք, ա. վակաս և մի քամար :

« Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյն երէք ղետր և մի չարէք
« արծաթ տուինք Տէր Ստեփանին ձեռօքն :

« Ճահվէլէնց սուրբ Յովհաննիսի եկեղեցւոյն սպասաւոր
« Տէր Մատթէոս և Տէր Յոհաննս տվինք ա. ղետր արծաթ,
« ա. թուրվառ, ա. սկիհ, ա. քշոց, ա. մեծ խաչ, ի.
« թեթև խաչ, ղ. Ջուղտ (դ) քամար : ա. Աբետարանի
« կոստղ, դ. Աբետարանի դուշայ, (ե). ղ. սաղաւարդի
« խաչ :

« Սուրբ Ստեփաննոսի եկեղեցւոյ սպասաւորք Տէր Ստե-
« փաննոս, Տէր Մարտիրոս, Տէր Բարսեղ և Տէր Խաչա-
« տուր, լուսաւորոգի Աղայ Յակոբջանի ամբրոնին (ը) ե-
« ղետր արծաթ, որ է սկիհ՝ խաչ՝ և մեռնամանի տվինք
« Ջաքարիայ վարդապետին :

« Սուրբ Հոգի եկեղեցւոյ սպասաւոր Տէր Մարտիրոսս գի-
« տակ եմ, որ չորք (է). արծաթէ խաչ, ը. քշոց, խաչի
« պատուանդանները, սկզոյ պատուանդանները, և էլ քսուր
« արծաթեղէն հինց (ը). սպասատուլ (ի). տարան որ
« քաշեցին ա. ղետր կէս էր :

« Փոռանշինոյ ազգը Նազարէթի եկեղեցւոյ Տէր Սիմոնի
« կողակից Սանդուխտս գիտակ եմ, որ քէթխուդէքն անօթ ին
« ուզում, երկու մեծ խաչ իմ կենակից Տէր Սիմոնն տարաւ
« վանքն տվէց քէթխուդէքոնցն, հիսուս մեզ ասաց, քաշն մի
« ղետր ,, :

Ձնք յիշատակութիւն յաղագս միւս եկեղեցեաց Ջուղա-
յու : Գումար արծաթիցն ստացելոց ի տան եկեղեցից իվեր
անդր նշանակելոց է 16 լետր և կէս և կէս չարէք :

Ե. Ելիսաբէտ ստացան հայք զբերեալն հրովարտակս ի
Շահսուլթան Հուսէյնէ սակս ապահովութեան եկեղեցեաց,
այլ վհարուն հարկի եկեղեցեացն տակաւին շարունակեալ
մնաց ցտիրելն Աղուանից զԱպահան : Ջուղայեցի Հայք առանց
յուսարեկ լինելոյ, դարձեալ մատուցին զաղերս իբրեանց առ
Շահ Աշրաֆ, յորում և ընկալան զհրովարտակ ըստ յետա-
գայ թարգմանութեանն :

« Ի բանին հանրահռչակ, ղի որովհետև յայսմ ժամանակի
« քհանայթար՝ վարդապետք՝ թաղապետք՝ քահանայք և
« ժողովուրդք հայոց, ի կողմանէ հարկի եկեղեցեաց հին և
« նոր Ջուղայու՝ և գաւառացն փերիսա՝ Բուրվարու՝ Գեհան-
« դըմանայ և այլոց սահմանաց Սպահանայ, եկեալ ի սպաս
« մեր քողքեցին և խնդրեցին զապահարկութիւն եկեղե-
« ցեաց, և ապացուցին զայն խնդիրք իբրեանց մատուցանելով
« ի տեսութիւն մեր զհրովարտակս առաջին թագաւորաց ի
« ժամանակէ սաֆափեանց՝ որք թողեալ էին զայն հարկ :
« Յաղագս այնորիկ ըստ կարեկցական ընդհաց տերութեան
« ողորմելով նոցա, զգուշմար եկեղեցական հարկացն՝ ըստ ա-
« ռաջնոյ ժամանակին թողուլ հրամայեցաք, զի յետ այսո-
« րիկ ըստ այնմ մասին մի ինչ պահանջեսցին ի նոցանէ : Դի-
« րիկ ըստ այնմ մասին մի ինչ պահանջեսցին ի նոցանէ : Դի-
« տանալիք մեծի տէրութեան զվերոյ գրեալսն հաստա-
« տուն իմանջիք, և զառաջեալ գումարն ի դիւանական
« տուժարաց արտահանիջիք, զի մի նոր կանոնաւորեալն այն՝
« հաստատեսցի : Ջայսմանէ հրամանիս մի լինիցի զանցառու-
« թիւն, և սակս ամենայն տարւոյ մի պահանջեսցի նոր հր-
« րովարտակ, այլ զարտ վարկեալ կատարումն ըստ այսոցիկ
« բանից : Գրեցաւ յամսեանն բամազան յամի 1137 (1721) :

Վհահանայք ի նոր ջուղայ յիշատակեալ վեց եկեղեցեացն նոր
Ջուղայու գրին ի Հնդիկս առ խոջայ Մալխան անուն ոմն
գետրուսեան երևանցի յաղագս առաքելոց զծախան եղեալ
սակս ստացման վերոյդրեալ հրովարտակին : Բանք նոյն խընդ-
րատրոյ ըստ այսմ մասին արժանի յիշատակութեան գոլով,
նշանակեմ ի նոր ջուղայ :

« Քրիստոսի նուաստ ծառայք՝ երևանցոց սուրբ Ամենա-

„ փրկչի մեծ եկեղեցւոյ հասարակ քահանայք, սուրբ Յակո-
„ բայ եկեղեցւոյ որ մակ անուամբ կոչեն Բաղաթայ՝ հասարակ
„ քահանայք, սուրբ Մինասայ եկեղեցւոյ հասարակ քահա-
„ նայք՝ որ առեն Մէյդանի, սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ
„ հասարակ քահանայք՝ որ է գաղկեցւոց, սուրբ Լուսաւորչի
„ եկեղեցւոյ հասարակ քահանայք՝ որ եմք Թարւզեցւոց, և
„ սուրբ Աւետիքի եկեղեցւոյ հասարակ քահանայք՝ որ եմք
„ գաւառապատցւոց, յորոց օրհնութեամբ և սիրով ողջոյն
„ հասցէ բարեպաշտոն և ողորմած խօջայ Մալխանիդ . . .
„ Աճ քեզ և մեր ժողովուրդն օրհնէ, այնչափ փող (ՃՐ).
„ էին խալխէլ (ԺՈ). վասն սուրբ եկեղեցեաց մալի-
„ ին (ԺԲ), բաշխելոյ Ռաղամին (ԺԴ). համար, որչափ ոչ
„ գոյր չափ, որ ոչ կարէաք և յիշել զանուն Ռաղամին
„ հանելոյ, վասնորոյ յետին Թշուառութեան միջի կայաք,
„ ողորմածն Աստուած ըստ իւրում մեծի ողորմութեանն մեզ
„ ողորմեցաւ որ զքեզ ՚ի հեռուստ յորդորեաց զայն Թուղքն
„ գրել մեզ, յորում գրեալն էր մեզ՝ Թէ երփ (ԺԴ). դուք
„ սուց եկեղեցեաց մալիին բաշխել է ռաղամ հանէք, և նորին
„ հաստատուն սաւաղն (ԺԵ). աղաչիմք (ԺՂ), ինձ, եա
„ մին ՃՐ Թուման ողորմութիւն տամ, որ հասանի ձեզ: երփ
„ այս յուսադրական գիրն եհաս, ամենեքեան նոր հոգի
„ առաք և կրկին յոտին կանգնեցաք, և նոր այլ արզ (ԺԷ).
„ արարաք, և փող խառնեցաք, ինչ լսածես Թէ որչափ
„ կախեցաք գանեցաք՝ և նախատեցաք՝ զոր ոչ լինի ի ըստ
„ միոջէ ընդ գրոյ արկանել, մինչ որ Աստուած մեր ռահ-
„ մըդիլ (ԺԸ). շահի սիրտն ռահմ (ԺԹ). ձգեաց, որ այս
„ ռաղամն մեզ ընորհեաց, որով մեռեալ էաք և կենդանա-
„ ցաք, քանզի եթէ չէր բաշխուէլ, Աստուած մի արասցէ
„ այժմ եկեղեցիքս մեր և քահանայութիւնն քարձրեալ
„ էր, քանզի ՃՐ Թուման խարջ գնաց, այժմ գոհանամք
„ զԱստուածոյ որ ոչ անտես արար զմեզ զծառայս իւր . . .
„ այժմ փրիստոսիւ ազատ եմք ՚ի հարկապահանջողաց, ա-
„ պա ՌՃԺ Թումն պարտք այ մնացել եկեղեցեաց վերայ, որ
„ աւնէն ՌՃՃ զեան շահ եմք քաշում, քանզի հնդուլց (Լ).

„ եմք առեալ, և զմեր սուրբ եկեղեցեաց սրբութեան սպասք
„ և անօթքն աւէնն անաստուած կռապաշտից մօտ գրաւու-
„ մէ, և սուրբ եկեղեցիքս մեր աւէնն անզարդ՝ մերկ և կո-
„ ղոպուտ մնացեր է, և մեք այլ երես չունեմք մեր ժողո-
„ վրդեան մօտն որ փող ուզեմք, վասնորոյ մեծաւ յուսով
„ զայս խնդրեցաք առ Աստուած սիրուք քոյ մասլահաթով
„ (ԻՈ). և գիտութեամբ մեր Առաջնորդ Մովսէս Աստուա-
„ ծաբան վարդապետին . . . . . ,, :

Ը. Յետ ստացման հրովարտակին Շահ Աբբասի, Թուխ Թէ վերջացաւ հատուցումն եկեղեցական հարկին, զի յայնմ հետէ ոչ ևս լինի յիշատակութիւն եկեղեցական հարկաց : Ըստ իմ խորհրդածելոյ պատճառն ապահարկութեան եկեղեցաց եղև չվոթումն վիճակի թագաւորութեանն պարսից յետ մուտ գործելոյ Աղուանիցն ՚ի Պարսխաստան, և յետ զօրանալոյ Նադիրշահի և յաղթանակելոյ ՚ի վերայ Աղուանից, զի յայնմ խառն ու շփոթ ժամանակի Թերևս Դիւանական տումարքն Շահսէյմանայ կամ Շահ սուլթան Հօսէյնի կորեալ անհետացան, և հրսման շահ Աբբասի մնաց հաստատուն յաղագս ապահարկութեան եկեղեցեաց :

Յիսուն ամ տևեաց ստացումն եկեղեցական հարկին, որոյ չափս առ պակասն յամն 800 Թուման հաշուելով՝ լինի 40 հազար Թուման : Ահա ես արգասիք չարանախանձ մատնութեան չիք վարդապետին Շիխմամէնի :

---

†. Սուեփաննոս եպիս պատմագիր էջ 26 — 30 :

††. Անան կենպանակերպե պոր-ոյ :

(1). Բելիշահէթ : (2). ոս-ըբ Յակոբ : (3). ոս-ըբ Հոգէ : (4). ոս-ըբ Աստուածածնէ : (5). ոս-ըբ Գէորգ : (6). ոս-ըբ Թովմայ : (7). Անանիայ Աստուել : (8). ոս-ըբ Յովհաննէս : (9). ոս-ըբ Լուսաւորչէ : (10), ոս-ըբ Սուեփաննոս Յակոբեանցն Բաղէ : (11). ոս-ըբ Յովհաննէս Զաքոս Բաղէ : (12). Երևանոյ ոս-ըբ Ամենափրկէ : (13), Թուվլեցւոց ոս-ըբ Լուսաւորչէ կամ ոս-ըբ Մինաս : (14). ոս-ըբ Յակոբ կամ Բողոքոյ ձամ : (15). Գոշէ-ցոց Մէյդանի ոս-ըբ Յակոբ : (16). Քօչէրի ոս-ըբ Նէրսէս :

(17). Ղ՝բաֆէէլէ սո՝բբ Ա՝եփեոց կամ սո՝բբ Նէկոդայս։

(18). Ա՛յս հրե՛լբրտակ է վասն ապահարկո՛ւթեան եկեղեցեաց հին Ջուղայ, ըր ըստ յայտնէլոյ սոյն հրե՛լբրտակէ ի՛ղէալ էր և հայրն նորա։

(19). Լ՝ուկ, Լանգո՛ւէլ, և Լէանէլ՝ են անո՛ւանք հէնգանակէրպէ պրո՛յ։

Ե՛ՓՓ. Է անուն օ՛բացեալ Յոհան վ՛բդապետէ։

(ա). փոա՛ւ։ (բ). յանձն առնել։ (գ). ախնեցո՛ւն։ (դ). ըղձէ։ (ե). օրձո՛ւթ ըղբէց ծայրէց ա՛եփորանի։ (զ). հրամա՛նառուն։ (է). ընդ։ (ը). ամնդէս։ (թ). կողովիվ։ (ժ). ըրամ։ (ժա). ծանե՛ւալ։ (ժբ). հարկէ։ (ժգ). հրամանագիր։ (ժդ). էջէ։ (ժե). օրինակն, գեղափօրն։ (ժզ). առաջէնքէ։ (ժէ). քնդէր, էզդ։ (ժը). ողջմաբառութ։ (ժթ). գիւ՛ղ։ (ի). ՚ի հնդէկէ։ (իա). խոչհրդեամբ։

ԳԼՈՒԽ Գ՛.

ԴՊՐՈՑՔ

ա՛. Գ՝ալաթէ երկրորդ Առաջնորդ սրբոյ Ամենափրկչի վանացն ՚ի 25 Նոյեմբերի 1169 (1720) աւ. Քահանայս սրբ ՚ի առնս իւրեանց ստացեալ ունէին՝ զաշակերտս՝ գրե՛լ զյանդիմանութիւն ասելով Թէ ՚՚ յորմէ՛հետէ զետեղեցան մեր նախ՛՚ ՚՚ նիքն աստ և շինեցին զսուրբ վանս, ընդ նմին և կարգեցին ՚՚ Դպրոց վանիս, զի ամենայն մանկունք աստ ընթերցցին և՛՚ ՚՚ ասանիցին, բայց վասն հեռաւորութեան փոքերց երե՛

՚՚ խայիցն լուսաւոր հոգի Մովսէս վարդապետն բաժանեաց ՚՚ յաւել և սերկուս Դպրապետս, զմիկն Մուրատէնց եկե՛՚՚ ղեցին՝ և զմիկն սուրբ Ստեփաննոսի եկեղեցին, կարգեաց ՚՚ և նոցունց Դպրապետս և ուսուցիչս, որոմ և դուք գի՛՚՚ տակ իսկ էք՚՚։ Ապա արդեւք զի երիցունք մի՛ ի տուննս իւրեանց ուսուցին զմանկունս այլ առաքեացին ՚ի Դպրոցս։

Յայտ լինի ՚ի բանից անտի, զի իսկզբանէ հիմնարկութեանն Ջուղայու ՚ի վանին Ամենափրկչի եղեալ է Դպրապետն։

Գրաջին վարժապետ այնմ Դպրոցի եղև Խաչատուր երեսբրացի առաջնորդ վանին, որում աշակերտեցան Դաւիթ եպիսկոպոս և այլք ոմանք, յետ նորա եղե՛ Դաւիթ Առաջնորդ (1). զկնի նոցա Ստեփաննոս Առաջնորդ և յետ և տասներորդ դարուն էր կոստանդ դպիր։ Որոյ լեալ են հետզհետէ երկերիւր և յիսունաչափ աշակերտք։ Ըստ որում ՚ի ժամանակի այնմիկ ծաղկեալ էր վաճառականութիւնն ՚ի Ջուղայ, վասնորոյ երեւելի իշխանք հոգ տանէին զի մանկունք իւրեանց ուսանիցեն զհաւատարմութիւն, զհաստատակ ընթերցուածն գրոց և զգրագրութիւն, զորս քաւական համարէին սակս իւրեանց որդւոց, ուստի դաստատուածքն նոյն կոստանդ վարժապետի էր թուաբանութիւն, հաստատակ ընթերցողութիւն, գրագրութիւն և ըստ մեծի մասին խրատ վաճառականութեան։ Ընդհանալ է նա յամի 1687 ըզմատեան մի, յորում կան խառն առարկայք, այ խրատ վաճառականութեան, սկզբունք թուաբանութեան, գործածութիւն Աղարիայի թուականին և այլ խառն պարագայք, որոց աղագաւ կոչեցաւ այն մատեան՝ ՚՚ աշխարհագործողք՚՚ (2)։ Սկզբունք խրատոյ ասանդեալ յայնմ մատենի վասն վաճառականութեան են այսոքիկ ՚՚ մի՛ երթիցես մրայն ՚ի հա՛՚՚ ՚՚ նապարհ, անփորձ և անճանաչ ընկերի հետ մի՛ նատիցես ՚՚ և մի՛ քնիցես, գուցէ սպանցէ զքեզ և առցէ զինչս քո՛՚՚ ՚՚ պաշարն ՚ի տաշտէդ առ՝ ընկերն ՚ի տանէդ, քաղաքն ՚ի՛՚՚ ՚՚ ծոցդ պահեա, գրիչ զամբարն ՚ի ջուպդ պահեա, զանթարն՛՚՚ ՚՚ ՚ի թամբալիքդ՝ կշռոքն իւր զրամերովն ՚ի սխտեանդ, կի՛՚՚ ՚՚ ապազան ՚ի զօտիդ, խնչդդ ՚ի գլուխդ, միտքդ առ Աստ՛՚՚

‘‘ ուաճ , ինչ Աստուած ընորհեսցէ քեզ՝ նովաւ շատացիր ...
‘‘ անփորձ մարդոյ ամանաթ մի տար , զամենայն առ և տուրդ
‘‘ գրեա և էս օրէն վաղն մի ձգեր ,, : Ինմին մատենի կայ ո-
տանաւոր մի չինեալ ’ինոյն Եոստանդ վարժապետէ , որ ’ի
մերում ժամանակի և տակաւին երգեալ լինէր այն՝ ’ի մանր
աշակերտացն Դպրոցաց :

Կարդա Մանուկ՝ ուսիր սիրով, զարմանազան բանս ասելով,
որոք լսեն ունկն դնելով գովեն զքեզ փառս տալով :
Սաղմոս կարգեաց , Դաւիթ արքայն , յամէն մարդոյ է պատ-
ուական :
Տէրն տայ քեզ միտք բանական՝ վարժ ասելով ամէն բան :
աշխատութեամբ դու դիր ուսար՝ աղօթելով լինես ար-
դար ,
Նաւահանգիստ ահա գտար՝ խոնարհութեամբ դրուատե-
ցար :
Դաւանութեամբ խոստովանես՝ ջերմ արտասուօք մեղայ գո-
չես ,
Քահանայից գործքն յայտնես՝ սուրբ Հաղորդին արժան
լինես :
Եոստանդ դու քո մեղքն ասիր՝ լալով առ Աստուած յուսացիր,
բանք Հարցմանց ժողովեցիր՝ Թողեր յաչխարհս գնացիր :

Տապան նոյն Եոստանդ վարժապետի կայ ’ի վարդապետաց
հանգստարանին Ջուղայու ունելով զայս տապանագիր ‘‘ տա-
‘‘ պանս այս է միայնակեաց Դպրապետ Եոստանդին որ փոխե-
‘‘ ցաւ առ ’ի Քրիստոս ի 1151 (7106) :

Մովսէս Առաջնորդ յաւել զերկու և սա Դպրատունս, միոյն
յհկեղեցւոջ Մուրադկնց սուրբ Յակոբայ, և միւսն յհկե-
ղեցւոջ սուրբ Ստեփաննոսի :

Ե . Մինաճամբաւ Ջուղայեցի Աղայ Պետրոս Ոսկանեան
երևելի իշխան և վաճառականն ’ի Մադրաս , յամի 1750 կը-
տակեաց քսան և վեց հազար հինգ հարիւր արկաթ ռուփիս,
զի նովին գումարաւ բացեալ լիցի ’ի Ջուղայ Դպրոց հիմնա-

ւոր , յորում եղիցի դասատուութիւն Հայերէն՝ Լատիներէն
և Պարսերէն լեզուաց (3) :

Ղիք տեղեկութիւն ինչ թէ կատարեցաւ սգգասէր կամք
նորա , քանզի յայնմ ժամանակի եղև պատերազմ Անգղիաց-
ւոց և Գաղղիացւոց ’ի Հնդկաստան , և գումարք գտակի նորա
անկան ’ի ներքոյ դժուարութեան , Ջուղայ և վըդովեալ կայր
յերեսաց անդադար բռնակալութեանց , ուստի իմ կարծիք է
թէ այն գումար թաղեալ ’ի դժուարութեան , կամք ազգա-
սիրին այնմիկ մնաց ապարդիւն :

Դ . Ցամի 1825, Պարոն Յովսէփ Վ.լՖ Անգղիացի եկն ’ի
Ջուղայ , և իւրով ծախիւք կամէր բանալ զդպրատուն վանն
Ջուղայու մանկանց , այլ դժուարութիւն պարագայից քա-
ղաքական կառավարութեան արգելք եղեն բարի առաջադը-
րութեան նորա (4) :

Ե . Ցամի 1833 Պարոն Գրիգոր Սամեան երևելի վաճա-
ռական ’ի Մադրաս կտակեաց զքսան հազար ռուփի , յանուն
իւր հաստատելոյ զԴպրոց մի ’ի Ջուղայ : Այս է պատճէն
կտակին , ‘‘ երրորդ՝ ըստ փափագանաց և ցանկութեան սրտի
‘‘ իմոյ հաստատելոյ դպրատուն մի ’ինորն Ջուղայ վանն ու-
‘‘ սուցանելոյ հայ մանկանց զարհեստն քերականական և
‘‘ թուաբանական , Թողում և տամ 20 հազար Մադրասի
‘‘ ռուփի , այսպէս՝ զի յոտ սոյն Դպրատունն հաստատելոյն,
‘‘ սոյն գումարի տարեկան եկամուտն՝ ուրեն հարիւր Մագ-
‘‘ րասայ ռուփին՝ կտակակատարքն իմ զգուշութեամբ յամե-
‘‘ նայն տարաւերջ հասուցանիցեն ’ի Ջուղայ ընտրեալ վե-
‘‘ րակացուաց և կառավարչացն Դպրատան՝ մինչ վեց ամ, և
‘‘ յետ վեց ամաց եթէ աւագեալ Դպրատունն ամենայնիւ
‘‘ բարւոք ընթացիւք և կարգադրութեամբ յառաջասցի ,
‘‘ յայնժամ վերակացուք և կառավարիչք Դպրատանն և կամ
‘‘ ’ինոցանէ կարգեալ տեղակալք և գործակատարքն աստ
‘‘ ստասցեն ’ի կտակակատարացն իմոց զայն գումար քսան
‘‘ հազար մադրասայ ռուփին : Այլ այն ստացեալն կամիմ՝ զի
‘‘ դիցեն ’ի վերայ ինկլիզի կումպանեայ պարտականութեան
‘‘ մնըրհակի միաբան ընդ կտակակատարացն իմոց զի մնասցէ

«՚ի վերայ սոյն պատուոց, և տարեկան վաշխն միայն հասա-
«նիցի ՚ի Ջուղայ. և պատուիրեմ կտակակատարաց իմոց,
«տալ և վճարել զայն գումար քսան հազար Մաղրասայ
«ռուփին տեղականաց կամ գործակատարացն առացեալ
«վերակացուաց և կառավարչացն Դպրատան, և լինելին դիս-
«ջարջ (անդորրագիր) ստանալ ՚ի նոցանէ: Այլ եթէ զկնի
«վեց ամաց՝ Դպրատունն յայտնապէս և հաստատաւ ՚ի վե-
«րայ հաստատուն հիմանց և բարի յառաջադիմութեանց չի-
«ցէ՝ և անկարգութեամբ կառավարեսցի, և զայն տարեկան
«եկամուտն՝ բոլորն կամ մասն ՚ի վերայ այլ երից ծախես-
«ցին՝ և ոչ ՚ի վերայ Դպրատանն, յայնժամ աստ եղեալ
«գործակալն ՚ի վեր 20 հազար Մաղրասայ ռուփին յետս
«դարձուսցին և վճարեսցեն կենդանի կտակակատարացն ի-
«մոց, և միջոց վից ամաց եկամուտն զոր հասուցեալ իցեն
«՚ի Ջուղայ վասն նոյն Դպրատանն՝ կտակակատարքն իմ ան-
«յիշելի արասցեն, և չունիցին յետս պահանջել յումեքէ
«զայն: Եւ ան և կարգադրութիւն վասն ասացեալ Դպրա-
«տանն յօրինեալ և ձեռնադրեալ կայ, և ցանկամ ղի նուաս-
«ընթասցին»:

Յամի 1834 ՚ի 21 փետրվարի ըստ հասարակաց ժողովոյ եղելոյ ՚ի Ջուղայ կացուցան գործակալք և կառավարիչք Սամեան Ամենափրկչեան Դպրոցի, Պարոնայք Մնացական Ստեփաննոսեան, Ղէոնդ Յ. Ալաքեան, եղիայ Յովհաննիսեան և Յովհաննէս Տէր Ղուկասեան, և առաջին վարժապետ այնմ եղև ամիս քինչ Յակոբոս յաջորդ և ծայրագոյն վարդապետ (5). իսկ յետ քանի ամաց գիտնական Պարոն Մեսրովբ Դաւիթ Թաղիադեանց ըստ հրաւիրմանց Սրբազան Յովհաննէս Ջ. Ալաջնորդի ՚ի սուրբ Էջմիածնէ եկն և եղև վարժապետ այնմիկ Դպրոցի, յորում ժամանակի ուսմունն աշակերտք հաւաքեցան անդր՝ զորս պատրաստելով ըստ բարեկարգութեան դնորահամբական յաձն արար դասատուաց՝ և զչափս հասոյն ինքն ստացաւ յաշակերտութիւն իւր: Երկու ամ միայն եկաց նա վարժապետ այնմիկ Դպրոցի, և յընթացս սուղ ժամանակին այնմիկ՝ բազում մանկունք լուսաւորեցան ՚ի գլ-

րակաւորութեան ըստ իւրաքանչիւր կարեաց: Այլ Պարոն Մեսրովբ վարժապետ (որոյ քնաւորութեանն ընդաթոյս լինի ոչ համբերատար և միաշաւիղ մնալ կինչ և իցէ գործողութեան, այլ սիրէ միշտ զնորանոր դէպս և զփոփոխմունս պարագայից ինքեան յանձն եղեալ գործոյ) ոչ մնաց ՚ի պաշտօնի վարժապետութեանն այնմիկ, ուստի Դպրոցն յետ մեկնելոյ նորա ոչ ևս մնաց ՚ի շարունակ հաստատութեան, թէպէտ կառավարեցաւ այն առ ժամանակ դասատուութեամբ Գէորգ վարդապետի Տէր Յովսեփեան, Պարոն Գէորգայ Յովսեփեան՝ Տէր Աւետիս Տէր Ղազարեան, և Տէր Մտեփաննոսի Յարութիւնեան, այլ ոչ ընդ երկար պահելով զայն շարունակութիւն վակեցաւ այն յամի 1837:

Պարոն Յովհաննէս Մ. Զօրաբեան մնեալ ՚ի Մաղրաս քաղաքի և ծանօթ տանն Սամեանց ըստ խնդրոյ և ըստ հաճութեան նոցին (որք էին կտակակատարք Գրիգորի Սամեան) յամի 1839 եկն ՚ի Ջուղայ և յամի 1840 երից կրկին անգամ զվարժատունն Սամեանց Ամենափրկչի, ՚ի գաւիթ սուրբ Մտեփաննոսի եկեղեցւոյ Յակոբջանեանց թաղի, ինքն լինելով ՚ինմա առաջին վարժապետ: Ծաղկեցան իսկզբան անդ ուսմունք ըստ մեծի մասին չափահասք, զորս ըստ դասակարգութեան բաժանելով, ստուրին դասատունքն յանձն եղեն գասատուաց, որք էին՝ Պարոն եարապետ Մ. Զօրաբեան, Տէր Յովսէփ Տէր Գրիգորեան և յետ նոցա այլք ոմանք: Եւ առաւելութիւն Դպրոցին կինքն միայն ունէր Պարոն Յովհաննէս վարժապետն առանց այլոց խորհրդակցութեան, և ըստ իւրոյ կարեաց ՚ի բարեկարգութեան պահեաց զայն Դպրոց մինչև ցամ Տեառն 1853, յորում ժամանակի անանկացաւ տունն Սամեանց ՚ի Մաղրաս, և քսան հազար ռուփի դրամն Ամենափրկչեան Դպրոցի մատնեցաւ ՚ի կորուստ, ուստի Պարոն Յովհաննէս վարժապետ յետ կրեալոյ գլխաս 800 ռուփի անհատոյց վերադարձուցեալ փոխանակարդոյ իւրոյ՝ փակեաց զայն Դպրոց: Եթէ իցէր մտադրութիւն բանից ազգասէր կտակողին՝ յետ վեց ամաց քարեկարգ հաստատութեան և շարունակութեան Դպրոցին այն-

միկ, մարթ էր ապահովել զայն դրամագլուխ ըստ ասանդե-
լոյ աղգասէր կտակողին՝ դնելով զայն ի վերայ տէրութեան
մուրհակաց, այլ արդարև ցաւ ազգային, զի առանց այնպիսի
մտադրութեան կորեաւ այն գումար ի մեծ վնաս Ջուղայու:
Առաջադէմ աշակերտք նոյն Դպրոցի ի քերականութեան մի-
այն յընթացս երկոտասան ամաց, Հղեն Տէր Յարութիւն Տէր
Ստեփաննոսեան, Աւետիք Հղբայր Նորա, Մարտիրոս Ջօրա-
բեան, Միրզայ Յարութիւն Յորդանան Եղիազարեանց, Սու-
քիաս Բենիամինեան, Յովհաննէս Բաբանեան. գրիչ պատ-
մագրոյս և այլք ոմանք: Գլխաւոր դասատուութիւնք յայն-
միկ Դպրոցի էին հայերէն քերականութիւն, թուաբանու-
թիւն. վայելչագրութիւն, և առ ժամանակ ինչ աշխարհա-
գրութիւն, կայր և դասատուութիւն Անգղիական և Պարսի-
երէն լեզուաց, այլ ոչ օք առաջադիմութիւն արար ինոսա:

Ե. Օյնի փակման այնմիկ՝ Դպրոցի աշակերտք այնր ցիր
և ցան եղեալ դասարկաշրջիկ պարապէին ի փողոցս՝ որ ոչ
սակաւ վիշտ էր սրտի ազգասիրաց, մանաւանդ Սրբազան Թադ-
դէոս Առաջնորդի, ուստի դուն դործեալ նորա յաշխախակի
խնդրատրութ և ըստ աջողելոյ Աստուծոյ Հաստատեցան
միւսանգամ յամի 1853 երկու Դպրոցք ի Ջուղայ: Հիմնա-
դիր միոյն ինոցանէ՝ եղեն ազգասիրութեամբ Համբարեալ
Հարազատ քորք որք ի Բեթաւիայ բնակին, Ջուղայեցի Տի-
կին Մարիամ Յակոբ Յարութիւնեան, և Օրիորդ Թագուհի
Մանուկեան, և հիմնադիր միւսոյն եղև ազգասէր Պարոն
Մարգար Սուքիասեան Ջուղայեցի բնակեալ այժմ ի Ջաւայ:
Տարեկան նպաստ առաջնոցն է չորս Հարիւր ռուփի կումպան-
ոյ, զոր խոստանան շարունակել տեղողաբար (6), և նը-
պաստ երկրորդին է տարեկան երեք Հարիւր ռուփի կում-
պանոյ: Մինն ի Դպրոցաց անտի բացեալ եղև ի գաւիթ սուրբ
Ստեփաննոսի եկեղեցւոյ՝ ուր կայր նախ Դպրոցն Ամենափրկ-
չի, և միւսն ի գաւիթ սուրբ Մինասայ եկեղեցւոյ: Վարժա-
պետ առաջնոյն եկաց Պարոն Յովհաննէս Մ. Ջօրաբեան, և
վարժապետ երկրորդին՝ Պարոն Կարապետ Մ. Ջօրաբեան եղ-
բայր Նորա: Հարուստնակութիւն յիշեալ երկու Դպրոցաց բա-

րեկարգութեամբ լինելանայ մինչև ցարդ, և աշակերտք ըստ
քնական օրամտութեան իւրեանց ստանան զբաւական առա-
ջադիմութիւն: Աշակերտաց Թիւ նոյն երկու Դպրոցաց Հա-
սանէ ցՀարիւր, ուսանելիք ինոսա են քերականութիւն՝
Թուաբանութիւն՝ Հասարակ ընթերցուածն մեկնաբանու-
թեամբ՝ և վայելչագրութիւն: Այլ և Պարսիերէն դասատու-
ութիւն, այլ զանցառութեամբ այլազգի վարժապետաց ոչ օք
յաշակերտաց մինչև ցարդ առացան զառաջադիմութիւն յայն-
միկ դպրութեան:

Ը. Հայկեան Հայրենասիրական Դպրոց սկզբնաւորեալ
յամի 1841՝ և Հաստատեալ յամի 1843, որոյ նիստ է ի
գաւիթ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ Թաղին Մէյլանի:
Բարերար հիմնադիր այնմիկ եղև մեծահարուստ տունն Ա-
դարեանց, որոյ և առանձնապէս նպաստամատոյց եղև բա-
րեպաշտ ոմն որ ի Կալկաթայ: Վասն տարեկան ծախուց այն-
միկ ամ ըստ ամէ առաքի 130 Թուման պարսից: Յօրէ Հաս-
տատութեան նորին մինչև ցարդ վարժապետ այնր եղև Պա-
րոն Թորոս Մանուկ Թորոսեան: Թիւ աշակերտացն ոչ առա-
ւելու քան զտասն, և ոչ նուազի քան զվեցսն: Բաց
յառաջնոյ և յերկրորդ վարժապետաց, երեք դասատու և ս
կան ինոսա: Ուսմունքն նոյն են որ ինչ կան յերկու վերոյ-
գրեալ դպրոցսն, այլ յամի 1856 եկեղեցական երգոց երա-
ժշտութիւն յաւելաւ ի սմա: Ընարունակեցաւ այն բարեօք
կառավարութեամբ վերատեսչի և հոգաբարձուաց: Առաջա-
դէմ աշակերտք եղեալք ի Դպրոցէ անտի, են Ընդրէաս Տէր
Եղիազարեան՝ որ այժմ երկրորդ վարժապետ է նոյն Դպրոցի,
Մկրտիչ Տէր Յովհաննէս Գալուստեան, Ղազար Գ. Աբգա-
րեան, Մանուկ Թորոսեան, Կարապետ Մարգարեանեան, Նի-
կողայոս Աւետքեան և այլք ոմանք:

Թ. Վերոյգրեալ Դպրոցք Ջուղայու ընդունին ձրիբար և
անխտիր զաշակերտս, և շնորհեն նոցա զմատեանս ուսումն-
նական, զԹուղթ՝ զմելան՝ զգրիչ և զմատիտ, որք հոգացեալ
լինին նպաստիւք ազգասէր հիմնադրաց նոցին: Զիք ի նոսա
Թոշակաւոր աշակերտ, ուստի ամենայն աշակերտք յարձա-

կիլ Դպրոցին գնան ի տունս ծնողաց իւրեանց, և ի հետեւեալ աւուրն զարձեալ հաւաքին ի Դպրոցն։ Լուսաւորութիւն Ջուղայու ըստ հասարակ գրագիտութեան՝ համեմատութեամբ անցեալ ժամանակաց՝ գերազանց է այժմ, և ըստ Տէառն աջողելոյ օր ըստ օրէ կատարելութեան աստիճանին է ակնունելի։ Նախ քան զամն 1830 մինչև և էին հաստատեալ վերոյ յիշատակեալ Դպրոցք, մանկունք Ջուղայու ի տունս քահանայից դիմէին աշակերտիլ։ Յորս երևելի էին Տէր Մատթէոսեանք՝ Տէր Մարգարեանք՝ և այլք ոմանք։ Գործ նոցա էր ղօրն ողջոյն մշակել վասն տնկական գործոց, և ուսանելիք նոցա էր ի բերան սերտել ձեկեղեցական փոխս կամ զերգս։ Քերականութեան արհեստ (որ այժմ հասարակ խիճ է յաշակերտս Դպրոցաց) անճանօթ էր յայնմ ժամանակի ի Ջուղայ, ուստի յընթացս քսան և եօթն ամեայ ժամանակի՝ մեծ առաջադիմութիւն ուսման եղև ի Ջուղայ։

Ը. Յամի 1841 Պարոն Բօռի Գաղղիացի եկեալ ի Ջուղայ՝ երաց զԴպրոց ի տանն Սիմէօնեանց, ուսուցանել կամելով զհայերէն՝ զԳաղղիերէն և զՊարսիերէն։ Ժողովեցան բազումք ի մանկանց հայոց յայն Դպրոց։ Եամէր հիմնադիր նորին իւրով ծախիւք պահել զկառավարութիւն այնր, և թեև ունէր զբազում մտադրութիւնս, այլ յետ ամենօրեայ ժամանակի ծագեալ գժտութեան ընդ մէջ Լուսաւորչական Հայոց և պապականաց Ջուղայու, խաչատուր Առաքնորդ յետս կոչեցաւ ի Սինոզէ սրբոյ Էջմիածնի, և գաղղիացին մնալն բուռն պարտաւորեցաւ փակել զԴպրոց իւր, որոյ գնացեալ ի Պօլիս՝ երաց զԴպրոց իւր։

Թ. Հանգուցեալ Յովհաննէս Առաքնորդ սուրենեան, յամի 1844 երաց զԴպրոց հոգևորական ի տանն Սիմէօնեանց, յուսալով կառավարել զայն արդեամբ վանին կամ նպաստիւք աղգասիրաց։ Վաղար վարդապետ կարգեցաւ վարժապետ այնր, այլ յետ իրրև ութ ամեայ ժամանակի երանել նորա ի պաշտօնէ այնմիկ՝ ի դէպ համարեցաւ։ Պարոն Եսայեան Մ. Զօրաբեան և Տէր Յովսէփ Տէր Գրիգորեան երեքն զինի վաղար վարդապետի ուսուցիչք այնմիկ Դպրոցի,

և Դպրոցն կաղ ի կաղ ընթացիւք պահէաց զշարունակութիւն իւր ցերեք ամ միայն, և ապա յաղագս անհաստատուն արդեանց պարտաւորեցաւ փակիլ։

Ժ. Վերաշնիւ Աղայ Եարապետ Գրիգորեան Սառաֆեանց երևելի վաճառականապետն Ռուսաց որ ի թէֆլիս (որ ազգասիրաբար յամի 1851 վճարեաց զ540 Թուման պարտս վանին առ Պարոն Ամիրխան Յ. Ամիրեան) ունի մտադրութիւն քանալոյ ի Ջուղայ ի մէջ Ամենափրկչեան վանի զԴպրոց մի վասն երկոտասան մանկանց որք համարեսցին ինքեան որդեգիր։ Յամի 1854, ի 20 Օգոստոսի յաղագս նոյն նպատակի եւ զԹուղթ խոստման առ Սրբազան Թադէոս Արք եպիսկոպոս Առաջնորդ վանացն Ամենափրկչի, որ հաստատեցաւ ի Դեսպանատան Ռուսաց որ ի թէֆլիս։ Այս է օրինակ խոստումն նագրոյն այնմիկ «Ստորագրեալս ի ներքոյ եարապետ Գրիգորեան Սառաֆեանց պաշտօնի կրաժտանիս Ալեքսանդրա-
« գօրեան Սառաֆեանց պաշտօնի կրաժտանիս Ալեքսանդրա-
« բօլոլ բնակիչ, մտադրեալ էի ի վաղուց հետէ ի մտի իմում
« հաստատել զԴպրոց մի ի Ջուղայ, որոյ նիստ եղիցի Ամե-
« նափրկչեան սուրբ վանին, և Դպրոցն զնոյն անուն կրեսցէ
« կինքեան։ Անդ երկոտասան մանկունք իբրև որդեգիրք
« հաստատողիս Դպրոցին, ուսանիցին զուսմունս Հայերէն
« Ռուսերէն՝ Գաղղիերէն և Պարսիերէն լեզուաց։ Եւ առա-
« վարութիւնն կիշեալ Դպրոցի կախեալ կացցէ շարունա-
« կաբար զհոգաբարձութենէ Ամենափրկչեան վանաց կառա-
« վարութեան, և նոյն կառավարութիւնն պարտաւոր լիցի
« տալ ամ ըստ ամէ զհաշիւ Դպրոցին ի տեղեկութիւն մեր։
« Այսն սոյն նպատակիս որոշեցի զմի հազար Թուման
« պարսից դրամ, զոր իբրև հաստատուն խոստմունք իմ նը-
« շանակելով աստ ի պետս նոյն Դպրատանն՝ պարտական կա-
« ցուցանեմ սովաւ զանձն իմ յաղագս այնր։ Ցնօրինեմ՝ զի
« նոյն մայր գումար հազար Թուման կացցէ ընդ իմով կա-
« ռավարութեամբ ցորչափ ժամանակ կենդանի իցեմ, և եւս
« տարեկան երկու հարիւր Թուման տոկոս վասն նոյն գու-
« մարոյ պարտաւոր եղիցի հատուցանել, զի նովաւ Դպրոցն
« կարօղ լիցի պահել զկառավարութիւն շարունակութեանն

„ իւրոյ : Իսկ յետ վախճանի իմոյ տնօրինեմ զի լեցի այսպէս ,
„ ՝ի՝ եթէ ժառանգք իմ և կամ կտակակատարք կարօղ լի-
„ ցին ապահովել առ ինքեանս զայն հազար Թուման մայր
„ գումար, և ունելոց իցեն ձեռնհասութիւն հատուցանելոյ
„ շարունակաբար զերկու հարիւր Թուման տարեկան տոկոս
„ նորա , կացցէ հազար Թուման գումարն ընդ կառավարու-
„ Թեամբ նոցա , և նոքա պարտական եղիցին հատուցանել
„ զտարեկան երկու հարիւր Թուման տոկոս նորա առ կառա-
„ վարութիւնն Ամենափրկչեան վանացն՝ զի Դպրոցն հաստա-
„ տուն միասցէ յիւրում շարունակութեան : Իսկ Թէ ժա-
„ ռանգք իմ և կտակակատարք չլիցեն ձեռնհաս առ ինքեանս
„ պահպանելոյ զհազար Թուման , և հատուցանելոյ
„ զերկու հարիւր Թուման տարեկան տոկոս նորա , ա-
„ պա պարտական լիցին իւրեանց գիտութեամբ և տնօրէնու-
„ Թեամբ և խորհրդով վանացն կառավարութեանն՝ զհազար
„ Թուման գումարն դնել յապահովի , տալով առ այնպիսի
„ հաւատարիմ անձն օք, առ որ անկորուստ միասցէ նոյն գու-
„ մարն , և ստացողն այնր՝ հատուսցէ ամ ըստ ամէ զերկու հա-
„ րիւր Թուման տոկոս նորա գիտութեամբ ժառանգաց և
„ կտակակատարաց իմոց , զի նովին տնօրէնութեամբ Դպրոցն
„ հաստատուն միասցէ յիւրում շարունակութեանն : Եւ կա-
„ ռավարուն Դպրոցին և սա պարտաւոր լիցի տալ ժառանգացն
„ և կտակակատարացն իմոց զհաշիւ Դպրոցին ամ ըստ ամէ :
„ Այժմ որովհետև ոչ մարթացաք գտանել զյարմար
„ վարժապետս գաղղիերէն և Ռուսերէն դասատուութեանց ,
„ յայն սակս խորհուրդ արարեալ ընդ բարձր Սրբազան
„ Թադէոս արք եպիսկոպոս Առաջնորդի Ջուղայու Ամենա-
„ փրկչեան վանաց , բարւոք դատեցաք և հաստատեցաք տը-
„ նօրինել , զի նոյն հազար Թուման մայր գումարն որ միայ
„ առիս՝ սկսեալ ՝ի մէջ յունվարի 1855 առաջիկայ ամի , պար-
„ տաւոր լիցիմ տարեկան երկու հարիւր Թուման տոկոս վճա-
„ րել մինչև մի կամ երկու տարի ժամանակ՝ նոյն տոկոս յա-
„ րեսցի ՝ի հազար Թուման մայր գումարն, ընդ նմին արդիւ-
„ նաւոր լինելով վասն յետագայ ամացն : Եւ մինչ Տէրամբն

„ Աստուծով աջողեսցի բացուիմն Դպրատանն ըստ վերոյ նը-
„ շանակեալ կարգին , յայնժամ զտարեկան երկու հարիւր
„ Թուման տոկոս դրամագլխոյն՝ ընդ տոկոսին անցեալ ամաց
„ յաւելացեալն արդեանցն հազար Թուման , պարտաւոր ե-
„ ղեց վճարել ամ ըստ ամէ , զի Դպրոցն կառավարեսցի նո-
„ ւաւ շարունակաբար :
„ Այլ այսպէս տնօրինելով , զայս Թուղթ իրրև մուրհակ
„ պարտականութեան վասն յիշեալ հազար Թուման՝ ՝ի
„ ձեռն բարձր Սրբազան Թադէոս Արք Եպիսկոպոս Առաջ-
„ նորդին տամ ես և կառավարութեանն Ամենափրկչեան
„ վանաց Ջուղայու , վանացն պարտական կացուցանելով զիս
„ և զժառանգս իմ զկնի իմոյ վասն յիշեալ հազար Թուման
„ գումարոյն , երաշխաւոր տալով և զստացուածս իմ վասն
„ ապահով հաստատութեան սոյն իմ այսմիկ խոստման , որ
„ եղիցի ըստ ամենայնի վաւերական՝ հաստատուն և անփո-
„ փոխ ըստ ամենայն վերոյգրեալ պարագայիցն ,, :
„ Ի Թէհրան ՝ի քսան Օգոստոսի յամի հազար ուրթ հա-
„ րիւր յիսուն և չորս ” : Յիսկականին գրեալ կայ :

Ա կայութիւն և կնիք հաստատութեան Ռուսաց դեսպանատան ՝ի Պարսից :

Ինձ ընդունելի է Ալէքսանդր Պօլօ- ղեղոյ ՝ի Պարսից Պարսից : Եղբաժտանի (7) կարապետ Գրիգորեան Սառաֆով :

Այս բարի առաջադրութիւն Աղայ կարապետ Սառաֆովի տակաւին մնայ անկատար , զոր Տէր աջողեսցէ յօգուտ Ջուղայու :

---

(1) . Տէ՛ ՝ի պատմութեան Դաւթի առաջնոյ , էջ 28 . 29 :

(2) . Ամէն հարց նոյն չէ՝ ազգերը գլխարկաձողով մարդեն պահ ՝ի մարդապարանին օրէնք Ամերիկէի վրայ :

(3) . Թուղթ հարցութեան ըստ այնմ մարդեն ՝ի վերջապէս՝ ՝ի

փոխանակել ե՛ւ ծաղկեփրցոյ Ջուղայու գրեալ է 11 օգոստոսի 1762, որ առնի զրկոտան և ելոյն կնիքս։

(4)· Ի պատճէն նամակագրութեան վանին 1825 տարւոյ։

(5)· Տէրոյկ ծաղկեփ՛ է Ջուղայ գոմարելոյ յուլպա էջմանոյն Դպրոցի պատկերել է Կալկաթայ յամի 1834։

(6)· Բռնապաշտութիւն Տիկին Մարիամ Յակոբ Յարութիւնեան 10 Ջուլայի 1857 նամակաւ էրով յայտնէ Սբ Էջմիածնի Աբգոյն թագուհուն Ջուղայու, «Աջդ որպէս ի նախկին գերութեան ձեր խոստացեալ էիր Սբ Էջմիածնի հերոմ զաբելին պարս ձեռն Ջուղայու ուսուցիչուն ապահովելին եղանակաւ մշտապես առնել, ահա ստիպեմ զքեզ ի նորոյս կոչակաւ առանցեցուր... ընդ որ յաւամ հոգւոյր Հայդդ ձեր ստիպ լեալ աւ ապագայ գոյն ինելութիւն զորութեան ձեռն յեան անարժանիս Աստուած գնդեսել կեցցես»։

(7)· Տեղւոյ, որ նշանակէ պատուարոյ փողոցոյ, զոր էրթս որ փոխանակութեան ընդհատել լինի ի Տէրութենէ Ռուսաց աւ ակնառոյ վճռաւորեալ։

ԳԼՈՒԽ Ե.

ԳԱՂԱՓԱՆՈՒԹԻՒՆ Ի ՋՈՒՂԱՅ.

Ա. Ընդ ժողովրդեանն գաղթելոյ յամի 1605 ի Հայաստանէ՝ եկին Ասպահան (1). Հայք Հռովմէական եկեղեցւոյ հպատակ, որք ի սկզբանէ անտի (2). մինչև ցարդ քնդ Լուսաւորչական Հայս վարեցան հակառակութեամբ։

Հայք Ջանապիր եղեն ի սկզբան անդ ոչ թողուլ շինել աստ զեկեղեցի, այր վասն բողոքեալ առ Ընկալան ի Հռովմարտակ զի մի շինեսցեն եկեղեցի Փռանգաց։ Հռովմարտակն տուեալ ի Շահաբասայ ի 1064 (1649) Թուականի պարսից յերկրորդումն ամենեան ըէբիոլ. ունի զայնոսիկ թարգմանութիւնն։

«Յառաջ քան զայս ըստ խնդրոյ դեսպանին Փռանգաց «հրամայեցաք զի Փռանգք որք ունին զբաղձանս շինելոյ «զեկեղեցիս ի Ջուղայ՝ շինեսցեն, այլ արդ Ջուղայու բը- «նակիչ Հայք եկեալ առ մեզ բողոքեցին թէ շինելն նոցա «զեկեղեցի ի Ջուղայ լինելոց է առիթ ցիր և ցան լինելոյ «Հայոց աստի, յայն սակս հրամայեմք զի ի ժամանակի այս- «միկ արգելցի շինուածն եկեղեցւոյն այնմիկ՝ մինչ ցվերա- «դարձն դեսպանին Փռանգաց, յորում ժամանակի ըստ հրա- «մանիս մերոյ կատարեսցեն»։

Այլ Լատինահայք օգնականութեամբ դեսպանին Փռանգաց կամ յարձակակի թախանձանաց և խնդրարկութեան իւրեանց շինեցին զեօթն եկեղեցիս, որոց անուանք են. 1, Աստուածածնայ՝ շինեալ ի Շահրիմանեանց. 2, սուրբ Եղիայ՝ հաստատակաբար կարմելիթեան կոչեցեալ. 3, սուրբ Յովսէփ՝ որ Ջիզվիթ կոչի յաղագս ի Ջզվիթեան միաբանութենէն լինելոյ կառուցեալ. 4, Տամինիկեան վանք. 5, Օգոստինի վանք՝ ի հուսէ յնիա. 6, կարմելիթեան վանք՝ ի գովդմիր. և 7, նապաշին վանք ի ղալաթաքաւռուկ։ (3) վերջին երեք եկեղեցիքն էին ի քաղաքաւէջն Սպահանայ՝ ի թաղսն որք առ քրիստոնեայ իւրաքանչիւրոցն նշանակեցան, և առաջին չորքն շինեալ էին ի Ջուղայ։ Շորից եկեղեցեացն հետք անգամ ոչ երևին այժմ զի ընդ աւերակս դասեցան, և երիքն որք երևին այժմ, են Ջիզվիթն՝ Շահրիմանեանց սուրբ Աստուածն, և Տամինիկեան վանքն։ Ջիզվիթն և Աստուածն են աւերակ, և միայն Տամինիկեան վանքն որ է ի թաղն քօչէր՝ կայ ի հաստատութեան։

Բ. Ի սոյ կրկին տեսակի աղօղէր նոցա շրջել զլուսաւորչական Հայս ի պապականութիւն, չքաւորացն մանաւանդ դրամական օգնականութեամբ և բաղմադիմի շողոմարար բանիւք յանկուցանելով զսիրտս՝ առ ինքեանս և երկրորդ

քաղցրութեամբ և փափայանօք ընդունելով զյանդիմանականն ’ի Հայոց մեծաւորաց (4)։ Առաջնորդք Ջուղայու միշտ հակառակելով՝ խափանէին զնոցին առաջադիմութիւն, մերթ Տէրութեան հրամանաւ տկարացուցանելով զպապականաց քարոզչացն զօրութիւնս, և մերթ տալով զահաբեկութիւն ժողովրդեանն դարձելոց (5)։

Անվախճան մնաց ’ի սկզբանէ անտի մինչև ցարդ այն հակասական գործողութիւն, զի պապականք ջանակուռ աշխատանօք զՔրիստն թափէին փեռեկտել զեկեղեցի Հայոց, և Լուսաւորչական ժողովրդոցն տեսուչք դուն գործէին պաշտպանել զՀօտն իւրեանց յօտարաց անտի փեռեկտմանէ։ Այն խռովութիւն հակառակութեան ընդ մէջ Լուսաւորչական և պապական ժողովրդոց ’ի Ջուղայ ուժգին արծարծեցաւ նախ ’ի ժամանակս Թագաւորութեանն Շահ սէֆիի յամի 1688։ Ջիզվիթեան կրօնաւորք եկեալ Ասպահան շինեցին զեկեղեցին Ջիզվիթ կոչեցեալ, և բացին զդպրատունս ’ի Ջուղայ ’ի դաստիարակութիւն մանկանց, և Ջիզվիթարար քարոզել և որսալ զժողովուրդն սկսին զարարին։ Ցայնմ ժամանակի առաջնորդ վանացն Ամենափրկչի էր Ստեփաննոս Հալիսպացի, որ ունէր զանհաշտ հակառակութիւն ընդդէմ պապականաց, ուստի յոտն պաշտպանութեան ժողովրդոց կացեալ՝ հասոյց զմեծամեծ տառապանս Ջիզվիթեան քարոզչացն։ Բողոքեաց Շահ սէֆիան արքային թէ՝ օտարք ’ի սահմանաց Եւրոպիոյ եկեալ ’ի Պարս խռովին զվաղաղութիւն ժողովրդեանն Հայոց, քանան զդպրոցս, որսան զմանկունս պարզամտաց և յուզեն զժողովուրդն ’ի վէգ ընդ միմեանս հրանել։ զայդ առնեն երևելապէս, այլ ներքին նպատակ նոցա է լրտեսել զերկիրս և մուտս պարսկաստանի և գրել զամենայն անցս երկրին առ Թագաւորութիւնս Եւրոպիոյ։ Նովին չարմարական և հանճարական ամբաստանութեամբ առեալ կացուցան Ջիզվիթեան կրօնաւորք առաջի Տէրութեանն Պարսից։ Այլ Շահ Իսմայէլ նահանջ զօրավիճ լինելով Ջիզվիթեանց՝ ճանչէին զյոլով գումարս թէ ’ի դուռն պենպատաց քաղաքին Սպահանայ և թէ առ նախարարս Տէրութեանն և ստանային զհրաման զի

մի փակէսցին դպրոցքն Ջիզվիթեանց, և մի խափանուին ինչ յինէն նոցա քարոզութեանցն (6)։ Ջուղայու իշխանք և գնոյն առնէին հակառակ Շահրիմանեանց ուստի մեծապատար ճախարարութիւնք ոչ պակասեցան յերկուստեք։ Յաղթական եղև կողմն Լուսաւորչականաց, զի յամի 1689 ընկալեալ զհրաման ’ի Շահ սէֆիմանայ՝ քակեցին զմի եկեղեցին նոցա Կարմելիտանաց, և արտաքսեցին զոմանս ’ի քարոզչացն Ջիզվիթեանց, ընդ որս էր և Յակոբ վարդապետ, և ընկճեցին յոյժ զկողմն պապականաց (7)։ Յայնմ ժամանակի տպագրեցաւ ’ի վանքն Ամենափրկչի մատեան հակառակ երկաբնակաց, յորմէ առիթ ստացեալ պապականաց՝ զրպարտութեամբ յայտնեցին Տէրութեանն, որպէս թէ հայք հակառակ վարդապետութեանն ղուրանի տպեալ են զմատեան, որոյ աղագաւ եղև հինգ հարիւր թումանաչափ ճախս ’ի Ստեփաննոս Առաջնորդէ ’ի ցրուումն զրպարտութեանն այնմիկ (8), ըստ այնպիսի թանձրացեալ հակառակութեան, Ստեփաննոս Առաջնորդ իւրով հոգևորականօք կրելով զշուրջառ և սեաւ ցեալ մմռեղէնս ’ի մէյդանն Ջուղայու կատարեցին զԹափօր անիծողական կուտելով զնզովս ’ի վէր Շահրիմանեանց տոհմի, յաղագս նոցին ձեռնտուութեամբ յառաջանալոյ մեծամեծ խռովութեանցն և վնասուց. ’ի տեսանել զայն ալաղեցաց յորժամ հարցանէին թէ զինչ գործէք, պատասխանէին թէ որպէս դուք զձեր սուննի հերձուածողն՝ նոյնպէս և մեք զմեր հերձուածողն նզովեմք (9)։ Ցաւ է ինձ ոչ սակաւ զանցս այնպիսի երկպառակութեան արձանագրել յիմարմ պատմութեան՝ որք օգուտ և ոչ մի առանց ընծայելոյ ընթերցողաց, զսրտից զգացմունս յուզէն ’ի վշտակցութիւն ընդ աղէտս երկպառակութեան հանազգացն ’ի վնաս և յերջանկութիւն միմեանց, ոչ միայն ’ի Ջուղայ, այլ գոգջիր ընդ ամենայն ուրեք։ Այլ կամելով զայսպէս պատմագրի անվրէպ պահպանել, հարկ համարեցայ ըստ նիւթոյն եղելոց առիս՝ զկարգ պատմութեանն ոչ աղաւաղել ’ի ծածկել զգեղեցկութիւն այս կամ այն կողմանն։ Սակայն զանց արարի զԹարգմանութիւնս հրովարտակացն նշանակել, զի անօգուտ երկարաբանութիւնն մի ձանձ-

բանիենս պատճառեցոյ ընթերցողին :

Ջ. Աղէքսանդր կաթուղիկոս յայնմ երկպառակութեան ժամանակի էր ի Ջուղայ ի վանքն Ամենափրկչի և վարէր ընդ պաշտօն յաջորդութեան : Ականատես գոլով նորա ամենայն ազգաւեր աղմկեալ խռովութեանցն, լուտ հասանելոյ կաթուղիկոսութեան յամի 1709 (ՌՃԾԸ) ի 25 փետրվարի գրեաց առ պապն Աղեմէս մեծատասաներրորդ զանգատ ղխութեան յայից առաքելոյ ի պարս, յայտնելով թէ յուզին նոքա զժողովուրդն և յարուցանին զաղմուկ խռովութեան, որով անուանն քրիստոնէութե հայհոյի ի մէջ հեթանոսաց, և ի դարմանն նոցին խնդրեաց արձակել զգիր հրամանի առ նոյն քարոզիչսն սակս դադարելոյ նոցա ի խռովայուզութեանցն անտի (10) :

Այժէ հաւատալ կարելի իցէ վկայութեանն Յակոբ վարդապետի ի Ջուղայեցւոյ, որ հալածական վարեալն էր ի Ջուղայէ՝ և անհարատար խնդրուածով Թորքմանեալ էր զկնդակն Աղէքսանդր կաթուղիկոսի) Պապն « գրեաց զպատասխան նոյն Թղթոյ առ կաթուղիկոսն « Թէ օրովհետև « օտարացեալ դուստրդ մուծանիլ կամիս առ մայրս գործ « վազուէ, պարտ է քեզ զայդ դաւանութիւնդ ուղիղ դաւա « նութեամբ գործօք ցուցանել Թէ ի պատարագն և Թէ այլ « ինչ որ պատկանի ի բանս հաւատոյ, ապա խոստովանու « Թիւնդ գրեսցես և կնքեսցես ամենայն եպիսկոպոսօքդ և « առաքեսցես առ մեզ, և տեսեալ մեր զայնպիսի հաւատար « մութիւն, ապա Թէ տամ քեզ հրամանն ի վերայ ամենայն « քարոզատուաց Հռովմայեցւոյս որք ի վիճակի քոյդ են՝ զի « հալածանքեսցեն քեզ ,, :

Յետ ընդունելոյ Աղէքսանդր կաթուղիկոսի զայնպիսի պատասխան ի Պապէն, յամի 1711 բողոքեալ առ Շահ սուլթան Հսէյն, և զքարոզիչս Հռովմայ ցուցանելով անհարատար Տէրութեանն Պարսից և լրտես և մատնտու եկեալ ի պարս, ընկալաւ զհրովարտակ հրամանի և հալածական վարեցաց զնոսա ի պարսկաստանայ հասուցանելով զբազում խռշտանգանս ժողովրդեանն գարձեալ ի պատականութիւն (11) :

Վարձեալ զօրացան պատկանք մեծ քաքանակ Ճախատարութեամբ, և կամեցան բանալ յամի 1723 զԴպրոցս և դատախարակել զմանկունս Հայոց, այլ վերստին բողոքեալ Հայոց առ Շահսուլթան Հսէյն, ընկալան զհրամանն արկանելոյ զբողոք իւրեանց առ Դաւնպետս քաղաքին Սպահանայ, ուրանօր դարձեալ զօրաւոր եղեն Հայք, և ըստ հրամանի գենպետացն ի 1139 Թուականի Պարսից (1723) ընկալան զԹուղթ խռստման ի քարոզչաց Հռովմայ զի մի և ս ուսուցցեն զմանկունս Հայոց ի դպրոցս իւրեանց, և մի ընկալցեն զկին յազգէ Հայոց (12) :

Ջ. Օյնու ժամանակաւ Մովսէս Առաջնորդ Ջուղայու քահանայիւք և հոգևորականօք Ջուղայու ժողով գումարեալ հաստատեցին զԹուղթ իմն վասն ի պատականութիւն շրջելոցն : Այս է պատճէն այնմիկ Թղթոյ « ընդ հօք Տէառն « Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Նուաստ ծա « ռայ Մովսէս վարդապետ . . . գիտելի է զի հոգալով մեր « զբարեկարգութեանց քահանայից ի տուէ և ի դիշերի չանք « մեր այս է զի օր յաւուր բարեկարգութիւնք յաւելու յե « կեղեցականս, և անկարգութիւնն և յանդգնութիւնն տեղի « տայ, և այս որով լինի, եթէ ոչ խրատուք բայց այսօր ըստ « ժամանակին լսողութիւնն և հնազանդութիւնն « բարձեալ է ի մէջ մերում, քանզի յորժամ կամիմք խրա « տել զստահական և զանկարդան, ոչ Թէ միայն ՚ի հնազան « դին արտէս կարգն է, այլ և երկնցուցանեն և ս զմեզ ասե « լով Թէ գնամք և լինիմք երկարնակ : Վասն որոյ սակս նա « խահոգութեան զայս արժան տեսաք գրել և հաստատել « ի մէջ մեր զի զգուշացին և խրատեսցին այնպիսիքն : Այս « է որ ես հանդերձ իմ եպիսկոպոսօք և վարդապետօք և մե « ծամեծ եղբարբքս և բոլոր քահանայական դասուք, որք են « երիցունք մերում Թեմի և վիճակի, առաջի Աստուծոյ վկա « յութեամբ սրբոց հրեշտակաց նորա զրեցաք կնքեցաք և « հաստատեցաք հրամանաւն Աստուծոյ և իշխանութեամբ « կարգիս մերոյ, զի այսուհետև ինչ կարդաւոր որ ի մէնջ « ՚ա Թէ ի սեազլեոց և Թէ յաշխարհի երիցանց քահանայից

„ որ ’ի սուրբ Լուսաւորչադաւան Հայոց եպիսկոպոսէ լինի
„ ձեռնադրեալ և կարդ առեալ, թէ յանդգնի լիւր միաբնակ
„ դաւանութենէն (որով զկարգն է առեալ) հլանել կարդ-
„ ուորաց լինի և գնայ երկաբնակաց . . . դաւանութիւն .
„ նա լիւրմէ կարգէ և ես լուծեալ լինի և որոշեալ ’ի փառա-
„ նայութենէ, մինչ աստիճանէն մինչև ցեօթն աստիճանն
„ բարձեալ լինի ’ի նմանէ, յայնմհետէ նորա պատարագն ոչ է
„ պատարագ այլ դատապարտութիւն, զի կրկին խաչէ զՔրի-
„ ստոս . . . յայնպիսեացն վախչիմք և ’ի բաց հեռա-
„ նամք, իբրև զիժէ և զբարբէ . . . և ոլ ոք յայնմհետէ
„ օրհնեա Տէր առէ կամ փառանայի պատիւ դնէ, նա ևս կից
„ լինի նորա մեղացն և նղովիցն, քանզի անիծեալ է և նղո-
„ վեալ, կապեալ է և քանապրեալ լիրկինս ’ի վէր և լեր-
„ կիր ’ի խոնարհ, ասացին հրեշտակք և մարդիկք եղիցի
„ հղիցի „ (13) :

Պարոն ’ի նմա զյանձնառական ընդունելուի նորա . դա-
եիթ՝ Աստուածատուր՝ բարսեղ՝ Ստեփաննոս՝ Պետրոս՝ Զա-
քարիայ վարդապետք՝ Տէր Յարութիւն՝ Տէր Յովհաննէս՝ Տէր
Ղուկաս՝ Տէր Սիմէոն՝ Տէր Ստեփաննոս՝ փոքր Տէր Ղուկաս՝
Տէր Գէորգ՝ Տէր Նիկողայոս՝ Տէր Պարսամ՝ Տէր Ահարոն՝
Բարաղամ և Սիմէոն արեղայք : Եւ յիսուն և ուրեն քահա-
նայք ’ի նմին ժամանակի եղեալք ’ի Զուղայ :

Ե . Հակառակութիւն և խռովութիւնն շարունակեցաւ
միշտ ընդ մէջ լուսաւորչական և պապական ժողովրդոց, մերթ
նուազ և մերթ ուժգին ներգործութիւք , զի կայ և ’ի Շահ Աբ-
բասիայ հրովարտակ տուեալ առ Հայս ընդդէմ պապականաց,
որով յայտ է թէ յուզեցաւ տարաձայնութիւնն և յայնմ
ժամանակի :

Յետ 1730 Թուականի չեղև երևելի դէպք ինչ խռովու-
թեան , այլ անշուշտ առանին և մանաւանդ տարաձայնութիւնս
պահէր զշարունակութիւնն իւր :

Յամի 1841 Ճագեցաւ դարձեալ խռովութիւն մեծ , ո-
րոյ հետևանք ոչ սակաւ վնասաբեր եղեն վանին : Յայնմ ժա-
մանակի առաջնորդն Զուղայու էր Խաչատուր վաղարշապատ-

ցի , դիւրադրգիռ ’ի զայրացումն և անյառաջատես հետևա-
թեանց գործոց : ’Ի վանս պապականաց կայր Յովհաննէս գիտ-
նական վարդապետ Տէրտէրեան՝ կրթեալ ’ի բովս աշխարհի,
և քաջ ուսեալ զեղանակ սիրաշահութեամբ գրաւելոյ ըզ-
մարդիկ : Յակոբոս գիտնական վարդապետ յաջորդն սրբոյ Ա-
ճենափրկչեան վանի՝ տաղտկացեալ ’ի խցակեցութենէ վանին,
սիրէր բնակիլ ’ի տան իւրում արձակապէս , այլ թէ զինչ էր
պատճառն՝ ստոյգն չգիտեմ, և զկարծիքականն ’ի լռութեան
թաղել բարւոք համարիմ: Խաչատուր Առաջնորդ ոչ մար-
թանալով համոզանօք զնա առ ինքն գրաւել , ահարկութեամբ
իշխանութեան կարծէր զնա խոնարհեցուցանել ’ի հնազան-
դութիւն, ուստի նա թէ այսպէս և թէ այնպէս յամենայնի
Յուլիսի 1841 ամի եմուտ ’ի վանս պապականաց , որում հե-
տևեցան Տէր Ստեփաննոս Յարութիւն Տէր Յովհաննէս (14):
Յառաջ քան զնա գնացեալ էր և Ամիրխան Յովհաննէս Ամի-
րեան , և լինէր շշունչ թէ հինգ քահանայք ևս միաբանեալ
կամին հետևել շաւղաց նոցին : Այլ նոյն միաբանեալքն (զո-
րոց անուանս նշանակել ոչ կամիմ) հաստատուն մնացին ’ի
կողմանն իւրեանց առանց շրջելոյ ’ի պապականութիւն :

Եկեալ էր ’ի 1840 ամի մուսի բերժէ Գաղղիացի , և բա-
ցեալ էր զԴպրոց ’ի Զուղայ, ուրանօր և ժողովեալ էին բա-
զում մանկունք յազգէ Հայոց և բարւոք առաջադիմութեամբ
ուսանէին զՀայերէն՝ Գաղղիերէն և զՊարսիերէն լեզուս :
Նոյն բերժէ ևս օգնական և գործակից լինելով նորադարձ
պապականացն՝ յուզեցաւ երկպառակութիւն, և Թանձրացաւ
առարկայն մինչև հարկ լինել դիմելոյ յատեանս քաղաքա-
կան գատաստանաց՝ և ’ի սպաս վիհավուառ Թազաւորին իսկ :
Արդ ակնարկեալ Մահամադ շահն կամելով խաղաղել զխռո-
վութիւնն յուզեալ ’ի տարապարտուց , յամի 1842, յ7 յուն-
վարի շնորհեաց զհրովարտակ որոյ պատ է Թարգմանութիւն :

„ Հասուցաւ ’ի լուր մեր ’ի կողմանէ Ազգին Հայոց, Թէ ո-
„ մանք ’ի հոգևորականացն կաթոլիկաց կատուցեալ ’ի նա-
„ հանգս մեր գուսումնարանս և զեկեղեցիս՝ յորպորանօք
„ քարոզութեամբ , և զանազան կաշառանօք հրապուրեն

« զաղջն Հայոց յընդունելութիւն իւրեանց հաւատոյ, որ-
« պէս յանցելում ամի քահանայ ոմն Հայոց ի Ջուղայ ընկա-
« լաւ զդաւանութիւնն կաթոլիկաց, որ և եղև առիթ մեծա-
« մեծ խառնակութեանց :

« Վասնորոյ առ զառաջս ունելոյ զոյնանմանն խառնակու-
« թեանց և անկարգութեանց, նոյնպէս և վասն հանգուտեան
« և խաղաղութեան զանազան աղանդոց և հետևողաց զանա-
« զան դաւանութեանց, բնակելոց ի մերումն Տէրութեան և
« եղելոց ընդ մերովս հպատակութեամբ, արգելումք մեք
« զանցանելն ի միոյ դաւանութենէ առ միւս : Եթէ ոք ի-
« քահանայից Հայոց կամ կաթոլիկաց ձեռն արկցէ հրապու-
« րել զայլադաւանս յընդունելութիւն իւրոյ հաւատոյ, այն-
« պիսին ենթարկի սաստկագոյն պատժոյ պատուհասի, եթէ
« քահանայն մեղադրեալ ի վերոյ գրեալ յանցաւորութեան
« ինչ ի մերոցս հպատակաց՝ զրկեսցի ի կոչմանէ իւրմէ, և
« ենթարկեսցի պատժոյ և տուգանաց, և ի դէպս լինելոյ
« նորա հպատակ այլոյ թագաւորութեան, արտաքսեսցի ի-
« Տէրութենէ մերմէ :

« Վ հսկայական կառավարչաց և բեզլարբէգիք բարձրա-
« գոյն նահանգաց մերոյ պարտին համաձայնել զտեղւոյն
« թիւնս խաչեանց այսմ բարձրագոյն հրամանի մերում, ոչ
« ներելով ինքեանց և սակաւիկ ինչ հրաժարումն յայնմանէ ,,:
« Գրեցաւ յամենայն գիւղաքաղաքի 1257 ամի Հեջրի " :

Վրացւոյ խաչատուր՝ զերկոսին հեստեալ կարգաւորեան
աճեալ ի վանքն արար զինուսա կարգընկէց, և ի քաց մերկա-
ցուցեալ զհանդերձն հոգևորականութե՛ արձակեաց զինուսա :
Ըստ հրամանի Տէրութեան հրովարտակին ընկալեալ եղև
խոստումնագիր ի Լուսաւորչական և ի պապական ժողովրդոց
զի մի և այս շրջեսցի ոք ի հաւատոյ իւրմէ յայլ հաւատ : Մասնաւ
բերժէ պարտաւորեցաւ տեղափոխել, և խաչատուր Առաջ-
նորդ յամի 1842 յետս կոչեցաւ վերադառնալ ի սուրբ Էջ-
միածին : Մեղմացաւ խռովումն, և ի ժամանակէ անտի մին-
չև ցարդ չեղև նշանաւոր ինչ յիշատակութեան արժանի :
Այլ այժ նուաղեցաւ աղդեցութիւնն պապականաց ի ժա-

մանակս Առաջնորդութեանն թադէոս եպիսկոպոսի :

Ը. Վախանձն Հայաստեցութեան նշանաւոր է ի կարգա-
ւորսն որք են ի գօլէջի միաբանութենէ : Ըստ ոչ վայրա-
պար իսկ համարիմ յիշատակել զերկոսին դէպսն, որք փո-
խանակ քրիստոնէական սիրոյ՝ զոչ մարդկային աներութիւն
առնեն առաջի : Ընդ ամն 1825 ց30, Յովհէ ի վարդապետա-
նուն ոմն ի պապականաց անտի եղբայրասիրութեամբ պա-
հեալ էր ընդ Լուսաւորչական Հայս Ջուղայու զհաղորդակ-
ցութիւնս ոչ միայն ի բարեկամական յարաբերութիւնս, այլ և
ի հոգևորս, ըստ հարկին պահանջելոյ . վախճանի նա, և
թաղի ի պարսպի Տօմինիկեան վանքն որ ի Թաղի Քօչէր :
Յամի 1843, կամ 44 ի Ջուղայ եկեալ երկու գօլէջի վար-
դապետք և յետ տեղեկանալոյ զվարս վախճանեալ վարդա-
պետին Յովսէփայ, այն թէ՝ ի հոգևորս պահեալ զհաղոր-
դակցութիւնն ընդ Հայս Լուսաւորչական, բարբարոսական
խժդժութիւն, բացեալ զդերեզմանն նորա և հանեալ զոսկերս
այրեալ են հրով, և անհետ արարեալ զոչ գերեզմանին, զի
բարձցի յիշատակն նորա ի վանից անտի : Եւ յամի 1855 եկին
երկու վարդապետք ի նոյն միաբանութենէ, երկոքին և պետ-
րոս անուն, մինն էր ծեր և միւսն երիտասարդ, ծերն ոչ ու-
նելով զաստիճան եպիսկոպոսութեան՝ համբաւեցաւ աստ գե-
րապայծառ և եպիսկոպոս, և կամելով առաւել և ևս վառա-
ւոր կացուցանել զիւր կղզի գերապայծառութիւն, զլանջա-
կիր խաչն Յովհաննէս գերապայծառն Տէրտէրեան՝ կախեաց
ի պարանոցի իւրում ըստ եղովբոսեան առակին, մրթմրթով ա-
ռեւծոյ՝ կարծելով ձևանալ առիւծ :

Ա ոչ կարեմ առնել զգործ ինչ արժանայիշատակ՝ հը-
րամայեաց ժողովրդոց իւրոց զարձնելոյն ի Հայութենէ ի պա-
պականութիւն յամի 1841՝ փոփոխել զանուանս զորս ստա-
ցեալ էին ի մկրտութենէն Հայոց եկեղեցւոյ, փոխանակ Հայ
անուան՝ զկոտինական տալով անուանս, որպէս թէ բարձցի
անունն ի նոցանէ՝ զոր ստացեալ էին ի Լուսաւորչական եկե-
ղեցւոջ : Այդ էղև մեծագործութիւնն նորա ի Ջուղայ ի ժո-
ղովուրդս իւր՝ յընթացս երկամ վիճակաւորութեանն իւրոյ,

զի յամի 1857 վերադարձան ՚ի Պօլիս : Այլ միւս քարեպօտ-
ծուքիւն նորա արժանի Ջատագովութեան է, զի մինչ ՚ի 1834
ամի երկու կուսանք ՚ի միաբանութենէ սուրբ կատարինեայ
Անապատին կուսանաց գնացին ՚ի վանքն Տօմինիկեան և շրջե-
ցան ՚ի պապականութիւն, քնակեցան ՚ի նմին վանի՝ ուրացօղ
երիւեակ եւրոպացւոց և առոյգ վարդապետաց անպակաս լի-
նեը (որ թէ օրշափ գայթակղական է վարդապետի և կուսի
լինել քնակակից, Թող ընթերցողք վկայեսցեն) մինն ՚ի նոցանէ
մեռաւ, և միւսն մնացեալ էր կենդանի, մինչ կեղծեալ գե-
րապայծառն Պետրոս եղև վիճակաւոր պապականաց Ջուղայու,
սա յետ ոչ քանի աւուրց մտանելոյն իւրոյ ՚ի Ջուղայ, առաք-
եաց զնա ՚ի Պօլիս մտանել ՚ի վանս կուսանաց :

---

(1) . Աստ . պտ . գլխ ԺՁ . էջ 152 :

(2) . ,, Ջե ինչ ՚է վրդովման և նեղութեան ներքոյ կայսր , եր-
,, էնն ՚ի Ֆռանկաց պարսլոյ . . . ,, (՚է յեղափոխութեան ֆեռվարի
Ապռաձգաղանի մարեին գրեալ ՚է 1100 թուականէ) որ ՚է մատ երկ-
բորդ գլխ Ա . էջ 2 և 13 :

(3) . Ձեռագիր ֆռօրին Աղօթամատոյց գրեալ ՚է Սուրբ :

(4) . ,, . . . Ւսայց այժմ ՚է թուականէն Հայոց ՈՁՀ էն մինչ
,, ՈՁՁ . ոմանք էմատուածէր . . . նոր էին հերձուածք արդէն ՚է ազ
,, էկեղեցոյ սրբոյ . . . և զմանս ՚է փեւտաց յարանց և հանուց պատ-
,, րեցեալ ղաղտորութեամբ ֆեւթին ատ էնուեանս
,, . . . ,, (թուականէ գրեալ ՚է թուականէ հայոց ՈՁՀ . ընդդէմ
հեռուերցին ՚է ծաղկեփրկէն Հայոց Ջուղայու ՚է պապականութեան) :

(5) . Հրամայեաց տուեալ ՚է Շահալէյմանոյ ՚է Շահուլլեան Հօ-
ռէնէ՝ և ՚է Շահալըքի , զորոց լարգմանութենէն ոչ հարկաւոր հա-
մարեցաւ յեղափոխել , այլեպս ՚է նուա էաց ՚է խուվատոյ երկպատ-
կութենէն՝ ոչ լինելոյ աղէտօգուտ ինչ :

(6) . Գաղթական Շահրէմանեանց տուեալ աղերսագրոյ և ընկալեալ
հրամանաց՝ պահին ՚է գրուածն վանին :

(7) . Ինչուափէր տեսին գրեալ ՚է Յակոբ վարդապետէ Քէղվէ-
ռեան , որոյ ՚է յայտ եղեն մաղձ պատանութեան գրոցին , որ հա-

ճախան վրեցաւ ՚է Ջուղայ :

(8) . Ի կոչն Սրեփեանոց Աստղնորդին Ջուղայու :

(9) . Ի չուափէր տեսին Յակոբ վարդապետէ Քէղվէռեան :

(10) . Լսած վկայելոյ Յակոբ վարդապետէ Քէղվէռեան , այլ ընդ-
դատեցաւ ՚է Հռովմ չուափէր Յովհաննէս վարդապետէ Ջուղայեցոյ :

(է տեսին Յակոբ վարդապետէ) :

(11) . Ի տեսին Յակոբ վարդապետէ Քէղվէռեան :

(12) . Պահէ այն խոստովանութիւնէ ՚է վանէն Ամենափրկչէ :

Անուանէ փոխերայեցի տուողաց զայն խոստովանութիւնէ , են ,, Մա-
թամբան՝ փոխրէ . . . Մելքոնան՝ փոխրեան Քրիստոնեան և փոխրեան
Քրիստեան ,, :

(13) . Ընդունէ այն ուխտիւնէ զրուածոյն : Պահէ ՚է վանէն Ամենա-
փրկչէ :

(14) . Սահման կոչեցաւ ընդունել զչեռնադրութիւն քահանայու-
թեան ՚է Յովհաննէս եպիսկոպոսէ աստղնորդին Ջուղայու՝ եթէ զիրաղ
խոստման որ պահէ ՚է վանէն Ամենափրկչէ , և ուսման էնոփրայն այս է
պատճէն :

Ես ներքոյ ստորագրեալ Տէր Յովհաննէս Պետրոս Տարօնեցի կարօ-
ղաւ սրտիս էնձէն էմով յօժարութեամբէն , և աստանց ստիպոյ յորդորանաց
ոմանց՝ ընդունելով զանձնոյ մտանել ընդ լծով ստուեր կարեի և ստորեմանէ
քահանայութեան Հայաստանեայց ստուեր եկեղեցոյ :

Յաղագս սրոյ՝ զգուշանալոյ ուխտիւնէս Ամենաստուեր անուան ահաւորին
Աստուծոյ ստուեր ստուեր կարեի և ստուեր Աբեդարեան Տէսան Հերոյ
Յեսուայ հրէստուեր պարտանիչէմ զանձն էմ ՚է հնազանդութեան և ՚է-
հպատակութեան ընդհանրական գլխոյ Հայաստանեայց Աստուելական ստուեր
եկեղեցոյ՝ Մայր Ամենայ ամենայ Հայոց սրբոյ ենթադրելէն էմ Մ՚-
Աստնի ցարտան էմ կենդանի : Եւս և ներքին Մաստուր հեռայի Տէսան
. . . Սրբազնագոյն կաթողիկոսաւ հոմանի հայկազեան սեռաւ , և ամենայն
արքանաքահանգ յանդրզոյ և գահակալոյ ներքին : Նոյնպէս ուխտիմ և
խոստանամ էնդրեալ արտաւ կամ ինչ կիլո և հպատակ ՚է ներկայ և
՚է էսեայ ընդ էգխանութեամբ էստիճանագոյն հրամանաւ հրաշխատ ամե-
նայ սրբոյ Ամենափրկչէ վէճակէ Հայոց արքանավայել գերեւ և Աստու-
ծոյ ներքին Տէսան Յովհաննու Սրբազան արտ եպիսկոպոսաւ և ամենայն յոգնա-
ստոյց ներքին :

Ապա՝ նախ առաջին յանձնայն պըրտնէիէ մեզ եւ հոգւոյ իմոյ խոստովանելով պատուիրեմ վճռակամաց լուսաւորչապատում որբիս հոգալն՝ ըստ առիթի, աղքատաբար, ամէնից, եւ անբաժան, ինչ վարդապետից եւ ազգ հերձուածողացն :

Երրորդ՝ ձերիդ առաքելութեամբ ընդունիմ զերկու որբ ծոցովն Սբ Հայրապետացն հերոց, որ ընդդէմ չար հերձուածողացն գոմարեցան է նէիէսոյ, է կոստանդինուպոլիս. եւ է յիւիսոս : Նահ՝ զոր հանգանակն նվիրեալն յօժարիմ առել է ձէզ որբ նէիէցոյ եւ համարտուկ՝ յայն առաքն, յորս որբ եկիեղեցի հայաստանեայց պատանի, ձէ յաւելմամբ եւ զերծան է յորդոյ :

Երրորդ՝ հետեւիմ էսբէպաշտ համօրհնեալին Լուսաւորչին հերոց թախտէսով եւ Իարպատ ձիեսով որբոյն Գէորգեր Լուսաւորչին, որդոյ եւ Լուսաւոյ նորին, որբոյն Աբրահամ, Իւրզէ եւ Գրիգորիս Պատմագրեանին, որբոյն Ներսէսի Շնարհալւոյն, Յովհաննու որոտնեցւոյն եւ Գրիգորիս Տարնաց՝ոյն, եւ ամենայն ուղղափառ որբոց վերջապետացն Հայաստանեայց Եկեղեցւոյ :

Չորրորդ՝ հաստատեմ զքանն Պատմագրի յերկոց կոտրեալ էնամելիեանց ամձամ եւ անշքեղ հատորեալ է ի էնոնէ : Ես ցսոսիս Հոգին Պատմագիր՝ անեղ, անձամանաչ, ձէ ծնեալ, այլ էգնեալ է Հօրէ՝ եւ ժառանգից որդոյ :

Հինգերորդ՝ հրամայեմ եւ պատուիրեմ զԱրեւս, զԼուսին, զԸնկերսն, զնեպոտս զիւրեանս եւ զայլ ամենայն հետեւողս չար հերձուածողացն, եւս եւ զդիւրեանց պատանեաց՝ ոչ ունել :

Հոգւոյ նեպոյ՝ երէ պատանեցեմ զոյսոս ամենայնէս, գոնէ եւ ընդհանուն ասս, ընկալոյց զնդամ է Հօրէ, է յորդոյ եւ է սուրբ Հոգւոյն, եւ զդպրութիւս պատուականութեան է հոգեւոր պատասխանոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ :

Եւ վասն առաւել հաստատութեան սպասիս եմ եւ կնքեմ էսկանս մատամբ եւ կնքով էմով, որ է մ խառնարհ ծառայ,

Տէր Յովհաննէս Պատրն Յարութիւն որբէ Տէրոյս Սրբեցոյս։

Ինոր Քաղաքի է 16 Մարտի, 1834 ։

Վերոյ գրեալն իմ որբէ Տէրոյս Սրբեցոյս եղբօրն եւ ընդունելութեան վկայեմ Յարութիւն Տէր Յովհաննէս հանեցաւ ։

Գրան Յարութիւն Տէր Յովհաննէս որբէ Տէրոյս Սրբեցոյս հաստատեալ ընդունելութեան վկայեմ, Յակոբ վարդապետ ։

ԳԼՈՒԽ ՂՕ.

Նկարագրութիւն Քաղաքացս եւ գեղեցիկ պարագային նորա ։

Ա. Քաղաքս է ի հարաւային կողմն քաղաքին Սպահանայ՝ իբրեւ երեք քառորդ ժամու ճանապարհ հեռի ի նմանէ ։

Ակիզբն Քաղաքացս ըստ շէն դիրին իւրոց էր յեզերս Զայէնդէրուդի գետոյ, այլ այժմ նոյն կողմն յետ տանցն ամայացելոյ եղեն արտորայք եւ այգեստանք, ուստի այժմ սկիզբն մտից Քաղաքացս է ի դրսինէն որ մտանէ ի հրապարակն Մէյդան (1) Քաղաքացս կոչեցեալ, որ է եւ թաղն մեծ Մէյդան ։ Թաղք Քաղաքացս են մեծ Մէյդան, փոքր Մէյդան կամ փողոց հերախանայի, Զարսու, Յակոբջանեանց կամ Պրտուեանց, ղարագէլ, փօչէր, թարվիզեցւոց կամ Մահլաթ, եւ երեւան ։ Ի փողոցս Քաղաքացս կան առուք ընդ որ անցանեն Քաղաքացոյ ջուրք, որ ի պատուհանաց եւ պարտիզաց, յեզերս առուին կան տընկեալ ծառք, որք ի պատարիլ յեղանակի գարնան՝ նմանուին թիւն պարտիզաց ընծայեն փողոցացն : Ոչ ամենայն փողոցք են միաչափ, այլ երեք վանս լայնութեանն կոչին պողոտայ, որք են Զարսու Թաղի՝ փօչերա եւ թարվիզեցւոց ։ Իսկ մնացորդքն կոչին փողոցք, որք նեղ են քան զնոյն երիսն ։

Բ. Ինակիչք մեծ Մէյդան Թաղի ըստ մեծի մասին են յազգատոհմէ Աբգարեանց: Բազումք ի բնակչաց սոյն Թաղի ընդ որս և ամենայն Աբգարեանք են կալուածատեարք: Ի սմին Թաղի կան վանքն Ամենափրկչի, եկեղեցիքն սուրբ Աստուածածնի և Բեթղահէմի, որև Մէյդանի ժամ կոչի: Ի գաւիթ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն է դպրոցն Հայկեան Հայրենասիրական: Թիւ բնակչաց սոյն Թաղի, ըստ շնչագրութեանն եղելոյ ի 1851 ամի՝ հրամանաւ բարձր Սրբազան Տէր Թադէոս արք Եպիսկոպոս Առաջնորդի, բովանդակին տունք 54, արուք 191, էգք 200. բովանդակութիւն 391:

Հայաւմ Թաղի բնակին այլազգիք խառն ընդ հայազգիս՝ տունք իբրև քսան: Հինգ դրունք են սոյն Թաղի ընդ որ լինին եւ ելմուտ, ուստի ի խառն ժամանակի՝ դժուարութիւն է ամրացուցանել զայս Թաղ յարձակմանէ խռովասիրաց:

Գ. Ինակիչք փոքր Մէյդան Թաղի ըստ մեծի մասին են գինեվաճառք, ուստի և կոչի այն փողոց շիրախանի, կան և սակաւ կալուածատեարք: Եկեղեցին սոյն Թաղի կոչի Լուսաւորչի: Պատանգաւոր է յոյժ ի վերովիաւ ժամանակի ընդ այս փողոց առնել անցուդարձ, զի որջարան գոլով արբեցոց և սիկարեանց, անպակաս լինին անդ հարստահարութիւնք և կապ: Ինակիչք սորա ընդ վարիչքէն փողոցի ըստ 1851 տարւոյ շնչագրութեանն՝ են տունք 28. արուք 101. էգք 102. բովանդակութիւն 263:

Դ. Ղարսուն է նշանաւոր Թաղ, յաղագս ամրութեանն որ գոլով ի միջակիտի պատսպարի յայլոց Թաղից, և սակս չունելոյ զոք այլազգի կամ խառնիճաղանջ բնակիչ պատուաւոր Թաղ Ջուղայու համարի: Բնակիչք սորին ըստ մեծի մասին են արհեստաւորք, և սակաւ ոմանք տուր և առուծախ պարապողք: Եկեղեցին սուրբ Յովհաննու Մկրտչի է յայսմ Թաղիս, և փողոցն այնր կոչի "Ա՛ջի քուչայ", որպէս և եկեղեցին "Ա՛ջի ժամ", սակս նշանաւոր գոլոյ Ա՛ջոյ Յովհաննու Մկրտչի և ունելոյ զբազում ուխտաւորս: Այլ սոյն եկեղեցւոյ է և պատարինէ կուսանաց վենաստանն: Թիւ սոյն Թաղի բնակչաց

ըստ 1851 ամի Թուագրութեանն են տունք 67. արուք 177, էգք 233. բովանդակութիւն 410:

Ե. Յակոբջանեանց Թաղ է ի հիւսիսային կողմն Ջարսուն Թաղին և կից գոլով ընդ նմա՝ համարի մի Թաղ, սակս նոյն լինելոյ պատճառն և ելմտի ընդ այս և ընդ այն Թաղ: Նշանաւորք են եղեալ տունք սոյն Թաղի յառաջին ժամանակս՝ լինելով ապարանք մեծահարուստ իշխանաց:

Ներկայութիւն և այդհետանք բազում կան յայսմ Թաղի: Եկեղեցին է սուրբ Ստեփաննոս, որ ի ծոց իւր դաստիարակէ զմանկունս՝ ուսանելով զնիստ Ամենափրկչեան Դպրոցին, կոչէ սա և պրոտէչնց Թաղ, սակս լինելոյ անդ պրոտէչադործաց: Զիք և հայսմ Թաղի բնակութիւն ինչ այլազգեաց: Թիւ Հայ բնակչացն են տուն 34, արուք 83, էգք 96. բովանդակութ 197: Յակոբջան էր մեծահարուստ իշխան բնակիչ սոյն Թաղի, յորոյ անուն և Յակոբջանեանց կոչեցաւ Թաղն: Գերեզմանն նորա է ի խորանի ամառան եկեղեցւոյ սոյն Թաղի:

Զ. Պարագիլ է փոքրագոյն քան զամենայն Թաղս որք ի Ջուղայ, տունք որ ի նմա հայտնեն զաղքատութիւն նոյն Թաղի՝ Թէ յառաջին ժամանակս և Թէ արդ, զի են անձուկ պրութեամբ և շինեալք զօրէն գեղջկական տանց: Եկեղեցի սոյն Թաղի է յանուն սրբոյն Նիկողայոսի Հայրապետին, փոքրիկ պրութեամբ ըստ յարմարութեան Թաղին: Ինակիչքն են աստղանանկք կամ գինեվաճառք, որոց Թիւ է տուն 20, արուք 68, էգք 52. բովանդակութիւն 120:

Է. Վոչէրն յայլազգեաց կոչի "սանդրաշ", որ նշանակի քարակոփ. յաղագս լինելոյ յայնմ Թաղի բնակութիւնն քարահատից: Ի հին ձեռագիրս անուն սոյն Թաղի կոչի "գեաղաբաղ", սակս գետաբեր ազգի բնակեալ գոլոյ անդ՝ նախ քան զլինելն Թաղ Հայոց: Այլ մինչ ի 1630 ամի (24 ամօք զկնի մեծի տարագրութեանն) դարձեալ աճեալ եղեն գաղթականութիւնք ժողովրդեան ի Հայաստանայ հրամանաւ Շահաբասայ երկերիւր տուն ի Թաղէ սոսի նշանակեցաւ վասն նորեկ գաղթականացն Հայոց: Տուեալ Հրովարտակին յաղագս բնակեցուցանելոյ յայնմ Թաղի զերկերիւր տնեցւոյ Հայս՝ ունի

զՀետագայ Թարգմանութիւնն « Հրաման տիեզերակալ առ
« գերազանցեալ Սիհեդ միր Մահմէդ Թահէր Եալարքոն
« քաղաքին Սպահանայ , այն թէ յետ իմանալոյ քո զիմաստ
« սոյն հրովարտակի , զերկերիւր դատարկ տունս ի տանց
« պարսից (Գհարբազ) Գեաբռաքաղ Թաղին եղելոյ ի քա-
« ղաքիս պարտ համարեաջիր յանձն առնել գլխաւորին Հա-
« յոց Խոջայ՝ Սարաֆրազ քրիստոնեայ ծերագունին Հայոց
« Ջուղայու , զի նա տացէ զայնս առ իւրաքանչիւր Հայն որ
« չունիցի տուն՝ բնակիլ ի նմա : Ի 20 Մօհարրամ ամ-
« սեան յամի 1046 ,, (1630) : (2) :

Ի սոյն Թաղի է եկեղեցին որոյ սկզբնական անուն է Աւե-
տեաց , և այժմ սուրբ Ներսիսի վերաձայնեալ : Ելից սոյն Ե-
կեղեցւոյ է Տօմինեկեան վանքն Պապականաց : Թիւ բնակչացն
են տուն 35, արուք 102. էգք 127. բովանդակութիւնն 229 :

Ը . Գաւիթզիցւոց Թաղն ունի ընդ իւր և զդաշտն որ յա-
ռաջ ուրոյն Թաղ յորջորջեալ լինէր : Այս է այժմ առաջաւոր
Թաղն՝ի Ջուղայ ըստ բնակչացն յոլովութեան մասին : Մեծ
մասն բնակչաց սոյն Թաղի են կտաւագործ ոստայնանկք , իսկ
այլք ոմանք հիւսն՝ տուր և առօղջ ցորենոյ , կրպակաւորք ,
և այլ արհեստաւորք : Եկեղեցի Թաղին այնմիկ է յանուն
սրբոյն Մինասայ , որոյ սկզբնական անուն էր սուրբ Լուսա-
ւորչի : Ի ծոց սոյն եկեղեցւոյ է միւս գպրոցն որ շաբաթնակի
տրօք Պարսն Մարգարէ Սուքիասեան : Ծանրալուր առաս-
պելախօսութիւնք յաղախէին՝ի զրոյցս ոմանց բնակչաց սոյն
Թաղի իբրև տան ամօք յառաջ . ուստի ընդ կասկածանօք
լինէր անցանել ընդ այս Թաղ , զի մի՛ նշաւակ առասպելաբա-
նութեան եղիցի անկիրթ տղայոցն , այլ սկսեալ՝ի ժամանակէ
առաջնորդութեանն Թադէոսի Եպիսկոպոսի , թէ ըստ նորին
քարոզութեան և թէ ըստ բարի խրատուց Տէր Մարտիրոս
աւագ քահանային նոյն Թաղի , տեղի տուեալ անհետացաւ
նոյն անկրթութիւնն վարուց , և քաղաքավարութիւն մուտ
կալաւ՝ի սոյն Թաղ :

Գաշտ Թաղն որ այժմ համարի մասն Թարվիզեցւոց Թաղին՝
յաղագս լինելոյ Թաղ և տեղի բնակութեան վերոգրեալ

տեարցն լաղարեանց , արժանի է մեծ արանձնաց ունելոյ պատ-
ուակութիւն՝ի պատմութեանս այսմիկ :

Տունք բնակչաց Թարվիզեցւոց և Դաշտ Թաղին են 101.
արուքն 371, էգք 423. և բովանդակութիւնն 794 :

Այս Թաղ սակս բազմամարդութեանն առաւել ապահով
Թաղ համարի , ունի զերիս դրունս ելմտից : Ունի յայսմ Թա-
ղի բնակութիւնք այլազգաց տունք իրրև քսան :

Թ . Որպէս յիշեցաք յիւրում տեղւոջ (3) Թաղն երևան
ընդ որում և Թարվիզեցւոցն , չինեցան յետ յիսուն և մի ա-
մաց հիմնարկութեանն Ջուղայու , մինչ հրամանաւ երկրոր-
դին Շահաբասայ որոշեցան Հայք՝ի քաղաքամիջոյ Սպահա-
նայ : Սոքա էին Տէրունի ժողովուրդք ընդ Հայաստանութեամբ
սրբոյ Էջմիածնի , չունելով կախումն զԱռաջնորդէն Աժ-
նափրկչի վանաց , որպէս յիւրում տեղւոջ (4) պատմեցաք :
Բնակիչք սոյն Թաղի բնակին խառն ընդ այլազգիս . առաւել
Ջրվեռանդք են՝ի հաւատ և ժիրք յաշխատասիրութիւն ,
Մեծ մասն կարին զՀամեստս , և զհեզերկրիլ՝ի զիւղօրայս Լե-
ջանայ՝ քրոտամբ երեսաց վաստակեն զՀաց իւրեանց : Եկեղեց
սոյն Թաղի է փառաւոր կառուցեալն յանուն Աւետափրկչի :
Տունք Հայ բնակչաց սոյն Թաղի են 32, արուքն 107, էգք
130. բովանդակութիւն 237 :

Ժ . Այլևրեակ Թաղք , են կողմն գետոյն Զայանդէրութայ
որ Համարի հին Ջուղայ , յորս ամայացեալ եկեղեցիքն են
Դաղարիթ , սուրբ Յակոբ Խիարայ , Թովմայ առաքեալ կամ
զանգալ ժամ , սուրբ Հոգի և սուրբ Յովհաննէս Աւետարա-
նիչ՝ Շահվէլէնց կոչեցեալ :

Ժողովրդն կոչեցեալ գարիբէնց է՝ի շարս այսր կողմանս , ունի
տակաւին զկնդ տուն Հայ բնակիչս , ուր և կայ եկեղեցին
սրբոյն Գէորգայ , այլ թէ եկեղեցին և թէ տունքն յաւերն
կան խոնարհին , ուստի ոչ է յուսալի մնալն նոցա ընդ երկար
՝ի հաստատութեանն իւրեանց , վասնորոյ ընդ աւերակս է դա-
տելի : Մասն Թաղին երևանայ , յոր ամայացեալ եկեղեցին է
Թաղեայ՝ սուրբ Յակոբն . և տնային եկեղեցին Շաֆռա-
զեանց : Թաղն ղէյնուն (5) որ մեծ ղարագէլ կոչի , ուրա-

նօթ կան ամայացեալ եկեղեցիք, Օհանայ վանք. Անանիայ Առաքեալ և պատկանացն ջկզվիթ : Գաւիտ · (6) որոյ երկու են ամայացեալ եկեղեցիք , սուրբ Մինաս և սուրբ Աստուածածածին :

ԺԳ · Ջորս բաղանիք են՝ի ջուղայ որք չէն գոլով են գործ ճաճական, մեծն և նշանաւորն է՝ի թաղն Թարվիզեցւոց, (7) երկրորդն՝ի թաղն Ջարսոս , (8) երրորդն՝ի թաղն Մէյդան որ հանապազօր չէ գործածական, (9) և չորրորդն՝ի տան Ամիրխանի Յովհաննէս Ամիրեան (10) : Ջորս բաղանիք և սքընդ ամայիս դասեցան :

ԺԴ · Հանգստարանն ջուղայու է առ ստորոտով Սովայի լերին, դաշտ ընդ արձակավայր , յորում կան բազում շիրիմք հայ ննջեցելոց որչափ յայտնի որոց քարինքն երևին , նոյնչափ և անյայտ յաղագս ժամանակին հաւասարելոյ գետղի պիրեզմանացն : Յառաջին ժամանակս ակնառուոր աղգատոհմք զննջեցեալս առհմի իւրեանց ամփոփեալ են յորիշ ինչ տեղւոջ , ուստի գերեզմանատունք իւրաքանչիւր մեծատուն ազգատոհմից գտանին զատ և որոշակի : Հանգստարանն վարդապետաց և կուսանաց որոշ՝ի հանգստարանէն հասարակաց կայ յարևմտեան կողմն , սակաւ ինչ հեռի՝ի միմեանց :

Ի վերայ շերմաց նշանաւոր աղգատոհմից յառաջին ժամանակս կառուցեալ կային մատուռք կամ հովանաւոր սեղնեակք , որք այժմ ամայացեալք՝ երևին դեղ հողոյ :

Ի մուտս Հանգստարանին անցանէ առուն Հաղարջնիոյ , որոյ զջուր երբեր Մանուչարխան Մօթամէդն : Կայ անդ և այգին գօտգինաբաղ, ուրանօր բազում անգամ ժողով լինի օթափեղոյ՝ ի տրտմութենէ : Մեծամեծ քարինք կան՝ի վերայ ոմանց տապանաց, զորս մեծաճախ և տարժանակիր աշխատութեամբ բերեալ են՝ի հեռաւոր լերանց : Հեռաւորութիւնն սորա՝ի ջուղայոյ լինի իբրև երեք քառորդ ժամու ճանապարհ :

Ելատ ծերոցն աւանդելոյ գնեալ հղև այս հանգստարան՝ի Շահաբասայ , այլ ինձ հաւանական թուի ասել՝ի պարգևատացեալ քան թէ գնեալ պրամոյ , զի՝ի նմին հանգստարանի կան տապանաքարինք քանի մի որք ունին զթուական ՌՀ , այն

Ե 55 ամօք նախ քան զհիմնարկիլն ջուղայու :

---

(1) · Մէյդան է բառ պարսից որ՝ի հայոց ասի հրապարակ : Ի այն հին եկեղեցւոյն լրնկղմելի, զի յառաջին ժամանակս շինեցաւ այն հրապարակ՝ ի շինուղ նոյն եկեղեցւոյ : Լինի անդ յաղնային հնութեան փոփոխմունք : Ըստ որոմ խուզմ լինեալ ոմանց՝ի հայոց, յառաջ հնէին հին յառաջ՝ի վաճառս պարսից, վասնորոյ յամի 1847 կրեցան զհնէն փոխել՝ի շուքն , այլ վասն եղեալ խռովութեանն ընդ մէջ հայոց և պրոցի այլազգեաց , և ոչ փոխեցին պրոնովաճառն՝ի նոյն շէնքն հոսկ ապա եթէ ոչինչ ծախսարկութեամբ փոխադրեցին պրօնովաճառն՝ի Մէյդան ջուղայու անփոփոխ պահելով գրաւոր հնութիւն : այն վճռոյն հաստատ և պահ առ ոմն վճռից 20 ընտրեալ : Յամի 1857 շէնեցան յարևելեան հնոյնն նորա հրապարկ , այլ ինձ առանց վճռից :

(2) · Այն հրապարակ պահէ՝ի վանէն Ամենափրկչէ :

(3) · Հայ · Ա · գլ-ին ԺԷ · եԼ 79 :

(4) · Հայ Է · գլ-ին Ա · Յ · Է · եԼ 96 :

(5) · Սոյն նոյն ինձ պատմեալ կամ լսեալ ունիմ ես զանազան ինչ ի ջուղայեցւոյ Նազարէթ էնտի յակոբեանէ՝ի հայոց ըստ ծերոցն պատմելոյ՝ եթէ առ այլազգեաց , վասն որ չարաչօրեցան նոյն նոյնպէս պրոցի այլազգեան առաջի նազարէթի , նոյնպէս հայոց հրամայեալ ընդ Աղաճան հաստատել կնքագրութիւն առ էնգլեան , և մանաւանդ հայոց Աղաճան հրամայեցին զհաստատել նոյնպէս պրոցի այլազգեան :

(6) · Յեռ գեղեցկագոյն էնկլեցի գեղակերտ գոհարից , զոհ անգերազանց , ոսկով պերպեռեալ յայլազգեաց հարկեալ արարեն արուեստիս · Աստուածածին վանացն Ամենափրկչէ սկսեալ՝ի խաչատրոյ երկրորդէ հինէն ցարդ՝ գոն գործեցին սեպհականել գկնքագործ գոհարիցն ոչ ինչ ոք ի 60 ընդէ, և յառաջ ոչ սեպհականէալ է այլազգեաց , և արարքն ընդ ժամանակս ընդ ժամանակս գնացեալ են՝ի ձեռս ոմանց , ընկալան գհրամանն՝ի Թեհրան , յեպարխոսէ և՝ի նշանաւոր Նախարարէ , այլ պաշտպանութեան գործալայլազգէ գերեզման այր ինչ գնացեալ՝ի Դերեզմանն ոչինչ՝ ապրեցեալ կացուցանէն զանոնք և գնացեալ գերեզմանն : Խաչատուր Աստուածատուր յամի

1840 թուականէն ետքը յարձակում կրած եւ աւերուած էին, եւ վանքերէն ոմանք ամբողջապէս ամայացած էին, ինչպէս օրինակի համար Ս. Աստուածածին վանքը Ջուղայի մէջ, որ ժամանակին շատ ընդարձակ էր եւ շատ մեծ թիւով վանականներ կ'ունենար, բայց 1840 թուականին ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Կարապետ վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Գէորգ վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Սարգիս վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Յակոբ վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Թադէոս վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Ստեփանոս վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Նշան վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Աստուածածին վանքը Ջուղայի մէջ, որ ժամանակին շատ ընդարձակ էր եւ շատ մեծ թիւով վանականներ կ'ունենար, բայց 1840 թուականին ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Կարապետ վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Գէորգ վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Սարգիս վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Յակոբ վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Թադէոս վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Ստեփանոս վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։ Ս. Նշան վանքն ալ նոյնպէս ամայացած էր, եւ ոչ մէկ վանական կար անոր մէջ։

(7)։ Ըստ յայտնելոյ յեղափոխիչներ յեղափակռանին ընեցան էին ի Ջուղայ Նոտրը էշխանէ յամի 1615 կամ 20։ «Աղնուական փոհմ և ռեճալոփ էշխանաց էշխան հարուստ Սահակ պովլոն վէլինամոս վերոյ գրեալ (Ջուղայ Մելիք տէր) պարոնն ... Արդ եանդրահէ լինէ սահակն, որ յաւելնի ռեր ներվէնը խուշն ոլիչ էր համանի կողմանէ, ռեր խշլուխնն արդ արարիւ ողորմած հոգի ռեճ խօլնի, նա ռեր խշլուխնն եմացաւ՝ եէեր էս համանի տեղ շինէց»։ ... ։ Է արդի նշանաւոր բաղանիքն ի Ջուղայ։

(8)։ Շինեցաւ այն էերբ 80 ամօտ յաւելի տուր ղրուխեամբ ի Տէր Մինաս քահանայէ։

(9)։ Այն բաղանիքս կոչի Շահրիմանեանց, ռեճ բաղանիքն է վայելչագեղ և ռեճոճախ կառուցեալ ի վերայ ոեանց, որ այժմ ամայացեալ չէ գործածական։ Եւկ ռեա տուր բաղանիքս նորա ղրկեալ վան հարուածոց, այժմ ռերի գործածական է և ռերի խնդալ։

(10)։ Որովհետև էերբ 25 ամօտ յաւելի շինեցաւ այն ի հոգի ռեր Սարգիզ, վանորայ է լոտ տարագրութեամբ բաղանիքն։

ԳԼՈՒԽ Լ.

Տնտեսական վիճակ Ջուղայեցւոց, և համառօտ նկարագրութիւն յաղթող այնր։

Ա. Ի սոյ թուագրութեանն նշանակելոյ ի նահանգաց գըլուխ՝ բնակիչք Ջուղայու բովանդակին 371 տուն եւ 1204 արուք և 1382 իգականք։ Ըստ կենցաղավարութեան մասին որոշին սոյն բնակիչք Ջուղայու ի չորս դաս։ Առաջին դասն է արժանաւոր և վայելուչ եղանակաւ վարողաց կենցաղավարութիւնն իւրեանց։ Քահանայք ունին զառաջին տեղին յայսմ առաջին դասու, զի նոքա քահանայական հնդկաստանի վիճակացն ակնկալութեամբ, և զամս չորս կամ հինգ վիճակաւորեալ քաղաքացն Հնդկաստանի՝ վերադառնան իւրաքանչիւր ոք ըստ կարի շահելով զբաւականն գումար։ Թիւ քահանայից ի Ջուղայ այժմ է երեսուն և վեց, յորմէ քսան միշտ ի վիճակս մատակարարեն զպաշտօն իւրեանց, և վերջապանքն մնան ի Ջուղայ։ Ի քահանայս և ի կայ զանազանութիւն վիճակի կենցաղավարութեան, զի գտանին ոմանք աղքատք, այլ ըստ իմ խորհրդածելոյ առիթն նոցին աղքատութեան է ոչ իմանալն նոցա ի գործ ածել զալջողաձև բաղդին։ Ձերկրորդ տեղին յառաջին դասուն ունին նոքա՝ որք մանաւանդ ալէս ալարապին ի գործս վաճառականութեան, որոց թիւ հազիւ թէ հինգ վեց։ Տուն կամ գերդաստան իրրև հրեսուն և հինգ կամ քառասուն, ընդունելով գտարեկանն նպաստ յընտանեաց իւրեանց և ի մերձաւորաց եղելոց ի հնդիկս և ի Ջաւայ, համարին ի թիւս երկրորդ աստիճանի առաջին դասուն։ Առաջին միջոցն արդեանց Ջուղայու է նպաստաւոր զոր ընդ

ձևռէ Հնդկաստան և Ջաւայ թէ առ վիճակաւոր քահանայ, և թէ առ լընտանիս և առ բարեկամս եղեալ ի Ջուղայ. որոյ գումար առ ամն ըստ իմ հաշուելոյ ոչ լինի պակաս քան զվեց հազար թուման: Ի գումարոյ անտի կենցաղավարին վանականք, կուսանք, նաև վարժապետք և ուսուցիչք դպրոցաց: Ըստ իմ կշռադատութեան հարիւր տուն ի Ջուղայ կան յառաջնում դասու կենցաղավարութեան, ոմանք զառաջինն և ոմանք զերկրորդն ունելով աստիճան:

Երկրորդ դասն կենցաղավարութեան՝ է արհեստաւորացն վիճակ, որք վաստակեալ ըստ կարի՝ պահեն զգերդաստանս իւրեանց միջակսահման եղանակաւ: Արհեստաւորքն ի Ջուղայ են վերջակ 10, գնօղք և վաճառօղք գուլբայի 30, ոսկերիչք 10, հիւսն 6, դարբին 4, նպարավաճառ 5, մանավաճառ 6, գնօղ և վաճառօղք ցորենոյ 8, ոստայնանկութեան կամ կտաւագործութեան գործարան 130: Մեծ մասն կանանց գործեն զգուլբայ, և բազում արք յոստայնանկութեան պարապին: Շահ ոստայնանկութեան առատ էր իբրև տասն ամաք յառաջ, մինչև կարող լինել նոցա ոչ միայն զգերդաստանս իւրեանց խնամել բարօրութեամբ, այլև մթերել ըստ կարևորին զՀոխութիւն, այլ այժմ վաստակ իւրաքանչիւր բարեչան ոստայնանկի ոչ է յաւելի քան զտասն շահի առօրին: Ի տարին 130 կամ 140 հազար կտաւ ելանէ ի Ջուղայոյ, և 25 ց30 հազար զոյգս գուլբայի. Թիւ սոյն երկրորդ դասու բռնդակի ց140 տուն:

Կալուածատերարք ևս պտանին ի Ջուղայ իբրև քսան տուն, որք ունին զայգիս խաղողոյ և պտղոց և զկուտինս արմտաբեր, այլ որովհետև սակաւաշահ են կալուածք ի Ջուղայ, և բազմածախ (1). և անպակաս է հարուածք ցրտահարութեան այգեաց, վանորոյ նոքա ևս որք կալուածոց են տէարք, չուենելով զմեծ արդիւնս՝ ըստ կենցաղավարութեան մասին են դասակից ընդ արհեստաւորացն:

Երրորդ դասն է վանն քրտնաջան վաստակաւորաց և մշակաց որք են ուսմնադիրք, քարահատք, բաղնեպանք, սափրիչք, գինեվաճառք, կօշկակարք, համեստակարք և այլք՝ որք վարձս

գործ մշակութեան, և օրական վաստակօք հայթայթեն ըզպէտս կենաց, որոց թիւ լինելոց է ց80:

Իսկ երրորդ դասն է տանուկաց և չքաւորաց՝ որք ապրին տառապանօք և հեծութեան ցաւօք, և թիւ նոցա ոչ է պակաս քան զ50 և զ60 տուն:

Ընդ ամենայն ուրեք՝ նոյնպէս առաւելութեամբ և ի Ջուղայ հարկաւոր է տնտեսական խոհեմ կառավարութիւն, որ գլխաւորապէս կախի զկանանց, սեստի որոյ ժրաջանութեան է տիկին՝ հաստատուն ընթանալ և տնային կառավարութիւն: Ըստ որում սովորութիւն է ի Ջուղայ գնել զտարեկան պարէնս և ի տան ամբարեալ պահել, վասնորոյ առաջին պարտք խոհեմ տնարարութեանն է գնել զամենայն ինչ յիւրում ժամանակի, զի թէ ոք ոչ գնեսցէ զիր ինչ ի պատշաճաւոր ժամանակին՝ լինի զանազանութիւն ծախսարարութեանն 25 ց30 առ հարիւրն:

Գնել զտարեկան պարէնս՝ ըստ չափու հարկաւորութեան իւրաքանչիւր աւուրն, ասիկինն ժրաջանէ ի գործ, առանց կարօտելոյ ինչ ունելոյ գնելոյ ի կրպակէն՝ բաց ի մոլ: Ի տան թխեն զհաց լոշ և չորացուցեալ զայն պահեն ցերկու և ցերիս ամիսս, և թրջեալ ի ջուր վայրկենի քաղցր ախորժանօք: Իւրաքանչիւր տուն ունի ջրհոր ակնակիտ՝ քաղցր և ախորժահամ ջրոյ, որք թէպէտ նուազին այլ ոչ ցամաքին ի սաստիկ ամառան, ուստի ի մասին ջրոյ՝ չիք ումեք նեղութիւն ինչ կամ պէտք լինելոյ զսառնիչս ի պահել անդ զջուր:

Սասարակաւոր չիք պէտք ծառայից կամ աղախնեայց ի Ջուղայ, զի զո և իցէ գործս արտաքոյ տանն՝ կատարէ այրն, և զտնային կառավարութիւնն վարէ կինն, ի հարկաւոր դէպս միայն կոչելով զվարձուորս կանայս, որք երթան վասն հացթխելոյ, զհանդերձս լուանալոյ, և զծանր գործս ինչ կատարելոյ: Ջունին կանայք պէտս ստնտու կանանց, զի իւրաքանչիւր կին մայրական կթով մնուցանէ զիւր զաւակունս: Ցաղագս այդորիկ բազում է գումն ծնողաց Ջուղայեցւոց առ պաւակունս իւրեանց, և զաւակացն սէր առ ծնողսն:

Դ. Ամենայն սակաւ է արդիւնք և շահ վաստակոց՝ ի Ջուղայ, այլ Թեթևապէն լինելն ամենայն սպառնից (2) ընդ զեթերին պակասութեան վաստակոց, զի իւրաքանչիւր մշակ որոյ օրական վաստակն ելեալ տասն շահի՝ կարող է իւրով կամաւ և երիք զաւակօք միխիթարութեամբ կենցաղավարիլ։ Զիք կարօտութիւն տան կամ հարկ՝ ի վարձու ստանալոյ ըզտուն, զի կան այնպիսի տունք որք թէ յաղագս մեծութեանն և թէ սակս բնակչացն պակասութեան՝ առանց լինչ վարձու տուեալ լինին բնակութեան տեղի ու և իցէ խնդրարկուաց։

Ե. Վասնի կամ այլ ընդհանիք ոչ դնեալ լինին ծանր գնով, այլ իւրաքանչիւր տուն ունի չափան՝ կարաս՝ և գինետուն, վասնորոյ՝ ի կութս խաղողոյ իւրաքանչիւր տուն ըստ չափու գործածական հարկաւորութեանն գնէ զխաղող և պատրաստէ զգինի կամ զօղի, որ լինի դիւրապնոյ յոյժ վասն տանուտէրանն։ Լաւութիւն գինւոյ կախի զհոհմութենէ անտեսական կառավարութեանն, զի որ ոչ խնայէ՝ ինկարևոր վաստակս վերակացութեան խնամոյ՝ պատրաստէ զգինիս թէ ոչ վերադաս՝ այլ և ոչ պակաս քան զեւրոպական լմնկելիս։ Զորս տեսակ գինւոյ պատրաստին՝ ի Ջուղայ, առաջինն քիշմիշ կամ սորեկ խաղողոյ, որ լինի բնութեամբ ջերմ՝ սպիտակ գունով, և դիւրաւ ջեռուցանէ զգլուխ ըմպողին և տայ զգլուխացաւ։

Երկրորդն ‘‘ալվանդ,, կամ հասարակ խաղողոյ որ բնութեամբ է բարեխառն գունով կարմիր, և առաւել գործածական։ Երրորդն է սեաւ կամ ռանգ, զոր կազմեն՝ ի սեաւ խաղողոյ, որ բնութեամբ է հով, այլ բազմաց՝ ի Ջուղայ ոչ ախորժական ըմպելոյ։ Չորրորդն է նաջաբադի յաղագս՝ ինաջաբադ գեղջէն բերելոյ զխաղողն։ Որոյ գինին լինի ըստ տեսակին ալվանդի, այլ քան զնա առաւել զօրաւոր և բարեհամ։ Բաց՝ ի քիշմիշէն զմիւս խաղողն պարտ է փոռել յաւուրս քառասուն զի ցամաքիցի ջուրն՝ և ապա արկանել՝ ի հնձան, զքաղցուն և զկիսախաճն խաղողոյ միանգամայն աճելով՝ ի կարաս, և խառնելով յամենայն օր մինչև պարզեսցի գինին. արջառի հնձանն գինիք՝ ի Ջուղայ՝ այնչափ աղնուանան, զի

ծտանան զհամ ազդու և ախորժ, տան զհոտ հնութեան, որոց ընկալօղն զգայ զներգործութիւնն ցաւութս երկուս։ Գիրիշ պատմութեանս պահեալ ունէր գինի ցերեքտասան ամն, որ գերազանցեալ էր յոյժ ըստ ազնուութեան համոյ և զօրութեանն իսկ։

Զ. Ցարագ զգետուց արդի արանց Ջուղայու է ըստ ամենայն նմանութեան պարսկական հանդերձից, այլ ըստ պատկերացն վկայելոյ՝ նախնիք Ջուղայեցւոց ունեցեալ են զհանգերձս այլատարազ քան զպարսկականն, զի նմանութիւն ունին զգեստք նոցա գուռջի կամ վրացի զգեստուց. զոյոցի հատ՝ ի մէջս, և զվակերդ ունելով՝ ի գլուխ։ Ցարագ կանացի զգեստուցն ըստ բազմաց վկայելոյ նոյն է զոր ըստ բերին՝ ի Հայաստանայ. վերին հնձերձ կանանց կոչի Թակալայ. որոյ լանջն և գոգ բացէ, և քղանցք կամ վերին գոգ ծածկեն զայն։ Ծածկեալ են գլուխք նոցա չորիւք վաթ-ուԹանօք, որոյ վերայ դնեն զկօտ, կապեն զքղնթակալ, արկանեն զլանջածածկոցն՝ որ մանդիլ կոչի, և յամառան՝ Թօռն, և շղարշապատեն զգլուխն։

Է. Յառաջին ժամանակս իսկ յորժամ՝ ի հնոխութեան լըցաւ Ջուղայ, ՝ի մէջ ինքեան ոչ լինէր աւելի վաստակ՝ քան զապրուստ իւրաքանչիւր վաստակաւորին. ուստի յայտ է Թէ ՝ի մէջ Ջուղայու Թէ յառաջն և Թէ այժմ այնչափ միայն լինի վաստակել՝ որչափ սակաւածախս պէտք տան իմիք պահանջէ։ Յորդութիւն առաջնադար փարթամութեանն Ջուղայու պայր յարդեանց վաճառականութեան, որոյ բազուկ տարածեալ էր՝ ի զանազան հեռաւոր սահմանս, զորմէ վկոքր՝ ի շատէ՝ ի պրակ վաճառականութեանն ծանուցաք։

Ը. Խափանեալ հաստատութեանն Ջուղայու է վանքն Ամենափրկչի, և գնատավարութենէ առաջնորդացն կախի բարօրութիւն կամ տարաբախտութիւն բնակչացն։ Զի Ջուղայեցիք չունին այժմ չնորհիւն Աստուծոյ ներողութիւն լինչ՝ ի կողմանէ Տէրութեան, այլ վայելեն յառատ չնորհս նորա՝ որպէս ազատ քաղաքացիք. ուստի գան երբեմն հարստահարութիւնք լինչ՝ ի մանաւորաց Թէ՝ ի քաղաքական կառավա-

րութեանէ և թէ յոմանց յայլազգեաց, վանորոյ եթէ եղիցի առաջնորդ ժողովրդականամ, անձնապէր օգտի հասարակութեան, և պաշտպանող իրաւամ հօտի (որպէս է արդի Առաջնորդն թաղէոս) վանին ներգործութիւնք նոյն մանաւանդ հարստահարողաց, և ժողովուրդն ոչ կորուսանէ դիւր թարօրակեցութիւն. այլ թէ ընդ հակառակն առաջնորդն իցէ երկչոտ, անփոյթ վանս խնամոց ժողովրդեանն, և անձին իւրոյ փառասիրութեանն և եթէ մտադիր, ոչ պակասի նեղութիւն ջուղայու բնակչաց ի մանաւանդ հարստահարողաց՝ որք են ինքեանց դրացի այլազգիք, կամ քաղաքական կառավարութեանն փոքր իշխանաւորք:

ը. Ըստ բազմաց խոհական խորհրդածութեաց բաղձալուր լինի Ջուղայ եթէ ունիցի ի ծառայութեան Տէրութեան ըզքանի մի հարազատ Թարգմանս կամ զայլ ծառայողս որք իցեն ի բնակչաց Ջուղայու, զի նոքա ի բարեդէպ ժամանակս հրաւիրելով զբարեգթութեան ընծորհ Տէրութեան առ Ջուղայ՝ ոչ սակաւ նպաստս մատուցանեն իւրեանց Հայրենեաց: Ըստ այսպիսի խորհրդածութեան յանցեալ ամի առաքեաց Սրբազան Առաջնորդն զերկու Ջուղայեցի տղայս ի Չեմսրանն վերհազնեայ Տէարցն Լազարեանց ի Մոսկով, զի հմտացեալ ի գանազան մակացութիւնս՝ սիրտոյասցին և ծառայութեան Տէրութեան, և նպաստեսցեն Հայրենեացն: Այժմ ընդհիւն Աստուածոյ ելոյս Ջուղայեցիք գտանին ի Տէրութեան ծառայութեան, որք են Յակոբեան և Աբրահամեան եղբարք, Մէլքումեան որդի Յակոբ խանի, և Թարգման Յարութիւն եղիազարեան:

---

(1). Յամառօտ ի յամառօտէ Ըստ հոգւոյ լինին եղեմբ հանել զԱ-ք ի Ըհմտոյն և ոտոգանել զայգիս և զպէնայն արմտիս, վասնորոյ այժ ծանրութիւն յանելու զծախսն հնութեանց և նուաղեցուցանէ զշահն: Վասն ետրտանչէ-ք այգեաց երեսս կամ ընդեսս հարկ է հանել զԱ-ք ի Ըհմտոյն, որ վասն և ոռնոյն այգիք Ջուղայու ունին զԱհմտոյն ընդ պէտս ոռոգման:

(2). Ալէ-ի է այժմ ընթրն տասն՝ շահի, հացն՝ 8 շահի, իւղն 4 և հնս 5 շահ, բրինձն 18, 20 շահի, գայդն 1 և հնս 2 շահի, ձէթն՝ 2. 2 և հնս շահ, ջուն՝ 32 48 շահի: Ի-ետրտանչէ-ր ընթր է 1280 մոխալ, և ետրտանչէ-ց մոխալ՝ 24. ոխտանտիչէ:

ԳԼՈՒԽ Ը.

Ընդհանուր Եկամտաբերութիւն Ջուղայեցոց:

ա. Ինչին ամենեքեան զսիրտ քնքուշ և զգացողութիւն նուրբ, ուստի սիրեն զկեանս ազատամիտ: Դժուարութեամբ ժուժեն նախատանաց կամ անարգութեան, և յաղագս այնոցիկ դիւրաշարժ են ի սրտնեղիլ: Այսպիսի քնաւորութիւն կարծի յոմանց ամբարտաւանութիւն, այլ ինձ առաւել յարմար թուի քնական վեհմտութիւն հոգւոյ կոչել զայն: Աշխատասէրք են և տաղտկացողք ի պարապորդութենէ, աչալուրջ են ի գործառնութիւնս իւրեանց, և դժուարաւ խաբէն յուսմեքք: Վարժապետ այնպիսի աչալրջութեան է ազգն՝ յորոց մէջք բնակեալ կան, զի ի տուրհաւառութիւնս մանուածոյ հնարագիտութիւնք նոցա դաստիարակեն զ Ջուղայեցիս լինել աչալուրջ՝ վասն ոչ անկանելոյ ի խորխորատ վնասուց: Եթէ ունիցին զկարողութիւն՝ սիրելի է նոցա կենցաղավարութիւն չափաւոր և վայելուչ, և յաւէտ ի շռայլութեան քան զ ի ժլատութեան կողմն հակին ընթացք նոցա: Հիւրասիրութիւն ի նոսա տարրացեալ ունակութիւն ինձ է, և ցանկան զպանդուխտ համազգիս շահել ամենայն մարդասիրութեամբ, և եթէ հիւր հատազգին իցէ արժանաւոր ոք, ոչ

քանայեն ՚ի նմանէ մինչև անդամ զբիբս աչաց իւրեանց ։ Եղեն բազումք՝ որք պանդխտութեամբ իւրեանց հիւթասիրեցան ՚ի Ջուղայ , և ՚ի բացակայութեանն իւրեանց ապրանքատարք հինգնեցին զՋուղայեցւոցն մարդասիրութիւն , որ առիթ եղև Ջուղայեցւոց չափաւորելոյ զհիւրասիրութիւնս իւրեանց . իսկ եղին և ոմանք որք զանակաւօրեայ առատձեռնութիւն Ջուղայեցւոց անմոռանալի պահեցին և պահեն ։ Կարեկցութիւն և գութ առ ընկերն առատացեալ է յամենեսին , և ոչ առնին ղենայուածն կարևոր ձեռնտուութեանց ։

Յօտարութեան՝ զքաղաքացի համազգիս իւրեանց սիրեն սիրտ մտերմութեամբ , իսկ ՚ի Ջուղայ՝ նուազ ներգործութեամբ է այն զգացումն ։ Ասումնասէրք են , և իբրաքանչիւր ճնող գուն գործէ զմանկունս իւր առաքել ՚ի դպրոց , իսկ մինչ չափահաս լինի տղայն՝ այնպիսի ծնօղք որոց կարողութիւն ոչ բաւէ տալ զհաց և զհանդերձ մանկանն զի դաստիարակեսցի յաւժմունս , աղի արտասուօք զտղայն ՚ի բաց հանէ ՚ի դպրոցէն՝ զի նա իբրև վաստակօք հոգասցէ զապրուստն իւր ։ Մանկունք նոցա սրամիտ են , ընդունակք ուսմանց՝ և ջանասէրք վասն առաջադիմութեան , ուստի զամենայն մանկացուելիսն առանց դժուարութեան մարթէ նոցա ստանալ պիտոյ՝ եթէ եղիցին վարժապետք հմտացեալ , և ուսուցիչք՝ բարեկիրթ ։

Ը . Հայրենասիրութիւն և ընտանեսիրութիւն եռանդնոտ է ՚ի նոսա . Ջատագովութեան արժանի են ըստ այմ մասին նոքա՝ որք ՚ի Ջուղայոյ գաղթեալ ՚ի հնդկաստան կամ ՚ի Ջաւայ՝ հասին ՚ի ծովութեան , զի առ ընտանիս՝ առ աղքատս՝ առ տըներանկիս՝ առ եկեղեցիս՝ առ դպրոցս և առ վերաբերեալն նպաստս ազգային ոչ խնայեն զտուրս իւրեանց , այլ ՚ի բուռ աղբիւրք առատնորակք որով զբազումս զովացուցանեն ։ Թուի ինձ թէ ըստ օրում ՚ի Ջուղայ կրեն նոքա զնեղութիւնս , թէ յԱզգէ՝ յորոց սիրոյն քնակեալ կան , և թէ ՚ի դառն փորձոյ աղքատութեան , վանորոյ զգենուն զսիրտ գորովալի և խանդաղատական , և կարեկցելով իւրեանց եղբարց՝ յիշատակաւ Հայրենեացն , առնեն զառատաձեռն օգնականութիւնս մինչ

հատանեն աղօղութեան ։

Պատուի այն եռանդն և այն ազգասէր զգացումն յորդինոցա՝ որք ՚ի հնդկիս ծնանին և կաթամբ սնամորթ հնդկացն անանին և զարգանան , յորոց դուն ուրեք պատահիցէ որպէս ընթացին ՚ի շահիլ հայրենասիրութեան չասեմ և բարեպաշտութեան ։ Ուստի հաստատի կարծիքն իմ , թէ Ջուղայ է՝ որ տպաւորէ յորդիսն իւր զգացումն ազգասիրութեան և հայրենասիրութեան ։ Երևանասիրութիւն ջերմ էր ՚ի նոսա յառաջին ժամանակս , որոյ ապացոյցն է քսան և չորս եկեղեցիքն յընթացս գոգջիր յիսուն ամաց չինեալ ՚ի Ջուղայ , և այժմ ևս բաղդատութեամբ այլոց քաղաքաց կամ ժողովրդեան՝ Ջուղայ ըստ կրօնասիրութեան մասին գտանի առաւել ջերմեռանդ և բարեպաշտ ։ Մեծ է պարծանք Ջուղայեցւոց յաղագս հաստատուն պահելոյ զկրօն քրիստոնէութեան , դիմակալելով հազարաւոր տեսակ հալածանաց , վշտաց , նեղութեան , զրկանաց , աղքատութեան , խարուանաց , կապանաց և ազգի ազգի հարստահարութեանց (զորոց փոքր ՚ի շատէ ՚ի կարգի պատմութեանս յիւրաքում տեղւոջ ճանուցաք) որք սկսեալ ՚ի ժամանակէ Թագաւորութեանն Շահսուլթան Հոսէյնի քաղաքեցին զնաւն անխորտակելի՝ զեկեղեցին քրիստոսի , որ նահապետութեամբ Յիսուսի յաղթեալ ամենայն դժուարութեանցն ամբարձելոց՝ փառաւոր կացոյց զինչան խաչին ՚ի վերայ գմբեթից եկեղեցւոյ որք գտանին այժմ ՚ի Ջուղայ ։ Ջուղայեցիք էին որք կարեն պարծանօք ասել թէ կամեցուսեր ՚ի քրիստոնէութեան կեալ (ըստ Ղազարեցւոյն) ՚ի հալածանս համբերատար կացաք , ուստի յԱստուծոյ պարգևեսցի վարձք նոցա ըստ հոգւոյ ։ Եղեն և այլ այլահաւատ ազգք՝ որք գաղթեցան ՚ի Հայաստանայ ՚ի պարսկաստան , այլ՝ ազգն Ղլատ՝ և ազգն Պարսից (գեաուրից) այլ նոքա ամենեքին ՚ի յատնել փոքր ինչ նեղութեան՝ հաւատափոխ լեալ եղեն մահմետականս . իսկ Ջուղայու հայոց միայ այն պարծանք՝ զի ոչ միայն ՚ի հաւատս քրիստոնէութեան հաստատուն մնացին , այլև վեհմտութեամբ պայծառացուցին զանուն ազգի իւրեանց , և ձաղկեցուցին ընդ ամենայն ժամանակս ղուսաւոնն և զլեզուն

Հայրենի, և միով բանիւ ասել, նահատակեցան և բարեաց պահպանեցին զաւանդն պատուական, զՀաւատն և զԱզգութիւն։

Ձ. Վանին զբնաճին յարմարութիւն վաճառականութեան, զորմէ Թէպէտ լիով ունի տեսանել ընթերցողն ի պրակն վաճառականութեան, այլ ի ներկայ ժամանակի խօսք՝ վաճառականութեամբ ծանկեցեալքն ի Հնդկաստան՝ են ջուղայեցիք, որք դատարկաձեռն և աղքատութեամբ մտին ի Հնդիկս և պերազանցեցան քան զնոսա՝ որք ծնեալ ի հոս ծնողաց սնան ի վարժանութեան, և էին ընտելացեալք երկրին և պարագային Հնդկաստանի. վասն զի ջուղայեցիքն գիտեն վաստակել ժիր և աչալուրջ գործառնութեամբ, իմանան դյարգ վաստակոց և աղաղութեան, և շրջահայեաց մտածութեամբ յառաջ վարեն զգործ իւրեանց, վասնորոյ Աստուծոյ ընտրհիւ ստանան զառաջադիմութիւն, և հանդիսանան յերկիրն յորս մտանեն։

Այլ ըստ որում մարդկային բնաւորութեան հն են նեթակայացեալ՝ ունին և զայսոսիկ պակասութիւնս։ Նախանձին վասն առաջադիմութեան ընկերին։ Այս նախանձ ըստ կրկին տեսակի առնէ զիւր ներգործութիւն, մի՝ զի և նախանձողն հասանելոցի փառաց առաջադիմողին, և միւսն՝ զի առաջադիմողն մի բարձրասցի ի վառս քան զընկերն նախանձաւոր։ Ի խորհուրդս լաւութեան՝ ոչ միշտ գտանին միաբան։ Դիւրահաւատ լինելով բարեկամութեան օտարաց՝ մերկանան նոցա գնորհուրդս իւրեանց։ Ի բարկանալն ոչ չափաւորին զկիրս, այլ զՁիգն Թափեն յառաջ վարել զկամս իւրեանց Թէ բարի իցէ և չար, Թէ վնաս առ ընկերն իցէ և Թէ վնաս առ անձն իւր։ Ի յաջողութեան՝ փոքր ինչ մեծամտին, Թէպէտ ոչ ամենեքեան։ Զգացումն երախտագիտութեան ոչ առատ ունին, ուստի ի դէպս անհաճոյական ինչ առարկայից՝ զատեալ Թիւնն փոխանակեն ընդ երախտագիտութեան։

Ճ. Այս նկարագիր բնաւորութեան գրեմ ըստ ընդհանուր գծագրութեան՝ որչափ իմ էր նկատողութիւն դատ-

մանն, ուստի Թէպէտ յոմանց պակասի միոյն կամ միւսն, կամ այլոյմ ումեք այլապէս նկատեալ լինի բնաւորութիւնն ջուղայեցւոց, ոչ լինին ստգտանելի բանք իմ, ըստ որում այսոքան բաւական է ըստ բնական ունակութեան, և այն տեղւոյն ոմանց Թէպէտ դէպ լինի՝ լինելոց է ըստ դրութեան, որ Թէ ըստ պարագայից ժամանակի, և Թէ ըստ կրթութեան առաջին կամ փորձոյ նեղութեան կարեն փոփոխել զմարդիկ։

ԳԼՈՒԽ Ը.

Գաղթականք և գիւղօրայք Հայոց ի Պարսկաստան։

Ա. Հետ հասուցանելոյ Շահաբասայ զվտարեալ ժողովրդականն Հայոց Հայաստանի, գիւղականաց նշանակեաց տեղի բնակութեան զգլաւառն զայսոսիկ (1). Ղնջան, Ալինջան, գեանդիման կամ Ջղալխօռ, գեաբվանդ, փէրիայ, Խուրխարի, գեափլայ, գեազազ, գեամարայ, Մալայիր, և Զարաղան։

Բ. Ղնջանայ էին մետասան գիւղօրայք՝ որոց անուանք են, գեաբքէն՝ փարթուն՝ Ջուղուն՝ Ջուզուն՝ գիլխուն՝ փէլարդ՝ Խուրուզարդ՝ Սկմուն՝ Խունթրէք՝ Միրգիւն՝ և գեալէ։

Ալինջանայ էին եօթն գիւղօրայք, Մշախթուր՝ փիդուն՝ Զագուան՝ գաքիշան՝ Խոնգարդ՝ գուրուջ և Մէնդ։ Զիք այժմ՝ ի նշանակեալ գիւղօրայսն Ղնջանայ և Ալինջանայ տուն մի Հայ գիւղացւոց, զի զբովանդակն տիրեալ են այլազգիք։ Ոչ գոյ հաւաստի տեղեկութիւն Թէ երբ փախստեայ եղեն Հայք ի գաւառաց անտի։ Իբր 120 ամօք յառաջ ի կոն-

դակս կաթուղիկոսացն գաւառքն ընդհանայ և Ալինջանայ իշատակեալ լինին, այլ յետ այնր ոչ ևս լինի յիշատակութիւն նոյն գաւառաց, որով յայտնի լինի թէ իբրև 110 կամ 100 ամօք յառաջ եղեան նոյն գաւառք ընդ որս և քիւրվանդ: Պատճառն ցիր և ցան լինելոյ նոյն գաւառական Հայոց՝ է հարստահարութիւնն և անչափաւորութիւնն հարկապահանջութեան: Թէպէտ չիք որոշ ծանօթութիւն, այլ չիք տարակոյս թէ բնակիչք նոյն գաւառաց սփռեցան յայլ գաւառս Հայոց:

Ձ. Փանդիմեան կոչի և գաւառ Զարմահալու, որ է յարեքատասն փարսաղ հնոյ Այսպահանայ: Երիք ամօք յառաջ չորս գիւղօրայք էին Հայոց՝ ի նմին գաւառի, որոց անուանք են, Ահմադաբադ՝ Սիրաք՝ Գինշիկան և Լիւսախան, այլ ընդհարին Աստուծոյ ածումն ժողովրդեան հարկատիր եղև առնել զհատուած գաղթականութեան և յաւելուլ զայլ և այլ գիւղօրայս:

Ընդ առաջին հատուածն եղև յամի 1855՝ի գիղջէն գինշիկացոյ՝ քան և չորս գերդաստանք, որք բնակեցան՝ի գեօղն Մահամադ· երկրորդ հատուածն եղև՝ի 1856 ամի կոչեցեալ Մահամադ· երկրորդ հատուածն եղև՝ի 1856 ամի՝ի գիղջէն Ահմադաբադայ՝ տունք իբրև քան և հինգ, որք բնակեցան՝ի Բօլւանջի: Թուահամարութիւն հայ ժողովրդեանն նոյն գաւառի ըստ հրամանի Սրբազան Առաջնորդին Թաւրէզոյ՝ի 1856 ամի եղև ըստ յետագայ ազիւսակին:

Գիւղօրայք	Տուն	Արուք	Էգք:
Սիրաք	64	. . . 277	. . . 245:
Ահմադաբադ	92	. . . 326	. . . 271:
Գինշիկան	43	. . . 125	. . . 114:
Մահամադ . . .	24	. . . 72	. . . 73:
Լիւսախան	83	. . . 307	. . . 253:
	306:	1107:	956:

Այն գաւառական ժողովուրդք մերձ լինելով քաղաքին առնեն գյաճախ անցուդարձ՝ի Ջուղայ, բերելով զբերուն, և զվաճառս իւրեանց, որք են ալիւր՝ իւղ՝ ձէթ՝ ոչխար՝ պատենիր՝ և մեղր: Յաղագս ունելոյ նոցա զյարակցութիւնն ընդ քաղաքին և ընդ Ջուղայու՝ քան զայլ գաւառականան են քաղաքավար՝ բարեկիրթ՝ և կենցաղագէտ: Ըստ որում առնեն նոքա զտուրս առութիւն և ունեն զգեստին ընդարձակ վայն հերկապորճութեան՝ վասն որոյ սոյն գաւառականք առաւել հարուստ են քան զայլ գաւառականան, և սկսեալ՝ի 1850 տարւոյ՝ առնեն առաջադիմութիւն թէ ըստ ազնուութեան և թէ հարստութեան մասին:

Ձ. Ըստ նոյն գաւառի ծերոցն վկայելոյ՝ ժողովուրդ Զարմահալայ են գաւառականք Բասէնոյ գալթեաղ՝ի Հայաստան: Որոց գաւառապետ կամ իշխան եղեալ է Մէլիք Ֆէր Գետրոս, որ ընդ Սուքիաս որպէսզի իւրոյ երկն՝ի Հայաստանէ: Սուքիասն և ստանալ գկարդ գահանայութեան և գկնի հօրն իւրոյ մահուան վարէ գիշխանութիւն կառավարութեանն ժողովրդոց Զարմահալայ մինչև գվախճանին իւրն: Գերեզմանն նորա կայ՝ի վաստիկան գեղջ ըստ այսմ տապանագրոյ,

„ Այս է տապան Մալիք Ֆէր Սուքիազէ, որ է որդի մեր
„ Մալիք Ֆէր Գետրոսի, հանգեաւ՝ի սիրտ երկրիս թիւն 1139
„ (1690) Ապրիլի 7 ին „ : Նշանաւոր է յոյժ տապանաքարն նորին, գի երկայնութիւնն է 18 թիզ, լայնութիւնն 5, և հանձրութիւնն եօթն թզաչափ է այն ընտիր մարմարիոնն կապուտ երկնագոյն և՝ի հարկանիլն գայն մետաղ՝ ճչէ ըստձայն զանազանի: Ցետ հօրն վախճանելոյ՝ Աբէլ որդի նորա կառավարէ զժողովուրդն, որոյ պայազատութեանն ժամանակ՝ լինի՝ի թագաւորին Նադիրշահի: Ըստ ծերոցն վկայելոյ՝ յառաքել Նադիրշահի գհարկահանս, սոյն Աբէլ գեալանթար անվեհեր համարձակութիւն պատասխանի առնէ հարկահանացն, թէ գի՞ է գի Նադիրշահ պահանջէ գհարկս, գի ես թէ ըստ որում թագաւոր պահանջէ՝ ուրեմն ընդէր նոքա անհանգիստ առնեն գմեզ՝ և նոքա ևս հարկանեն գհարկ,

խակ եթէ Նապէրն է Թագաւոր՝ Լօռք ընդէր հարատաճարին զմեզ : Վերադարձեալ հարկահանացն պատմեն Նապիրշահի , և Նորա զլօրս առաքեալ նուաճէ զԼօռս և վարէ փախստական : Ցետ յաղթանակաւ դառնալոյ Նորա ի Զարմահալ գաւառ՝ Աբէլ գաւառապետ ելանէ ընդ առաջ Նորա քահանայիւք և ժողովրդովք և ընծայիւք , որոմ ասէ Նապիրշահ , ահա Թագաւոր քո , և Աբէլ ասէ՝ ահա ես և ժողովրդականքս հպատակ Տէրութեանդ , և տայ զհարկս երկու ամացն , զոր խնդրեալ Նապիրշահի՝ արձակէ Զատագովութեամբ : Որդի քեալանթարին Աբէլայ էր Մուքիաս , յորմէ ծնաւ զՕշական՝ այր լայնախորհուրդ և ժողովրդասէր , որ պաշտպան լինելով իրաւանց ժողովրդեան կասկածաւոր եղև առաջի Մահմադզայխան գաւառապետին Զարմահալայ , վասնորոյ մինչ նա ի 1834 ամի եկեալ էր ի Ջուղայ սակս ժողովրդական գործոյ , Մահմադզայխան առաքեալ էր զէրս հեծեալս զի սպանցեն զնա, որոց գտեալ զքեալանթար Ղուկաս ի վերայ կամրջին յերթալն ի քաղաք , մերձենան առ նա կեղծ մտերմութեամբ՝ որպէս թէ զԹուղթ գաւառապետին մատուցանեն առ նա , և ի հուպ լինելն արձակեն ի վերայ Նորա զաւարճանակս , և առեալ զվերարկուն և զլեսրկն խոյս տան ի Զարմահալ : Մարմին Նորա ամփոփեցաւ ի պարսպի սրբոյ վանին Ամենափրկչի, ուսնելով զհետագայ տապանադիրն ,

Ներքոյ զայս գամրարանի ,
ամրափակեալ՝ հողով ծածկի ,
զգի Ղուկաս՝ քալանթարի ,
որդի Մուքիազ՝ բարեզարդի :
Էր մեր աղգին՝ յոյժ պիտանի ,
յիսուն և մի՝ ամ հասակի ,
անմեղ գոլով՝ նահատակի ,
որք հանդիպիլք՝ տուք ողորմի ,

Թիվն հազար ութ հարիւրի ,
երեքտասան հինգ աւելի ,
յամսեանն երեք դեկտեմբերի :

Վքեալանթար Ղուկասու ծնան որդիք չորք , Յարութիւն՝ Մարտիրոս՝ Յովհաննէս և Յովակիմ՝ անուն : Յարութիւնն էր քեալանթար Լիւսահանայ, և Մարտիրոսն՝ քեալանթար Ամատաթագայ : Քեալանթար Յարութիւնն յաղագս խոչ և խափան լինելոյ անիրաւի կողոպտման և յափշտակութեան Լօռից ոմանց պրացի եղելոց Լիւսահանայ , ի 17 Դեկտեմբերի 1855 ամի ընդ Աբէլ հօրեղբօր իւրոմ սպանաւ ի նոցանէ : Բողոքեաց Ուրբազան Թադէոս Առաջնորդն առ մեծ նախարարն Պարսից Մաւրազամ , յորմէ հրաման եղև ի վերայ քաղաքագետացն Սպահանայ՝ Գուլիվէգանայ՝ և Լօռստանի՝ զի կալանաւորեսցեն զմահապարտսն , ի ձերբան եղանակի այնմիկ զօրք առաքեցան ի վերայ ամրոցի նոյն մահապարտ Լօռից , քակեցին և աւերեցին զտունս նոցա , և նոքա փախստեայ լեալ՝ վտարանդի շրջեցան աստ և անդ ընդ միջոցս բազում , մինչև ապա աղաչաւոր դիմեալ առ եղբարսն և առ որդին քեալանթար Յարութիւնի՝ խնդրեցին զանյիշաչար ներողամտութիւն նոցա : Ցետ մահուան Նորա՝ Իգէլար որդի Նորա նստաւ քեալանթար Լիւսահանայ , այլ Մարտիրոս հօրեղբայր Նորա ունելով զբաւական խոհականութիւն և գհանճար մեծութեան՝ կառավարէ զգաւառական ժողովրդեան Զարմահալայ՝ քրիստոնէական եղբայրասիրութեամբ :

Այս գաւառ ունի ութ քահանայս և հինգ ժամատունս : Երեքին գիւղօրայք սոյն գաւառի Չիւրիգան , Ֆոնդիգան և Վաստիգան՝ որք յառաջն էին բազմամարդ և արբատ , այժմ ընդ ամայիս դասեալ մնան :

ԳԱՒԱՌ ՓԷՐԻ։

Ե. Փէրիոյ գաւառի գիւղօրայք և բնակիչք ըստ Թուա-
դրութեան եղելոյ ի 1858 ամի՝ են ինչերքոյ յիշատա-
կեալքն։

Գիւղօրայք	Տուն	Արուք	Էգք։
Խօջիղալայ . . .	45 . .	160 . . .	135։
Հազարջիւք . .	99 . .	334 . . .	311։
Գոլըրան	81 . .	269 . . .	219։
Կղնաւուլ . . .	50 . .	167 . . .	133։
Հաչան	62 . .	189 . . .	130։
Կամագերդ . .	84 . .	367 . . .	221։
Գրախտակ . . .	14 . .	67 . . .	42։
Քիլագերդ . . .	50 . .	192 . . .	169։
Երշկան . . .	44 . .	134 . . .	111։
Ժգնկերդ . . .	21 . .	66 . . .	70։
Խուռնկ	40 . .	141 . . .	104։
Սանդիքարան . .	89 . .	285 . . .	251։
Խոյգան	73 . .	273 . . .	228։
Գհաջան	36 . .	100 . . .	99։
Գարդուն . . .	49 . .	181 . . .	175։
Քվարան	19 . .	81 . . .	59։
Մուղան	26 . .	109 . . .	103։
Ղզիլգեան . . .	54 . .	174 . . .	158։
Կանադիգեան .	42 . .	135 . . .	121։
Գրդերն	20 . .	71 . . .	61։
Գարաթուրդ . .	16 . .	58 . . .	44։
21.	1,014.	3,553.	2.964։

Ինն ի գիւղօրէից անտի են Թադաւորական, որք են Գոլ-
քան՝ Հազարջիւք՝ Սանդիքարան՝ Խոյգան՝ Սնգերդ՝ Ղարդուն՝

Միլազերդ՝ Ըուրշկան՝ և Նամակերդ։ Ժողովրդականք նոյն
ինչ գիւղօրէից ճնշին ի ծանրութենէ հարկի, որ եղև յան-
խոհեմութենէ ումանց իշխանաց այնր գաւառի։ Ջի տարեկան
սահմանեալ հարկ նոյն ինն գիւղօրէիցն էր 1056 խալվար ցո-
րեան, զոր տային նախ քան զամն 1847։ Գինն ալեր և ցորե-
նոյ յայնմ ժամանակի էր խալվարն 3 Թուման. ասստի ումանք
իշխանաց գաւառին անյառաջատես լեալ՝ գնային ի Թէհրան
և խնդրամատոյց եղեն զի վերանակ ցորենոյն՝ զոր ինն պա-
հանջեցեն ի ժողովրդոց. սակս իւրաքանչիւր խալվարի գին
հաստատեցաւ ի Տէրութենէն 18 ղրան, և յետ միջոցի ինչ
այլ ծախուց գաւառին բարդեալ ի վերայ բովանդակեցաւ
գին իւրաքանչիւր խալվարին 23 ղրան։ Իսկ գին ցորենոյն.
և այժմ հազիւ թէ խալվարն քերէ զգին 13 – 15 ղրան, որ
վասն նեղութիւն յոյժ լինի սոյն գաւառականաց, որք պար-
տաւորին զալիւրն քերել Աստպահան, և վաճառել դիւրա-
գնոյ, և զգինն առնել զուտ դրամ վճարել զհարկս Տէ-
րութեան։

Ի պատճառս այսմիկ սոյն գաւառականք յաղքատութեան
կողմն նահանջին։ Յաղագս այսր յամի 1854 արդի Առաջնորդն
Թադէոս խնդրամատոյց եղև Տէրութեան մինչ էր և ինքն
ի Թէհրան, և ընկալաւ զհրովարտակ մեծ եւ ալարքսալն, զի
միայն 18 ղրան տացի վասն իւրաքանչիւր խալվարին, որով
տարեկան մերձ 350 Թուման լինէր օգուտն նոյն գաւառակա-
նաց, այլ գաւառապետք գտանել պահանջին և ստանան
զգինն 23ուն, որ վասն Թէպէտ լինին բաղմաձիկն աշխա-
տութիւնք՝ այլ դժուարին լինի առնել փոփոխութիւն ինչ։
Սնոցեալ երկոտասան գիւղօրայք սոյն գաւառի՝ չինն Թագա-
ւորական, այլ այս և այն իշխանաց, որոց հարստահարու-
թիւն ոչ նուազ լինէ քան զծանրութիւնն հարկի Թագա-
ւորական գիւղականացն։

Ներկի Առաջնորդն Թադէոս մեծ օգնականութիւնս մա-
տուցանէ սոյն գաւառականաց, զի հարստահարող իշխանքն
ակնածեալ ի ժողովրդականաց պաշտպանութենէ նորին՝ ոչ
շատ կեղեքեն զժողովուրդն՝ որպէս էրն յառաջ։ Նախ քան

ջամանակ կուսակալութեանն Մօթամէդի, այն է 1840 թէ-
պէտ ոչ նեղէին ի ծանրութենէ հարկի, այլ յափշտակումն
հօտից և անգեայց նոցա լինէր անպակաս. զի մինչ անասունք
յառաւօտուն ելանէին յարօտ, այս ոք կամ այն ոք ձերբակա-
պէտ լօռ՝ հեծելովք ի վերայ հասեալ վարէր զհօտն ի գե-
րութիւն, և տանէր յամուր վայրս անմատչելի քնակութեանց
իւրեանց, որոյ աղագաւ տառապէին յոյժ գիւղականք, և ան-
պակաս էր աշխատութիւնն նոցա, այլ ի ժամանակէ կուսա-
կալութեանն Մօթամէդի մինչև ցարդ ոչ ևս լինի յափշտա-
կութիւն այնպիսի, ուստի գիւղականք հոգի ստացեալ են
ամենևին ի վերատուց անտի երկրագործութեան:

Ը. Կշռանակութեան արժանի է ոխակալութիւն Կամա-
կերտցի գիւղականաց: Երկու եղբարք էին, Թորոս և Նիրա-
կոս, և իւրաքանչիւրն ունելով զծնունդս որդւոց և թոռանց՝
են մեծ գերդաստան: Որ ինչ տեղի կալեալ էր ընդ մէջ նո-
ցա, որոյ ի զայրանալն խմբէին ի կռիւ, վիրաւոր առնէին զը-
քաշուելն յիրերաց և սպանանէին երբեմն զերկու կամ զերիս
յայս կամ յայն կուսակցաց: Ի խմբելն ի կռիւ՝ կոչէին յօգնու-
թիւն զայլազգի դրացի գիւղականս, և ի գեղջն Նամակերտ
ունէին իւրաքանչիւր կողմն զբուրգն և զմարտկոց, յոր
պատսպարեալ ըստ օրինակի քաղաքական պատերազմի՝
մարտնչէին ընդ միմեանս երբեմն մինչև ցտասն կամ տասն և
հինգ աւուրս: Ահմիկ գեղջկական ոխակալութեանն յերկուց
կողմանց զոհ եղեն սպանմամբ հոգիք իբրև երկոտասան:
Որչափ թիւ սպանելոցն յաշխարհէ, այնչափ և գրգիռ թշնա-
միութեանն զօրանայր. զի այր իւրաքանչիւր գուն գործէր
զեղբօրն պահանջել զվրէժ արեան: Խողոք նոցա և աղաղակք
անպակաս լինէին յատենից քաղաքական կամ գաւառական
դատաւորաց, կաշառք և ծախք խաղային յերկուստեքէ և
նուիրն վնասուք երկոքին կուսակիցք տնաքանդ լեալ՝ ոչ վեր-
ջանային յոխակալութենէ թշնամութեան: Յամի 1851 ժա-
մանեցաւ ի Ջուղայ Սրբազան Եպիսկոպոսն Թադէոս, և
յայնմ ամի և յառջեցաւ խռովութիւն ինչ ընդ մէջ նոցա, և
սպանաւ նշանաւորն ի կուսակցաց Նիրակոսեանց Մկրտում ա-

նուն: Խնդիրն մատուցաւ յատեան նորին Առաջնորդին, որ
առ երկոսին կողմն իբրև առ ժողովրդական ունելով զութ
և գորով հայրօրինակ խնամոց, սկսաւ ազգու խրատուաբա-
նութեամբ արմատախիլ առնել զոխն ի սրտից նոցա: Ապա-
ցաւ խնդիրն, զի երկոքին կուսակիցք ի պարձ և ի զղջումն ե-
կեալ ապաշաւեցան, և հաշտանդ մնացին վճռոյ Առաջնորդին:
Քանզի գիտելով Առաջնորդին, թէ անհնարին է մնալն նո-
ցա ի խաղաղութեան եթէ լինիցին ի միասին քնակութենէ, վճռե-
ցաւ զի կողմն Թորոսեանց վաճառեսցեն զամենայն կալուած
ք իւրեանց գոր ունին ի Նամակերտ, և կողմն Նիրակո-
սեանց պարտաւորեսցին գնել զայն ըստ գնոյ և արժէքին, և
Թորոսեանք մեկնեալ անտի քնակեսցին յայլուս գեղս: Հնա-
զանդեցան նոյն վճռոյ, և Թորոսեանք զկալուածս իւրեանց
վաճառեալ Նիրակոսեանց ի նոյն 1851 ամի, մեկնեցան ի Նա-
մակերտայ և քնակեցան ի Դրախտակ:

Հաշտութիւնն զոր էարկ Առաջնորդն Թադէոս ընդ մէջ
նոցա՝ տեւէ մինչև ցարդ հաստատուն սիրով և խաղաղու-
թեամբ, և ոչ ինչ խռովութիւն՝ կազ՝ կամ տարաձայնութիւն
ի վեր ելեալ է մինչև ցարդ յայս կամ յայն կուսակցութիւն:
Գիւղականք Նամակերտայ ըստ քաջութեան՝ ըստ արիու-
թեան և ըստ ճոխութեան մասին համբաւաւորք են քան
զայլ գիւղականս այնր գաւառի: Իբկլար Յովսէփեան Թոռն
Կիրակոսի, յամի 1857 վարեաց զդաւառապետութիւնն նոյն
գաւառի, հղեայրասիրութեամբ խնամելով զժողովուրդն:
Սա ունելով զսէր ազգասիրութեան և զիղձ ուսումնասիրու-
թեան, սկսեալ ի 1854 տարւոյ բացեալ է զդպրոց մի ի տան
իւրեանց ի գեղջն Նամակերտ, ուրանօր ուսանին մանկունք
իբրև երեսուն, ուսուցիչ ունելով զխաչատուրն Տէր Յարու-
թիւնեան Տէր Եղիազարեանց:

Է. Իւրաքանչիւր գիւղ սոյն գաւառի ունի զմի ժամա-
տունս, և զքահանայս մի կամ երկու: Այլ տգիտութիւն
Թանձր տարածեալ կայ ի վերայ մեծի մասին ժողովրդեանն,
որք զօրհնապազ վաստակոց իւրեանց միտ դնելով՝ տգէտ
մնացեալ են զդիտելեացն հաւատոյ Աստուածպաշտութեան

Ելանէ զան զդանը Թադէոս Առաքեալ՝ անկատարելո-
ւթեանէ զհանդերձ սոյն գաւառի՝ առնէին զոր ինչ և հարկ
լինէր կատարել իւրեանց, այլ յետ վիճակաւորութեանն նորին՝
Տէր Նիկողայոս Խոհեմ Քահանայ Տէր Յովհաննիսեան Ար-
զեանցի կարգեցաւ գործակատար այնր գաւառի, որոյ քարե-
կան վերակացութեամբ ոչ սակաւ կարգ և բարեկրթութիւն
մնաճառ յայն գաւառ :

Է. Հաղարջուխը գիւղ նշանաւոր էր ի նախկին ժամա-
նակս թէ սակս բազմամարդութեանն՝ որ ունէր վեց հարիւր
տուն ընակիչ, և թէ յաղագս անդ լինելոյ վանացն Աստ-
ուածածնի, յորում նստէր Առաքեալն և իշխէր ոչ միայն
գեղիոյ գաւառին՝ այլ և համանգան քաղաքի : Այլ յետ վա-
նացն անյայտանալոյ, և քնակչացն նուազելոյ, այժմ է իբրև
գիւղ ի հատարակ գիւղօրէից :

Ը. Գիւղն Շրշկան մեծահամբաւ է յաղագս ձեռագիր
Աւետարանի միոյ հոն եղելոյ յայնմ գեղջ՝ որ հրաշագործ և ախ-
տահալած համբաւի լինելոյ՝ որ վանս բազում էին և են ուխ-
տաւորք նորա : Նոյն Աւետարան գրեալ ի վերայ մագաղաթի՝
ունի յետագայ յիշատակարանն, ,,Արդ յանկ եղեալ աւարտե-
,, ցաւ Աստուածախօս և աւետարեր սուրբ Աւետարանս ի
,, Թուականիս ՉՆԵ ամին, ի գաւառս գաջբերունեաց ի գիւղա-
,, Ազուխասկան ընդ հովհանեաւ սուրբ Ստեփաննոսի : Եւ արդ
,, այսմ ամի որում Թիւն էր ՉԼԵ և տանուսէր տարւոյն
,, խոյն՝ ի ձմեռնան սառնասառոյց ժամանակի, որ էր օր վեց-
,, վարի հինգն, եղև նեղութիւն Հայոց աշխարհիս, զի արեանաթա-
,, թոյ աղբն և գօրքն Իսմայէլեան, և հեծեալքն պարսկաստ-
,, տանայ շրջեցան Հայաստան աշխարհն. նախ ի գաւառն
,, վասպուրականի ի վան, և ոստեան քաղմութիւնք հեծելոց,
,, զոր ունէր ընդ իւրեանս ժղ հեծեալս նորընծայ փառաշո-
,, ջալուածեցան. և կացին անդ ժե օր, բազում չարչարանս
,, տուին մեր աշխարհին, և ապա անտի եկեալ եկին ի գաւառս
,, մեր քաջքերունի անհամար աշխ քաղաքաց, և եկին ի
,, ոստան ձմուան եղանակի, զմարզ և զանասունն ի տանէն
,, հանէին, և ինքեանք մնանէին գրասուօքն իւրեանց, և շ-

,, կերակուրան զոր ամբարեալ էին մարդոց և անասնոց զա-
,, մենայնի ըմբռնեցին և տարին . և նուաւ ոչ բաւացան սկսան
,, չարչարել զքրիստոնեայս վանն խոտի՝ յարդի՝ և գարւոյ և
,, այլ ամենայն պիտոյից ,, (Թերթ մի պակասի , և ի միւս
թերթին գրեալ կայ) ,, Ամենայն խաշինն փաչէն նորաբոդ-
,, բոլ գաւառին նորա , խոշխաբար կարապետն , քոյրն սոցա
,, Ջանաղէն, և ս և հարազատ եղբայրն իւր Պարոն Մարչէն և
,, կենակիցն իւր զխանումն, և յիշեցէք զամենայն արեան
,, մերձաւորան զկենդանիս և զհանգուցեալն ի քրիստոս ա-
,, մէն ,, :

,, Ծոնն գրիչս Բարսեղ քահանայ, որ անուանէ միայն
,, եմ քահանայ, և գործով ունայն և թափուր, զի անար-
,, ժան երեսս ի գետին դնելով միոյ ողորմիայիս անարժանիս
,, յիշեցէք և աստուած ձեզ արժանս արասցէ ի գալստեան
,, իւրում: Դարձեալ յիշեցէք զիս եղկելի գրիչս և զհայր
,, իմ զեմելիքն, ամուսինն իմ Ջմրուխն, Ջաւակն իմ Ղըր-
,, Թանէսն, Յովհաննէսն . ուսուցիչն իմ Տէր Ղազարիէն և
,, կարապետ քահանայն, Աստուած իւրեանց վարձն հա-
,, տուսցէ " :

Վանի ի վերայ կազմի նորա խաչ մի արծաթեայ տփաձև , որոյ ի չորս անկիւնս կան չորս մասունք սրբոց , և ի կէսրուն խաչին բոլորակ մի փոս , յորում կայ Թուղթ մի որ վերոյ գտանի գրեալ անուն սրբոյն Բարսղի Կեսարացւոյ , և ապա կի կան եղեալ յերեսս նոյն Թղթոյն և մատանին : ԱսանդուԹեամբ պատմի , Թէ նոյն Աւետարան գրեալ է ի սրբոյն Բարսղէ Կեսարացւոյ , սակայն անստոյգ է այն , ըստ որում սուրբն Բարսեղ Կեսարացի Յոյն էր ազգաւ : Այլ ասանդուԹիւն այնպիսի Թերևս ծագեալ ելել յանուանէ սրբոյն որ գտանի ի վերայ սրբոյ Աւետարանին , և ըստ որում ի յիշատակարանի նորա ևս գրիչ այնր է Բարսեղ քահանայ , հնԹադրեն գոլ սրբոյն Բարսղի Կեսարացւոյ , սակայն անհաստատ է այդ կարծիք : Նոյն Աւետարան եկն ի Հայաստանս , զի վաղեմի են համբաւ նորին հրաշագործուԹեանց : Գտանի այն ի ձեռս աղգատուհւոյ միոյ (որք կոչին ղինքեանս Տէարք աւետարա-

նի) որք են գիւղական քահանիչք Ըրշկանայ։

Յգլխատումն այն՝ անուանեալ Տէարք Աբետարանին, գտանին տառապեալք քան զամենայն գիւղականս Ըրշկանայ, քան զնոսին աղքատք և միշտ պարտական։ Պահի Աբետարանն ի գեղջ կական ամենեկի միւսմ, զոր իբրաքանչիւր Տէր Աբետարանին ունի որոշեալ վասն այնր ի տան իւրում։ Պատմեն զնմանէ, թէ ի ժամանակի միւսմ եղեալ է խռովութիւն, և եկեալ աւարառուաց կամեցեալ են կողոպտել զգիւղն Ըրշկան, ուստի նոքա նոյն Աբետարանի՝ ձգեալ են զայն ի մէջ աղբեր միւսմ որ մերձ է նոյն գեղջ, Թաղելով զայն ի մէջ աւազոյ, և ինքեանք խոյս տուեալ փախեալ են անտի. յետ ժամանակաց ի խաղաղել խռովութեանն դարձ արարեալ ժառանգաւորաց Աբետարանին՝ հանեալ են զայն յաղբերէ անտի, և գտեալ են զայն անթաց ի ջրոյ և առանց խմիք վնասու կամ եղծման։ Անուն նոյն աղբեր կոչի մինչև ցայսօր ժամանակի «պայի աղբիւր», զի ի գիւղականն՝ անուն Աբետարանին այն հասարակօրէն «պայ» կոչի։ Պատմի և թէ Ազգն Լօռից յառաջ ժամանակաւ երբեմն մտադիր լինին աւար հարկանել զայն գիւղ, ուստի ի պիշերի միւսմ ժողովելով քանի մի հեծելոց գան յարձակիլ ի վերայ գեղջն, յորժամ մերձենան անդ, տեսանեն զբազմութիւն սուսերամերկ զօրաց կարմիր և կանաչ զգեստաւորաց շրջապատեալ զնովաւ, յայնմանէ զահի հարեալ փախչին, և ի միւս աւուր բերեն զոչխարս և զենուն ի պատիւ սուրբ Աբետարանին։ Ակնածութիւն՝ յարգ և երկիւղ՝ մինչև ցայսօր ժամանակի գտանի ի սիրտս այլազգի բնակչաց գաւառին փէրիու յաղագս յիշեալ Աբետարանին, և ոմանք ի նոցանէ հաւատան անկեղծօրէն հրաշագործ զօրութեանց նորա, ուստի բազումք յայլազգեաց բերեն առ ոտս Աբետարանին զհիւանդս իւրանց՝ հանդերձ ընծայիւք դրամոյ և ոչխարի, և մերթ ողջանան հիւանդք նոցա։ Ի ժամանակի հիւանդութեան կամ նեղութեան իմիք զԱբետարանն բերէին ի ջուղայ ուննողջն նորա՝ վասն ուխտակատարելոյ նուիրս։ Փառաւոր լինէր հանդէսն ընդունելոյ զայն ի ջուղայ, զի և ժողովուրդք մանաւանդ

կանայք, բազմութեամբ ելանէին ընդ առաջ նորա, ոմանք և բոկ ոտիք և երկրպագեալ համբուրէին զայն, զոչխարս զհնուին առ ոտիք նորա, և այնպիսի փառաւորութեամբ պատուէին զմուտ նորա ի ջուղայ։

Յառաջ ժամանակաւ քազում էին թիւ ուխտաւորաց սոյն Աբետարանի, մինչև անգամ ի Բուշեռայ և ի Բասրոյ գային ուխտաւորք առ նա։ Ընդ որում անգ կրտ ծնանելոյ Քաւարկին իբրանց՝ ուխտագիր լինէին գերծուել զհեր գլխոյ նորա յոտս սուրբ Աբետարանին, մինչ հասանիցի մանուկն ի հասակ հօրենաւանան. ի հասանել ժամանակի ուխտադրութեանն տանէին զմանուկն առ Ըրշկան գիւղ և անդ վոքրեալով ըզհեր գլխոյ նոցին՝ ուխտ արարեալ գարձ առնէին ի տուն իբրանց։ Յառաջ քան զտանելն մանկանն ի Ըրշկան, ածելի ոչ ելանէր ի գլուխ նորա. վասն «ղուլ» լինելոյ Աբետարանին։ Բազում հիւանդք և ցաւագարք ջերմեռանդ հաւատով գիմելով յոտս սուրբ Աբետարանին՝ ըստ պատմելոյ բազմաց, ընկալեալ են զառողջութիւն։ Բազում յուխտաւորաց անտի ստանան յԱբետարանէն զարծաթի խաչ՝ զաչք՝ զբեզոր՝ զբերան և զայլ ոտ վասն առողջութեան մանկանց իւրեանց, և յետ ժամանակաց երկպատկելով զայն զարձուցանէն առ Աբետարանն հանգերձ ուխտակատարութեամբ։ Ի հզկաստանայ և երբեմն բարեպաշտ արք կամ կանայք ոմանք՝ առաքէին ի ձեռն հաւատարիմ արանց զուխտադրան վասն յիշեալ Աբետարանին։ Ամենայն ուխտաւորաց տուեալ լինի մատնեհար, է այն կտոր մի մոմոյ՝ զոր գնելով ի վերայ մասանցն եղելոց ի կազմ Աբետարանին, պատեն ի մէջ քամրակի և տան ուխտաւորին ի պահպանութիւն իւր։ Երբեմն գտանին ի ծառայութեան Աբետարանին «ընկնուղ» կոչեցեալ կին՝ աղջիկ կամ մարդ։ Զգուշանալի է արարողութիւն սոցա։ Մինչ ուխտաւոր ոք գնայ ի սենեակ Աբետարանին՝ «ընկնուղն» անյուշանայ, երկիր անկեալ թաւալի, ծեծէ զկուրծս իւր, փետէ զհերսն, ցուտէ զերեսն, և յետ այնր կանգնեալ յոտին՝ բուրվառ ընկալեալ խնկարկութիւն առնէ անդր, իբրև պատգամաւոր Աբետարանին՝ պատմէ ուխտաւո-

թոյն՝ զպատճառն ուխտադրուժութեանն իւրեանց և զալստեանն
անդր, ձայնիւ և ըստ եղանակի երգասացութեան պատմին
յիշեալ պատգամքն, և բանքն են ըստ յարմարութեան և
ըստ այլաբանական ձևոյ, ՝ի թէ առ այս նիշ երանգ զգեցոյն
հանդերձի՝ այս են հրաման ,, Աղին ,, ,, Աղէն ,, կոչի Աւե-
տարանն ՝ի խօսս սոյն արարողութեան : Յընթացս ժամանակի
նոյն պատգամախօսութեանն՝ աչք ,, ընկնուորին ,, են փակ, միտքն
վերացեալ, ինքն յանդգայութեան և բանք նորա մերթ ըղ-
հրաշս ներգործեալս յԱ Եւտարանէն պատմին, և մերթ թէ
զինչ լինելոց են առ այս ինչ անձն, կամ առ այս ինչ տեղի :
Շարունակի բաղխումն նորա զկուրծս և ցետելն զերեսս ,
ուստի զոգջիր յայսպիսի արարողութիւնս միշտ արիւնաթա-
թաւ ներկեալ լինին երեսք ,, ընկնուորին ,, : Ցետ աւարտելոյ
զարարողութիւնն՝ զդաստանայ ,, ընկնուորն ,, և եթէ ոք
հարցանիցէ ցնա թէ զինչ պատմեաց, խոպառ չդիտել զատա-
կեալն ասէ : Տաղտկալի է արդարև խաբէբայական արարո-
ղութիւնն այն զոր շահասիրութիւնն ՀՀարեաց : Ի հազարջիւր
պիղծէ Տէր Սահիանոս քահանայ (զրօղն համառօտ պատ-
մութեանն Ջուղայու) ՝ի մայիսի 10, 1246 (—) ամի յայտ-
նէ Յարութիւն Առաջնորդին Ջուղայու զանց նմանօրինակ
անկարգութեան ,, Զղապուրկայ Տէր Յովհաննէն և Զանխո-
,, չայ Տէր Եփրակոն հինգ Աւետարան ունեն, ամէն Աւետա-
,, րանի տասն զուլ են բռնել երիտասարդք և աղջկունք և
,, հարսունք սուրբ Աւետարանքն տալէ են նոցա ձեռքն օրն
,, երկու երեք անգամ Հաչեցուցանեն զքնարան դիւական,
,, և նոցա առեալ զսուրբ Աւետարանն Ճօճան և կաքաւեն և
,, տհացուցանեն զամենեսին՝ թէ Աղէն մեր մատաղ կուխընդ-
,, րէ, և այլոց թէ՝ հրամայեալ է Գուստր քո տալ այս երի-
,, տասարդիս՝ կամ թէ հրամայէ Աղէն մեր տանել ՝ի տուն
,, ուրեք, կամ թէ խռովեալ է այս գեղիս առեալ տանիւն ՝ի
,, միւսն : Ա յսպիսի արարողութիւնք երեք հարիւր ոչխար և գառն
,, ժողովեալ են և բաղումք արծաթ . . . այլ վերոյ գրեալն
,, աչօք տեսաք ,, :

Արդ հետև սոյն Աւետարան է իբրև ատացուածք ընդ ՝ի ջ

ազգատոհմի միւսմ, վասն որոյ զօրհնանսպաղ անպակաս լինին՝
տարաձայնութիւն և վէճ ընդ ՝ի ջ ժառանգաւորաց Նորին
յաղագս բաժանելոյ հասոյ և արդեանց այնր : Ի թղթոց վա-
նիս անցին ՝ի ձեռս իմ երկու զրութիւնք , մինն պարսկերէն՝
որ էր դաշնադրութիւն վասն մանտատրութեանն արդեանց
Աւետարանին , և միւսն կնդակ հրամանի գրեալ ՝ի Սրբազան
Աղէքսանդր Առաջնորդէ վանին Ամենափրկչեան յաղագս ա-
ռարկային այնմիկ : Զթարգմանութիւնն առաջնոյն և զօրի-
նակ կոնդակին ՝ի դէպ համարեցի գրել առ տեղեաւս :

,, Յիսուսի Քրիստոսի ծառայ Աղէքսանդր վարդապետէ
,, օրհնութիւն հասցէ Շուրշևանայ հաստատակ քահանայից և
,, ժողովրդոց : Աւետարանն սուրբ ևկեղեցւոյ է, ով ոք որ
,, քահանայ է՝ սուրբ ևկեղեցւոյ սպասաւոր է, թէ Աւետա-
,, րանի գէլըրն և թէ հասիրանին ինչ որ կայ պիտի որ քա-
,, րէքար բաժին առէք . Տէր Մանուէլն՝ Տէր Մկրտիչն՝ և Տէր
,, Բաղդասարն էն աւելի ժամուցն չվճռուն . Տէր Աստուա-
,, ծատուրն՝ փոքր Տէր Մանուէլն՝ Տէր Սարգիսն՝ Տէր Մատ-
,, թէոսն և Տէր Մարկոսն Աւետարանի գէլըրն միայն չը-
,, վճռուն , ողջն հաստատակ սամ արարէք : Մեր սուրբ օրէնք
,, և կանոնն այս է, թամամ հայաստան այպէսէ է, Աւետա-
,, րանի Տէր եմ ասելն մեղք է, կամ Աստուծուց վախեցէք ,
,, կամ մեզանէ ամաչեցէք, մինչև յերբ ձեր անկարգ բանէ-
,, րին համբերեմ, և եթէ այսուհետև միաբան չեղաք, նո-
,, ղութիւն կըկրեք , թէ սեր լինէք գէլըրն էլ կուշտա-
,, նայ, թէ Աւետարանի գէլըր , և թէ ևկեղեցւոյ գէլըր մի
,, տեղ կիսեցէք : Գրվեցաւ թիվն ՌՀՃ : Մայիսի ժե :

Ձեռք սոյն կոնդակի գրեալ կայ ,, Ջաւակ Սիօնի ընտա-
,, նիք նորա էգին, երուսաղէմ ըստ Մարգարէին : Սուրբ Ա-
,, ւետարանն է սրբութիւնն՝ որ է վաղքիամբ , ընտանիք նորա
,, են քահանայքն : Պարտ է ամենայն, հարկ և քրաւունքն
,, քահանայքն վայելին ՝ի միասին, ըստ տառացելոյն որ ասէ ,
,, որք սրբուեցոյ սպասաւորքն են՝ ՝ի սրբուէ անտի վայելեսցեն :
,, Ըստ հրամանի Սրբիշն և բանիբուն Աղէքսանդր վիճ Ատպետին
,, հրամանս այս հաստատուն է : Յարութիւն Սաֆարեան քհնյ ,,

Եղայ ի վերայ նոյն կոնդակի ստորագրութիւն և կնիք եօ-
թանասուն լինն քահանայից Ջուղայու (եղելոց ի նոյն ժամա-
նակի) որք վկայեն թէ իրաւացի է հրամանն վերոյ գրեալ։ Տէր
Նազար Ռօստամեան և Տէր Մկրտիչ Գրիգորեան Ըրշկանցիք
ուխտ եղեալ ընդ միմեանս դաշինս հաստատեցին առ այն՝ զի
սկսեալ յօրէ սոյն Թուականի որ ինչ ուխտադրամ եկեսցէ
ուստի և իցէ վասն Աւետարանին Ըրշկանայ, բաժանեսցի յեր-
կու մասն, որոյ մի բաժինն հասցէ Տէր Նազարին Ռօստամեան,
և միւս բաժինն՝ Տէր Մկրտչին Գրիգորեան, իսկ թէ լիցի
տարաձայնութիւն վասն հասից Աւետարանին ընդ մէջ ուխ-
տադրեալ երկուցն, պարտական եղիցին վասն իւրաքանչիւր
տարւոյ ոսկի երկու Թուման հատուցանել մեծագոյն մզկիթ-
ին Իմամ Ջմայի։ Այս քանի տողն գրեցաւ վասն գաշնա-
դրեալ ուխտադրութեանն։ Ի Շաւալ ամիս 1092։

Յոստացան երկոքին դաշնադիր կողմունքն առաջի մեր
վասն ուխտադրութեանն և վասն խոստմանն որ գրեալ կայ ի
սմա։ Կնիք Շէխէալամի։

Ի ժամանակս Ներկայ Առաջնորդի՝ Սրբազան Թադէոս
Արք Եպիսկոպոսի, պակասեցաւ Ջերմեռանդութիւն ուխ-
տաւորացն, զի տեսանելով նորին Սրբազնութեանն զխռովու-
թիւնն և զկաճն զոր հանապազ յարուցանէին ժառանգա-
ւորքն նոյն Աւետարանի, և տեղեկանալով սնոտիապաշտ
պատճառաւորութեանն ընկնուորաց, մանաւանդ հաւասար ձանա-
չելով զզօրութիւնս ամենայն Աւետարանից, պատուէր ետ
մերձաւորացն՝ ոչ և ս ուխտ գնալ յոտս նոյն Աւետարանին,
և ի վիճակն Հնդկաստանի առաքեաց զկոնդակ ի 6 սեպտեմ-
բերի 1852, յետ ծանուցանելոյ զանկարգութիւնն որք ծը-
նանին ի ժառանգաւորսն Աւետարանին, խափանել պատուի-
րեաց զառաքումն ուխտադրամոյ յանուն յիշեալ Աւետարա-
նին։ Ի պատճառս այսմիկ կարի պակասեալ է այժմ թիւ
ուխտաւորաց այնր, և նուազեալ յոյժ արդիւնք հասից նո-
րին. այլ տակաւին պահի հաւատն ի պարզամիտս ոմանս, և
ուխտակատարութիւնն չէ խափառ վերջացեալ։

Ժ. Մանգիբարան է գեղեցիկ քան զայլ գիւղօրայս գաւա-
ռին, զի ունի դաշտ բազմաբերդուն ծաղկօք. և յարօտս նորա
դալարիք խոտոց են որպէս սփռոցք կանաչագեղ տարածեալ
յերեսս դաշտին։ Յառաջ քան զամն 1840, հին գեօղն էր
ի տափարակ վայրի, որ վասն յարձակիլ թշնամեաց՝ դիւ-
րեաւ տկարանային գիւղականք, և տունք նոցա յաւարի լինէ-
ին եղեալ զակաց։ Յամի 1840 քակեցին զայն գիւղ և փոքր մի
ի բացեայ ինամանէ ի վերայ բարձրաւանդակ տեղւոյ կառու-
ցին զնոր գիւղ՝ վայելուչ ձև ձևոյ և ապարսպապատեալ հաստ
որմով, ի չորեսին կողմունս դնելով զբերդունս մարտկոցաց ի
վանել զթշնամին։ Ջկողով այնր անցանէ առուս մի մեծ որոյ
ջուրք են ի բազմակնեան աղբերաց։ Շինեցին զեկեղեցի վայե-
լուչ, որ ունի արդ զերկու քահանայս՝ Տէր Դաւիթ և Տէր
Կարապետ անուն։ Բնակիչք սոյն գեղջ որպէս և քահանայք
նոցա քան զայլ գիւղականս են առաւել և բարեկիրթ՝ քա-
ղաքավար և հիւրասէր։ Պարսիկք յաղագս գեղեցկութեան
սոյն գեղջ կոչեն զնա «գօլբաղուն» ի ծաղիկ ի նմա։ Յայսմ
գեղջ կայ ձեռագիր Աւետարան մի՝ կարմիր գերհէղոր կուէ-
ցեալ, առ որ գնան ուխտաւորք։

ԺԱ. Խոլորան յաղագս թանձր պարզամտութեան ժողո-
վրդոյն յառակս եղեալ է։ Պատմի յաղագս նոցա թէ կամելով
ոչ տեսանել զարքունի հարկահանս՝ խորհուրդ արարեալ
ժողովեն զհարկս իւրեանց և ածել ի քսակ գնեն ի վր ձո-
րոյն՝ և որ անցուդարձ ե հասարակացն, են թաւալատեղով թէ
ի գալ հարկահանին առեալ զքսակն զայն մեկնի անդէն՝ ա-
ռանց այլ և այլոյ ի գեօղն աշխատութիւն հատուցանել
ինքեանոյ. կորնչի քսակն, և գայ հարկահանն պահանջել
զհարկն. նոքա յարուցանեն զկաց և զխռովութիւն՝ իւրաա-
բանելով թէ մեք զհարկն մեր ի վաղուց հետէ ժողովեալ
եպաք ի վերայ ձորոյն, զի դու եկեալ տարցես անդէն։ Լու-
եալ հարկահանին զնոյ բանս նոցին՝ տանի զգլխաւորս նոցա
առ արքայն և յայտնէ զանդադուչանն։ Արքայն հրամայէ
թերել զմի ամն սեաւ չամիչ և զմի ամն բօղօջ, դնելով
զխուփ ի վր երկուցն և ս, թերեն զայն եղեալ առաջի նոցա

'ի բաց առնուն ղեռւսիան : Տեսեալ նոցա թէ սեաւ չամիչն ոչ շարժի , այլ բօղջն յոտն ելեալ շրջի , ասեն ցմիմեանս " տըղէրք ավաղ ոտնաւորերն ,, և վուխան ուտել դայնոսիկ : Տեսեալ թագաւորին զԵանձր պարզամտութիւն նոցա՝ ընծայէ զնոյն ամէն հարկն և արձակէ զնոսա 'ի բաց : Բաղում են այլ պիսի ծիծաղաշարժ առարկայք վասն նոցա , այլ ես զերկուս և միայն առաջի առնեմ : Ստանուկ մի ընդ խաղ մուծեալ է զձեռն իւր 'ի թակոյկ , և ոչ ևս կարողացեալ է 'ի բաց հանել զձեռն , ժողովեալ հօր և մօր մանկանն և կոչեալ զԻՀինն (զիւղապետն) և զտղդականս՝ ապշեալ մնան 'ի վերայ այնմ , վճռեն հատանել զձեռն մանկան՝ զի մարթ լինի հանել զայն , Հարսն ոք լուեալ զայն՝ դնայ և թեկանէ զԵաւկոյկն և հանէ զձեռն մանկան , զարմացեալ ամենեցուն ընդ խելս նորա՝ տնօրինեն զբեւեռ մեծ հեղուսել 'ի շահաստ նորա զի լինի նշանաւոր և մի կորիցէ 'ի միջոյ ժողովրդեան :

Ի ժամանակս ձմեռան քանի մի գիւղականք Բոլորանայ շրջանակի նստեն 'ի վերայ թոնրոյ ջեռնուլ անդր , և ոչ ևս կարեն ելանել՝ կարծելով թէ ոտք միմեանց շփոթեալ և խառնեալ եցեն , կոչեն զԻՀինն զի որոշեսցէ զոտս իւրեանց , և նա զփայտ առեալ հարկանէ զոտս նոցա , որով այլ իւրաքանչիւր զոտսիւր յինքն քաշել ճանաչէ :

ԺԲ . Կնուրվարի գաւառ ունի գեհտազայ գիւղօրայս և գընակիչս :

Գիւղօրայք	Տուն	Արուք	Կգք :
Գովղ	31 . . .	115 . . .	107 :
Գ արաքարիղ .	11 . . .	31 . . .	37 :
Գնարաջաբաղ .	17 . . .	57 . . .	50 :
Գանխոշ . . .	65 . . .	171 . . .	123 :
Գարրաղ . . .	46 . . .	153 . . .	115 :
Գաբուսայ . .	19 . . .	63 . . .	43 :
	189	590	475 :

Գոմար գիւ եղեւ . .	189 . . .	590 . . .	475 :
Գնաւշ	35 . . .	115 . . .	100 :
Գնահրայ . . .	34 . . .	115 . . .	89 :
Գնէհնով . . .	5 . . .	9 . . .	9 :
9	263	829	673 :

ԺԳ . Գաւառ գեամարու բաղկանայ ըստ յետագայ աղիւսակին :

Գաւուրթաթաղ .	14 . . .	45 . . .	36 :
Գհանդէրն .	24 . . .	75 . . .	61 :
Գիլիան	54 . . .	170 . . .	154 :
Գաքի	10 . . .	38 . . .	23 :
Գ օրչիբաշի . .	22 . . .	74 . . .	68 :
5	124	402	342 :

ԺԴ . Գաւառ գեամբու բաղկանայ ըստ յետագայ աղիւսակին :

Գարթաղ . . .	19 . . .	69 . . .	61 :
Գրթաչիման .	37 . . .	109 . . .	99 :
Գհոխմար . . .	35 . . .	119 . . .	88 :
Գուղան . . .	3 . . .	8 . . .	6 ,
Գհմաբաթաղ կամ ճաուկի ղալայ .	23 . . .	82 . . .	64 :
Գոսկհնաւայ . .	38 . . .	113 . . .	93 :
Գաչիաւայ . . .	37 . . .	95 . . .	83 :
Գարաֆաւայ .	5 . . .	18 . . .	15 :
Գրչուտան . . .	32 . . .	114 . . .	102 :
Գհամիան . . .	11 . . .	44 . . .	36 :
Գկրթ	87 . . .	287 . . .	237 :
Գառնայ . . .	39 . . .	123 . . .	117 :
	366	1181	1001 :

Գումար հին երեք	366	1181	1001 :
Բաղաբաղ . .	2 . . .	9 . . .	8 :
Ղազմովկէ . .	40 . . .	130 . . .	126 :
Պաղրայ	5 . . .	16 . . .	9 :
16	413	1336	1144 :

ԺԶ . Գաւառ քեազազայ բաղկանայ ըստ յետագայ աղիւսակին :

Ալբարթայ . .	11 . . .	38 . . .	35 :
Գալայշէխ . .	8 , . .	32 . . .	29 :
Գիլնասաւայ . .	29 . . .	102 . . .	103 :
Ձգնայ	26 . . .	94 . . .	81 :
Վիհալաւայ . .	51 , . .	154 . . .	140 :
Ճամբրեան . . .	6 . . .	18 . . .	16 :
Պարանդ . . .	12 . . .	43 . . .	31 :
Գօղզար	27 . . .	70 . . .	62 :
Ակյուղնայ . .	13 . . .	30 , . .	27 :
9	183	581	524 :

ԺԷ . Գաւառ Մալայիրայ բաղկանայ ըստ յետագայ աղեւսակին :

Ղնուշ	61 . . .	190 . . .	151 :
Գասումբաղ .	24 . . .	71 . . .	69 :
Գէյլնայ . . .	3 . . .	11 . . .	9 :
3	88	272	229 :

ԺԸ . Գաւառ Ղարաղնայ բաղկանայ ըստ յետագայ աղիւսակին :

Գարհաղ	6 . . .	23 . . .	24 :
Գանախչի . . .	32 . . .	96 . . .	108 :
Լառ	50 . . .	152 . . .	129 :
Գամբար	14 . . .	44 . . .	43 :
4	102	315	304 :

ԺԹ . Ի յիշատակեալ գաւառսն Թանձր տգիտամտութիւն պաշարեալ է զամենեսին , որք ոչ զպարտիս Աստուածպաշտութեան և քրիստոնէութեան ճանաչեն՝ և ոչ զհամ կենցաղական քաղաքավարութեան ստացեալ են , վասն որոյ շընորհ մեծ լինի եթէ աղգասէրք ոմանք բարեհաճեսցին հանգանակել զօգնականութիւնս ՚ի բացուածն երկու կամ երից դպրոցաց յայնոսիկ գաւառս , ՚ի կրթութիւն և ի լուսաւորութիւն համազգեացն եղելոց անդր :

Ի . Կամելով ՚ի մի գումար բովանդակել զթիւ հայ ժողովրդականացն եղելոց ՚ի Պարսկաստան (՚ի բաց զատրպատականն առնելով) նշանակեմ զթիւ քնակչացն Համաւանայ՝ Թէհրանայ և այլ քաղաքացն և գիւղօրէից՝ որք են Թեմ և վիճակ Ամենափրկչեան վանից :

Համադան քաղաք	40 . . .	116 . . .	119 :
Շաւրին գիւղ նորա	76 . . .	166 . . .	152 :
Թէհրան քաղաք			
Գազբինի Թաղ նորա	36 . . .	92 . . .	81 :
Շահաբդօլազիմ Թաղ նորա .	39 . . .	78 . . .	67 :
Ղանակ գիւղ նորա	30 . . .	76 . . .	73 :
Շօթօրխառ	13 . . .	32 . . .	30 :
Ղնճալի տեղական քնակիչք .	9 . . .	21 . . .	16 :
	243	581	538 :

Գումար ամէն էրէսէ	243	581	538։
Ի Ռուսաստան վաճառականք զանազան քաղաքաց	.....	69 ...	3։
Ի Հին ’իսկզբան գաղթեալ իւրեանց էին 500 տուն. և այժմ են	7 ...	15 ...	20։
Ռուշուռ	9 ...	32 ...	34։
	259	697	595։

Ժէ. Ի՝նչ որումբ Հայ բնակիչք Հնդկաստանի և Ջավայի են գաղթեալք ի Ջուղայոյ, վասն որոյ ոչ օտար ինչ՝ կամ արտաքոյ կարգի պատմուճեանս համարիմ նշանակել և ըզնոսին բնակչացն այնոցիկ կողմանց։

Կալկաթայ	113 ...	345 ..	277։
Օտարականք ’ինման		77	։
Ջանագար	1 ...	4 ..	2։
Ջիչրայ	6 ...	6 ..	6։
Ակյադաբադ	5 ...	14 ..	9։
Գաքայ	24 ...	55 ..	39։
Ագրաս	20 ...	51 ..	45։
Ռումբայի	17 ...	24 ..	25։
Սուրաթ	5 ...	19 ..	17։
Սինկափուռ	8 ...	29 ..	26։
Պինանկ	4 ...	16 ..	13։
10	203	640	459։

Գումար ամէն էրէսէ	203 ...	640 ..	459։
Ջուղայ։			
Ռաֆայէլ	7 ...	19 ..	20։
Զրիքօն			
Թոդալ	4 ...	6 ..	10։
Ռանիւմաս			
Ջպարայ	2 ...	13 ..	6։
Սուրբայիայ	5 ...	11 ..	12։
Սմարանգ	4 ...	10 ..	8։
	225	699	515։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՅՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

5552
5553

0001513

2013



